Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**


Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

J. Parnell

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ԵՐԿԵՐ

*Երկու հատորով*

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1958

79196

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ԵՐԿԵՐ

*Հատոր երկրորդ*

Մ.Մաշտոցի անվ.Հան-
րապետա-ն գրադարանՊՈԱԿ
Республ-я б.блиотека
им.М.Маштоца ГПО

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1958

ОВАНЕС ТУМАНЯН

СОЧИНЕНИЯ В ДВУХ ТОМАХ

Том второй

(На армянском языке)

Армянское государственное издательство

(Айпетрат), Ереван, 1958

# ՊՈԵՄՆԵՐ

1887

## ՄԱՐՈՆ

### I

Մեր գյուղն էն է, որ հրպարտ,
Լեռների մեջ միդապատ,
Խոր ձորերի քարափին
Ջեռը տրված ճակատին
Միտք է անում տրխրագեմ.
Ի՞նչ է ուզում՝ չըգիտեմ...
Պաս չենք էնտեղ մենք ուտում,
Ու ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք գնում ամեն օր.
Բայց միշտ ցավեր նորանոր,
Միշտ մի աղետ, մի վընաս
Գալիս են մեզ անպակաս։
Ահա պատմեմ ձեզ մի դեպք,
Մի պատմություն, որ երբեք
Հիշատակով տրխրալի—
Սըրտիս հանգիստ չի տալի։

### II

Մեր գյուղից վեր մինչ էսօր
Կա ուռենի մի սրգվոր։
Մեծ անտառից նա զատված,
Մարդու կացնից ազատված՝

Կանդնած է դեռ ու շոգին
Հով է տալիս մըշակին։
Գիժ, լեռնային մի վըտակ
Խոխոջում է նըրա տակ,
Խաղում կանաչ մարգերին։
Էն առավոտում կեռ օրին,
Երբ որ շողից նեղանում,
Գընում էինք լողանում։
Տըկլոր, աշխույժ խըմբակով,
Աղաղակով, աղմուկով
Խաղում էինք, վազվըզում
Գույն-գույն մանրիկ ավազում։
Կամ հետևում հև ի հև
Թիթեռնիկին ոսկեթև,
Ու միշտ հոգնած ժամանակ
Էն մենավոր ծառի տակ
Նըստում տըխուր մի քարի,
Գերեզմանին Մարոյի...

Մարո՜, անբա՜խտ, վաղամե՜ռ,
Դու մանկությյան իմ ընկեր,
Որքա՜ն ենք մենք խաղացել,
Իրար սիրել ու ծեծե՜լ...

III

Ժիր էր Մարոն, դուրեկան,
Նոր էր ինը տարեկան,
Նըրանց տունը երբ մի օր
Եկան երկու եկավոր։

Ու Մարոյի մայրիկը
Երբ որ բերավ, դրավ լիքը
Խոնչին նըրանց առաջին,
— Շնորհակալ ենք մենք, ասին,



Տաշտներըդ լի հաց լինի,
Դուռներըդ միշտ բաց լինի.
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տրվեք մեզ ձեր տանից...
Էն ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արաղի
Լիքը բաժակն ու ասաց.
— Կամքըդ լինի, տեր աստված...
Նըշանեցին Մարոյին,
Տըվին չորան Կարոյին։

IV

Չորան Կարոն սարերի
Մի հովիվ էր վիթխարի.
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու զարգանդ էր գալիս.
Բայց զոքանչը անսահման
Սիրում, փաղում էր նըրան։
Շատ էր սիրում և Մարոն.
— Լավն է, ասում էր, Կարոն,
Բերում է ինձ ամեն օր
Կանփեթ, շամիչ ու խընձոր...

V

Մին էլ Կարոն աղմուկով
Եկավ զուռնով-թըմբուկով,
Ու Մարոյին զուգեցին,
Երեսին քող ձըգեցին,
Հինա դըրին ձեռքերը...
Եկավ խաչով տերտերը,
Տարավ ժամում կանդնեցրեց.
— Տե՞ր ես, որդյա՛կ, հարցըրեց,
— Տեր եմ, ասավ մեր Կարոն,

Լուռ կանգնած էր միշտ Մարոն...
Հայրն էլ եկավ ու ծեսին
Էսպես օրհնեց իր փեսին.
— Հաղացիդ միշտ հերթ լինի,
Մեչքդ ամուր բերդ լինի...
Իսկ երբ հնչեց «տարան հա՞»-ն,
Նրան փեսի տուն տարան։
Պրսակեցին Մարոյին,
Տրվին շրջան Կարոյին։

VI

Թե գրրբացի շար ջանքով,
Գիր ու կապով, բրժժանքով
Մանուկ սիրտը կըտրեցին,
Կամ թե նրրա հանդերձին
Էն անհոգի շար ջադուն
Քրսեց գիլի ճրրագուն...
Էդ չիմացավ ոչ ոք պարզ,
Միայն փոքրիկ նորահարս
Մարոն ատեց իր մարդուն.
Փախավ, եկավ ետ հոր տուն։
Եկավ լացեց նա վրշտոտ.
— Ես չեմ գնալ նրրա մոտ.
Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինեմ կին...

VII

Հայրիկն էն ժամ բարկացավ,
Մեծեց նրրան ու ասավ.
— Դուրս իմ տանից, սևերե՛ս,
Եդ չընայես դեպի մեզ,
Ոտ չդնես էլ տունրս,
Մրրոտեցիր անունս...



Լալով, ծածկած իր դեմքը,
Թողեց Մարոն հոր շեմքը։

VIII

Ու հալածված իր հորից,
Փախած շրջան Կարոյից,
Սոված, պատռած շորերով,
Կորչում էր նա օրերով։
Կուշ էր գալիս խրդճալի
Օշախի շուրջն օտարի
Կամ թափառում մեն-մենակ
Մեր հանդերում շարունակ։

IX

Շատ ամիսներ անց կացան...
Գիմաց սարից մի շրջան
Ձեն էր տալիս մի օր մեզ,
Թե՝ իմացե՛ք, որ էսպես
Կարմիր շորով մի խիպան
Ընկավ ձորը, մի կածան...
Դուրս թափվեցինք մենք գյուղից,
Հեռու կանգնած, երկյուղից,
Տեսանք, ահեղ էն ձորում
Ինչ էր լալիս ու կռռում
Մարոյի հայրն ալեոր,
Մայրը ճրչում սրգավոր։
Շատ լաց եղավ և Կարոն...
Մեռա՞վ, գընաց մեր Մարոն։

X

Սակայն անբախտ նրրա դին
Պապի կողքին շրջրին։
Գյուղից հեռու մինչ էսօր

Կա տուեմի մի սրգվոր։
Էն մենավոր ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,
Առանց ժամ ու պատարագ
Մեջը դրին Մարոյին,
Էն սև քարն էլ տաշեցին,
Բերին վրեն քաշեցին։

## XI

Շատ եմ տեսել, երբ սրգվոր
Մայրը մենակ, սևաշոր,
Կորանալով էն քարին
Ձեն էր տալիս Մարոյին...
— Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՜ն,
Ո՞վ անիծեց, Մարո ջա՜ն,
Ո՞ւր փախար դու, Մարո ջա՜ն,
Տուն արի՛, տո՜ւն, Մարո ջա՜ն,
Խո՞ր ես քընել, Մարո ջա՜ն,
Չե՛ս զարթնում էլ, Մարո ջա՜ն...
Կորանալով էն քարին
Ձեն էր տալիս Մարոյին.
Խունկ էր ծըխում, մոմ վառում,
Որ գիշերվան խավարում
Փայլփըլում էր մեն-մենակ
Հեռվից երկար ժամանակ։

---

# 1889

## ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ

### I

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ։

Նըրանց ոտքերում՝ գազազած գալի՝
Գալարվում է գիժ Գել-Բեգը մոլի,
Խելագար թրջում քարերի գլխով,
Փըրփուր է թքում անզուսպ երախով,
Թրքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու դոռում գիժ-գիժ.
— Վա՜շ-վի՜ շ, վա՜շ-վի՜՜ շ...

Մութ անձավներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ՝ հրոպիտ ձայներով
Գեի հաճաչքին արձագանք տալի,
Մաղրում են նըրա գոռոցն ահռելի
Ու կըրկնում գիժ-գիժ.
— Վա՜շ-վի՜ շ, վա՜շ-վի՜՜ շ...
Գիշերը լուսնի երկչոտ շողերը
Հենց որ մըտնում են էն խավար ձորը՝

Ալիքների հետ խաղում դողալով,
Անհայտ ու մրսած մի կյանքի գալով՝
Ոգի է առնում ամեն բան էնտեղ,
Շընչում է, ապրում և մութն և ահեղ։

Էս տախտի վրա աղոթում մի վանք,
Էն ժայռի գլխին հրսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կըռինչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարի գլխից, լուռ, մարդու նըման,
Նայում է ձորին մի հին իաչարձան։

II

Էն ձորի միջին ահա մի տընակ։
Էնտեղ այս դիշեր Սաքոն է մենակ։
Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր.
Սատանի նըման՝ նա էլ էս դիշեր
Գընացել է տուն։ Սարերի շորա՞ն —
Գյուղիցը հեռու, հազար ու մի բան.
Ով գիտի՝ պարկում շընալի՞ը չըկար,
Ա՞ղ էր հարկավոր ոչխարի համար,
Ուզեց գոքանչի ձրվաձե՞ղ ուտել,
Թե՞ նըշանածին շատ էր կարոտել —
Ոչխարը թողել՝ գընացել է տուն։
Այն ինչ՝ համկալը հենց առավոտը
Դեպի սարերը քըշեց իր հոտը։
Ու Սաքոն անքուն,
Թաց տըրեխները հանել է, քիրել,
Գուլպան բուխարու վրա կախ արել
Ու թինկը տըվել,
Մեն-մենակ թըթվել։



III

Թեկուզ և մենակ լինի փարախում,
Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում։
Հապա մի նայի՛ր հըսկա հասակին,
Ո՞նց է մեկնըվել։ Ասես ահագին
Կաղնըքի լինի անտառում ընկած։
Իսկ եթե տեղից վեր կացավ հանկարծ,
Գլուխը մեխած մահակը ձեռին՝
Ջեն արավ, կանչեց զալում շընորին
Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպես սար,
Էնժամ կիմանաս, թե ընչի համար
Թե՛ գող, թե՛ գազան, հենց գատարկ վախից,
Հեռու են փախչում նըրա փարախից։

Ու իրեն նըման իրեն ընկերներ
Ապրում են սիրով երեխուց ի վեր։
Աստծու գիշերը գալիս են հանդեն,
Փետ են հավաքում, վառում են օդին,
Շըհուն ու պըկոն խառնում են իրար,
Ածում են, խաղում, խընդում միալար...

IV

Բայց խուլ ու խավար օդում էս գիշեր
Մենակ է Սաքոն ու չունի ընկեր։
Բուխարու կողքին լուռ թինկը տըված
Մըտածում է նա... ու մին էլ, հանկարծ,
Որտեղից որտեղ, էն ձորի միջին
Միտն եկան տատի զըրույցները հին...
Միտն եկան ու մեր Սաքոն ակամա
Սկսավ մըտածել շարքերի վըրա,
Թե ինչպես ուրախ խըմբով, միասին,
Մուտը ոտներով, գիշերվան կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած,
Երևում են միշտ միայնակ մարդկանց...

Կամ ինչպես քաջքերն այրերի մրթնից,
Երբ նայում է մարդ քարափի գլխից,
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով,
Ու մարդկանց նման խրնջույք են սարքում,
Զուռնա են ածում, թմբուկ են զարկում...
Ու տատի խոսքերն անցյալի հեռվից
Ուրվաձայն, երկչոտ հընչեցին նորից.
— Կասեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի՛ մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք դալի,
Սիրո՞ն-ջահել հարսն-աղջիկ։

— Ինձ մոտ արի՝ ձվաձեզ անեմ...
— Ինձ մոտ արի՝ բլլիթ տամ...
— Ես քու հոքիրն... ես քու նանն եմ...
— Ես էլ ազիզ բարեկամ...

— Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի.
Էս աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք դալի,
Տարա-նի-նա՛... տարա-նի-նա՛՛...

Ու խոլ պատկերներ տրգիզ, տյլանդակ,
Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Մանրաշարժ եկան Սաքոյի դիմաց
Երևութք եղան, անցնում են կամաց,
Խավար ու դանդաղ, ըստվերների պես,
Զար ժրպիտներով ժանտ ու սևերես...

V

Սրբընթաց պախրա՞, թե գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Այծյա՞մբ հանկարծ մոտակա ժայռից
Անգունդը մի քար գլորեց ասով,



Գիշերվան հովից տերևն էր դողում,
Երկչոտ մուկի՞կը վազեց պուճախում,
Թե՞ ոչխարների թույլ մընչոցն էր այն—
Սաքոյին թվաց, թե մի տոնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի վերա,
Կանգնեց ու լռեց...
Ականջ դրրավ նա...

VI

— Ո՞վ հող թափեց բուխարիկից...
Էն ո՞վ նայեց լիսածակից...
Էս ո՞վ կրտրից անցավ թեթև,
Շունչ է քաշում դրռան եռև...
— Ո՞վ ես, էհե՛յ... ի՞նչ ես անում.
Ի՞նչ ես լռել, ձեն չես հանում...

Պատասխան չկա. լռության միջում
Ջորագետն է միայն մրրափած վրշշում։
— Հա՛, իմացա, Գեվոն կլինի.
Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի...
Վախեցնում է... Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛...
— Գեվո՛՛...

Ձեն-ձուն չկա։
Միայն ահավոր լռության միջում
Ջորագետն է խուլ, մրրափած վրշշում,
Եվ ո՞վ կլինի զարթուն այս ժամին.
Քընած է աշխարհ, քընած է քամին.
Անքուն շարքերը չեն միայն քընած,
Վրխտում են ուրախ ձորերը՝ բըռնած,
Խավարում կազմած դիվական հանդես,
Վազում, վազվզում ըստվերների պես,
Մինչև որ մենակ մի մարդ կըգըտնեն,
Ճիչով-քըրքիջով... փարախը մըտնեն...





Մ.Մաշտոցի անվ.Հանրապետական գրադարան ՊՈԱԿ
Республиканская библиотека им.М.Маштоца ГНО

Աչքերը հանգչող կրրակին հառած՝
Ծանրը է շընչում հովիվն ահ առած,
Ու վայրի հոդին լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկու։
«Չէ, քամին էր էն... էն գիլի շրվաք...
Էն աստղեր էին աչքերի տեղակ,
Որ լիսածակից ներս էին ընկել...»։
Ուզում է վերև մըտիկ տա մեկ էլ՝
Ու սիրտ չի անում։
Ականջ է դընում...
Գալիս են կրրկին թեթև, կամացուկ,
Դրսան եռևից փրսփրսում ծածուկ.
— Էստեղ է նա,
— Հա՛, հա՛, հա՛, հա՛.
— Տե՛ս-տե՛ս, տե՛ս-տե՛ս.
Նայիր էսպե՞ս,
Մըտիկ արա՞,
— Հա՛, հա՛, հա՛, հա՛...
Սաքոն շարժվեց փրշաքաղած,
Դեպի շեմքը նայեց, գոռաց...
Շրրխկ... հանկարծ դուռը բացվեց,
Թուրք կանանցով տունը լըցվեց,
Տունը լըցվեց թուրք կանանցով,
Ճիչ-գոռոցով, հրոհրոցով...

## VII

Ահռելի ձոր է։ Մի կրտոր լուսին
Նայում է գաղտուկ, թաքչում ամպերում։
Էն մութ, ահավոր գիշերվա կիսին
Վազում է Սաքոն լոռու ձորերում։
Զարքերը ընկած նրրա եռևից,
Հերարձակ խրմբով, ճիչ-աղաղակով՝
Հասնում են մեջքին, բրռնում են թևից,
Զարկում են, զարկո՞ւմ օձի մըտրակով...



Քաչքերն էլ այրից գուռնա-դրհոլով
Ճըչում են, կանչում ծանոթ ձայներով.
— Սաքո՞, Սաքո՞, մեզ մոտ արի,
Արի մեզ մոտ հարսանիք,
Տե՞ս՝ ինչ ուրախ պար ենք գալի՝
Սիրո՞ւն, չահել հարսն-աղջիկ։

— Ինձ մոտ արի՝ ձրվաձեղ անեմ...
— Ինձ մոտ արի՝ բըլիթ տամ...
— Ես քու հոքիրն... ես քու նանն եմ...
— Ես էլ ապիղ բարեկամ...

— Սաքո՞, Սաքո՞, մեզ մոտ արի.
Էս աղջիկը, տե՞ս, ինչ լավն ա...
Տե՞ս, ինչ ուրախ պար ենք գալի.
Տարա-նի-նա՞... տարա՞-նի-նա՞՞...

Այն ինչ Դեբեդից ալքեր են թրուչում,
Ալիքներն ելնում, ալիքներն ուռչում,
Խավարի միջին ծրփում են կայտառ՝
— Բրռնեցե՞ք, փախա՞վ Սաքոն խելագար...

---

# 1890

## ՄԵՐԹՎԱԾ ՕՐԵՆՔ

### I

Բարձրագիր լանջում բարձր սարերի
Աղոթք է անում լուռ կանգնած մենակ
Հին հիշատակը հին-հին դարերի —
Քրիստոնեից միանձանց մի վանք։
Նրա սրբածայր գմբեթը քարյա
Բարձրանում է վեր — դեպի երկինքը,
Խաչակնքելով աշխարքի վերա
Օրհնում է մշակի արդար քրտինքը։
Այնտեղ խստակյաց միաբանություն
Ճգնում է միտքը աղոթքի տված,
Անհաղորդ երկրի վայելքին ունայն,
Մինչև որ յուր մոտ կըկանչե աստված։
Զեն լսվում երբեք սուրբ հայրերի մոտ
Մարդոց խնջույքի ուրախ երգերը,
Եվ ոչ կանացի հայացքը խանդոտ
Հուզում է մեղքով խաղաղ սրտերը։

### II

Նրեք օր առաջ վաղ առավոտյան
Համբընթաց մի սայլ մոտեցավ վանքին.—
Հեռու կողմերից ուխտավորք եկան
Նրիրպագելու սրբոց մասունքին։



Եվ դղրդալով բարեպաշտ մարդկանց
Առջև բացվեցան դռներն ասոծո տան,
Եվ մի ահավոր երկյուղով լցված,
Խաչակնքելով նրանք ներս մտան։
Սուրբ կամարները, սևացած արդեն,
Մի անգամ դարձյալ ծածկվեցան ծխով.
Ծխի մեջ վառվող մոմերի առջև
Մունկ շոքած աղոթք արին երկյուղով։
Զոհը զենեցին և բաժանեցին,
Ապա սրբազան նվերներ տարան
Այն աղոթարար միաբաններին.—
Մեղքի թողություն, օրհնություն առան։
Բայց կատարվեցավ այլ մեծախորհուրդ
Ուխտ և ողջակեզ կյանքի հաշտության,
Փրկեց ակներև մահից մի հոգի,
Որ պիտի անմեղ կորչեր հավիտյան։
Ոչ արյուն թափվեց, ոչ հուր բարձրացավ,
Ոչ տեսանելի կանգնեցավ սեղան,
Հոգիները միայն անձայն խոսեցան—
Վերածնվեցավ մատաղ աբեղան.
Եվ մաշված կրծքում կրքերը մարած
Ավելի սաստիկ եռացին նորից,
Իսկ այն ընտանիքն, ուխտը կատարած,
Դուրս դնաց արդեն վանքի դռներից։

### III

Մարդոց մեղքով լի շեներից հեռու,
Սուրբ անապատը դիշերվա մթնում,
Ինչպես մի հսկա, ահռելի ուրու,
Ահա կանգնած է ահավոր, տրտում։
Նրա խցերից մեկում միայնակ
Մի երիտասարդ, դժգույն, դալկահար,
Ջիթի ճրագի աղոտ լուսի տակ,
Անկողնում անքուն տանջվում էր երկար։

Հազիվ հեռացան հախուռն մտքերը,
Որ քոնն աչքերին մոտ չէին թողնում,
Հազիվ ծանրացան արտևանունքները—
Քնեց աբեղան յուր կոշտ անկողնում,
Եվ հանկարծ կանգնեց նրա գլխի մոտ
Լուսեղեն մարմնով մի կույս երկնածին,
Կարեկցությամբ լի, բայց սաստիկ կրքոտ,
Աշխույժ հայացքով նայեց քնածին։
Նայում էր առ ժամ և կամաց-կամաց
Հասուն, լի կուրծքը ուռչում — իջնում էր,
Կարծես՝ երեսին մեղմածուփ ալյաց
Ճերմակ փրփուրը խաղալիս լիներ։
Ապա շնորհալի և խիստ հեզանազ
Շարժվածքով ճկուն մեջքը խոնարհեց,
Եվ տաք համբույրով վարդերանդ շրթանց
Քնածի տխուր ճակատը այրեց։
Զարթնեց աբեղան և զգաց հոգում
Մի ցավ, որ սաստիկ տանջում էր իրան.
Այն ինչ այցելու ոգին երկնքում
Փայլատակում էր մի աստղի նման։
Դուրս նայեց տեսավ նորեկ արևը
Երկնքի ծայրը հրդեհ էր ձգել,
Նայեց աշխարքին, նայեց վերևը,
Եվ ուզեց իսկույն բոլորը գրկել...

## IV

Փոխվեցավ այսպես վանականն անմեղ,—
Ցուր խուցը դարձավ առավել նեղլիկ,
Եվ մեղմ աղոթքի անդորրության տեղ
Հայտնվեց հոգում անծանոթ մրրիկ։
Ո՜վ զարմանք, արդեն սիրալի սրտով
Մի գիշերվա մեջ կարոտել էր նա,
Եվ ափսոսում էր, թե ինչու շուտով
Գնացին վանքի հյուրերն երեկվա։



Կարոտել էր նա. և նրա աչքին,
Քավության ճերմակ շապիկը հագին
Միշտ երևում էր այն գերդաստանի
Վայելչահասակ դուստրը գեղանի։—
Երևում էր նա գլխակոր շոքած
Լուռ աղոթելիս սեղանի առաջ,
Կամ այստեղ նստած, կամ այնտեղ կանգնած՝
Թախծալի, քնքույշ դեմքով սիրատանջ։
Ամենայն անգամ նորա տեղերին
Մոտիկ գնալիս, կամ թե կանգնելիս
Ծնկներն ու սիրտը դողդողում էին,
Եվ մարմնին ախորժ թմբիր էր գալիս։
Երկար ժամերով քարացած — անշարժ
Մի տեղ մնում էր նստած գլխաքարշ —
Ապրում էր մտքում երազած օրով,
Եվ ցնորմունքից ուշաբերվելով
Հանախ անհանգիստ նա շարշարվում էր,
Լալիս էր ծածուկ, վանքից կորչում էր,
Եվ կատաղում էր, որ մի մարդ շրկար՝
Ցուր ցավն սփոփեր, կամ դեթ հասկանար...

## V

Արդեն հրեղեն գունդն արեգակի
Ուժասպառ, հոգնած դեպի մայր թեքվեց.
Փուլ եկավ դարձյալ սիրուն աբեղայի —
Գիշեր է հասնում. նա տրտում երգեց.—
Ամրեը թռավ.
Թոցրրեց, տարավ
Փայլուն շողերը.
Խավար գիշերը
Ծանրացավ ահա
Դաշտերի վերա։
Գերին արևի
Գլուխը դեպի

Արևմուտ ծռած
Մնաց սալարած։
Սպասում է նա,
Թե երբ կերևա
Երկնակամարից
Արևը նորից։
— Ա՛խ, շուտո՛վ բացվիր,
Արև կենսածիր.
Գուրգուրիր կրկին
Արևածաղկին։

Հեռացար և դու,
Անհայտ սիրատու.
Բոցուս հայացքով
Լցրիր կըրակով
Սիրտս վշտահար,
Եվ քեզ հետ տարար
Ուշքս ու միտքս...
Մինեց երկինքս.
Ես էլ ծաղկի պես
Սպասում եմ քեզ.—
Ահա շվարած
Գլուխս ծռած,
Ես էլ եմ նայում,
Քո ճամփեն պահում.
Մագի՞ր դու նաև,
Իմ հոգուս արևս։

VI

Գիշերվա մթնում նեղ լուսամուտից
Երևում է լույսն աղոտ լամպարի.
Ցուր անձուկ խցում նստած է հանգիստ
Ծիր վերակացուն հին սրբավայրի։
Կծղել են երկայն մաղ ու միրուքը



Այն խստակրոն ծեր վանականի,
Հանդել են աչքերն, և հեգ ծերությը
Զոնի երեսին մի դիծ կենդանի։
Արդեն չորացած երկայն մատներով
Ցուր սև համրիչի հատերն է քաշում,
Եվ խաղաղությամբ, դրախտի հուսով
Կյանքի մնացած ժամերը հաշվում։
Մահի հարվածից նա չի սարսափում,
Եվ բան չի խլում մահը նրանից,—
Երկրի հետ նրան ոչինչ չի կապում,
Ողջ սպասում է նա գերեզմանից։

VII

Փոքրիկ ղոնակը դդույշ բացվեցավ.
Մի մեռելատիպ, բայց երիտասարդ,
Աչքերը վառված սևաշոր մտավ.
Եվ հարցրեց նրան ծերությը հանդարտ.—

**Մեր վանահայրը**

Ի՞նչ ունես, որդյակ։

**Երիտասարդ աբեղան**

Հայրիկ, ներիր ինձ,
Այսպես տարաժամ որ քեզ մոտ եկա.
Սիրտս ուզում է դուրս թռչել տեղից...
Այլևս համբերել չկարողացա...

**Վանահայրը**

Համբերություն տա Թող բարձրյալը քեզ.
Բայց ինչո՞ւ համար հուզված ես այդպես։

**Աբեղան**

Ինձ ասա՛, հայր սուրբ, դաղտնիքը կենաց
Արդյոք օրենք է աստծուց սահմանա՞ծ...

**Վանահայրը** *(ընդհատելով)*

Այո՛, տեր աստված աշխարքին, որդյակ,
Ապրելու համար տվել է օրենք,

Եվ մենք սրբությամբ, ինչպես օրինակ,
Այն օրենքները պիտի կատարենք։

Աբեղան

Կատարենք, հայր սուրբ... ապա, երբ որ կա,
Խնդրում եմ տիրոջ այն սուրբ օրենքով,
Որով ապրում են մարդիկը նորա,
Նաև մարդկային իմ իրավունքով...

Վանահայրը (ընդհատելով)

Էլ ի՞նչ իրավունք... դու պաշտոնյա ես,
Մի սպասավոր աստծու տանը,
Պիտի տահարի սեղանին նայես,
Աղոթես, ճդնես, այս է քո բանը.
Եվ դրա համար չես մնալ անմաս—
Բոլորի վարձը այնտեղ կստանաս։

Աբեղան

Ես ծառայում եմ, և իմ պաշտոնում,
Տեսնում ես, տա՛, պակասավոր չեմ.
Երկնքի վարձը չեմ արհամարհում,
Բայց մի՞թե երկրում ես պիտի կորչեմ...

Վանահայրը

Մի մաղ չի կորչիլ գլխիդ մազերից.
Մի՛ անուցանիր սրտումդ կասկած։

Աբեղան

Սակայն չէ՞ որ մեզ այս լեռ քարերի
Ճգնության համար չքստեղծեց աստված։
Իմ օրերն այստեղ տխուր են անցնում.
Վառվում է սրտումս հուրը կենսական,
Ինչո՞ւ ենք նրան զուր զորով հանգցնում
Մահաշունչ գրկում խուլ առանձնության.
Կտրտտ է հոգիս, թոչում է հրաթև
Այս մենաստանի քարձրը պարսպից,
Չեմ կարող մնալ ես այսուհետև,
Եվ երբեք, մինչդեռ զրկված եմ կյանքից...



Վանահայրը

Այստեղ է կյանքը, այս սուրբ հարկի տակ։
Աղոթի՛ր, ճդնի՛ր, կրգտնես, որդյակ։

Աբեղան

Չէ՛, չեմ գտնում, հայր, աղոթքների մեջ
Եվ ոչ հոգեբուխ մեղեդիների,
Դարձյալ մնում է նա սաստիկ մի տենչ,
Մի տենչ անկասար, անհասանելի.
Սարսափում եմ ես.—մոտ է վտանգ — —
Իմ մահն ինձանից մոտիկ է, մոտիկ.
Այստեղ չեմ գտնում մխիթարանքը,
Որով շնչում են, ապրում են մարդիկ։

Վանահայրը

Ուրեմն չքիա, ինչ սր ուզում ես,
Եվ այդ ցնորք է, կամ փորձությունով
Նզովյալ չարը խարբալում է քեզ
Հոգի կործանող յուր պատրանքներով։

Աբեղան

Եթե նա չքիա, ոչինչ չեմ հարգում,
Ատում եմ և ինձ, իմ անձս միայնակ,
Ոչինչ չեմ գտնում այլևս աշխարքում —
Լոկ խաբեություն և անմիտ ատելք.
Թող այնուհետև քանդվի նա խպառ,
Նրա երեսին էլ կյանք չծաղկի,
Թող մեռնեն մարդիկ, թող տանեն իրար...
Ես էլ չեմ խղճում այստեղ ոչ ոքի։
Սակայն չէ, նա կա. անբա՞խտ այլևս,
Կուրծքդ երևի դեռ չէ եռացել,
Մենակ է աճել հասակդ բոլոր
Եվ առանց կյանքի հանդել, ծերացել.
Բայց երբ սոսկալի առանձնության մեջ
Ինձ պաշարում է սարսափը մահու
Եվ ունայնության մտքերն հոգեմաշ
Ինձ երևում են տխուր, տհարկու,

Շուրջս չեմ գտնում փրկության նշան։
Իսկ մահը, կարծես, շոքում է կրծքիս,
Միմիայն խորափոս, խավար գերեզման,
Միմիայն դժոխքն է երևում աչքիս,
Նա այն ժամանակ վրա է հասնում
Ինչպես լուսավոր շողն արևուսի,
Փարատում հոգուս մռայլությունը,
Վանում մահաշունչ մտքերն մեկուսի,
Կյանքի ջերմությամբ լցվում է սիրտս...
Եվ ես զգում եմ, որ այն քաղցր ու նուրբ
Զգացմունքով է կենդանի մարդս.
Բայց ափսո՜ս, որ դու չըգիտես, հայր սուրբ։

Վանահայրը

Այն սուրբ հոգին է, կամ մի սուրբ հրեշտակ,
Որ այցելում է, ո՛վ արժանավորդ,
Եվ կյանքի մասին աստվածաբնակ
Այս սուրբ տաճարում քեզ տալիս հաղորդ։

Աբեղան

Օ՜, չէ՛, չէ, հայր սուրբ, նա չի իջանում,
Ինչպես տուրբ հոգին, աստծո խորանից,
Եվ ոչ հրեշտակի պաշտոն է տանում,
Բայց ես շա՜տ հեռու, հեռու եմ նրանից։
Ա՜խ, նա պակաս է, նա չըկա այստեղ,
Մերժած է անգամ նրա անունը,
Եվ ահա դատա՜րկ, դատարկ է ահեղ
Օրենքի պաշտպան աստծո տունը։

Վանահայրը

Այդ խաղաղության թշնամին է չար,
Որ միշտ հեռու է ահիցը վանքի։

Աբեղան

Նա չար չէ, հայր, այլ միակ հաշտարար
Մարդու և կյանքի։

Վանահայրը

Ապա սո՜ւրբ է նա։



Աբեղան

Սո՜ւրբ, ինչպես աստված և յուր օրենքը
Եվ սիրելի է, որքան և կյանքը...
Ես մեղք չեմ անում, հավատա, հայրիկ...
Դուք ինչո՞ւ համար ինձ այստեղ բերիք.
Ես ի՞նչ եմ արել, չէ՞ ես էլ եմ մարդ,
Նրանցից մեկը, որ այնքան ազատ
Ապրում են իրանց ցանկություններով,
Որ աղոթում են ուրախ սրտերով...
Ինչո՞ւ համար է իմ աղոթքն այստեղ,
Ո՞ր մեղավորին կըտանեն եդեմ...
Ինչո՞ւ համար եմ չարչարվում անմեղ,
Եվ եթե այսպես ես այստեղ մնանեմ,
Ձեզ կամ աստծուն ի՞նչ շահ իմ մահից...
Ուզում եմ ապրել. հա՜յր, կյանք տվեք ինձ...

Վանահայրը

Կյանք տալը նրա ձեռքին է, որդի,
Մարդս ի՞նչ կաներ, որ շատ էլ ուզեր,
Բայց ասա՛, տեսնենք իղձը քո սրտի—
Ի՞նչ ես կամենում։

Աբեղան

Մի աղջիկ սեր...

Վանահայրը

Պապանձվի՛ր, ո՛վ լիրբ, աչքիցս հեռացի՛ր,
Մի՛ ապականիր և մեր աղոթքը,
Շուտո՛վ, հեռացի՛ր, կամ գետինն անցիր,
Ջըպղծն տաճարի սյամը քո ոտքը։
Քո սրտին արդեն տիրել է չարը,
Հեռացի՛ր, աստծո բարկությունը տար,
Որ չըկործանե և այս տաճարը
Քեզ հասանելի պատուհասն արդար։
Կամ ապաշխարիր պահքով, աղոթքով,
Հեռու հալածիր դիվական կիրքը,

Էլ այդպիսի բան չանցնի քո մտքով...
Շո՛ւտ, առանձնացի՛ր, կարդա սուրբ գիրքը։

Աբեղան

Չէ՛, էլ չեմ կարող. հերիք, էր ինչ որ
Առանձնության մեջ տանջվեցի լռած,
Էլ չի բռնանալ այս տենչատոչոր
Սուրբ սիրո վրա քո սիրտը մեռած։
Արդ ես համարձակ խոստովանում եմ
Քո և աշխարքի առջև իմ սերը,
Եվ բոլոր հոգով արհամարհում եմ
Անցած դարերի խավար ծեսերը։
Դու էլ ես ապրել նախնյաց օրենքով,—
Ապրել ես միայնակ, մարդոց անօգուտ,
Այլև անկանոն, ցավալի կյանքով,
Մեղքեր ես միմիայն վաստակել հոգուդ։
Դու էլ, հնազանդ քո նախնյաց կարգին,
Ուխտեցիր տանել կյանքը վանական,
Բայց հաղթեց խավար բռնության կամքին
Միշտ ամենազոր օրենքը բնության...
Չէ՛, չեմ ճանաչում, ես չեմ դավանում
Այնպիսի ասուված, օրենք անիրավ,
Որ անարգում է սերն ամուսնական.
Օրհնի՛ր, ծերունի, և մնաս բարյավ։
Սիրավառ սրտի համարձակ լեզվով
Ներունու դիմաց խոսեց աբեղան,
Որ, բարկությունից սաստիկ դողալով,
Աստծո անունով նզովեց նրան։
Եվ մեծ դարբասը լուռ մենաստանի
Ծանրը ճռնչաց ու լայն բացվեցավ,
Վանքից մի հոգի հեռու ավանի
Ճանապարհն ընկավ. օրը լուսացավ...

---

# 1890

## ՀԱՌԱՋԱՆՔ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

Լեռնե՛ր, ներշընչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լցված,
Ու ջերմ ըղձերս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թրռչում հախուռն երամով։

Ձե՛զ, ձեզ վերջատին ամպամած լեռներ,
Կյանքի տրխրության ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նրվեր։

Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՛ն տրտմություն,
Վեհափառ դալակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ չէիր ինձ հանգիստ տալիս՝
Սրբտիս ականջին խոսելով թաքուն...

Ո՞վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցավերով, հազար ձևերով,—
Ոգևորության հրզոր թևերով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեգ։

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
Էդ անդընդախոր ձորերդ լցնեմ։

Ձորե՞ր, ա՜յ ձորեր, սև, լայնաբերան,
Սրբոտիս էս խորոնկ վիրքերի նման.
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել։

Դուք էլ խոսեցե՞ք, դուք էլ պատմեցե՞ք
Ձեր անդունդներով եկեք չափվեցե՞ք,
Դուք է՞լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...

## ՀԱՏՎԱԾ I

Մի քանի տարի սրբանից առաջ,
Երբ որ հայրենիք էի ես գնում,
Այն մթին ձորում, ուր որ քաղցրավաչ
Մեղեդու ձայնով Դեբեդն է վազում,

Ժայռերի գլխին, ուր բազկատարած
Աղոթք են անում Հաղբատ-Սանահին,
Գիշերը հասավ, ու ես դադարած
«Ղոնաղ» մնացի ծեր այգեպանին։

Նա տրտնջալով ծերության ընդդեմ
Քրթքթում էր յուր ծառերի տակին.
«Բարի օր, պապի», ու խոժոռադեմ
Ծերը ետ նայեց ձեռքը ճակատին։



Մի կասկածավոր ու խիստ հայացքով
Ջննելուց հետո հոնքերը կիտեց,
Սառտիկ սառնությամբ պատասխան տալով
Դեպի յուր դափեն ինձ առաջնորդեց։

Նրա ետևից անխոս գընացի,
Փընթփնթացնում էր նա իմ առաջին —
«Մեր բանը պրծավ, երբ էս ձորերի
Մրտերը սրանք էլ եկան սովրեցին։

Սա էր մնացել, սա էլ անպատճառ
Մեր գլխին մի նոր կրակ է բերում,—
Նոր դրած բեգլար, կամ իզուր մի շառ,
Թե չէ ինչ ունի էս խուլ ձորերում։

Նկած կը լինի, որ խաբար տանի,
Թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա,
Ով յուր դռանը անասուն ունի,
Կամ որի կնգա աչքերում յուղ կա։

Կամ հին գերեզման քանդող կը լինի,
Կամ թե կը համրի ծմակի ծառերը,
Կամ նրա համար, թե օրը քանի՞
Ձու են ածում մեր գյուղի հավերը...

Ո՞վ գիտի, հիմա ով վեր է կենում
Գլխին էս տեսակ գդակ է դնում...»։
Լռեց ծերունին ծանրը տնքալով
Ու առաջ գնաց թին դիմհար տալով։

Իսկ երբ որ հասանք աղքատիկ դափին՝
Ինձ հրավիրեց, և յուր ունեցած
Շորի կտորը փռեց իմ տակին,
Ինքը առաջիս մնաց յուռ կանգնած։

Ճերմակ գլուխը ապա բարձրացրեց,
Հոնքերի տակից ազդու նայելով,
Որոտող ձայնով այսպես հարցրրեց
Զզվանք ու զայրույթն հաղիվ պահելով։

— Աղա՛, հարցնելը ամոթ չըլինի,
Հրամանքդ ի՞նչ մարդ ես, կամ ո՞րտեղից ես...
Եվ շտապելով մի պատասխանի՝
Ինքը շարունակ խոսեց կցկտուր.

— Ով էլ որ լինիս՝ բարով ես եկել,
Անփորձանք լինի քո ճանապարհը,
Աստված կյանք տա ձեզ, որ հարցնեք դուք էլ,
Թե ինչ ցավ ունի խեղճ ռանչպարը։

Աղքատ մարդիկ ենք, մեր ձորերի մեջ
Անց ենք կացնում մեր սև-սև օրերը.
Թե որքան ենք զուրկ, որքան ենք մենք խեղճ
Էդ հաստատ գիտե ինքը — միայն տերը։

Բայց դու էլ խելոք մի մարդ ես գիտուն.
Քո բարի աչքով տեսնում ես էլի,
Տկլոր ու սոված էսպես տարին բուն
Քարի-հողի հետ կռիվ ենք տալիս։

Թե որ ձեռներս էլ մի բան է ընկնում
Ջենք կարողանում բերան հասցրնենք...
Էսպես տանջվելով քրտինք ենք անում,
Էլ էն սևերեսն, էլ էն սոված ենք...

— Ի՞նչիցն է, պապի, այսքան ճոխ երկրում,
Ինչպես ասում ես, դժվար ենք ապրում,
Վարձատրություն չենք ստանում հողից,
Թե նեղություն է գալիս մի տեղից։



«Մեր նեղությունը... քեզ ինչպես հայտնեմ,
Թող հաստատ լինի մեր թագավորը.
Ես ընչի տեր եմ, խոսեմ նրա դեմ,
Բայց աստված կտրի մեր քաշած օրը...

Ի՞նչ անես, ախպե՛ր, ումից խռովես,
Պետք է համբերել, թե լավ թե օսալ...
Բայց դու շատացիր հրամանքդ ով ես,
Ուզում եմ քեզ հետ լիասիրտ խոսալ։

— Ես քաղաքումը կարդում եմ, պապի։
— Հա՛, տիրացու ես, բա ինչու չասիր...
Կանչեց Ծերունին ու իրեն դափի
Դռնից հեռացավ. «մի քիչ սպասիր»։

## ՀԱՏՎԱԾ II

Մըթնեց։ Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դըրեց կըրակին,
Նորից բարևեց իր երկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին։

Ու նըստոտեցինք իրար դեմ ու դեմ
Սաստկությամբ վառվող կրակի շուրջը,
Մեր առջև ձորն էր թըշղում խավարըտին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը։

Գիշերվան անքուն հավքերն են տըխուր
Մըվում, ծըկլթում խավարի միջում,
«Որքն» է եղբորը կանչում ցավալուր,
Բուն է իր դաժան վայը կըընչում։

Ու ողջ միասին մի խորունկ թախիծ,
Մի մութ զարգանդ են գիշերին տալիս...
Ահա տարածվեց հեռու ծըմակից
Եվ ձիգ ոռնոցը սոված գիլի։

***

Մանրը տընքալով թեք ընկավ ծերը,
Երկար կոթավոր շիբուխը լցրեց.
Գիշերվա նրման կիտած նոթերը
Խուլ որոտալով էսպես հարցրեց.

— Ի՞նչ կա քաղաքում, դե՛ պատմիր տեսնեմ,
Իմանամ, ես էլ ուրիշին ասեմ.
Մեռնող-ապրողից, թանգ ու էժանից,
Կամ նոր դուրս եկած գազեթից, բանից...

Երեք թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, որ էսպես լինի,
Խորհուրդ են արել, որ այսուհետև
Իր թախտից զըրկվի, ով կռիվ անի։

Ո՞վ է իմացել էսպես հրաշք բան։
Էլ ի՞նչ թագավոր կամ էլ ի՞նչ իշխան,
Որ կռիվ չանի, ուրիշին չըտիրի,
Մարդ չըկոտորի, երկիր չավերի...

— Է՛հ, աստված սիրես, թող դրանց, պապի,
Ես շատ եմ զըզվել քաղքից, գազեթից.
Ի՞նչպես եք ապրում, դու ձեզնից պատմի,
Ձեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից։

— Ի՞նչ ես կորցըրել — ընչի ման գալի,—
Խոսեց ծերունին դառը խնդալով,
Բա մեռած հո չենք, ապրում ենք, էլի,
Ամեն մեռնողի երանի տալով։

Մեր ապրուստն ի՞նչ է.— մի կտոր չոր Հաց,
Էն էլ հըրեն հա՛ — երկընքից կախված.
Մի մարդ որ նըրա երեսը պահի՝
Նըրա ապրուստը ի՞նչ պետք է լինի...



Ես քեզ օրինակ։ Էս խոր ձորերում
Էս է չորս քսան տարիս լըրացավ,
Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ։

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ
Պըտիտ եմ գալի էս ձորի միջին,
Կըռիվս եմ տալի հազար ցավի հետ
Ու չեմ կարենում — չեմ հասնում վերջին։

Վաղներից էնքան օգուտ չի գալի,
Ինչ նրանց համար ես փող եմ տալի.
Գըլուխը քարը, գոնե փող լիներ,
Էլ ինչո՞ւ էսքան մարդ գանգատ կաներ։

Ջախ եմ հավաքում, կրակ եմ վառում,
Սրա համար էլ փող եմ վըճարում։
Էս գաֆեն ի՞նչ է — մի երկու լատան,
Հինգ ու վեց անգամ տարան դատաստան։

Ասում են՝ գեղ ես կտրել դու մերին։
Իրանցն ասում են ու քեզ չեն լսում,
Մինչև չըտեսնես մեծին, պիսերին.
Հիմի տես նրանք ինչքան են ուզում։

Գողն էլ մի կըռնից, դեղն էլ մյուս կըռնից,
Աչքըդ թեքեցիր — բանիդ տերը չես.
Քաշում են տանից, քաշում են դըռնից,
Ու չես իմանում՝ որ կողմը թըռչես։

Թե տանուտերին գանգատ եմ գնում,
Բան չեմ վաստակում բացի դուշմանից.
Գողերի հետքը իր տունն է տանում.
Համեցե՛ք դիվան ուղիր սըրանից։

Նստեցնում է քեզ մի երկու բաժակ
Տաք ջուր խմեցնում կամ մի թաս օղի.
— Դու դնա, պա՛ղի, միամիտ քընիր,
Ես աշքի լուսը կըհանեմ գոդի...»։

Դարձել է աշխարքն, ա՛խպեր, առ ու փախ,
Սերը դարձել սուր ու ջուրը — արին,
Ոչ ամոթ ունի ուժեղը, ոչ վախ,
Վայը եկել է տարել տըկարին։

Երեկ իրիկուն էգ կողքիդ սընից
Կախ էին արած երեք հըրացան.
Տղեք են՝ փախած տանից, դիվանից,
Եկան ու ծեքին էլ ետ հեռացան։

Ո՞վ է մեղավոր... Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով է մեղավոր։
Հենց էն եմ տեսնում — մութն, անգետ մարդիկ,
Էլ մենք ենք մեջտեղ տանջվում ամեն օր...

Մեր բանն էլ, ախպեր, էսպես է եկած.
Մենք լեղու չմնենք — ուժեղը աստված։
Մեր հին աղաթից ընկել ենք, զըրկվել,
Նորն էլ չըգիտենք թե ինչ է եկել։

Էստեղ մեզ մոտիկ թավադներ ունենք,
Ամենքս, իմացիր, տասը տեր ունենք.
Փորներն ողոզած, փոխկները թողած,
Կրտները կանթած՝ կըտերը կանգնած։

Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի,
Թըքես մի ծերից, մյուս ծերը կընկնի.
Ոչ ինքն է վարում, ոչ տալիս մեկին,
Բուռն է հավաքել գյուղացու հողին։



Գնում է ուրշի ապրանքը տանում,
Թաքուն հավաքում իր հանդն է անում,
Աղմուկով քըշում իր հանդի միջից,
Շտրափ է առնում անմեղ տիրոջից։

Պարում է ամեն հարսանիքներում,
Կամ մեծավորի թեփշի է լիզում,
Մինչև մի քանի շահի է ճարում,
Էն էլ՝ տանում է լափում Թիֆլիզում։

Մի օր սա եկավ, թե՝ չոբան Զատին
Ոչխարը թաքուն իմ հանդն է քաշել.
Զատին էլ կուլ չի ղընաց թավադին.
— Թող գա մի տեսնենք — էդ ո՞վ է տեսել։

Աղաչանք արի, պաղատանք արի,
— Ա՛յ տղա, ասի, ետ քա՛շվի, հեռի՛,
Բեր ձեռը վեր կալ, անեծք չար բանին...
Բայց ի՞նչ հասկացնես բրոի չոբանին։

— Չէ՞ որ չէ՛, ասավ, էն լեռ սարի պես
Գընաց դիք կանգնեց դեղի մեյդանում.
Էս դատաստանը, էս թավադն, էս ես,
Թող գա մի տեսնենք ինձ ինչ է անում։

Եկան իրարու, խոսք խոսքի հասավ,
Զատին մի քանի կոշտ խոսքեր ասավ.
Դե մարդիկ երբ որ կռիվ են անում,
Մեջտեղ փըլավ չեն իրար բաժանում։

Մեր տանուտերն էլ, ասված է օրհնել,
Էսպես մի բան էր պակաս ներքան էլ.
Մեկի պոչը միշտ մեկէլի տակին,
Եկավ տաքացած, ճիպոտը ձեռքին։

Եկավ էս Զատիկս հաշիցը կապեց,
Ինչքան որ գիտես՝ քո ասած թակեց,
Թե՝ պետք է կորցնեմ քեզ էնքան հեռու,
Որ էլ չըտեսնես արևը լոռու։

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի ոտը խընդիրքով,
Ինչքան որ տվինք, ավել խընդրեցինք —
Բանը վերջացնի գեղական կարգով։

Ախպե՛ր, ասեցինք, ի՞նչ արիք իրար,
Խոսք ենք կռվացրել, արին հո չարիք.
Համ ծեծել տըվիր, համ ըշտրափրդ ուռ,
Արի՝ վերջացրու, բոլ էլավ, հերիք։

Սա ոտը դրեց վերի թարեքին.
— Էսքան ու էսքան բերեք, որ ներենք...
— Էս է տունեցածն ասաբծու տակին,
Էլ չըկա, ա՛խպեր, ո՞րտեղից բերենք։

Ինչ տրինք, չարինք, չեկավ հավատի.
Գընաց ավելի բարձրը գանգատվեց,
Թե՝ ինքըս թավադ, թավադի որդի,
Ու չոբան Զատին ինձ ուշոմց տըվեց...

Վերևից մի մարդ եկավ քննությունն,
Միրուքը հաչա, աստղը ճակատին,
Եկավ, վեր եկավ, մըտավ բյոխվի տուն,
— Ո՞րտե՛ղ է, ասավ, էն չոբան Զատին...

Զատին էլ եկավ անճոռնի ու մեծ,
Էն փետի նըման մեջտեղը տընկվեց.
Ոչ օրենք գիտի, ոչ կարգն ու լեզուն,
Բերանը կապած սարի անասուն։



Քննությունն արին, բըռնեցին գյադին,
Թե՝ ի՞նչպես ուշոմց կըտաս թավադին.
Բայց արին տեսան գըրած զակոնում,
Թե չոբան Զատին Սիբիր է դընում։

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի ոտը խնդիրքով,
Ինչ ուզեց, տըվինք, հետո էլ խընդրեցինք՝
Բանը վերջացնի գեղական կարգով։

«— Ա՛խպեր, ասեցինք, ինչ արիք իրար,
Խոսք ենք կռվացրել, արին հո չարի՞ք.
Համ ծեծել տըվիր, համ ուզածդ առ,
Արի վերջացրու, բոլ էլավ, հերիք։

Հո՛ գիտեք, ասավ, ես էլ խըղճի տեր,
Չեմ ուզում ընկնեմ արինն էդ տըղի,
Դըրա խիղանը մենակ էս գիշեր
Պետք է որ գըցի տեղը էս աղի...»։

Մարդը խիղճ ունի՝ էսպես է ասում,
Սըրանից ավել էլ ի՞նչ ենք ուզում.
Բայց տըղամարդը, որ նամուս ունի,
Լավ է իմանում ինչ պատասխանի...

Երեկ իրիկուն էդ կողքիդ սընից
Կախ էին արած երեք հըրացան։
Քանի՞-քանի մարդ կորավ իր տանից,
Քանի՞-քանի մարդ դառավ մարդասպան...

Ո՞վ է մեղավոր։ Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով է մեղավոր.
Բայց իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում—
Ապրիլ չի լինիլ էսպես ամեն օր։

Միթը իր կամքին՝ ինչ ասես՝ անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի.
Ես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
Էն ո՞ր աստվածն է կարգ դրել էսպես...

Երկուսն էլ հայ են, ունեն մի հավատ,
Էլ ընչի՞ մուժիկ, կամ էլ ի՞նչ թավադ.
Նրա արինը կարմի՞ր է մերից,
Թե՞ ավել հունար դուրս կըգա ձեռից։

Թե չէ՝ թավադ ես՝ ինչ ուզես անես,
Ես չըկարենամ քեզ մի խոսք ասե՞լ...
Է՞հ, մի՛ խոսեցնի, աստված կըսիրես,
Թե չէ մի դաշտդ կըդառնամ ես էլ...

Լըռեց ծերունին։ Իրար դեմ ու դեմ
Թիկնած էինք թեժ կըրակի շուրջը,
Մեր առջև ձորն էր թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում գիշերվան շունչը։

---

# 1901

## ԱՆՈՒՇ

### ՆԱԼԵԵՐԳԱՆՔ

(ՀԱՄԲԱՐՁՐԱՆ ԴԻՇԵՐԸ)

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թրոչելով՝
Փերիները սարի գագաթին
Հավաքվեցին գիշերով։

— Եկե՞ք, քույրե՞ր, սեգ սարերի
Ըրքնաղագեղ ոգիներ,
Եկե՞ք, ջահել սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ։

Օխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով, լուս ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սըրտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սերին...

Ափսո՞ս, Անո՞ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՞ս իգիթ քու յարին.
Ափսո՞ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՞ս էդ ծով աչքերին...։

Ու նրրանց հետ՝ ցող-արցունքով
Լցված սրրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տրխուր սյուքով
Հառաչեցին էն գիշեր։

«Վուշ-վո՜ւշ, Անո՜ւշ, վուշ-վո՜ւշ, քուրի՜կ,
Վո՜ւշ քու սերին, քու յարին...
Վուշ-վո՜ւշ, Սարո՜, վուշ-վո՜ւշ, իգի՜թ,
Վո՜ւշ քու սիրած սարերին...»։

— Եկե՜ք, քույրե՜ր, սեգ սարերի
Ջրքնաղագեղ ոգիներ...»։
Ու փերիներն էսպես տրխուր
Երգում էին ողջ գիշեր։

Կանչում էին հրրաշալի
Հընչյուններով դյութական,
Ու հենց շողաց ցոլքն արևի՝
Անտես, անհետ լքվացան։

Խոր սուզվեցին ակն աղբյուրի,
Մրտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վրտակների
Ալիքները պաղպաջուն։

## ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

### I

Կանչում է կրրկին, կանչում անդադար
Էն ջրքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու, թևերն ահա փրռած տիրաբար,
Թրռչում է հոգիս, թրռչում դեպի տուն։
Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղո՜ւց կարոտով ըսպասում են ինձ,
Ու ձրմրան երկար գիշերը նրստած՝
Խոսում են Լոռու հին-հին քաջերից։



Դեպ էն սարերը, որ վես, վիթխարի,
Հարրած շարքերով բրռնած շուրջպարի,
Հրսկա՜ շուրջպարի բրռնած երկրնքում,
Հրրճվում են, ասես, էն մեծ հարսանքում
Պերճ Արագածի նաղելի դրստեր,
Որ Դև-Ալ, Դև-Թեթ և այլ հրսկաներ,
Խոլ-խոլ հրսկաներ հրնոց աշխարհի,
Փախցրրին բերին անառիկ Լոռի։

### II

Է՜յ հին ծանոթներ, է՜յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա ու միտրս ընկան,
Առաջրս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դեմքեր, որ հիմի չրկան։
Անցե՜լ են, ոնց որ ծաղկունքը պես-պես,
Որ անցած գարնան կային ձեր լանջում.
Անցե՜լ՝ ձեր գլխի հերվան ձյունի պես,
Բայց եկել եմ ես՝ նրրանց եմ կանչում։
Ողջո՜ւյն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր,
Ողբացած հոգիս ողջունում է ձեզ,
Թրռչուն կարոտով փրնտրում ձոր ու լեռ,
Դյութական ձայնով կանչում է հանդես։
Դո՜ւրս եկեք կրրկին շիրմից, խավարից,
Դո՜ւրս եկեք տեսնեմ, շոշափեմ, լրսեմ.
Կյանքով շրնչեցե՜ք, ապրեցե՜ք նորից,
Լցրե՜ք պոեմի հաճույքը վրսեմ...

### III

Եվ մութ այրերից մամռոտ ժայռերի,
Թավուտ ծրմակի լրռին խորքերից,
Մանուկ հասակիս հրնչուն ծիծաղի
Արձագանքն «ահա լրսում եմ նորից։
Թրնդում է զրվարթ աղմուկը բինի,

Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից,
Ու բոլորն, ահա նորից կենդանի,
Ելնում են աշխույժ վաղորդյան մութից,
Ու թա՜ռմ, ցողապատ լեռների լանջում...
Սո՜ա... ակա՜նջ արա,— հովիվն է կանչում...

## IV

— Աղջի՛, անասված, նըստի՛ր վըրանում,
Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում:
Խազեր կապելով,
Չոլեր չափելով,
Ոչխարըս անտեր,
Ընկել եմ հանդեր:
Ամա՜ն, էրեցիր սիրտըս քու սիրով,
Ուզես կապեցիր թել-թել մաղերով,
Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ գոռով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ
Թուխամազ Անուշ:
Քու հերն ու մերը թե որ ինձ չըտան,
Արին կըթափեմ ես գետի նըման.
Սարերը կընկնեմ — կորչեմ անգյուման,
Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերըդ կամար
Աղջիկ, քեզ համար:

## V

Ելնում է Սարոն, ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նըստի վըրանում:
— Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ,
Դու չե՞ս իմանում... ականջ արա, տե՜ս...



— Հերի՛ք է, Անո՛ւշ, ներս արի դագեն,
Քանի՛ դուրս թըռչես, նայես դես ու դեն,
Տեսնողն էլ կասի — ի՞նչ աղջիկ է սա...
Հազար մարդի մոտ կերթա-կըխոսա:
— Մըտի՛կ տուր, նանի՛, էն սարի լանջին
Ի՞նչքան ավյուկ է տալիս կանանչին...
Նանի՛, թող գընամ քաղեմ ու հյուսեմ,
Էն սարի լանջին «ջան գյուլոսմ» ասեմ:
— Հանգի՛ստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝
Ի՛նչ ունես ջահել չորանների մոտ,
Նըստիր վըրանում քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, ա՛ղջի, ամոթ է, ամո՜թ:
— Ա՜խ, սիրտըս, նանի՛, չըդիտեմ ընչի,
Մին լաց է լինում սևակնա՜ծ, ուրմո՜ւր,
Մին թև է առնում — ուզում է թըռչի,
Չըգիտեմ՝ թև ո՜ւր, չըգիտեմ՝ թե ուր...
Նա՛նի ջան, նա՛նի, ես ի՞նչպես անեմ,
Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալեդ...
Նա՛նի ջան, նա՛նի, կուժը թող առնեմ,
Աղբյուրը գընամ աղջիկների հետ...

## VI

Կըժերն ուսած՝ թըռվըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը գընգում սարն ի վեր:

— Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում.
Էն ո՞ւմ յարն է նըստած լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, գուլալ ջըրեր,
Որ գալիս եք սարերից.

Գալիս՝ անցնում հանդ ու շոլեր,
Ցարս էլ խըմե՞ց էդ ջըրից,

Ցարաբ խըմե՞ց, յարաբ հովցա՞վ
Վառված սիրտը էն յարի,
Ցարաբ հովցա՞վ, յարաբ անցա՞վ
Անքուն ցավը ջիգյարի...

— Աղջի՛, քու յարն եկավ, անցավ,
Վառված, տարված քու սիրով,
Էրված ջիգյարն՝ եկավ, անցավ,
Ջըհովացավ պաղ ջըրով...

Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փըրփըրում.
Ա՜խ, իմ ապիզ յարն է լալի
Հոնգուր-հոնգուր էն սարում։

## VII

Ու պառավ նանի սըրտի մեջ հանկարծ
Ջեն տըվավ թաքուն մի խավար կասկած.
— Էն ե՞րբ էր՝ Անուշն իր կուժը առավ,
Աղբյուրը գընաց ու ետ չըդառավ...
Ամպերն եկել են սարերը պատել,
Ջորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար շար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի...
Ու ելավ տեղից պառավը հանկարծ.
— Ո՞ւր կորար, Անո՛ւշ, ա՛յ մաղըդ կըտրած...
Թե ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անահ զավակին.
— Աղջի՛, սնասի՞ռ, քու ահը կըտրի,
Աղջիկը մենակ ձո՞րը կըմընի.
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,



Ի՞նչ ես կորցըրել՝ չես կարում գըտնել...
Աղջի՛, հե՛յ Անուշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ...
Ծընկանը գարկում, հառաչում է «վո՛ւշ»...
Ու ձորի գըլխին մոլորված կանգնած
Նայում է, ներքև սիրտը սեակնած,
Ամպերն եկել են սարերը պատել,
Ջորերը լըցվել, իրար փաթաթվել,
Հազար շար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի։

## VIII

— Թո՛ղ, կանչում են ինձ... մերըս կիմանա...
— Չէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի քիչ էլ մընա...
— Չէ՛, թո՛ղ, ես գնամ... ա՜խ, ի՞նչ խենթ եմ ես...
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,
Հենց ես եմ մենակ լալիս ու տանջվում,
Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
Վաղո՞ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես ե՞րբ եմ եկել էստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընո՞ւմ, անիրա՛վ,
Էնքան մընացի՝ աչքըս ջուր դառավ.

Ինձ չես լըսում,
Չես ափսոսում,
Էլ չես ասում —
Ինչ կըլնեմ ես...
Ես կը վառվեմ,
Հուր կը դառնամ,
Ես կը հալվեմ —
Ջուր կը դառնամ,
Ես... չը գիտեմ
Ինչ կը դառնամ,
Թե որ մին էլ
Էսպես մընամ...

Ասում են՝ ուրին
Աղջիկ էր ինձ պես,
Մընում էր յարին,
Ու չեկավ նա տես։
Խեղճը դողալով՝
Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ,
Ուռենի դարձավ...
Ջրերի վրա
Գլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամրողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին
Ո՞նց է մոռանում...

— Ա՜խ, Անո՜ւշ, Անո՜ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լըսում.

Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խոսում...

Էն, որ գիշերով շըշու եմ փըչում,
Էն ո՞ւմ եմ կանչում...

Էն, որ մոլորված նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում...

Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ հիշում...

Ա՜խ, Անո՜ւշ, Անո՜ւշ, անաստվա՛ծ Անո՜ւշ...»
Արբեցա՜ծ, անո՜ւժ
Հառաչեց հովին ու ոըրտին ընկավ,
Հալվեցա՜վ, հանգա՜վ...



## IX

— Անո՜ւշ, ա՛յ աղջի՜, Անո՜ւշ, տուն ապի...
Կանչում է մերը, հառաչում, կանչում։
— Գալիս եմ, գալի՜ս, գալիս եմ, նանի՜...
Ջորից աղջըկա ձենն է դողանջում։
Ու մայերն անկարգ տըված թիկունքով
Ու ցըրված շիկնած այտերի վըրան,
Դուրս եկավ թեթև ամպերի տակից
Անուշը՝ փախած եղնիկի նըման։
Նա կուժը դատարկ ետ բերավ կըրկին,
Իսկ ուսին տարած ուսաշոր չըկա,
Թողել է էն էլ ջըրի եզերքին...
Ա՜խ, անհոգությունն չահել աղջրկա...
— Նանի՛, վախեցի, գանգատվում է նա,
Եվ ուզում է լալ, չի կարողանում.
Նանի՛, ներքևում ես մարդիկ տեսա,
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում...
Անիծում է ծեր մերը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անեծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին։

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

## X

### (ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԱՌԱՎՈՏԸ)

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով.
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով.

«Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,

Սև սարեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա։

Սրգ ու բույր խառնած,
Թև-թևի բռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպես թիթեռներ։

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Լավ օրեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա։

Եկավ Համբարձում
Ծաղկով զարդարված,
Մեր բախտին հարցում.
— Ո՞վ է մեզ դրրված։
— Ա՛յ ջան տղա, շոբա՛ն տղա, ո՞ւմն ես դու։
— Աստված դիտի, աշխարհ դիտի՝ իմն ես դու։

Դե հանի՛ր, ա՛ղջի,
Վիճակն ի բարին,
Երգերով գովենք
Էն իգիթ յարին։
— Բեղը ծիլ-ծիլ, բույը թիլ-թիլ էն յարի,
Ի՞նչ դարդ ունեմ քանի նա կա աշխարհի։

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Հուր սրտեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա։



Թընդում են երդեր, խընդում են սրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մեկին իր երգն ու սեր,
Մյուսի մուրազը սրրտումն է մընում։

XI

Պրատույտ է տալիս վիճակը նորից
Քուշուշքը գրլխին ծաղիկ Ծաղկամեր,
Թընդում «ջան գյուլում» մատաղ սրրտերից,
Հետը զրվզրվում՝ էն ծաղկատ սարեր։

«Ա՛յ թուխ մազավոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգյարին դյուլա գիպչի
Քեզ սիրի ով որ, աղջիկ»։

— Ո՞հ, ի՞նչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,
Սևաբա՛խտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորված, ապուշ։

— Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի շար խոսք է սա.
Սիրտդ մի՛ կոտրի սուտ բանի համար,
Քու խաղը խաղա՛, ջան գյուլում ասա։

— Ա՜խ, չէ՛, ես գիտեմ, որ ես բախտ չունեմ.
Ես երբե՞ք, երբե՞ք բախտ չեմ ունեցել...
Ես միշտ էլ էսպես անբախտ կըլինեմ.
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել... :
Ասում են՝ մի օր, ես օրորոցում,
Մի պառավ դարվիշ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում.
Իմ նանը նըրան բաժին չի տալի։

— Կորի՛, ասում է, կորի՛ մեր դրանից,
Սրեխաս ճաքեց, հեռացի՛ր, գընա՛...»
Ու դարվիշն էնտեղ անիծում է ինձ,
Թե՝ դրրա օրը լացով անց կենա...
Ա՜խ, էն դարվիշի անեծքին անգութ
Ու էս վիճակին տեղյակ է աստված.
Սիրտս էլ միշտ փա՜կ, սիրտս էլ միշտ մո՜ւթ,
Ի՞նչ կա, չըդիտեմ, իմ առջև պահված...

— Մի՛ ասրտմիր, Անո՛ւշ, մի՛ լինիր համառ.
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դարվիշ, մի անեծք հիմար,
Ու լալիս ես դու էդպես սրրտաճա՜ք...
Հանդի՛ստ կաց, քուրի՛կ, մի՛ վախիր էդքան.
Կյանքը քեզ համար վառ դարուն է դեռ,
Էգ քո նորահաս մատաղ կուսության
Առաջև դեռ կան երջանիկ օրեր։
Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա.
Սիրտդ մի՛ կտրի սուտ բանի համար,
Քու խաղրդ խաղա՛, ջան գյուլում ասա՛։

(Խումբը երգում է)

Աղջի, բախտավո՛ր,
Երնե՜կ քու տերին,
Քու սարի սովոր
Սև-սև աչքերին։

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սեր-օրեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա։

Մեռնեմ գարունքիդ,
Դաղկած գարուն ես,



Սարի պես մեջքիդ
Կանգնած յար ունես։

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սար-յարեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա։

(Անուշը մենակ)

Ա՜խ, իմ բախտը կանչում է ինձ՝
Չեմ հասկանում դեպի ուր...
Դողում է պաղ նըրա ձենից
Իմ սիրտը սև ու տրխուր։

Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք,
Թաքուն մի ցավ ունիք ըստ,
Աչիկներդ լիքն է արցունք,
Սիրտներդ սև ու տրխուր։

Ա՜խ, ծաղիկներն էս աշխարհքում
Տանջվում են միշտ էսպես զուր,
Տըրորվում են ու թառամում
Սիրտները սև ու տրխուր։

(Խումբը հեռվից)

Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Վառ ցավեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա։

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

### XII

Զըմրան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի.
Գյուղն էին իջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի։

Ու պարից հետո լեն հրրապարակ
Բաց արին մնջտեղն արձակ դրլխատան,
Զուռնաչին փրչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան։
Հարա՜յ են տալի — «քաշի՜ հա, քաշի՜...»։
Ու դուրս քաշեցին դռռով երկուսին.
Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
Անդրանիկ եղբայր, գառնարած Մոսին։
Ողջ գյուղը կանգնեց պարբսպի նման,
Ջոկվեց, բաժանվեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տղերանց մեկի։
Գոռում են, գոչում երկու բանակից.
— Սրբատպինգ կացե՛ք, մի՛ վախեք, տղե՛ր,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարս ու աղջկերք։
Ու տաքանում են տղերքը սասակի,
Փեշերը հավաք խրում են գոտին,
Գետին են զարկում ձևոքիրը հասալիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...
Աղաթ կա սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընոց աղաթին՝
Ամրոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին։
Ու իրար բրռնած Սարոն ու Մոսին
Քաշում են, ընկնում խողապարկուկի,
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դրժվար է իրրև հաղթել մեկ մեկի։
Իկուր է գոռում ամբոխը հարբած,
Զուր սրբատարրով նայում աղջիկներ,
Եվ զուր է Անուշն իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել ինչպես մի պատկեր։
Անուշը կանգնա՜ծ... Սարոն նրկատեց,
Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ.
Աչքերի առջև մըլարը պատեց,



Մոռացավ ընկեր, աղաթ ու աշխարք։
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արավ Սարոն, ծրնկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու շոքեց վրրեն։
Ամբոխը թափվեց հարա-հրրոցով,
Վեր թրոցրեց ջահել փահլևաններին,
Եվ՝ ուրախության աղմուկ-գոռոցով
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին։
Ցընծության ձայնից, ծափերի զարկից
Նարժվում են, գոռում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջրկերք։

## XIII

Վեր կացավ Մոսին. իրեն կըտրատում,
— Թող գա՛, գոռում է, տր բրռնենք նորից,
Թե չէ նամարդը, արևս եմ երդվում,
Էլ չի պրրծնելու երբեք իմ ձեռից։
Վե՞ր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
Մեյդան բաց արե՛ք, թող մին էլ մեջ գա...։
Ու ամեն կողմից ուրախ հրահրում,
Թունալի ծաղրով կանչում են, գոռում.

— Չե՛լավ, էդ չե՛լավ,
Վեր չի գըցել գետ,
Մոսին թոլ էլավ —
Խողապարկուկ էր...
Հա՛, հա՛, հա՛, տրղե՛րք,
Շատ էլ լավ կանի.
Մեջքը թա՛փ տրվեք,
Թող մին էլ բրռնի...
Հա՛, հա՛, հա՛, տրղե՛րք,
Մեջքը թա՛փ տրվեք...։

## XIV

Եվ աղմկալի հարսանքի տանից
Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր.
Արյուն է կաթում սևակնած սրտից,
Գրնում է ըշտապ, քայլերը մոլոր։
— Ամո՞թ քեզ, Մոսի՛, թո՛ւք ու նախատինք,
Ամո՞թ քեզ նրման գոված իգիթին,
Մի անունդ հիշիր, մի բոյիդ մրտիկ,
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին։
Ի՞նչպես վեր ընկար դո՞ւ — սարի նրման,
Երբ որ նայում էր ողջ գյուղը կանգնած...
Դո՞ւ... կուշ դաս տակին Սարոյի ծրնկան,
Նրրանից հետո երեսս կանա՞նց...
Եկա՞ծ էր էս բանն իսկի քու գլխին...
Ոաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դե մեռի՛ր, էլի՛, գետի՛նը մրտիր,
Տանը վե՛ր ընկիր՝ ի՛լիկ պրտրտի՛ր...։

## XV

— Վա՛յ, վա՛յ, Մո՛սի ջան, ինձ մի՛ ըսպանիր,
Սրրանից հետո չե՛մ սիրել նրրան...
Վախենում եմ ես... զամեդ տեղը դիր...
Սիրտս դողում է տերևի նրման...
Խընդրում էր լալով եղբոր առաջին
Անդոր ու դալուկ իր քույրը շորած,
Մոսին՝ փայլկրտուն խանչալը ձեռին՝
Ուզում էր մորթել նրրան՝ աչքը բաց։
— Դե իմ անունով երդվիր, անրզգա՛մ,
Որ էլ Սարոյին դու չես սիրելու,
Թե չէ՝ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
Մինչև դաստակը սիրտդ եմ խրրելու։
— Քու ոտի հողն եմ, Մո՛սի ջան, Մո՛սի,
Դու քու եսիրին երդո՞ւմ ես տալիս...
Ես էլ Սարոյին չեմ սիրում՝ ասի,



Տեսնո՞ւմ ես չոքած ի՞նչպես եմ լալիս...
— Դու խաբո՞ւմ ես ինձ, ստոլի՛կ, խաբեբա՞։
Չե՞ս սիրում ասիր. էն ի՞նչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մրտնում՝
Հեկեկում ես դու գիշերվա մրթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարո ջան, Սարո՞... Սարո» ես ասում...
— Մո՞սի ջան, Մո՛սի, գրլխովրդ շուռ գամ,
Ինձ մի՛ ըսպանիր, ինձ թող էս անդամ.
Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչիլ ես նրրան երազում...
Ինձ մի՛ ըսպանիր, դամեդ տար հեռու...
Քու քույրը չե՞մ ես... իմ Մոսին չե՞ս դու...

## XVI

Ու էն հարսանքից թրշնամի գարձան
Ախպեր տրղերքը էս գեպքի համար.
Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
Կրրկին հաշտությյան չեղավ մի հրնար։
Անկոտրում Մոսին էլ ո՞ր Մոսին էր,
Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարքում,
Իրեն հարազատ քրտրջը տեսներ
Նամարդ ընկերի — Սարոյի գրրկում։
Գուցե գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
Ուզում է ջահել քրրոջն ըսպանի,
Սարոյի անունն ու սերը թաքուն
Խանչալի ծերով սրրտիցը հանի։
Ո՞վ գիտի, գուցե հենց էս գիշեր էլ
Իգիթ ոսոխներն, անհաշտ ու համառ,
Մեկմեկու հոտից ոչխար են քրշել,
Մեկմեկից վրրեժ առնելու համար։
Կարող է նույնպես պատահել հանկարծ,
Որ մեկի գեղը — արդյունքը հրնձի,
Գիշերվա ժամին, հրրով բրոբնկած,
Երկնահաս բոցով ասաղերը խանձի։

## ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

### XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նըման
Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
Քարոտ թիկունքից Զաթինդաղ լեռան
Նոր է արևը պըռունդը հանում։
Գյուղում աղմուկով իրար են անցնում,
Կըռներ ծերերին կանայք հավաքված,
Տըղերքը գեպի քարափն են վազում։
Հըրացանների կիսերից բռնած։

### XVIII

Եկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդովված տըղերանց միջին,
Մատը դեպի ձոր մեկնելով հանդարտ
Էապես նա պատմեց դոռ տալով շիրխին։
— Էս գիշեր, կեսը կըլներ գիշերվա,
Դեռ չէի կըպցրել աչքըս տեղի մեջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղվա,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հա՛, հալալ կեսը կըլներ գիշերվա,
Շունը վերկացավ էս կըռան վըրա.
Հեյ-հե՛յ, կանչեցի, ձեն տըվող չկավ.
Շունը գաղալեց, շունը վեր կալավ...
Հե՛յ գիդի, ասի ինքըս իմ միջում,
Ի՞նչ է մընացել առաջվան տըղից.
Քընում էի վաղ մենակ արխաջում,
Մի ձեն լըսելիս վեր թըռչում տեղից...
Էն էի ասում, քընել չէի դեռ.
Կը լիներ դաղը գիշերվան կեսը,
Երկու մարդկային սև կերպարանքներ
Շան առջև փախած՝ ցած իջան դեսը...»։



Էս որ լըսեցին, դես ու դեն ցըրված
Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
Ու մըտի տակին, ճամփեցը ծըռված,
Երկու մարդու թարմ ոտնատեղ գըտան։

### XIX

Ամբողջ մի ամիս խումբը գինավառ
Սարեր ու ձորեր ոտնատակ տըվեց
Զոքան Սարոյին գըտնելու համար,
Որ սարիցն իջավ, Անուշին փախցրեց։
Մի ամսից հետո տըղերքն եկան տուն,
Գովելով նըրա արարքը ճարպիկ.
— Հալալ է տըղին, ա՛յ իգիթություն,
Ահա թե ինչպես կըփախցնեն աղջիկ։
Մենակ Անուշի ախպերը — Մոսին
Մընաց հանդերում. երդում կերավ նա,
Ուր որ էլ լինի՝ նըրանց միասին
Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանա։
Մնաց հանդերում։ Եվ ահա մի օր,
Քաղվոր կանանց մեջ, մըթան հետ, թաքուն,
Շորերը պատռած, տխուր, գըլխակոր
Անուշը ձորից եկավ հորանց տուն։

### XX

— Աղջի՛, Վա՛ըդիշաղ, թե հոգիդ սիրես,
Մի գարիդ գըցի՛ր, տե՛ս ի՞նչ է ասում.
Աչքըս խավարի, տեսիլ դառնամ ես,—
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում։
Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ,
Անբախտ Սարոյի ոչխարը կանգնած,
Լեղու էր առել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ձեն ձենի տըված...
Մի գարիդ գըցի՛ր, թե որդով խընդաս,

Էս երազն խակի ես լավ չեմ փոքձել.
Ողորմած աստված, քու գուռը բանաս,
Քու տուի հոգն ենք — դու ես ըստեղծել...
Անբան գառները մութ ձորի միջին
Խաղ էին կանչում ու ձենով լալիս,
Սարոյի նանն էլ նրրանց առաջին
Աղլուխ էր առել ու պար էր գալիս...
— Աջի՛, Մանի՛շակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ, ահա, էդպես գուրս եկավ.
Էս չարն, էս բարին... Սարան է էս էլ...
Տե՛ս, ահա, Սարոն սև ճամփեն ընկավ...
Աստված խընայի ջահել-ջիվանին,
Ապտված խընայի իր անբախտ նանին...

## XXI

Ու ման է գալի սարերը ընկած
Սարոն փախցրած եզչերվի նըման,
Օրհան առաջին, գընդակն ետևից,
Հանդերը՝ դրժոխք, ընկերը՝ դուշման։

Եվ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խավարն է պատում,
Նրրա բայաթին ողբում է տըխուր,
Ընկեր սարերին խոսում, գանգատվում։

«Քարե՛ր սարեր, ա՛յ սարեր,
Ձեն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք,
Իմ գարդերի թալ սարե՛ր։

Որս եմ՝ բուլթես ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած,
Կուզեմ կորչեմ անգյուման,
Էս աշխարքից բեզարած։



Կորչեմ բեզար դատարկոն,
Քար-սարեսար դատարգյոն,
Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար-քուն։

Ա՜խ, կը մեռնեմ՝ ամա նա
Վա՜յ թե հանկարծ իմանա,
Ես ազատվեմ էս ցավից,
Աչքը լալով նա մընա»։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

## XXII

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խոսք չեն գըտնում ասեն անարգված,
Տարած-եկա բերած, անբախտ աղջըկան։
Աստված խընայեց՝ կոպիտ ախպերը
Հեռու՝ հանդերից գեռ առն չէր գարձել,
Իսկ խոժոռադեմ ալեոր հերը
Ըսկսավ փըրփըրած թըքել, անիծել։
— Դո՛ւրս գընա, կորի՛, ա՛յ լիրբ, անըսգա՛մ,
Սև ու սուգ լինի թաղ ու պըսակըդ.
Կորի՛, չերևաս աչքիս մյուս անգամ,
Գետինը մըտնի երկար հասակըդ։
Տեսա՛ր, որ նրրան առում է Մոսին,
Ձեն ուզում, տեսար, նրրան հերն ու մերդ,
Դու քա՞նի գլուխս ունիս քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում նրրա հետ։
Խոնըված գյուղացիք կըտուրից իջան
Մեղմելու կոպիտ բարկությունը հոր,
Հայտնըվեց նույնպես գյուղի քահանան,
Մի պատկառելի հըսկա ալեոր։
— Դո՛ւրս գընացեք, դո՛ւրս, գոլեց տերտերը.
Անուշը թողեք ուղիղն ինձ ասի,

Թողնք նա հայտնի իր միտքն ու սերը,
Նրբանից հետո բանը կըպարզի։
Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
Սիրո՞ւմ ես նրան, քու կամքո՞վ փախար...
Եթե սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...
— Ի՞նչ են հաուաշում... էն ո՞վ էր, մի ան՛ս,
Որ դուրսը հանկարծ աղմըկեց էսպես...
Ի՞վ է ըսպանել... Ասի՞ն... ո՞ւմ... ո՞ւր...
— Անո՞ւշ, հե՛յ Անո՞ւշ... ջուր հասցրե՞ք, ջո՞ւր...

## XXIII

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկընքի մըթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ սատսիկ սրընթաց,
Գյուղից սըլացան մի խումբ կըտրիճներ։
Ցավից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թրոչում են, ասես ահից հալածված,
Ու Նըրանց առջև ահռելի բացվում,
Թըշշում է ձորը արյունով լըցված։
Գյուղը դատարկվեց մի ակնթարթում,
Փարափի գըլխին կանգնած անհամբեր,
Լո՞ւռ, սըրտատրոփ ականջ են դընում,
Նայում են ներքև... ձեն չի գալիս դեռ.
Դեբեդն է մենակ անդընդում հուզված՝
Եըլաձայն ողբով սողում դեպի ցած։

## XXIV

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր։
Առանց նայելու մարդկանց երեսին,



Առանց խոսելու, սակնած, դաժան,
Սոտեցավ սրահին, կախ տըվավ սընին
Սև հըրացանը — սև օձի նըման։
Պապանձվեց նույնպես ամբոխը մեխված,
Ոչ ոք ծըպըտալ չի համարձակվում,
Մենակ մի հոգի անկուսակ կատաղած՝
Հարա՞յ է կանչում, երեսը պոկում։
Մեռած չորանի պառավ նանն է նա՝
Ցավից խելագար բառաչում, լալիս,
Տարարա՞խտ ծընող, վազում է ահա,
Զորիցն է տըխուր գոռոցը դալիս։

## XXV

Սըգավոր կանայք Նըրա նահից
Հարա՞յ կանչելով ձորը վազեցին,
Իրենց կորցրածն էլ հիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարվեցին։
Իգիթին՝ վայել սըրտառուչ ողբով
Լաց ու կոծ արին ձեն ձենի տըված,
Տըղերքն էլ մըթին, լուռ ու գըլխակոր,
Մընացին մոտիկ քարերին նըստած։
Ողբացին անշունչ դիակի վըրա,
Անտեր մընացած ոչխարի մասին,
Անսիրտ անեծքով հիշեցին Նըրա
Անճար մընացած խեղճ յարի մասին.
Եվ Նըրա մասին, որ ընկերները
Հանդը դընալիս Սարո կըկանչեն,
Որ սարից փախած տված շընները
Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն։
Ծանրը շոմբախը, զըլուխը մեխած,
Օճորքում դըրած պիտի մըրոտի,
Երկար խանչալը, պատիցը կախած,
Պատենում մընա ու ժանգը պատի...
Որ հով սարերի սավորած նանը
Էլ սար չի դընալ առանց Սարոյի,

Սև շորեր հագած կընոստի տանը,
Անցած օրերը միտը կբերեր։
Եվ ամեն մի խոսք, մի հիշողություն
Կրտրատում էին սիրտը ծեր նանի,
Եվ աղաչում էր նա մեռած որդուն
Մի անգամ խոսի, աչքը բաց անի։
— Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,
Իմ օր ու արև, կյանք ու ջան որդի,
Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
Թըշնամի՛ որդի, դավաճա՛ն որդի...
Բայց չէին փակվում աչքերը փակված,
Շուրթերը սառել, շորացել էին,
Նըրանց արանքից ատամները բաց
Սիպտակ շարքերով երևում էին։
Ու նա կատաղած՝ հանդուգն անեծքով
Մառա եղավ դուշման երկընքի դիմաց,
Եվ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
Եվ լալիս էին ձեն ձենի տրված...
«Կարմիր արևից ընկած, Սարո ջա՛ն,
Կանանչ տերևից ընկած, Սարո ջա՛ն...
Արևս հանգավ, Սարո ջա՛ն,
Գիշերս ընկավ, Սարո ջա՛ն...»։
Գիշերը ընկավ, թանձրացավ մութը,
Ու նըվաղեցին ձենները տըրտում,
Հոգնեցի՛ն, հանգա՛ն... Մերուկ Դեբեդը
Սըդում էր մենակ խավար անդընդում։

Սըգվոր գետը
Մեր Դեբեդը,
Սիրտը քըրքրած,
Ջուրը փըրփրած,
Քարուտ ափին,
Լեռ քարափին,
Դեռ ծեծում է,
Հեծեծում է...



## XXVI

Եվ մի քանի ընկեր-տըղերք
Ջորում, գետի եզերքին,
Փոս փորեցին ու սըրտաբեկ՝
Հողին տըվին հովվի դին։
Մառ ու ծաղիկ՝ սըվսըվալով
Բուլր խըմկեցին դյուրեկան,
Մեր Դև-բեդն էլ ահեղ ձենով
Նրգեց վրսեմ շարական։
Ու տըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան գեղի տուն,
Ջորում թողած մի սև բըլուր,
Մի գերեզման անանուն։

## ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

## XXVII

Գարունը եկավ, հավքերը եկան,
Մարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր,
Գետի եզերքին շըրջում է մոլոր.
Շըրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս։
— Սիրուն աղջի՛կ, ի՞նչ ես լալիս
Էդպես մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
Էս ձորերըմ ամեն օր։
Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՞
Մայիս կըգա, մի քիչ կաց,
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,
Ա՜խ, նա գընաց, նա գընա՜ց...
Արտասվելով, լալով էդպես

Եթե չես դարձնի էլ դերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգցրնում ես
Ջահել կրակն աչքերիդ։
Նրրա անբախտ շիրմի վրրա
Պաղ ջուր ածա աղբյուրի,
Դու էլ գընա նոր սեր արա,
Էսպես է կարգն աշխարհի։

— Շնորհակալ եմ, անցվոր ախպե՛ր,
Աստված պահի քու յարին.
Ճամփիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սրրտով դուք ձեր սերը
Վայելեցեք անթառամ,
Ինձ արցունք է տվել տերը,
Ես պիտի լամ, պիտի լամ...
Ու ման է գալիս,
Երգում ու լալիս։
Երգերը անկապ, երգերը տրխուր,
Արցունքի նման հոսում են իզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ էն անմիտ տրտունջն է խոսում.
Թե ինչպես հանկարծ աշխարքը փոխվեց,
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
Սարերը մնացին որբ ու անշոքան,
Թե ի՛նչպես հանկարծ նա դընաց հեռու,
Էլ չի դառնալո՞ւ, էլ չի դառնալո՞ւ...

Ե՛տ դառ, ե՛տ, իգի՛թ,
Ետ դառ, անիրա՛վ,
Կարոտած յարիդ
Աչքը ջուր դառավ։
Ոչխարդ էն սարով
Շուռ տուր, տո՛ւն արի,
Փախի՛ր գիշերով
Ու թաքուն արի...



Ա՛խ, էն կանաչ սարի լանջին
Ո՞վ է քընած էն տրղեն,
Վրրեն քաշած սև յափրնջին,
Կուրը հանած էն տրղեն...
Ջա՞ն, իմ յարն է, ջանի՛ն մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մո՞ւշ, անուշ մրրափել։

Վե՛ր կաց, վե՞ր, իգի՛թ,
Վե՛ր կաց, անիրա՛վ,
Ոչխարրդ բեր կիթ,
Օրը ճաշ դառավ...
Արի՞, ջա՛ն, արի՞,
Քու դայրն մեռնեմ,
Թուխ շորան, արի՞,
Կարոտրս առնեմ...

Տեսե՛ք, տեսե՛ք, դափ ու զուռնով
Ի՞նչ հարսնիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով
Ձի են խաղում, շափ տալի...
Աղջի՛, աղջի՛, մրտիկ արեք,
Էս ի՞նչ տեսիլք ես տեսա.
Ո՞վ էր տեսել էսպես հարսնիք —
Ոչ հարս ունեն, ոչ փեսա...

Թերում են հրրե՞ն,
Ամա՞ն, մեր տան դեմ...
Վե՛ր դրրեք, վրրեն
Հյուսերրս քանդեմ...
Ես էլ եմ գալի՞ս,
Էդ ո՞ւր եք տանում...
Ինձ էլ թաղեցեք
Իր գերեզմանում...

Ա՜խ, չէ՞, ամա՞ն, ասում են՝ դա
Մի դիակ է լո՞ւռ, հոտած,
Արյունը չոր գեմքի վրա,
Աչքերն անթա՞թթ, սիպտակած։
Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցողոտ-շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի՞, ջա՞ն իգիթ,
Արի՞, անիրա՛վ,
Կարոտած յարիդ
Աչքը չուր գառավ։
Էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ կացել,
Էլ մի՛ լացացնի,
Ես շատ եմ լացել...
Տե՞ս, կըխռովե՞մ,
Լաց կըլեմ ես է՞լ...
Չեմ խոսիլ քեզ հետ...
Չեմ սիրիլ քեզ է՞լ...»։

## XXVIII

Անլրեելի վըշվըշում է
Պըլսոր ջուրը Դեբեդի,
Նըրա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի։
Նըրա շուրջը հեգ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ձեն է տալիս իր Սարոյին
Ու պըտըտվում մոլորված։
Ու հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջըկա,
Բայց իր սիրած տըղան նըրեք



Չըկա՞, չըկա՞ ու չըկա...
Վըշվըշում է գետը — վո՞ւշ, վո՞ւշ,
Ու հորձանք է տալիս հորդ,
Ու կանչում է՝ «Արի՞, Անո՛ւշ,
Արի՞, տանեմ յարիդ մոտ...»։

— Անո՞ւշ, ա՛յ աղջի՞, Անո՞ւշ, տո՞ւն արի...
Կանչում է մերը վերևից, կանչո՞ւմ.
Լո՞ւռ են ձորերը, լո՞ւռ են ահռելի,
Դուշման Դեբեդն է մենակ մրընչում։

Վուշ-վո՞ւշ, Անո՞ւշ, վուշ-վո՞ւշ, քուրի՛կ,
Վո՞ւշ քո սերին, քու յարին,
Վո՞ւշ-վո՞ւշ, Սարո՛, վուշ-վո՞ւշ, իգի՛թ,
Վո՞ւշ քու սիրած սարերին...

## XXIX

Համբաքձման գիշեր, էն դյութիչ գիշեր,
Կա հըրաշալի, երջանիկ վայրկյան.
Բացվում են ոսկի երկընքի դըռներ,
Ներքև պապանձում, լըռում ամեն բան,
Ու ասուածային անհաս խորհըրդով
Լըցվում բովանդակ նըրա սուրբ ըթով։

Էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Երկընքի անհո՞ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
Գալի՞ս՝ կարոտով մի հեզ համբուրվում
Աշխարքից հեռո՞ւ, լազուր կամարում։

---

# 1894

## ԳԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ

### I

Հընչում էր փրրփրուն վրտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապույտում...
Առանց հոգսերի ու առանց վրշտի
Խաղում էինք մենք էն երազ հովտում,
Ու թընդում էր հեշտ ծիծաղն ինձ ծաղրող.
— Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող...

Չէի կարենում բռնել ես նրան։
Ճերմակին տալով՝ ծառերի հետ
Ծածկվում էր նա աչքես անգուման,
Կրկին հայանվում ճապուկ ու թեթև,
Ու թընդում էր միշտ ծիծաղը ծաղրող.
— Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող...

Մին էլ ես ճարպիկ մի շարժում արի,
Բռնեցի նրան։ Հանկարծ նա ճըչաց,
Ձեռքումըս դառավ ճերմակ աղավնի,
Ու թևին արավ, ու թռա՛վ, գընա՛ց.
Գընա՛ց ճախրելով էն երազ հովտում,
Ուզվեց, չքացավ պայծառ կապույտում...



### II

Վեր թռա քընից, դուրսը նայեցի.
Արևը տրախ զարկել էր սարին,
Բնությունն անհոգ, թարմ ու նազելի
Ջուգվում էր, ժըպտում մանուկ արևին։
Գիշերն անցել էր. բայց իր ետևից
Մըռայլ էր թողել դեռ ցած՝ հովիտում։
Էդպես տակավին անցած երազից
Խավար մի բան կար նըստած իմ սըրտում։
Թեկուզ երազին չես էլ հավատում,
Բայց օտար տեղում, քո տանից հեռու,
Սիրտըդ մի համառ կասկած է մըտնում,
Թե՝ մի մահագույժ սև բոթ է գալու...
Հասմիկն երազում աղավնի դառավ,
Աղավնի դառավ՝ իմ ձեռքից թռավ...
Լոկ երա՞զ էր այս։ Բայց երազն ի՞նչ է։
Երազ, թե իրոք.— այդ միթե մի՞ն չէ,
Երազն էլ երբ որ կարող է կանչել,
Կարող է հուզել, խընդացնել, տանջել...
Հասմիկն ապրում էր — Հասմիկը մեռավ...
Երազը եկավ — երազը թռավ...
Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք,
Երկուսն էլ անցվոր, երկուսն էլ պատրանք.
Եվ թե հաստատուն մի բան կա անմահ,
Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա,
Որ թե հարթըմնի և թե նրազում
Ապրում է, տեսնում, ըզգում ու հուզվում...

Ու... գիր է գալիս ահա իմ տանից,
Թե՝ կինըս հիվանդ.— ըսպասում է ինձ...

### III

Տո՛ւն, տո՛ւն, դեպի տուն
Թռչում եմ արթուն,
Որպես երազում։

Շուրջս ամեն բան
Հշտապ, ինձ նրման,
Անցնում է, վազում։

Ճըշմած գլխիս մեջ
Գալիս են անվերջ
Ու հընչում իրար
Ջանապան դեպքեր,
Հուշեր ու մրտքեր,
Պայծառ ու խավար...

Տեսնում եմ նրրան՝
Կանգնած է դաքնան
Շողերի միջին,
Ու ժրպտում է ինձ
Իր պատուհանից՝
Մաղիկը լանջին...

Տեսնում եմ մեռած,
Մաղկով զարդարած,
Դրրած դադաղում.
Տրխրալի մի օր,
Արտասուք, սրգվոր,
Սևեր ու թաղում...

Տա՜ն, տա՜ն, դեպի տուն.
Ու մյուս իրիկուն
Մեր տան դեմ ելա։
Մի սև-սև զանգված՝
Կուտակված, կանգնած
Մեր դրռանն ահա...

Պրտույտ է գալիս
Աշխարքը գլխիս,
Նրկինքը մրթնում...



Ողջ կանգնած են լուռ,
Ու ներսից տրխուր
Ձայներ են թընդում...

IV

«Հասմի՛կ ջա՜ն, նկա՜վ... դե վեր կա՜ց... վեր կա՜ց...
Դարս հոսեց դեմրս տրրտում ու հոգնած
Նրրա մոր ոտրը... խունկի ծրխի տակ
Աչքովրս ընկավ դագաղը ճերմակ.
Ու շուրջս մրթնեց։ Տեղրս կորցրրի...
Մարդից, արևից, աշխարքից հեռի,
Մի անտակ ձորում, սև՜ ու խոր ջրրում
Տարվում էի ես, խեղդվում, չարչարվում.
Բարձր էին ափերն, ողորկ ու դրժար,
Մի թուփ չրկար դեթ բռնելու համար,
Չրկար կենդանի ձա՜յն, ըստվի՜ր, նրշա՜ն,
Որ կարենայի կանչել օգնության...

V

Հա՛, հա՛, հա՛ հա՛, հա՛, զրվարթ քրրքիջով
Մի ծիծաղ անցավ փողոցի միջով։
Ես ուշքի եկա, աչքրս բաց արի,
Տեսա աշխարքը ու լուսն արևի,
Տեսա՝ նրստուած մարդիկ շրջընչում,
Անտարրեր թեքված՝ իրար ականջում
Խոսում են ուրիշ բաների վրրա,
Ու ոմանք ժրպտո՜ւմ, ժրպտում աշկարա...
Իսկ կողքիս նրստած ալեոր մի մարդ
Խրատում էր ինձ միալար, հանդարտ.
— Մի՛ լար, սիրելի՛ս, երևիա չես գու,
Ինչքան էլ որ լաս — իզուր ես լալու.
Քու ձենը երբեք էլ չի լսիլ նա,
Ոչ կրհասկանա, ոչ էլ ետ կրգա։
Էսպես կամեցավ աստված. երևի,

Որ նրրա օրը շուտով խավարի...
Մենք հողեղենները՝ անճար ու չընչին,
Ի՞նչ ենք ասուածո կամքի առաջին...
Բաց է էս ճամփեն ամենքիս համար.
Ծեր, երիտասարդ, մեղավոր, արդար,—
Ամե՞նք, ամենքը, էսաեղ ինչ որ կան,
Էսօր թե էգուց ամենքը կերթան.
Ով որ կըմընա,
Թող նա պարծենա։

VI

Ես լըսում էի... Ու հանկարծ ես էլ
Ուզեցի հաշուվել հրդոր մահի հետ.
Անճար, ակամա սկսա մըտածել,
Թե մահը լավ է, միայն մենք՝ տգետ,
Մենք խեղճ, կարճամիտ, ու չենք հասկանում՝
Ինչպես է գալիս և ուր է տանում,
Թե՝ և՛ կյանք, և՛ մահ — անցավոր, ունայն
Մի մեծ հավերժի ձևերն են միայն,
Ինչպես որ ահա «երեկն» ու «էսօր»։
Էսօրն ինչ է որ,— մի երեկ է նոր,
Էսօրն էլ կանցնի, երեկ կըդառնա,
Եվ սակայն կըրկին միևնույն է նա։
Եվ էսպես անվերջ էսօր ու երեկ
Փոփոխվում են միայն, միշտ մընում է մեկ —
Մեկ մեծ ժամանակ։ Էսպես էլ հոգին
Փոփոխում է միայն կեղևն արտաքին —
Մարմինն՝ էսօրվան օրին նըմանակ,
Իսկ ինքը անվերջ, ինչպես ժամանակ։
Կամ ես սիրուն,— հոսանուտ մի գետ,
Որ հազար ալիք ու ծրփանք ունի.
Գալիս են ալիք, անցնում են անհետ,
Անցնում են դեպի անդունդն օվկիանի,
Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ
Ապրում է դարձյալ անվերջ, անընդհատ...



Էսպես փոխվելով հոսում է, գընում,
Գընո՞ւմ անհունի անհատ սահմանում,
Դեպի դերաղանց վիճակն երջանիկ,
Ակն երջանկության, սիրտ հայրենիք,
Ուր չըկան մարդիկ և ոչ ըզգացում,
Ուր ոգին մի մեծ կյանք է միացնում...
Եվ ի՞նչ է սիրտ իմասաը վերին,
Ի՞նչ երջանկության խորհուրդը խորին,—
Հալվե՞լ, միանա՞լ,
Իրեն մոռանալ...

Եվ անշուշտ մի օր, հանդերձյալ կյանքում,
Երկրում թե այլուր, վերե՝ երկրնքում,
Էն անհայտ ճամփով, որով նա գնաց,
Ես էլ կըթըռչեմ՝ աշխարքը թողած,
Ու կըզդամ նրրան, կապրեմ նրրա հետ
Մի ուրիշ անվերջ կյանքով երկնավետ...

VII

Բայց ես միշտ թաքուն մի հույս ունեի,
Թե կարող էր նա լինել... կենդանի...
Մի տեղ մի անգամ էդպես է եղել.
Տարել են մեկին, ուզել են թաղել,
Շիրմի փոսի մեջ դարձնել է հանկարծ,
Կարող էր և մեղ լինել պատահած...

VIII

— Ո՞չ, ո՞չ, նա գընաց, էլ ետ չի գալու,
Եվ էդպես դու միշտ մեղք ես մընալու
Թեկուզ և հազիս երկաթի տըրեխ,
Փընտրես՝ կանչելով աշխարհ թովանդակ,
Էլ չես հանդիպիլ նրրան ոչ մի տեղ,
Ոչ մի աշխարքում, ոչ մի ժամանակ...

Էն պարզ դիակն էլ, որ տեսնում ես դեռ,
Էն էլ հողի տակ կրծածկեն հիմա,
Կրգա՞ն, կրգնա՞ն տարիքն անտարբեր,
Ու նա կրփրտի, նա հող կրդառնա.
Անունն էլ ապրող աշխարքի համար
Դատարկ մի հնչյուն, անխորհուրդ մի բառ...
Էն էլ կը կորչի, ինչպես որ չրկա
Անունն ու հետքը էն հին աղշրկա,
Որ ձեզնից առաջ հազար տարիներ
Նույնպես սիրահար ու ժրպիտ ուներ։
Եվ ի՞նչ է մարդը, և ի՞նչ իրեն կյանք.—
Եղծական ձևեր, ձայներ, շարժումներ.
Հավերժականը չունի կերպարանք,
Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր...
Անողոք մի ձեն էսպես ինձ կանչում,
Տանջում էր հոգիս, խորտակում, ճնշում։
Ճիգ էի անում նրան լռեցնել,
Սիրտս էլ հետը պոկել, հեռացնել
Ու դրանել մի ձեն, մի հրնչյուն, մի բառ,
Որ կյանքի, հույսի նշույլ ունենար...
Ուզեցի «աստվա՞ծ» մին աղաղակել,
Բայց չէ՞ որ նա էր էն մահն ուղարկել։

## IX

Մի անհուն ցավի մրրմուտի նրման
Ծավալվում էին զանգերը թաղման,
Ու ժամի ծրխոտ կամարների տակ
Կանգնած էր արդեն տրխուր պատարագ.
Տրխուր պատարագ, տխուր մեղեդիք,
Տխուր աղոթքներ ու տխուր մարդիկ,
Մեջտեղը ճերմակ դագաղը նրա
Դրված սևաքող սեղանի վրա,
Ու նա դագաղում, ասես թե քնած,
Հարսնական ճերմակ շորով պճնված,



Անփո՞ւթ, անզգա՞ կյանքին ու մահվան,
Իր դագաղն ածած վարդերի նրման...
Էստեղ՝ բռնված մի նոր տագնապով՝
Ուզեցի գրտնել մրտքի մի թափով,
Թե ի՞նչ էր արդյոք, էն ի՞նչ էր լինում,
Ի՞նչ էր պատահել, նա ո՞ւր էր գընում...
Եվ իսկույն, ասես, դիպա մի քարի։
Մրտքերրս հատան։ Առանց մրտքերի
Կանգնած էի ես խորտակված ու պաղ։
Լուռ էր։ Հոգևոր երգերը մենակ
Ծավալվում էին վրսեմ ու խաղաղ։
Ես լրսում էի, լրտ՝ամ շարունակ։

«Այս անցավոր երկրի վրրա
Լրցան օրերն պանդրխտության,
Երկնաստլաց գընում է նա,
Հագած մարմին անապական,
Անմահացա՞ծ մահկանացուն՝
Միանալու իր աստրծուն։

Այնտե՞ղ, վերին երուսաղեմ,
Օթևանում հրրեշտակաց,
Ուր որ ենովք ու եղիաս,
Աղավնակերպ կան ծերացած.
Այն աշխարհո՞ւմ անտրխրական
Արդարքն ապրում են հավիտյան։

Յոթնաստեղյան լույս խորանում,
Ուր ցավ չրկա, ոչ հեծություն,
Ընտրյալ հոգիքն ուրախանում,
Խայտում են միշտ անվե՞րջ, անհո՞ն
Բերկրանքներով հարաղրվարճ,
Աստծո զրվարթ աչքի առաջ։
Այնտեղ նրրանք, միշտ բախտավոր,
Նայում են հոր լույս երեսին,

Նրբա առջև պաղատավոր
Նրբանց համար, որ թողեցին.
Ու իշնում են, մրխիթարում
Մեղ տրրամալի այս աշխարհում...»։

Թոմված, կախարդված, տարված էն երդին,
Վերացավ, թռավ իմ վշտոտ հոգին
Դեպի երջանիկ մի սրիզ աշխարհ,
Անհայտ ու հեռու, անծանոթ, օտար...
Եվ էն աշխարհը հրրաշալի՜ էր.
Ոչ սուգ կար էնտեղ, ոչ վայելք, ոչ սեր,
Ոչ կարելի էր կարրընել մի բան
Եվ ոչ ունենալ քաղց ագահության.
Ինչպես գերեզման և ունայնություն՝
Լուռ էր ու դատարկ, անփառք ու անհուն.
Ինչպես հայացքը մեռելի աչքի՝
Սի միտք ուներ միշտ ատոնց հուզմունքի,
Հոգեկեն մարդուն անհայտ խորհրրդով
Հավիտյան ատատ, խաղա՜ղ, անվերրդով...
Ու տնշարժ կանգնած, զալուկ ու լռիկ,
Բասվերնե՜ր էին, անմարմին մարդի՜կ,
Տրժգույն, անարև, աղոտ լուսի մեջ
Աղոթում էին անձայն ու անվերջ,
Ալոթքն էլ սակայն ոչինչ չէր խընդրում.
Ոչ ապատություն, ոչ մահ, ոչ խընդրում...

## X

Հանկարծ լռությունն ինձ ուշքի բերավ,
Աչքիս առջևից հրրաշքը թռավ։
Պատարագն արդեն վերջացրել էին։
Դագաղը շարժվեց, թընդաց ահագին
Սասանիչ երդը մահվան սարսափի,
Էն լացն ու կոծը, օրհներդը մահի,
Որով մեռելին հրաժեշտ են տալիս
Դեպի գերեզման ճամփու ղրկելիս,



Երբ ծառս է լինում վիշտը մայրական
Դեպ գահն արարչի — ղրրկողը մահվան,
Արձակում ցասկոտ իր ճիչը եռին
Ու թույլ, հուսահատ ընկնում է գետին։

## XI

Դուրս եկանք դուռը։ Նայեցի վերև։
Վերևն, ինչպես միշտ, փայլում էր արև.
Բոլորն աշխարքում կարգին ու հանդարտ,
Ու ինչպես երեկ՝ էնպես ամեն մարդ...
Բայց երկինքն էնքա՜ն պայծառ էր այնօր,
Եվ պայծառությունն էնքա՜ն էր տրրտում,
Տրրտմությունն էնքան խոր, հանդիսավոր,
Որ թրվում էր ինձ, թե ջինջ կապույտում՝
Վերջին հրրաժեշտ տալով աշխարքին՝
Ճախրում էր նրբա հեռացող հոգին...
Ու մրտքովս անցավ հանկարծ ակամա,
Թե արդյոք նրբա աչքերը անմահ
Նայո՜ւմ են ներքև, տեսնո՜ւմ են ինձ էլ,
Թե ոնց եմ ցավիս տակին կորացել...
Եվ կամ ո՞րն է նա. էն շո՞ղն է պայծառ,
Որ զրվարթ խաղով, աշխույժ ու կայտառ
Կորչում է, մրտնում թուխպ ամպի ետև,
Ապատ, երկնաշու էն ա՜մպն է թեթև,
Թե՞ էն աղավնին, որ հիմա թռավ,
Անփույթ ճախրելով՝ ջինջ օդում կորավ...

## XII

Հանդո՜ւգրն մտքեր, ո՜ւր եք սրլանում,
Ի՜նչ եք որոնում էն մութ սահմանում։
Ահա մեր կյանքի սահմանը վերջին,
Էս սև ու տրխուր թումբերը շընչին...
Լո՜ւռ գերեզմաններ. քանի՜ սրգավոր
Ձեր եղերքներին կանգնել են մի օր.

Էս դատարկ կյանքին, անհասատատ բախտին
Անեծքներ տալով բեկվել, հեռացել,
Երբ որ սիրածի դագաղը մըթին
Վիհ են իջեցրել ու դեմքը ծածկել...
Եվ որքա՜ն ըղձեր, սըրտեր ու զգացմունք
Թաղված են, մարած ձեր լուռ փոսերում.
Ահա և՛ մի նոր բարձրացրած սև թումբ,
Դեռ թաց է հողը, դեռ խունկ է բուրում,
Իսկ մենք ուզում ենք ուրիշին թաղել,
Որ ապրում էր դեռ երկու օր առաջ...
Եվ անշուշտ մի օր սըրա շիրիմն էլ
Կրծածկի նույնպես մամուռը կանաչ,
Կանի հավասար քարին ու հողին,
Ինչպես դըրացու անկողինը հին։
Նըրանից հետո դե՛ եկ՝ իմացի՛ր,
Թե ով է թաղված քո ոտի տակին,
Ի՜նչ ցեղից էր նա, ի՜նչ ձիրքեր ուներ.
Անահ հերո՞ս էր, գեղանի մի կի՞ն,
Անհոգ մի ջահե՞լ, անկըշտում ագա՞հ,
Աղքա՞տ, թե հարո՞ստ.— ձե՞ն, նըշան չըկա...

## XIII

Եվ... իջնում էր նա ընդմիշտ իմ աչքից,
Կյանքից, արևից, էս լուս աշխարհքից...
Կորացա, վերջին համբույրըս տըվի,
Ու էն համբույրով դագաղում դըրի
Խընդում, սեր, ըղձեր, ամե՜ն, ամե՜ն բան...
Ինձ ետ քաշեցին, մի կողմը տարան։
Իսկույն հետևից խուլ գըրգըռոցը,
Քարով ու հողով լըցրին էն փոսը,
Դագաղն էլ, ինքն էլ ծածկվեցին հանկարծ,
Ասես թե բընավ աշխարհ չէր եկած,
Եվ այսուհետև երբե՜ք, հավիտյան
Էլ չէր տեսնելու արևը նըրան...



Հուղարկներն այնժամ մոտ եկան մի-մի.
— Է՜հ, ասված նըրա հոգուն ողորմի.
Մի օր էլ մենք ենք էսպես գընալու,
Ո՞վ է աշխարքիս վըրա մընալու.
Կյանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,
Անցավոր են ողջ — բախտ, վայելք ու փառք...
Ասացին՝ հանգիստ հոգոց հանելով,
Ու դարձյալ հանգիստ ղըռյց անելով
Գընացին իրենց տընները անհոգ։
Շուրջըս նայեցի, չէր լալիս ոչ ոք.
Երկինքն էլ էնպես պայծա՜ռ ու հանդարտ...
Եվ ինչպես երեկ, էնպես ամեն մարդ...

## XIV

Եկավ գիշերը։ Իմ հոգնած հոգուն
Իջավ տանջալի մի խաղաղություն։
Վայր ընկա, ինչպես ուժաթափ մի բան,
Որ զգում է միայն կարոտ հանգըստյան,
Թայց ճըգնում է դեռ, աշխատում ունայն,
Ուզում է հիշել, թե ի՜նչ բան էր այն.
Մի խառըն երա՜ղ էր, մի աշխա՜րհք ուրիշ,
Գինու մի քի՜ֆ էր, ծաղը՜ր, թե՞ պատիժ...

Մըրափը սակայն ծանըր ու դանդաղ
Չոքեց ինձ վըրա՝ սև թևերը կախ,
Միտքըս իր թելը կըտրեց ու թռավ,
Անհուն, խավարշտին քառսում կորավ.
Մահ, մեռել, շիրիմ — թեթև հեռացան,
Ու հեռանալով՝ փոխվեցին, դարձան
Ամպեր, ըստվերներ, կետեր երերուն,
Դողացին, հանգան, ու մըթնեց հեռուն...
Կարճատև մի քուն եկավ ինձ վըրա,
Եվ ես մյուս անգամ երազում տեսա.

## XV

Հընչում էր փրփրուն վրտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապույտում.
Առանց կորուստի ու առանց վրշտի
Կանգնած էի ես էն երազ հովտում։

Շուրջս շուշաններ, անվե՛րջ շուշաններ,
Լիքն էր անտառը անուշ բուրմունքով,
Եվ եդեմական ներդաշնակ ձայներ
Փառք էին տալի թովչական երգով.

«Փա՜ռք անպատում մըխիթարչին,
Փա՜ռք խորհուրդին անմահությյան.
Նա է կըրում հույսը վերջին
Ու շողն անշեջ, արարչական.
Փա՜ռք խորհուրդին անմահությյան։

Նա գընում է բարձր ու անվերջ
Դեպի անհունն ու հավիտյան,
Վիշտը հանգչում է նըրա մեջ,
Ապրում սերը անապական.
Փա՜ռք խորհուրդին անմահությյան...»։

Ու լըսում եմ ես էն խաղաղ օդում
Քընքույշ ու զըվարթ ձայնը սիրելի,
Անհայտ ու անտես կանչում է նա ինձ,
Կանչում գերազանց մի ուրիշ կյանքի.

«Արի՜ ինձ հետ, իմ թըշվա՛ռ,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,
Ուր չկա մահ, անջատում.
Ու սերն անվե՛րջ, անհատնո՛ւմ...

Արի՜, թըռի՜ր, գընա՛նք ինձ հետ,
Անցա՛վ, անհո՛գ, անո՛ւշ, անհե՛տ...»։

---

# 1901

## ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ

Ներստած եմ մի օր ու միտք եմ անում.
Միտք եմ անում, մի՜տք, ու չեմ կարենում
Մի հընար գըտնեմ՝ ցավերըս հոգամ...
Վեր կենամ, ասի, մեկի մոտ գընամ,
Կըրկին պարտք անեմ, գլուխը քարը,
Մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը։
— Ողջո՜ւյն Պառնասի գըլխից սըրբազան...
Ետ նայեմ տեսնեմ՝ իմ ծանոթ Մուսան։
— Վե՛ր կաց, բանաստե՛ղծ, կանչում է այսպես,
Վե՛ր կաց, ներշընչվի՛ր, դուրս արի հանդես.
Տանջվում են ահա եղբարքդ թըշվառ,
Հեծում, հալածվում աշխարհից աշխարհ։
Երկինք են հասել արցունք ու արյուն...
Ահա՝ քեզ համար բերել եմ ավյուն,
Հույս տուր վըհատին, ըսփոփիր ոբբին,
Ուժ տուր պանդըխտին իր երկար ճամփին։
Նայիր՝ աղջիկը ի՜նչպես ծաղկել է,
Աչքերի մըթնից պայծառ ծագել է
Կյանքի արևը ու սիրտ է հուզում,
Անձնըվեր սիրո երգեր է ուզում...

Ուրախ ու անհոգ գարունն էլ ահա
Թագմել է կանաչ սարերի վրա,
Ջորերը լըցվել, փըռվել հովիտում.
Հավքերն երգում են, ծաղկունքը փըթթում...

Դու էլ ըսթափվի՛ր, երդիր քեզ նըման,
Ողջունի՛ր շքեղ գալուստը գարնան։
— Հերիք է, Մուսա՛, երկինքը վրկա,
Էլ համբերելու սիրտ ու տեղ չըկա.
Էնպե՛ս կանեմ քեզ, որ դու մոռանաս
Արյուն ու գարուն, պոետ ու Պատնաս։
Անիծված լինին էն օրն ու տարին,
Որ գերի դառա ես քո քընարին.
Քեզ հետ մըտերիմ դառնալու օրից
Զըրկված մընացի կյանքում բոլորից...
— Էն տաղա՞նդը, էն ձի՞րքը հապա,
Որ տըվել եմ...
— Այ խաբեբա,
Ահա ես էլ էդ եմ լալիս.
Ինչո՞ւ էս ձիրքն էիր տալիս։
Չըգիտե՞իր միթե այնժամ,
Թե ինչ աշխարք պիտի ես գամ։
Թող լինեի մի կեղեքող,
Հավաքեի միշտ փող ու փող.
Առաջ թեև «գաղան» ու «ցեց»,
Կըգառնայի շուտով ես մեծ,
Վեհ բարերար
Ազգի համար.
Մեռած օրս էլ պըսակ տային.
«Իր որբ ազգից — միակ հայինս։
Կամ թե տերտեր լինեի թող,
Խաչը վրդիս մեռել թաղող,
Սուփրի վերև միշտ նըստեի,
Իմ ապրուստը դըրըստեի,
Ազգն էլ աչքը տընկեր վրաս.
«Իմ փըրկողը դու ես որ կաս»։
Ահա էսպես բան լիներ մարդ,
Գընար ապրեր լի ու հանդարտ։
Կամ սընդուքված մի ճոխ հիմար,
Որ ապրում է լոկ իր համար,



Ուտում-քընում, ելնում-տառում,
Էի՞, գո՞հ, ինչպես աղբակույտում
Հանգիստ ապրող որդը պարարտ։
Կըլինեի հարկի մի մարդ,
Նույնիսկ եթե գըլուխըս այնժամ
Դատարկ լիներ հաղար անգամ,
Փան թե հիմա իմ գըրպանը։
Ահա կյանքում էս է բանը.
Թե չէ՝ լինել ի ծնե գերի
Մերկ Մուսայի ու երգերի,
Որդիք ու՞ կին
Թողած բախտին,
Մերձավորի ծաղր ու ծանակ,
Ուժից ընկել անժամանակ —
Թե պոետ եմ... օ՜, ո՛չ, Մուսա՛,
Մի անարդար պատիժ է սա։
Նվ ինձ մոտիկ
Փորձված մարդիկ
Դեռ շատ վաղուց նըկատեցին,
Կըռիվ արին, խըրատեցին,
Թե աշխարքին մըտիկ արա.
Շատն էլ խընդաց խելքիս վրա...
Իսկ ես, ա՜խ, ես,
Միշտ խենթ էսպես,
Գիշեր-ցերեկ թերթում գըրքեր,
Շինում էի դատարկ երգեր,
Միշտ քու քամով էի թըռչում,
Եւ միշտ բախտից հեռու փախչում։
— Ա՛յ, ապերա՛խտ, ի՞նչ ես ասում.
Էն ո՞ր բախտն ես դու ափսոսում,
Որ չեմ տըվել քեզ իմ ձեռքով.
Աստվածային հրզոր ձիրքով
Էս ցած կյանքից հեշտ ու անթև
Թըռչել երկինք, վերև՜, վերև՜,
Ցավեր, հոգսեր ողջ մոռանալ,

Դրժոխք իջնել, դրրախտ գընալ,
Անհուն ըզգալ, թովիչ երգել...
Ո՞ր բախտից եմ ես քեզ զբրկել։
—Օ՜, ո՞ր բախտից... ա՜յ, սեր է՛ս,
Ահա շարեմ, հիշիր ու տե՛ս։
Ինձ մի անգամ առան տարան
Հաշվապահի ուսումնարան,
Շատ խոսեցին,
Համոզեցին,
Թե կավարտես էս դպրոցում,
Ատեստատը հետո ծոցում,
Ուր որ գընաս,
Տեղ կունենաս,
Լա՜վ փողով տեղ բուղդալտերիս
Խազեյինդ էլ տարեցտարի
Միշտ կավելցնի քո ռոճիկը,
Վերջը վրան և... աղջիկը։
Բայց դու եկար միտքդս մընտար,
Ինձ չընթողիր տեղդս դադար.
Դավթարն աչքիս դարձավ դաժան,
Թիվ, կոտորակ, թըվանշան
Ուղեղիս մեջ դարձան որդեր,
Քիչ էր մընում սիրտդս պայթեր.
Ես էլ խըրտնած, խենթ երեխա՝
Փող ու աղջիկ թողի, փախա,
Թե չեմ կարող, ես չեմ կարող,
Ես գըրող եմ, գրո՜ղ, գրո՜ղ։
Սակայն էլի բախտդս ժպտաց,
Ձեռքս բըռնեց տարավ հանկարծ
Ու պիսերի տըվավ պաշտոն։
Ո՜չ լի օր կար ինձ և ոչ տոն։
Մեծավորդս էնքան սիրեց,
Հին գըրչակոթն ինձ նըվիրեց.
Ընկերներս էլ ինձ դաս տըվին —
Ոնց պըլոկել խընդրատըվին։



Բայց դու էլի եկար գընար,
Խաղաղ գործիս մեջը մընար.
Ես էլ՝ հիմարդս՝ իսկույնևեթ
Վեճ բաց արի ամենքի հետ,
Թե ի՞նչ բան է՝ խեղճ գյուղացուն
Գերի շինել՝ ողջ տարին բուն
Տանել, բերել ու թալանել,
Այրու պղինձն աճուրդ անել...
Էս բոլորը քիչ էր կարծես,
Էնքան արիր, սատանի պես,
Որ գըրեցի մեծիս պարսավ.
Նա էլ—կո՛րի, կո՛րի, ասավ,
Մենք ենք տալի քեզ փող ու վարձ,
Դու, Մուսայի խելքով ընկած,
Վեր ես կենում մեր դեմ խոսում.
Էդպես պիսեր մենք չենք ուզում։
Սակայն աստված մեծ է գութով.
Հայտնի կանտոր ընկա շուտով։
Լավ էր, ասի, այսուհետև
Կապրեմ ազատ, գործդս թեթև։
Հետդս եկար, մընար կանտոր,
Գործերս արիր խառնուփընթոր.
Քու երեսից հենց նույն տարին
Իմ պաշտոնից ինձ դուրս արին։
Էսպես եղա ես խայտառակ,
Համ էլ ընկա պարտքերի տակ.
(Հո պոետի պարտքն էլ գիտես.
Էդ լոկ պարտք չի ուրիշի պես,
Այլ ազգային մի մեծ առակ,
Վեճ ու վրճիռ ծանր ու բարակ)։
Ո՞ր մեկն ասեմ, ո՞րը թողնեմ.
Երբ որ տեսան շընորք չունեմ,
Այնուհետև քանի անգամ
Ծանոթ, ընկեր, լավ բարեկամ՝
Տերտերության տըվին խորհուրդ.

— Ա՛յ քեզ մեծ ժամ, լավ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, հարգ, մեծարանք,
Հարստություն, հանգիստ, հեշտ կյանք...
Իսկ ես՝ անփորձ, անխելք, հիմար,
Ողջ մերժեցի լոկ քեզ համար.
Պատրաստ կյանքից, բախտից փախած,
Գանձանակի թեփշին թողած,
Քընարն առա,
Պոետ դառա,
Երգ ու տաղով մրտա հանդես.
— Հե՛յ, Մուսայի ընկերն եմ ես,
Ձեն տրվի ես ոգևորված։
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, թիրտ հրոհրաց
Ժողովուրդը միաբերան,
Թրցրել է խելքն էս խեղճ տղան։
Հեռո՛ւ կորի, խե՛նթ պատանի,
Որ անպիտան գործի, բանի,
Ուշք ու միտքդ տրվել երգին՝
Մի լես նայում էս աշխարքին...
Մենք մարդիկ ենք — գործ ենք անում,
Խենթ-մենթ բաներ չենք հասկանում։
Ես փչեցի.— խավա՛ր ամբոխ,
Պաշտում ես դու լոկ փայլ ու փոշ,
Չես հասկանում դու պոետին.
Ե՞ս, երկրնքի քընքուշ որդին,
Երգում եմ սե՛ր, ճշմարտությո՛ւն...
Ու գրնացի խրմբագրատուն։
— Տեր խրմբագիր, պոետ եմ նոր,
Բերել եմ ձեզ տուանավոր.
Ահա ճարդամ ակա՛նջ դրեք,
Ձեր հանդիսում տեղավորեք։

«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք օր ու գիշեր,
Նայում եք անթարթ իմ հոգու խորքում...



Ինչո՞ւ չեք քընում, ինչո՞ւ չեք փակվում.
Բանաստեղծն արգին տանջանքից հոգնել՝
Ուզում է քընել, հանգիստ՝ քընել...
Դուք էլ քընեցեք, սևորա՛կ աչքեր,
Ցեքեկս անցել է, գիշեր է, գիշեր...»։

— Ոչինչ, կոկիկ է։ Խոսելով անկեղծ՝
Դուք վատ չեք դրրում, պարո՛ն բանաստեղծ.
Ամեն մի տողում տասն են վանկերը,
Բայց ինձ աղքատ են թվում հանգերը։
Հապա մի տրվեք, ուղղեմ ես հիմա,
Տեսեք՝ թե որքան սահուն դուրս կրգա։
Ուզում եմ ես միշտ մեր պոետներին,
Էսպես եմ պոետ շինել բոլորին։

«Սևորա՛կ աչքեր, սևորա՛կ աչքեր,
Հալածում եք ինձ դուք ինչպես ֆաչքեր...»։

Ես իսկույն ինչպես հալածված քաչքից,
Փախա խրմբագրից ու իրեն աչքից,
Երգերս տուիր տարա տպարան.
Դուրս եկավ էսպես մի նոր երգարան։
Այնժամ մրտրակող մի թունդ պուբլիցիստ,
Հայտնի քննադատ, բաղմագետ ու խիստ,
Սատիկ վրդովված, անաչառ հոգով
Ծաղրի առավ ինձ իրեն «ակնարկով»։
— Ես դեմ եմ, տասավ, բանաստեղծության,
Զզվեցնում է ինձ էդ երգի Մուսան։
Ո՛չ մրտքեր են պետք, ո՛չ ձիրք և ոչ խելք,—
Բառեր ու հանգեր — և ահա քեզ երգ։
Հենց նոր դուրս եկած էս խակ տղան էլ
Գրլխից էս տեսակ բաներ է հանել։
Ուրի՞շ բան էին հին պոետները...
Նրրանք էլ մեռան, տարան հետները

Տաղանդ ու երդեր... ամե՞ն, ամեն բան
Մրտավ նրրանց հետ խավար դերեզման...
Դարձավ անապատ... էլ ո՞վ է մընում...
Էլ ուրիշ պոետ մենք չենք ընդունում...
Որքան ծաղրում ենք, սրրանք չեն լրում,
Ոչ էլ մեր ուզած բաներն են գրրում։
— Ո՞վ բրրեսների, կույրերի երկիր։
Դու մի՛ հավատար, իմ հե՛գ որդեգիր.
Ես էն հանգուցյալ լավերից նույնպես
Լրսել եմ հաճախ դանգատներ պես-պես։
Սպանում են դեռ ծաղրով ու թույնով,
Ապա պրճնվում նրրանց անունով.
Լափում են նրրանց վաստակը արդար,
Ու նորից... նույն հին կրռիվը վատթար...
Երդվում եմ ահա ճառագող օրով,
Վառ Ավրորայի մաքուր շողերով,
Խոսում ես դու էն չրքերի մասին,
Որ միշտ անտեղյակ առաջին լուսին,
Չեն հրրճվում նրրա ծագման հանդիսով,
Մթայն կեսօրին, ապուշ երեսով
Ելնում են մրռայլ, տեսնում քընեած՝
Գրլխների վերև արևը կանգնած.
Ու ծունկ են չոքում,
Օրհներգ են երգում.
Հի՞ն օրհներգություն ու հի՞ն հրրեշներ...
Բայց մի՞թե նրրանք ապրում են անմեռ,
Եվ էդպես անհաշտ էսօր էլ քեզ հետ...
— Ի՞նչ հրրեշ, Մուսա՛, ի՞նչ կույր ու բրրետ,
Ի՞նչ բաներ ես դու քեզնից հրնարում...
Ես էն եմ ասում, թե մեր աշխարհում
Պոետները ողջ տրխրել են, ցավել,
Որ իրենց երգի քրնար ես տրվել...
Ես էլ... ի՞նչ ասեմ... մեղավոր եմ ես,
Ծույլ ու անշրնորք, անպետք, սևերես...
Մեր խեղճ տանրցիք ո՞րքան նախատում —



Բայց ես՝ միշտ համառ, չէի հավատում,
Մինչև լսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի։
Մի օր ինձանից արավ հարցուփորձ.
— Ունի՞ս, հարցրեց, մի պաշտոն կամ գործ։
— Բանաստեղծ եմ ես, հայտնեցի հրպարտ։
— Դժվար է, ասավ, երբ անգործ է մարդ։
— Բանաստեղծ եմ ես, կրկնեցի մեկ էլ։
— Հասկացա՞նք, ասավ, պարապ ես եղել...
Եվ խեղճ ընկերս երբ որ՝ սրրտացավ՝
Սա էլ պետքական մի մարդ է, ասավ,
Էնպես ծիծաղեց մեր աղան փառավոր,
Որ և հասարակ և մեծ վեհափառ,
Ով որ իմացավ,
Ծիծաղը պրրծավ։

Բայց վերջն ավելի պարզեց խրնդիրը,
Երբ հոդված գրրեց մեր լրրագիրը։
— Բանաստեղծն, ասավ, թո՛ղ մի գործ չինի,
Որ հացի, վարձի դառնա արժանի.
Թե չէ համառի ու մընա պոետ՝
Ի՞նչ հաշիվ ունի աղգը նրրա հետ.
Աղգը հո նրրան չի խրնդրում գրրի,
Թերթն էլ փող չունի՝ թե որ վրճարի...
Թո՛ղ գընա ապրի իրեն գրրիչով...
Էսպես ենք դատում մեր մաքուր խրղճով։

Ներշրնչման համար
Էսպես է հարմար.—
Ով սովից մեռել՝
Նա՛ է լավ գրրել։
Կարող ենք մենք էլ
Էսպես մրտրակել
Ու ծաղրել մի-մի,
Որ առաջ դիմի...»։

— Ո՞վ ախոռ-երկիր, մըտրակի՛ մարդիկ...
Դե՛, ե՛կ, սիրելի՛ս, տանեմ քեզ երկինք.
Էնտեղ երջանիկ ոգիների հետ
Զրվարթ կըխրնդաս ու կերգես հավետ.
Կամ կուզես թրոցնեմ, հանեմ Ոլիմպոս,
Որ նեկտար ըմպես, ճաշակես ամբրոսս։

— Իմ աղնի՞վ Մուսա՛,
Ա՛յ, է՛դպես խոսա։

Իրավ, էս կյանքից ես շատ եմ զըզվել։
Ի՞նչ երանություն՝ երկընքում սուզվել,
Էն շքեղաղներին, որոնք, անկասկած,
Նըման չեն իսկի մեր հայոց կանանց —
Լինել միշտ ընկեր
Ու սիրո երդեր
Հորինե՞լ,
Զոնե՞լ,

Նրկրային չընչին հոգսերը թողած.
Կամ, ոտներն հանդիստ ժայռերից կախած,
Նըստել Պառնասի երջանիկ գըլխին
Ու բարձրից նայել էս հիմար խալխին։
Բայց ես ունեմ կին, շատ երեխաներ,
Նրրանց բանն էնտեղ ի՞նչպես կըլիներ...
— Օ՜, երբ Պառնասի գագաթ վերանաս,
Ջավակներ ու կին պիտի մոռանաս։
— Ո՞վ դու անիրավ, ի՞նչ եմ արել քեզ,
Որ ինձ իմ տանից էդպես բաժանես։
Չէ՛, լավ է կըրկին, որ երկրում մընամ,
Ծաղրի, նեղության մի կերպ դիմանամ...
— Քո կամքը լինի, ապա՛տ բանաստեղծ.
Ընտրի՛ր, ուր կուզես՝ երկինք թե երկիր,
Բայց միշտ, ամեն տեղ եղիր դու անկեղծ,
Մաքուր, սըրտալի քո ե՛րգը երգիր։
Կանգնի՛ր միշտ վերև,
Ու ինչպես արև՝



Նայի՛ր լուսավոր,
Պայծառ ու հրզոր.
Քո կոչումն է դա.
Եվ, ինձ հավատա՛,
Բոլոր գանձերը, գոհարներն անգին
Չարժեն կարճատև քո ներշընչանքին։
— Ա՛յ, դու սատանա՛, է՞լ կուզես խաբել,
Մեծ-մեծ խոսքերով աչքերըս կապել.
Ա՛յ, դու կեղծավո՛ր, սիրուն անպիտան.
Ես լավ եմ տեսնում այժըմ ամեն բան։
Դու ինձ ես մենակ միամիտ գըտել.
Հապա դե խոսիր ուրիշի մոտ էլ,
Ա՛յ, թեկուզ մեզ մոտ, հենց իմ կընկանը —
Ասա՛, թե մենակ փողը չի բանը...
Բայց ի՞նչ եմ ասում, հայոց գըրողը
Վաղուց է արդեն ճանաչել փողը.
Եվ երկար, երկար մեր ողջ հանճարով
Մըտածել ենք մենք դըժար օրերով,
Գըրողի պըսա՞կ,
Թե՞ փողի քըսակ...
Եվ լավ ենք վրճռել...
Դեհ, գընա՛, Մուսա՛.

Գըրադարանս շինում եմ կասսա,
Թըրում եմ և քեզ և քո պըսակին,
Նրկըրպագում եմ փողի քըսակին։
«Փողի քըսա՞կը, փողի քըսա՞կը,
Բարձրացընում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հըրեշ տըգեղին,
Սըրբագործում է գարշն ու աղտեղին։
Նըրա ուժն է՝ որ դարձընում է լոկ
Անասուններին հարգի ու խելոք,
Կույսին, զառամին մոտեցնում իրար,
Չարին, վաշխառվին շինում բարերար,
Պրճնում ճակատը լիրը ավազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքի։

Նա է միշտ շարժում դատողի լեղուն,
Նա՛ է հասցընում աղոթքն աստծուն,
Նրբա վրա է աշխարքը կանգնած.
Նա մեր հոգին է, մեր երկրորդ աստված։
Գոնան էլ ընդամ թե խոսել է վատ,
Տուժել է սաստիկ, զղջացել է շատ,
Եվ այժմ, ահա, խելքի է եկել,
Սկսել է նրան օրհնություն երգել։
Երդես որ լսեց իմ դժբախտ Մուսան,
Իսկույն հավաքեց իր փասա-փուսան.

— Դե՛հ, մընաս բարյավ,
Անսի՛րտ, անիրա՛վ,
Ես էսքան տարի
Ինչ որ քեզ արի,
Թոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար...

---

# 1902

## ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹԸ

### I

Առյուծ-Մրհերը, զարմով դյուցազուն,
Քառասուն տարի իշխում էր Սասուն,
Իշխում էր ահեղ, ու նրբա օրով
Հավքն էլ չէր անցնում Սասմա սարերով։
Սասմա սարերից շա՜տ ու շատ հեռու
Թրնդում էր նրբա հրոշակն ահարկու,
Խոսվում էր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան էր—մի Առյուծ-Մրհեր։

### II

Էսպես, ահավոր առյուծի նրման,
Սասմա սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի։ Քառասուն տարում
«Ա՜խ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.
Բայց հիմի, երբ որ եկավ ծերացավ,
Էն անահ սիրտը ներս սողաց մի ցավ։
Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.
— Հասել են կյանքիս աշնան օրերը,
Շուտով սև հողին կերթամ ես գերի,
Կանցնի ծըխի պես փառքը Մրհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ.
Իմ անտեր ու որբ աշխարքի վրա
Ոտի կը կանգնեն հազար քաջ ու դև...

Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման ետև
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք էր անում հրսկան ծերունի։

III

Մի օր էլ՝ էն գարշ հոնքերը կիտած
Երբ միտք էր անում, երկրնքից հանկարծ
Մի հուր-հրրեղեն հայտնվեց քաջին,
Ոտները ամպոտ կանգնեց առաջին։
— Ողջո՞ւյն մեծագոր Սասմա հրսկային.
Քու ձենը հասավ աստծու դահին,
Ու շուտով նա քեզ մի զավակ կըտա։
Բայց լավ իմանաս, լեռների՛ արքա,
Որ օրը որ քեզ ժառանգ է տրվել,
Էն օր կըմեռնեք՝ քու կինն էլ, դու էլ։
— Իր կամքը լինի,— ասավ Մըհերը.—
Մենք մահիկն ենք միշտ ու մահը մերը,
Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,
Մենք էլ նըրանով անմեռ կըմընանք։
Հըրեշտակն էստեղ ցոլացավ նորից,
Ու էս նըշանիկ ավետման օրից
Երբ ինը ամիս, ինը ժամն անցավ,
Առյուծ-Մըհերը զավակ ունեցավ։
Դավիթ անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախպեր Ձենով Օհանին,
Երկիրն ու որդին ավանդեց նըրան,
Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան։

IV

Էս դարում Մըսրը անհաղթ ու հզոր
Մըսրա-Մելիքն էր նըստած թագավոր։
Հենց որ իմացավ՝ էլ Մըհեր չկա,
Վեր կացավ կըռվով Սասունի վըրա։



Ձենով Օհանը ահից սարսափած՝
Թըշնամու առաջն ելավ գըլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ ոտները.
— Դո՛ւ եղիր, ասավ, մեր գլխի տերը,
Ու քու շըվաքում քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարշը միշտ տանք,
Միայն մեր երկիր քարուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես։
— Չէ՛, ասավ Մելիքը, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Որ էդուց-էլօր, ինչ էլ որ անեմ,
Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ։
Ու գընաց Օհանն՝ բոլոր-բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թըրի տակ.
Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,
Մոտ չեկավ դուշման Մելիքի թըրին։
Եկան քաշեցին՝ թե զոռով տանեն,
Թափ տըվավ, մարդկանց գըցեց դես ու դեն
Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,
Ապառաժ քարից կըրակ դուրս թըռավ։
— Պետք է ըսպանեմ էս փոքրիկ ծուռին,—
Ասավ թագավորն իրեն մեծերին։
— Թագավո՛ր, ասին, դու էսքան հըզոր,
Թըրիդ տակին է ողջ Սասունն էսօր.
Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,
Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա։
— Դո՛ւք գիտեք,— ասավ Մըսրա թագավոր,—
Բայց թե իմ գըլխին փորձանք գա մի օր,
Էս օրը վըկա,
Սըրանից կըդա։

V

Էս որ պատահեց, մեր Դավիթ հրսկան
Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,

Որ ներրա համար թե մարդ,— թե մրժեղ։
Բայց վա՜յ խեղճ որբին աշխարքի վերրա,
Թեկուզ Աստուծի կորյուն լինի նա։
Զենով Օհանին ուներ մի շար կին։
Մին-երկու լրռեց, մի օր էլ կարգին
Իրեն մարդու հետ սկըսավ կրռվել.
— Ես մենակ հոգի, հազար ցավի տեր,
Ի՞նչ ես ուրիշի որբին տուն բերել,
Նրստեցրել գլխիս պարապ հացակեր...
Հո՞ղեմ գլուխը... ես գերի հո չե՞մ՝
Ամենքի քնքի ետևից թրռչեմ...
Մի կուռ կորցրրո՛ւ, կարգի՛ր մի բանի,
Գրնա իր համար աշխատանք անի...
Ու հետո սկըսավ ողբալ ու կոծել,
Իր օրը սրգալ, իր բախտն անիծել,
Թե անբախտ եղավ աշխարքի միջում,
Ոչ մի տեր ունի, ոչ մարդն է խրղճում...
Գրնաց Օհանը երեխի տոի
Մի զույգ ոտնաման բերավ երկաթի,
Երկաթի մի կոռ շալակին դրրած,
Ու արավ Սասմա քաղքի դառնարած։

## VI

Քըշեց գառները մեր հովիվ հրսկան,
Նլավ Սասունի սարերն աննրման.
— Է՜յ, ջան սարե՛ր՝
Սասման սարե՛ր...
Որ կանչեց, ներրա ձենից ահավոր
Դրղորդ-դրմրդրմբոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գազաններ բրներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան։
Դավիթը ընկավ նրրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից —



Աղվես, նապաստակ, գել, եղնիկ բրռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան քըշեց ողջ Սասմա քաղաք։
Կաղկա՜նձ ու ոռնո՜ց, աղմո՜ւկ, աղաղա՜կ...
Քաղքըցիք հանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հրրես անհամար գազան.

«Վա՜յ, հարա՜յ, փախե՜ք...»։
Մեծեր, երեխեք
Սըրտաճաք եղած,
Գործները թողած,

Որը տուն ընկավ, ո՛րը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ։
Դավիթը եկավ, կանգնեց մեյդանում.
— Վա՜հ, էս մարդիկը ի՞նչ վաղ են քընում.

Հե՜յ ուպատեր, հե՛յ գառնատեր,
Ելե՛ք, շուտով բացեք դրռներ.
Ով մինն ուներ—տասն եմ բերել,
Ով տասն ուներ—քրսանն արել...
Շուտով ելե՛ք, եկե՛ք տարե՛ք,
Ձեր գառն ու ով փոմերն արեք։

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնրվեց քաղքի մեյդանում,
Գրլուխը դրրավ մի քարի՝ մրնաց,
Ու մուշ-մուշ քրնեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ ելան միասին,
Գրնացին Զենով Օհանին ասին.
— Տո՛ Զենով Օհան, տո՛ մահի տարած,
Էս խենթը բերիր, արիր գառնարած,
Ոչ գառն է ջոկում, ոչ գելն ու աղվես,
Գազանով լրցրեց մեր քաղաքն էսպես.
Ասված կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թե չէ էս խալխին լեղաճաք կանի։

## VII

Եկավ Օհանը, Դավթի մոտ գընաց.
— Հորեղբայր Օհան, հեռո՞ւ եկ, կամա՞ց,
Ուզեր կըփախչեն։— Մին էլ էնտեղից
Մի բոզ նապաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից փուրս պրծավ հանկարծ։
Դավիթն էր. եկավ, հոգից ընկած
Էն սարը քըշեց, ետ բերավ էս ձոր,
Բերավ, ուզերին խառնեց նորից նոր։
— Օ՞ֆ, ի՞նչ դրժար է, հորեղբայր Օհան.
Աստված օրհնել է էն սև-սև ուզեր,
Ամա բոզալուզ էս ուզեր, որ կան,
Փախչում են, ցըրվում ողջ սարերն ի վեր.
Էնքան եմ երեկ վազել, շարչարվե՞լ,
Մինչև հավաքել ու տուն եմ բերե՞լ...
Նայեց Օհանը, որ Դավթի հագին
Ոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն էլ մաշվել, մինչ բուռն է հասել,
Մի օրվա միջում էնքան է վազել։
— Դավի՛թ ջան, ասավ, չեմ թողնի էսպես.
Բոզալուզ ուզեր շարչարում են քեզ.
Էգուց նախիրը կըտանես արտու։
Ասավ Օհանը ու մյուս առավոտ
Գընաց, նորից նոր մեր Դավթի ոտի
Մի ջուխտ նոր տըրեխ բերավ երկաթի,
Երկաթի մի կոռ հարյուր լըդրական
Ու շինեց Սասմա քաղքի նախրապան։

## VIII

Քըշեց նախիրը մեր նախրորդ հըսկան,
Եկավ Սասունի սարերն անընման։
— Է՛յ, ջան սարեր,
Սասման սարե՞ր,



Ի՞նչ անուշ է
Ձեր լանջն ի վեր...
Որ կանչեց, նըրա ձենից ահավոր
Դրդոդգ-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր։
Վայրի գազաններ բընեերից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան։
Դավիթն էր. ընկավ նրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Գել, ինձ, առյուծ, արջ, վագրը բըռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց
Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք։
Ոռնո՞ց, մըռընչյո՞ւն, աղմո՞ւկ, աղաղա՞կ...
Վախկոտ քաղքացիք մին էլ ի՞նչ տեսան,
Հենց քաղքի վըրա անհամար գազան...
— «Վա՞յ, հարա՞յ, փախե՞ք...»
Մեծեր, նրեխեք
Սըրտաճաք եղած,
Գոծերերը թողած
Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ իրանուն,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ։
Դավիթը եկավ կանգնեց մեյդանում.
— Վա՞հ, էս քաղքացիք ի՞նչ վազ են քընում։
Հե՞յ կովատեր, հե՞յ գոմշատեր։
Ելե՞ք, շուտով բացեք դըռներ,
Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քըսանն արել։
Շուտով ելե՞ք, եկե՞ք, տարե՞ք,
Ձեր եզն ու կով գոմերն արեք։
Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գլուխը դըրավ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ ելան միասին,
Գընացին Զենով Օհանին ասին.
— Ամա՞ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան ախպեր,

Մեր եղն ու մեր կով թող մընան անտեր,
Միայն սրանից ազատ արա մեզ։
Ոչ արջն է ջոկում, ոչ գոմեշն ու եզ,
Մի օր էս քաղքին փորձանք կըբերի,
Արջերոց կանի, կըտա կավերի։

## IX

Դավիթ չըդառավ, մի կըրա՜կ դառավ։
Ճարը կըտրված՝ Օհանը բերավ
Նետ-աղեղ շինեց ու տըվավ իրեն՝
Գընա, որս անի սարերի վըրեն։
Դավիթ նետ-աղեղն առավ Օհանից,
Հեռացավ Սասմա քաղքի սահմանից
Ու դառավ որսկան։ Գնաց, մի կորկում
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
Մըթանը դընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անտրդի մի ծեր կընկա մոտ,
Վիշապի նըման, երկա՜ր, ահագի՜ն
Մեկնըվում, քընում կըրակի կողքին։
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձավ,
Պառավը վըրեն սաստիկ բարկացավ.
— Վա՜յ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,
Դո՞ւ պետք է էն հոր զավակը լինե՞ս։
Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին—
Ես եմ ու էն արտն ասոըծու տակին,
Ինչո՞ւ ես դընում, տափում, տըրորում,
Իմ ամբողջ տարվան ապրուստը կըտրում։
Թե որսկան ես դու — նետ-աղեղդ ա՛ռ,
Սըծմակա գըլխից մինչև Սեղանսար
Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ,
Որսով մեջը լի որսի սար ուներ.
Եղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա.
Կարո՞ղ ես—գընա, էնտեղ որս արա։
— Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.



Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում։
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...
— Գընա՛, հորեղբայրդ՝ Օհանը կասի։

## X

Հորեղբոր շեմքում մյուս օրը ծեգին
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին։
— Հորեղբա՛յր Օհան, ինչո՞ւ չես ասել՝
Իմ հերը որսի սար է ունեցել,
Այծյամ կա էնտեղ, եղջերու, կըխտար.
Վեր կաց, հորեղբա՛յր, տար ինձ որսասար։
— Վա՜յ, կանչեց Օհան, էդ քու խոսքը չէր,
Էդ ով քեզ ասավ, լեզուն պապանձվեր։
Էն սարը, որդի՛, գընաց մեր ձեռից,
Էն սարի որսն էլ գընաց էն սարից,
Էլ չկան այծյամ, եղջերու, կըխտար։
Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,
(Է՜յ գիդի օրեր — ո՞րտեղ եք կորել),
Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հերը մեռավ, ասուված խըռովեց,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Եկավ, մեր երկիր քարուքանդ արավ,
Էս սարի որսն էլ թալանեց, տարավ.
Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալբաթ էսպես էր գրած։
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըսրա թագավոր ձենըդ կիմանա...
— Մըսրա թագավոր ինձ ի՞նչ կանի որ...
Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրա թագավոր.
Մըսրա թագավոր թող Մըսրը կենա,
Իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...
Վեր կաց, հորեղբա՛յր, նետ-աղեղդ առ,
Կապարճդ կապի՛ր, գընանք որսասար։
Ելավ Օհանը ճարը կըտրված,

Գրնացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար,
Անտառը ջարդած, պարիսպն ավերած,
Բուրգերը արած գետնին հավասար...

## XI

Գիշերը հասավ, մընացին էնտեղ։
Զենով Օհանն էր, իր նեռն ու աղեղ
Դրրավ գլխի տակ, հանդիստ խրո

մփաց.
Դավիթը մընաց մրտքի ծովն ընկած։
Մին էլ նկատեց, որ մութը հեռվում
Սի թեժ, փայլփլուն կըրակ է վառվում։
Էն լուսը բրռնած՝
Վեր կացավ, գընաց,
Գընաց ու գընա՞ց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար
Կիսից պատրուած,
Ու միջից վառված
Բրխում է լուսը պա՞րզ, քուլա-քուլա՞,
Բարձրանում, իջնում ետ քարի վրրա։
Վար իջավ Դավիթ էնտեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Զենով Օհանին։
— Ե՛լ, հորեղբա՛յր, քանի՞ քընես,
Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես։
Լուա է իջել բարձրը սարին,
Բարձրը սարին, մարմար քարին։
Ե՛լ, հորեղբայր, անուշ քընից.
Էն ի՞նչ լուա է բրխում քարից։
Ելավ, խաչ քաշեց Օհանն երեսին.
— Է՛յ, որդի՛, ասավ, մեռնեմ իր լուսին,
Էն մեր Մարութա սարն է զորավոր։
Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
Սասմա ապավեն, Սասմա պահապան
Մեր սուրբ Տիրամոր վանքը Զարխափան։
Մշտական, երբ որ կըռիվ էր գընում,
Էնտեղ էր քու հերն իր աղոթքն անում։



Քու հերը մեռավ, ասված խրոովից,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Մեր վանքն էլ եկավ քանդեց էն սարում,
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

## XII

Դավիթը էլ էլ երբ որ իմացավ,
— Անո՛ւշ հորեղբայր, հորեղբա՛յր, ասավ,
Որբ եմ ու անտեր աշխարքի վրրա,
Հեր չունեմ՝ դու ինձ հերությունս արա։
Էլ չեմ իջնի ես Մարութա սարից,
Մինչև չըշինեմ մեր վանքը նորից,
Քեզանից կուզեմ հինգ հարյուր վարպետ,
Հինգ հազար բանվոր մըշակ նըրանց հետ,
Որ գան՝ էս շաբաթ կանգնեն ու բանեն,
Առաջվան կարգով մեր վանքը շինեն։
Գընաց Օհանը ու բերավ իր հետ
Հինգ հազար բանվոր, հինգ հարյուր վարպետ։
Կարպետ ու բանվոր եկան կանգնեցին,
Ջըրը՛խկ հա թըրը՛խկ նորից շինեցին,
Առաջվան կարգով, փառքով փառավոր
Բարձրը Մարութա վանքը Տիրամոր։
Ցըրված միաբանք ետ նորից եկան,
Նորից թընդացին աղոթք, շարական.
Ու երբ շեն արավ հոր վանքը նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից։

## XIII

Համբավը տարան Մըսրա Մելիքին.
— Հապա՞ չես ասիլ՝ Դավիթը կրկին
Հոր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարվան խարջը չես առել։
Մելիք զայրացավ.
— Գընացե՛ք, ասավ,

Բաղին, Կողբաղին,
Սյուղին, Զարխաղին,
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,
Իմ սխտոր տարվան խարաջը բերեք։
Քառասուն կույս աղջիկ բերեք արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Իմ տանն ու դրսան զարավաշ դառնան։
Ու Կողբաղին առավ դորքեր.
— Գրլխի՛ս վրրա, ասավ, իմ տեր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը ջընջեմ հայոց ազգի։
Ասավ, Մըսրա աղջիկ ու կին
Պար բռնեցին ու երգեցին.
— Մեր Կողբաղին գընաց Սասուն,
Կանայք բերի քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով ոսկի բերի,
Մեր Ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Դարնան շինենք եղ ու չորթան։
Ջա՛ն Կողբաղին, քաջ Կողբաղին,
Սասմա Դավթին պարկեց գետին։—
Ու Կողբաղին փրբված, ուռած,
— Շնորհակալ եմ, քույրե՛ր, զոռաց,
Մինչև գալըս դեռ համբերեք,
Էն ժամանակ պիտի պարեք...

## XIV

Էսպես երգով,
Զառով-զորքով
Գոռ Կողբաղին մըտավ Սասուն.
Օհան լըսեց՝ կապվեց լեզուն։



Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն ելավ,
Խընդիրք արավ.
— Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն.
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Գառը զաղած դեղին ոսկին,
Միայն թե ՁԸԹԱ մեր խեղճ ազգին,
Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,
Վերեն՝ առուված, ներքեը՝ դու...
Ասավ, բերավ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման։
Ու Կողբաղին կանգնեց, ջոկեց,
Մարագն արավ, դուռը փակեց,
Քառասուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին զարավաշ դառնան։
Դեղ-դեղ կիտեց դեղին ոսկին,
Սև սուգ կալավ հայոց ազգին։

## XV

Հե՞յ, ո՞ւր ես, Դավի՞թ, հայոց պահապան,
Քարը պատըռվի — դո՛ւրս արի մեյդան։
Քանդած հոր վանքը որ շինեց նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,
Ժանգոտած, անկոթ մի շեղրիկ գըտավ,
Գընաց՝ պառավի շաղգամը մըտավ։
Պառավն էր. եկավ՝ անե՞ծք, աղաղա՞կ.
— Վա՞յ, խելա՛ռ Դավիթ, շաղգամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցավ ուտես, ասավ,
Քու աչքն աշխարքում մենակ ի՞նձ տեսավ.
Կորեկըս արիր գետնին հավասար,
Էս էր մընացել ձըմեռվան պաշար,

Էս 'էլ կրտրում ես,
Էլ ո՞նց ապրեմ ես։
Թե կբարիճ ես դու, աղեղդ ա՛ռ գընա՛,
Քու հոր աշխարքին տիրությունն արա՞,
Քու հոր գանձը կե՛ր,
Թողել ես անտեր,
Մըսրա թագավոր ղըրկել է՝ տանի։
— Էլ ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,
Էդ ի՞նչ ես ասում, ես չեմ հասկանում,
Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում։
— Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում...
Մըսրա թագավոր քու աչքն է հանում,
Դանդալոշ Դավիթ. ղըրկել է հըրեն,
Եկել են Սասմա քաղաքի վըրեն
Բաղին, Կոզբադին,
Սյուդին, Զարխադին,
Թալան են տալի բովանդակ Սասուն.
Քառասուն բեռ ոսկի խարաշ են ուզում,
Քառասուն կույս աղջիկ սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ոտտեր բառնան,
Մըսրա Մելիքին զարավաշ դառնան։
— Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.
Ճուլց տուր մի տեսնեմ՝ ո՞րտեղ են ուզում։
— Ո՞րտեղ են ուզո՞ւմ... Մահրա տանի քե՞զ.
Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՞ս...
Եկել ես՝ էստեղ շաղդամ ես լափում...
Ոսկին Կոզբադին ձեր տանն է շափում,
Աղջիկներ փըլեկ մարագն են լըցրած։
Շաղդամը թողեց Դավիթ ու գընաց։
Տեսավ՝ Կոզբադին իրենց տան միջին,
Շափում է ոսկին թեղած առաջին,
Սյուդին, Զարխադին պարկերն են բըռնել,
Զենով Օհանն էլ շըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին։



Տեսավ, աչքերը արնով լըցվեցին։
— Վե՛ր կաց, Կոզբադին, հետո՛ւ կանգնիր դու,
Իմ հոր ոսկին է — ես եմ շափելու։
— Կոզբադին ասավ.— Է՞յ, Զենով Օհան,
Կըտաս — տո՛ւր խարշը էս օխտը տարվան,
Թե չէ՝ կը-գընամ, միրուքդս վըկա,
Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը դա,
Ձեր Սասմա երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կը վարի, բոստան կը ցանի։
— Կորե՛ք, անզգամ դուք Մըսրա շըներ,
Բա չե՞ք իմացել դուք Սասմա ծըռեր...
Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ շըվաք,
Կուզեք մեր երկիր դընեք խարշի տա՞կ...
Բարկացավ Դավիթ, շափը շըպըրտեց,
Տըվավ Կոզբադնի գըլուխը չարդեց,
Չափի փըշրանքը պատն անցավ, գընաց,
Մինչև օրս էլ դեռ գընում է թրռած։
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան գընացին
Բաղին, Կոզբադին,
Սյուդին, Զարխադին։

## XVI

— Վա՛յ, վա՛յ, հորեղբա՛յր, ի՞նչ ասեմ ես քեզ.
Մենք տուննք էստեղ դեղին ոսկու դեզ.
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի ղըռա՞ն...
Հորեղբայրն ասավ.— Ա՛յ խենթ, խելագար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցը լինի աչքը մեզ վըրա։
Զըրվիր, հիմի որ զորք առնի՝ դա,
Սասմա քար ու հող հեղեպի, տանի,
Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռիվ կանի։
— Դու կա՛ց, հորեղբա՛յր, թող դա, ե՛ս կերթամ,

Կերթամ, ե՛ս նրան պատասխան կրտամ։
Ու մութ մարագի դրռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց։
— Գընացե՛ք, ասավ, ազատ ապրեցե՛ք,
Սասունցի Դավթին արև խընդրեցեք։

## XVII

Էսպես ջարդված, արյունլըվա
Փախան, ընկան հողը Մըսրա
Բաղին, Կողբաղին,
Սյուդին, Ջարխաղին։
Մըսրա կանայք հեռվից տեսան,
Հեռվից տեսան, ուրախացան
Ու ծափ տըվին կըտերներին.
— Եկա՞ն, եկա՞ն, բերի՞ն, բերի՞ն...
Մեր Կողբաղին գնաց Սասուն,
Կանայք բերավ քառասուն քառասուն,
Կարմիր կովեր բերավ կըթան՝
Գարնան շինանք եղ ու չորթան...
Հենց մոտեցան, նըկատեցին,
Սաք ու խընդում ընդհատեցին,
Քըրքըջացին
Ու կանչեցին.
— Է՛յ, Կողբաղին մեծաբերան,
Էդ ո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըգաս փախած,
Հաստ գըլուխդ կիսից ճըղած,
Էն դո՛ւ չասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր ազեր անեմ։
Գացիր Սասուն քանց գել գաղան,
Նա ես գալի քանց շուն վազան...
Ու Կողբաղին խիստ բարկացավ.



— Սո՛ւտ կացեք դուք, լըրբե՛ր, ասավ.
Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,
Դուք չե՞ք տեսել Սասմա ծըռեր։
Սասմա ծըռեր լերան-լերան,
Նետեր ունեն մի-մի գերան.
Սասմա երկիր քար ու կապան,
Դըժար սարեր, ձոր ու ծապան.
Նըրանց խոտեր — ինչպես կեռ թուր,
Ձորք ջարդեցին երեք հարյուր...
Ասավ ու էլ չառավ դադար,
Վըռազ-վըռազ, գըլխապատառ
Վազեց իրեն թագավորին։
Խընդաց թագվորն իր աթոռին։
— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կողբաղին,
Արժե՝ կախեմ ես քու ճըտին
Մեր ղուզղանի մեծ նըշանը —
Պարգև քու մեծ հաղթությանը։
Ո՞ւր են, հապա առաջըս բեր
Սասմա ոսկին ու աղջիկներ։
Ասավ Մելիք, ու Կողբաղին
Գըլուխ տըվավ մինչև գետին.
— Ապրա՞ծ կենաս, մեծ թագավոր,
Ջոռով փախա ես ձիավոր,
Ո՞նց բերեի Սասմա ոսկին։
Մի խենթ ծընվեց հայոց ազգին,
Ոչ ահ գիտի, ոչ տեր ու մեծ,
Գըլուխս էսպես տըվավ ջարդեց.
«Չե՛մ տալ, ասավ, իմ հոր ոսկին,
Չե՛մ տալ կանայք իմ հայ ազգին,
Սասմա երկիր ձեղ տեղ չըկա...
Քո թագավոր, ասավ, թո՛ղ գա,
Թող գա՝ ինձ հետ կըռիվ անի,
Թե ղոչաղ է՝ զոռով տանի»։
Կատաղեց, փըրփրեց Մըսրա թագավոր.
— Կանչեցե՛ք, ասավ, իմ զորքը բոլոր.

Հազար հազար մարդ նաբեղուկ մնաց,
Հազար հազար մարդ անբեղ, անմորուք,
Հազար հազար մարդ բեղը նոր ծլած,
Հազար հազար մարդ նոր թախանց եկած,
Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,
Հազար հազար մարդ սպիտակ ալեոր,
Հազար հազար մարդ, որ փոքրիկ հընչեն,
Հազար հազար մարդ, որ քըմբուռ զարկեն...
Կանչեցե՛ք, թող գան, հավանեն զե՛նք, զբրա՛հ,
Կըռիվ տի գընամ ես Դավթի վըրա,
Սասունն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ։

## XVIII

Էսպես անհամաբ գորքեր հավաքեց,
Եկավ Սասմա գաշտ, բանակը զարկեց
Ու ծանրը նըստեց Մըսրա թագավոր։
Էնքան ահագին բազմությունն էն օր
Բաթմանա շըրին եկավ ու չոքեց,
Ով եկավ, խըմեց — գետը ցամաքեց,
Սասմա քաղքում մընացին ծարավ։
Զենով Օհանին զարմանքը տարավ։
Քուրքը ուն ասավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ի՞նչ տեսավ—
Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,
Ասես՝ էն դիշեր ձըմեռը եկել,
Սպիտակ ձըմեռով պատել էր Սասուն։
Լեղին շուր կորեց, կապ ընկավ լեզուն,
Հարա՛յ կանչելով՝ փախավ տուն ընկավ.
—Վա՛յ, փախե՛ք, եկա՛վ... հա՛յ, հարա՛յ եկավ...
— Ի՞նչը, հոբեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն եկավ...
— Ցավն ու կըրա՛կը Դավթի պինչն եկավ։
Մըսրա թագավոր ելել է, եկել,
Եկել, մեր դաշտին բանակ է զարկել։



Թիվ կա ասողքին, թիվ չկա զորքին...
Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարքին...
Ե՛կ, ոգին առանենք, աղջիկներ տանենք,
Ջոջենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գըթա,
Մեզ սրբի չըտա...
— Դու կա՛ց, հոբեղբայր, դու գարդ մի՛ անիր.
Գընա՛, քու օգում դու հանգիստ քընիր.
Հիմի ես կերթամ, Սասմա գաշտ կերթամ,
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ։
Ու գընաց Դավթի ծանոթ պատվին.
— Նանի չա՛ն, ասավ, ժանգոտած ու հին
Նրկաթի կըտոր, անթաթոց, շամփուր,
Ինչ ունես չունես, հավաքի՛ր, ինձ տուր,
Մի էշ էլ գըտիր, որ վըրեն նստեմ,
Կըռիվ տի գընամ Մըսրա զորքի դեմ։
— Վա՛յ, Դավի՛թ, ասավ, մահն տանի քեզ.
Դո՞ւ պետք է էն հոր զավակը լինե՞ս...
Ո՞ւր է քու հոր հըրեզեն ձին,
Ո՞ւր է քու հոր Թուր-Կեծակին,
Ո՞ւր է քու հոր գոտին ոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Ո՞ւր է քու հոր ծալ-ծալ կապին,
Գուրզը պողպատ, թամբ ստրափեն...
Որ եկել ես, ա՛յ խենթ ու ծուռ,
Ինձնից կուզես էշ ու շամփո՛ւր...
— Ի՞նչ ես, նամի, էլ բարկանում,
Ջահել եմ ես, չեմ իմանում.
Ես քեզնից եմ լըսում էսօր.
Զենք ու զըրահն ո՞ւր են իմ հոր
— Հոբեղբորդ գընա հարցուր.
Ո՞ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր
Բան է, թե որ չըտա սիրով,
Ակը հանիր՝ խըլիր զոռով։

## XIX

Դավիթ գընաց Օհանի մոտ.
— Է՛յ հորեղբայր, իմ հերահոտ,
Տո՛ւր ինձ իմ հոր հրրեղեն ձին,
Տո՛ւր ինձ իմ հոր Թուր-Կեծակին,
Տո՛ւր ինձ իմ հոր գոտին ոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Տո՛ւր ինձ իմ հոր ծալ-ծալ կապեն,
Գուռը պողպատ, թամբ սադափեն...
— Քու հոր մահվան տարուց — օրից
Դուրս չեմ հանել ձին ախոռից,
Ոչ սընդուկից Թուր-Կեծակին,
Ջրրահ շապիկ, ոսկի գոտին...
Ինձ թող, ամա՛ն, մի՛ սպանիր,
Կուզես—հրրեն, գընա հանի՛ր։

## XX

Հագավ Դավիթ զենքն ու զրրահ,
Կապեց գոտին, Թուր-Կեծակին,
Խաչն էլ իր հաղթ բազկի վրրա,
Ելավ, հեծավ Առյուծ հոր ձին,
Հոր ձին հեծավ ասպանդակեց,
Աստված կանչեց, ձեռով երդեց.

Սասմա՛ն քույրեր, բարով մընաք,
Քուրություն եք արել ինձ,
Սասմա՛ն մերեր, բարո՛վ մընաք,
Մերություն եք արել ինձ։

Ախպեր տրղեք, բարո՛վ մընաք
Մեր աշխարհքին, մեր հանդին,
Խընդո՛ւմ անեք, թե հանդ գընաք,
Զրմոռանա՛ք ձեր Դավթին։



Բարով մընաք գուռ ու դրրկից,
Մեծով փոքրով [մնաք բարով]։
Ես կըպակսեմ մեր աշխարհքից,
Դուք ապրեցեք բախտավոր։

Սովասարի պաղ աղբյուրներ,
Բարով մընաք, ա՛խ, մընա՞ք,
Կըռիվ կերթամ, կը ծարավեմ,
Դուք հորդ մընաք, պաղ մընաք։

Սովասարի անուշ հովեր,
Բարով մընաք, զով մընա՞ք,
Կըռիվ կերթամ, ես կըշոգեմ,
Դուք զով մընաք, հով մընաք։

Է՛յ հերահոտ իմ հորոխպեր,
Բարով մընաս Սասմա տուն,
[. . . .] բերնով օրհնիր
Քու ծուռ Դավթին, քու որդուն։

Կանչեց, իր ձին ասպանդակեց,
Ձեռով Օհան լալով երդեց.
— Ափսո՞ս, հաղա՞ր ափսոս հրրեղեն մեր ձին։
Ա՞խ, հրրեղեն մեր ձին.
Ափսո՞ս, հաղա՞ր ափսոս մեր ոսկի գոտին,
Ա՞խ, մեր ոսկի գոտին.
Ափսո՞ս, թանկ կապեն, որ հագին տարավ,
Ա՞խ, որ հագին տարավ...

Դավիթ բարկացավ,
Ձին քշեց, դարձավ։
Օհանը վախեց,
Իր երգը փոխեց.
«Ափսո՞ս, նորելուկ Դավիթքս կորավ,
Ա՞խ, Դավիթքս, կորավ»։

Էս որ իմացավ,
Դավիթ մեղմացավ,
Իջավ, Օհանի ձեռքը հանգուցեց։
Ձեռով Օհանն էլ, ինչպես հայր ու մեծ,
Օրհնեց, խրատեց նրան հայրաբար,
Դեպի Սասմա դաշտ գնալով ճանապարհ։

## XXI

Սասունցի Դավիթն ուներ մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ ասպահաս։
Սա էլ իմացավ համբավը կռվի,
Մի բարդի ոտին գալիս է ահա։
Գալիս է՝ հեռվից բարձրը գոռալով.
— Ի՞նչ եք վեր եկել էս դաշտի միջում,
Քանի գըլխանի մարդիկ եք կամ ո՞վ,
Սասունցի Դավթին որ չեք ճանաչում...
Բա չե՞ք իմանում, որ էստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թևավոր.
Զրքվեցե՞ք, հիմի ուր որ է կըգա,
Եկել եմ սըրբեմ մեյդանը էսօր։

Ասավ ու քաշեց իր ոտի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դավիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

— Ով քընած եք՝ արթուն կացե՞ք,
Ով արթուն եք՝ ելե՞ք, կեցե՞ք,
Ով կեցել եք՝ զենք կապեցե՞ք,
Ձե՛նք եք կապել՝ ձի թամբեցե՞ք,
Ձի եք թամբել, ելե՞ք, հեծե՞ք.
Հետո չասեք՝ թե մենք քընած —
Դավիթ գոռ-գոռ եկավ, գընաց...



Էսպես կանչեց, ասպանգակեց,
Ու, ինչ ամպից կեծակ զարկի,
Սըսքա զորքի մեջ տեղ զարկեց,
Շողացնելով Թուր-կեծակին։

Ջարդեց, փըշրեց մինչև կեսօր.
Կեսօր արինն ելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հաղթաթավոր
Մարդ ու դիակ ոգջ մի խառեղ։

Կար զորքի մեջ մի ալևոր,
Աշխարք տեսած ու բանագետ.
— Տըղե՛րք, ասավ, ճամփա տըվեք,
Գընամ խոսեմ ես Դավթի հետ։

Գընաց՝ կանգնեց Դավթի առաջ,
Էսպես խոսեց էն ծերունին.
— Դալար կենա՛ կուռդդ, ո՛վ քաջ,
Սուրդդ կըտրուկ միշտ քո ձեռին։

Մի ծերունուա խոսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում։
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հե՞ր ես սըրանց դու կոտորում։

Ամեն մինը մի մոր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամփին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընող աղքատ ու ծեր,
Որը լացով, քոզն երեսին
Նորապըսակ չահել հարսին...

Թագավորը զոռով-թրով
Հավաքել է, էստեղ բերել։
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել։

Թագավորն է քո թշնամին,
Կըռիվ ունես — իր հետ արա,
Հե՞ր ես քաշում Թուր-Կեծակին
Էս անճարակ խալխի վըրա։

— Լավ ես ասում դու, ծերունի՛
Ասավ Դավիթն ալտարին,
Բայց թագավորն ո՞ւր է հիմի,
Որ սև կապեմ նըրա օրին։

— Մեծ վըրանում քընած է նա,
Է՞ն, որ միջից ծուխը կելնի։
Էն ծուխն էլ հո ծուխ չի որ կա,
Գոլորշին է իր բերանի։

Ասին. դեպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քըշեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արաբներին.

Ո՞ւր է, ասավ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցե՛ք, դա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ գըրողն եմ ես...

— Մելիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պետք է քընի.
Երեք օրն է դեռ անցկացել,
Չորս օր էլ կա, քունը առնի։



— Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծուխն արյունի,
Ինքը մըտել վըրանի մեջ՝
Օխտը օրով հանգիստ քընի՞...

Քընել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք շո՞ւտ, դուրս գա մեյդան,
Էնպես դըրան ես քընացնեմ,
Որ չը զարթնի էլ հավիտյան։

Նյան՝ մարդիկ ճարահատված
Շամփուր դըրին թեժ կըրակին
Ու զարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մելքի բաց կըրնկին։

— Օ՞ֆ, էլ հանդիստ քուն չունի մարդ
Էս անիծված լըվի ձեռից,
Խոր մըրընչաց հըսկան հանդարտ
Ու շուտ եկավ, քընեց նորից։

Նյան, բերին մեծ գուլթանի
Խոփը՝ դըրին թեժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
Շիկնած տըվին մերկ թիկունքին։

— Օ՞ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիրավ մոծակներից.
Աչքը բացավ հըսկան հանդարտ,
Ուզում էր ետ քընել նորից,

Տեսավ Դավթին։ Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըրընչալով,
Փըշեց վըրեն, որ թրոցընի
Էն ածղըհին մի փըշելով։

Տեսավ, տեղից ժամ չի գալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին։
Աչքերն աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին։

Նայեց թե չէ, զդաց՝ իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց։
Գառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց.

— Բարո՜վ, Դավի՛թ, հոգնած ես դու.
Ե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Հետո դարձյալ կըռիվ կանենք,
Եթե կըռիվ կուզես կըրկին...

Իր վրանում բըռնակալը
Քառասուն գաղ խոր հոր էր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի փըռել։

Ում որ հաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վրանում
Էն կորստյան հորի վըրա։

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
Գընաց նըստեց... ընկավ հորը.
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց
Սըսրա դաժան թագավորը։

— Դե, թող հիմի գընա՝ խավար
Հորում փըթի, էնքան մընա։
Ու ահագին մի ջաղացքար
Բերավ, դըրավ հորի վըրա։



XXII

Քընեց էն գիշեր Ջենով Օհանը։
Գիշերն երազում երևաց ծերին՝
Մըսրա երկընքում արև ճառագած,
Սև ամպ էր պատել Սասմա սարերին։

Սաստիկ վախեցած վեր թըռավ տեղից։
— Վա՛յ, կընի՛կ, ասավ, մի ճըրագ արա՛,
Գընա՞ց մեր անփորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վըրա։

— Հողե՞մ գըլուխդ, ասավ կընիկը,
Ո՞վ գիտի՝ Դավիթն ո՛ւր է քեֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում։

Քընեց Օհանը։ Վերկացավ դարձյալ.
— Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրա վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հիվանդ ցոլքում դալկացած։

— Ի՞նչ եղավ քեզ մա՛րդ, գիշերվան կիսին.
Բարկացավ վըրեն կընիկն ադմուկով։
Հաչ քաշեց էլ հո Օհանն երեսին,
Շուռ եկավ, քընեց խռոված հոգով։

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ՝ երկընքի թաթաքը կամարում
Վառվում էր Մըսրա աստղը փառահեղ,
Սասմա աստղիկը սուզվեց խավարում։

Զարթնեց վախեցած։— Տունը քանդվի, կի՞ն,
Ես ո՞նց լըսեցի քու էդ կարճ խելքին.
Կորավ մենակ մեր չահելն անտեր.
Վե՛ր կաց, շտա՛ տար, ղենքերըս մի բե՛ր...

## XXIII

Ելավ Օհան, գոմը մըտավ,
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Է՜յ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին։

— Մինչև լուա կըհասցնեմ.
Ու ձին տըվավ փորը գետին։
— Մեջքդ կոտրի՛, լուան ի՞նչ անեմ.
Լաշին հասնեմ ես, թե՞ նաշին։

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա էլ երեսը փորը գետին։
— Ջա՛ն կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ
Կըհասցընես Դավթի կըռվին։

— Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կըհասցընեմ Դավթի կըռվին։
— Լեղի դառնա, սև մահ ու ցավ,
Ինչ տըվել եմ քեզ՝ էն դարին։

Հերթը եկավ սևին հասավ.
Գետին չերեսը փորը սև ձին։
— Է՜յ, ջան Սեռուկ, մինչ ե՞րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին։

— Եթե ամուր մեջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մեկել ոտդ շուռ տաս,
Կըհասցընեմ, ասավ սև ձին։

## XXIV

Սև ձին քաշեց Ջենով Օհան,
Ձախը դըրավ ասպանդակին,
Աջն էլ մինչև շուռ տար վըրան,
Կանգնեց Սասմա սարի գըլխին։



Տեսավ՝ Դավթի նըժույգն անտեր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքև Մըսրա դորքը չոքած,
Ինչպես անծեր ծըփուն մի ծով։

Օխտը գոմշի կաշի հագավ,
Որ չըպատռի իրեն զոռից,
Կանգնեց Օհան, ամպի նըման
Գոռաց Սասմա սարի ծերից։

— Հե՜յ-հե՜յ Դավի՜թ, ո՞ւրտեղ ես դու.
Հիշի՞ր խաչը քո աջ բազկի,
Սուրբ տիրամոր անունը ասո՜ւր,
Լո՞սը դուրս ե՞կ արեգակի։

Ձենը դընաց գըմդըմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորոմ.
— Հա՜յ-հա՜յ, ասավ, հորեղբայրս է,
Սասմա սարից ինձ է գոռում։

Ո՞վ Մարութա Աստվածածին,
Խաչ պատրաստի իմ աջ բազկի,
Ձե՞զ եմ կանչել էս նեղ ժամին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց ջաղացքարին՝
Քարը եղավ հազար կըտոր,
Կըտորները երկինք թըռան,
Ու գնում են մինչև էսօր։

Ելավ հորից, կանգնեց ահեղ.
Սարսափ կալավ դև Մելիքին։
— Դավիթ ախպեր, ե՛կ դեռ էստեղ,
Սեղան նըստե՞նք, խոսենք կարգի՞ն...

— Էլ չեմ նրստիլ ես քու հացին,
Դու տրմարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, զենքդդ առ, հեծիր քո ձին,
Դո՛ւրս եկ մեյդան, կրռիվ անենք։

— Կրռիվ անենք, ասավ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին։
— Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դավիթ,
Գընաց, կեցավ դաշտի միջին։

Ելավ, կանգնեց Մրսրա-Մելիք,
Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
Ու էնտեղից եկավ կըրկին։

Երեք հազար լիդր էր քաշում
Հրսկայական իր մըկունդը.
Եկավ, զարկեց. կորավ փոշում
Ու երերաց երկրի գունդը։

— Երկիր քանդվեց կամ ժաժք եղավ,
Ասին մարդիկ շատ աշխարքում։
— Չէ՛, ասացին, արնի ծարավ
Հրսկաներն են իրար զարկում։

— Մեռավ Դավիթ էս մի զարկից,
Ասավ Մելիք իրեն զորքին։
— Կենդանի ե՞մ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մրսրա-Մելքին։

— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա։
Տե՛ս, ո՞րտեղից հիմի կըգամ։
Ու վերկացավ, կանգնեց հրսկան,
Իր ձին հեծավ երկրորդ անգամ։



Երկրորդ անգամ քըշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից։

Եկավ, զարկեց. զարկի ձենից
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան։
— Գընա՞ց Դավիթ Սասմա տանից.
Գուժեց գոռոզ Մրսրա արքան։

— Կենդանի՞ եմ, կանչեց Դավիթ,
Մին էլ արի՞ — հերթն ինձ հասավ,
— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
Կանչեց Մելիք ու վեր կացավ։

Երրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մրսրա,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, եկավ Դավթի վըրա։

Եկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանրը զարկով հրսկայական.
Փոշին ելավ Սասմա դաշտից,
Բրոնեց երեսն արեգական։

Երեք գիշեր ու երեք օր
Փոշին կանգնեց ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բոթը տըվին Դավթի մահվան։

Երբ որ անցավ երեք օրը,
Էն ամպի պես կանգնած փոշում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեգ-մըշուշում։

— Մելի՛ք, ասավ, ո՞ւմն է հերթը։
Սարսափ կալավ դոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռոզ հոգին։

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մրտավ վիհն էն խավար,
Վըրեն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար։

Մըրընչալով ելավ տեղից
Էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կեծակին։

Առաջ վազեց մաղերն արձակ
Մելքի պառավ մայրը ջադու.
— Դավի՛թ, մազրս ա՛ռ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ի՛նձ բաշխիր դու։

Երկրորդ անգամ թուրը քաշեց.
Էս անգամ էլ եկավ քուրը.
— Դավի՛թ, եթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին զա՛րկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Ելավ Դավիթ երրորդ անգամ.
— Էս մի զարկն ու աստված, ասավ,
Էլ մարդ չըգա, պետք է որ տամ։

Էս անգամ էլ քեռի Թորոսն
Առաջ եկավ ձեռն արած դեմ.
— Դավի՛թ, ասավ, լավ իմանաս,
Կըշեռք պիտի գըցեմ, քաշեմ։



Մսրա Մելքի երկու կեսը
Թե հավասար չեկան իրար,
Էլ չըտեսնես իմ երեսը,
Դավիթ չես էլ դու ինձ համար։

Ասավ, ելավ ու փոթորկեց,
Թրռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կեծակին։

Անցավ քառասուն գոմշի կաշին,
Անցավ քառասուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,
Օխտը գազ էլ դենը գընաց։

— Կենդանի՞ եմ, մին էլ արի՞,
Գոռաց Մելիք հորի տակից։
Դավիթ լսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կեծակից...

— Մելի՛ք, ասավ, թա՛փ տուր մի քիզ։
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը՝ դեն։

Էս որ տեսավ Մըսրա բանակ,
Ջուր կըտրվեց ահ ու վախից։
Դավիթ կանչեց.— Մի՛ վախենաք,
Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ։

Դուք ըռանչպար մարդիկ, ասավ,
Ջուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք։

Ի՞նչ եք առել ճետ ու աղեղ,
Եկել թափվել օտար դաշտեր.
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կյանքից,
Թե՞ ղրկվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վրա,

Հորում լինեն քառասուն գազ խոր
Թե չաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասմա Դավիթ, Թուր-Կեծակին։

Էն ժամանակ ասուած գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...

---

# ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

## Բ. ՄԱՍԸ

### I

Ընկավ Մելիքն ամբարտավան ու պատերազմն արյունոտ,
Խաղաղ կյանքի, ուրախ օրվան բացվեց Հայոց առավոտ։
Գրտավ կորցրած հանգիստ էլ ետ ամենն իրեն հարկի տակ.
Վեր բարձրացավ կըտուրներից ծուխը բարդ բարդ, կապուտակ։
Կըտրիճ տըղերք զենքի տեղակ առան մանգաղ, գերանդին,
Ջրը՞նգ, ղրը՞նգ, ղվարթ ձենով գործը թընդաց մեր հանդին։
Դը՛մբ, հա դրը՛մբ, թըմբուկ զարկին, զուռնեն հնչեց զիլ, ուժեղ,
Քեֆ, կեր ու խում, պար ու խընդում, ու հարսանիք ամեն տեղ։
— Ապրի Դավիթ, [մեր ապավեն], որ մեզ տըվավ ուրախ օր,
Իրեն կանանչ կարմիրն էլ թող էսպես կապենք բախտավոր...
Ու նըշանեց Ձենով Օհան, Դավթին արավ տուն ու տեղ,
Աղջիկ ուզեց արժանավոր, թագավորի զարմ ու ցեղ։
Խըլաթ քաղքի թագավորի դուստրը խոսեց նըրան կին.
Ջրքնաղազեղ ու փահլևան են Ջըմշկիկ Սուլթանին։

### II

Բայց թե աղջիկ կուզես ջրքնաղ, անպարտելի փահլևան,
Արի՛, գընանք Կապուտ Բերդի թագավորի աղջկան։
Խանդութ խանո՞ւմ... հուրի ասա, մի անքրմա՞ն, մի անտե՞ս...
Խանդութ խանո՞ւմ... հալվում էին սըրտերն ամեն մոմի պես։
Օխտը տարի քառասուն հըսկա թագավորներ ամրահակ
Գուրզերն առած նըստած էին նըրա բերդի պատի տակ.
Բայց [անտարբեր] գեղեցկուհին իր ամրոցում ահագին,
Ու չէր զարկում կարմիր խնձորն և ոչ մեկի թիկունքին։

## III

Զենը եկավ, աշխարհք ընկավ, գընաց, հասավ Կապուտ Բերդ,
Թե մեծ կրովում հաղթեց Դավիթ Մըսրա տիրոջն անհեթեթ։
Էս հաղթական լուրի վրա քանդվեց սիրտը սիրունի.
— Ա՜խ, Սասունցի քաջ Դավիթը իմը լիներ երանի...
Էրնեկ տըվավ՝ խելքը թըռավ, ուշքը թըռավ դեպ Սասուն.
Դավիթն է միշտ մըտքի միջին, Դավիթն է միշտ երազում։

## IV

Երկու աշուղ կանչեց խանդութ, տակի տըվավ լիառատ,
— Գնացե՛ք, ասավ, Սասմա քաղաք, Ջոջանց տունը բարեմահաղթ.
Իմ դովքն արեք Դավթի առաջ, սերըս սիրտը ձրդեցեք,
Ու կըտրեցեք աչքի քունը, սըրտի հանգիստն կըտրեցեք.
Ապա ինձանից բարով արեք, ասեք՝ մինչ երբ մընամ քեզ,
Ջիավորված, թեավորված, երբ պիտի գաս ինձ տանես։

Սաղնարն առան աշուղներբ ու [տնց կացան] հոդից հոդ,
Սաղ անելով եկան հասան Սասմա քաղաք, Ջոջանց տուն։
Բարով տըվին շեմբում նստած էն ջոջ Զենով Օհանին,
Է՞ս է, ասին, աստվածապահ Ջոջանց տունը [մեծ ու հին]։
— Է՛ս է, ասավ Զենով Օհան, ի՞նչ եք ուզում դուք Սասուն։
— Մենք, [ասացին], աշուղներ ենք, Դավթին կուզենք դյուցազուն։
Խանդութ խանում ղըրկել է մեզ՝ իր դովքն անենք Դավթի մոտ,
Պատմենք անտես էն սիրունի անքուն սերը ու կարոտ։
Աստված ինքը թող շեն պահի Ջոջանց տունը փառավոր,
Կպրած պահի շեն պահողին և Սասունցի քաջ Դավթին,
Ջոջանց պարծանք քաջ Դավիթը ո՞րն է արդյոք, բարեկա՛մ։
— Քաջ Դավիթը, որ լսել եք, ես եմ, ասավ, հենց որ կամ.
Ինչ որ Դավթին պիտի ասեք, իմ առաջին ասեք դուք։
Էսպես ասավ Զենով Օհան, աշուղները . . . . . .
Նըստատեցին ծալապատիկ սաղնարն [առան] ծընկներին
Ու էրվելով, օրորվելով էն խանդութի դովքն արին.
— Օրհնյալ ասված, տեր բարերար,
Քու զորքն է շատ, քու դործն արդար.



Դու պահապան կըտրիճ Դավթին,
Կըտրիճ Դավթին, իր մուրատին.
Իրեն մուրատն իրեն սըրտում,
Իրեն սըրտում — Կապուտ Բերդում...
Օրհնյալ ասված, բանդ ու բարիդ.
Ամենը սուտ, դու ճըշմարիտ։
Դու, որ ըստեղծել ես ըսկզբանե
Խանդութ խանում Դավթի համար,
Դու արժանի անես իրար։
Վա՜յ քու տունը քանդվի խանդութ,
Վա՜յ քու դուռը փակվի, անգութ,
Դու քու անհաս աշտարակում,
Աշխարհք ամեն քու կըրակում.
Աշխարհքն էրվի թող քու սիրով,
Դու Դավթին հս ղրկել բարով.
Բարով Դավթին, [հազար բարի]
. . . . . .
. . . . . .
—Հասակն ասես՝ շիտակ, Դավի՛թ, դրախտի միջում կանգնած նոճին,
Ծրծերն ասես՝ ջուխտակ, Դավի՛թ, զանգակներ են ծոցի միջին,
Ա՜խ, ծոցի միջին.
Աչքերն ասես՝ ծով են, Դավի՛թ ու կըցոլան ասող ու արև,
Ա՜խ, ասող ու արև.
Ունքերն ասես՝ սև են, Դավի՛թ, սև ամպերը ծովի վերև,
Ա՜խ, ծովի վերև.
Բերթերոնքը նետեր, Դավի՛թ, աղեղներում ահեղ լարած,
Ճակատն ասես՝ ճերմակ, Դավի՛թ, էն նոր ձընած դաշտը սերասուի,
Ակռիքն ասես՝ գերմակ, Դավի՛թ, լալ մարգարտի շարոց են սուրբ.
Ծամերն ասես՝ ճոխծամ, Դավի՛թ, կրունկն են ծեծում հողին հավասար
Վիզը ասես՝ ճոճան, Դավի՛թ, շողման կլափն ու շուրթը լար...

———

# 1902

## ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱԼԲՈՒՄԸ

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հե՛յ, պարոննե՛ր, ականջ արեք
Թափառական աշուղին,
Սիրո՛ն տիկնայք, ջահե՛լ տղերք,
Լա՛վ ուշ դրեք իմ խաղին։

Մենք ամենքս հյուր ենք կյանքում
Մեր ծնընդյան փուչ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից։

Անց են կենում սեր ու խընդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ։

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՛կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար։

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անե՞ծք նըրա չար գործին,
Որդիդ լինի, թե հերն ու մեր,
Թե մուրազով սիրած կին։



Ես լավությանն խոսքն եմ ասում,
Որ ժըպտում է մեր սրտերին.
Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,
Լավ արարքը լավ մարդին։

Է՛յ, լա՛վ կենաք, ակա՛նջ արեք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,
Խոսքըս, տեսեք, ո՞ւր է գընում,
Քաջ որսկանի դյուլլի պես։

I

Նադիր Շահը զորք հավաքեց,
Զորք հավաքեց անհամար,
Եկավ Թըմկա բերդը պատեց,
Ինչպես գիշերն էն խավար։

— Հե՞յ, քաջ Թաթուլ, կանչեց շահը,
Անմա՞հ էիր քեզ կարծում.
Ե՛կ, բերել եմ ես քու մահը,
Ի՞նչ ես թառել ամրացում։

— Մի՛ պարծենա, գոռող Նադիր,
Պատասխանեց էն հրսկան.
Գըլխովը շա՞տ ամպեր կանցնեն,
Սարը միշտ կա անսասան։

Սասավ, կանչեց իր քաջերին,
Թուրը կապեց հավլոնին,
Թրռալ, հեծավ նըժդեհ իր ձին,
Դաշտը իջավ արյունի։

Ով քառասուն օր, քառասուն գիշեր
Կըռիվ տըվին անդադար,

Ընկան քաջեր, անթիվ քաջեր,
Բերդի գլխին հավասար։

Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաթուլն անհաղթ, աննըկում,
Զորք ու բաբան խորտակվել են,
Նըրա բերդը միշտ կանգուն։

Ու միշտ ուրախ, հաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է էնտեղ կինը,
Ջահել կինը սևաչյա։

II

Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թե աշուղն էլ ունենար,
Առանց դինքի,
Առանց զորքի
Շահերի դեմ կը գընար։

Սիրո հընոց,
Կրակ ու բոց —
Էնպես աչքեր թե ժըպտան,
Մարդու համար
Օրվա պես վառ
Գիշերները լույս կը տան։

Վարդի թերթեր —
Էնպես շուրթեր
Որ հաղթություն քեզ մաղթեն,
Էլ քեզ ոչ շահ,
Ոչ ահ ու մահ,
Ոչ զենք ու զորք կը հաղթեն։



III

Ու կրովի դաշտում շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի.
Նըրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
Չի հասնի չըքնաղ հուրին Իրանի։
Ծով են աչքերը Ջավախքի դըստեր
Ու կորչում է մարդ նըրա հայացքում,
Ճակատը ճերմակ էն ձյունից էլ դեռ,
Որ բարձր Արուզի դագաթն է ծածկում։
Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նըրա սիրովն է հարբած էն հրսկան,
Նըրա ժպիտն է քաջին ուժ տալի,
Որ դաշտն է իջնում առյուծի նըման։
Թե տիրես, մեծ շահ, դու նըրա սըրտին,
Թաթուլն էլ անպոր կընկնի ոտիդ տակ,
Հանգիստ կը տիրես և Թըմուկ բերդին,
Որ չես կարենում էսքան ժամանակ։

IV

Էսպես է ասել հընուց էդ մասին
Ֆարսի բյուլբյուլը, անմահ Ֆիրդուսին.
Ի՞նչը կըհաղթի կյանքում հերոսին,
Թե չը լինին
Կինն ու գինին։

Արևի նման ճակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպես սար,
Ո՞վ կանի նըրան գետնին հավասար,
Թե չը լինին
Կինն ու գինին։

Պարում է ասես կըռիվ գընալիս
Գետընքից վերև թըռչում ման գալիս.

Ո՞վ ցած կը բերի Ներսան Թրոչելիս,
Թե չը լինին
Կինն ու գինին։

Թեկուզ և արար աշխարհ գա վերան,
Կերթա դեմ ու դեմ, տուր չի տալ իրան,
Ռուստեմ Զալն էլ չի հաղթիլ Ներսան,
Թե չը լինին
Կինն ու գինին։

V

Ու ղբրկեց շահը իր թովիչ երդին.
Գընա տե՛ս, ասավ, Թըմկա տիրուհուն,
Երգի՛ իմ սիրը Ներսա առաջին,
Պատմի՛ իմ փառքը ու զանձը անհուն։
Խոստացիր Ներսան իմ ոսկի գահը,
Խոստացի Ներսան ամե՛ն, ամեն բան,
Ինչ որ կարող է խոստանալ շահը,
Երկրակալ շահը իր սիրած կընկան։

---

Ուր ահեղ կըռվով չի մտնիլ արքան,
Դոնաղ է աշուղն իրեն սազի հետ.
Եվ ահա մի օր ծեր, թափառական
Մի աղքատ աշուղ մըտավ Թըմկաբերդ։

VI

Գոռում են, գոռում Թըմկա ձորերը,
Կանգնած է Թաթուլ շահի հանդիման.
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում՝ էն Քըռի նման։

Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում՝ էն Քըռի նման.



Երգում է աշուղն իր շահի սերը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ Թըմկա տիրուհին.
Եվ վըրդովում են իր միտքը թաքուն
Դավաճան գործի ամոթը խորին
Եվ արքայական փառքն ու մեծություն...

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Ա՛յ նաղանի անընման.
Նայի՛ շահի՞ն, իրեն զորքի՞ն,
Աշխարհքի տերն անսահման...

Մեզ պես տըկար մարդ է նա էլ՝
Սիրուններին միշտ գերի.
Քու հակառին թագ է վայել,
Լինիս շքե՛ղ թագուհի...

Լըսում է շքնաղ Թըմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորի՞ց ու նորից...
Ու դարձավ նա ըՀ՝ դալա՞ւկ, մըտախո՞հ,
Ու քունը փախավ սիրուն աչքերից...

VII

Դարձավ իր կրակից իշխան Թաթուլը,
Դարձավ հաղթական իրեն զորքի հետ.
Սըրբից, պատյանը դըրավ կեռ թուրը,
Ցնծությամբ ձայնից դողաց Թըմկաբերդ։

Խընջույք է սարքել Թըմկա տիրուհին,
Ցերեկ է արել խավար գիշերը.
Հեղեղի նման հոսում է գինին,
Ու քեֆ է անում Ջավախքի տերը։

Պըտույտ է գալիս ջրքնաղ տիրուհին,
Անցնում է, հրսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խրնդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն։

— Հապա լըսրե՞ք, իմ քաջ հյուրեր,
Բաժակներդ լիրվի,
Խրմենք — ասուած կըտրուկ անի
Թուրը իմ քաջ Թաթուլի։

— Է՛լ, տեր ասուած կըտրուկ անի
Թուրը մեր քաջ իշխանի,
Նըրա շուքը միշտ հանապազ
Մեր գըլխիցը անպակաս։

Ու թընդում է Թըմուկ բերդը
Էն աղմուկից խրնդության,
Որոտում են տաղն ու երգը
Գոռ ձայներով հաղթական։

— Էն մըթին ամպից արծի՞վն է իջնում,
Սարի արծիվը շեշտակի թափով։
— Էն Թըմկա բերդից Թաթուլն է իջնում,
Թըշնամու հոգին լըցնում սարսափով։

Էն Թըմկա ձորում սև ա՞մպն է գոռում,
Էն շա՞ղթն է ճայթում էնպես ահարկու։
— Էն Թըմկա ձորում Թաթուլն է կըռվում,
Էն թուրն է շաչում էնպես ահարկու։

Ի՞նչ սարի արծիվ կը հասնի քաջին,
Ի՞նչ շահ կը կանգնի նըրա առաջին։

Ու չի դադարում երգի հետ վարար
Կախեթի գինին խելագար հոսել.



Խրմում են տիկնոջ թանկ կյանքի համար,
Որ էն ժայռերին ծաղիկ է բուսել։

Խրմում են կըռվող քաջերի փառքին,
Որ կըռվի դաշտում կյանք չեն խընայում,
Եվ ընկածների սուրբ հիշատակին,
Որ երկընքիցն են այժմ իրենց նայում...

Պըտույտ է գալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հրսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խրնդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն։

— Օ՞ֆ, տիրուհի, ասուած վկա,
Էլ չենք կարող մենք խրմել.
Էլ ուժ չը կա, էլ տեղ չը կա,
Շատ ենք խրմել ու հոգնել...

Ու հանգչում է Թըմուկ բերդը,
Պապանձվում է ու մարում,
Հարբած, հոգնած տերն ու զորքը
Մըրափում են խավարում։

## VIII

Լուռ ու խավարչտին կամարների տակ,
Հոգնած ու քընած բազմությյան վրրով
Թրռչում են, թրռչո՞ւմ, սև՞, չարագուշակ
Երազներն ահեղ, անվերջ խըմբերով։

Երազ է տեսնում Թաթուլ իշխանը,
Որ վիշապ օձը եկել է ահա,
Եկել փաթաթվել, իր բերդը պատել,
Գըլուխը դըրել ետ պոչի վրա։

Ու բարձրացնում է հրեշն ահռելի,
Իրեն գլուխը բարձրացնում է վեր,
Բարձրացնում մինչև բարձունքը բերդի,
Մինչև Թաթուլի պալատն ու տրներ։

Պառկած է իբրև Թաթուլ իշխանը
Նազելի կընոջ գլուխն իր կրծքին,
Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,
Թո՛ղ, որ սպանեմ ես էդ հրեշին։

Էսպես է ասում Թաթուլ իշխանը,
Ու զարհուրանքով տեսնում է հանկարծ,
Իրեն սիրելի կընոջ գլխի տեղ
Օձի գլուխն է կրծքին ծանրացած...

## XI

Է՛յ, հրսկկդե՛ք, ի՞նչ եք քընում,
Քաջ ղինվորներ Թաթուլի.
Ո՞վ է, տեսեք, տանջվում մրթնում,
Քան չի աչքին մատ գալի։

Չը լինի՞ թե, հաղթահարված,
Ճարը հատած թըշնամին
Դավ է դընում մութն ու մեռած
Կես գիշերվա էս ժամին։

Վե՞ր կացեք, վե՞ր, ամբողջ գիշեր
Մարդ է գընում ու գալի.
Հե՞յ, զարթնեցե՞ք, առյուծ քաջեր,
Պահապաններ Թաթուլի։

Վե՞ր կացեք, վե՞ր, հարբեցրել է
Իր հաղթական հյուրերին,



Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դավաճան տիրուհին։

Դա՞վ... դա՞վ... ելե՞ք... կոչնա՞կ... պահնա՞կ...
Ջենք առեք շո՞ւտ... ձի հեծե՞ք, ձի՞...
Ճրոքնչում են, դղրդում են
Դարպասները երկաթի...

## X

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վրա, Ջավախքի վրա,
Ավերակ բերդին, սև ամպի նըման,
Ծուխն ու թըշնամին շոքել են ահա։

Հաղթության փառքով ու գինով հարբած
Քընած են բերդի և՛ զորքերն, և՛ տեր,
Ու հավիտյան էլ մընացին քնած,
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր։

Ընստած է շահը. նրա առաջին
Ահա իրիկվան քեֆի սեղանը.
Նարում է շահը անտեր գահույքին,
Մտքովն անցնում է աշխարհքի բանը։

Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
Ոչ սիրած կինկա տրված բաժակին...

Ու լի դառնությամբ հարցընում է նա
Դալուկ, մարմարիոն Թըմկա տիրուհուն.
— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...

— Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ ազամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չի առել,
Չի եղել կյանքում երբեք խաբեբա...

Էսպես տիկինը տրվավ պատասխան.
Անհուն ցասումից մրոբնչաց շահը.
— Հե՞յ, դահի՞ճ, գոռաց գաղանի նըման.
Դահիճը իսկույն մտավ սրահը։

## XI

Դահիճն եկավ ոտից գըլուխ
Կարմիր հագած ու արյուն,
Ու դուրս տարան իր պալատից
Թըմկա չըքնաղ տիրուհուն։

Տարան անտակ էն ժեռ քարից,
Որ կանգնած է մինչ էսօր,
Էն ահավոր քարի ծերից
Գըլորեցին դեպի ձոր։

Գել ու աղվես եկան հանդից
Ագահ սիրտը լափեցին,
Ցին ու ագռավ իջան ամպից,
Սև աչքերը հանեցին։

Անցավ անտես ու անընթան
Էն սիրունը աշխարհից,
Ինչպես ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկիլ էլ նորից։

Անցավ զալում էն մեծ արքան
Իրեն փառքով ու զորքով,



Անցավ Թաթուլն էն հաղթական
Ու իր քաջերն էն կարգով։

Ու ներանցից մենակ անմեռ
Էս դրույցը հասավ մեզ,
Որ մեզանից հետո էլ դեռ
Պետք է խոսվի միշտ էսպես։

## XII

Հե՛յ, պարոննե՛ր, ականջ արե՛ք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,
Լավ ուշ դըրեք իմ խաղին։

Ամենքս էսպես հյուր ենք կյանքում
Մեր ծնընդյան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից։

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խոսվում լավ ու վատ.
Ա՜խ, երանի՝ ո՛վ մարդ կըգա
Ու մարդ կերթա անարատ։

---

# 1898-1914

## ՀԱՅԱՐԱՆ ԲԼԻԲՈՒ

(Հատվածներ)

<1>

Երբ դեռ շունչը արարչական ծավալվում էր օդի մեջ,
Երբ դեռ նոր էր կույս աշխարհքում կյանքը խաղում
պարզ ու պերճ,
Երբ տիրում էր ամենուրեք սերն ու հանգիստ անվրդով,
Եվ գառն ու գել դեռ միամիտ խաղում էին իրար քով,
Սուրբ ու առատ էն ժամանակ, արևելքի կողմերում
Բարի Ալամ թագավորն էր<....>իշխում ու տիրում։
Իշխում էր նա արևի պես, որ ամենքին կենսաձիր
Իրեն լույսն ու ջերմությունը շըռայլում է անխտիր,
Կամ թե դարնան անձրևի պես, որ թափվում է հորդառատ,
Ջովացնում է ու լիացնում, չի հարցընում լավ ու վատ։

<2>

Բարիլուսի հետ կանգնեց սգավոր պառավը ուղղ դիակի վրա,
ձեռքերը դեպի երկինք տարածեց ու կանչեց.

— Ո՞վ լուսեղեն, դըռնեըրդ բաց,
Հող ու ջրի առատ աստված,
Ո՞վ, որ էսքան բարիք ու փառք՝
Աշխարքն անծեր, ծովերն անտակ
[Ըստեղծել ես,] փրռել, լցրել,



Ո՞վ բարեգութ, քեզ եմ խընդրել —
Ինչպես որդիս իր մոր գըրկին
Գընաց՝ կարոտ, աչքն աշխարհքին,
Ներանք էլ թող իրենց կյանքից
Կարոտ գընան լիք աշխարհքից.
Եղեմ այգին կըտրի թող փուշ,
Իրենք դաղան չար ու ապուշ։

Էսպես կանչեց, ու, ո՞վ սարսափ, փոխվեց զըրախտն էն անուշ,
Ծառը կըտրեց կոպիտ մացառ, որթը—բազեղ, վարդը—փուշ.
Պահնորդ մարդիկ դարձան գազան գուրկ նշանից մարդկային,
Կորցրին և՛ սիրտ, և՛ քնքշություն, որ ի ծրնև ունեին։
Գույժը տարան թագավորին, այսպես, այսպես պատմեցին,
Սարսափ կալավ թագավորին, փնտռեց մազերն իր գահին։
< . . . . . >
Մեր, բազմափորձ մարդիկ կանչեց [Ալամ արքան] իր ատյան,
— Ո՞վ է, ասավ, ձեզնից տեսել կամ իմացել էսպես բան.
Ինչ պատիժ է, որ գալիս է ինձ ու երկրիս բովանդակ,
Ինչ ճար ու դեղ, ինչ հնար կա < . . . . . > այս ցավին
< . . . . . >
Ու ծերերը խոնարհեցին գըլուխները ալեզարդ.
— Թող շատ ապրի Ալամ արքան ոսկի գահին իր հաստատ.
Հազար տեսակ ցավի ատն է — էս աշխարհքը անցավոր,
Ու թվում է մարդու համար ամեն մի ցավ անսովոր։
Բայց դու եղիր համբերատար, միտդ պահիր միշտ երկար,
Ցավը պետք է մարդը քաշի, ոչ թե անշունչ սար ու քար։
Էս աշխարքում ոչ առաջին, ոչ վերջինն ես դու մենակ,
Պատահել են էսպես դեպքեր կյանքում ամեն ժամանակ —
Մենք չենք տեսել, բայց լսել ենք, որ մեզանից շատ առաջ
Գորտ ու գազան մարդ են դառել, մարդը դառել գայլ կամ արջ.
[Բայց մի դեպքում, մի հընարքով վերջն եղել է միշտ բարի,
Միշտ բարին է վերջը հաղթում — էսպես է կարգն աշխարհի].
Բայց թե հե՞ր է էս պատիժը այժմ գալի քեզ վրա,
Անգետ ու մութ մարդիկ ենք մենք — էդ դրկողը կիմանա։
Մենք է՛ն գիտենք, որ նա, ով որ ցավ է տվել ու աղետ,

Ստեղծել է ամեն ցավի ճարն ու ճամփեն իրեն հետ։
Չկա մի ցավ արևի տակ, չկա մի < . . . . . >,
Որ չունենա գիտությունը նրան դեղ կամ դարման.
Գիտությունը լույս է, արքա, աշխարհ իջած երկնքից,
Ճարեր ունի քաղած-քամած ամեն հանքից ու տունկից.
Նա է բերում նա մեռելին հոգեվարքից իր վերջին,
Մի հոգին է միայն պակասում — հավասարի արարչին։
(Ինչ է սակայն նրա համար մարդը իրեն ցավերով.
Քընընում է, չափում-կշռում երկիրն իր խոր ծովերով,
Փորփրում է հողի շերտերն — հասնում ըսկիզբն ամենի,
Երբ դեռ անկազմ կար երկիրը խավար ծոցում անհունի...
Նայում է վեր — համրում, դիտում աստղերն, արև ու լուսին,
Ով կա արդյոք նրանց վրա, ինչ կա նրանց երեսին,
Գրանում է [միշտ] նոր երկրներ տարածության մեջ անսահման,
Ջոկում այնտեղ արարածներ — շունչ կենդանի մեզ նման,
Եվ աշխարհքներ, որ պարել են վաղուց իրենց ողջ կյանքով.
Եվ աշխարհքներ, որ տակավին այրվում են հուր երկունքով,
Եվ հաշվում է — ամեն մինը քանի միլիոն տարի կա,
Կամ դեռ քանի-քանի միլիոն տարի ունի մինչև մահ.
Ո՞վ իմանա ինչ հրաշքներ կան իր առջև տակավին,
Սակայն, թողնենք հրաշքները — գանք, տեր արքա, քո ցավին։)
Մի բան չկա վեր երկրնքում, երկրի վրա ու տակին,
Ողջ զրնրնել, ողջ մաղել է— խաղալիք են իր ձեռքին։
Կանչիր թող դան քո տերության մեծերն ուսյալ ու գիտուն
Եվ քո մարդկանց և քո այգուն նրանք կանեն օգնություն։
Էսպես ասին, պատվեր տվավ թագավորը [Հուրանի,]
Կանչեց երկրի ամեն կողմից գիտուններին անվանի։
— Ինձ պատմեցեք, ո՞վ հմուտներ, ինչ տեսիլք է արդյոք սա,
Որ ծերության անկար օրով իմ աչքերով ես տեսա։
[Այդի արի, բար հասցըրի, վարդ պահեցի աննման,
Արթուն, հրմուտ, հավատարիմ մարդիկ ղրրի պահապան.
Վարդերս ամեն փուշ կրտրեցին, փոխվեց այգին իմ եդեմ.]
Մարդիկս ընկան մարդու կերպից, դարձան գազան չար-դժխեմ,
Բերեք արեք ինչ ճար որ կա երկրի վրա ու տակին,
Թարով, բույրով լցրեք նորից եդեմական իմ այգին,



Ապատեցեք, որ չքոքշեն իմ մարդիկը հավիտյան,
Տվեք նախկին տիպը ազնիվ, քնքույշ հոգին բանական։

Էսպես ասավ, գրուխ տվին գիտունները արքային.
— Թող շատ ապրի Ալամ արքան ողջ ու հաստատ իր գահին,
Էս աշխարքում ամեն մի բան ունի իրեն մի պատճառ,
Էն պատճառն էլ ուրիշ պատճառ։ Էսպես անվերջ, անդադար
Մինչև պատճառն սկզբնական՝ ծագման խորհուրդն էս կյանքի,
Մինչև սկիզբն սկիզբների՝ ակն ու աղբյուրն ամենքի։
Ընչի համար էսպես է էս, շահ լինի քեզ թե վընաս,
Պետք է քննես, առաջ բերող նրրա պատճառն իմանաս։
Նրբ իմացար, թե էս ընչից էս ինչ բանն է դուրս գալի,
Կարող ես դու առաջ բերես և հետևանք ցանկալի։
Եվ արդ, քանզի ամեն մի բան ունի իրեն մի պատճառ,
Իսկ էն, ինչ որ պատճառ ունի, ունի նաև իրեն ճար,
Մի՛ տրտմիր դու, մեծ թագավոր, մեզ տուր միայն ժամանակ,
Որ քնընենք ու էս ցավի պատճառն ու ճարն իմանանք։

Ու գընացին քառասուն ցերեկ, քառասուն գիշեր տրքնեցին,
Ցերեկն անդուլ, հանգիստ չառան, ոչ գիշերը քնեցին.
Քրքրեցին, քընընեցին ամեն գրվածք ու գրյանք,
Երբ որ անցավ չառասուն օրը եկան դարձյալ ապարանք.
— Թող շատ ապրի Ալամ արքան ողջ ու հաստատ իր գահին։
Գրուխ տվին, էսպես ասին գիտունները արքային։
— Քրքրքրեցինք, քընընեցինք մենք խորհուրդը էս կյանքի։
Սահմանեցինք էությունը, տեղն ու ցեղը ամենքի.
Առանք մարդուն, որ կյանքերի օղն ու կապողն է վերջին,
Իջանք ներքև կարգով շարքով, մարդուց անցանք մենք արջին,
Արջից հավքին, հավքից սողունն ու սողունիցը ձկան,
Էսպես հերթով հասանք մինչև էակները նախնական,
[Մանրենները միաբջիջ, որ . . . . . .
Կազմված են հյուլեներից անտեսնելի մեր աչքին,]
Որոնք ունեն իրար ներհակ զորություններ լավ ու վատ,
Ու միանում ու բաժվում են մաքառելով անընդհատ.
Էսպեսով էլ հորինում են ելևէջներ կյանքի մեջ,

Ուլժը կամ ծյուրում, ախտ կամ եռանդ, կյանք ու
ծնունդ և կամ վերջ...
Ու բովանդակ էս աշխարհքում ամեն մինը իր կյանքով
Մնվում, մեռնում, փոփոխվում է մի ընդհանուր օրենքով։
Էս ինչ հյուլեն ներհակավոր էն հյուլեին միացավ,
Ու փուշն ահա թերթեր տվեց, անուշ բուրմունք ունեցավ,
Կամ [ենթադրենք] թե կատարվեց այլ միացում հակառակ
Ու վարդն ահա փոխվեց, դառավ անհոտ մի փուշ հասարակ։
Արյան մեջ էլ էս ինչ հյուլեն պակսեց կամ չէ՝ շատացավ,
Ու մարդն ահա այլ կերպարանք — այլ բնություն ստացավ...
— Էդ ամենը հրաշալի, կանչեց արքան անհամբեր.
Բայց ասացեք, ո՞վ խորիմաստ, ո՞վ բազմագետ գիտուններ,
Ինչպես ամենը, որ իմ այգին դառնա դրախտն առաջվան,
Իմ մարդիկը գազանացած կրկին լավերն է՛ն [վաղվան]։
Էսպես կանչեց, դլուխ տվին գիտունները արքային.
— Թող շատ ապրի Ալամ արքան բարձր ու հաստատ իր գահին.
Ճարեր արինք, դեղեր բերինք, աշխատեցինք մենք անքուն,
Հնար չեղավ, դեղ-ճար չեղավ ոչ քո մարդկանց, ոչ այգուն.
Ինչ դիտեինք բերինք արինք — փուշը մնաց էլ ետ փուշ,
Ու գազանը դարձյալ գազան, դաժան, կոպիտ ու ապուշ...

<3>

Սիփոք էր անում տարակուսած դժբախտ արքան Հուրանի,
Հանկարծ կանգնեց իր առաջին մի անծանոթ ծերունի։
Մի ծերունի պայծառ ու վեհ, ինչպես տեսիլք սրբազան,
Ալիքներին ծաղկեպսակ, ձեռին կաղնի գավազան.
Միրուքն երկար, մինչև գոտին, սպիտակ, ինչպես նորեկ ձյուն,
Քայլքը թեթև, դեմքը զվարթ, ու հայացքը իմաստուն։
— Ողջո՞ւյն, ասավ, բարի Ալամ, տղջույն վշտոտ թագավոր,
< . . . . . >
Էս աշխարքում թե մի ճար կա, մի հընար կա քո ցավին,
Էն Հազարան ազնիվ հավքն է, որ դու չունես տակավին,
Որ երգում է հազար ձենով, հազար ձևով կանչելով,



Հետն էլ բուրյան մշտադալար վարդ է թափում փնջերով.
Եթե երգի [նա մի անգամ], կամ < . . . . . > նա մի օր
Փուշ ու տատասկ վարդի կըփոխվեն, վարդ կըծաղկեն նորից նոր։
Ու պահապան քո ծառաներ, որ դառել են այժմ արջ,
Նա կը դառնան քնքույշ մարդիկ, ազնիվ ու լավ, քան առաջ...
— Ո՞վ երկնառաք բարի դու ծեր, գոչեց արքան < . . . . >
Պարզև կըտամ ինչ որ ուզի ավետաբեր քո լեզուն.
Բայց ո՞ր երկրում, ո՞ր անտառում, ո՞ր սարում է նա երգում...
— Միշտ երջանիկ կախարդական անկոչ, անմեռ աշխարհքում...
Ասավ ծերը, քամի դարձավ ու չըքացավ իր աչքից,
Ապշեց արքան, քշվեց արքան աչքով տեսած հրաշքից։

<4>

Երեք կըտրին որդի ուներ Ալամ արքան ալևոր,
Կանչեց իրեն երեք որդուն ու արքունիքն իր բոլոր։
— Տեսա՛ք, ասավ սիրուն որդիք, ինչ պատուհաս մեզ հասավ.
Մեր աշխարհքի միակ զարդը, միակ փառքը փըչացավ։
Ես՝ ծերունի, սըրի տեղակ ցտալ եմ արդեն ձեռս առել,
Այժմ էլ վըշտից ծունկս կըտրել, աչքիս լույսն է խավարել.
Ձիր մարդիկ եք, զենքներդ առեք, ձիանք հեծեք ամեհի
[Գնացեք...] գըտեք, բերեք ճարն ու դեղը մեր ցավի։

Առաջ եկավ ավագ որդին.— Ո՞վ մեծափառ մեր ծընող,
Ես ձի կելնեմ, զենքըս կառնեմ, կերթամ, կանցնեմ հողից հող.
Չեմ վախենալ, ետ չեմ դառնալ, ով որ կուզի դեմըս գա,
Ցոթ գըլխանի վիշապ լինի, դև ու հըրեշ—թե հըսկա.
Ահա այսպես [սուրըս....] կըտոր կտոր ես կանեմ,
Երկնում լինի վայր կըբերեմ, ծովի խորքում — կըհանեմ։

Սուրը պալատականների մեջ պտտեցնում է։ Պալատական կանայք սարսափահար ճչալով խմբովին.

— Օ՜, սարսափելի է, ով կկանգնի սրա դեմ։

Պալատականները [նախարարը] ծաղրածուն.

*Թե ո՞վ է նա—չգիտեմ,*
*Բայց կկանգնի սրա դեմ,*
*Թե սա կանգնի նրա դեմ...*

*Ապա խոսեց միջնակ տղին նույնպես գոռոզ—մեծ բերան,*
*— Հայրիկ, ասավ, ես կը բերեմ խաս Բլբուլը հաղարան—*
*Կուզես հիմի նըշան արա, գու որոշիր օր ու ժամ,*
*Ու թող լինի մորըս որդին, եթե հանկարծ ուշանամ.—*

. . . . . .
. . . . . .
. . . . . .

(Վերջում լրսվում է մեղմ նվագածություն և երգի ձայնը. ծաղկեպսակը շրջիին, բնարը ձեռքին, ոգիներով — աղջիկներով շրջապատված գալիս է Արեգը).

*Ծաղկեպսակ բլբուլներից,*
*Արշալուսի ժամերին,*
*Նա ժըպտալով՝ կանչում է ինձ*
*Դեպի աշխարքն իր Վերին։*

*Խոր ու խաղաղ անտառներից,*
*Լրությյան մեջ էն խորին,*
*Շըշընջալով կանչում է ինձ*
*Դեպի աշխարքն իր Վերին.*

*Կարկաչահոս մեր ջրերից,*
*Երբ թափվում եմ ափերին,*
*Կարկաչելով կանչում է ինձ*
*Դեպի աշխարքն իր Վերին։*

———

*— Ո՞վ է կանչում, զավակս.*
*— Անտեսը, հայր.*



Եվ պալատականներն իրար աչքով արին ու ծիծաղեցին Գրերի տակ...

. . . . . .
. . . . . .

*[Ո՞վ է նա.]*
*— Ի՞նչ է նա.*
*— Ճշմարիտ.*
*— Ճշմարի՞տ.*
*— Եվ արդար.*
*— Եվ արդա՞ր.*
*— Եվ գեղեցիկ.*
*— Ամեն բա՞ն...*
*— Ամեն բան...*

. . . . . .
. . . . . .

*Ո՞վ, որ գալիս ես նրստած ամպերին*
*Ո՞վ, որ փայլում ես մարդությամբ վերին...*

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

<5>

## ԵՐԴՍԻ ՎԻՇՏԸ

### I

*Երբ իրիկունն հացի նստան տանտերն ու հյուրն իր օտար,*
*Երգիչն էսպես խոսք բաց արավ, հարցմունք արավ [սիրաբար.]*
*— Պատմիր, լսենք, ով բարեկամ, շատ աշխարք ես ման եկել,*
*Ինչ ես տեսել, ինչ ես լսել, պատմիր լսենք թող մենք էլ։*
*— Շատ աշխարք եմ ես ման եկել, խոսեց՝ Արեգն ու ասաց,*
*Ու շատ զարմանք բան եմ տեսել, ոչ տեսնված, ոչ լսված,*
*Բայց ինչ էսօր աչքով տեսա ես քեզանից էս քաղքում,*
*Էդպես զարմանք բան չեմ տեսել դեռ բաղմափորձ իմ կյանքում։*

Էսօր շվար կանգնած էի մինարեի պատի տակ,
Էն ծովացած ամբոխի մեջ, պանդուխտ, անոք ու մենակ,
Երեսացիր դու գեղեցիկ, դեմքդ զվարթ ու պայծառ։
Ոգևորված, ուրախ-ուրախ վեր—մինարեն բարձրացար,
Ձենդ ջահել, զիլ ու հնչուն, լի ավյունով գերբնական,
Շատ շատերի ուշքը տարավ, [< . . . > եցին] ու ընկան։
Հափշտակված զմայլանքին կախարդական քո երգի
Ճախրում էին գլխիդ շուրջը թռչունները երկընքի,
Բայց իջնելիս լալ սկըսար, մաղերդ փետտել, քեզ կոծել.
Էդ տարորեն քու արարքից ես ապշած եմ մնացել։
—Հաց կեր, պանդուխտ իմ բարեկամ, խնդրեց երգիչն Արեգին,
Էդպես անզգույշ ձեռք մի տար դու անբուժելի իմ վերքին։

## II

«...Ջերմ ու պայծառ գարնան մի օր, հանդիսավոր մի, տոն օր,
Մինարեի տակ ծովացած ժողովուրդը բյուրավոր
Սպասում էր իմ աղոթքին։ Ոգևորված ես եկա,
Էնպես ուրախ, ինչպես էսօր, վեր, մինարեն բարձրացա։
Լե՛ն աշխարհքը ոտիս տակին, խոր երկինքը իմ վերևն,
Հոգիս լիքը երազներով—երգը հոսեց ինքն իրեն։
Ջրքնաղ հավքեր՝ թռած անհայտ աշխարհներից դեպի ցած՝
Ճախրում էին գլխիս վերև իմ երգերին զմայլած։
Ինչպես եղավ՝ էն հավքերից մինը ջոկվեց ու թռավ,
Ցարկեց ու ինձ հափշտակեց, թևին արավ ու տարավ...
Աչքս մին էլ բաց եմ անում անմահական մի դրախտում,
Բաց եմ անում—չեմ կըշտանում, փակում—ու չեմ հավատում։
Հիացած եմ տեսածներից, որ մընում եմ անհամբեր,
Մտածում եմ թե տակավին ինչեր պիտի տեսնեմ դեռ...
Ու դընում եմ, գընո՛ւմ առաջ, ասես թռչում օդի մեջ,
Թռչում թեթև, հեշտ ու անթև, անհոգ, ուրախ ու անվերջ։
Ահա ծաղկած բազմաբույրյան մշտադալար թփերից
Մի նազանի հուրի փերի ճեմ է առնում դեպի ինձ,
Սիրտը տրված էն եդեմի երջանկությանն ըղձալի,
Վարքը թողած ազատ հովին՝ երգ է ասում ու գալի.



(ԱՌԱՋԻՆ ՓԵՐԻՆ)

«Ես ու աստղի ցոլքը պայծառ
Խաղում էինք ջրափին,
Ես ու աստղի ցոլքը պայծառ
Քընած էինք մինչ արփին...»

Հանկարծ ընկան վրձի՞տ, ցոլուն իր աչքերը ինձ վրա,
Տեղրս կանգնած քար կըտրեցի, շունչս հատավ ու սառա։
— Ո՞վ ես, կանչեց, դու հոդածին, տ՞վ համարձակ դու հոգի,
Էս կողմերով անց չի կացել դեռ թռչունը երկընքի,
Ի՞նչպես մըտար էս դըրախտը դու մահացու մի թույլ մարդ,
Քո հայացքով շըփոթում ես մեր սըրտերը անարատ։
Դե ե՛կ, եթե մի մարդ ես դու մեր եդեմին արժանի,
Ե՛կ, քո լանջին, էս ծառի տակ պիտի նընջեմ ես հիմի.
Բայց վա՞յ՝ եթե հաղթվես տըկար հրապույրքից ու կրքից,
Պիտի զըրկվես անդառնալի էս երկնային վայելքից...
Ասավ, թեթև թիկնեց լանջիս, փակեց աչքերն աստղավառ,
Ու ըստինքը աստվածային խաղում էին վեր ու վար։
Արբած իր կույս թարմությունից ու իր գեղից գերբնական
Գըլուխս իջավ, անգիտակից համբուրեցի ես նըրան...
«Վեփտո՞ս...» կանչեց. ըսթափվեցի. չըքացել էր նա անհետ.
«Վեփտո՞ս, թշվառ...» զոդանչում էր ու մարում էր սրտիս հետ.
Էս ժամանակ գետի ափից մի ուրիշը երևաց,
Էնքան թեթև, էնքան քընքույշ, որ անմարմին ինձ թըվաց։
Գալիս էր նա ծիծաղելով, զըվարթ, աշխույժ ու ազատ,
Ու հընչում էր էն ծըմակում անուշ ծիծաղն իր արծաթ։

(ԵՐԿՐՈՐԴ ՓԵՐԻՆ)

«Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Ի՞նչ խենթ է նա...
Ա՞խ, ի՞նչ խենթ է էն փերին.
Լոզ էր տալիս վեր ու վար,
Ջրի տակի ամպերին
Կուզի հասնի անպատճառ։

Միծաղում են պարիկները
Ողջ նրստոտած փրրփուրին,
Միծաղում են ծաղիկները
Փունջ փունջ կիտված ափերին...»

Վերև նայից, ճառագեցին դեմքս աչքերն իր սև սև,
Սիրտքս դողաց, խոնարհեցի իմ աչքերը ես ներքև։
— Ո՞վ ես, ասավ, դու բախտավոր, ի՞նչ հրաշքով ներս մըտար,
Էստեղ բընավ ոտ չի դրել դեռ մահացու մի օտար։
Ով էլ լինիս, երբ եկել ես մեր աշխարհը երջանիկ,
Արի զըմբուխտ էս գալարում էսպես հանդչենք մենք հիմիկ,
Բայց տե՛ս, եթե ինձ համբուրես՝ կը կորցընես էնքան բան,
Որ ողբալու բավ չեն աչքերդ ու ալ կյանքդ բավական։
Ասավ ու հեշտ ընկղմանեց իմ հողեղեն ծընկներին
Համակ լույս-կյանք, համակ հրճվանք ու բուրավետ էն փերին։
Նայում էի, նայում՝ հարբում, մըթնում աչքերս ու մըթնում,
Թըվում էր թե նա սահելով շուրթերիս էր մոտենում...
Մին էլ կարծես երապի մեջ, տաք համբույրը ըղդացի,
Ու զըմնգաց շուրջս հանկարծ հընչուն ձենը կանացի.
— Ափսո՞ս, թշվա՛ռ, մի համբույրով դու կորցըրիր էնքան բա՞ն...
«Ափսո՞ս, թշվա՛ռ...» զըրնգում էր էն անտառը դյութական։
Կանգնած էի ապշած, մենակ, նախատելով ինքս ինձ,
Մին էլ հանկարծ ըսթափվում եմ ուրիշ քընքույշ մի ձենից։

(ԵՐՐՈՐԴ ՓԵՐԻՆ)

«Իմ քույրերը,
Շուշանները,
Շրթունքներով ձյունաթույր,
Ջով, բուրավետ
Զեփյուռի հետ
Ուղարկել են ինձ համբույր...»

Մի այլ աղջիկ, բուսած մենակ սաղարթագեղ ծառի տակ,
Որպես միներ էն եդեմի շուշաններից ըսպիտակ։



Բոլոր ուժքս հավաքելով լեզվիս կապը խըզեցի,
Ազաչելով, աղերսելով հետը էսպես խոսեցի.
— Գրթա՛, ջըքնաղ, ասա տեսնեմ, ո՞ւր եմ ընկել արդյոք ես,
Եվ ո՞վ եք դուք, որ տանջում եք անօրինակ ինձ էսպես։
Ես հոգնեցն—չեմ դիմանում ձեր հրմայքին գերբնական,
Գութ արեք, գո՛ւթ, ո՞վ անմահներ, մի՛ տաք ինձ նոր փորձությանն։
— Էնտեղ ես դու, ուր հոգնեցն ոտ չի կոխել դեռ, ասավ,
Ուր անհայտ են երկրավորի ջընջին կիրքը, վիշտն ու ցավ,
Ուր հոդածինն այցելում է լոկ կարճատև ցընորքում...
Բայց դու նրստիր, ապնիվ հոգի, որ ես հանդչեմ քո գըրկում,
Սակայն եթե ինձ համբուրես, էնքա՞ն հետո կը վերջաս,
Էլ չես գըտնել ինչ կորցընես՝ ամբողջ կյանքդ թնկուզ տաս...
Ու էս երրորդն էնքան սիրուն, կոխարդիչ էր ասավել,
Որ էն երկու փորձից հետո մոտա խոստումս ես պահել...
— Այժմ գընա, հեզ հոգնեցն, ու տառապեր կարոտից...
Կտնչից վերջավ, կըշտամբանքով ու հեռացավ իմ մոտից։
Ես շվարած միտք եմ անում էն վայրերում դյութական,
Թե կարճատև մի հաճույքի ի՞նչպես տըվի էնքան բան...
Միտք եմ անում ու գընում եմ, սրտնում եմ ամեն տեղ,
Ո՞ւր գնացին, ո՞ւր չըքացան ոդիները էն շըքեղ...
Էլ ոչ մի տեղ չեմ հանդիպում ես նրրանցից ոչ մեկին,
Անհոգ ցավից ու կարոտից տառապում է իմ հոդին։
Շուրջս արդեն մըշուշապատ, դատարկ ու լուռ ահավոր,
Հուսահատված ձեն եմ տալիս հառաչելով սըրտախոր,
Մին էլ հանկարծ ահեղ թընդաց—«շո՞ւտ, էստեղից սըրան տա՛ր...»
Ու մըթնեցին իմ աչքերը, կորավ՝ շուրջս ինչ որ կար,
Մին էլ տեսա կըրկին կանգնած մինարեի բարձունքին,
Դարձյալ կեղտոտ էս քաղաքում, շուրջս ամբոխն ահագին։
...Հուր կարոտով ամեն տարի միշտ նույն օրը էն օրեն
Ուրախ ուրախ, ինչպես էսօր, դիմում եմ ես մինարեն,
Երգում եմ լի պայծառ հուսով ու կարոտով գերաղանց,
Ու երգերս, ու մտքերս ճըվիրում եմ ողջ նրրանց,
Բայց, ա՜խ, չլկա, էլ չի դալիս հըրաշք հավքը էն ծանոթ,
Որ ինձ կըրկին առնի տանի էն դըրախտը, նրանց մոտ...

(Ճամփաբաժնում կանգնած է ծերը ղլուխն ամպերում).

— Բարո՛վ, պապի, որ կանգնած ես անհունորեն այդպես վեր,
[Ու ծերունին խուլ որոտաց տատանելով ողջ այեր.]

(Ծերը՝ ամպերից)

— Ես նա եմ, որին ամենքն են նայում, ինքը ոչ ոքի,
Ես նա եմ, որին ամենքն են հարցնում, ինքը ոչ ոքի.
Սկիզբն ու վերջն եմ ես.
Եղերքն ու մեջն եմ ես,
Անհունն եմ ես,
Անքունն եմ ես—
Անհուն, ահես — ամենն եմ ես...
Բարով եկար, ալնիվ կարիճ։
— Ո՞վ անպատում, անհաս դու մեծ։ Խարխափելով ու անգետ
Մենք հոսելով անց ենք կենում այս աշխարհից, որպես դետ,
Որ անեղյակ հեռուներին իակ ափերն է իմանում,
Իսկ դու անհաս քո բարձունքից ոչ տեսանում ես ու քննում։
Լսի՞ր, պապի, ցած խոնարհիր բարձր ղլուխդ ամպերից,
Բայց իմաստուն քո լեզուն, մի պատասխան ասա ինձ.
Ո՞րն է ճամփան, որ տանում է էն աշխարհը [կրջանիկ,]
Ուր Հաղարան ալնիվ հավքն երդ է ասում կենդանի։
Ու բուրավետ վարդեր թափում [իր] երդի հետ.
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց ալևորը իմաստուն
Ու երկընքի որոտաները դղրդրդացին անսահման.]

(Ծերը՝ ամպերից)

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, խիղախ տղա. այն ճամփեն ես դու փընտրում,
Նեղ, քարքարոտ էն շավիղը, որ թաքչում է ամպերում.
«Անդարձ» է այն ճամփի անունն, ով որ ընկավ էն ճամփան,
Կորած է նա հավիտյան, ետ դալ չըկա էլ նըրան.
Ճամփեն մին է, ցավը հաղար,— հազար տեսակ տառապանք
Բռնած են այն դժար ճամփեն ու մաշում են ամեն կյանք։



Սարեր կան էն ճամփեն կապած, թրռչունը չի անց կենում,
Խոր անդունդներ, որ նայելիս, մարդու աչք է սևանում.
Հուր անապատ, որ անցնելու ամրողջ կյանքդդ չի հերիք,
Ամեն քայլում դև ու հրեշ, ամեն կողմից փոթորիկ...

— Ի՞նչ են դևեր ու հրեշներ, երկյուղ չունեմ ես, պապի,
Եվ իմ ճամփեն ոչ փոթորիկ, ոչ տառապանք կրկապի.
Սով. նեղություն չեմ հասկանում, չեմ էլ հոգում էդ մասին,
Ո՞ւմ է պակսել մի կրտոր հաց էս աշխարքի երեսին։
Եվ ինձ այնպե՞ս հեշտ է թրվում «անդարձ» ճամփեն էն քարոտ,
Եվ այն աշխարքն այնպես հեշտին ու էն հավքը այնքան մե՞տ...
— Ո՞վ հավիտյան անձնապատան ու մոլորված դուք մարդիկ.
Հեշտ է թրվում փոփոխելին ու սիրածը միշտ մոտիկ...
Հեշտ է—սակայն ցընորքի մեջ, ու սրտին է մոտ թրվում,
Բայց չի կարող ոտքը հասնել, ուր որ սիրտն է թափառում։
Մեղք ես, կարիճ, ինչո՞ւ ես քո մահի եռև ման գալի.
Դարձիր, դընա քո աշխարհքը, քու հոր տունը շեն ու լի,
Ի՞նչդ է պակաս, որ գլուխդ փորձանքի ես դու տալի։
Ապրի խելոք շատերի պես, որ ապրում են գոհ, առատ,
Ու չեն հոգում, թե կորցրել է մարդն իր պատկերն անարատ...
Կամ թե կուզես, ահա դարձյալ երկու ճամփա լայնարձակ.
Տանում է մինն այն դրդյակը, ուր որ լուսից մինչև լուս
Քեֆ է անում սիրուն Թամարն հյուրերի հետ իր ջահել,
Մյուսը տանում է . . . . . ուր որ ոսկին, անգին քարեր,
. . . . . .
. . . . . .

Ալեզ.

Ո՛չ, պապի, և այլն <. . . . . .>

Ծերը.—

Անձնուրաց հոգի, որ քաջ ու անվախ
Ընտրում ես ընկնում այս «անդարձ» ճամփան,

Որ հեծար սրբոտով քո կյանքը մատաղ
Ոչխարել ես զաղան մարդի փրկության,

Ներիս օրհնանքն էլ թող լինի քեզ հետ,
Հարեհաս լինի նեղության օրում,
Թարավ դու հասնես վայրն երանավետ,
Ուր որ Հազարան բյուլբյուլն է տիրում,
Լեռներ, անդունդներ հարթվեն առաջիդ,
Գևեր, հրբեշներ զառնան անվրնաս,
. . . . . մեջը լինի քաջիդ
Կասկած ու երկյուղ երբեք չիմանաս։

Օրհնում է ծերունին, խրատում ու ճանապարհ դնում դեպի կախարդական աշխարհը։

<7>

## ԱՐԵԳԸ ՍԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գընա՞ց, գընաց Արեգն արի, գընաց, ընկավ մի աշխարհ,
Երկինքը սև, գետինքը սև, սև բովանդակ ու խավար։
Առաջ գընաց. դեմն ահագին մի սև ամրոց կանգնեց լուռ.
Էն ամրոցից մի ձեն եկավ, մի ձեն տրխուր ու տրխուր։
Վերև նայեց, տեսավ շարմաղ մի աղջիկ է լուսեգեն,
Հետը շալիս Հուսակրատը, հետը կանչում է իրեն։

ԱՂՋԻԿԸ

Ափսո՛ս, կորի՛ճ, ա՛խ ո՞ւր եկար
Էս աշխարհը սև ու մութ.
Ո՞ր անօրեն մարդն էր արդյոք,
Տրվեց էդպես քեզ խորհուրդ։
Փախի՛ր, շուտով, անահ տղա,
Թե չէ՝ էդտեղ որ մընաս,
Սև, մարդակեր Դեվը կը գա
Այժմ կանի քեզ մաս մաս։



ԱՐԵԳԸ

Բայց ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,
Ի՞նչ ես էստեղ դու շինում,
Եվ ինչո՞ւ ես էդպես աղի
Արցունք թափում, լաց լինում։
Ի՞նչ է արել էդքան սիրուն,
Էդքան քնքույշ մի էակ,
Որ փակել են մութն ու անդունդ
Էդ ամրոցում մեն-մենակ։

ԱՂՋԻԿԸ

Իմ հանցանքը էս է, ավա՞ղ,
Որ սիրուն եմ ես էսքան.
Սրրա համար Սև Դևն եկավ
Մեր աշխարհը ոնման,
Եկավ բրոնի հոփշտակեց
Հայրենական իմ վայրից,
Թերավ էս սև բանտում փակեց,
Զըրկեց պայծառ օրերից։
Սրրա թշվառ գերին եմ ես.
Էստեղ, անդունդ իմ բանտում
Լուռ ու մենակ փակված էսպես
Մաշվում եմ ես անխընդում։
Բայց, ա՛խ, նրրա ժամն է ահա,
Հիմի կը գա նա նորից...
Փախի՛ր, փախի՛ր, անահ տղա,
Էս սև ու մութ աշխարհից։

ԱՐԵԳԸ

Ես չեմ վախում, քույրիկ անգին,
Ես չը գիտեմ ահ ու մահ,
Ես կը մընամ բանտիդ տակին,
Ինչ սև հրբեշ կուզի գա։

Ու կը մեռնեմ էստեղ ես էլ,
Որ էլ չապրեմ էս օրից,
Կամ կը փընրկեմ ինձ հետ քեզ էլ
Էս սև ու մութ աշխարհից։
Միայն դու ասա, թե որ ճամփով,
Որ կողմից է նա գալու,
Ու ո՞րտեղ եմ իմ նետերով
Նրա կյանքին վերջ տալու։

Ա Ղ Ջ Ի Կ Ը

Ահա էն սև սարի տակից
Նա կերևա ահավոր.
Նրա ձենից, բերնի հուրքից
Սասանում են սար ու ձոր։
Յոթը ագահ գըլուխ ունի,
Միջի գըլխին պիտ զարկես,
Ու չես կրկնիլ զարկըդ նորից,
Ինքն էլ խնդրի թեկուզ քեզ։
Էսի՞ր, ահա գալիս է նա
Անպարտելի ու խավար...
Գընա՛, կըտրիճ, իսկ ես էստեղ
Աղոթում եմ քեզ համար...

Սև աշխարհքը էլ ավելի մութը կոխեց ակնակիր.
Գևի ձենից զարհուրելի դողաց երկինք ու երկիր։
Եկավ Սև Դևն, ինչպես սև ամպ, հուր ու կըրակ շաղ տալով,
Նկավ անհուն կատաղությամբ, ինչպես պըրծած մի սև ծով։
Դեռ շատ հեռվից նա նըշմարեց իր թըշնամուն լուսավոր,
Ու հեռավոր մութի միջից խուլ որոտաց ամպագոռ։

Ս Ե Վ  Դ Ե Վ Ը

Ո՞վ ես խիզախ դու հողածին,
Ի՞նչպես մըտար իմ հողը դու,
Ո՞նց չի հասել քո ականջին
Գոնե անունն իմ ահարկու։



Միթե աչքով դու չը տեսա՞ր
Գյուղ ու քաղաք ողջ ամայի.
Մարդ եմ կերել հազար հազար,
Քեզնից էլ քաջ ու վիթխարի։
Իսկ դու ո՞վ ես, չընչին մարդուկ,
Որ կռիվ ես գալիս իմ դեմ.
Ասա տեսնեմ, որ իմանամ՝
Ինչ հիմարի պիտի ուտեմ։
Ցույց տուր տեսնեմ՝ ի՞նչ ունիս դու,
Տե՞ս, ես ունեմ յոթը գըլուխ...

Գոռաց հըրեշն էն ահարկու,
Արձակելով կըրակ ու ծուխ։

Ա Ր Ե Գ Ը

Գալիս եմ ես, ով անճոռնի,
Որ մեն մենակ կըռվեմ քեզ հետ,
Կըրծքումս ունիմ մի սիրտ արի,
Ձեռքիս ունիմ յոթը սուր նետ...
Ասավ, ճայթեց գիլ աղեղը, ոռնաց վիշապն ահագին,
Թավալվելով տեղն ու տեղը, անիծելով Արեգին։
— Մին էլ զարկի՛ր... մին էլ... մին էլ...
Մրընչում էր հոգեվարք։
— Ես իմ մորից մին եմ ծընվել,
Մի խոսք ունեմ ու մի զարկ։
Պատասխանեց Արեգը քաջ, փըշեց վիշապն իր հոգին.
Ու արևի լույսը ցոլաց Սև աշխարհի եզերքին։

<8>

— Զըքնաղ անունով քո սեգ աղջըկա
Կանչում եմ ահեղ ծովերի արքա,
Լըսի՛ր անհատակ չըրեերի խորքից,
Մըշտածուփ, անսասան քո մըթին հարկից.
Տո՛ւր ինձ Քամի ձին, թըռչուն Քամի ձին,

Որ ես՝ մահացու տրկար հողածին՝
Հասնեմ երջանիկ աշխարհքն անանցման,
Ուր վարդ է թափում Բլբուլն Հազարան։
Մ՛ռ, նշանն ահա քո սեգ աղջկա,
Լրսիր ինձ ահեղ ծովերի արքա,
Տուր ինձ Քամի ձին՝ հասնեմ փափագիս,
Բլբուլը բերիմ, հասցրնեմ այդիս,
Փուշը վարդ փոխեմ թովչական երգով,
Ու դաղանը մարդ—բանական հոգով։

Էսպես կանչեց՝ ու փոթորիկն ելավ ծովից կապուտակ,
Մրթինեց երկինք, մրթնեց երկիր, իրար անցավ ողջ աշխարհ
Ու ահավոր թոհ ու բոհից, անդունդներից էն մրթին
Հուր հրրեղեն իր թևերով ցոլաց կրակ Քամի ձին.
Ու մինչ վայրի սլանում էր դեպի հեռուն աշխարհի,
[Հասավ] բռնեց հրդոր ձեռքով Արեգն արագ ու արի,
Ջրպեց խկուլն ոսկի սանձը, ոսկի սանձը գոբավոր,
Ջրսպեց անդուսպ էն [հզորին բազիով հատատատ ու . . . . ]
Դեպի վերև ձգեց ձին՝ տա արևին ու վառ,
Դեպի ներքև ուղեց [գարկի] գետինք՝ ջախջախի—
Բայց . . . . հաղթահարված ու հընազանդ հեծվորին,
Լեզու առավ, մարդու նման էսպես դարձավ հրդորին.
— Ի՞նչ ես ուզում, քաջ հողածին, ո՞ւր ես ուզում՝ քեզ տանեմ
. . . . . .
. . . . . .

<9>

Շատ գնաց նա, թե քիչ գնաց—վերևն աստված միայն գիտի—
Ի՞նչ մարդկային միտք ու հանճար նորա ճամփեն կըչափի,
Անցավ ծովեր, սև անդունդներ, տնապատներ, առապար,
Եկավ հասավ դալար մի դաշտ, այստեղ առավ նա դադար։
Դաղար առավ [լեզու ելավ] ու բաց արավ իր լեզուն,
Ու խրատեց Արեգին <. . .>այն խոսուն[ն] իմաստուն.



— Ահա սահմանն անմատչելի կախարդական աշխարքի,
Որ ապրում է [սեգ] տիրուհին զարմանալի այն հավքի.
Աննըման է նրա անունն—թնքն անանս, աննըման,
Կախարդել է այս աշխարքը նըրա թովչանքն ու հրման.
. . . . . .
. . . . . .
Անկարող է մահկանացուն այստեղ մըտնել
[Եթե միայն չի պարգևած նրան շնորհք վերևից
Եվ անսասան կամք ու եռանդ . . . . . .
Ամեն տեսակ ցավ տառապանք մեր ու նորա սահմանում
Կան և նորան . . . . . պահպանում . . . . ]

Այժըմ կերթաս—քո առաջը կըզա մի գետ [ահագին]
[Նորա] ջուրը աղի լեղի թույն է հոտում [մահացու],
[Այդպես կախարդական այս աշխարհքի տիրուհին
Անըմպելի թույն է խառնել նորա վհիտ ջրերին . . . ]
Ամեն մի մարդ չի կարող խըմել <...> այն ջրից,
Բայց եթե դու խմեցիր կանցնես <.....>
Գետը կանցնես կընկնես մի դաշտ անծայրածիր, ահավոր,
[Կախարդական երկրի տերը] կախարդական [իր խոսքով]
Լցրել է այն անհուն դաշտը անկոխելի տատասկով,
Անկարող է ոտք կոխել ասպարեզը այն փրշոտ,
Եվ չի կարող մարդ հանդուրժել [շատ են] ժանատհոտ.
Բայց դու եթե այդ էլ անցնես—[մի քիչ կերթաս] և ահա
[Այն աշխարքի] վեհ տիրուհու ապարանքը կերևա.

Այնժամ կը գան խեղկատակներ ու կրկտրեն քո ճամփան
Կուզեն հաղթեն, ուշքդ խլեն, [կուզեն] լինեն քեզ խափան
Այնպես խաղեր կըհորինեն, այնպես <ու . . . > ցույց կըտան
Հարյուր տարվան մեռելները գերեզմանում կըխնդան։

Բայց պետք է դու արհամարհես, սիրտդ [ամուր սեացնես],
Լուրջ ու մռայլ նրանց թողնես—այն ժամանակ դու կանցնես։
Ապա թե քեզ ծաղրը կանեն, կըհայհոյեն, կըթքեն,
Ոչ պատասխան, ոչ հայհոյանք պիտի չանցնի քո մըտքեն,

*Սիրաղ հանգիստ, հոգիդ խաղաղ նրանց միջից թե անցնես—*
*[—Ոչչ կը լռեն—և դու անփորձ ապարանքին կը հասնես].*
*Թե չէ, եթե ուշք դարձնես ու ընկնես նրանց հետ,*
*Քեզ կը հաղթեն—ուշքդ կըտիրեն < . . . . . >*
*Կը նկատես ապարանքը < . . . . . >*

*Երբ այսպիսով կը մոտենաս ապարանքի դրռներին,*
*Խոյն ու առյուծ կանգնած են [միշտ] նրա երկու կողմերին,*
*Խոյի առաջ միս է դրված, իսկ առյուծին կանաչ խոտ,*
*Եվ սովատանջ նրանք կանգնած հսկում և միշտ իրար մոտ.*
*Դու կըփոխես խոտը խոյին—միսը կըտաս առյուծին,*
*Ճամփա կըտան—ու կը հասնես < . . . . . >*

*[ . . . . . Ներս կըմտնես ապարանք...*
*Ներս կըմտնես— . . . . . երգի դայլայլ, վարդի բույր,*
*Իրար ետևից կանցնես յոթը . . . . . վարագույր,*
*Այնտեղ [ոսկի]վանդակում երգում է հավքն այն չքնաղ*
*Ու երգի հետ մշտաղալար վարդ է թափում ու թափում*
*[Այն] վարդերի [անուշ] բույրով, երգի ձայնով*
*Իր լուսեղեն նուրբ մահիճում քնած է վեհ տիրուհին—]*
*[արթնցած]*
*Այստեղ՝ հիշիր, զգույշ կացիր—մոտ չըգնաս դու նրան.*
*< . . . . . > չի դիմանալ և ոչ մի սիրտ [փորձության]*
*Ու կը հաղթվես նրա գեղեցկության թովչանքից*
*Ու կը զբրկվես այն բյուրբյուրից, [գուցե նաև] քո կյանքից։*

# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1889

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

### ԻՊՂ

Ինչո՞ւ չեմ թռչուն, վայրենի մի հավ,
Որ հիմա գլխիս վերևից թռավ.
Ինչո՞ւ չեմ կարող երկնքում հախրել
Եվ ալատուիչուն միմիայն սիրել։
Ես գեղի Տարոն կըսլանայի,
Ուր ծաղկում են դաշտերն իմ պապերի,
Դատարկ ամրոցում միգապատ լերանց
Հանդչում են մոռացված աճյունքը նրանց։
Այնտեղ հին պատից մնում են կախած
Նրանց լայն վահանն ու սուրը ժանգոտած.
Կրթուչեի սրի, վահանի վրայով,
Եվ կըսրբեի փոշին թևերով։
Եվ պարթևական լռած բնարի
Ժանգոտ լարերին ես կըզարկեի,
Որ նրա ձայնը դարձյալ հոգենվագ
Հնչեր մշտալուռ կամարների տակ։
Ճակատագրի խիստ օրենքների դեմ
Իզուր է խնդիրս,— ես այդ լավ գիտեմ.
Իմ և բլուրների միջև հայրական
Սարեր ու ձորեր, կապույտ ծովեր կան։
Վերջին շառավիղը դյուցազունների
Ահա տարագիր, ցոփ կյանքի դերի.
Այստեղ ծնվեցա, բայց ուրիշ հոգով...
Ա՜խ, ինչո՞ւ չեմ ես թռչուն վայրենի։

# 1890

**Ա. ՊՈՒՇԿԻՆ**

Եթե իրավ է, որ գիշերները,
Երբ որ հանգչում են մարդիկ ներքևում,
Երկնքից իջնում լուսնի շողերը,
Գերեզմանների վրա գողդողում.

Եթե իրավ է, որ այն ժամերին
Դատարկվում են լուռ գերեզմանները,
Օ՜, ես կըկանչեմ իմ սիրելիին,
Կըկանչեմ նրա նրսեմ ըստվերը։

—Արի՜, հայտնվի՜ր, սիրելի՜ պատկեր,
Ինչպես և էիր անջատման ժամին,
Սառն ու դալկադեմ, ինչպես ձմռան օր,
Խանգարած, խեղած տանջանքով վերջին։

— Ա՜խ, արի՜, ինչպես աստղիկ հեռավոր,
Ինչպես թույլ հընչյուն թեթև զեփյուռք,
Կամ թեկուզ ինչպես տխել ահավոր,
Ինձ համար մին է, արի՜, միայն արի՜...

---



# 1892

## ԴԵՑԻՄ ԼԱԲԵՐԻՈՍ

Եվ խայտաճամուկ միմոսի շորով՝ Կեսարի կանչին
Լաբերիոսն ահա կանգնեց կըրկեսում, Հռոմի առաջին։
Թընդաց Հըռոմը, և աթոռներից վեր կացան հանկարծ
Ազնըվականներն ու ժողովուրդը ահից սարսափած.
Ու դըղըրդացին արձակ կըրկեսում շըփոթ ու շըշունչ,
Հազիվ լըսելի խառնակ աղաղակ ու դըժգոհ տըրտունջ.
«Լաբերիոսն այստե՞ղ... և ինչպես միմո՞ս... Այստեղ օրենքով
Գերիներն իրենց կուռ շըղթաների շըրընչյուններով,
Սըրի շաչյունով անմահ Հըռոմի հըրճվանքի համար
Ճըգնում են ըմբշի և կամ միմոսի պըսակ ստանալ...
Լաբերիոսն այստե՞ղ... բայց չի մոռացել Հըռոմը նըրան.
Հին քաղաքացի, ծե՜ր, հըռչակավոր պոետ անընման,
Եվ արդ, կըրկեսում ամբոխի առջև այսպես նա կանգնած,
Լուռ ու դըլխակոր գետնին է նայում ամոթից շիկնա՜ծ...»
Եվ տըրտունջների ձայներն անորոշ նըրան են հասնում.
Բայց իր աչքերը Հըռոմի վըրա նա չի կամենում
Բարձրացընել այժմ՝ նըրա բացահայտ վըճռի ժամանակ.
Եվ անարգանքին ինքնաբավական հայացքով մենակ
Կեսարն է նայում։ Նըշան տըվավ նա հրամայող ձեռքով։
Լըռեց վերըստին հրպարտ Հըռոմը։ Գետնակոր դըլխով,
Ինչպես տոթթող ծանրը փորձանքի ահավոր ժամին,
Կանգնած է հուզված հանդիսի առջև երգիչ ծերունին։
Բայց դեմքը ահա առաջվա նըման փայլեցավ վառ-վառ,
Մըրայլ ճակատը դարձավ վերըստին հանգիստ ու պայծառ,
Խոհուն աչքերը դըժգոհ ժողովին նայեցին կըրկին,
Ու նորից երգի, բանաստեղծությանն համարձակ հոգին

Հասավ պոետին, սիրա արվավ նրբան։ Նա գշվարթացավ,
Պաղ-պաղ սարսուռը սրբատիցը մինչև մատները անցավ...
Այլակերպված է նա բոլորովին։ Մի ակրնթարթում
Նա տգեղվեց։ Վառված աչքերը կրակ են ցայտում։
Ընկճող հայացքով իր շուրջն է նայում։ Տարածեց ահա
Անպուսակ խրոտվքից դողացող աջը քընարի վրա...
Ժողովը լուռ է։ Բոլոր աչքերը խոնարհած են ցած։
Աղնիվականները մրքին դիշերից մրսայլ են նստած,
Եվ տապանները նրստած են խրբոխտ գեմքով կընճռալի.
Ուրախությունից փայլում է գեմքը ահեղ սիրողի։
Նոր նրշան արվավ։ Եվ ահա երկչոտ ու անհամարձակ
Բարձրացավ ձայնը... ծերի դողդոջուն, չոր մատների տակ
Գոլված քընարի տակի լարերը հընչեցին հանկարծ.
Խորին լռության ժամին առաջին երգը որոտաց։
Եվ սթափվեցավ Հրոմը նորից. մարդիկ շարժվեցին,
Եվ աշխատում են պարզորոշ լրել զայրացած երգչին։
Իսկ ալեորը՝ անխիղճ ոտատրավված հին թագաբացին,
Տակավին հրպարտ, արհամարհանքով նայում է Հռոմին։
Նա երգում է անրավ փառքը, մեծությունը Կեսարի,
Բարձրը խելքն ու սերությունը, իշխանությունը լարի։
Երգում է փայլը նրա հաղթության և մաղթում է կյանք,
Եվ ուզարկում է հրկոր Կեսարին հարգ ու մեծարանք։
Փառաբանում է նա ճոխությունը ու փառքը Հռոմի,
Եվ ազաչում է, որ բաժին անեն... խինդը միմոսի...
Թախանձում է նա, որ ողջ մրատածեն, ինչպես որ ինքը,
Կեսարի շըրթան վրա ճանաչեն իրենց օրենքը,
Որ հին օրերի ազատ երգերը ընդմիշտ լռեին,
Ու միշտ Կեսարի թըշնամու ջանքերն իզուր ցրվեին.
Հայրերի գոռող Հրոմը գըլուխ խոնարհի նրրան,
Հրոմում մարդիկ մրատածեն այնպե՞ս... միմոսի նըման...»։
Հանկարծ վիրավոր պոետը ցընցեց գրլուխն ալեզարդ,
Հընչող լարերին կատաղի ձեռքով զարկեց հուսահատ,
Քնարը ձրգեց ու գոռաց ցասկոտ ձայնով ահարկու.
— Բարձրացի՛ր, Հրո՛մ, իրավունքներդ կարցընում ես դու...



**Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ**

* * *

Ես չեմ ուզում մարդ իմանա
Իմ անցքերը խորհրդավոր՝
Սերս ու վիշտս, որոնց վերա
Խիղճս և ասոված են դատավոր։

Նրանց կրոտա սիրտս հաշիվ
Եվ նրանցից կըհայցն դուվ,
Եվ թող ինձ նա միայն պատժի,
Ով ցավերիս տվեց անունգ։

Նախատինքը անմիտների
Չի խոովիլ բարձրը հոգին,—
Որբան ծովը դոռա, փրփրի,
Ժայռը կանգնած է վերատին։

Նրա ճակատը, բարձրացած,
Ամպերումն է մշտամռայլ,
Եվ մրրկից, որտեղից գալ
Միտքը ոչ ում չի հավատալ։

**Ա. ՊՈՒՇԿԻՆ**

## ՌՈՄԱՆՍ

Մի աշնանային մռայլ իրիկուն
Մի աղջիկ գնում էր անմարդ տեղերով,
Ցուր անբախտ սիրո ծնունդը թաքուն
Բռնած դողդոջուն, քնքուշ ձեռքերով։
Բոլորը լուռ էր. հոգնած աշխարքը
Հանգստանում էր գիշերվա մթնում,

Այն ինչ ուշադիր աղջիկն յուր աչքը
Երկչոտ հայացքով շորս կողմն էր ածում։

Եվ, հառաչելով անմխիթարապես,
Նա նայեց անմեղ այն սրտաբածիս.
«Քնած ես, մանուկ, դու իմ տառապանք...
Եվ անտեղյակ ես իմ սրտի վրշտին...
Աչքդ բաց կանես բարձրականչ յալով,
Սակայն իմ կրծքին էլ չես կպչիլ դու.
Վաղ-առավոտյան տարաբախտ քո մոր
Ջերմ համբույրներին չես հանդիպելու—

Ճչալով իպուր կըկանչես նրան.
Ավա՜ղ, ամոթ ինձ,— ես եմ մեղավոր։
Դու կըմոռանաս մորըդ հավիտյան,
Բայց պիտի հիշեմ ես քեզ ամեն օր։
Ուրիշ ծնողներ կըմնամեն քեզ,
Եվ կասեն՝ դու օտար ես մեզ համար.
Իմ ծնողները ո՞ւր են, կըհարցնես,
Սակայն չես գտնիլ ոչ հայր և ոչ մայր։

Թշվա՜ռ երեխա, մոքով տըխրագին
Կըտանջվես օտար մանուկների մեջ,
Կընայես նրանց մոր փաղաքշանքին
Մոայլուն հոգով մինչև կյանքիդ վերջ.
Ամեն ժամանակ բախտդ կանիծես,
Ամեն տեղ ատված, օտար ու մենակ,
Եվ միշտ նախատինք ու ծաղր կլսես...
Օ՜, ների՛ր, ներիր ինձ այն ժամանակ։

Դեռ քնած ես դու... Թող քեզ, խեղճ մանուկ,
Այս վերջին անգամ իմ կրծքին սեղմեմ,
Օրենքն անիրավ, խիստ և անողոք
Մի գատավճիռ ունի մեր ընդդեմ։
Մինչև քո անմեղ ուրախությունը



Տարիները չեն քշել տակավին,
Քնի՛ր, սիրելի, սև թախիծները
Խորթ են մանկության խաղաղ օրերին»։

Լուսինն անտառի ետևից հանկարծ
Երևաց, մտիկ մի խրճիթ տեսավ,
Դողալով, գունատ և սաստիկ լքած
Նրա դեմքը ահա մոտեցավ,
Զգույշ կորացավ ու կամաց դրեց
Յուր երեխային օտարի շեմքում,
Իսկույն սարսափով երեսը դարձրեց
Եվ անհայտացավ գիշերվա մթնում։

---

# 1894

Ն. ՆԵԿՐԱՍՈՎ

## ՄԱՅՐԸ

Խելով կովի արհավիրքների,
Ամեն մի ընկած նոր զոհի մասին,
Ես չեմ ափսոսում կնոջն, ընկերին,
Եվ ոչ էլ նույնիսկ իրան հերոսին...
Կըմխիթարվի, ո՜հ, կինը մի օր,
Ընկերն ընկերին կանի մոահան.
Բայց մի հոգի կա մի տեղ սգավոր—
Նա հիշելու է մինչև գերեզման...
Այս մեր կեղծավոր, ստոր աշխարքում,
Ինչքան գարշելի գործերի շարքում
Ես անկեղծ և սուրբ մի բան տեսա միայն—
Թշվառ մայրերի արտասուքն է այն։
Նրանք չեն մոռանալ իրենց զավակին,
Որ խորտակվել է արյունոտ արտում,
Որպես սգավոր ուռենին կրկին
Չի բարձրացնելու ճյուղերը տրտում։

Ս. ՆԱԴՍՈՆ

* * *

Մեռավ իմ մուսան... սակավ ժամանակ
Նա լուսավորեց օրերըս մենակ.
Ծաղկունքըս ընկան, հուրերըս հանգան,
Անթափա՜նց գիշեր, ինչպես գերեզման։



Ցավից, տանջանքից հոգնած սըրտիս մեջ
Իզուր եմ զըվարթ ձայներ ես փընտրում.
Ճըմլած է, ոտքած իմ պըսակը պերճ
Կըռվում եմ աներդ ու աներգ տըրտմում։
Բայց իմ սենյակում— կար մի ժամանակ—
Որքա՜ն հըրաշքներ էին կատարվում.
Ուզեի թե չէ՝ գըմրեթն երկընքի
Բացվում էր գըլխիս լույսերի ծովում,
Ջըգվում էր հեռու լըճակն արծաթի,
Փայլում էր շըքեղ պալատ սյունաղարդ,
Ու վեր բարձրանում ծոցում կապույտի
Սուր ժանիքներով լեռներ ձյունապատ...
Այժըմ մենակ եմ։ Դատարկ ու մութը
Տըխուր անկյունըս աչքիս է նայում.
Ըզբոսա գիշերը՝ իմ լուսամոտը,
Ինչպես սև թըռչուն, երկյուղով բախում։
Պերճ պալատներըս ցընդեցին օդում,
Վեհապանծ լեռներն աճյուն կըտրեցին,
Վիշտ ու վերքեր են սիրտըս կեղեքում,
Ու թույլ արցունքներ աչքերիս միջին...
Մեռավ իմ մուսան... սակավ ժամանակ
Նա լուսավորեց օրերըս մենակ.
Ծաղկունքըս ընկան, հուրերըս հանգան,
Խավարշտի՜ն գիշեր, ինչպես գերեզման...

Հ. ՀԱՑԵՆԵ

## ԹԱՓԱՌԻՐ

Երբ որ կինը քեզ կըթողնի,
Շուտով մյուսին դու սիրիր...
Բայց ավելի լավ կըլինի,
Մախաղն ուսիդ թափառիր։

Կրհանդիպես կապույտ լճի,
Վերան ծառեր են թեքվել....
Կարող ես քո հոգուդ միջի
Վիշտը այնտեղ դու թափել։
Կրբարձրանաս սեպ-սեպ լեռներ
Հառաչելով ծերի պես,
Բայց երբ հասնես գագաթն ի վեր,
Արծրվի ձայն կլսես։
Դու էլ իսկույն, արծիվ կտրած,
Կրզդաս՝ հզոր ես դարձել,
Որ ազատ ես, և այնտեղ՝ ցած։
Շատ քիչ բան ես կտրցրել։

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

## ՀՐԵՇՏԱԿ

Կես դիշերային լռին երկրնքում
Թռչում էր հրեշտակն և խաղաղ երգում,
Եվ լուսինն, աստղերն, ամպեր խմբովին
Ունկընդիր էին նորա սուրբ երգին։
Նա արդարների վայելքն էր երգում
Ծառերի տակին՝ դրրախտի այգում.
Երգում էր նա մեծ աստուծո վերա,
Եվ սրբության էր գովեստը նորա։
Նա գրկում բռնած մի մատաղ հոգի
Թերում էր երկիրն վշտի, արցունքի,
Եվ մատաղ հոգում հնչյունքն երկնային
Թեև անբարբառ, կենդանի մնացին։
Եվ անպատմելի մի տենչանք հոգում,
Նա շատ տատապեց, տանջվեց աշխարքում,
Եվ չրկարացին երգին երկնալուր
Փոխարինել երկրի երդերը տխուր։



1899

Ա. ՊՈՒՇԿԻՆ

## ՕԼԵԳԻ ԵՐԳԸ

Ելնում է ահա հզոր Օլեգը
Խենթ խազարներից վրեժ առնելու,
Նրրանց համարձակ հարձակման համար
Գյուղերը սրրի-հրրի մատնելու։
Եվ իր համհարդով, հագած կուռ զրահ,
Գրնում է նա սեղ նրժույգի վրրա։

Մրթին անտառից նրա հանդիման
Գալիս է ահա վրհուկ ծերունին,
Մութ գալիքների մեկնիչն ու հրման,
Կյանքում հրնազանդ միայն Պերունին,
Աղոթք ու հմայքով ողջ դար անցկացրած։
Եվ Օլեգ ծերին ընդառաջ գրնաց։

— Ասա՛ ինձ, գուշա՛կ, ծերդ անմահների։
Կյանքիս մեջ ինձ 'հետ ի՞նչ է լինելու,
Եվ, ի խրնդություն շար ոսոխների,
Շուտո՞վ եմ արդյոք շիրիմ իջնելու։
Բաց մեկնիր բոլորն, ինձնից չրքաշվես,
Վարձդ՝ քու սիրած ձին կրտամ ես քեզ։

— Չեն վախում դեռերն երկրի մեծերից,
Եվ պետք չի նրրանց պարգևն իշխանի,
Նրրանց իմաստուն լեզուն՝ վերևից
Աղդված՝ խոսում է կամքը երկրնքի։—

Անհայտ են գալոց տարիքն ու մթին,
Բայց կարդում եմ գիրդ ես քու ճակատին՝

Դե միտքդ պահիր իմ խոսքն այսօրից։
Փառքն է կյանքի մեջ խընդում հերոսին.
Հաղթության փառքով հրուշակված ես դու,
Վահանգ՝ Բյուզանդիս բարձր դարրասին։
Հընապանդ են քեզ և՛ ցամաք, և՛ ծով,
Նայում է ոսոխդ բախտիդ նախանձով։

Ե՛վ կապույտ ծովի հեղհեղուկ ալիք,
Ահեղ փոթորկի ժամին կատաղի,
Ե՛վ նետ, և՛ պարսեր, և՛ նենգող դաշույն,
Խընայում են միշտ կյանքը հաղթողի։
Վերք չես առնիլ դու քո կուռ զրահում,՝
Հրզորին անտես ոգի է պահում։

Ոչ մի վրտանգից չի վախենում քո ձին,
Տիրոջ կամքը միշտ հասկանում է դա.
Մերթ կանգնում է հեղ՝ նետերի տակին,
Մերթ թրոչում ասպմի գաշտերի վրա.
Ե՛վ ցուրտ, և՛ կրռիվ ոչինչ են դրրան,
Բայց... դա կրլինի պատճառ քո մահվան։

Օլեգը խնդաց. և սակայն մրթնեց,
Մրռայլեց հանկարծ շարագույժ մրտքից.
Լուռ ու մրտախոհ՝ թամրիցը բրռնեց,
Ներքև է իջնում սիրած նրժույգից
Ու վերջին անգամ իր հին ընկերին
Փայփայում, շոյում, փարում է վրդին։

— Դե՛հ, մրնաս բարյավ, վաղեմի ընկեր.
Ժամանակն եկավ մեր բաժանվելու.
Հանգիստ կաց հիմա, էլ ոարս բրնավ
Քու ասպանդակի մեջ չեմ դրնելու։



Դե՛հ, գրնա՛, բայց միշտ հիշիր Օլեգին։
Է՜յ, մանկլավիկնե՛ր, հեռու տարեք ձին։

— Ծածկեցե՛ք սրբան թավարժի գորգով,
Սանձիցը բրռնած մարգերրս տարեք,
Լողացրե՛ք, պահեք ընտրած հատիկով,
Ապրյուրի վրճիտ ջրրով ջրրեցեք։
Եվ մանկլավիկներն իսկույն ձին տարան,
Մի ուրիշ նոր ձի մոտ բերին ներրան։

Ցրնծում է խմրով անմահ Օլեգը
Ջրվարթ ձայներով լիք բաժակների,
Ճերմակ է նրրանց զրլխի ալիքը,
Ինչպես վաղորդյան ձյունը լեռների...
Հիշում են նրրանք օրերն անցկացրած
Եվ կրռիվները միասին վարած։

— Բայց իմ ընկերը, գոչեց Օլեգը.
Ո՞ւր է, ինձ ասեք, սիգապանծ իմ ձին.
Առո՞ղջ է արդյոք, այնպես սրընթաց,
Այնպես կրրակոտ, աշխույժ տակավին...
Եվ լրսում է, որ սեպ բրլրի վրրա
Մահու սև քրնով վաղ է քնել նա։

Խոնարհեց գրլուխն Օլեգը հրզոր,
Եվ միտք է անում. Ի՞նչ եղավ հրման.
Սրտախոս կախա՛րդ, անխե՛լք ալեոր,
Թե չէի լսել ես քու սրտության,
Կարեի մինչ օրս իմ ձին ես հեծնել։
Եվ ձիու ոսկերքն ուզում է տեսնել։

Գրնում է Օլեգն ահա պալատից,
Ներրա հետ Իգորն և հյուրերը հին.
Տեսնում են ձիու ոսկերքը թափված
Բրլուրի վրրա, Դրնեպրի ափին։

Փոշին ծածկում է, անձրևն ողողում,
Ու սեպը վերևն քամին օրորում։

Ոտն զգույշ դրրավ իշխանը գանգին
Ու կանչեց. քնի՛ր, միայնակ ընկեր,
Քեզնից շատ ապրեց քու տերն ալևոր.
Քարմ շիրմիս վերա դու չես մահաբեր
Տապարի տակին սեպը ներկելու,
Քու տաք արյունով աճյունս հարդելու...

— Ահա՜ թե ուր էր օրհասքս պահված.
Այս չոր ոսկո՛րն էր ինձ մահ սպառնում։
Այն ինչ՝ անկենդան դանգիցը հանկարծ
Ցըշշալով սոցաց մի օձ չարաթույն,
Սև թոկի նման փաթաթվեց ոտքին,
Իշխանն օձահար դոռաց ցավագին։

Փըրփրուն թասերը շրջան են առնում
Օլեգի մահվան տըխուր հարկինքին,
Իգորն ու Օլգան բըլուրի վերա,
Նըստած է խումբը Դրնեպրի ափին.
Հիշում են քաջերն օրերն անցկացրած
Եվ կռիվները միասին վարած։

Ա. ՊՈՒՇԿԻՆ

## ՋՐԱՀԵՂՁԸ

Ներս վազեցին մանուկները
Ու կանչում են հորն ըշտապ.
— Ա՛պի, ա՛պի, ե՛կ, մեր թոռը
Մեռել հանեց գետի ափ։
— Սուտ եք ասում, շա՛ն լակոտներ,
Գոռաց հայրը ահարեկ.



Ըսպասեցիք դուք հալա դեռ,
Մեռելն հետո կըտեսնեք։

— Դիվան կըգա— պատասխան տուր,
Ցավի միջում կըմընամ.—
Հընար չըկա, բե՛ր, ա՛յ կընիկ,
Շորերըս տուր, մի գընամ։
— Ո՞ւր է մեռելն.— Ա՛յ, ա՜պի, ա՜յ։
Ճիշտ որ գետի եզերքին,
Թաց թոռի մոտ, գետնի վերա
Տարածված էր մի մարմին։
Զարհուրելի դիակն ուռել,
Կապտագեղ էր այլանդակ։
Արդյոք տանջված մի թշվա՞ռ էր
Հանդիսա ըլտած ջրի տակ,
Մի գետակուր ձկնո՞ւրս էր էն,
Թե՞ գինեմոլ մի ջահել,
Թե՞ անըզգույշ վաճառական
Հարամու էր պատահել...

Ընչի՞ն է պետք։ Աչք ածելով
Ըշտապում է գյուղացին,
Ոտից բըռնած, ետ քարշ տալով
Ջուրն է տանում խեղդվածին։
Ու թիակով գետի եզրից
Ջուրը հըրեց նա ներքան,
Ու դիակը գընաց՝ նորից
Փընտրի խաչ ու գերեզման։

Մեռելն երկար ջրի միջին
Ցած էր իջնում ճոճվելով,
Աչքով ճամփեց մեր գյուղացին
Ու տուն դարձավ կանչելով.
— Դեսը կորե՛ք, ա՛յ լակոտներ,
Եկե՛ք, բան տամ ձեզ՝ տանեմ,

Ամա թե որ ձեն եք հանել,
Հոդինները կը հանեմ։

Գիշերն ուժգին բուք վեր կացավ,
Գետն ելնում է, որոտում...
Մարմը արդեն էրվեց, հանգավ
Լուռ ու ծրխոտ խրրճիթում։
Ողջ քընած են։ Անբուն պառկած
Միտք է անում դյուղացին...
Բուքն ոռնում է... մին էլ հանկարծ
Լուսամուտը բախեցին...

— Ո՞վ եաւ— Ներս թո՛ղ, ա՛յ տանտեր, նե՛ր...
— Ա՛յ, ներս ու քեզ շոռ ու ցավ.
Ի՞նչ ես շըրջում Կայենի պես,
Ո՞ր սատանեն քեզ բերավ։
Ի՞նչ անեմ քեզ, ասա, հիմի.
Տեղրս նեղ է, ասենը մութ։
Ու ծույլ ձեսրով, տրրտրնջալով՝
Բաց է անում լուսամուտ։

Ցոլում է լույսն ամպի տակից.
Ահա՜ կանգնած... մի մերկ մարդ.
Ջուր է հոսում նրա միրքից,
Բաց են աչքերն ու անթարթ։
Կախ են ընկած բաղուկները,
Ողջ կարկամած սոսկալի,
Ուռած մարմնին քառչանգները
Կըպած՝ սևին են տալի...

Ահից մարեց՝ հանալով
Իր մերկ հյուրին նա հանկարծ.
Փեղկը խփեց ու դողալով՝
— Ա՛յ դու ճաքե՛ս, քըրթմընջաց։



Ամբոխվեցին մրտքերը մութ.
Մինչև լույսը նա գոռում,
Մինչև լույսը լուսամուտը
Բախում էին ու բախում...

Ամբոխն ահեղ զբրույց ունի,
Թե այս գեպքից գյուղացին
Ըսպասում է ամեն տարի
Միշտ նույն օրը խեղդվածին։
Խառնվում է օրն առավոտից,
Գիշեր գալի բուք ու մութ,
Ու խեղդվածը ամբողջ գիշեր
Բախում դուռն ու լուսամուտ։

**Ա. ԿԱԼՅԱՆ**

## ԳԵՂՋՈՒԿԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Նըստել եմ շըվար
Ու միտք եմ անում,
Թե ինչպես մենակ
Ապրեմ աշխարհում։
Ոչ ջահել կընիկ
Ունեմ իմ կողքին,
Ոչ թոռ ու թիկունք
Մրտերիմ ընկեր,
Ոչ մի տաք անկյուն,
Ոչ արծաթ, ոսկի,
Ոչ սարքած գութան,
Ոչ նըժույգ մի ձի...
Պակաս օրի հետ
Միմիայն մի գանձ՝
Քարի նրման ուժ
Տըվավ ինձ հերոս.

Բայց, ա՜խ, հենց էն էլ
Օտար դրոշներում
Կերան, մաշեցին
Դարդ ու ցավերը...
Նրստել եմ շրվար
Ու միտք եմ անում,
Թե ի՞նչպես մենակ
Ապրեմ աշխարհում...

Ա. ՄԻՑԿԵՎԻՉ

## ԱՔԵՐՄԱՆԻ ԴԱՇՏՈՒՄ

Լողում եմ գարնան դալարի ծովում։
Մըթնում է օրը... ոչ ձայն, ոչ շըշուկ։
Ես լսում եմ օձն ինչպես է սողում,
Թիթեռը խոտում շարժվում կամացուկ...
Այնպե՜ս հանգիստ է. կարող էի ես
Լրսել ըղձալի կանչը Լիտվայից...
Բայց... հառա՜ջ... այնտեղ հանգիստ է նույնպես...
Ձայն չէ տալիս ինձ ոչ ոք այնտեղից...

---

1900

ՀԻՄԵՆՈՍ

## ՀԻՎԱՆԴ ԵՄ, ՄԱՅՐԻ՛Կ

Հիվանդ եմ, մայրի՛կ, նանիկ. ասա ինձ,
Որ ասում էիր երբեմն օրրանում.
Իմ մաշված կըրծքին խաչ քաշիր նորից
Ու նանիկ ասա, քունը չի տանում։

Թող վայր դընեմ ես գլուխս հոգնած.
Գիշեր է արդեն, ծաղիկը հանգչում,
Վաղուց է անտուն պանդուխտն էլ քընած,
Մենակ քու հիվանդ զավակն է տանջվում։

Քո հեգ թրուշնակը վախցած է բուքից...
Ա՜խ, ես գեռ մանկուց շատ ցավեր տեսա,
Քունն էլ, հանդիստն էլ փախան իմ աչքից...
Մայրի՛կ ջան, մայրի՛կ, ինձ նանիկ ասա...

---

## 1 9 0 2

Ֆ. ՇԻԼԼԵՐ

### ԱՆՁՈՒԿ

Ա՜խ, վայրենի, սառն ու խավար
Այս հովիտի խորքերից
Թե գըտնե՞ի մի ճանապարհ
Ու ապրե՞ի ես նորից...

Ահա հեռվում ճոխ բըլուրներ
Մըշտագարուն, ծաղկազարդ։
Ինչո՞ւ, ինչո՞ւ չունեմ թևեր,
Այնտեղ թըռչեմ ես ազատ։

Քընարն այնտեղ ուրախ հընչում,
Խոսում է ձայնն երկընքի,
Ջեփյունները մեղմով շընչում,
Բույր են խընկում գարունքի։

Պերճ սաղարթում շողշողում են
Պըտուղները ոսկեվառ,
Ջրկան այնտեղ բուք ու ձըմեռ,
Ու ծաղկունքը միշտ դալար։

Ա՜խ, ի՞նչ լավն է՝ այն անխըռով,
Քինչ օրերի լուսի մեջ,
Այն անթառամ ծաղիկանց բուլրով
Հարբել անվե՞ըջ ու անվե՞ըջ...



## 1 9 0 3

ԼՈՒՆԳՖԵԼԼՈ

### ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Եկե՛ք, սիրուն իմ մանուկներ,
Վազե՛ք, եկեք շուտ ինձ մոտ,
Վիշտ ու կասկած դուրս վանեցեք
Իմ ծեր լանջից հիվանդոտ։

Ձեր սըրտերում՝ շող ու թըռչուն,
Ձեր մըտքերում՝ վըտակներ,
Ինձ սիրում է արդեն աշուն,
Շուտով կըգա և ձըմեռ։

Տաղ կանչեցեք, սիրունիկնե՛րս,
Էն տաղերը խընդագին,
Որ թըռչուններն երգում են ձեզ
Գարնան պայծառ օրերին։

Ոչինչ բան է խելքը մարդի,
Եվ դատարկ է, և չընչին՝
Ձեր մանկական անմեղ շուրթի
Ժըպիտների առաջին։

Ձեզանից լավ՝ երգ չի տեսել
Գարնան օրը ոսկեփայլ,
Դուք եք երգն էլ, խաղն էլ, լույսն էլ,
Ու առանց ձեզ՝ ողջ մըռայլ։

Ա.ՄՄԱՏ.Ր

Կուզեի հալվել, ձուլվել իմ երգին
Ու այս տողերում թաքնվել ծածուկ,
Որ երբ կարդային մի օր, իմ անգի՛ն,
Կարող լինեի անտե՛ս, կամացո՛ւկ,
Ամեն հընչյունի, ամեն խոսքի մեջ
Դիպչել շուրթերիդ, համբուրել անվե՛րջ...

---

1 9 0 6

Ա. ԳՈՐԿԻ

## ՎԱԼԱԽԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

Դունայի ափին ապրում էր Փերին։
Հանախ գետի մեջ լողանում էր նա։
Մի օր էլ անփույթ, անզգույշ Փերին
Ընկավ ձկնորսի ուռկանը ահա։
Սաստիկ վախեցան ձկնորսները խեղճ...
Նրանց հետ էր բայց Մարկո պատանին,
Գեղեցիկ Փերուն սեղմեց կրծքի մեջ
Ու համբուրում էր, գրգվում սիրունին։
Փերին, մի ճրկուն ոստիկի նման,
Խայտում էր դրրկում, ոլորվում, խաղում,
Մրտիկ էր տալի տղի աչքերին
Ու մրտքի միջին բարակ ծիծաղում...
Փայփայեց Փերին տղին ամբողջ օր,
Բայց հենց դիշերը հասավ մրթագին,
Հանկարծ չրքացավ, կորավ նորից նոր,
Ու սաստիկ տրխրեց Մարկոյի հոգին,
Գիշեր ու ցերեկ գետի ափերին
Շրջում է Մարկոն, հոգոց է հանում,
Փնտրում է, կանչում. «Ո՞ւր է իմ Փերին...»։
Կրկնում են ալիք՝ «Մենք չենք իմանում»։
— Օ՜, սառն ալիքներ, դուք խաբում եք ինձ,
Ինքներդ եք խաղում նրա հետ թաքուն.—
Ճրչաց պատանին ու թրռավ ափից,
Թրռավ՝ գետի մեջ դրտնի իր Փերուն...
Դունայի ափին ապրում է Փերին
Ու, ինչպես առաջ, այժմ էլ լողանում,

Իսկ Մարկոն չկա... Բայց նրա մասին...
Բայց նրա մասին գեթ երգ է մընում։

. . . . . .

Իսկ դուք ապրում եք աշխարհքի վրա
Ինչպես կույր, անսիրտ, չընչին սողուններ.
Ոչ ձեզնից հետո զբրույց կը մընա.
Եվ ոչ ձեր մասին երգ կասեն անմեռ։

---

# 1907

Ե. ՀԱՎԱՆԱՎԱՆՑ

## ԷԼԵԳԻԱ.

Լուսինն աղոտ լույս է փրռում
Իմ աշխարհին մայրենի,
Կուլ է գընում կապույտ հեռվում
Ճերմակ շարքը լեռների։
Ձեն չի գալիս ոչ մի կողմից,
Վրաստանը մութն ու լուռ.
Վրրացին է հաղթված ընկից,
Տընքում տանջված ու տխուր։
Մենակ եմ ես։ Քընած է նա,
Քընած շտապչրս ու հեռու...
Ա՜խ, ասված իմ, քընա՜ծ, քընա՜ծ,
Ե՞րբ է. արդյոք զարթնելու...

Ե. ՀԱՎԱՆԱՎԱՆՑ

## ԳԱՐՈՒՆ

Կանաչ է նորից.
Միծառը երգում,
Վաղը հրրճվանքից
Լալիս է այգում։

Հովիտ ու լերինք
Ծաղկել են պես-պես,
Իսկ դո՛ւ, հայրենի՛ք,
Ե՞րբ պիտի ծաղկես...



Հովհ. Թումանյան, հ. II—13

## 1 9 0 9

Ա. ՊՈՒՇԿԻՆ

## ՁՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

*Հողմը մեղով երկինքն առնում,*
*Գալարում է բուքը ձյան,*
*Մին՝ մանկան պես լաց է լինում,*
*Մին՝ ոռնում է գերթ գազան.*
*Մին՝ վայրենի սուլում պես-պես,*
*Աղմկում է տանիքում,*
*Մին՝ ուշացած ճամփորդ, ասես,*
*Լուսամուտն է նա թակում։*

*Մեր խրճիթը, աղքատ ու հին,*
*Ե՛վ մրթին է, և՛ տրխուր.*
*— Ի՞նչ ես նըստել պատի տակին,*
*Իմ պառավըս, էգպես լուռ։*
*Հոգնե՞լ ես դու փոթորիկի*
*Ոռնոցներից խելագար,*
*Թե՞ նիրհում ես քո իլիկի*
*Բզզոցի տակ միալար։*

*Արի խըմե՛նք, բարի ընկեր*
*Իմ սև, ջահել օրերի,*
*Խըմենք դարդից, բաժակը բե՛ր,*
*Սիրտներըս բաց կը լինի։*
*Երգի՛ր, ո՞նց էր ապրում խաղաղ*
*Հավքը ծովի էն ափին,*
*Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ*
*Ջուրը գնում մինչ արփին։*



*Հողմը մեղով երկինքն առնում,*
*Գալարում է բուքը ձյան,*
*Մին՝ մանկան պես լաց է լինում,*
*Մին՝ ոռնում է գերթ գազան։*
*— Արի խմե՛նք, բարի՛ ընկեր*
*Իմ սև՛, ջահել օրերի,*
*Խըմենք դարդից, բաժակը բե՛ր,*
*Սիրտներըս բաց կըլինի։*

ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ

* * *

*Մի երգ կա մանկուց, մի երգ կա մանկուց*
*Դեռ իմ ականջում.*
*Ա՜խ, ի՜նչքան հիմի, ա՜խ, ի՜նչքան հիմի*
*Հեռու է հընչում։*

*Ճախրում էր ծիծառ, ճախրում էր ծիծառ՝*
*Գարունը բերում,*
*Աշխարհքը պայծառ, աշխարհքը պայծառ*
*Մաղկում էր, թոռում։*

*Հայրենի դաշտե՛ր, հայրենի դաշտե՛ր,*
*Ա՜խ, ո՞նց եմ ուզում,*
*Ձեր գըրկում մին էլ, ձեր գըրկում մին էլ*
*Թրռչեմ երազում։*

*Երբ որ հեռացա, երբ որ հեռացա՝*
*Լիքն էր ողջ ու շեն,*
*Երբ որ դեռ դարձա, երբ որ դեռ դարձա՝*
*Դատարկ էր արդեն։*

*Գալու է գարուն, գալու է գարուն —*
*Աշխարհ լըցվելու.*

Բայց իմ սիրտն, ավա՜ղ, բայց իմ սիրտն ավա՜ղ,
Էլ չի բացվելու։

Եվ ոչ մի ծիծառ, և ոչ մի ծիծառ
Չի բերի իր հետ,
Ինչ որ կորցրբի, անդարձ կորցրբի
Անցած երգի հետ։

Վ. ԳՑՈՒԹ

## ՎԱՅԴԸ

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին.
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Տղան ասավ. քեզ կըպոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին։
Վարդը ասավ. տե՜ս, կըծակեմ,
Որ չըմոռնաս փըշոտ վարդին.
Փըշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Ու անհամբեր տըղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փուշը նըրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քընքուշ վարդին.
Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։



Վ. ԳՑՈՒԹ

* * *

Լերանց շարքերը
Նիրհում են մըթնում,
Խաղաղ մարդերը
Մըշուշ է պատում.
Ճամփեն հանդարտվել,
Չի շարժվում քամի,
Ուր որ է՝ դու էլ
Կըքընես հիմի։

---

## 1910

**Ա. ՊՈՒՇԿԻՆ**

# ՎԻԼՍՈՆԻ «ԺԱՆՏԱԼԻՏԻ ՔԱՂԱՔԸ» ՈՊԵՐԱՅԻ ՊՐԻՄԻԵՐԱՅԻՆ

*Կար ժամանակ, որ ծաղկում էր*
*Մեր աշխարհքը անխնամով,*
*Աստծո տաճարն որոտում էր,*
*Թրնդում էր տոն օրերով։*
*Ամենակալի մեր դպրոցում*
*Երդում մանկունք մեր մատաղ,*
*Շողում էին լիրը հանդում*
*Սուր դերանդին ու մանդաղ։*

*Այժմ թափուր եկեղեցին,*
*Դպրոցը փակ, խըլացած,*
*Արտը կըծղած հանդի միջին,*
*Թավ պուրակը դատարկված.*
*Ու գյուղն էրված մի տան նըման*
*Կանգնած ավեր, ամայի,*
*Ողջ պապանձված, լուռ չի միայն*
*Դամբարանը ահռելի։*

*Մեռե՞լ, մեռե՞լ ամեն վայրկյան,*
*Ու ապրողներն աստծուն*
*Աղոթում են միաբերան*
*Նըրանց հոգուն փրրկություն։*
*Մեռե՞լ, մեռե՞լ ամեն վայրկյան,*
*Ու շիրիմներն իրար քով*



*Սարսափահար հոտի նման*
*Սեղմըվում են խիտ շարքով։*
*Գարուն կյանքիս եթե նույնպես*
*Վիճակված է վաղ շիրիմ,*
*Ով դո՞ւ, ում որ սիրել եմ ես,*
*Հոգուս անդուլդ մըտերիմ,*
*Չըմոտենաս իմ շրթունքին*
*Քո համբույրով կենսածիր,*
*Չմոտենաս իմ դիակին,*
*Հեռվից հեռու հետևիր...*

*Ապա ձըգիր դու մեր գյուղը,*
*Փախիր այլուր, հեռացիր,*
*Հոգուդ տանջանքն ու երկյուղը*
*Վանիր էնտեղ ու կացիր։*
*Ու երբ կանցնեն էս օրերը,*
*Այց եկ շիրմիս գնթ մի հեղ,*
*Իսկ ես ոչ քեզ, ոչ քո սերը*
*Չեմ մոռանա և էնտեղ...*

**Հ. ՀԱՑԵՆԵ**

* * *

*Հեռա՞ւ, հեռու կը թըսցընեմ*
*Քեզ իմ երգի թևերին,*
*Աքանչելի մի տեղ գիտեմ*
*Ես Գանգեսի ափերին։*

*Պարտեզն այնտեղ ծաղկում է ճոխ*
*Լուսնի խաղաղ լույսի տակ,*
*Իրենց քրոջն ըսպասում են*
*Լոտոսները ըսպիտակ։*

Մանուշակներն ասաղերի դեմ
Աչք են անում ու խընդում,
Իրար հակված թոթովում են
Վարդերն անուշ հեքիաթում։

Վիթերն երկչոտ ցատքըտում են,
Խրոտնած պըշնում իրարու.
Գանգեսը լա՞յն, հանդիսավոր,
Հոսում հանդարտ ու հեռու։

Այնտեղ պիտի անհոգ պառկենք
Արմավենու ըստվերում,
Սեր վայելենք, սուզվե՞նք, ապրե՞նք
Երաղների աշխարհում։

**ԱԼԳԻՐԵԴ ԴԸ ՄՅՈՒՍԵ**

## ԼՈՒՍԻՆ

Իմ սիրելիք, երբ կըմեռնեմ,
Շիրմիս տընկեք լացող ուռի,
Ներա դալուկն ես կըսիրեմ,
Ու սաղարթը թախիծով լի։
Նրա շուքը թեթև կըգա
Իմ հանգստյան հողի վըրա։

Մի երեկո մենակ էինք։ Նստած էի իր կողքին։
Նա, գլուխը թեքած դեպ ինձ ու անձնատուր ցընորքին,
Սահեցնում էր դաշնամուրին թաթը ճերմակ, ձյունի պես.
Թևի փափուկ հարված էր էն, հովի շըշուկ էր, ասես,
Որ վախում է՝ շըղարթեցնի անուշ քընած հավքերին,
Ու անցնում է եղեգնուտով թեթևասահ ու լըռին։
Մելամաղձոտ դիշերների տաք հեշտանքներ ու տենչեր
Ծլնում էին ծաղիկների բաժակներից դեպի վեր.
Շագանակի պուրակները ու կաղնիներն ալևոր



Թախծում էին գլուխները տատանելով մեղմօրոր։
Լըսում էինք մենք գիշերին։ Պատուհանը կիսաբաց.
Ներս էր հոսում զով գիշերը դարնան բույրով արբեցած։
Դաշտն ամայի, դուրսը հանդարտ, հանդարտ էնքա՞ն ու
էնքա՞ն։
Ու մենք մենակ, մենք մտածկոտ, մենք տասնուհինգ
տարեկան...
Նայում էի ես Լյուսիին։ Նա գունատ էր ու դալուկ։
Աչքերն երբեք ոչ մի անգամ էնքան անուշ, գեղաշուք
Չեն ցոլացրած ջինջ երկընքի լայնուն իրենց խորքերում։
Հարբած էի ես նըրանով, նըրան էի ես սիրում։
Եվ էնքան էր նա ամոթխած, էնքա՞ն մաքուր, էնքա՞ն հեզ,
Որ թըվում էր՝ եղբոր նըման էի սիրում նըրան ես։
Մենք լուռ էինք։ Իմ ձեռքը նա պահած իրեն ձեռքերում.
Ու դեղանի իր ճակատը մրռայլում էր, ցընորում։
Ու ես էն ժամ գդում էի՝ ի՞նչ թովիչ է ու կարող
Թարմ ու չքնաղ ջահելության հրապույրը մեզ գերող։
Լուսինն ելավ ջինջ երկընքում. լուսնի դալուկ լուսի տակ
Ժըպտաց նա ինձ, ապա երգեց, որպես տխուր մի հրեշտակ։
Մենք մեն-մենա՞կ, մենք մտածկոտ, ես ակնապիշ Լյուսիին...
Նա երգում էր գողդոջելով՝ տրտում հենված իմ ուսին։
Խե՞ղճ երեխա. լալիս էիր։ Քնքուշ, մատաղ քո հոգում
Գուցե անբախտ Դեզդեմոնի կըսկիծն էիր դու զգում...
Համբուրեցի ես խոնարհած քո գլուխը հուսահատ...
Երբ մյուս անգամ համբուրեցի՝ դու սառն էիր ու գունատ.
Սառն ու գունատ դրած էիր մահվան տխուր դագաղում...
Էսպես անցա՞ր, քնքուշ ծաղիկ, անցա՞ր կորար սև հողում։
Իմ սիրելիք, երբ կըմեռնեմ,
Շիրմիս տընկեք լացող ուռի,
Ներա դալուկն ես կը սիրեմ,
Ու սաղարթը թախիծով լի.
Գերեզմանիս հողի վըրա
Թեթև կըգա շուքը ներա։

ԳԱԼԼԵԳՈ

## ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐՈՎ

Գիշեր է խոր։
Մենակ բորոր
Կուսնյակը չի գեռ քընած.
Հետը գընում, հետը ցած
Նա տեսնում է մութ ծրմակ,
Մութ ծրմակում, կոնդի տակ,
Ջոր տերևը ժամ տալի —
Սունկն աշխարհք է դուրս գալի։

ԹՈՐՈՒՎԱՆԼՈՎԱ

## ՊԵՐԻՍՑԻ ԵՐԳԸ

Մեր ինչի՞ն է պետք, թե արևն անմահ
Անդրաստեղյան լազուր աշխարհում
Առնում է շրջանն իր հավերժական,
Թե ցած է հոսում ճոխ աչքերով
Իր ակնախբտիղ շողերն անարատ։
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՞նչ ենք մենք...

Մեր ինչի՞ն է պետք՝ կինը նորատի
Ըստանում է թանկ իրեն ամուսնուց
Քընքուշ գրավը տարփալի սիրո.
Սեր ու զավակներ ո՞վ է տվել մեզ...
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՞նչ ենք մենք...

Մեր ինչի՞ն է պետք, թե ամենազոր
Կա աստվածային սուրբ երրորդություն



Եվ արարչական, և միշտ պահպանող,
Եվ միշտ նորոգող համայն աշխարհի
Չի փայլում, ավա՜ղ, նրանց փառքը մեզ։
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՞նչ ենք մենք...

Մեր ինչի՞ն է պետք, թե հաշտ ու զոհի
Ծուխն ու ճենճերը երկինք է ելնում,
Թե ծիլ ու ծաղիկ գետինն են ծածկում,
Թե բար ու պտուղ ծառերն են զուգում,
Եվ կամ սրբազան շուրը Գանգեսի
Թավալում է պարզ խաղաղ հովիտում։
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՞նչ ենք մենք...

Քե՞զ, անմահ Ինդրա, ո՞վ աչքի խընդում,
Ամենքից պաշտված դու գանձ երկնային,
Ձենք կարող, աստվա՛ծ, մենք քեզ աղոթել,
Որ մեր խորհրդով չանարգենք բնավ
Քո աստվածային լրսելիքը սուրբ։
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՞նչ ենք մենք...

Իզուր մերժեցի ես մահը դաժան
Եվ անտառների խորքերումը խուլ
Սրբազան հեղումն արի լիասիրտ,
Որ աստվածների սրտերը մեղմեմ,
Ո՞հ, նրանք փախան իմ մոտենալիս։
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիք արեք,
Ի՞նչ ենք մենք...

Ո՞ւր են ակները էն պարզ ջրերի,
Ուր մեր ծարավը կոտրել կարենանք,

Լոկ անասունի ոտքի տեղերի
Հոտած ջուրն է մեր ըմպելին միակ։
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՞նչ ենք մենք...

Ո՞ւր են դաշտերը, ուր որ մեզ համար
Աճում են բրինձն ու այլ բարիքներ.
Չըկա աշխարհքում ցորնի մի ցողուն
Մի խոտ, մի ծաղիկ, որ մեզ պատկաներ։
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՞նչ ենք մենք...

Երբ հովիտներից ստվերը ծնում
Վե՞ր, անտառների բարձունքն է ելնում,
Երբ հովիվն երգով թողնում է հանդը,
Աղջիկը տանը ընթրիք պատրաստում,
Երբ շանն են տալի թերմացքն իրիկվան՝
Ի՞նչ ուտի արդյոք և ո՞ւր էն ժամին,
Ո՞ւր դնա պարիան, ո՞ւր հանգստանա...
Երկի՞նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՞նչ ենք մենք...

---

# 1911

**ԹՈՄԱՍ ՀՈՒԴ**

## ՓՈԹՈՐԻԿ

Ծովը խառնըված,
Շանթ, հողմ ու կարկուտ.
Երկինքը բըռնած
Մեգ, մըռայլ ու մութ։

Խրոռված տարերք
Իրար են եկել,
Երկինք ու եզերք
Փակել, մթագնել։

Ծովը ահագին
Խորքերն հիմն ի վեր,
Ավազն ալիքին
Խառնող դուք ուժեր,—

Ի՞նչ եք շըպըտում
Ցայտերն ամպերին,
Ի՞նչ եք ըսպառնում
Զըկնորսի նավին։

Կըռվում տըրորված,
Դալկացած հեգին
Մի՛ տաք փըրփըրած
Ջրի հորձանքին։

Կայծակի փայլով
Թողեք խեղճ մարդուն,

Թողեք ապահով
Հասնի իրեն տուն։

Էնտեղ ձեռները
Մեկնած երկնքին՝
Մընում են փոքրերն
Իրենց հայրիկին։

Կինն էնտեղ լալով
Աղոթք է անում...
Ի՞նչ եք աղքատի
Նավին ըսպառնում։

Օ՜, հասի՛ր շուտով,
Ասված բարերար,
Հուզված է ծովը,
Երկինքը՝ խավար...

---

1921

Ա.Լ. ԳԼՈՒԽ

## ԾՈՎԻ ԵՐԳԸ

Ծովն ինձ նըշանի մատանի բերեց,
Ծովն իմ արևառ երեսն համբուրեց։

Հարանևորվեց խռովքը ծովի,
Անհարսնացու խորքը ծովի։

Կյանքն անհատ է նըրա հետ,
Մահը անհայտ՝ նըրա հետ,
Պաղ ու ազատ նա հավետ։

Ու ճեմում ենք բացերն անցած,—
Կապույտ շրե՜ր, վարդ լուսաբաց...

Շընչի՛ր, աղի ու կատաղի դու քամի,
Հերքը խըռիվ, երդը ցըրիվ տուր, քամի՛,
Ինար խառնիր, քըշիր նավ ու ջուր, քամի՛։

---

## 1922

**ԽՍԻՐՈՒՆԻ**

### 1

Անցա՝ քարը սրբոտիս վրա՝ ջրի պես.
Մենակ տատասկ ու փուշ տարա՝ ջրի պես.
Իմ աշխարհքում հանգիստ չառա՝ ջրի պես,
Ու գընացի, ետ չդառա՝ ջրի պես։

### 2

Մուխրդ կելնի պատուհանից երբևէ[1].
Հավքրդ կերթա իրեն բընից երբևէ[2].
Թեկուզ մի դար ապրես սրբտով մրտերմիդ,
Ձարի սրբտով կելնես տանից երբևէ[3]։

### 3

Ասում են՝ թե հազար տարին մի անգամ
Մի փբրկիչ է աշխարհ գալիս,— մի պատգամ.
Մին, երբ եկավ, ծընված չէինք մենք մորից,
Մին էլ, երբ գա, մեռած կլինենք ցավերից։

---

[1] Հրդեհ—դժբախտություն, [2] հոգիդ, [3] կմեռնես։ (Հ. Թ.)

# ՄԱՆԿԱԿԱՆ

## 1907

### ԻՐԻԿՈՒՆ

Արևը շատ էր հոգնել, ման էր եկել ամբողջ օրը.
«Հերիք է, ասավ,
Գնամ պառկեմ ու քնեմ»։
Տերևը ուրախ սրվսրվում էր, որ կանգ առավ.
«Էս ի՞նչ է, ասավ,
Արևն էլ չի երևում.
Ես էլ պառկեմ ու քնեմ»։
Թռչնակը երգում էր ծառի վրա, հանկարծ լռեց.
«Էս ի՞նչ է, ասավ,
Ո՛չ տերև է սրվսրվում,
Ո՛չ արևն է երևում
Ես էլ գնամ ու քնեմ»։
Նապաստակը ոստոստում էր թփի տակ, որ ականջը սրեց.
«Էս ի՞նչ է, ասավ,
Ո՛չ թռչնակ է ծրլվրլում,
Ո՛չ տերև է սրվսրվում,
Ո՛չ արևն է երևում.
Ես էլ գնամ ու քնեմ»։
Որսկանը անտառում որս էր որոնում, կանգնեց.
«Էս ի՞նչ է, ասավ,
Ո՛չ նապաստակ է վազ տալի,
Ո՛չ թռչնակ է ծրլվրլում,



Հովհ. Թումանյան, հ. II—14

Ո՛չ տերևն է սրվսրվում,
Ո՛չ արևն է երևում.
Ես էլ գնամ ու քնեմ»։
Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսավ.
«Ի՞նչ լավ է, ասավ,
Ո՛չ որսորդ է ման գալի,
Ո՛չ նապաստակ վազ տալի,
Ո՛չ թռչնակ է ծլվլրում,
Ո՛չ տերև է սրվսրվում,
Ո՛չ արևն է երևում.
Մենակ ես եմ որ անքուն
Քեֆ եմ անում երկնքում»։

## ԷՍ ԷՆ ՏՈՒՆՆ Է

1

Էս էն տունն է, որ շինել է վարպետ Օհանը։

2

Էս էն ցորենն է, որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

3

Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

4

Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։



5

Էս էն շունն է, որ գրգել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

6

Էս էն կովն է՝ կեռ պոզավոր,
որ հարու է տվել էն շանը,
որ գրգել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

7

Էս էն աղջիկն է, որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գրգել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

8

Էս էն տղան է, որ ուղել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գրգել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,

որ կերել է էն ցորենը
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

9

էս էն տերտերն է, որ պսակել է էն տղին,
որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գզել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

10

էս էն աքլորն է, որ զարթեցրել է էն տերտերին,
որ պսակել է էն տղին,
որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գզել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

11

էս էլ էն վարպետ Օհանը,
որ մորթել է էն աքլորին,
որ զարթեցրել է էն տերտերին,
որ պսակել է էն տղին,



որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գզել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը։

## ՇՈՒՆԸ

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես.
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ու տունն այսպես
Պահում եմ ես։
Թե գա մեզ մոտ
Մի հին ծանոթ,
Մոտն եմ վազում,
Պոչըս շարժում։
Բայց թե մի գող,
Չար կամեցող
Ուզի թաքուն
Մանի մեր տուն,—
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես.
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ու տունն այսպես
Պահում եմ ես։

## ԳՐԻՉ

Ի՞նչ կըլինի, ասա, գրիչ,
Ինձ էլ սիրես դոնե մի քիչ։
Ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին
Գրում ես միշտ վարժ ու կարգին,
Իսկ իմ ձեռքին խազմըզում ես
Սև ագռավի ճանկերի պես։
Ես քեզ վատ բան ի՞նչ եմ արել։
Եկ, խնդրում եմ՝ ինձ համար էլ
Գրի էնպես արագ-արագ,
Էնպես ուղիղ, սիրուն, բարակ։
Գրիչը լուռ լըռում, լըսում,
Ճըռճըռում է ու խազմըզում,
Բայց այս անգամ արդեն, կարծես,
Փոքրիկ ծըտի ճանկերի պես։

## ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ

— Վա՜յ, մա՛յրիկ ջան, տե՛ս,
Բակն ու դուռը լի
Ի՜նչքան ըսպիտակ
Թիթեռ է գալի...
Էսքան շատ թիթեռ
Չեմ տեսել ես դեռ։
— Չէ՛, իմ անուշի՛կ,
Թիթեռներ չեն էդ.
Թիթեռներն անցան
Ծաղիկների հետ։
Էդ ձյունն է գալի,
Փաթիլն է ձյունի,
Որ կարծես սպիտակ
Թիթեռնիկ լինի։



## ԾԻՏԻԿԻ ՕՐՈՐՔԸ

Կախված է ճյուղքից ճոճը ծիտիկի.
Փըչի՛, հովիկ, փըչի՛,
Ճոճն օրորվի, տանի բերի.
Նանի՜, ծիտիկ, նանի՜։

Ծիտիկը անուշ երազ է տեսնում.
Փըչի՛, հովիկ, փըչի՛,
Ճոճն օրորվի, տանի բերի.
Նանի՜, ծիտիկ, նանի՜։

Բայց տե՛ս, ծիտիկը քընից չը զարթնի.
Կամա՛ց փըչի, կամա՛ց,
Ճոճն էլ զգույշ տանի բերի,
Նանի՜, ծիտիկ, նանի՜։

---

## 1908

Ֆ. ՇԻԼԼԵՐ

### ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՇՏԸ

*Մնաք բարով, դո՛ւք, արոտնե՛ր սիրուն,*
*Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն։*

*Մենք ետ կըդանք ձեզ նորեկ գարունքին,*
*Երբ զարթնեն ուրախ-երգերը կըրկին,*
*Երբ որ սարերը զուգվեն կանաչով,*
*Երբ որ ջրերը վազեն կարկաչով։*

*Մնաք բարով, դո՛ւք, արոտնե՛ր սիրուն,*
*Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն։*

### ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ

*Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ*
*Ու ջուրն աղմկում, անվերջ փըրփրում,*
*Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ*
*Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,*
*Մի գորշ խըրճիթում,*
*Մի հին խըրճիթում,*
*Գետի եզերքին,*
*Ծառերի տակին։*

*Մի օր էլ եկավ անհանգիստ տըղան,*
*Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.*



*«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.*
*Միակ ճանճրալի տեղը, որ գիտեմ,*
*Էս գորշ խըրճիթն է,*
*Էս հին խըրճիթն է,*
*Գետի եզերքին,*
*Ծառերի տակին։*

*Թո՛ղ գընամ շշրջեմ աշխարհից աշխարհ,*
*Ճամփորդեմ լավ-լավ տըներ տեսնելու,*
*Ամենից լավը ընտրեմ մեզ համար,*
*Գամ քեզ էլ առնեմ ու փոխշենք հեռու*
*Էս գորշ խըրճիթից,*
*Էս հին խըրճիթից,*
*Գետի եզերքին,*
*Ծառերի տակին»։*

*Ու գնաց, երկար թափառեց տըղան,*
*Մեծ ու հոյակապ շատ տըներ տեսավ,*
*Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...*
*Ու հառաչելով ետ վերադարձավ*
*Էն գորշ խըրճիթը,*
*Էն հին խըրճիթը,*
*Գետի եզերքին,*
*Ծառերի տակին։*

*«Գըտա՞ր, զավա՛կըս», հարցըրեց մայրը,*
*Ուրախ նայելով իր տըղի վըրա։*
*«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,*
*Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,*
*Էս գորշ խըրճիթն է,*
*Էս հին խըրճիթն է,*
*Գետի եզերքին,*
*Ծառերի տակին»։*

## ԹՌՉՈՒՆԻ ՅՈՏԱԾՄՈՒՆՔԸ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ
Աղատ ու անփույթ,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվիրջ,
Կեղևը կապույտ։

Ներքանից հետո ալքքս բաց արի
Մի փոքրիկ բընում,
Տեսա՝ աշխարհքը հարդից է շինած,
Ու մայրս է շինում։

Մի օր էլ, բընից գլուխս հանած,
Նայում եմ դես-դեն,
Տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած՝
Մեր բունը վրեն։

Հիմի թրռչում եմ հեռո՞ւ, շատ հեռո՞ւ,
Ամեն տեղ գընում,
Բայց թե աշխարհքը ինչի՞ց է շինած —
Էլ չեմ հասկանում։

## ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄԵՆՔԻՆ

Դաշտ ու անտառ, գյուղի ճամփան
Ծածկըվել է մի թիզ ձյունավ.
Էլ չի ճարվում ուտելու բան,
Ո՞վ է տեսել էս տեսակ սով.
Ոչ մի ցորեն, ոչ մի հատիկ...
Խնդրում ենք ձեզ, բարի մարդիկ,
Աստծու սիրուն, մի կըտոր հաց,
Կոտորվեցինք, մեռանք սոված։



Շատով կրգան օրեր գարնան,
Մենք ձեզ համար կերգենք ղըվարթ,
Ու փոխարեն ձեր լավության
Ձեր պարտեզը, այգին ու արտ
Կըմաքրենք մենք թըրթուքներից,
Ճիճուներից ու որդերից.
Միայն հիմի մի կտոր հաց,
Կոտորվեցինք, մեռանք սոված։

Մի խումբ ծտերի կողմից՝

Սիտիկ Ճենդուկյան

## ՓԻՍԻԿԻ ԴԱՆԴԱՏԸ

Փիսիկը նըստել
Մի մութ անկյունում,
Ունքերը կիտել
Ու լաց է լինում։
Մոտիկ է գալիս
Մի ուրիշ կատու.
— Ինչո՞ւ ես լալիս,
Ա՛յ փիսիկ ջան, դու...
— Ի՞նչ անեմ հապա,
Որ լաց չըլինեմ.
Գանգատ է անում
Փիսոն տըխրագեմ։—
«Էն Համոն թաքուն
Մածունը կերավ,
Գընաց առատ մոտ՝
Ինձ վըրա գըրավ։
Հիմի տատիկի
Ստեից ընկած,
Ինձ են ման գալի

Մի-մի փեսա առած
Քոթոթ Սուրենը,
Անոն ու Մոսոն։
Ո՞ւր է, ասում են,
Ո՞ւր է գող Փիսոն,
Ա՜խ, թե մի գըտա՜նք,
Մածուն ցույց կըտա՜նք...»։
Էսպես բան սարքից
Էն Համոն իմ դեմ.
Ի՞նչ անեմ հապա.
Որ լաց չըլինեմ....
Ու Փիսոն նըստել
Մի մութ անկյունում,
Ունքերը կիտել
Ու լաց է լինում։

## ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր փնացին ծաղիկները։
— Սո՜ւտ, քնած են հողի տակ,
Տաք ծածկված ողջ ձմեռը
Ձյուն-ծածկոցով սպիտակ։

Կըգա գարնան արևն էլ ետ
Իր շողերով կենդանի,
Ձմրան սաստիկ ցրտերի հետ
Ձյուն-ծածկոցը կըտանի։

«Ելե՛ք, կասի, իմ մանուկնե՛ր»
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կըհանեն գլխիկները,
Աչիկները կըբանան։



## ԱՇՈՒՆ

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն։
Պաղ-պաղ մեգի հետ
Փըչում է քամին,
Քշում է տանում
Տերևը դեղին։
Տըխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն։

## ՄԱՐՏ

Ա՜խ, է՞սպես էլ գիժ ամիս.
Մարդու հանգիստ չի տալիս։
Էսօր ուրախ օր կանի,
Վաղը անձրև ու քամի.
Առավոտը պայծառ օդ,
Կեսօրը մութ ու ամպոտ։
Մին հագնում է սպիտակ,
Մին կանաչին է տալիս.
Մի օր ցուրտ է, մի օր տաք,
Մին խնդում է, մին լալիս...
Ա՜խ, է՞սպես էլ գիժ ամիս։

---

# 1 9 0 9

## ԿՈՒՑԻՐԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

(ԱՐԵՎՍԼՔԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ)

Օրը ցերեկով
Երեք-չորս հոգով
Կույրերը եկան
Փղին դեմ ընկան։
Մինը, որ մարմնին դիպավ հաստ, ահեղ,
— Հե՛յ, ղգո՛ւյշ, կանչեց, մի պատ կա էստեղ։
Մյուսը, որ ոտն էր շոշափել իր դեմ՝
— Ի՞նչ պատ, ծիծաղեց, էն կոճղ է կարծեմ։
Երրորդի ձեռը կընճիթն էր ընկել.
— Օձ է, օձ, գոռաց, էլ ի՞նչ ես կանգնել։
Մինչդեռ չորրորդը պոչիցը բռնած
Քահ-քահ խնդալով ծաղրում էր նրանց.
— Վա՜հ, ճիշտ որ կույր եք. չիմացավ ոչ ոք։
Ոչ էս է, ոչ էն, այլ կախած մի թոկ։
Չէ, պատ է,— չէ, կոճղ—չէ, օձ է,— չէ, թոկ....
Ու աղմկելով ամեն մինը չոկ,
Ինչպես որ եկել
Դեմ էին ընկել,
Էնպես էլ կույր-կույր ետ դարձան կըրկին՝
Սարի պես փիղը պարզ լուսի տակին։



## ՏԵՐԵՎԱԹԱՓ

Ա՜յ փոքրիկներ, ա՜յ սիրուններ,—
Ասավ քամին տերևներին,—
Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
Ի՞նչ եք դողում ծառի ծերին։
Ոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույներ հագեք խայտաբղետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Եկե՛ք ինձ հետ, փախե՛ք ինձ հետ...
Եկեք տանեմ հեշտ ու անթև,
Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
Չեք իմանա այնուհետև...
Էլ ինչ է դող, ինչ է ձմեռ...

Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սրվսրվալով տխուր երգեր՝
Քամու թևին թռան, փախան։

---

# 1911

## ԲՋԵՋԻ ԴՊՐՈՑԸ

Վարպետ Բրդեղն ամռան մի օր
Դրպրոց բացեց մեծ ծառի տակ
Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,
Մրջեղ, մրրջյուն, մբլակ, մոծակ...

— Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,
Պիտի սովրեք, սովրեք անվերջ,
Որ իմանաք ինչ է ձեզ պետք,
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ։

Պիտի սովրեք, սովրեք էնքան,
Մինչև դառնաք ինձ պես վարպետ։
Դե նրստեցեք հիմի հանդարտ,
Ինչ որ կասեմ՝ կրրկնեք ինձ հետ։

Ա. Անթառամ, Բ. Բարձմենակ.
Գ. Գաղտիկուտ, Դ. Դրդում...
Է՛յ, դո՛ւ, մորե՛խ, դեսն ականջ դիր,
Ի՞նչ ես էդտեղ կրտրրտում։

Ե. Երիցուկ, Զ. Զանազան.
Է. Էշիրրտուկ, Ը. Ընկուզ...
Մի՛ աղմրկեք, հանաք հո չի՞.
Թիթե՛ռ, հանգի՛ստ, մոծա՛կ, ստ՛ատ։

Մի՛ խառնրվեք, չեմ սիրում ես
Էդպես աղմուկ, աղաղակ։



Թ. Թրրթրնջուկ, Ժ. Ժախ ու բոխ,
Ի. Իշառվույտ, Լ. Լեղակ։

Խ. Խրնձորուկ, Մ. Միրանի,
Կ. Կրոոթուկ, Հ. Հաղարջ...
— Տես, վարժապետ, էս մրլակին,
Ինձ ասում է՝ սարի արջ.

— Ա՛յ տղա, է՞յ, չեն հայհոյիլ։
Տրզղան հիմար անասուն...
Ջ. Ջրմերուկ, Ղ. Ղանձլամեր,
Ճ. Ճարճատուկ, Մ. Մասուր։

Դու, է՞յ Մրզրիդ, ո՞նց ես նրստել.
Գրլուվդ՝ ե՛տ, մեջքդ՝ դուրս։
Ց. Յունապի, Ն. Նոմուշար,
Շ. Շագանակ, Ո. Ոզկույզ։

— Վա՞յ, էս ինչե՞ր կան դասերում.
Ոզկույզը ես շատ եմ սիրում...
— Իսկ ես կաղամբ կուտե՞մ, կուտե՞մ...
— Իսկ ես՝ ծիրան...— իսկ ես՝ կոտեմ...

Ձեզ չեն հարցնում՝ ի՞նչ կուտեք դուք
Քընաթաթախ՝ առտեհան։
Չ. Չինարի, Պ. Պատատուկ,
Ջ. Ջրրկոտեմ, Ռ. Ռեհան։

Ս. Սերկևիլ, Վ. Վարդենի,
Տ. Տերեփուկ, Ց. Ցաքի...
Ո՞ւհ, մարդ քարից պիտի լինի,
Ձեր մեջ գրլուխ կրճաքի։

Փ. Փրրփրրուկ, Ք. Քարասոխ
Օ. օֆ, պրրծանք վերջապես...

Դե գնացեք, վաղը կգաք
Անգիր արած չքրի պես։—

Ու հավաքած թիթեռ, ճանճ, բոռ,
Մրժեղ, մրրջյուն, մրլակ, մոծակ,
Վարպետ Բրգեզն ամառն էսպես
Դաս էր տալիս մի ծառի տակ։

# ՊՈԵՄՆԵՐ

Վ. ԺՈՒԿՈՎՍԿԻ

## ԱՔԻԼԼԵՍ

Միգում կորավ Իգա սարը,
Մրոայլվեցավ Տրովադան,
Լուռ է ռազմի հարթավայրը,
Քընած բանակն Ատրիդյան։
Խաղաղ են շուրջ։ Առկայծում են
Խարույկները բանակի,
Երկա՜ր ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մեկ մեկի։

Ծագեց պայծառ լուսնեղջյուրը
Ծովի վրա էգեյան,
Բարձրը ափերն ու աստղերը
Ծովի խորքում ցոլացան։
Դատարկ դաշտում երևում է
Մենակ կառքը Պրիամի.—
Տանում է իր Հեկտորի դին
Գոռ բանակից հույների։

Ահա կանգնեց ծովի ափին
Աքիլլեսը ահարկու.
—Ընկավ, ծերո՛ւկ, քո Հեկտորը,
Հանգավ լույսը քո հոգու։
Անդրոմաքեն ու Հեկաբեն

Դարպասներում անդադար
Քեզ են մընում... դարձիդ բոպեն
Կյանք կամ մահ է նրանց համար։

Եվ տրխրաբեր արշալուսին
Կը բուրի խունկ հաշտարար,
Թաղման երգով կը հեծեծեն
Ամեն մի տուն ու տաճար։
Հայր, մայր, այրի մաղթանքներով
Սափոր կածեն թանգ փոշին,
Ու, դրժոխքում, աղոթքներով
Հանգիստ կը տան հերոսին։

Խե՜ղճ ալևոր, խոնարհեցիր
Գլուխդ իմ առաջին,
Եվ այս ձեռքը համբուրեցիր,
Որ լաց տրվավ քո աչքին...
Որդուդ մասին էր քո աղերս.
Օ՜, մի՛ տրտմիր, ալևզարդ,
Մի բախտ վրհռեց երկինքը մեզ,—
Ինձ էլ ընկճեց Արամազդ։

Մոտ է ժամը. պատրաստած է
Նետը անգութ օրհասի,
Եվ պարկուհին ընդհատել է
Արդեն օրերն իմ կյանքի։
Ճրագընչում է դժոխքի դուռը,
Գուժում է ձայնն ահռելի.
— Վերջացա՜ծ է. հանգավ ջահը
Պելիդեսի օրերի...

Ո՜վ, այս ափից ետ չի գալու
Եվ քու որդին անվրնաս.
Շուտո՜վ, շուտով պիտի և դու,
Ո՛վ Պիլեոս, որբանաս։



Կանցնի ռազմի արհավիրքը,
Աքիլլեսիդ կը սպասես,
Կը զարդարես արքունիքը՝
Շուք ու փառքով ընդունես։

Մրտիկ կանես դատարկ ծովին
Ափից տրխուր ու տրտում,
Թե չե՞ն գալիս արդյոք նավեր,
Առագաստ չի՞ երևում...
Նավեր կը գան Իլիոնից,
Ես չեմ լինի ոչ մեկում,
Ես չեմ զարթնի մահվան քընից,
Ու կը մընամ այս հովտում...

Իզուր վերջին տագնապի մեջ
Դու քո որդուն կը խնդրես
Ու կարկամող բազուկներով
Նրան կողքիդ կը փընտրես։
Սիրած երկրից ժամն անչատման
Չի քաղցրացնիլ նա այն օր,
Ու մինչ ափերն մոռացության
Չի տարածվի ձայնը հոր։

Իմ հայրենի՜ք, վրեժիս ջրե՜ր,
Ջրքնա՜ղ վայրեր հարազատ,
Եվ ձիթենիք ու դափնիներ,
Հովիտների շուք ու զարդ,
Ճոխ ծաղկեցե՛ք, փթթեցե՛ք,
Ինչպես առաջ, անընման,
Ինչպես առաջ—միշտ թընդացե՛ք
Միայն ձայներով խրնդության։

Բայց Աքիլլես ու Պատրոկլես
Էլ չեք տեսնի դուք բնավ...
Սպերքի ջրե՜ր, բազուկս ձեզ

Գլխիցս մաղ խոստացավ,
Բայց գլուխքս փոթորկալի
Պատերազմում ահագին
Պատրոկլնտին ես զոհեցի,—
Էլ չըսպասեք իմ տուրքին։

Պատրաստել է նետը արդեն
Ապոլոնը անողոք,
Ըսպասում է նոր եկվորին
Քարոնը սև Ստիքսի մոտ։
Եվ ափերից մռռացումյան,
Պատրոկլեսը գիշերով
Եկավ ինձ մոտ թեթև՜, անձա՜յն,
Որպես երազ, թրռչելով։

Որպես շունչը մեղմ զեփյուռի
Նա շշշընջաց ինձ վերա,
Նրա ձայնը ես լըսեցի,
Վեր նայեցի ու տեսա՝
Քընքույշ դեմքին հետք արտասրի
Եվ անչատման խորին ցավ...
Ձեռքքս իրեն տարածեցի...
Դատարկ մրթնում չըքացավ...

Սկյուտաից Նեոպտոլեմ
Դեպի հեռուն կը լողա,
Մի անծանոթ ափ կը տեսնի
Կանաչ բըլրակն իր վերա։
Նավավարը այնժամ կասի՝
Դարձած կողմը բըլրակի.
«Ահա շիրիմն Աքիլլեսի,
Այն էլ տեղն է բանակի...

Այնտե՞ղ, պարսպից նա գիշերով
Երևում էր մեզ ահեղ,



Անտանելի հուրն աչքերում,
Սաղավարտով ճաճանչեղ.
Եվ հոակի որոտալով,
Ահ էր ազդում քաղաքին,
Ու Տրոյացին գունատ դեմքով
Ձենքը ձրգում էր գետին։

Այնտե՞ղ ձեռքը Ատրիդեսին
Տալով դաշը հաստատեց...
Այնտե՞ղ կառքով նա մոլեգին
Քաղքի վրա հարձակվեց...
Այնտե՞ղ հողում իր ետեւից
Քարշ տվավ դին Հեկտորի,
Հառնց աչքերն ըսպառնալից
Վերան լըքած Տրոյի...

Ու իր նավից Նեոպտոլեմ
Կիջնի ափը սըրբաղան,
Որ միայնակ բըլրի վերա
Դընի և՛ սուգ, և՛ վահան։
Շուրջը արդեն դատարկվել է...
Խաղա՞ղ Սիմուս ու Քսանտ,
Թաղեզ ու վուշ պատատել են
Տրովադային քարուքանդ։

Կանցնես դաշտը պատերազմի,
Ուր Աքիլլեսն է կըռված,
Կը տեսնես հորանն երեների
Շիրմաց շուրջը մռռացված.
Ու քեզանից վերև հանկարծ
Կը լըսես ձայն թևերի...
Մենք կը լինենք—թև թևի տված,
Ընկերներքս հին օրերի...

Այնժամ հիշիր Աքիլլեսին.
Երկրից արագ նա անցավ.

Թախտը նրան անփառունակ
Այստեղ մի դար խոստացավ,
Բայց, մերժելով դատարկ կյանքը,
Փառքի բոպեն ընտրեց նա,
Ու ընկերի համար մեռավ,
Հավատարիմ մինչև մահ։

Լրռեց Աքիլլ... Մութն է Իդան,
Իլիոնը դեռ տրխուր,
Քընած բանակը Ատրիդյան,
Պատերազմի դաշտը լուռ։
Ու ծրխալով առկայծում են
Խարույկները բանակի,
Երկա՞ր ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մեկ մեկի։

---

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

## ՄԾԻՐԻ

*Ճաշակելով ճաշակեցի զսպակաւ մի մեղր,*
*և ահա մեռանեցիմ ես։*

Ա. գիրք թագ.

I

Սրբանից առաջ մի քանի տարի,
Այնտեղ, ուր Արագվ ու Կուր գետերի
Ջրերն աղմուկով խառնվում իրար,
Գրրկվում են երկու քույրերի նման,
Կար մի մենաստան։ Կարող է այժմ էլ
Անցորդը սարի ուսերից տեսնել
Քանդված դռների կանգուն սյուները,
Վանքի կամարն ու աշտարակները։
Բայց անուշահոտ ծուխը բուրվառի
Էլ չի վերանում կամարի տակին
Եվ ոչ լսվում է աղոթողների
Երգը դիշերվա ուշ ժամանակին։
Այժմ մեն-մենակ զառամյալ մի ծեր,
Ավերակ վանքի պահնորդ կիսամեռ,
Ընկած մտքիցը մարդկանց ու մահի,
Սրբում է փոշին շիրմաքարերի,
Որոնք պատմում են անցած դարերի,
Անցած փառքերի ու նրա մասին,
Թե ինչպես ճնշված իր թագի տակին,
Այս ինչ թագավորն, այս ժամանակին
Իր ժողովուրդը հանձնեց ռուսին։

Մի ռուս գեներալ, Կովկաս լեռներից
Մի անգամ դեպի Թիֆլիս էր գալիս։
Իր հետ նա զերի մի մանուկ ուներ.
Սա տրկարացավ, չը կարաց տանել
Նեղությունները հեռավոր ճամփի։
Հազիվ թե լիներ հինգ վեց տարեկան,
Այծեմնիկի պես երկչոտ, վայրենի
Եվ թույլ ու ճրկուն եղեգնի նըման։
Սակայն նրա մեջ ցավը տանջալի
Զորացրեց այնժամ իրեն հայրենի
Աննկուն հոգին։ Վիշտը լուռ տանում,
Եվ իր մանկական տրկար շըրթունքից
Մի թույլ հառաչանք նույնիսկ չէր հանում։
Հացը նըշանով մերժում էր նա դեն
Ու խաղաղ, հպարտ մեռնում էր արդեն։
Կարեկցությունից մի ծեր վանական
Նըրան խնամեց, ավով սպասուան.
Ու այսպես՝ վանքի հարկի տակ մնաց
Բարեկամական ձեռքով ազատված։
Բայց, զուրկ մանկական զըվարթ հաճույքից,
Փախչում, խորշում էր նա ամեն մեկից.
Թափառում էր լուռ, մենակ, սրտաբեկ,
Թառանչելով նայում դեպի արևելք,
Մաշվելով մի լուռ, անմեկին վըշտից—
Իրեն հայրենի երկրի կարոտից։
Գերության սակայն շուտ ընտելացավ,
Օտարի լեզուն քիչ-քիչ հասկացավ.
Հայը սուրբը կընքեց, տըվավ սուրբ հաղորդ,
Ու դեռ աշխարհքի կյանքին անծանոթ,
Ուզում էր արդեն ծաղիկ հասակում
Աբեղայական ընդունել կոչում,
Երբ որ մի անգամ աշնան գիշերով
Անհետ չըքացավ։ Շուրջը սարերով



Զըգվում էր անծայը անտառը մըթին։
Երեք օր այնտեղ իզուր փընտրեցին
Վերջապես դաշտում անբզդա դտան
Ու առան կըրկին բերին մենաստան։
Նա սաստիկ գունատ, թույլ էր ու նիհար.
Կարծես աշխատել, տանջվել էր երկար,
Կամ հիվանդություն ու սով էր քաշել։
Ոչ մի հարցմունքի չէր պատասխանում,
Օրն օրի վրա ընկնում էր, թառամում.
Այսպես մոտեցավ ժամը իր մահվան։
Այնժամ նըրա մոտ եկավ աբեղան
Եվ հորդորելով, և աղերսելով։
Հիվանդը հպարտ նրան լըսելով,
Նըստեց, մընացած ուժը հավաքեց,
Ու այսպես երկա՜ր խոսել սկսեց.

## III

«Գոհ եմ քեզանից, հայը սուրբ, որ եկար
Իմ խոստովանքը լըսելու համար։
Ինչ էլ որ լինի, լավ է, որ ցավոտ
Սիրտս դատարկեմ խոսքով մեկի մոտ։
Սակայն ես մարդկանց չարիք չեմ արել,
Իմ արարքները նորա համար էլ—
Ի՞նչ օգուտ եթե խոստովանեի.
Իսկ հոգին մի՞թե պատմել կըլինի...
Ես քիչ եմ ապրել և այն էլ գերի.
Այսպես երկու կյանք մի աղմըկալի,
Եռուն կյանքի հետ, որ տեսել եմ, ծե՛ր,
Ես կը փոխեի թե հընար լիներ։
Ես լոկ մի մըտքի ուժ եմ իմացել.
Մի՛, քայլ բոցավառ կիրք եմ ունեցել,
Նա ինչպես մի որդ ապրել է իմ մեջ,
Կըրծել է հոգիս, մաշել մինչև վերջ։
Իմ ցնորքները թոցրել, տարել է

Այս նեղ խցերից անդորր աղոթքի
Այն վեհ աշխարհը կրովի, աղմուկի,
Ուր որ ժայռերը թաքչում ամպերում,
Ու մարդիկ այնպե՞ս ազատ են ապրում...
Ես իմ այդ կիրքը պիշերվա մթնում
Պահել եմ վրշտով, արցունքով սրնել.
Եվ այժմ ահա բարձրաձայն հայտնում,
Խոստովանում եմ առջև աշխարհքի,
Ու թաղուիյուն էլ չեմ խնդրում իսկի։

IV

«Մերո՛վ, շատ անգամ իմացել եմ ես,
Որ դու իմ կյանքը մահից փրրկել ես։
Ինչո՞ւ փրրկեցիր։ Մենակ ու դաժան,
Փոթորկի պոկած տերևի նման,
Մրոալլ պատերի միջում մեծացա,
Հոգով դեռ մանուկ, կյանքով արեղա։
Չը կարողացա ոչ ոքի ասել
«Հայրիկ» ու «մայրիկ» սրբազան խոսքեր։
Հարկավ, քո միտքը այն էր, ծերունի՛,
Որ մենաստանում ես խորթանայի
Այնքան քաղցրալի այս անունների։
Զո՞ւր. հետքս են նրանց ձայները ծընվել։
Ես տեսնում էի, որ ուրիշներին
Հայրենիք, ընկեր, ծնող ունեին,
Մինչդեռ չունեի ես նրանց նման
Ոչ թե սիրելիք—այլև գերեզման։
Ու էլ այն օրից իզուր չողբացի.
Այլ հոգուս միջում այսպես ուխտեցի,
Որ երբեիցե, թեկուզ մի վայրկյան,
Այս իմ բոցավառ կուրծքը մանկական
Սեղմեմ կարոտով մի ուրիշ կրրծքի,
Թեկուզ անծանոթ—միայն հարազատի։
Բայց, ավա՜ղ, հիմա երազներքս այն



Կորել են իրենց պերճանքով համայն,
Ու՝ ինչպես օտար երկրում ապրեցի՝
Մեռնում եմ դարձյալ ես որբ ու գերի։

V

«Ինձ չի վախեցնում գերեզմանն ահեղ,
Տանջանքն, ասում են, հանդչում է այնտեղ
Սառն, հավերժական լռության միջում։
Կյանքից զրկվելն է ինձ մենակ տանջում։
Ջահե՛լ եմ, ջահե՛լ... ունեցե՛լ ես դու
Ցնորմունքները անհոգ պատանու։
Դու չես ունեցել կամ չես հիշում էլ,
Թե-ոնց ես մի օր ատել ու սիրել,
Ինչպես է սիրտդ բաբախել ուժգին
Կանաչ դաշտերին, վառ արեգակին
Անկյունի բարձրը բուրգից նայելիս,
Ուր թարմ է օդը, և ուր մերթ գալիս
Ու բարձր պատի խորունկ ճեղքվածքում,
Բուքից վախեցած, կուչ եկած նստում,
Պատրսպարվում է փոքրիկ աղավնին—
Ջրքնաղ զավակը անհայտ աշխարհի։
Ուր մընաց՝ արդեն զառամ ես, թույլ ես,
Սիրուն աշխարհը կըշտացրել է քեզ.
Սրտամդ անկատար էլ չունիս ըղձեր...
Էլ ի՞նչ ես ուզում, ապրել ես դու, ծե՛ր,
Աշխարհքում ունիս մոռնալու մի բան.
Չէ՞ որ կապրեի ես էլ քեզ նման...

VI

«Կուզե՞ս իմանալ՝ ազատության մեջ
Ես ինչեր տեսա.—դաշտեր տեսա պերճ.
Բլուրներ տեսա, ուր կանաչ ծառեր,
Ինչպես շուրջպարի բռնած եղբայրներ,
Չորս կողմից դալար պրսակ կապելով
Շըշընջում էին թարմ խրմբակներով։

Տեսա դեղերը մրոայլ ժայռերի,
Երբ բաժանում էր վրտակը նրանց,
Նրանց մտքերը հասկանում էի, —
Վերևից էր այն շնորհքն ինձ տրված։
Վաղո՜ւց, շատ վաղուց օգում տարածված
Այն քարե գրկերն ամեն մի վայրկյան
Փափագում են լոտ իրար հանդիպման,
Բայց օրեր անցնում, տարիք են անցնում,
Ու նրանք երբե՜ք իրար չեն հասնում...
Բարձրը լեռների շարքեր տեսա ես
Վեհ, հրաշալի ցընորքների պես,
Երբ արշալույսի ժամին վաղորդյան
Նրանց գագաթները սեղանի նման
Ծիում են հանդարտ կապույտ երկնքում,
Ու ամպը ամպի եռևից ձրգվում,
Թողնելով գաղտնի իր օթևանը,
Ինչպես տարադնաց ըսպիտակ հավքի
Հեռու կողմերից շրվող երամը
Ուղղում է իր շուն կողմն արևելքի։
Անոսր մշուշի արանքից, հեռվում,
Դոհարի նման փայլող ձյուներում,
Տեսա ալեոր Կովկասն անսասան.
Եվ ես չը գիտեմ թե ընչից էր այն,
Բայց թեթևացավ սիրտս նույն ժամայն.
Ըսկսեց գաղտնի մի ձայն ինձ ասել,
Թե երբեմն այնտեղ ապրել եմ ես էլ...
Ու հետզհետե բացվեցավ խավար
Անցյալն իմ մտքում պայծա՜ռ ու պայծա՜ռ...

## VII

«Եվ ես հիշեցի մեր տունն հայրական,
Հիշեցի մեր ձորն ու իր շրջական
Շրվաքում ցրված գյուղի տները.
Լսեցի րիկվան ձեն ու ձուները
Դեպի տուն վազող երամակների,



Հեռու հաչոցը ծանոթ շների։
Միտս եկան թուխ-թուխ ծերունիները.
Լուսնյակի լուսով իրիկունները
Իմ հոր սրտահի, շեմքի դեմուդեմ
Նստոտած խոհուն ու խոժոռադեմ.
Ու խանչալների պզընձապատած
Պատյանների փայլն... ու բոլորն հանկարծ
Խառը շարքերով, երազի նման
Աչքիս առաջից եկան անցկացան։
Հապա իմ հա՜յրը. պատերազմական
Իր զգեստներով, ինչպես կենդանի
Աչքիս երևաց, ու միտս եկան
Ջրահի շռինդ, փայլն հրրացանի,
Նրա հայացքը հպա՜րտ, անկո՜ծ,
Եվ իմ քույրերը մատա՜ղ, սիրատ՜ն...
Շողերը նրանց աղու աչքերի
Եվ հնչյունները երգի, խոսքերի,
Որ ասել էին օրրանիս վրա...
Այն ձորի միջով վտակ էր վազում,
Աղմկող էր նա, սակայն ոչ խորին,
Նրբա ոսկեգույն մանրիկ ավազում
Խաղալու էի գընում կեսօրին,
Եվ նայում էի ալքերքս հառած,
Երբ ալիքներին, անձրևից առաջ,
Դիպչում էր թեով սև ծիծեռնակը։
Հիշեցի և մեր խաղաղ տնակը,
Օջախի առջև իրիկունները
Արած այն երկար պատմությունները,
Թե ոնց Ե՛ն ապրել մարդիկ վաղեմի,
Երբ դեռ աշխարհքը ճոխ էր ավելի։

## VIII

«Կուզե՞ս իմանալ, թե ես ինչ արի
Այն երեք օրում։— Աղատ ապրեցի,
Եվ կյանքըս առանց այն երեք օրի

Քո ուժից ընկած ծերությից էլ դեռ
Ավելի ուրժգույն, ուրախալի կըլիներ։
Մտքումըս վաղո՞ւց, վաղուց դրել եմ՝
Միանգամ արձակ դաշտերին նայեմ,
Տեսնեմ՝ աշխարհը սիրո՞ւն է արդյոք,
Ինչո՞ւ ենք, տեսնեմ, դալի մենք աշխարհ,
Ազատ ապրելո՞ւ, թե բանտի համար։
Եվ այն գիշերվա սոսկալի ժամին,
Որոտմունքն երբ որ վախեցրել էր ձեզ,
Սեղանի առջև երբ որ խրմբովին
Ընկել էիք դուք խրոնրված այնպես,
Ես վանքից փախա։ Օ՜, ինչպես եղբայր,
Կուզեի գըրկել մըրրիկն հողմազայր.
Աչքերս ամպերի ետևից տանում,
Ձեռքով շանթ էի բռնել ցանկանում...
Դե՛ ասա, հայրի՛կ,
Ինձ այս պատերում ի՞նչ պիտի տայիք
Իմ փոխարկալի սրրտի և ահեղ
Եվ որոտմունքի մտերմության տեղ...

## IX

«Երկար վազեցի, թե ուր կամ որտեղ,
Այդ ես չըգիտեմ։ Եվ ոչ մի աստըղ
Իմ դժվար ճամփան չէր լուսավորում։
Միայն բերկրությամբ շտնչ էի առնում
Իմ վաստակաբեկ ու հոգնած կրծքով
Այն անտառների թարմությունը զով։
Երկար վազեցի. վերջապես հոգնած
Բարձրը խոտերում ընկա ու պառկած
Ականջ դրրի ես. հետևող չկար։
Որոտմունքն ընկավ. լույսը մի երկար
Տժգույն ու դալուկ շերտով բացվելով
Ձգվեց երկնքի—երկրի արանքով,
Եվ ներա վերա ես ոռոշեցի



Սուր ժանիքները հետու լեռների։
Անձայն ու անշարժ ես պառկած էի,
Երբեմն-երբեմն շախկալը կիրճում
Երեխի նըման լալիս էր. հըչում,
Եվ, հարթ ու փայլուն թևերով փայլելով,
Սողում էր օձը քարերի միջին.
Չէր ճնշում սակայն երկյուղն իմ հոգին.
Ես էլ գայլի պես խորթ էի մարդոց,
Եվ սողում էի, թաքչում ինչպես օձ։

## X

«Ներքև անդընդում, ինձանից շատ ցած,
Ջուրը հեղեղից սաստիկ հորդացած,
Աղմըկում էր խուլ, ինչպես բարկացած
Մարդկային խոսուն ձայներ անհամար։
Թեպետ և անխոսք—սակայն ինձ համար
Պարզորոշ էր միտքն այն խոսակցության,
Անլուռ աղմուկը, վեճն հավերժական,
Հարվածը համառ ժայռերի կուլտին։
Մեղմանում էր նա ու դարձյալ ուժգին
Խաղաղ ձորի մեջ հանկարծ սրոտում,
Եվ ահա վերև մատնալոտ օդում
Հավքերն երդեցին։ Արևածագի
Երկինքը շիկնեց։ Մի թեթև քամի
Նամ տերևները շարժեց ու դնաց
Ու ծաղիկները շընչեցին քնած.
Նրանց պես օրին դիմավորելու
Ես էլ դրլուխս բարձրացրի վերև...
Մըտիկ արի ցած ու չեմ թաքցընում,
Սարսափն ինձ պատեց.—անհատակ ու սև
Անդունդի եզրին էի ես պառկած,
Ոռնում էր ներքև ջուրը փրփրած։
Այնտեղ է տանում ժայռը իջնելով,

Բայց չարը մենակ իջավ նրանով,
Երբոր երկնքի բարձրից գահավեժ,
Կորավ սատրին էն մութ վրհի մեջ։

## XI

«Ծաղկում էր շուկեղը Եդեմն արարչի.
Ջրվարթ ու դալար զարդը կանաչի
Պահպանում էր գեռ արցունքն երկնային.
Եվ խոպոպները իաղոդի որթի
Ծառերի միջով գալարվում էին
Պճնած կանաչով քնքուշ սաղարթի.
Իսկ նրանց վրա ճոխ կախված էին,
Ինչպես ականջի գինդեր թանկագին,
Լիք ողկույզները, և մերթ նրանց մոտ
Թռչում էր հավքի երամը երկչոտ։
Ու նորից գեռնին կրպա ես մին էլ
Նորից սկըսա ես ականջ դընել
Այն սատրոսի թավիշ ձայներին.
Նրանք թփից թուփ ծըլվըլում էին
Ու խոսում էին կարծես միասին
Երկնքի-երկրի գաղտնիքի մասին։
Այնտեղ բնության ձայները բոլոր
Միացած էին։ Այն հանդիսավոր
Փառաբանության երգի ժամանակ
Մարդու դռռ ձայնը չէր լսվում մենակ։
Ինչ որ այն ժամին զգում էի ես,
Անհետացել են մտքերս այն բոլոր,
Բայց կուզենայի պատմել նրանց քեզ,
Որ դանե մտքով ապրիմ նորից նոր։
Այն առավոտը կամարն երկնքի
Այնքան էր հստակ, որ հրաշտակի
Ճախրը սուր աչքը տեսնել կարող էր.
Այնքա՜ն թափանցիկ ու այնքան խոր էր,
Այնքա՜ն էլ լեցուն ջինջ կապուտակով,



Որ ես նրա մեջ հայացքով, հոգով
Սուզվեցի, կորա, մինչև իր շոգով
Իմ ցնորքները կեսօրը ցրվեց,
Ու ինձ ծարավը տանջել սկսեց։

## XII

«Այնժամ բռնելով ճկուն թփերից,
Դեպի հեղեղատն անդունդի եզրից,
Մի սալից մի սալ, որքան ուժըս կար
Սկըսա իջնել։ Նրբեմբեն մի քար
Ոտներիս տակից պոկվելով հանկարծ,
Գլորվում էր ցած։
Թռչում էր նեքև դղորդ հանելով,
Նուռից ակոս, փոշի անելով
Ու կուլ էր գնում ջրի ալիքին։
Ես կախված էի—անդունդն իմ տակին։
Բայց ջահելությունն ուժով է լինում,
Մահվան երկյուղը ինձ չէր վախեցնում։
Հենց իջա տակը այն սեպ-սեպ ժայռի,
Նրեսիս փըշեց լեռնային ջրի
Զով թարմությունը, և իսկույն ագահ
Նրա սառնորակ ալիքին ընկա։
Հանկարծ մի շըշուկ, ոսկեձայն թևեր...
Իսկույն թաքչելով թփերի ետև,
Ամբողջ բռնված ակամա դողով,
Իրկչոտ հայացքս վեր քաշած վախով
Ես ականջ դընել սկսա ագահ...
Եվ մոտենալով հընչում էր ահա
Մատաղ վրացուհու ձայնը պատանի,
Այնպե՜ս բնական, այնպե՜ս կենդանի,
Այնպե՜ս քաղցր, ազատ, որ կարծես թե նա
Սիրելի մարդկանց անվան հընչյուններ
Միայն կանչելու սովորած լիներ։
Այն մի հասարակ երգ էր լեռնային,

Խոր տպվեց սակայն իմ մտքի միջին,
Եվ իմ ականջին—հենց մութն ընկնում է —
Մի անանս-անհայտ ոգի երգում է։

## XIII

«Սափորն ուղիղ բռնած ուսին
Նեղ շավիղով վերացումին
Ջուրն էր իջնում։ Երբեմնակի
Քարերի մեջ սայթաքում էր նա
Միմազելով իրեն վրա։
Այնպես աղքատ ու պարզ հագած,
Շղարշի ծալքերն ետև ձգած,
Թեթևաքայլ գընում էր նա։
Թեժ արևը, շոգն ամառվա
Նրա դեմքն ու կուրծքն այրելով
Պատել էին ոսկի սավելով։
Տաք էր շնչում գեմքը բոլոր,
Եվ աչքերի մութն այնքա՜ն խոր,
Այնքա՜ն սիրո գաղանիքով լի,
Որ մտքերըս փոթորկալի
Շրփոթվեցին։ Հիշում եմ խոր,
Կրժի ձայնը, ջուրը երբ որ
Մեջն էր թափում մեղմաքրքիջ,
Ու սոսափյունն... ուրիշ ոչինչ։
Երբ որ ուշքի եկա կըրկին,
Ու ետ քաշվեց սրտիս արինն,
Արդեն շատ էր նա հեռացած,
Ու գնում էր թեթև, կամաց.
Շիտակ իրեն բեռան տակին,
Որպես դաշտի շըքեղ բարդին...
Մի բիչ հետու, սառը միդում,
Որպես ընկեր, ժայռի գըրկում
Բուսել էին երկու տընակ.
Հարթ կըտուրի վրայից մեկի



Ծուխն ելնում էր կապուտակ։
Ես տեսնում եմ այժմ էլ, ասես,
Ինչպես նրբա դուռը բացվեց
Ու կամացուկ փակվեց դարձյալ...
— Դո՛ւ, ես գիտեմ, չես հասկանալ
Իմ տխրությունն, իմ վիշտն անհաս.
Եվ կը ցավեմ թե հասկանաս.
Թող հիշատակն այն վայրկենի
Ինձ հետ, իմ մեջ մընա—մեռնի։

## XIV

«Հոգնած գիշերվա նեղություններից
Ընկա սավերում։ Շուտով սիրտիս
Քունը աչքերըս փակեց ակամա
Եվ ես մյուս անգամ երազում տեսա
Ցրքնաղ պատկերը այն վերացումի,
Եվ մի անսովոր, դյուրեկան թախիծ
Անուշիկ ճմլեց իմ սիրտը նորից։
Ճիգ էի անում, որ մի շունչ քաշեմ,
Հանկարծ արթնացա։ Արդեն երկնքում
Փայլում էր լուսինն, ու մենակ մի ամպ
Սողում էր նրա նուրբ թաթուն,
Բաց արած իրեն գիրկն ագահությամբ.
Կարծես թե իրեն տրամ լիներ էն։
Լուռ էր ու խավար աշխարը համորեն.
Գագաթները միայն ձյունոտ սարերի,
Ինչպես արծաթյա ծոպեր ահռելի,
Պըսպղում էին առաջիս—հեռվում.
Հեղեղատը խուլ ճողփում ափերում։
Ծանոթ խրհիթում մերթ պայծառ վառվում
Ու մերթ հանգչում էր աղոտ մի կրակ։
Այնպես է հանգչում գիշեր ժամանակ
Պայծառ աստղիկը երկնքում փայլող։
Ես ուզում էի... բայց չէի կարող

Ես այնտեղ մտնել։ Ես այն ժամանակ
Հոգոմս ունեի լոկ մի նպատակ—
Հասնել հայրենիք. ու համբերեցի
Քաղցի, ծարավի, որքան կարացի։
Եվ ահա անձայն ու երկչոտ ընկա
Ես ուղիղ ճամփա։
Բայց շատ չքաշեց, անտառի խորքում
Սարերը դարձյալ աչքիցս ընկան,
Ու ցսկսեցի կորցընել ճամփան։

## XV

«Անդուսպ կատաղած երբեմն իղուր
Պակ էի տալիս ես հուսակտուր
Իրար խրճրճված բաղեղ ու մացառ.
Շուրջս անտառ էր, անեզրը անտառ,
Հեռահետ խոր, խիտ ու ահռելի.
Եվ բազմաթյունով սև սև ոչխերի
Գիշերվա մութը հետևում էր ինձ
Ամեն մի թրփիր, ճյուղի արանքից։
Գրլուխս սկսավ արդեն պլտորել.
Ծառեր բարձրացա, ուզեցի դիտել,
Բայց մինչև անգամ երկնի եզերքում
Նույն ժանիքավոր անտառն էր ձգվում։
Այնժամ հուսահատ վայր ընկա կրկին,
Հեկեկում էի, լալիս դառնագին
Ու հողի խոնավ կուրծքն էի կրծում.
Արտասանքներս վայր էին հոսում
Նրա երեսին տաք ցողի նման...
Բայց հոժար չէի մարդոց օգնությամբ.
Խորթ էին ընդմիշտ ինձ համար մարդիկ։
Եվ եթե հանկարծ կարճատև մի ճիչ
Ինձ դավաճաներ, գիտցի՛ր, ծերունի՛,
Լեզուս արմատից պետք է պոկեի։



## XVI

«Մանուկ ժամանակ, քո մի՛տն է գալիս,
Ես չըգիտեի երբեք արտասվել,
Բայց այնտեղ չէի ամաչում, լալիս։
Ո՞վ էր տեսնելու.—մըթին ծմակը,
Մին էլ երկնքում սահող լուսնյակը։
Լուսավորված նրա լուսով,
Ծածկված մամռով ու ավազով,
Խիտ ծրմակով շրջափակված
Բացատն էր իմ առջև ընկած։
Հանկարծ այնտեղ անցավ մի աստվեր,
Ու հրեղեն երկու կայծեր
Պըսպղացին... ապա թե այն
Մութ թավուտից ինչ որ գազան
Մի ոստյունով թռավ, պառկեց,
Ավազի հետ խաղալ սկսեց։
Այն անապատի մշտական տերը—
Հուժկու հովազն էր։ Հում-հում ոսկորը
Կրծոտում էր նա, ուրախ մրմռում,
Երբեմն արյունոտ հայացքը հառում
Ու փաղաքշաբար պոչը շարժելով
Նայում լրացած լուսնյակի վրան,
Ու փայլում էր մաղն արծաթի նման։
Սպասում էի ես մի ճյուղ բռնած
Կռվի վայրկենին. ու սիրտս հանկարծ
Բորբոքվեց արյան, կռվի ծարավով...
Հա՛, բոլորովին այլ ճանապարհով,
Այլ շավիղով էր ինձ բախտը տանում,
Բայց համոզված եմ, որ մեր աշխարքում
Ես էլ կրլինեի քաջերի շարքում։

## XVII

«Սպասում էի։ Արդեն դիշերվա
Մըթնում թշնամու հոտն առել էր նա,

Ու մանչյունը երկա՞ր, սրրտահեծ,
Որպես հառաչանք հանկարծ սարսռվեց...
Ավազը թաթով կատաղած փորեց,
Ծառս եղավ, հետո փորքսոզ արեց,
Ու մի ցատկելով սակավ էր մընում
Իսկույն ինձ մահի բաժին էր անում.
Բայց հանդիպեց իմ հարվածին։
Ծանրը ճյուղը ինչպես կացին
Ճեղքեց նորա ճակատը չայն...
Նա հառաչեց մարդու ցեման
Ու շուռ եկավ։ Սակայն նորից,
Թեև նորա խոր վերքերից
Հոսում էր հորդ արյունն այնքան—
Վառվեց կռիվն օրհասական։

## XVIII

«Ընկավ կրծքիս. բայց շտապով
Նորա կակորդն ես կոխեցի,
Երեք անգամ պրատեցի
Միակ պենքես... Նա հառաչեց,
Իրեն բոլոր ուժն հավաքեց,
Ու մենք, ինչպես օձեր, կըպած,
Ընկերներից ամուր գըրկված
Գլորվեցինք, ու խավարում
Գետնի վրա էինք կըռվում։
Այն վայրկենին ես էլ էի
Ինչպես հովազ չար, կատաղի.
Ես վառվում էի, ժնգժնվում իր պես.
Ես ինքս էլ ծնված լինեի կարծես
Հովազների ու գայլերի միջին,
Թարմ անտառների հովանու տակին։
Մարդկային բարբառն, այնպես էր թվում,
Մոռացել էի, և հենց իմ կրծքում
Այն սարսափելի կռինչն էր ծնվել,



Կարծես թե լեզուս ծնրնգից ի վեր
Ուրիշ ձայների անսովոր լիներ...
Բայց իմ թշնամին սկսավ թուլանալ.
Դես-դեն երերալ ու ծանրը հեալ.
Վերջին անգամ հուպ տվավ ինձ,
Կանգնած աչքերն սպառնալից
Փայլփլեցին, ապա հանգան
Թակված քընով հավերժական։
Բայց հաղթանակող թշնամու առջև
Հրպարտ հանդիպեց նա իր օրհասին,
Ինչպես վայել է կռվում հերոսին...

## XIX

«Իմ կրծքի վրա տեսնո՞ւմ ես դեռ նոր
Նորա ճանկերի հետքերը խոր-խոր.
Չեն աստղչացել նրանք տակավին,
Դեռ չեն ծածկվել, բայց հողի տակին
Նորից կըբացվեն ու կը թարմանան,
Ու կառողջացնի մահը հավիտյան...
Սոսացել էի ես այնժամ նրանց,
Ու իմ մնացած ուժը հավաքած
Գնում էի միշտ թափառ անտառում...
Սակայն բախտիս հետ դուր էի կռվում—
Նա ծաղրում էր ինձ ու արհամարհում։

## XX

«Դուրս եկա կրկին բերանն անտառի.
Օրը բացվեցավ, տրժգույն ասաղերի
Բույլը շրթացավ նորա շողերում։
Ըսկսավ ծրխալ առլը հեռվում
Ու մութ անտառը շրրշել արթնացած։
Ներքև հովիտում հոգմի հետ հանկարծ

Մի ժրխոր անցավ... վրա նստեցի.
Բայց նա հողմի հետ լրեց վերատին։
Իմ շորս կողմերը ես աչքս ածի.
Կարծես այն տեղերն ինձ ծանոթ էին։
Սարսափելի էր այս միտքն ինձ համար,
Եվ չէի ուզում հավատալ երկար,
Թե կրկին բանտս եմ ես վերադարձել,
Թե այնքան օրեր զուր եմ մտածել,
Փայփայել գաղտնի միտքը նվիրական,
Տառապել, տանջվել, համբերել այնքան,
Ու բոլորն ինչո՞ւ.— տը այս հասակում,
Դեռ նոր բաց արած աչքս աշխարքում,
Թավ անտառներում շունչ ու կյանք առած,
Ազատ աշխարքի, կյանքի սովորած,
Ինձ հետ միասին տանեմ գերեզման
Այրող կարոտը սուրբ հայրենիքիս,
Խիստ նախատինքը խաբված հույսերիս
Եվ ամոթանքը ձեր կարեկցության...
Սակայն տակավին կասկածներով լի
Կարծում էի թե՝ երազում էի,
Երբ հանկարծակի խաղաղ օդի մեջ
Ջանգի զոդանջը հեռվից տարածվեց.
Այստեղ ինձ համար բոլորը պարզվեց...
Օ՛, ճանաչեցի իսկույն ես նրան.
Շատ է փախցրել նա իմ մանկական
Կարոտ աչքերից վառ երազներիս
Թանգ տեսիլքները,— հարազատներիս,
Ազատությունը վայրի դաշտերի,
Եվ նժույգները թեթև, կատաղի,
Եվ կռիվները ժայռերի միջին,
Ուր հաղթում էի մենակ ամենքին...
Անցաց, ուժասպառ լրում էի ես։
Սրտիս միջիցն էր դուրս գալի, ասես։
Կարծես թե մեկը անընդհատ զարկով
Ջարկում էր կրծքիս ծանրը երկաթով։



Եվ ես աճորոշ այնժամ հասկացա,
Թե այսուհետև դեպի հայրենիք
Երբե՞ք ինձ համար էլ ճամփա չը կա։

## XXI

«Հա՛, արժանի եմ վիճակիս, հայրի՛կ.
Հրպոր նժույգը օտար դաշտերում
Իր վատ հեծվորին վայր է գլորում,
Հեռու աշխարքից դեպի հայրենիք
Գոնում է ուզիղ ու կրճատ ուղի... ·
Ի՞նչ եմ նրա մոտ։—Զուր է սիրտս լի
Այսքան թախիծ, տենչ ու փափագ։
Այս ջերմ է լոկ թույլ ու դատարկ,
Ցնորքի մի խաղ, խելքի խանդաղում։
Ինձ վրա բանտը իրեն կընիքը
Թողել է արդեն... Այսպես է լինում
Անբույս խավարում բուսած ծաղիկը.—
Քարերի միջին դալուկ ու մենակ,
Թերթիկները փակ, երկար ժամանակ
Մընաց արևի շողերին զրվարթ։
Օրեր անցկացան, ու բարի մի մարդ
Կարեկցությունից հանելով նրան
Փոխեց մի պարտեզ, վարդին հարևան։
Ամենայն կողմից փարթամ ու շքեղ
Կյանքի քաղցրություն շնչում էր այնտեղ...
Բայց ի՞նչ դուրս եկավ. հենց օրը բացվեց,
Ու արշալույսի ցոլքը տարածվեց—
Նրա վառվռուն շողերն այրեցին
Խավարչտին բանտում սովորած ծաղկին...

## XXII

«Ինձ ես այնպես, ինչպես և նրան
Այրում էր տապը անողորմ օրվան։

Թզուր էի ես ծածկել աշխատում
Հոգնած գլուխս շորացած խոտում.
Փո՛ւշ պակի պես նրա տերևը
Խճճվում էր իմ ճակտիս վերևը,
Երկիրն երեսիս կրակ էր շնչում,
Ու պրսպղալով կայծերը օդում
Պտտվում էին։ Ելնում էր շոգին
Սիպտակ ժայռերից։ Ասածս աշխարքին
Կաշկանդել էր խուլ, գերեզմանական
Մանրը մրրափը հուսահատության։
Գեթ լորամարգին ճուլողեր, խոսեր,
Կամ թե ճրպուտի ճրռռոցը լսվեր,
Կամ թե մանկական թոթովն առվակի...
Հենց օձն էր մենակ, որ աշնան մարդի
Ցորացած խոտը դես-դեն շարժելով,
Դեղնավուն մեջքով փայլակտին տալով՝
Փխրուն ավազը ակոսում, տողում,
Զգույշ սողում էր, քնքշալով խաղում,
Նռակի ոլորում, օղ շինում ագին
Ու մին էլ, հանկարծ, կարծես թե շանթած
Իրեն նետում էր, թռչում սրընթաց,
Թաքչում հեռավոր թրփերի տակին...

## XXIII

«Ու ողջ երկնքում մեղմ էր ու պայծառ։
Մբշուշի միջից հեռվում երկու սար
Սևին էին տալիս։ Մեկի ետևից
Մեր մենաստանը ժանիքները ցից
Իրեն պարրսպով երևում էր ինձ։
Կուրն ու Արագվան ներքև, հովիտում
Իրենց արծաթյա երիզով պատում
Թարմ կրղզիների ստորտները,
Ու լրվանալով շրշուն թրփերը,
Սուր հոսում էին ընկած իրարու...



Նրանք ինձանից շատ էին հեռու։
Ասի վեր կենամ—սակայն առաջիս
Ամեն բան արագ պտույտ էր գալիս.
Ասի թե կանչեմ—լեզուս ցամաքած
Առանց հնչյուն էր, անշարժ, կարկամած...
Մեռնում էի ես։ Տանջում էր մահվան
Զառանցանքը ինձ։ Այնպես էր թվում,
Թե խոր գետի թաց հատակում
Պառկած էի—ու իմ բոլոր
Շուրջը մռայլ խորհրդավոր,
Եվ, հագեցնելով ծարավս անհագուրդ,
Ջրի հոսանքը, սառցի նրման ցուրտ,
Խոխոջ հանելով կուրծքս էր մտնում...
Ես միայն քնելուց էի վախենում —
Այնքա՞ն դյուրեկան, այնքան էր քաղցը...
Իսկ իմ վերևը, ինձանից բարձը,
Խրտնվում էին ալիքն ալիքին,
Արևը նրանց բյուրեղի միջից
Լուսնից էլ անուշ նշողում էր ինձ...
Ու խայտառամուկ պարը ձկների
Մերթ մերթ խաղում էր այն լուսի տակին։
Եվ հիշում եմ ես նրանցից մեկին.
Նա, ուրիշներից անուշ ավելի,
Փաղաքշում էր ինձ մտերիմ սիրով
Մեջքը ծածկված ոսկյա թեփերով,
Խայտում էր գլխիս վերև, խրլրտում,
Ու խորն էր այնքա՞ն, քնքուշ ու տրտում
Հայացքը նրա կանաչ աչքերի...
Ու ես անկշտում հիացած էի։
Արծաթահնչյուն նրա ձայնիկը
Ինձ զարմանալի բաներ էր պատմում,
Նա մեկ լռում էր, մեկ նորից երգում։
Նա ասում էր.
«Իմ պատանի՛,
Այստեղ ինձ հետ կաց միասին.

Սառն ու հանգիստ միշտ կըլինի
Աղատ կյանքը չըրայլին։

«Իմ բուլբերին ես կըկանչեմ,
Մենք, միասին պար բըռնած,
Կը խնդացնենք մռայլ գեմբըդ
Ու բո հոգին վաստակած։

«Քնի՛, մահիճդ ահա փափուկ
Ու վերմակդ թափանցիկ...
Կանցնեն տարի՞ք, կանցնեն դարե՞ր
Երազներում գեղեցիկ։

«Ո՛, պատանի՛, սիրում եմ քեզ,
Ահա իմ ողջ գաղտնիքը,
Սիրո՞ւմ—չըրի ալիքի պես,
Սիրո՞ւմ—ինչպես իմ կյանքը...»։

Ու երկա՞ր, երկար, ես լսում էի.
Ու կարծես հնչուն ալիքը չըրի
Խառնում էր իրեն մրմունջը խորին
Էն ոսկեթափուկ ձրկան բառերին։
Այստեղ ինձ կորցրի։ Աչքերըս մթնեց.
Ցառանցանքն հատավ ու տեղի տվեց
Տկարությանը վաստակած մարմնիս...

## XXIV

«Այսպես դուռն ինձ ու վերցրին...
Մնացածն արդեն հայտնի է քեզ։
Ես վերջացրի։ Այժմ կուզես
Մի՛ հավատար, այդ չեմ հարցնում,
Մի բան է միայն ինձ տխրեցնում,
Որ իմ դիակն այստեղ—հեռու,
Իմ մայր հողում չի փըտելու,



Ու ցավերիս վերջը տըրտում
Չեն պատմելու խուլ խրճիթում,
Որ մեկն աչքով լսի ու լա
Իմ տխրալի անվան վրա։

## XXV

«Մնաս բարյավ, հա՛յր... քո ձեռքը տուր ինձ։
Տեսնո՞ւմ ես, իմը ինչպես այրվում է...
Այս բոցն, իմանա՛ս, մանուկ օրերից
Իմ կրծքի տակին ծածկված մընում է.
Բայց հիմա արդեն էլ սնունդ չըկա,
Ու իրեն բանար ոչ լսիկ է դառ։
Վերադառնում է նրա մոտ կրկին,
Որ օրինավոր կարգով ամենքին
Տալիս է տանջանք ու հանգստություն...
Բայց ի՞նչ եմ անում. թեկուզ դրախտում,
Ամպերից վերև—էն տուրը աշխարքում
Իմ հոգին իրեն հանգիստ ունենար...
Ա՞խ, միայն մի քանի վայրկենի համար,
Առայլ, Վիթիսարի էն ժայռերի մեջ,
Ուր անց եմ կացրել օրերս մանկության,
Կըտայի ես ողջ—դրախտ, հավիտյան...

## XXVI

Երբ որ, ծերունի՛, մեռնելու լինեմ,
Ու դիտեմ — երկար չըդիտի տարեմ,—
Պատվեր տուր այնժամ դու ինձ տանելու
Մեր կանաչ այգին, այնտեղ. ուր երկու
Ճերմակ հակակի թփեր են ծաղկում...
Հատն այնքան խիտ է նրանց տըտերում,
Ու անուշաբույր թարմ օդը այնպե՞ս,
Այնպե՞ս թափանցիկ, այնպես ոսկեշող
Տերևն արևի տակին խաղացող...

Դու հրամայի ինձ այնտեղ տանեն։
Պայծառ ցերեկի փայլով ոսկեղեն
Վերջին անգամը կարբենամ գեթ ես։
Կովկասն այնտեղից կերևա նույնպես։
Կարելի է հով զեփյուռների հետ
Ուղարկի նա ինձ վերջին հրաժեշտ
Իր բարձունքներից հզոր, աննըվաճ...
Ու իմ ականջին, օրհասից առաջ
Կըհնչի դարձյալ հարազատ մի ձեն։
Ու կըմտածեմ, թե ընկերքս է էն,
Կամ թե եղբայրս վրաս կորացած՝
Ջդույշ ձեռքերով դեմքիցս կամաց
Մահվան սառնամած քրտինքն է սրբում
Ու մեր տան մասին կիսաձայն երգում...
Ու ես այս մըտքով խաղաղ կըհանգչեմ,
Էլ չեմ գանգատվի ոչ-ոքի ընդդեմ...»։

---

ԱՍՏՐՈՆ

## ՁԱՅԼԴ ՀԱՐՈՒԴԻ ԵՐԳԸ

Մնաս բարյավ կապույտ հեռվում
Կորչող եզերք հայրենի,
Թուքն հեծում է, ծովը գոռում,
Ճայը ճըչում վայրենի։

Արևն ահա շտապում է
Ծովի խորքում հանգչելու...
Բարի գիշեր, իմ հայրենի՛ք,
Մնաս բարյավ նաև դու։

Կանցնեն ժամեր և նա կրկին
Նոր առավոտ կըծնի,
Ես կողջունեմ ծով ու երկինք,
Բայց ոչ հողը մայրենի...

Ապարանքըս ամայացած,
Օջախս հանգած — անկըրակ,
Պատերիս մեջ խոտ է լցված,
Շունըս ոռնում դռան տակ։

— Մոտիկ արի՛, մանկլավիկս,
Ինչու համար ես կոծում,

Վախենո՞ւմ ես ալիքներից,
Թե սրտիցն ես դողացնում։

Սրբի՛ր աչքիդ արտասուքը,
Պինդ է մեր նավն և թեթև,
Հազիվ նրան կարողանար
Հասնել բազկն սրտին։

«Չեմ վախենում, լոգ հոգմահար
Ալիքները բարձրանան,
Բայց դու, պարո՛ն, մի՛ զարմանար,
Որ ես լալիս եմ այսքան.—

Հեռացել եմ ես իմ հորից
Եվ մորիցս սիրասուն,
Դու ես ընկեր մընացել ինձ,
Եվ նա, որ կա երկնքում։

Հայրս որ ունեց դալիս ինձի
Եվ չբաներց միանգամ,
Բայց մայրս խիստ պիտի հեծի,
Մինչև ես ետ կըդառնամ։

— Հերի՛ք, մանուկ, այդ արցունքը
Վայե՞լ է քո աչքերին.
Թե պարզ լիներ և իմ սիրտը
Իմ աչքերս էլ կոպային։

Ե՛կ, զինակիրս հավատարիմ,
Ի՞նչ գունատ ես երևում,
Դրանսիացո՞ւց մեր ոխերիմ,
Թե բարիցն ես վախենում։

— Ինձ համար չեմ դողում, պարո՛ն,
Այդպան թույլ չէ քո ծառան,



Բայց հարազատ կնոջ հոգեր
Դժդունացնում է նորան։

Ամրոցիդ մոտ ես տիրագեմ
Զավակներիս թողեցի,
Արդ, հոր մասին եթե հարցնեն,
Մայրը նրանց ի՞նչ ասի...

— Բավական է, բարի ծառաս,
Դու իրավ ես վշտանում,
Իսկ ես անփույթ եմ ավելի,
Մի ծաղկելով եմ գընում։

Եվ արդյոք ո՞վ կըհավատար
Հառաչանքին կանացի,
Մեր տեսած լայր մի օտար
Սիրուն աչքից կըսրբի...

Չեմ ափսոսում վայելքս հին,
Ոչ վտանգից կըսարսեմ,
Այն է, որ չեմ թողնում մեկին,
Որի համար արտասվեմ։

Եվ այժմ ահա ես մենակ եմ
Լայնատարած այս ծովում,
Բայց թե ինչո՞ւ կըհառաչեմ,
Երբ ինձ համար չեն ցավում։—

Շունը երկար չի ոռնալու,
Մի ուրիշը կըխնամի,
Եվ, թե լինեմ ես դառնալու,
Պատառ-պատառ ինձ կանի։

Դե՛հ, իմ նավակ, մենք սլանանք,
Ծովի վերա փրփրագեղ,

Ուր որ կուզես, հոգ չէ, գնանք,
Միայն հայրենիք չըտանես։

Ողջո՞ւն, ողջո՞ւն մութ ալիքներ.
Եվ, երբ աչքիցս ընկնեիք,
Ողջո՛ւն խուզե՞ր, անապատնե՞ր...
Բարի գիշեր, հայրենի՛ք։

---

ԲԱՑՐՈՆ

## ԻՆԵՍԻՆ

Օ՜, ա՛չ, մի՛ ժըպտա իմ վշտի վրա,
Ա՜խ, կյանքում ժպտալ կարող չեմ էլ ես,
Բայց երկինք չանի, որ լաց լինես դու,
Որ լաց լինես դու, գուցե զուր—ինձ պես։

Դու էն ես հարցնում՝ ինչ ցավ է գաղտնի,
Որ խընդությունըս ու կյանքս է մաշել,
Բայց ինչո՞ւ, չըքնա՛ղ, ինչո՞ւ իմանաս,
Երբ դու էլ նույնիսկ չես կարող բուժել։

Ոչ սերն է պատճառ, ոչ ատելություն,
Ոչ սին փառքերի կորուստը, ավա՜ղ,
Որ փախչում եմ ես ձրգած տեղ ու տուն,
Ձրգած ամեն բան, ինչ որ թանգ էր վաղ։

Ինչ որ տեսնում եմ, լըսում իմ ճամփին—
Ջանձրացնում է ինձ ամե՜ն, ամեն բան,
Գեղեցիկն էլ ինձ հաճույք չի տալի,
Ոչ էլ աչքերիդ հմայքն առաջվան։

Էս էն անհանգիստ վիշտն է ամեհի,
Որ թափառական ջըհուդն ունի հեգ.
Շիրմի խավարին սոսկում է նայի,
Իսկ կյանքում հանգիստ չի գտնում երբեք։

Էլ ո՞ւր փախչեմ ես ինքըս ինձանից,
Թեկուզ հեռավոր երկրի մի անկյուն.
Ուր որ էլ գընամ՝ հետևում է ինձ
Կյանքի էս ժանգը—մրոտքիս դևն անքուն։

Ուրիշներն այն ինչ, հաճույքից հարբած,
Վայելում են գոհ՝ ինչ ձգել եմ ես...
Օ՜, թող վայելեն, ու երնե՜կ հանկարծ
Իրենց երազից չըզարթնեն ինձ պես։

Ես պետք է անցնեմ դեռ աշխարհ—աշխարհ.
Քանի ես նայեմ—անցյալս անիծեմ,
Եվ մի սփոփանք ունիմ ինձ համար—
Վատթարն եմ տեսել—ինչ էլ գա իմ դեմ։

Բայց էն վատթարը... մի՛ հարցնի էդ ինձ.
Գո՛թ արա, շըքնա՛ղ, ու ժրպտա կրկին,
Եվ ես մի թաշի դիմակն իմ սրտից—
Տեսնելու ատկի զժոխքն ահագին։

---

ԱՍՑՐՈՆ

# ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

## ՍՈՆԵՏ ՇԻԼԻՈՆԻՆ

Ո՞վ ազատություն, շունչ հավերժական,
Բանտերումն ես դու շըքեղ ճանաչում,
Այնտե՞ղ, ուր սիրտը՝ քեզ ըրնակարան
Եվ քո սերըն է միայն ճանաչում։

Եվ երբ որդիքդ զարկած շըղթայի,
Անլույս բանտերում նահատակվելով,
Փառավորում են երկիրն հայրենի,
Մավալվում ես դու հոգմի թևերով։

Շիլիո՛ն, քո բանտը սըրբավայր է միշտ,
Եվ քո տըխրալի հատակը՝ սեղան.
Բոնիվարն այնտեղ տանջվից բազմավիշտ,
Թողեց հետքերը քարերի վրան։

Եվ թող միշտ մընան նըրանք անջնջում,
Որ բռնությունից ատավա՜ծ են կանչում։

Գորշ են մազերըս, բայց ոչ տարիքից,
Ոչ էլ մի գիշեր

Դարձա այսպես ծեր,
Որ պատահում է հանկարծ երկյուղից։

Ձնոք ու ոտնիրս էլ այսպես չորացան
Ոչ թե բանկուց, այլ կարգ հանգրստից,
Խավարչային բանտին կոր ավար դարձան,
Զրկված արևից, աշխարքից, օդից։

Իմ հայրը այրվեց խարույկի վրա,
Զուրկ իր պաշտած Հավատան ոգանա,
Իրեն որդիքն էլ նույն բանի համար
Օթեան դրան բանտումը խավար։

Յոթ հոգի էինք, մընացել եմ ես։
Մեկը տարիքով, վեցն երիտասարդ,
Ինչպես սկզբան, վերջացրին նույնպես,
Հալածանքների սասակությամբ հրդարտ։

Մինը կրակում, երկուսը կրովում
Կրնքեցին իրենց Հավատան արյունով,
Իրենց հոր նրման մեռան անկարում
Թշնամու մերժած ասածու անունով։
Վերջին երեքը բանտն էին ձրգված,
Որոնցից ես եմ մընացել հիմի,
Հիվանդ բեկորքս մեր անբախտ տոհմի։

II

Այնտե՞ղ՝ հին ու խոր բանտում Շիլիոնի
Յոթը հատ սյուներ գոթական ձևի,
Յոթը հա՞ստ սյուներ, ծանր ու գորշագույն,
Երևում են թույլ մի շողով արծգույն,
Որ, ասես իրեն ճամփեն մոլորել,
Պատի արանքից պատատմամբ ընկել
Խոնավ հատակին խաղում է աբխուր,
Ինչպես ճահճային ապուտ մոլեհուր։



Ամեն սյունի մեջ այնտեղ մի օղ կա,
Եվ ամեն օղակն ունի մի շղթա։
Սոսկալի բան է երկաթի շղթան.
Ուտում են նրբա ժանգ-ժանիքները.
Նրբանք մաշելով մարմնիս մեջ մրտան,
Ու չեն ջնջվելու երբե՞ք հետքերը,
Մինչև չը թողնեմ օրվան լույսը վառ,
Ծանե՞ր, ատելի աչքերիս համար,
Որոնք չը գիտեմ, թե քանի տարի
Չեն տեսել պայծառ երեսն արևի։
Այդ տարիների չեմ հիշում թիվը.
Թողեցի նրբան տրխուր հաշիվը
Այն օրից, ինչ որ եղբայրս վերջին
Թոշնեց ու մեռավ աչքիս առաջին։

III

Նրբանք սյուներին մեզ շղթայեցին։
Մենք չոկ չոկ էինք, թեև միասին,
Մենք չէինք կարող ոչ մի քայլ անել,
Ոչ իրար երես խավարում տեսնել։
Աղոտ, կապտավուն այն լույսն էլ որ կար,
Մեզ մեր աչքերում դարձրեց օտար։

Այսպես միասին, բայց չոկ չոկ կապած,
Աշխարքի ամեն բարիքից զրկված,
Մի մրխիթարանք միայն ունեինք,
Որ իրար ձայներ իմանում էինք։
Ու սրրտով կրպած, իրարից հեռու
Մենք սկրսեցինք սիրտ տալ իրարու
Նոր նոր հույսերով կամ թե հին վեպով,
Կամ հերոսական անվեհեր երգով։
Սրրանք էլ սակայն պաղեցան վերջում.
Տրխուր էին մեր ձայները հընչում,
Տրխո՞ւր ու խրոպոտ, խուլ ու ահռելի՝
Պաղ արձագանքը բանտի քարերի...

## IV

Մեր փոքրը, որին հայրիս սիրում էր,
Որ մեր հանգուցյալ մոր ճակատն ուներ,
Ու աչքերն ինչպես կապույտը երկնի,
Նա էր իմ հոգին ատնջում ավելի։
Իրավ, տխնելիս մարդ չէր դիմանում.
Այնպիսի՜ թրոչնակ այսպիսի՜ բընում...
Գեղեցիկ էր նա, պայծառ ու մաքուր,
Եվ ուրախ, զըվարթ սըրտով ըրնատուր։

## V

Մյուսն էլ նրա պես հոգով անարատ,
Ծընված էր սակայն հուժկու տըղամարդ։
Ուրախ ու պատրաստ ամեն ժամանակ
Աշխարհի ընդդեմ խիզախիկ մենակ,
Միայն թե չը հեծեր շըղթայի տակին.
Շըղթայի ձայնից մարում էր հոգին։
Նա լուռ, անմըռունչ ընկնում էր արդեն։
Ես էլ թերևս ընկճված նույնքան,
Ճիգ էի անում, որ սըրտապընդվեն
Վերջին հույսերը թանկագին մեր տան։
Իզո՜ւր. նա ընկավ, նա մնռավ... տեսա...
Ես տանջվում էի թեև, աշխատում,
Շըղթաս կըրծոտում, շըղթաս կըտրատում,
Տագնապի ժամին իրեն չըհասա...
Նա մեռավ... Եկան, կապանքը վերցրին,
Հենց այնտեղ, բանտում, աչքիս առաջին
Մի փոս փորեցին սառն ու երեսանց...
Աղաչանք արի, խնդրեցի նրանց,
Որ շընորհ անեն՝ թաղեն այնտեղում,
Ուր որ արևի ճառագայթն է խաղում...
Այս խենթ, խելագար տխմար մի միտք էր,



Բայց այն ժամանակ գլուխս էր մըտել,
Թե ազատ ծընված, ազատ սովորած
Իմ եղբոր հոգին, թեկուզ և մեռած,
Չէր հանգըստանա գերության բանտում...
Զուր էի սակայն այնպես պաղատում.
Նըրանք ինձ վըրա քահ-քահ խընդացին,
Եվ մեր սիրելի եղբայրը կըրկին
Այն պաղ, անգալար հողումն է թաղված,
Ու գլխի վերև անբաժան կախված
Բրոնակներին վայել հուշարձան՝
Եղբորս կըրած ու թողած շըղթան։

## VI

Իսկ մեր ծաղիկը, փոքրը մեղանից,
Ամենրից սիրվածն իր ծընված ժամից,
Իր սիրուն դեմքով մեր մոր պատկերը,
Մեր գերդաստանի մանկական սերը,
Նահատակ մեր հոր ցնորքը նվիրական
Եվ իմ հոգսերի վերջին առարկան,
Որի համար միայն ինձ պահում էի,
Որ նըրան ազատ գոնի մի օր տալի.
Նա, որ գոնե հոգին պահել էր այնպես
Տակավին զվարթ, գուցե առերես,
Նա էլ խորտակվեց, օրեցօր և նա՛
Սկըսավ թոշնել ցողունի վըրա։
Բայց այնքա՜ն խաղաղ էր նա թառամում,
Լո՜ւռ, մեղմիկ հալվում, ուժերը քամվում,
Առանց արցունքի, քնքուշ ու դարի...
Ինձ համար էր միայն հոգում ու ցավում...
Եվ ոչ մի արտասուք, մի «ա՛խ» չարավ նա
Իրեն վազաժամ օրհասի վըրա։
Մի փոքրը խոսեց մեր լավ օրերից,
Մի քիչ սփոփեց, հույսեր տվավ ինձ,
Քանզի ես անհուն վըշտից քարացել,

Կորուստիս առջև լուռ էի կացել.
Ապա թառանչը, որ զբսպում էր նա,
Արդեն երկարեց, նրվազեց ահա...
Ականջ դրրի ես... չէր լսվում իսպառ.
Զայն տրվի նրրան ահից խելագար...
Կանչեցի... կարծես մի ձայն լրսեցի...
Ուժգին ցընցումով շրդիաս կրտրեցի,
Ընկա նրրա մոտ. նրրան չը գրտա...
Ես էի մենակ մրթնումը շարժվում.
Ես էի ապրում, ես էի շրնչում
Անիծված օդը մեր խոնավ բանտի։
Սա գետնի վրրա, նա գետնի տակին,
Երկու եղրայրս էլ վախճանված էին։
Ընկած չոր ձեռքը բրռնեցի, ավա՜ղ,
Նրրա պես նույնիսկ իմ ձեռքն էլ էր պաղ։
Ուժ չը կար շարժվիմ կամ մի ճիգ անեմ,
Բայց զգում էի, որ դեռ ապրում եմ...
Կատաղի մի վիշտ, երբ դիտենք, որ նա,
Ում սիրում էինք, այլևս չը կա...
Չը դիտեմ ինչպես,
Չէի մեռնում ես.
Երկրում ինձ համար
Էլ ոչինչ չը կար...

## VII

Իսկ հետո այնտեղ ինձ ինչ պատահեց,
Այդ ես չը գիտեմ ու չեմ իմացել.
Նախ օդը հատավ, լույսը պակասեց,
Ապա թե մութը չրքացավ հանկարծ։
Զդացում ու միտք՝ էլ ոչինչ չրկար։
Չէի հասկանում, ինչ էի զգում,
Քարերի միջին կանգնած մի լեռ քար,
Մի լերկ ապառաժ՝ գագաթը միգում...
Ամեն բան դատարկ, մրռայլ ու գորշ էր։



Ոչ ցերեկ էր այն և ոչ էլ գիշեր,
Եվ ոչ իմ բանտի նրսեմ լույսը կար,
Այնքան ատելի աչքերիս համար։
Մի տարածություն՝ դատարկությամբ լի,
Եվ հաստատություն՝ առաց մի տեղի...
Չը կային աստղեր, ժամանակ, աշխարհ,
Ոչ փոփոխություն, ոչ բարի, ոչ չար.
Խորի՜ն լրռություն... և կանգնած օդում
Ոչ մահվան նշույլ, ոչ կյանք էր նկատվում.
Այն անգործության մի ծով էր կանգուն,
Անշարժ ու համրը, խավար ու անհուն...

## VIII

Բայց ահա մի շող ցոլաց իմ գրլխում.
Այն մի դեղեցիկ թրռչունի ձայն էր.
Մերթ լրռում էր նա, մերթ նորից երգում.
Այնպես քրնքույշ երգ լրսած չէի դեռ։
Մինչ լրռում էի կախարդված հոգով,
Էրցվեցին աչքերրս ուրախ արցունքով
Եվ ես մի առ ժամ չէի նրկատում
Թրշվառությունրս այն խավար բանտում։
Բայց շուտով միտրրս սովոր բնիացքով
Երբ վերադարձավ, իրական աշխով
Շուրջրս, վերևրս ես տեսա կրրկին
Պատերն, օճորքը, նրկուղը մրթին,
Առաջվա նրման ուր որ հազիվ հաղ
Արևի շողքը ընկնում էր նվազ։
Բայց և այն ճեղքում, որ ընկնում էր նա,
Ավելի հանգիստ քան ծառի վրրա,
Նրստած էր թրռչնակն ուրախ ու անփույթ,
Մի սիրո՜ւն թրռչնակ. թևերը կապույտ։
Հազար գանազան բաների վրրա
Գեղգեղում էր նա,
Ու ինձ էր ատում կարծես քալորը։

Դեռ ոչ մի անգամ մինչև այն օրը
Նրա նրմանը տեսած չէի ես,
Ոչ էլ կը տեսնեմ։ Նա էլ էր ասես
Ինձ նրման մենակ, ընկերից զրկված,
Սակայն ինձ նրման հույսը չէր հատած։
Նրա համար էր նա եկել մենակ,
Որ մրխիթարի ինձ որը ժամանակ.
Ու ծրվրլալով մութ բանտիս ծայրից՝
Լցնում էր կյանքով իմ սիրտը նորից։
Բայց ո՞վ էր ինքը, իմ հյուրը երդիչ.
Արդյոք երկրնքի ազատ բնակի՞չ,
Թե՞ իր վանդակից հենց նոր ազատվել,
Եկել էր իմիս վերևը նստել...
Չը գիտեմ, բայց ես՝ քաշած գերություն
Չէի ցանկալ քեզ, սիրունիկ թռչո՛ւն։
Սակայն թերևս թռչնի կերպ առած
Մի այցելու էր դրրախտից թռած...
Այս միտքը այնժամ, թող ներե ինձ տեր,
Պատճառեց անչափ խինդ ու արցունքներ։
Մրատածում էի, թե նա իմ կարոտ
Նվիրը հոգին էր, եկել էր ինձ մոտ...
Բայց հանկարծ թռավ և ես իմացա,
Որ մի հողեղեն արարած էր նա.
Մի՞թե կարող էր երդայրս թռչել,
Ինձ կրկին մենակ թողնել այն բանտում,
Ինչպես պատանում փաթաթած մեռել,
Ինչպես մի սև ամպ պայծառ կապույտում։

## IX

Փոխվեց վիճակս այն ժամանակից,
Պահապաններս դարձան կարեկից։
Չը գիտեմ ինչու մեղմացան նրրանք,
Որ սովոր էին տեսնել չարչարանք,—
Բայց այսպես եղավ։ Ոչ ոք իմ կրտրած



Շրջթան չը կապեց ու մընաց միշտ բաց։
Եվ շրջում էի իմ բանտում ազատ
Ողջ երկարությամբ, մի պատից մի պատ։
Բայց երբ թրվում էր, անբզգուշ քայլով
Կոխեցի նրրանց հանդիստը սրխուր,
Դողդողում էի սառտիկ հևալով
Ու սիրտս ցավից ճըմլում էր ամուր։

## X

Ես ոտնատեղեր փորեցի պատում.
Սակայն փախչելու չէի աշխատում,
Ես թաղել էի արդեն բոլորին,
Որոնք աշխարքում ինձ սիրում էին,
Եվ այնուհետև աշխարքն ինձ համար
Մի բանտ էր նույնպես, բայց մեծ ու անծայր։
Էլ ոչ ոք չը կար այնտեղ ինձ մոտիկ.
Հայր, մայր, կամ եղբայր, ընկեր կամ որդիք...
Ես ուզում էի միայն բարձրանալ
Վանդակով փակած լուսամուտներին,
Այնտեղից հանդիստ, մի անգամ գարձյալ
Նայել հրրճվանքով բարձրը սարերին։

## XI

Ես տեսա նրանց. դարձյալ նույնն էին
Ու չէին փոխվել նրրանք ինձ նրման.
Կրրկին զարևոր ձյունը գրլխներին,
Ներքև մեծ լիճը, կապտաջուր Իոնան...
Ջրերը զրվարթ ալիքներում էին
Մացառուտներում, ժայռերի միջին,
Արևում փայլում ճերմակ քաղաքը
Ու լրճում հանդարտ սահում նավակը,
Թեթև՞, ձյունափայլ առագաստը բաց։
Ապա այնտեղ ցած

Մի փոքրիկ կրպակ մենավոր, կանաչ
Ժըպտում էր, ասես, իմ աչքի առաջ։
Բանտիս հատակից մի քիչ մեծ կը դար
Ու բուսել էին վրան երեք ծառ։
Լեռնային հովը շընչում էր այնտեղ,
Ափերին վըճիտ ջըրերը ծըփում,
Ջըմբուխտ դալարի միջում գունագեղ,
Քընքույշ, վառվռուն ծաղիկներ ծաղկում։
Բանտի պատի տակ ձրկան մի վրատառ
Լողում էր անչափ ուրախ ու կայտառ,
Թավագորում էր արծիվն վերևում,
Ու թափն ավելի ուժգին էր թրվում,
Երբ որ նա հանկարծ ուզղում էր դեպ ինձ։
Աչքերս արցունքով լըցվեցին նորից
Ու այնպե՞ս թախիծ տիրեց իմ սըրտին,
Ասես ցավեցի, որ լուսամուտին
Եկա մոտեցա իմ շրջիան թողած։
Շտապով իջա գարձյալ դեպի ցած
Ու մրոտյալ բանտիս խավարը տեղ
Մանըր հընչելով չորեց ինձ վրա։

## XII

Ամիսներ, տարիք թե օրեր անցան,
Ես ոչ հաշվել եմ և ոչ իմացել.
Մութն էր իմ բանտը, սրխուր մըշտական
Ու երբեք պայծառ հույս չեմ ունեցել։
Եկան վերջապես ինձ ազատելու.
Չէի հասկանում, ո՞ւր եմ գընալու,
Ոչ էլ հարցրի, Է՞ր էն ազատում.
Մին էր ինձ համար, ազատ թե բանտում.
Ու այն ժամանակ իմ բանտի միջին
Երբ որ ձրգեցին կապանքս վերջին,
Այնպես էր թրվում, թե նըրանք եկել,
Ուզում էին ինձ բաժանել, գըրկել



Իմ երկրորդ տանից։ Ես մինչև անգամ
Այնտեղ սարգերին գարձա բարեկամ.
Ու միշտ ուշադիր հետևում էի,
Երբ որ լրջորեն նրանք ձանձրալի
Իրենց արհեստով էին ըզբաղվում.
Կամ գիտում էի, երբ մուկն էր խաղում
Լուսնի լուսի տակ։ Ինչո՞ւ նըրանց պես
Ինձ էլ մեր տանը չըզղայի և ես...
Մենք՝ բնակիչներ ամենքս մի տան,
Ու ես նրանց մեջ մի պես անսահման,
Կյանքի ու մահվան վըճիռն իմ ձեռքում.
Բայց այնպե՞ս խաղաղ էինք ըընակվում...
Նույն իսկ շղթայիս գարձա ես ընկեր...
Այսպես մընալով օրեր, տարիներ,
Սովորում է մարդ իրեն վիճակին,
Ու... ես ցավեցի իմ բանտի շեմքին։

---

Հ. ԼՈՆԳՖԵԼԼՈ

# ՀԱՅԱՍԿԱԹԻ ԵՐԳԸ

(ՀԱՏՎԱԾ)

## ՆԱԽԵՐԳԱՆՔ

*Եթե հարցնեք—ո՞րտեղից են*
*Էս լեգենդներն ու պրույցներն*
*Անտառների անուշ բույրով,*
*Հովիտների շաղ ու մուժով,*
*Վիրվամների ոլոր ծուխով,*
*Մեծ գետերի սահանքներով,*
*Նրանց անվերջ սրսաումով*
*Ու վայրենի արձագանքով,*
*Ինչպես ամպրոպ սարերի մեջ,—*
*Ես ձեզ կասեմ, ձեզ կը պատմեմ։*

*Անտառներից, հովիտներից,*
*Նորդլանդիայի մեծ լճերից,*
*Օջիբվայի խոր աշխարհից,*
*Դակոտների վայրի երկրից,*
*Ճահիճներից, ճախիններից,*
*Ուր շուշ-շուշ-գան՝ արագիլը*
*Կեր է փնտրում ճըլիգուանքում,*
*Կրկնում եմ ես էս պրույցներն*
*Անուշ երգիչ ու երաժիշտ*
*Նավադահի պարզ երգերով։*
*Եթե հարցնեք—ո՞ւր է ղըտել*
*Էս երգերը Նավադահան,*



*Էսքան վայրի ու քրմահաճ.*
*Ես ձեզ կասեմ, ձեզ կը պատմեմ։*
*— Թռչունների բներին մեջ,*
*Ջրշունների խոսքերում,*
*Բիզոնների արոտներում,*
*Արծիվների բնավայրում.*

*Ճահիճներում, ճախիններում,*
*Մելամաղձիկ թափառելով,*
*Երգում էին նրա համար*
*Սանդը՝ բադը, սագը՝ վավան,*
*Եվ շուշ-շուշ-գան՝ արագիլը,*
*Եվ կլոցարը՝ չիթավիկոս,*
*Կայրի հավը՝ մուշկոդաղան։*

*Եթե դարձյալ հարցմունք անեք,—*
*Ո՞վ է հոգա Նավադահան,*
*Պատմի գու մեզ նրա մասին.*
*Ձեր հարցմունքին էս խոսքերով*
*Կըտամ իսկույն ես պատասխան։*
*— Թավուկենքի պերճ հովիտում,*
*Ճոխ մարգերի լըռության մեջ,*
*Արծաթափայլ ջրերի մոտ*
*Ապրում էր վառ Նավադահան։*

*Հընդիկ գյուղի շուրջը բոլոր*
*Փռվում էին հանդեր, արտեր,*
*Ու կանգնած էր հին ծըմակը,*
*Հին ծըմակը սոճիների,*
*Ամրան՝ կանաչ, սոսափելով,*
*Ձմրան՝ փայլուն ճերմակ ձյունով,*
*Լիքը երգով, հառաչանքով։*
*Հովիտն ի վար հոսում էին*
*Էն ջրերը արծաթափայլ,*

Դարնանը՝ խիտ եղեգնուտով,
Ամրանն՝ երկար բարդու շարքով,
Աշնանը՝ գորշ մեգի տակին,
Ձմրան՝ սիպտակ ափերի մեջ։
Ու ապրում էր երգիչն էնտեղ,
Թավազենքի պերճ հովիտում,
Ճոխ մարգերի լռության մեջ։

Էնտեղ երգեց նա էս երգը,
Անուշ երգը Հայավաթի,
Թե ինչպես նա ծնվեց, ապրեց,
Ու ինչպես էր ճգնում, տանջվում,
Քարոզում էր ու համոզում,
Որ երջանիկ դարձնի մարդին,
Որ բարձրացնի ժողովրդին։

Ով սիրում է բընությունը
Ու մարդկերում լույսն արևի,
Սիրում սավերն անտառների,
Սիրում հովը տերևներում,
Եվ անձրևը, և փոթորիկ,
Եվ սահանքը մեծ գետերի,
Եվ կայծակը սարերի մեջ,
Թավուտներում սոճիների,
Նա կը լսի էս զըրույցը,
Ջքնաղ երգը Հայավաթի։

Ով սիրում է ժողովրդի
Լեգենդներն ու բալլադները,
Որոնք, ինչպես հեռու ձայներ,
Կանչում են, որ ականջ դնենք,
Ու խոսում են պա՞րզ, մանկաբար,
Որ հաղիվ է մարդ որոշում—
Ե՞րգ է արդյոք թե պատմություն,
Ականջ կանի նա հաճույքով



Էս հնդկական հին զրույցին,
Խազաղ երգին Հայավաթի։

Նա, ում սիրտը թարմ է ու պարզ,
Հավատում է աստծուն, բնության,
Հավատում է, որ հավիտյան
Մարդկային է սիրտը մարդու.
Որ՝ վայրենի լանջի տակ էլ
Մի անմեկին կյանքի համար
Կան բաղձանքներ ու ձգտումներ.
Որ՝ խավարում խարխափելիս,
Թույլ ձեռքերը անօգնական,
Հանդիպելով աստծո աչին՝
Կյանք են առնում ու դորանում,—
Նա կը կարդա էս զըրույցը,
Էս պարզ երգը Հայավաթի։

Որ երբեմն՝ իր շըրջակա
Լուռ հանգերում թափառելիս՝
Մի մոռացված շիրմի առջև
Կանգ է առնում, միտք է անում
Նրա կիսեղծ գրի վըրա,
Որ գրված է պարզ, անարվեստ,
Սակայն որի ամեն խոսքը
Լիքն է կյանքի, հանդերձյալի
Անվերջ հույսով ու թախիծով,—
Նա կը կանգնի ու կը կարդա
Խոր հնության արձանագիր
Էս հին երգը Հայավաթի։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՁԻԹՈՒԽԸ

### I

Ու մեծ դաշտի լերանց վըրա,
Կարմիր ժայռի բարձունքներին,
Նա, հզորը, կյանքի տերը՝

Գիտչի-Մանիտոն իջնելով,
Կանգնեց շիտակ և ազգերին
Ու ցեղերին կանչեց ի մի։

Նրա ոտքի տեղից բղխեց,
Հոսեց մի գետ անդունդն ի վար,
Առավոտյան շողերի մեջ
Շողշողալով ու ծոր տալով
Էն Իշկուգա—ասողի նման։
Ու խոնարհեց Ոգին երկիր,
Աչով մարգում նրա համար
Գծեց ոլոր մի ճանապարհ,
— Գնա՛, ասավ, էս ընթացքով։

Ապա պոկեց իրեն ձեռքով
Քարահանքից մի կտոր քար,
Շինեց կարմիր չիբուխ գլուխ
Ու զարդարեց նկարներով։
Գետի ափից եղեգն առավ
Իր մութ կանաչ տերևներով
Ու կոթ շինեց չիբուխի համար.
Լցրեց ուռու չոր կեղևով,
Կարմիր ուռու չոր կեղևով։
Շընչեց մոտիկ մեծ անտառին,
Ու ճյուղերը տրվավ իրար,
Կրակ հանեց, վառեց չիբուխն,
Ու կանգնելով էն սարերին
Գիտչի-Մանիտոն՝ հրզորը,
Մրխեց իրեն գալյումեռը,
Իբրև նշան ողջ ազգերին։

Ու ծուխն ելավ կամաց-կամաց
Առավոտյան խաղաղ օդում,
Առաջ ինչպես մրթին մի գիծ,
Հետո կապույտ, խիտ գոլորշի,



Ապա ճերմակ ամպի նման
Բարձրանալո՛վ, բարձրանալո՛վ,
Մինչև հասավ վեր երկընքին,
Մինչև ցրվեց վեր երկընքում
Ու փաթաթեց շուրջն ամեն բան։

Թավալենթի դաշտավայրից,
Վաշինգտի հովիտներից,
Տուսկալուզի ծմակներից,
Հեռո՛ւ, հեռո՛ւ Ժեռ սարերից,
Նորգլանդիայի լճափերից
Ազգերն ամեն նրկատեցին,
Տեսան հեռվում բարձրանում է
Խաղաղության չիբուխի ծուխը։

Ու ազգերի մարգարեներն
Ասին՝ տեսե՛ք, էն Պուկվանան—
Խաղաղության չիբուխի ծուխն է,
Որ թեքվում է ուռենու պես,
Շարժվում կանչող ձեռքի նման։
Մե՛ծ, հեռավոր էն նշանով
Գիտչի-Մանիտոն՝ հրզորը,
Կոչ է անում մարտիկներին
Ողջ ազգերի ու ցեղերի։

Գետերն ի վեր հովիտներով
Եկա՛ն, եկա՛ն, հավաքվեցին
Մարտիկները ողջ ազգերի.
Դելավարներն ու մոհոկները,
Զոտկոտներն ու կամանչները,
Շոշոնները ու սեվոտները,
Օմահոնները ու պոնները,
Մանդանները ու գակոտները,
Հուրոնները ու օջիբվեները։
Ճամփա ելան ողջ միասին

Խաղաղության լիրխի ծրխի՝
Գալլումնտի ծրխի վրա
Դեպի սարերն էն մեծ դաշտի,
Մեծ քարհանքի ժայռը Կարմիր։

Ու զենքերով, զրահներով,
Նախշուն, ինչպես աշնան տերև,
Ինչպես երկինք առավոտյան,
Էնտեղ, դաշտում, նրանք կանգնած
Նայում են խեթ իրար վրա,
Աչքերի մեջ—առելություն,
Սրբտերի մեջ—դարևոր քեն,
Արյան ծարավ պապենական։

Գիտչի-Մանիտոն՝ հրզորը,
Արարիչը մարդկան ազգի,
Նայից նրանց կարեկցաբար։
Իր հայրական սիրով նայեց
Նրանց կռվին ու պայքարին,
Ինչպես իրեն անխելք ու խակ
Մանուկների կռվի վրա։

Ու տարածեց իր աջ ձեռքը—
Մեղմի նրանց բընույթը կոշտ,
Մեղմի տապը, ծարավն անհագ
Իրեն աջի հովանու տակ։
Խոսեց խրոխտ ու վեհ ձայնով,
Էն ջրերի աղմուկի պես,
Որ թնդում են խոր անդընդում,
Խրատելով, նախատելով
Էսպես խոսեց ազգերի հետ.

— Ո՞վ իմ որդիք, իմ հե՞գ որդիք,
Ականջ դրեք իմաստության,
Ականջ դրեք խրատներին



Ձեր արարիչ, ձեր ստեղծող
Հրդոր Ոգու շընթունքներից։
Տրվի ես ձեզ ամեն բարիք.
Երկիր տրվի՝ որսի համար,
Գետեր տրվի՝ ձուկ բռնելու,
Տրվի ձեզ արջ, տրվի բիզոն,
Տրվի եղնիկ ու եղջերու,
Տրվի ընկյուզ, տրվի ջրշուն
Ու ճահիճներ լի հավքերով.
Ինչո՞ւ գոհ չեք դուք տակավին,
Ինչո՞ւ եք դուք որսում իրար։

Հոգնել եմ ես ձեր վեճերից,
Ձեր արյունոտ կռիվներից,
Հոգնել եմ ձեր՝ սպանության
Ու վրեժի ոգիներից։
Ձեր ուժն ամբողջ սիրտ մեջ է,
Ձեր կորուստը՝ կռիվների.
Արդ ապրեցեք այսուհետև
Խաղաղ, սիրով, եղբոր նման։

— Ես կուղարկեմ մի մարգարե,
Փրկիչ համայն ձեր ազգերի։
Նա կաշխատի, կապրի ձեզ հետ,
Կառաջնորդի, կը քարոզի։
Եթե լըսեք նրա խոսքին,
Կը բազմանար, կերջանկանաք,
Իսկ թե թողնեք անուշադիր,—
Կը նրվազեք ու կը կորչեք։
— Մրտեք այժմ էս գետի մեջ
Ու լըվացեք ձեր դեմքերից
Կռվի վայրի նրկարները
Ու արյունը ձեր մատների։
Թաղեք հողում ձեր զենքերը,
Առե՛ք կարմիր քարը հանքից

Ու շինեցեք կարմիր քարից
Խաղաղության շիբխի գլուխ.
Եղեգն առեք եղեգնուտից,
Զարդարեցեք փետուրներով,
Ու ծընեցեք ի միասին
Խաղաղության շիբուխները,
Ու ապրեցեք այսուհետև
Խաղաղ, սիրով, եղբոր նըման։

Ու ձրդեցին մարտիկները
Շապիկները այծեմանի,
Զրահները ռազմական,
Մըտան գետը արագահոս,
Ու լըվացին երեսներից
Կռվի վայրի զարդերն ամեն։
Տիրոջ ոտքի տեղից հոսում,
Ջուրը վերից գալիս էր ջինջ,
Իսկ նրանցից ներքև պղտոր,
Գնում էր մութն, ապականված,
Արյունախառն ու կարմրագույն։

Ու դուրս եկան մարտիկները
Գետից հստակ ու մաքրված,
Ու թաղեցին գետի ափին
Իրենց զենքերը ռազմական։
Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,
Արարիչը ու Մեծ Ոգին
Էն ժամանակ սիրով ժպտաց
Անօգնական զավակներին։
Ու մարտիկներն, ամենքը լուռ,
Առան քարը մեծ քարհանքից,
Ով հըզկեցին ու շիններին •
Շիբուխները խաղաղության։
Եղեգն առան գետի ափից,
Զարդարեցին փետուրներով,



Ապա դարձավ ամեն մեկը
Իրեն տունը, հայրենիքը,
Մինչդեռ Ոգին, կյանքի տերը,
Վերանալով ամպերի մեջ,
Սուզվեց. երկնի բաց դռներում,
Խաղաղության շիբխի ծըխի՝
Պուկվանայի ամպով պատած,
Անհետացավ նրանց աչքից։

# ՌՈՒՍԱԿԱՆ ԲԻԼԻՆԱՆՆԵՐԻՑ

## ՄՈՒՌՈՄՑԻ ԻԼԻԱՆ ԿՈՎՈՒՄ Է ՎԼԱԴԻՄԻՐ ԻՇԽԱՆԻ ՀԵՏ

Ըստ Ավենարիուսի

Գընում է ծերուկն արձակ դաշտերով,
Գընում է ծերուկն երկար ժամանակ։
Մաշվել են հագի շորերը նախշուն,
Հատել է արդեն իր գանձը ոսկի,
Ու Իլիան ինքնին խոսում է էսպես.
— Եղել եմ հիմի ամբողջ Լիտվայում,
Ողել եմ հիմի ողջ օրգաններում,
Մենակ Կիևում չեմ եղել վաղուց։
Կիև գընամ մի, գընամ մի տեսնեմ
Ինչ է կատարվում էնտեղ—Կիևում։
Հասնում է Իլիան Կիև քաղաքը մայր.
Քեֆ-խնջույք ունի իշխան Վլադիմիրը.
Սեղան են բազմած հրգոր հրսկաներ
Ու պայազատներ մինչև երեսուն։
Մըտնում է ծերուկն ապարանքը ներս,
Կանգնում է, կենում սըրահի շեմքին,
Խաչ քաշում դեմքին, ինչպես օրենքն է,
Ողջույն է տալիս ընդունված կարգով
Արև իշխանին ու տիկնոջն էլ ջոկ։
— Ապրած կենաս, տեր, իշխան Վլադիմիր,
Հաց ու ջուր կը տա՞ս եկվոր քաջերին։
Քեզ ուզիղ սըրտով եկել եմ ծառա.
Չեմ վախում դաշտում հաղար թաթարից,



Չեմ վախում, թեկուզ մյուս հազարն էլ գա,
Չեմ փախչիլ, թող գա երրորդ հազարն էլ,
Ու օգնության էլ հարկավոր չեն ինձ
Երեսուն ազգավն իրենց ճուտերով։
Ով էր— չիմացավ իշխանը հյուրին։
— Ուսկի՞ց ես, ո՛վ քաջ, ի՞նչ ազգ ու տակից.
Քեզ ի՞նչ անունով կանչենք, մեծարենք,
Կամ ի՞նչ հայրական կոչումով հարգենք
— Նիկիտան եմ ես Զաոլեշանին։
— Ո՛վ, դու Նիկիտա Զաոլեշանին,
Ե՛կ, նըստի, մեզ հետ հաց անուշ արա,
Մի տեղ կա դատարկ էնտեղ, ներքևում,
Սեղանի ծերին, բազմոցի վերջին.
Բըռնած են ուրիշ տեղերը բոլոր։
Ու, կըռներն ընկած, մարդիկն իշխանի
Տարան Իլիային ծերը ներքևի,
Նըստեցրին էնտեղ—ներքևի ծերին։
Ու էսպես խոսեց Իլիան ներքևից.
—Ով դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,
Վայել չի ուժին, ոչ աստիճանին
Տեղն ու պատիվը, որ տալիս ես դու.
Ինքդդ նըստում ես ազգավների հետ,
Ինձ տեղ ես տալի ճուտերի կողքի՞ն։
Ասավ, կամեցավ տեղը դըրըստի—
Ջարդոտեց շուրջը կաղնի բազմոցներ,
Ոլորեց բիրերն ամբողջ երկաթի,
Սեղմեց հյուրերին անկյունը վերին։
Դուր չեկավ էս բանն Արև իշխանին.
Տեղիցը առույգ ելավ նա ոտի,
Մրթնեց, աշունքվա գիշերի նըման,
Մըռընչաց, ինչպես կատաղի գազան։
— Ի՞նչպես, Նիկիտա Զաոլեշանին,
Խառնե՞ս տեղերը դու իմ սահմանա՞ծ,
Ծրռես բիրերը համայն երկաթի՞...
Մեն մի հրսկայի արանքումը ես

Բիրեր եմ զարկել ամուր երկաթի,
Որ խընչուլքներին, որքան էլ խըժեն,
Որքան էլ հարբեն, չը դիպչեն իրար։
Հե՜յ դուք, մեծազոր ըռուս հրսկաներ,
Լսվա՞ծ է որ ձեզ, էդ հրսկաներիդ
Ագռավներ կանչի մինը ու ճուտեր։
Դուրս եկեք ձեզնից երեք լավերը դ,
Դո՛ւրս շպըրտեցեք — սըրահից փողոց։
Դուրս եկան ընտիր երեք հրսկաներ,
Սկսան Նիկիտին քաշել, քաշքըշել,
Սկսան Նիկիտին հրրել, հրմըշակել։
Կանգնած է Նիկիտան ու ժամ չի գալի,
Չի շարժվում նույնիսկ գըլխարկը գըլխին։
— Թե կուզես, իշխան, դու գըվարճանաս,
Թող դան սըրանց հետ երեք հրսկա էլ։
Դուրս եկան ուրիշ երեք հրսկա էլ,
Սկսան Նիկիտին քաշել, քաշքըշել,
Սկսան Նիկիտին հրրել, հրմըշակել։
Կանգնած է Նիկիտան ու ժամ չի գալի,
Չի շարժվում նույնիսկ գըլխարկը գըլխին։
— Թե կուզես, իշխան, դու գըվարճանաս,
Թող դուրս գան գոնե երեք հրսկա էլ։
Դուրս եկան երրորդ երեք հրսկան էլ,
Բան չը կարացին անեն Նիկիտին։
Ու էսպես խոսեց Նիկիտը այնժամ.
— Իշխան Վլադիմիր, մայր Կիևի տեր,
Ախորժակ ոմնիս անշուշտ խընդալու.
Համեցեք, հիմի մըտիկ արա ինձ
Ու ախորժակդ կանցնի խընդալու։
Ու Նիկիտը ինքն սկսավ խընդալ,
Սկըսավ սեղմել, զարկել, տըրորել
Ուժեղ ու հզոր էն հրսկաներին։
Սողում են սրահում հրսկաներն ամեն,
Չի կարում կանգնի ոչ մինը ոտի։
Դուրս եկավ Նիկիտան ապա սրահից,



Դրոնները զարկեց՝ շրջանակն ընկավ,
Դարպասը զարկեց՝ այտունները թրռան,
Ջարդ-փշուր եղան ճաղերը քաշած։
Իշխանը մըտավ ետևը փնչի,
Սամուր մուշտակը քաշեց իր գըլխին.
— Վա՜յ, կամա՜ց, ողո՛ք, ժամ չըգալ տեղից,
Չը լսի Նիկիտա Զալեշանին,
Թե չէ հետ կը գա ջարդ-փշուր կանի,
Ոչ մեծ կը թողնի, ոչ փոքրը մեկնից,
Ժառանգ չի թողնիլ ինձ՝ Վլադիմիրիս...
Դուրս եկավ Իլիան դարպասն ընդարձակ
Ու լարեց ճայթոն իր աղեղը գիլ,
Սուր, մըխած նետը գըրավ աղեղում,
Էսպես ինքն իրեն խոսեց նետի հետ.
— Սըլայի՛ր, իմ նետ, առնիրը ոսկի,
Վեր բեր ոսկեզօծ գըմբեթները ցա՜ծ։
Հեսկան ոսկեզօծ գըմբեթները ցած,
Ու կանչեց Իլիան կոկորդովը մին.
—Հե՜յ, դուք կաբակի մերկ ու տըկլորներ,
Հե՜յ, կամավորներ Արև իշխանի,
Վազեցեք, եկեք դարպասն իշխանի,
Առեք ոսկեզօծ գըմբեթները թանդ,
Կըրեցե՛ք, տարե՛ք կարակն տըջանի,
Արաղ խըմեցեք Լեռեղ կուշտ ու պինդ։
Վազեցին, եկան տըկլորներն ամեն,
Կամավորները Արև իշխանի,
Տարան, կըրեցին, գըմբեթներն ոսկի.
—Ո՞վ դու մեր պաշտպան, մեր ծնող, մեր հայր...

Ու Իլիայի հետ ելան, գընացին,
Խըմեցին բոլոր գըմբեթներն ոսկի,
Խըմեցին մինչև վերջինը միասին։
Ու երկյուղ ընկավ սիրտները էստեղ.
Ի՞նչ կանի մեզ հետ իշխանը հիմի,
Ի՞նչ պատիժ կը տա, ով գիտի, հիմի,

Խրմեցինք նրբա գրմբեթները ողջ։
Ու Իլիան էսպես խոսեց նրբանց հետ.
— Խրմեք, տղկլորներս, դուք մի՛ վախենաք։
Ես եմ վաղվանից իշխան Կիևում,
Իսկ դուք ամենից մեծ պիտի լինիք։
Անցավ երկյուղը, սկրսան խրմել,
Տերից սկրսան կյանք խրնդրել քաջին։
Իսկ իշխանական խրնջույքի վրա
Գնաց համբավը Արև իշխանին.
— Ո՜վ Արև իշխան, մայր Կիևի տեր,
Ձեզ ասել՝ Նիկիտա Զառուեշանին
Քու էս հարկերից, ոսկի հարկերից,
Զրկեց ոսկեզօծ գրմբեթները ցած,
Կանչեց կարակի ողջ տղկլորներին,
Խրմեց նրբանց հետ գրմբեթներն ոսկի։
Նրստած էր Կոտեղ խրնջույքի միջին
Ջահել Դոբրինիա Նիկիտիչ հրսկան,
Էսպես ասավ նա Արև իշխանին.
— Իշխան Վլադիմիր, մեր կարմիր Արև,
Նիկիտան չի նա Զառուեշանին,
Այլ իմ խաչախալերն—Իլիան Մուրոմից։
Ասավ՝ իշխանը մարի տունն ընկավ,
Իր հետ անվանի ազատներն ամեն
Եվ հրսկանները ուժեղ ու հրզոր,
Թև ինչպես տնի—հաշտվի ծերի հետ։
— Միտք արեք, տղղեք, միտք արեք մի լավ,
Միտք արեք, տղղեք, խորը միտք արեք,
Խելք խելքի տրվեք՝ մի հրնար գրտեք,
Ո՞ւմ ղրրկենք արդյոք ծերի եռևից,
Որ կանչի նրրան հարգինքի սեղան։
Ես ինքս գրնամ—չեմ ուզում գրնամ,
Ազրակոին գրրկեմ—վայել չի նրրան։
Ամենքը լռեց մրաքի մեջ ընկան.
— Ո՞ւմ ղրրկենք արդյոք ծերի եռևից...
Ե՛կ ղրրկենք գրնա ջահել Դոբրինիան,



Չէ որ Իլիայի խաչախալերն է նա.
Նրրա՛ն կը լրսի Իլիան թե լրսի։
Սեղանը անցավ Վլադիմիր իշխանն,
Եկավ ու կանգնեց Դոբրինիայի դեմ
Ու էսպես խոսեց Դոբրինիայի հետ.
— Արի՛, ե՛լ, կարիճ, ջահիլ Դոբրինիա,
Մերում Մուռոմցու մոտ գրնա մեզնից,
Երկիրը պագիր, խոնարհ ողջունիր,
Խոնարհիր մինչև հատակն ադյուսի,
Խոնարհիր մինչև էֆ գետինը ցած
Ու էսպես ասա նրրան մեր կողմից.
— Ուղարկել է ինձ Վլադիմիր իշխանն
Ու մայր տիկինը՝ Ազրակոիան իր հետ,
Խրնդրում են, որ գաս ուրախ հարգինքի։
Նա չի ճանաչել քեզ, կրարին քաջիդ,
Նրստեցրել է ցած, նեբքևի ծերին։
Խրնդրում է հիմի, լիասիրտ խրնդրում,
Խրնդրում լիասիրտ ու մեծ ցրնծությամբ.
Խրնդրում է մոռնաս ինչ տնց է կացել։
Գրնում է ահա ջահիլ Դոբրինիան,
Գրնում է ճամփով ու միտք է անում.
— Արդյոք վաղաժամ մահի՞ս չեմ գրնում...
Բայց թե չը լրսեմ Արև իշխանին
Փորձանք է գալու անշուշտ նրրանից։
Ու գրնում է նա կաբակն արքունի,
Մրտնում է ահա կաբակն արքունի.
Նրստած է էնտեղ ծերուկ Մուռոմցին,
Խրմում, քեֆ անում տղկլորների հետ։
Ու միտք է անում ջահիլ Դոբրինիան,
Ո՞ր կողմից արդյոք նրրան մոտենա.
— Առջևից գրնամ՝ դուր չը գամ գուցե.
Լավ է թիկունքի կողմից մոտենամ։
Եկավ, մոտեցավ թիկունքի կողմից,
Բրռնեց Իլիայի ուժեղ ոտերից
Ու էսպես մեղմով խոսեց նրրա հետ.

— Ո՞վ իմ խաչախպեր, իմ ախպերացու,
Ո՞վ դու իմ ախպեր, ծերուկ Մուռոմցի,
Քեզ պահի առժամ ձեռներդդ ճերմակ,
Բռնի ու զրպարտի սիրտդդ կրակոտ.
Չէ՞ որ բանբերին չեմ կապում, կախում.
Մենք էլ հո մեր մեջ ուխտ ունենք արած,
Ուխտ ունենք արած մեծ ու ահավոր,
Որ փոքր ախպերը լրսի իր մեծին,
Մեծն էլ իր փոքրին ականջ անի միշտ,
Ու էսպես կանգնենք մեկ մեկի համար։
Դեսպան է ղրկել քեզ մոտ ինձ էսօր
Վլադիմիր իշխանն իրեն տիկնոջ հետ,
Քեզ, հրգոր քաջիդ նա չի ճանաչել,
Նրատեցրել է ցած, նեբքևի ծերին։
Խընդրում է հիմի նա քեզ ցընծությամբ,
Խընդրում լիասիրտ մեծ խրրախճանի,
Թողնե՛ս, ասում է, ինչ անց է կացել։

Ետ է շուռ դալիս Իլեյկոն էսաեղ.
— Հե՞յ դու, Դոբրինիա ջահել Նիկիտիչ,
Քու բախտը բանեց՝ եռևից եկար,
Թե չէ առջևից դայիր, Դոբրի՛նիա,
Հող ու մոխիրդդ քամուն պիտ տայի։
Հիմի, ախպերրս, ձեռ չեմ տալի քեզ,
Կարգն ու օրենքը անցնել չի լինիլ։
Ետ դարձի, ասա Արև իշխանին,
Թող՞որ ինձ համար, ի՞նձ, քաջիս համար
Արձակի սաստիկ, սաստիկ հրրամանն
Ամբողջ Կիևին, էս մայր քաղաքին
Եվ Ձերնիգովին նույնպես սրրա հետ,
Որ արքունական կարակնները ողջ
Բացվեն երեք օր ու երեք դիշեր,
Ժողովուրդն ամեն դա արաղ խրմի,
Ով չի կամենալ որ արաղ խրմի,
Թող նա գարեջուր խրմի հարբեցնող,
Ով որ չի ուզիլ գարեջուր խրմի,



Թող նա մեղրաջուր խրմի քաղցրահամ,
Որ ողջ իմանան՝ Կիև է մրտել
Մուռոմցի ծերուկ Իլիան Իվանովիչ։
Ինձ համար էլ թող, էս քաջիս համար,
Սեղան բաց անի ճոխ մեծարանքի.
Իսկ թե չի անիլ ինչ ասում եմ ես,
Կիևում կիշխի մթնչև լուս միայն։
Ու արագ-արագ վազեց Դոբրինիան,
Վազեց Վլադիմիր անուշ իշխանին,
Պատմեց Իլիայի պատվերը նրան։

Հենց լրսեց պատվերն իշխան Վլադիմիրը,
Իսկույն, անհապաղ սաստիկ ու սաստիկ
Գրրեց բովանդակ Կիև քաղաքին,
Այլև Ձերնիգով հանեց հրրաման,
Թե ողջ երեք օր ու երեք դիշեր
Բաց պետք է լինի կարակն արքունի,
Գա, արաղ խրմի ժողովուրդն ամեն,
Խրմի, քեֆ անի անվարձ, անվրճար,
Որ ողջ իմանան Կիև է մրտել
Մուռոմցի ծերուկ Իլիան Իվանովիչ։

Ու ինքը բացեց հարգինքի սեղան,
Կանչեց, հավաքեց իշխան ու բոյար,
Ըռատաց բոլոր մեծ հրսկաններին,
Այլև քաջարի կտանաց դյուցազուն։

Բայց մարդ չի գընում կարակն արքունի,
Ամենքն իշխանի պալատն են վազում,
Ոչ կեր ու խումի, ոչ ոսկու համար,
Վազում են տեսնեն անվեհեր քաջին,
Տեսնեն Մուռոմցի էն ծեր Իլիային։
Հավաքվում են ողջ դարպասն իշխանի
Մրտնում են կամաց ապարանքը ներս։

Ու ծեր Մուռոմցին գալիս է ահա,
Գալիս՝ կարակի տրկլորների հետ,
Գալիս է, մրտնում սրրահը պայծառ,
Խաչ հանում դեմքին, ինչպես օրենքն է,

Ողջույն է տալիս ընդունված կարգով,
Երկրպագում է չորս կողմը խոնարհ,
Արև իշխանին ու տիկնոջն էլ ջոկ։
Վերկացավ խսկույն իշխանը առույգ,
Առավ Իլիայի ճերմակ ձեռներից,
Համբուրեց նրա շրթունքը շաքար,
Ապա թե էսպես խոսեց շողոմքոր։
— Ով դու ծերունի, Իլիա Մուռոմցի,
Ցած եղավ թեպետ քու տեղն ամենից,
Այժմ ամենից վերև կը լինի։
Հե՛յ, դուք ծառաներ իմ հավատարիմ,
Տարեք ծերունուն բա՛ռքը ամենից։
Բայց նա չը նըստեց ամենից վերև,
Գընաց ու նըստեց մեջ տեղն ամենի,
Հետը նստեցրեց մերկ տըկլորներին
Ու էսպես դարձավ Արև իշխանին.
— Ո՞վ դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,
Լավ ես իմացել՝ ում դըրկել ինձ մոտ.
Չըլներ Դոբրինիան՝ իմ ախպերացուն,
Չէի լսելու էստեղ ոչ որի,
Ու մըտքումս արդեն դըրել էի ես,
Լարել էս ճայթուն իմ աղեղը զիլ,
Արձակել դեպի սրահը դ շքեղ,
Սպանել և քեզ, իշխան Վլադիմիր,
Եվ քու տիկնոջը՝ քու Ապրակսիային։
Բայց էս անդամը աստված քեզ ների
Քու էդ հանցանքը, էդ հանցանքը մեծ։
Էստեղ անուշներ բերին հյուրերին,
Քաղցրը մեղրաջուր խըմիչքներ բերին,
Բերին ամենին դըրին մի մի թաս
Ու էսպես խոսեց Իլիան իշխանին.
— Ա՛յ դու Վլադիմիր, մայր Կիևի տեր,
Սըրանո՞վ ես դու պատվում հյուրերիս.
Սըրանո՞վ ես դու հարգանք ցույց տալի.
Էս տըկլորներին միայն մի մի թա՞ս...



Դուք չեկավ էս խոսքն Արև իշխանին,
Էսպես ծերունուն տըվավ պատասխան.
— Ամենքի համար խոր նըկուղներում
Արաղ ունեմ ես ինչքան կամենան.
Մարդը մի տակառ քառասուն չափանոց։
Թե հերիք չանի՝ ինչ որ կա էստեղ,
Թող իջնեն իրենք նըկուղներն իմ խոր։
— Ա՛յ դու Վլադիմիր, իշխան Կիևի,
Էդպե՞ս են պատվում քեզ մոտ հյուրերին,
Էդպե՞ս են քեզ մոտ հարգում քաջերին,
Որ իրենք գընանեն ուտեստ ու խըմի՞չք...
Տեսնում եմ տանտերն ես եմ լինելու։
Ասավ ծերունին ու ոտքի ելավ,
Էլ հարցմունք չարավ նըկուղի համփեն,
Էլ նըկուղների բանալիք չուզեց.
Թափ իջավ դեպի նըկուղները խոր,
Դըռները արավ ողջ կըրընկահան,
Պոկեց կողպեքներն առանց բանալի,
Ներս մըտավ ինքը նըկուղներն էն խոր։
Առած մի տակառն էս մի կրոնատակ
Ու մյուս տակառը մեկել կրոնատակ,
Երրորդը ոտով գըլորում է դուրս.
Ու դուրս գըլորեց դարպասն իշխանի,
Գոռաց ու կանչեց կոկորդովը մին.
— Հե՛յ դուք կաբակի մերկ ու տըկլորներ,
Դուրս եկեք էստեղ—դարպասն իշխանի,
Եկե՛ք, ամենքիդ արաղ խըմեցնեմ։
Ու իջավ կըրկին նըկուղները ցած։
Չը տարավ իշխանն ու թունդ ելավ խիստ,
Որոտաց ուժգին իր հընչուն ձենով.
— Հե՛յ հավատարիմ դուք իմ ծառաներ,
Շո՛ւտ, եկե՛ք, հասե՛ք արաղ ու արաղ,
Արաղ ու արաղ, ճեպով-հապճեպով,
Վեր դըրեք քաջին խորունկ նըկուղում,
Շուրջը քաշեցեք նրկաթի ցանցով,

Կաղնի կոճղերով կապեցնք չորս դին,
Թաղեցնք գեղին ավազի տակին,
Սովամահ արնք խորունկ նըկուղում։
Վազեցին, հասան ծառաներն արագ,
Արագ ու արագ, ճեպով-հապճեպով,
Վեր ղըրին ծերին խորունկ նըկուղում,
Շուրջը քաշեցին երկաթի ցանցով,
Կաղնի կոճղերով կապեցին չորս դին,
Թաղեցին գեղին ավազի տակին։
Ու ցավ դառով էս մյուս հըսկաներին,
Վեր կացան կիսատ քեֆի սեղանից,
Նյան, դուրս եկան գարպասն ընդարձակ,
Երինց ամեհի ձիանքը հեծան,
Դես դեն ցըրվեցին էն արձակ դաշտում,
Էն լին ու ազատ տարածության մեջ.
— Էլ չենք մընալ մենք Էստեղ—Կիևում,
Էլ չենք ծառայել Արև իշխանին։
Ու էլ Վլադիմիր իշխանի մոտին
Հըսկա չը մընաց Կիև էն օրից։

---

## ՍՎՅԱՏԱԳՈՐԸ

Էն սեպ սարերում, էն սուրբ սարերում
Նըստած եր հըսկան—Սվյատագորը մեծ,
Չէր գալի ոուսաց հողը սրբազան,
Չէր կարում ոտի դեմինը նըրան։
Ուզեց մի անգամ սիրտը հըսկայի
Ժուռ դա մի ազատ լայնարձակ դաշտում.
Թամբեց նըժույգը իր հըսկայական,
Ժեռուտ կողմերով ելավ ճանապարհ։
Ճըխաց լանջի տակ սիրտը այրական,
Խաղս առավ ուժը երակների մեջ,
Ու դուրս է հորդում ասես խաղալով։
Նեղվում է սակայն հըսկան էն ուժից,
Նեղվում է ինչպես մի ծանրը բեռից,
Ուրիշն էլ չըկա, որ հետը չափվի։
Ու ձգում է վեր մըկունդն իր պողպատ,
Սմպերից վերև—աչքից կորցընում,
Բռնում է կրկին հերմակ ձեռներով.
Ու խոսում է նա ինքնիրեն էսպես.
— Եթե գըտնեի ես ուժը հողի—
Օդ կամրացնեի երկնի կամարից,
Օդից երկաթի շըղթա կանեի,
Ցած կըքաշեի երկինքը ներքև,
Երկիրն էլ տեղից ես շուռ կըտայի,
Ողջ կըխառնեի—երկինք ու երկիր։

Էստեղ նկատեց, որ դուրան դաշտում
Գընում է հետի մի այլ ածդահա,
Ու էն ածդահի ուսովը ձրգած
Կա ճամփորդական մի փոքրիկ խուրջին։
Եթե քըշում է նրժույգն ամեհի,
Բաց թողնում ձիու թափովը ամբողջ,
Գնում է հեռու ճամփորդ ածդահան
Ու չի հասնում ձին իր հրսկայական.
Թե մեղմ է քըշում ու դանդաղ քայլքով,
Իր տեղն է հրսկան, չի շարժվում ասես։
Ու դոռաց էսպես Սվյատագորը մեծ.
— Հե՞յ դու անցավոր, անծանոթ կըտրիճ,
Կա՞ց, կանգնի տեղըդ մի առժամանակ։
Թե քըշում եմ ես նրժույգս ամեհի,
Բաց թողնում ձիու թափովն իր ամբողջ,
Գնում ես հեռու քո ճանապարհին
Ու չի հասնում ձին իմ հրսկայական.
Թե մեղմ եմ բշում ու դանդաղ քայլքով,
Քո տեղն ես դու միշտ, չես շարժվում ասես։
Կանգնեց իր ճամփին անցվորն անծանոթ,
Վեր ղըրավ գետնին ուժեղ ուսերից
Իր ճամփորդական խուրջինը փոքրիկ։
Ու մոտ քշեց ձին Սվյատագորը մեծ.
— Ասա՛ մի տեսնեմ, դու քաջ տըղամարդ,
Ի՞նչ է քո բեռը խուրջինիդ միջին։
Ու ճամփորդն էսպես տըվավ պատասխան.
— Ով դու փառապանծ հսկա դյուցազուն,
Փորձ փորձի մի առ իմ բեռը չընչին,
Վեր առ, թե կարաս, հըզոր ուսերիդ
Ու էնպես քըշի դաշտը լայնարձակ։
Պատասխան տվավ անցորդն անծանոթ,
Ու ձիուց իջավ Սվյատագորը մեծ։
Առաջ մի մատով ուզեց վեր քաշի—
Չը շարժվեց տեղից խուրջինն էն փոքրիկ։
Ապա մի ձեռքով բռնեց ածդահի—



Կըրկին չըշարժվեց խուրջինն իր տեղից։
Ապա թե հասավ ողջ ուժովն իր մեծ,
Դեմ տըվավ ճերմակ կուրծքը հրսկայի
Ոտի էն չնչին, փոքրիկ խուրջինին,
Բռնեց ահավոր ուժովն իր ամբողջ—
Մինչև ծընկները ընցաց հողի մեջ,
Արյունը կաթեց ճերմակ երեսից,
Իր տեղն է սակայն խուրջինը կըրկին։
Ու էսպես խոսեց հրսկան զարմացած.
— Շատ եմ մանՙեկել աշխարքումը ես—
Էսպես հըրաշքի դեռ չեմ հանդիպել,
Էսպես մի տեսիլք չեմ տեսել երբեք,
Չեմ տեսել էս բեռն իմ ծնած օրից.
Ուժ ունիմ էսքան—ուժըս չի պատում.
Ի՞նչ կա քո փոքրիկ խուրջինի միջին,
Եվ ո՞վ ես ինքըդ, և կամ ո՞րտեղից,
Պատասխան տուր ինձ, անծանոթ հրսկա։
— Իմ փոքրիկ խուրջնում ուժն է մայր-հողի,
Իսկ ես Միկուլան Սելյանինովիչ։
Պատասխան տըվավ անծանոթ հրսկան։

# ՍԵՐԲԱԿԱՆ ՎԻՊԵՐԳ

## ԹԵ ԻՆՉ ՈՒՂԱՐԿԵՑ ԹՈՒՐՔԻ ՍՈՒԼԹԱՆԸ ՄՈՍԿՈՎԻ ՑԱՐԻ ԸՆԾԱՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

(Ռուսերենից)

Քաղաքից քաղաք, աշխարհքից աշխարհք
Թուղթ անցավ եկավ Մոսկովու երկրեն,
Եկավ ու եկավ, հասավ Ըստամբուլ։
Ու դրին Թուղթը ոսկի կառեթում
Ու բերին իրեն՝ Թուրքի սուլթանին,
Ու Թղթի հետ էլ սուլթանի համար
Շատ թանգ ընծաներ արքային վայել։
Մի ոսկի սինի, մեջն ոսկի մեչիտ,
Մեչիտի շուրջը պատ եկած մի օձ,
Էն օձի գլխին դրած անդին քար,
Որ գիշերն էնպես պարզ լուս էր տալիս՝
Ոնց որ ցերեկը լուսն արեգակի։
Ու Իբրահիմին, սուլթանի որդուն,
Երկու թանկագին թրեր կալին սուր,
Գաստակներն ամբողջ զուտ մաքուր ոսկուց.
Ամենքի վրա մի-մի անդին քար։
Սուլթանի կընոջն ոսկի օրորոց,
Գըլխավերևը քաչահավ բաղեն։
Որ էս ընծաներն առավ անընման
Ընկավ սուլթանը մըտքի ծովի մեջ.
Ի՞նչ դըրկի արդյոք Մոսկովի ցարին
Էսքան թանկագին ընծաների դեմ։
Միտք արավ ու միտք, ոչինչ չգտավ։
Ով մոտը եկավ, ամենքի առջև



Պատմեց, պարծեցավ, թե ինչ ընծաներ
Ստացավ ինքը Մոսկովի ցարից,
Բայց ոչով ասել չի կարողանում,
Թե ինչ ուղարկի դըրանց փոխարեն։
Ներս եկավ ահա Ղուշբեգի փաշեն,
Նրա առջևը պատմեց, պարծեցավ.
Փաշից հետո եկան Խոջան ու Ղադին։
Երկիր պադեցին ու համբուրեցին
Մոնկն ու փեշերը իրեն սրբատան.
Նրանց առջևն էլ պարծեցավ նույնպես,
Ապա թե էսպես խորհուրդ հարցըրեց.
— Ո՞վ իմ ծառաներ, Խոջա ու Ղադի,
Ես ի՞նչ ուղարկեմ ցարին սրանց դեմ,
Որ ցարը ինձնից մընա բավական։
Պատասխան տվին Խոջան ու Ղադին.
— Տեր սուլթան, ասին, քո ստրուկն ենք մենք,
Մենք մըտածելու իրավունք չունենք.
Լավ կանես կանչես ծեր պատրիարքին,
Նա հեշտ կիմանա, հեշտ էլ քեզ կասի,
Թե ինչ ուղարկես Մոսկովի ցարին,
Որ ցարը քեզնից մընա բավական։
Էսպես որ ասին՝ լսեց սուլթանը,
Իրեն կավասին ուղարկեց իսկույն
Ու մոտը կանչեց ծեր պատրիարքին։
Ու, երբ պատրիարքն եկավ իրեն մոտ,
Ցույց տվավ ներքան ընծաներն ամեն,
Ու շատ պարծեցավ, ու էսպես ասավ.
— Ո՞վ դու իմ ծառա, ծերուկ պատրիարք,
Չե՞ս կարող արդյոք սովորցնել դու ինձ,
Թե ինչ պարգևներ դրկեմ փոխադարձ,
Որ իմ ուղարկած թանգ պարգևներից
Գոհ մընա հըզոր ցարը Մոսկովու։
Ասավ ու ծերը կամացուկ խոսեց.
— Ո՞վ, իմ տեր սուլթան, իմ կյանքի արև,
Քո իմաստությանն առջևն ի՞նչ եմ ես։

Բայց իմ կարճ խելքով, ինչքան որ գիտեմ,
Քո մեծ տերությանն լի գանձարանում
Դու բաներ ունես ցարին ղրկելիք,
Բաներ, որ իսկի հարկավոր չեն քեզ,
Իսկ նրան անչափ շատ են ցանկալի։
Նեմանիչ Սավվի գավազանն ունես,
Կոստանդին կայսեր ոսկի թագն ունես,
Ոսկերերանի շուրջառը ունես,
Սերբիայի հերոս Լազար տրքայի
Ռազմի խաչանիշ զրոշակն ունես...
Քո ինչի՞ն են պետք էս բաները ողջ,
Իսկ ցարին, գիտեմ, շատ են ցանկալի...
Շատ հավան կացավ սուլթանն էս խոսքին
Ու պատվեր տրվավ ծեր պատրիարքին,
Որ կազմի ընծան ցարին ղրկելիք
Ու դեսպաններին հանձնի Մոսկովի։
Ինքն, ինչպես գիտեր, ամենն հավաքեց
Ու դեսպաններին տարավ խրատեց.
— Գնացե՛ք, որդի՛ք, տեր-տոտված ձեզ հետ,
Բայց, մտիկ արեք, մեծ ճամփով չերթաք,
Անտառով անցեք, սարով զընացեք...
Ուր որ է՝ շուտով մարդիկ կուզարկեն՝
Խը·են ձեզանից էդ պարգևները,
Որոնցից բարձր ու նրվիրական
Մեզ համար ոչինչ չը կա աշխարհքում...
Թող սրբա համար իմ գլուխը տան,
Ու իմ մեղավոր մարմինը կորչի,
Բայց հոգիս արդեն փրկված է ընդմիշտ։
Ասավ՝ ճանապարհ դրեց ծերունին։
Գոհ էր սուլթանը, որ գլուխ հանեց
Էսքան հեշտությամբ էս գործը դժար,
Ու պարծենում էր ամենքի առջև,
Որ էսքան էժան դուրս եկավ տակից։
Ահա գալիս է Ղուշբեգի փաշեն։
Սրան էլ պատմեց, հետը պարծեցավ.



— Հապա մի գրի՛ր, Ղուշբեգի փաշա,
Ի՞նչ ղրկած լինեմ Մոսկովի ցարին.—
Նեմանիչ Սավվի ցուպն եմ ուղարկել,
Կոստանդին կայսեր թագն եմ ուղարկել,
Ոսկերերանի շուրջառն եմ ղրկել,
Սերբիայի հերոս Լազար տրքայի
Ռազմի խաչանիշ դրոշն եմ ղրկել։
Իմ ինչի՞ն էին էն ամենը պետք.
Իսկ ցարին շատ են պետք ու ցանկալի։
Ու հարցմունք արավ Ղուշբեգի փաշեն.
— Էդ ո՞ւմ խորհրդով դու էդպես արիր։
Սուլթանը ուղիղ պատասխան տվեց.
— Ձեր պատրիարքի խորհրդով արի։
Ու էսպես ասավ Ղուշբեգի փաշեն.
— Տեր սուլթան, ասավ, իմ պայծառ արև,
Եթե դու ցարին ղրկել ես էդանք,
Որոնցից որ թանգ էդ մարդկանց համար
Ոչ մի բան չըկա արար աշխարհքում,
Շատ լավ կանեիր եթե դրանց հետ
Ղրկած լինեիր և քո քաղաքի—
Մեծ Ըստամբոլի ոսկի բանալին։
Մին է, ավելի խայտառակ ձևով
Հետս ես տալու Մոսկովի ցարին...
Դրանց վրա էր մնում հաստատուն
Քո տերությունն ու քո զորությունը,
Որ տրվիր տարան Մոսկովի ցարին։
Էս որ իմացավ՝ նոր ղլխի ընկավ,
Շատ դարկեց ապշած սուլթանը էստեղ
Ու պատվեր տվավ փաշին հապճեպով.
— Է՛յ փաշա, ասավ, իմ հավատարիմ,
Հավաքիր իսկույն իմ զորքն ենիչեր,
Շտ՞ուտ դեսպաններին հասիր Մոսկովի,
Խլիր նրանցից պարգևներն ամեն,
Որոնց վրա որ կանգնած էր հաստատ
Իմ տերությունն ու իմ զորությունը,

Որ տրվի տարան Մոսկովի ցարին։
Ու քաջ Ղուշբեկին զորքը հավաքեց,
Գնաց ու գընաց մեծ ճանապարհով,
Որ գնապանների հասնի Մոսկովի,
Ու ոչ մի ճամփում հետքերը չկա...
Նա դարձավ, եկավ սուլթանին ասավ,
Թե ոչ մի ճամփում հետքերը չկա։
Բրոնեց սուլթանի ցասումը անզուսպ,
Ահարկու ձենով զոռաց իր փաշին.
— Հե՛յ, փաշա՛, կանչեց, շո՛ւտ արա, փաշա՛,
Գընա սպանիր ծեր պատրիարքին։
Էսպես որ կանչեց՝ դուրս վազեց փաշեն,
Գընաց ու բրոնեց ծեր պատրիարքին,
Պարանեց թուրը, շողացրեց գլխին.
Մեր պատրիարքը մեղմորեն խոսեց.
— Է՛յ փաշա, ասավ, նա քաշիր ձեռքդ,
Մի՛ ներկիր հոգը անմեղ արյունով,
Թե չէ կը կապվի ակը երկընքի,
Նրաշտ կը լինի շուրջ երեք տարի,
Չի տալ երկիրը էլ բար ու պտուղ։
Ու լըսեց փաշեն ծերունու խոսքին՝
Տարավ կանգնեցրեց ծովի եղերքին։
Սուր թուրը նորից պարանեց գլխին,
Ու նորից խոսեց արդար ծերունին.
— Է՛յ փաշա, ասավ, քե՛զ քաշիր ձեռքդ,
Ե՛կ իմ արյունը մի՛ թափիր ծովը,
Թե չէ փոթորիկ կանի սոսկալի,
Ծովը կը հուզվի, կելնի ալեկոծ,
Նավեր, նավակներ իր տակը կանի,
Շեներ, բաղաքներ կը ծածկի ջրով։
Բայց փաշեն նրան էլ ականջ չարավ,
Զարկեց ու կտրեց գլուխը ճերմակ։
Ու էսպես մեռավ արդար ծերունին,
Ինքն արքայություն գընաց երկընքում,
Իսկ մեզ խնդություն տվեց էս կյանքում։

---

# ՄԱՐԿՈՆ ՌԱՄԱԶԱՆԻՆ ԳԻՆԻ Է ԽՄՈՒՄ

ՍԵՐԲԱԿԱՆ ԱԶԳ. ԺՈՂ. ԷՊՈՍԻՑ

Սուլթան Սուլեյման հրաման հանեց,
Որ իրեն երկրում ոչ մի հպատակ
Ռամազան օրը գինի չխմի,
Կանաչ դոլամա չհագնի վերից,
Կողքիցը սրողպատ թուր չքկախ անի,
Շուրջպարի չերթա աղջիկների հետ։
Թուրը կախ արավ Մարկոն իր կողքից,
Կանաչ դոլամա հագավ վերևից,
Ռամազան օրը գինի է խմում,
Կանչում, հավաքում անցվոր ու խոշա,
Խմում է, թասը նրանց է տալիս։
Գալիս են թուրքերն իրենց սուլթանին.
— Սուլթա՛ն, մեր տերն ես, մեր ծնողն ես դու։
Չէ՞ որ դու ինքդ հրամանք արիր,
Որ մեր էս տոնին, էս ծանր պահքին
Ոչով բերանը գինի չտանի,
Ոչով դոլամա չհագնի կանաչ,
Ոչով կողքիցը թուր չքկախ անի,
Շուրջպարի չերթա աղջիկների հետ։
Մարկոն աղջկանց հետ շուրջպարի կերթա,
Մարկոն կողքիցը թուր է կախ արել,
Մարկոն հագել է կանաչ դոլամա,
Ռամազան օրը գինի է խմում։

Գլուխը քարը՝ թե մենակ խմեր,
Անցվոր ու խոջա կիտում է գլխին,
Համ ինքն է խմում, համ նրանց տալիս։
Սուլթան Սուլեյման էս լսեց թե չէ՝
Երկու սուրհանդակ ղրկեց Մարկոյին։
— Գնացե՛ք, ասավ, իմ արագ ազերք,
Գնացե՛ք շուտով Մարկոյին ասեք՝
Թե կանչում է քեզ սուլթանն անհապաղ։
Գնացին արագ սուլթանի մարդիկ
Շիտակ Մարկոյի վրանը մտան։
Խմում է Մարկոս գավաթն առաջին,
Մեջը կըլինի տասներկու օքա։
— Լսի՛ր, ասացին, քաջազուն Մարկո,
Սուլթանը ղրկեց մեզ քո եանից,
Վե՛ր կաց անդիցդ, գնանք սուլթանին։
Ասատիկ բարկացավ Մարկոն էս խոսքից,
Վեր կալավ ծանրը գավաթն առաջի
Ու՝ ա՛ռ հա կրտաս՝ օրանց գլխներին։
Գլուխ ու գավաթ չարդ ու փուրդ եղան,
Արյուն ու գինի խառնվեց իրար։
Ապա թե գնաց Մարկոն սուլթանին.
Գնաց աչ կողմը նստեց ծունկ ծնկի,
Սամուր գլխարկը քաշեց աչքերին,
Իր ծանր գուրզը ղրեց առաջին,
Սուր թուրն էլ ուսին բռնած պատրաստի։
Ու էսպես խոսեց սուլթանը թուրքի։
— Իմ հոդևորդի, քաջազուն Մարկո,
Դու հո լավ դիտես՝ կարգ եմ ղրել ես,
Որ մեր մեծ պահքին, Ռամազան օրը՝
Ոչով բերանը գավաթ չտանի,
Ոչով դոլամա չհագնի կանաչ,
Շուրջպարի չերթա աղջիկների հետ։
Իմ ծառաները ինձ մոտ են գալիս՝
Վատ խաբարներ են բերում քեզանից։
Դու պար ես գալիս, իբրև, շուրջպարի,



Պողպատի թուր ես կապել քո մեջքին,
Կանաչ դոլամա հագել վերևից,
Ռամազան օրը գինի ես խմում,
Անցվոր ու խոջա կանչում՝ խմեցնում։
Ի՞նչ ես գլխարկդ քաշել աչքերիդ,
Ինչո՞ւ ես բերել քո գուրզը քեզ հետ,
Ինչո՞ւ ես թուրդ բռնել պատրաստի։
Պատասխան տվեց Մարկոն սուլթանին.
— Ո՞վ իմ հոգևհայր, սուլթան Սուլեյման,
Իմ հավատն էսպես ինձ թույլ է տալիս,
Ես էլ խըմում եմ ձեր պահքի օրը։
Մենակ խմելը անվայել է ինձ,
Երբ ուրիշները մտիկ են անում,
Ես էլ կանչում եմ անցվոր ու խոջա,
Որ մտիկ չանեն, նրանք էլ խմեն։
Կանաչ դոլամա Լենգուր եմ հագնում,
Որ ջահել մարդ եմ ու սազում է ինձ։
Կողբիցս եթե թուր եմ կախ արել,
Իմն է, իմ փոզով ես ինքս եմ առել։
Աղջիկների հետ թե պար եմ գալիս,
Լենգուր, որ ազատ մարդ եմ ամուրի,
Ինչպես որ ինքդ եղել ես մի օր։
Գլխարկս Լենգուր եմ քաշել աչքերիս,
Որ չեմ դիմանում, ճակատս երվում է,
Երբ որ խոտում եմ սուլթան հորս դեմ։
Իմ գուրզն էլ հետս Լենգուր եմ բերել,
Ու թուրս պատրաստ պահում եմ էսպես,
Վախում եմ հանկարծ կռիվ պատահի։
Եվ՝ եթե կռիվ պատահի հանկարծ՝
Վա՛յ նրան, ով մոտ կըլնի Մարկոյին։
Զորս կողմը նայեց սուլթանը էստեղ,
Տեսնի թե ո՞վ կա մոտիկ Մարկոյին.
Տեսավ, որ ոչով չկա վրանում
Ու ինքն է մենակ մոտիկ Մարկոյին։
Ահից սկսեց քաշվել ետ ու ետ,

Մարկոն էլ առաջ՝ դեպի սուլթանը,
Տարավ ու սեղմեց վրանի պատին։
Սուլթանը ձեռքը դրպանը կոխեց,
Մի հարյուր դուկատ հանեց դրպանից,
Հանեց, դեմ արավ ջահել Մարկոյին.
— Ա՛ռ, ասավ, Մարկո, տար՝ դինի խմիր։

---

# ՄԱՐԿՈՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՊՅԱԿԻ ՀԱՐԿԸ

ՍԵՐԳԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԷՊՈՍ

Վաղ լուսաբացին վերկացավ Մարկոն,
Ձին հեծավ, չափեց դաշտը Կոսովի։
Գրնաց, որ հասավ Սերվանա գետին՝
Դիմացը կաց մի սիրուն աղջիկ։
— Բարի օր, ասավ, Կոսովցի քուրի՛կ։
Սիրուն աղջիկը խոր գլուխ տրվեց.
— Բարին արևիդ, անծանոթ կտրիճ։
Ու էսպես խոսեց Մարկոն քաջալուն.
— Քուրի՛կ, գու ջահել, էդքան գեղեցիկ,
Հասակդ նռնի, այտերդդ կարմիր,
Ափսո՛ս, որ մենակ ծամդ է խանդարում.
Ինչո՞ւ է, քուրի՛կ, ծամդդ ճերմակել,
Բախտդդ, երեի, թեղել է քեզնից։
Գու ի՞նքդ ես տրդյոր ցավի հանդիպել,
Թե քո խեղճ մերը, թե հերդդ ծերուկ։
Կոսովի աղջիկն արտասուք թափեց,
Արտասուք թափեց ու էսպես ասավ.
— Չէ՛, ախպերացու, անծանոթ կտրիճ,
Ես չեմ խորտակել իմ բախտն իմ ձեռքով,
— Փարձանքը ինքն է եկել իր ոտով։
Էս ինը տարի կըլինի ուղիղ,
Հեռվից տրաբը մեզ մոտ է եկել,
Կապալով Կոսովն առել սուլթանից։

Դրրել է երկիրն ամբողջ հարկի տակ,
Ուտում է,՝ խրմում դաշտը բովանդակ։
Մի ուրիշ հարկ է դրրել մեզ վրա.
Ամեն հարսնացու, որ մարդու գընա,
Պետք է վրճարի երեսուն ոսկի.
Ամեն փեսացու, որ աղջիկ ուզի,
Երեսուն ոսկի, շորսն էլ ավելի։
Ով էսքան ոսկի ուներ գրրպանում,
Ով էսքան ոսկի տրվեց արաբին՝
Ամենքը դարձան մարդու-որդու աեր։
Ես որբ աղջիկ եմ. եղբայրներ ունիմ,
Նրրանք էլ աղքատ, ձեռքները պակաս,
Չեն կարող էսքան հարկ տան արաբին։
Սրրա համար չեմ գընում ես մարդու,
Չեմ կարում դառնամ տան ու տեղի տեր.
Էս է իմ ցավը, անծանոթ ախպեր։
Բայց թե երանի էս լիներ մենակ,
Աղջիկն իր տանը նըստեր անպըսակ,
Կամ աղջիկ չտոներ տրդան նորահատ։
Ուրիշ մի ցավ կա, անարդ առավել,
Արաբը ուրիշ մի հարկ է դրրել,
Որ նոր պըսակված հարսին ու փեսին
Գիշերը տանեն արաբի մեծին,
Ինքը նոր հարսին փայի, փայփայի,
Իրեն մարդիկը չահել փեսային։
Ամեն տուն, ուր կան աղջիկ ու տղա,
Ղրկել են հերթով ամենքն արաբին։
Եկել է հերթը ինձ հասել հիմի,
Որ սև արաբին գընամ ես էսօր,
Որ նրրա կինը դառնամ ես էսօր։
Ու միտը եմ անում ինքըս իմ միջին.
Տե՞ր աստված, արդյոք ի՞նչ անեմ հիմի.
Ծրմա՞կը դընամ, թոկ գըցիմ, կախվե՞մ,
Թե՞ գետը գընամ, ջուրն ընկնեմ, խեղդվեմ.
Ինչ էլ որ լինի՝ մեռնեմ վերջանամ,



Քան չար թշնամու տարփածուն դառնամ։
— Քուրի՛կ ջան, ասավ Մարկոն դյուցազուն,
Մի՛ կըտրիր հույսդ, համբերող եղիր.
Ո՛չ ջրրում խեղդվիր, ոչ ծառից կախվիր,
Ու մի կորցընիր, ինքդ քո հոգին։
Ցույց տուր ինձ մենակ՝ տեղը արաբի,
Ո՛ւր է արաբը, ո՞րտեղ է կենում.
Խոսելիք ունիմ էսօր նրրա հետ։
Պատասխան տրվեց կույսը Կոսովի.
— Ախպե՛ր ջան, ասավ, անծանոթ կարիճ,
Ինչո՞ւ ես հարցնում տեղը արաբի,
Արաբի տեղը դատարկ տեսնեմ ես։
Չըլնի՞ թե դու էլ աղջիկ ես ուզել,
Գրնում ես, որ տաս հարկը պըսակիդ։
Չըլնի՞ թե քո մոր միտուճարն ես դու.
Եթե արաբը տա քեզ սպանի՝
Խեղճ պառավ մերրդ ի՞նչ պիտի անի։
Ու Մարկոն ձեռը գրրպանը տարավ,
Երեսուն ոսկի հանեց գրրպանից,
Տրվեց Կոսովի տրխուր աղջկան։
— Ա՛ռ, քուրի՛կ, բըռնիր էս երսուն ոսկին,
— Դարձի՛ր, նա գընա քո տունը ճերմակ,
Էնտեղ սպասիր քո կարմիր բախտին.
Ցույց տուր ինձ մենակ տունը արաբի,
Կերթամ քո հարկն էլ կըտամ ես նրրան։
— Արաբը, ախպե՛ր, տուն ու բակ չունի։
Նայիր դաշտն ի վար, դատարկ ու դուրան.
Մի տեղ է մենակ դրրոշ ծածանում,
Էն սև արաբի դրրոշն է մեռաքս,
Էնտեղ է նրրա վրրանը զարկած,
Վրրանի շուրջը կանաչ ցանկապատ,
Ամբողջ ցրցահան շարած գրլուխներ,
Մեր կըտրիճների գրլուխներն անբախտ։
Քառասուն պահապան ունի արաբը,
Հրսկում են անքուն դիշեր ու ցերեկ։

Հենց որ վերջացավ խոսքը աղջկա,
Շուռ տրվեց Մարկոն գըլուխն իր ձիու,
Քըշեց Կոսովի արձակ դաշտն ի վար։
Տաքացրեց, լցրեց իր հուր Շարացին։
Ոտների տակից կըրակ է թըռչում,
Պընչերից բոց է ելնում կապուտակ։
Գընում է Մարկոն սիրտը լեփ-լեցուն,
Իր ալտերն ի վար արցունք է հոսում,
Արցունքի տակից էսպես է խոսում.
— Հե՞յ, դու լայնարձակ ուրբ դաշտ Կոսովի,
Էս ի՞նչ ես տեսնում, ի՞նչ տեղ հասար դու
Մեր թագից հետո, մեր փառքից հետո.
Արևելքն եկել է՝ շոքել քեզ վըրա։
Չեմ կարող տանել էս ցավն ես դաժան,
Չեմ կարող տանել անարգանքն էս սև,
Էս տուրքն անօրեն, էս հարկն անպատիվ,
Որ աղջիկ-տրդա պըղծվեն սերբերի։
Քույրե՞ր, ձեր ոխը էսօր ես կառնեմ,
Ձեր ոխը կառնեմ, կամ թե՝ կը մեռնեմ։
Ու քշեց շիտակ վըրանի վըրա։
Պահնորդ արաբներ հեռվից աչքեցին
Ու էսպես ասին արաբի մեծին։
— Մեր տե՛ր, ասացին, մեր իշխան արաբ,
Կապույտ նըժույգը հեծած ամեհի,
Կոսովի դաշտով կըրակի նըման,
Մի արմանք զարմանք կարիճ է գալիս։
Կըրակ է թըռչում նըժույգի ոտքից,
Պընչերից ծուխ է ելնում կապուտակ։
Մեկ վըրա է սա քըշում շիփ-շիտակ։
Արաբի մեծը պատասխան տվեց.
— Հե՞յ, ասավ, տըղե՛րք, իմ քառասուն քաջեր,
Ո՞վ կարա իր ձին քըշի մեզ վըրա։
Նոր նըշան գըրած մի ջահել է գա,
Իրեն հարատանքի հարկն է գալիս տա։
Ամիսոն է գալիս երեսուն ոսկին,



Էրվում է իր մեջ ու քըշում է ձին։
Դուրս եկեք դրա առաջը՝ շտապով
Գըլուխ վեր բերեք հարգանքով, պատվով,
Օգնեցեք, ձիուց իջեցրեք իրեն,
Ձին ու զենքերը առեք իր ձեռքից,
Ու իրեն բերեք վըրանը-ինձ մոտ։
Ես գըրա ոսկին շտապ առնեմ,
Գըրա գլուխը պետք է ես առնեմ,
Ու խոզան կապույտ նըժույգը տակի։
Ասավ ու խրմբով ծառաներն ելան,
Որ ձեռքիցն առնեն ձին ջահել հյուրի,
Բայց հենց մոտեցան, տեսան Մարկոյին,
Էլ սիրտ չի տրին առաջը գընան,
Փախան, վըրանը մրատն վերադարձին,
Թաք կացան հետն արաբ իշխանի,
Իրենց ինքերը ծածկեցին փեշով։
Ներս մոտավ Մարկոն բակը արաբի,
Ցած իջավ ձիուց վըրանի շեմքում.
— Գընա՞, իմ Շարաց, քեֆ քաշի՛ր, ասավ,
Քեֆ քաշիր էստեղ, բակումն արաբի,
Բայց, տե՛ս, դընիցը հեռու չընդաս,
Դուցե թե շուտով հարկավոր լինես։
Ու մրատավ Մարկոն վըրանն արաբի։
Սիրուն սերբուհին առաջին կանգնած՝
Արաբը նստել դինի է խրմում։
Ներս մրատավ Մարկոն ու բարև տվեց.
— Բարի օր, ասնան՝ ր, բարի աշխատում։
Արաբը սիրով բարևը առավ.
— Ասածու բարին քեզ, անծանոթ կտրիճ.
Նըստի՛ր, մի բաժակ դատարկիր մեզ հետ,
Հետո կը պատմես՝ ինչու ես եկել։
Ետ դառավ Մարկոն պատասխան տվեց.
— Գինի խմելու ժամանակ չունիմ,
Եկածս էլ արդեն բարի է ինքնին։
Սըրանից բարի էլ ինչ կը լինի.

Աղջիկ եմ ուզել, պրսակ եմ գընում,
Հարսանքավորքս կանգնած է ճամփին,
Եկա՝ վրճարեմ տուրքը պրսակի,
Վրճարեմ և՛ ինձ, և՛ հարսիս համար,
Շուտ ասա, որ ես չընկրենք մեր ճամփից,
Ես քանի՞ ոսկի պիտի վրճարեմ։
Էս խոսքի վրա արաբը ասավ.
— Թե քանի ոսկի—դու ինքդ գիտես.
Հարսը տալիս է երեսուն ոսկի,
Փեսան երեսուն, չորսն էլ ավելի։
Բայց ես տեսնում եմ՝ կըտրիճ մարդ ես դու,
Հարյուր էլ որ տաս՝ ի՞նչ կա քեզ համար։
Ու Մարկոն ձեռը դրպանը տարավ,
Հանեց, շըպրտեց մի երեք ոսկի։
— Հավատա՛, ասավ, էլ ավել չունեմ։
Թե կուզես՝ մընա, սպասիր մի քիչ,
Մինչև պատկից եկամ հարսիս հետ,
Բաժինքը ոչ ըրեց, հարար ինձ լինի։
— Գարշելի՛, թըշղաց արաբն օձի պես.
Սակարկո՞ւմ ես դու... դու ծաղրո՞ւմ ես ինձ...
Ես չեմ հավատում ձեզնից ոչ մեկին։
Ասավ, վեր կացավ իր գուրգն առնգին
Զարկեց Մարկոյին երեք-չորս անգամ։
Զարկեց. ծիծաղեց Մարկոն քաջալուն։
— Հե՞յ, դու սև արաբ, հե՞յ արաբ, ասավ,
Կատա՞կ ես անում, թե ճիշտ ես զարկում։
Ու օձի նման արաբը թըշղաց.
— Կատակ չեմ անում, սըրտով եմ զարկում։
— Էնպես կարծեցի կատակ ես անում։
Դե որ էդպես է, սըրտով ես զարկում,
Ինձ հետ էլ մի գուրգ կընի եսկի.
Քանի անգամ որ դու ինձ զարկեցիր,
Էնքան անգամ էլ ես քեզ կը զարկեմ.
Նըրանից հետո գաշտը դուրս կըգանք,
Դաշտը կը ջոկի կտրիճը մեր մեջ։



Ասավ ու տռավ իր գուրգը մեխված
Ու էնպես զարկեց արաբի մեծին,
Որ գլուխն իսկույն թըռավ ուսերից։
Նայեց, ծիծաղեց Մարկոն քաջալուն։
— Տեր աստված, ասավ, փառքդ շատ լինի,
Ինչքան հեշտ թըռավ գլուխն արաբի,
Ասես գլուխ չէր ունեցել իսկի։
Ապա թե հանեց թուրը հալվունի,
Ողջ ծառաներին հրնձեց խոտի պես,
Քառասուն հոգուց չորսին թող արավ,
Որ գընան տեղեկանեն աշխարհքից աշխարհք,
Իր ու արաբի պատմությունն անեն։
Բակի շուրջ շարած գլուխներն առավ,
Ասքով ու փառքով թաղեց հողի մեջ,
Որ ցին ու ադդավ չդան, չկըացեն,
Նըրանց փոխարեն՝ արաբի մարդկանց
Գլխները զարկեց, շարեց բակի շուրջ,
Ու տիրեց դանձին արաբի դիզած։
Զորս արաբին էլ, որ թողեց կենդան,
Զորս կողմի վրա զըրկեց աշխարհքի,
Որ գընան տեղեկանեն դաշտը Կոսովի,
Պատմեն ու էսպես կանչեն ամեն տեղ.
— Որտեղ որ հասած աղջիկ կա տան մեջ՝
Արձակ-համարձակ թող մարդու գընա,
Ու թող պրսակվեն սիրտերը ապատ.
Վերացա՞վ, ջընջվե՞ց հարկը պրսակի,
Մարկոն վրճարեց ամենքի համար։

---

# ՄԱՐԿՈՆ ՎԱՐ Է ԱՆՈՒՄ

Իր պառավ մոր հետ միասին նըստած
Գինի էր խըմում Մարկոն դյուցազուն։
Երբ որ բավական գինի խըմեցին,
Մեծ մերն սկսեց սրդան խըրատել։
— Որդի՛ ջան, ասավ, արի, ինձ լըսիր,
Էգ բո ապրանատ արկանեն էկ թող—
Զեռ բաշի արի կրավից, ապրանից,
Զար բանից, որդի, բարի չի՛ ծընիլ։
Հոգնել եմ ես էլ պառավ տեղովըս
Ուրնոտ շատիկներ շատ լըվանոցուց։
Ա՛ռ մեր գութանը, մեր եզները առ,
Գրնա, սար ու դաշտ վարի գութանով։
Սպիտակ ցորեն ցանի քեզ համար,
Երկուսով ուտենք ու հանգիստ ապրենք։
Ու լըսեց Մարկոն իր մորը պառավ։
Գութանը լըծեց ու գընաց վարեց,
Բայց գընաց վարեց ոչ թե սար ու դաշտ,
Այլ էն մեծ ճամփեն թագավորական։
Երեք ձի բեռնած արծաթ ու ոսկի
Ճանապարհները էն ճամփով եկան,
Եկան, դուռացին Մարկոյի վրա.
— Էհե՛յ, ա՛յ Մարկո, մի՛ վարի ճամփեն.
— Էհե՛յ, ա՛յ թուրքեր, մի՛ ոտքեք վարըս։

— Էհե՛յ, ա՛յ Մարկո, մի՛ վարի ճամփեն.
— Էհե՛յ, ա՛յ թուրքեր, մի՛ ոտքեք վարըս։
Հերսը որ եկավ երկար վիճելուց,
Գութան ու եզներ առավ միասին,
Ջարկեց, ուեցն ու տեղ չարգեց թուրքերին։
Երեք ձիարեա գանձերը առավ,
Բերեց ու տըվեց իր մորը պառավ.
— Մերի՛կ ջան, ասավ, ոնց որ դու ասիր՝
Վար արի էսօր, էսքան դատեցի։

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

## 1905

## ՄԺՊՈՒԿԸ

### ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ

1

— Ոչ ոք չը տեսավ, թե ինչպես ծնվեց փոքրիկ մժղուկը։ Գարնան մի արև օր էր։ Աշքը բաց արավ, նայեց շորս կողմը ու կանչեց.

— Ի՞նչ լավ է։

Մին էլ ոտիկներն իրար քսեց ու թռավ։ Թռչում է և ուրախանում ամեն բանով։ Իսկ ներքևում խոտը կանաչին է տալի, և խոտի մեջ թաքնված մի կակաչ ժպտում է ու ժպտում։

— Ինձ մոտ արի, փոքրիկ մժեղ,— կանչում է ծաղիկը։

Մժղուկը իջավ ծաղկի վրա, ծծեց նրա հյութն ու ասավ.

— Ի՞նչ լավ է, և էս բոլորն իմն է։

Բայց դեռ խոսքը բերանումն էր, որ բըռռացնելով եկավ բրդոտ բռռը։

— Բը՞ռռ... էդ ո՞վ է նստել իմ ծաղկի վրա, բը՞ռռ... ո՞վ է խմում իմ քաղցր հյութը. բը՞ռռ... Դե՛նը կորի, անպիտան մժղուկ։

— Սպասի՛, է՞ս ինչ բան է,— տրղարդաց մժղուկը,— չէ՞ որ էս բոլորն իմն է։

— Բը՞ռռ... չէ՛, իմն է։



2

Մժղուկը ոտները դռռով ազատեց կատաղի բռռից։ Նըստեց խոտի վրա, լիզում էր ծաղկի հյութով թաթախված ոտիկները ու բարկացած խոսում.

— Ի՞նչ կոպիտ է էդ բռռը, չէ՞ որ էդ բոլորն իմն է, արևն էլ, խոտն էլ, ծաղի՛կն էլ։

— Ո՛չ, ներեցեք, ի՛մն է,— խոսեց բրդոտ ճիճուն, որ բարձրանում էր խոտի ցողունի վրա։

Մժղուկը դլխի ընկավ, որ ճիճուն թռչել չը գիտե, համարձակ ձայնը բարձրացրեց։

— Ներողությո՛ւն, բարեկամ, սխալվում ես, բոլորն իմն է. բայց ես հո՛ չե՞մ արգելում քեզ։

— Լա՛վ, լա՛վ, մտի՛կ արա, որ իմ խոսքին չը դիպչես. ձեզանից էստեղ ենքան թռչում են որ... Դուք թեթևամիտ ժողովուրդ եք, իսկ ես ծանր ճիճու։ Դե՛, հայդե՛, գնաս բարով։

3

Մժղուկը թողեց ու թռավ հեռու. տեսավ ջուր։

— Էս հո իմն է ու իմը, իմ ջուրը։ Ա՜խ, ի՞նչ լավն է. էստեղ խոտ էլ կա, ծաղիկ էլ կա։

Եվ ահա թռչում գալիս են ուրիշ մեղուներ էլ։

— Բարի օր, քո՛ւրիկ։

— Աստծու բարին ձեզ, քո՛ւրիկներ։ Էդ ո՞ւր եք թռչում։

— Խաղ ենք անում, դու էլ ուրի մեղ հետ։ Էնպես ուրախանո՛ւմ ենք։

Ու գնացին։ Խաղում էին ջրի վրա, պտըտվում ու թըռչկոտում։

Հանկարծ, սրի՛ժժ, ոնց որ մինը մի քար գցի, ճնճղուկն ընկավ մժեղների մեջ։

— Վա՜յ, վա՜յ,— ժըվժըվացին բոլորն ու ցրվեցին դես ու դեն։

Մին էլ երբ ուշքի եկան, տեսան շատերն էին պակասել։

— Ա՞խ, անպիտան,— հայհոյում էին ծեր մժեղները,— ամբողջ տասը հոգի փչացրեց։

— Վա՜հ, ամբողջ տա՞սը հոգի. էս հո բոլոր էլ անց կացավ։

4

Մեր մժղուկի սիրան ահ ընկավ, ու մյուս նաբելուկների հետ միասին մոտավ ճահճի խոտերի արանքը, տապ արավ։

Բայց էնտեղ էլ ուրիշ փորձանք։ Երեք մժղուկի ձուկը կերավ, երկուսին էլ զորքը տարավ։

— Էսպես էլ բա՞ն կը լինի...— զարմացած մնացել էր մեր մժղուկը։— Մի՞թե կարելի է ապրել էսպես։

Գիշերն ընկավ, մութը վրա հասավ, ու բոլոր մժղուկները մոտան եղեգնուտի տաք տեղերը, թաք կացան։

Վերև երկինքը լցվեց աստղերով, լուսինն էլ ծագեց, ու մթամին ցոլացին ջրի մեջ։

Էնպես սիրո՞ւն էր։

— Ա՞խ, իմ լուսնյա՞կը. իմ աստղերը...— շշնջում էր մժղուկը, բայց ահից էնպես կամաց էր շշնջում, որ ոչ ոք չը լսի։

— Ա՞խ, իմ աստղե՞ր...— շշնջաց կամաց ու քնեց։

---

# 1908

## ԲԱՐՈՆ ՄՅՈՒՆԽՀԱՈՒԶԵՆԻ ՁԱՐՄԱՆԱԼԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

### Է. ՌԱՍՊԵ

#### ԱՌԱՋԻՆ ԻՐԻԿՈՒՆԸ

Ափսոս, որ գուք չէիք ճանաչում իմ պապին։ Մի հաղվագյուտ մարդ էր ու անմոռան սրսկան։ Շարաթներով սար ու ձոր ընկած սրսի էր մոտ գալի ու ոչ հոգնում էր, ոչ քնում, ոչ ուտում էր, ոչ խմում։ Եվ անվերջ, անվերջ պատմություններ էր անում իր որսորդական կյանքից։

Իրիկունները շիբուխը սարքում էր, վառարանի գիմացը նստում ու պատմում։

Մի անգամ էլ, պատմելու ժամանակ, մեզանից մի չարաճճին ընդհատեց.

— Հը՛, պապի, էգ մինը ավելացնում ես...

— Փա՛հ,— ասավ,— ինձ որ ասում եք ավելացնում ես, հապա ինչ կասեիք, եկեք իմ ընկեր բարոն Մյունխհաուզենին լսեք։

— Ո՞վ է Մյունխհաուզենը, պապի։

— Մյունխհա՞ուզենը... Մյունխհաուզենը իր ժամանակին մի որսկան էր որ... Պետք է նրան լսեիք, թե ինչ զարմանալի բաներ էր պատմում...

— Ի՞նչ էր պատմում, պապի. պատմի մենք էլ լսենք։

— Չէ՛, չեմ պատմիլ, ընդհատում եք։

— Չէ՛, պապի ջան, պապի, էլ չենք ընդհատիլ։

— Լա՛վ, որ խոսք եք տալի կըպատմեմ։ Միայն թե

խոսքը խոսք պետք է լինի։ Ով չի ուզում թող նա չը լսի, իսկ ով լսում է— չընդհատի։

— Իմ բարեկամ Մյունխհաուզենը մեռած է վաղուց, բայց էս բոպեին էլ կարծես աչքիս առաջ է նրա բարձր ու մի քիչ կորացած հասակը, միշտ ուժեղ ու առողջ։

Նա հայտնի էր ինչպես լավ պատմող։ Զարմանալի պատմություններ էր անում, բայց ինչ էլ որ պատմում էր, բոլորը թվում էր և՛ կարելի, և՛ հավանական։

Իհարկե, նրա նման ես չեմ կարող պատմել, բայց նրա անունից կըպատմեմ, որ ավելի կենդանի դուրս գա պատմությունս։

Էստեղ պապս հաղաց, կոկորդը մաքրեց ու սկսեց, իբրև թե բարոն Մյունխհաուզենն է ինքը։

— Իմ թանկագին հյուրեր, բարեկամներ ու ընկերներ։ Էսօր ես ձեզ մի բան պետք է պատմեմ վաղուց ինձ հետ պատահած արկածներից։ Էն ժամանակ ես դեռ քսանհինգ տարեկան երիտասարդ էի, առողջ, շահել, բարձրահասակ։

Մի անգամ, ինչպես եղավ, որսի գնացի ու ամբողջ երեք օր առանց հանգստանալու մեն եկա։ Ճշմարիտ է, խուրջինս որսով լիքը վերադարձա, բայց էնքան էի հոգնել, որ հապիշ էի կենում թամբի մեջ։

Իմ նժույգ Այաքսն էլ նույնպես հապիշ էր ոտները փոխում։ Ես թամբի միջին ննջում էի։ Այաքսն էլ, տեսնելով, որ սանձը թողած է, մեծ ճամփից դուրս է գալի, ընկնում մի նեղ շավիղ, մի երկու վերստ գնում ու կանգնում։ Զարթնում եմ աչքերս տրորում, չորս կողմս մտիկ եմ անում — ու տեսնում՝ կանգնած ենք մի ահագին ճահճի եզերքին։

Դե, հիմի արի ետ դառ։

Չէ՛, ինչ ուզում է լինի—ետ չեմ դառնալ. անց եմ կենալու վճռեցի ու ասպանդակեցի իմ Այաքսին։ Այաքսը ծառս եղավ, ամբողջ թափով թռավ ու՝ մին էլ տեսնեմ՝ մենք ճահճի վերև կախված ենք օդում։ Հենց էդ բոպեին միտս ընկավ, որ Այաքսը շատ է հոգնած։ Էդ օրը մենք 25 թե 30 նապաստակի ետևից ենք ընկել ու բռնել... Էլ երկար միտք չարի, օդի մեջ ձիուս գլուխը շուռ տվի ու հո՛պ, դարձյալ կանգնեցինք ճահճի ափին, ճիշտ էն տեղը, որտեղից Այաքսը թռել էր։

Ասի ավելի լավ է ձիս չափ գցեմ ու էնպես թռցնեմ ճահճի վրից։ Նա սովորաբար հեշտությամբ թռչում էր քսան քայլ լայնությամբ արգելքների վրից, իսկ ճահճի լայնքը, աչքի չափով, 20 քայլից ավելի չէր թվում ինձ։

Մի քիչ ետ գնացի, Այաքսի վիզը շոյեցի, մին էլ ասպանդակեցի, ու նորից մենք ճախրեցինք օդի մեջ։

Սակայն ճահիճը քսան քայլից լայն դուրս եկավ, ու ափից մի քանի քայլ հեռու՝ երկուսս էլ ընկանք ցեխի մեջ։ Ես զգում էի, ոնց էին ոտներս խրվել, Այաքսը հո ամբողջովին թաղվել էր տղմի մեջ, միայն գլուխն էր, որ մնացել էր դուրս ցցված... Էլ երկար ու բարակ միտք անելու ժամանակը չէր, հարկավոր էր ձեռաց մի ճար մտածել։ Մնկներս ամուր սեղմեցի ձիու կողքերին, ձախ ձեռով սանձը պահեցի, աջ ձեռս տարա՝ բռնեցի իմ մազերից, ձիգ տվի ու ցեխից դուրս հանեցի ինձ ու ձիուս միասին։

— Պա՜հ, պապի. էդ ինչ տեսակ մարդ է եղել քու ընկեր Մյունխհաուզենը...

— Հապա՞. մի հնարագետ, համարձակ ու վճռական մարդ։ Ինչպես տեսնում եք, նեղության մեջ գիտեր իրեն աղատելու ճարը գտնել։ Բայց մի մեծ շնորհք չի նեղության մեջ ճար անելը, երբ միջոցներ կան ձեռքիդ տակ. շնորհքը էն տեսակ դրությունից դուրս գալն է, երբ ձեռքիդ չըկա ոչ մի միջոց... Դե հիմի դուք դենը տեսեք, ինչ է պատմում։

— Մի առավոտ ննջարանիս լուսամուտից նայում եմ, տեսնեմ վայրի բադերի մի ամբողջ երամ լճի վրա պտըտվում է։ Իսկույն շորերս հագա, հրացանս վերցրի, վազեցի։ Բայց շտապելուց ճակատս էնպես ուժով դարկեցի շեմքափեռին, որ աչքերիցս կայծեր դուրս թռան։ Էլ ժամանակ չունեի վերքի մասին մտածելու, վազելով սկսեցի հետը ճակատս շըփել, հետն էլ նշան դնել բադերին։ Դու մի ասիր, սաստիկ դարկվելուց հրացանիս կայծաքարը վեր է ընկել, ուրիշ բան էլ չըկա թե հրացանս արձակեմ... Ի՞նչ անեմ, ո՞նց անեմ։ Առաջս բադերը լողում են, հրացանը ձեռիս կանգնած եմ ու

չեմ կարող արձակել։ Բայց մարդը եթե մարդ է, ամենանեղ դրության մեջ էլ հնարը գտնում է։ Միտս ընկավ, թե ինչպես մի քիչ առաջ ճակատս, որ դռան շեմքափետին զարկեցի, աչքերիցս կայծեր դուրս թռան, ու իսկույն օգտվեցի իմ էդ նոր գյուտից։ Հրացանիս ոտը վեր քաշեցի, վառոդը բաց արի, հրացանը երեսս կալա, որքան ուժ ունեի շը՞խկ, զարկեցի ճակատիս... Իսկույն աչքերիցս կայծեր դուրս թռան, մի քանիսն ընկան վառոդի վրա ու, տրա՞ք, հրացանը բացվեց։ Գնամ տեսնեմ՝ մի տասը բաղ մնացել են տեղն ու տեղը։

Մի անգամ էլ հիմի դաշտ եմ դուրս եկել, որ նոր հրացանս փորձեմ։ Շատ որս պատահեց, ինչ գնդակ ունեի բոլորն արձակեցի։ Մին էլ հանկարծ տեսնում կաքավի մի ամբողջ երամ։ Ախորժակս բացվեց։ Ասի—ինչ ուզում է լինի, ընթրիքի համար մի քանիսը պետք է զարկեմ։ Բայց ի՞նչով զարկես. ոչ մի հատ գնդակ չի մնացել։ Ա՛յ քեզ փորձանք։ Էստեղ գլխումս մի հրաշալի միտք ծագեց։ Իսկույն հրացանս լցրի ու գնդակի տեղ շամփուրը դրի մեջը։ Նշան դրի օդում թռչող կաքավներին, հրացանը բացվեց, շամփուրը կայծակի արագությամբ սլացավ, յոթը հատ կաքավ շամփրեց ու ընկավ ներքև։ Հենց էնպես ուսիս դրի՝ եկա տուն։

Բայց էս դեռ ոչինչ։

Մի անգամ Լիֆլանդիայում որսի էի ման գալի, ճամփին մի մեխ գտա։ Հրացանն ուսիս, էդ մեխն էլ ձեռիս, մտքիս եռեվից ընկած, հանգիստ գնում եմ անտառում։ Մին էլ տեսնեմ մի քանի քայլ հեռու մի թուխ թավամազ աղվես, մի շամի ծառի տակ մտած՝ քիթը վեր է քաշել ու օդի մեջ հոտոտում է։

Կողքիս թփի տակը մտա, նշան դրի որ զարկեմ, հանկարծ հիշեցի, որ մի քանի օր առաջ էլ կոտորակի զարկով մի հիանալի աղվեսի մորթի փչացրի։ Չէ, ասիս է էս տեսակ մորթին փչացնեմ, պետք է մի ուրիշ միջոց դանել։ Աչքս ընկավ մեխի վրա։ Եվ ահա ինչ միջոց։ Գնդակը հանեցի, մեխը դրի հրացանի մեջ, արձակեցի. աղվեսը մնաց տեղը։ Գնամ տեսնեմ տեղն ու տեղը մեխել եմ ծառին։ Դնչի մորթին խա-



չաձև կտրեցի, մի ճիպոտ առա ու սկսեցի սրան թխել, ոնց որ գիտես։ Սա էնպես իրեն կորցրեց, որ իր մորթուցը դուրս պրծավ ու հայդե՛, փա՛խավ...

Ես էս ընչի՞ համար եմ ասում, նրա համար եմ ասում, որ տեսնեք թե էն դատարկ մեխն ինչ է, տեղն ընկած տեղը է՛ն էլ կարող է պետք դալ։

Բայց ձեռքդ երբ որ իսկի մեխ էլ չկա—էն ժամանակ ի՞նչ պետք է անես—ա՛յ, սրա պատասխանը տուր։

Էս դեպքից մի քանի օր անց՝ գնդակս ու վառոդս վերջացրած՝ որսատեղից տուն եմ գալի։ Հանկարծ մի թփի տակից դուրս եկավ ու վրես հարձակվեց մի վայրի վարազ։ Իհարկե, շատ էլ ախորժելի բան չի էս տեսակ մի կատաղի գազանին հանդիպելը, մանավանդ երբ հրացանդ էլ դատարկ է։ Էստեղ, ինչ թաքցնեմ, քաջությունս մի կողմը դրի ու վազեցի բարձրացա հենց առաջին պատահած ծառին։ Ծառն էլ դուրս եկավ մի ջահել ծառ։ Ձոռով վրեն տեղավորվել եմ ու ոտներս բարձրացրել։ Վարազը հասավ, ամբողջ թափով տր ծառին զարկեց՝ ժանիքները ծառի էս կողմից մտան էն կողմից դուրս եկան։ Էլ ժամանակ չտվի գազանն ուշքի գար, ներքև թռա, մի քար վեր կալա ու ինչպես որ մեխի ծայրերը ետ են ծեծում, սրա՝ ծառի մյուս կողմից դուրս եկած ժանիքների ծայրերը ետ ծեծեցի, որ իսկի էլ չը կարենա հանի։

Եկա տուն, հաց կերա, քնեցի, առավոտը վեր կացա, մարդիկ վերցրի հետս, սայլը լծեցի, հրացանս լցրի ու գնացի։ Գնացի հրացանը քաշեցի—առ հա կը տաս՝ սրա ճակատի միջտեղը։ Բերթեցինք, քաշեցինք, դուրս եկավ վաթսուն փութ ու՝ լավ չի միտս՝ քանի գրվանքա։

Բայց դեռ էս էլ ոչինչ։ Դուք շարունակությունը տեսեք։

---

# 1910

## ՊԱՌԱՎ ՁԻՆ

### ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ

Մեզանում Պիմեն անունով մի հին ծերունի մարդ կար։

Խոնսուն տարեկան էր։ Պարապ-սարապ ապրում էր իր թոռան մոտ։ Մեջքը կռացած, փայտը ձեռին, ոտները դանդաղ քարշ տալով՝ ման էր գալիս։ Բերանը անատամ, դեմքը կնճռոտած, իսկ ներքին շրթունքը դողդողում էր շարունակ։ Ման գալիս, խոսելիս շրթունքներով ծլրփացնում էր, ու անկարելի էր հասկանալ թե ինչ է ասում։

Մենք չորս եղբայր էինք, չորսս էլ սիրում էինք ձի նստել, բայց նստելու հանգիստ ձի չունեինք։ Միայն մի պառավ ձիու էին թողնում նստենք, որի անունը Սևուկ էր։

Մի անգամ մայրիկս մեզ իրավունք տվեց ձի նստենք ու ամենքս միասին ծառայի հետ գոմը վազեցինք։ Դարձյալ Սևուկը թամբեցին մեզ համար։ Առաջինը նստեց մեծ եղբայրս։ Քշեց կալը գնաց, պարտեզի չորս կողմովը պտըտվեց, դեպի մեզ եկավ թե չէ, ձեն տվինք—հապա դի մի շափ գցի։ Նա սկսեց Սևուկին զարկել ոտներով, մտրակով ու Սևուկը վազեց մեր կողքից։

Մեծից հետո մյուս եղբայրս նստեց։

Նա էլ երկար ման եկավ, նույնպես մտրակով քշեց Սևուկին ու շափ գցեց սարի տակից։ Դեռ էլ էր ուզում ման գա, բայց երրորդ եղբայրս խնդրեց, որ շուտով թողնի իրեն։ Երրորդ եղբայրս քշեց և՛ դեպի կալը, և՛ պարտեզի չորս կողմով, և՛ գյուղի միջով, ու արագությամբ բաց թողեց սարի տակից



դեպի գոմը։ Երբ մեզ հասավ, Սևուկը հեռում էր, իսկ շլինքն ու ազդրերը քրտնքից սևացել էին։

Հերթն ինձ եկավ։ Ես տպում էի եղբայրներիս զարմացնեմ, ցույց տամ, թե ոնց եմ քշում։

Սկսեցի քշել Սևուկին բոլոր ուժով։ Բայց Սևուկը չէր ուզում գոմից հեռանա։ Ինչքան տվի, ինչ արի-չարի տեղիցը ժաժ չեկավ, հենց վախում էր ու ետ-ետ գնում։ Ես բարկացա ու ինչքան ուժ ունեի սկսեցի զարկել մտրակով ու ոտներով։ Աշխատում էի զարկել էն տեղերին, որ ավելի ցավ են տալիս։ Մտրակը կոտրեցի ու ձեռիս մնացած կոտրով սկսեցի գլուխը ծեծել։ Բայց Սևուկը էլ չէր ուզում գնալ։ Այն ժամանակ ես ետ եկա ծառային խնդրեցի, որ մի ավելի ամուր մտրակ տա։ Ծառան ասավ,— հերիք էր ինչ քշեցիք, վեր եկեք, ինչու եք տանջում անասունին։

Ես նեղացա.

— Ո՞նց թե, ես իսկի չեմ քշել։ Տես ինչպես շափ կը գցեմ հիմի։ Դու միայն ինձ մի ավելի ամուր մտրակ տուր, ես սրան մի վառեմ։

Ծառան գլուխը թափ տվեց.

— Է՜հ, ախպեր, դուք խղճմտանք չունեք, դրան էլ ի՞նչ վառել կուզի։ Տեսեք, արդեն քսան տարեկան ձի է։ Տանջված անասուն է, հազիվ է շունչ քաշում։ Պառավել է, հասկանում եք, թե՞ չէ. ա՛յ Պիմենի պես—պառավել է։ Մինթե կընստեիք Պիմենի մեջքին ու էդպես մտրակով կրծեծեիք ուժիցը վեր... մինթե չէիք խղճահարվիլ։

Ես իսկույն հիշեցի Պիմենին և ականջ դրի ծառային։

Ձիուց իջա ու երբ մակի արի, թե ինչպես էին նրա քրտնած կողքերը բարձրանում ու ցածանում, ինչպես էր ոտներով ծանր շունչ քաշում, հեռում, մազթափ պոչը շարժելով. տեսա, որ վատ վիճակի մեջ էր։ Իսկ ես կարծել էի, թե նա էլ էր ինձ պես ուրախանում։ Այնպես մեղքս եկավ Սևուկը, այնպես մեղքս եկավ, որ սկսեցի քրտնած շլինքը համբուրել, ներողություն խնդրել, որ ծեծել եմ։ Այն օրվանից ինչ մեծացել եմ, ես միշտ խղճում եմ ձիաներին, ու, երբ տեսնում եմ նրանց չարչարելիս, հիշում եմ պառավ Սևուկին ու պառավ Պիմենին։

# Ի՞ՆՉ ԼԱՎՆ ԷԻՆ, Ի՞ՆՉ ԹԱՐՄ ԷԻՆ ՎԱՐԿԵՐԸ...

Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

*Վաղո՞ւց, շատ վաղուց, մի տեղ, մի տնկում ես մի ռատնավոր եմ կարդացել։ Վաղուց էլ մոռացել եմ էն սառնավորը... բայց մտքիս մեջ մնացել է առաջին տողը.*

*«Ի՞նչ լավն էին, ի՞նչ թարմ էին վարդերը...»*

*Զմեռ է։ Հիմի. ցուրտ սառցիկ է լուսամուտներիս ապակիները. մի մամ է փռվում մութը սենյակում։ Քաշվել, նրստել եմ մի անկյունում, իսկ դլխիս մեջ հնչում է ու հնչում.*

*«Ի՞նչ լավն էին, ի՞նչ թարմ էին վարդերը...»*

*Ու իրրև թե քաղաքիցը դուրս մի աուսական տան ցած պատուհանի առջև կանգնած եմ ես։ Ամռան երեկոն մեղմիկ հալվում, փոխվում է գիշերի։ Գազջ օդը լիքն է հափրուկի ու լրենու բուրմունքով, իսկ լուսամուտում. լուսամուտին տված ձեռքին հենված՝ գլուխը ուսին թեքած, նստած է մի աղջիկ ու լուռ, անթարթ նայում է երկնքին, ասես թե մնում է առաջին աստղերի երևալուն։ Ի՞նչքան պարզորեն ոգևորված են նրա մտախոհ աչքերը, ի՞նչքան հուզիչ-անմեղ են կիսաբաց, հարցավոր շրթունքները, ի՞նչ հավասար շնչում է դեռ լիովին չբացված, դեռ ոչ մի բանով չալեկոծված կուրծքը, ի՞նչ մաքուր ու բնական է ջահել գեմքի տեսքը։ Միայն չեմ անում իմանալ՝ հնար, բայց ի՞նչքան թանգ է նա ինձ համար, ո՞նց է զարկում սիրտս...*

*«Ի՞նչ լավն էին, ի՞նչ թարմ էին վարդերը...»*

*Այնինչ սենյակս մթնում է ու մթնում... Ճրթճրթում է հատնող մոմը. խուսափուկ ստվերները երերում են ցած առաստաղին, սառնամանիքը ճայթում ու գալազում է դուրսը, ու ծերության տխուր մի շշշունչ խոսում է ականջիս.*

*«Ի՞նչ լավն էին, ի՞նչ թարմ էին վարդերը...»*

*Ու առաջս են գալիս ուրիշ պատկերներ... լսում եմ գյուղի ընտանեկան կյանքի զվարթ աղմուկը։ Երկու շիկահեր գլուխներ, իրար հակված, իրենց պայծառ աչկներով կայտառ նայում են ինձ, կաս-կարմիր այտերը թըրթռում են դրսվված ծիծաղից, ձեռները փաղաքուշ իրար են հյուսվել, մեկմեկու բնդհատելով հնչում են ջահել, բարի ձայները, իսկ մի քիչ դենը, սենյակի խորքում, ուրիշ, նույնպես ջահել ձեռներ, մատները շփոթելով, առնում են հին գաշնամուրի ստեղնաքների վրա և Լանների վայրոր չի կարողանում խլացնի նահապետական սամովարի բլբլոցը...*

*«Ի՞նչ լավն էին, ի՞նչ թարմ էին վարդերը...»*

*Մոմը նվազում է ու մանչում... էդ ո՞վ է հագում էրանդ էդպես խուլ ու խեղդուկ... Կըծիկ եկած պառավ շունս, իմ միակ ընկերը, սեղմվում է ոտներիս ու ցնցվում... ցուրտ է... Մրսում եմ... Ու մեռե՞լ են նրանք... ամե՞նքը... ամենքը մեռե՞լ...*

*«Ի՞նչ լավն էին, ի՞նչ թարմ էին վարդերը...»*

---

# 1911

## ԱՐԾԻՎԸ

### Մ. ԲՐԱՈՒՆ

Բարձր՞ր, բարձր՞ր անմատչելի ժայռերում արծիվը հյուսել էր իր բույնը։ Այնտեղ, ժայռի բարձունքին, մի պատրուվածքում, մի ծերպում ծեփված կրպած էր նա և սառը հողմից, հյուսիսի սառցեղեն շնչից նրան պաշտպանում էր ժայռը իր քարեղեն կրծքով։ Նա շինված էր ուռենու ոստերից ու փաթաթված-պատած ամուր ձիու մազով։ Մայր արծիվը խնամքով օթևան էր շինում իր սերնդի համար։ Եվ ջանում էր շինել հաստատուն, հարմար ու տաք։ Եվ նրա երեք փոքրիկ ճուտերը միանգամայն գոհ էին։ Նրանց համար դրանից լավ բան աշխարհքումն էլ չկար։ Դեռ նոր ձվից դուրս եկած՝ իրարու սեղմ կրպած նստած էին նրանք։ Հենց արևը ծագեց թե չէ՝ նրանք իրենց գլխիկները բնից դուրս հանեցին ու զարմացած նայեցին աստծո աշխարհքին. և աշխարհքը նրանց թվաց հրաշալի։ Ներքևում հեռո՞ւ, հեռու տարածվում էր անսահման տափակ հարթավայրը։ Միակե՞րպ, միակերպ, միայն արմինալի փոքրիկ թփերն էին բծավորում նրա երեսը։ Երբեմն դաշտային ճագարներն ու շներն էին այստեղ այնտեղ երևում ու թաքնվում սեղերում։ Եվ չէին հասկանում արծվի ճուտերը, թե ինչու էին իրենց սրտերը հուզվում ու թրթռում էն փոքրիկ վազող դազաններին տեսնելիս։ Հեռու հարավում հորիզոնի վրա երևում էր մի նեղ շերտ՝ մին բաց մոխրագույն, մին կապտավուն։ Սկզբում ճագուկները չէին իմանում, թե էն ինչ բան էր. բայց երբ աչքերը զորացավ ու կարեց, տեսան, որ գետ էր։ Հենց այն գետիցն էր մայրը նրանց համար համեղ ձուկը բերում։ Ուշի ուշով գիտում էին արծվիկներն ամեն բան իրենց շուրջը, ծանոթանում էին իրենց շրջապատող աշխարհքի հետ։ Երբ որ հոգնում էին քնությունը դիտելուց՝ թռած գալիս էր մայրը իրիկվան ընթրիքով։ Կուշտ-կուշտ ուտելուց հետո՝ քաղցը քնում էին նրա թևերի տակ։

Էսպես անցավ ժամանակն, ու մեծացան փոքրիկ արծվիկները։ Նրանցից մինը դուրս եկավ ամենից մեծն ու ամենից ուժեղը։ Նա խելոք էլ էր մյուսներից. շատ էր մտածում չորս կողմի ամեն բանի վրա ու միշտ հարցնում էր մորը, թե ինչ տեսակ տեղեր են, որ նա գնում է։ Մայր արծիվը պարծենում էր իր զավակով. հավատում էր, որ նա ժամանակին դառնալու էր ամենամեծն արծիվներից։ Ու տվեց նրան մեծ ռազմիկ արծվի անունը—Թառլան, և պատմում էր ամեն բան, ինչ որ տեսել կամ լսել էր իր կյանքում։

Մի անգամ էլ, երբ Թառլանը սովորել էր մագլցել ժայռերով, հասավ իր մորը, որ թևերը ծալած նստած էր բարձր, սրծայր ժայռի կատարին։ Մայրը չընկատեց նրա մոտենալը. անթարթ նայում էր հեռու։

— Մայրիկ,— ասավ Թառլանը,— պատմիր ինձ հայրիկի մասին։

Մայրիկը տխուր էր ու լուռ։

— Մայրի՛կ, պատմիր ինձ հայրիկի մասին,— կրկնեց Թառլանը։

— Լավ, իմ քաջ Թառլան,— խոսեց մայրը.— կը պատմեմ քո հոր մասին։ Էնտեղ, ներքև մի արարած է ապրում, որ մարդ են ասում։ Չար ու կատաղի արարած է նա։ Ոչ մի շունչ կենդանի չի ազատվում նրա խստությունից։ Ում և է կյանքից զրկելը նրանց մեջ համարվում է քաջագործություն։ Սպանելու համար նրանք մի զարմանալի գործիք ունին, որ զարկում է շատ հեռվից։ Մի անգամ ձեր հայրը որսից տուն էր վերադառնում։ Ես տեսա, թե ինչպես նա սկզբում դեռ թռչում էր բարձր ամպերի տակ, հետո, թռիչքը մեղմելով, սկսեց ներքև իջնել։ Մին էլ հանկարծ ներքև, երկրի երեսին

բարձրացավ մի փոքրիկ ամպի նման սիպտակ ծուխ, ետևից մի տարօրինակ կարճ ճայթյուն, ու հայրդ թևերը թափահարելով սկսեց ընկնել, ընկնել ցած ու ցած։

Քարի կտորի նման դեռին ընկավ իմ հպարտ, արքայական ամուսինը ու... էն ընկնելն էր, որ ընկավ։

Էստեղ լռեց մայրը արծիվը, ու երկար իրար կողքի նստած էին մեր ու որդի։ Թառլանը չէր խոսում, բայց աչքերը վառվում էին, սիրտն էր ընկել մարդու ահն ու ատելությունը։ Ապատ, վայրենի հավքը առել էր իր մահացու թշնամու հոտը։

— Թառլան, դու շատ ես նման քո հորը,— նորից խոսեց մայրը.— իսկ հայրդ ամենահզորն էր արծիվների մեջ։ Դու կըլինես հզոր ու գեղեցիկ նրա պես, բայց, լսիր դավակս, չըմոռանաս, երբեք չմոռանաս մարդկային բնակարանի... Միտդ պահիր, ինչ որ ասում եմ քեզ։

— Միտս կըպահեմ, մայրիկ։

Մի քանի ժամանակից Թառլանը սկսեց թռչել սովորել։ Օր օրի վրա ուժեղանում էր ու մեծանում։ Թևերն աճում էին ու ամրանում։ Մայրը նրա հետ փոքրիկ պրոստանքներ էր անում։ Հետզհետե երկարում էին այդ պրոստանքները։ Մի օր էլ, երբ մայրը թռավ դեպի դեսը՝ նա էլ թռավ մոր հետ։ Էստեղ մայրը նրան սովորեցրեց ձուկ բռնելը։ Ու... ձուկ բըռնելու էն տեսակ ճարպկություն ցույց տվավ ու էնպես տարվեց, որ էլ չէր ուզում տուն վերադառնա։ Դրանից հետո ամբողջ գիշերը երազում էր նա, թե ինչ մեծամեծ գործեր պիտի կատարի, երբ մեծանա, դառնա հզոր, հասուն արծիվ ու թողնի մայրական բույնը։ Ամբողջ գիշերը երազում էր արձակ դեռը, ու առափնյա ալիքների ճղփյունը օրորում էր նրան։ Ու ամբողջ գիշեր Թառլանը չըկարաց քնի։

Սրանից հետո շատ ժամանակ չանցած՝ Թառլանը թողեց մայրական բույնը։ Թափահարեց իր ուժեղ թևերն ու սլացավ դեպի հարավ-արևմուտք, հեռո՜ւ, հեռո՜ւ։ Անցավ անջուր անապատների ահռելի տարածությունների վերևից, թավուտ, կուսական անտառների գլխներից, ճախրեց ձյունապատ սարերի վայրի գագաթներից, իջավ գեղազարդ հովիտները։ Հովիտներում տեղ-տեղ նա նկատում էր տարօրինակ առարկաներ, որ սկզբում խոշոր քարերի տեղ էր դնում. բայց շուտով հասկացավ, որ խրճիթներ էին—մարդու բնակարանը։ Նա թռչում էր բարձր—նրանց վերևից, և միայն զարմանում էր, թե ինչու են նրանք մարդիկ խմբվում ու ձեռքերով ցույց տալիս վերև—դեպի երկինքը։ Նրա մտքովը չէր էլ անցնում, թե ինքը դարձել էր մեծ ու հզոր արծիվ և թե իրեն վրա էին հիանում մարդիկ։

Ճանապարհը շարունակելով դեպի արևմուտք՝ հասավ մի գետի, որի նմանը չէր տեսել իր օրում։ Էնքան լայն գետ էր, որ ասես թե մյուս ափը չըկար։ Ալիքները գոռալով դիպչում էին ափի ժայռին ու փշրվում՝ չորս կողմը զարդարելով աղի ջրի փրփրուն ցայտերը։ Սակայն շուտով իմացավ Թառլանը, որ էն ծովն էր։ Նա մնաց էնտեղ, կապվեց ծովի հետ, սիրեց նրա անսահման ընդարձակությունը ու իրեն աղաստարան ընտրեց ծովափնյա ժայռը։

Պատահում էր, որ էստեղ էին գալիս և ուրիշ արծիվներ ու հետը կռվի էին բռնվում որսի համար։ Նա միշտ հաղթող էր դուրս գալիս, ամենից էլ ուժեղ ու սրաթռիչ։

Մի անգամ էլ, երբ Թառլանը ձուկն էր բռնում, մի տարօրինակ անծանոթ զգացմունք տիրեց նրան։ Օրեցօր զորացավ էն զգացմունքը, հետզհետե տիրեց... ու գլխի ընկավ, որ հայրենիքի կարոտն էր տանջում, քաշում իրեն։ Անուշ ու քնքուշ կանչում էր նրան ծովի ձենը, բայց ավելի ուժեղ էր տենչալի խոր կանչը։ Ավելի ու ավելի համառ օր ու դիշեր նրա ականջում հնչում էր էն կոչը։ Վերջապես Թառլանն էլ չդիմացավ ու թռավ դեպի հյուսիս-արևելք։ Շատ օրեր տևեց նրա թռիչքը, և ահա հյուսիսում երևացին հայրենի ժայռերը, ուր մի ժամանակ անց էր կացրել իր ջահելությունը։ Ներքև—դաշտում նրա բաղակայությանը՝ մարդիկ շինել էին իրենց բնակարանները։ Իր մոր խրատը հիշելով՝ նա թռավ նրանց վերևից։ Հուզմունքով մոտեցավ էնտեղին, ուր առաջին անգամ աչքը բաց էր արել ու լույս աշխարհը տեսել։ Բայց հին բույնը չը կար։ Նրա տեղը դատավ նորը՝ մեջը երեք ձու։ Մենակի տխուր զգացմունքով հեռացավ Թառլանը հարազատ վայրերից՝ միտը բերելով իր մորն ու նրբայր-

ներին։ Էլ չը վերադարձավ դեպի ծովը, շարունակ թափառում էր մի տեղից մի տեղ։

Մի անգամ էլ էնպես պատահեց, որ Թաղլանը անտառի բերանով թռչելիս մի փոքրիկ փոսի մեջ տեսավ մի կենդանի հագար։ Գետնին զարկած ցցին կապված՝ նա աշխատում էր, որ ազատվի։ Շեշտակի սլացավ արծիվը որսի վրա։ Բայց ազատության մեջ մնծացած վայրենի հավքը չէր իմանում մարդու բոլոր խորամանկ հնարքները, բոլոր նենգամտությունը։ Չէր նկատել բարակ ցանցը, որ պատում էր հագարին։ Հենց ուզեց նրան ճանկի՝ ղդաց, որ ցանցը փաթաթվեց իր թևերին։ Ազատ արծիվը գերի բռնվեց։ Զուր էին ազատվելու բոլոր ջանքերը։ Ամեն մի շարժման հետ պինդ թոկը ամուր ու ամուր պատում էր նրան։ Էս ժամանակ մոտիկ քարի ետևից դուրս նայեց թուխ հնդիկ աղան։ Նրա աչքերը փայլում էին ուրախությունից։ Թաղլանը տխուր ծղրտաց, ուզեց թևերը թափահարի—չը կարողացավ... Օրհասական տագնապի մեջ կայծակի արագությամբ նրա միտն եկան ու անցան մայրենի ժայռերն ու մոր պատմությունը...

# ՀԵՔԻԱԹՆԵՐ

## 1908

### ԱՆՏԱՌԻ ՏՆԱԿԸ

Մի խոր անտառի բերանում մի խրճիթ է լինում։ Էն խրճիթում կնկա ու երեք աղջիկների հետ ապրելիս է լինում մի աղքատ փայտահատ։

Մի առավոտ, գործի գնալիս, կնկանն ասում է.— Ա՛յ կնիկ, էսօր բանս մինչև կեսօր չեմ վերջացնիլ. մեր մեծ աղջկա հետ ինձ համար ճաշ կուղարկես անտառը։ Ես էլ հետս մի տոպրակ կորեկ կըվերցնեմ, շաղ տալով կերթամ, որ էն նշանովը գա ու ճամփեն շրկորցնի։

Ճաշ է դառնում թե չէ՝ մեծ աղջիկը կերակուրն առնում է, ճամփա ընկնում։ Բայց ծառերը, արտուտները, սարեկներն ու գեղձանիկները շաղ տված կորեկն արդեն վեր քաղած են լինում, ու աղջիկը չի կարողանում հոր հետքը գտնի։ Գնում է, գնում, մինչ արևը մեր է մտնում ու մութը վրա է հասնում անտառում։ Ծառերը շրշում են խավարում, բուերը կանչում, կոքնչում, ու աղջիկը սկսում է վախենալ։

Մին էլ տեսնում է՝ հեռվում, ծառերի արանքից մի կրակ է փայլփլում։

— Էնտեղ երևի մարդիկ են ապրում, գնամ նրանց մոտ մնամ էս գիշեր,— մտածում է աղջիկն ու գնում էն կրակի վրա։

Գնում է հասնում մի տնակի, դուռը ծեծում է։

— Ո՞վ ես, ներս արի,— կանչում է ներսից մի ձայն։

Աղջիկը ներս է մտնում, տեսնում է՝ հրես նստած մի

ալևոր մարդ, գլուխը կախ արած, սիպտակ միրուքը ալիքաձև իջնում է մինչև գետին։ Իսկ էն կողմը մի չալ կով՝ մի հավ ու մի աքլոր։

Աղջիկը պատմում է ծերին, թե ինչպես է ինքը մոլորվել անտառում, ու խնդրում է, որ տեղ տա գիշերը մնալու։

Ծերունին դիմում է իր կենդանիներին.

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրրան։

Կենդանիները միասին պատասխանում են.— Լա՜վ։ Էն ժամանակ ծերունին աղջիկանն ասում է.

— Համեցե՛ք, մեր աչքի վրա, սիրուն աղջիկ, մեր դուռը բաց է, տունը լիքը։ Համեցե՛ք, մոտեցիր օջախին, կեռակուր շինի մեզ համար էլ, քեզ համար էլ։

Աղջիկը մտնում է խոհանոց և, ճիշտ որ, ամեն բան գտնում է տաքա-տաքա։ Մի լավ ընթրիք է պատրաստում, բերում է ծերունու առաջ լիքը սեղան է բաց անում, ինքն էլ նրա հետ նստում, ուտում, խմում, կշտանում։ Որ կըշտանում է պրծնում.— Բա ես հոգնած եմ,— ասում է,— հիմի ո՞րտեղ քնեմ։ — Էստեղ կովը, հավն ու աքլորը պատասխանում են.

— Ողջ գրա հետ դու կերար
Ու խըմեցիր, ինչ որ կար,
Մըտիկ չարիր իսկի մեզ.
Գընա, քընի ուր կուզես։

Էն ժամանակ ծերունին ասում է.

— Բարձրացի, սանդուխքի գլխին մի սենյակ կա։ Էն սենյակում երկու անկողին կա. անկողինները պատրաստի, ես էլ կըգամ, կքնենք։

Աղջիկը վերև է բարձրանում, անկողինները դցում, ու էլ ծերանուն չի սպասում, ինքը պառկում է քնում։ Մի քիչ հետո ծերունին գալիս է, մոմի լուսով նայում է աղջիկանը



ու գլուխը ժաժ տալի։ Գիշերվա մի ժամանակ, երբ տեսնում է խորը քնած է, մահճակալի տակին մի գաղտնի դուռն է լինում, բաց է անում, աղջկանը թողնում ցած ու կրկին փակում։

Փայտահատը իրիկունը տուն է գալի, բարկանում է կնկա վրա, որ իրեն ամբողջ օրը սված է թողել։

— Ես ի՞նչ անեմ,— պատասխանում է կինը,— ճաշը տվել եմ մեր մեծ աղջկանը—գրկել, ինչպես երևում է, ճամփեն կորցրել է, չի գտել, ինքն էլ ետ չի եկել գնա։

Փայտահատը մյուս օրն էլ առավոտյան վաղ վեր է կենում գնում անտառը։ Պատվիրում է, որ էս անգամ միջնեկ աղջիկը տանի ճաշը։

— Էսօր հետս տոպ կըվերցնեմ,— ասում է,— որ ճամփին շաղ տամ։ Ոսպը կորեկից խոշոր է, աղջիկս հեշտ կտեսնի ու ճամփեն չի կորցնիլ։

Կեսօրին միջնեկ աղջիկը ճաշն առնում է ճամփա ընկնում։ Գնում է, գնում. ոչ մի տեղ ոսպ չի գտնում։ Դու մի ասել՝ դարձյալ թռչունները կերել են, մի հատ էլ չեն թողել։

Աղջիկն անտառում թափառում է, թափառում, գիշերը ընկնում էլի նույն ծերունու մոտ, հաց ու քնելու տեղ է խընդրում։ Ծերունին դիմում է կովին, հավին ու աքլորին.

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրրան։

— Լա՜վ,— պատասխանում են կենդանիները։ Միջնեկ քույրն էլ, մեծ քրոջ նման ընթրիք է պատրաստում, ծերի հետ ուտում, խմում-կըշտանում. կենդանիների վրա ուշք էլ չի դարձնում։ Երբ հարցնում է, թե՝ ես որտեղ պիտի քնեմ, կենդանիները պատասխանում են.

— Ողջ գրա հետ դու կերար,
Ու խըմեցիր, ինչ որ կար,
Մըտիկ չարիր իսկի մեզ,
Գընա, քընի ուր կուզես։

Հենց նա էլ գնում է թե չէ, նոսկից գնում է ծերունին, գլուխը թափահարում ու դարձյալ թողնում է ներքև։

Երրորդ առավոտը փայտահատը կնկանն ասում է.

— Էսօր մեր փոքրիկ աղջկա ձեռքով ղրկի ճաշը։ Նա բարի է ու ականջով։ Նա ճամփեն կըգտնի, իր քույրերի նման չի, որ դեսուդեն ընկնի։

Մայրը չի ուզում երրորդ աղջկանն էլ անտառը ղրկի։ Լաց է լինում, ասում է —աչքիս սև ու սիպտակը սա է մնացել, ինչու ես ուզում սրան էլ կորցնես մեծերի նման։

— Դու հանդիստ կաց,— ասում է փայտահատը,— սա կորչիլ չի, սա Ինպես խելոք է տը... ես էլ էսօր հետս սիսեռ կըտանեմ ճամփին շաղ տալու։ Սիսեռը ոսպ հո չի, նրանով անպատճառ ճամփեն կըգտնի։

Բայց երբ աղջիկը ճաշն տուած անտառն է մտնում, թռչուններն արդեն սիսեռը կերած են լինում։ Աղջիկը մնում է տարակուսած. չի իմանում՝ ո՞ր կողմը գնա։ Մտածում է, դարդ է անում, թե հիմի հայրը կսովի, մայրը լաց կըլինի...

Ման է գալի ման, հորը չի գտնում։ Երբ մութը ընկնում է, հեռվից տեսնում է անտառի տնակի լուսն ու գնում է էն լուսի վրա։ Մտնում է ներս, տեղ է խնդրում, ու ալեհեր ծերունին դարձյալ դիմում է իր կենդանիներին.

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Ջալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրբան։

— Լա՜վ...— պատասխանում են կենդանիները։ Էն ժամանակ աղջիկը մոտենում է, գուրգուրում հավին ու աքլորին, կովի ճակատը քորում։ Մերի պատվերով ընթրիք է պատրաստում, դնում սեղանին ու ասում.

— Ինչո՞ւ ես պետք է ուտեմ, էս բարի կենդանիները քաղցած նայեն։

Գնում է, կուտ բերում ածում հավի ու աքլորի առջև, կովի համար էլ մի խորոմ խոտ։

— Կերեք,— ասում է,— իմ սիրելիք, այ հիմի ջուր էլ կբերեմ։— Գնում է մի դույլ ջուր էլ բերում դնում առաջները։



Ամենքին կշտացնում է, նոր ինքն է նստում ուտում, ինչ որ թողել էր ծերունին։ Իսկ երբ քնելու ժամանակը գալիս է, ասում է.— Ժամանակը չի՞ արդյոք, որ ամենքս էլ հանգըստանանք...

Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Ջալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրբան։

— Լա՜վ,— պատասխանում են կենդանիները.

— Մեզ հետ կերար դու միասին
Ու հոգացիր մեր մասին,
Բարի գիշեր քեզ, բարի,
Մուրազդ ասուված կատարի։

Էստեղ աղջիկը բարձրանում է վերև, անկողինները պատրաստում։ Ծերունին գալիս է քնում։ Ինքն էլ մյուս մահճակալին է պառկում ու քուն մտնում հանգիստ։

Գիշերվա մի ժամանակ տունը հանկարծ դղրդում է, կարծես քանդվում ու տակն ու վրա է լինում։ Աղջիկը վախեցած զարթնում է, բայց աղմուկն անցնում է, ինքն էլ քնում է նորից։

Առավոտը աչքը բաց է անում—ի՞նչ է տեսնում։ Տեսնում է պառկած մի մեծ, շքեղ զարդարած ու կահավորած դահլիճում, շուրջը թավիշ ու ոսկի, հարավային փարթամ բույսեր ու ծաղիկներ այրվում վառվում են առավոտյան արևի ճառագայթների տակ։ Տեսնում է, բայց աչքերին չի հավատում, ասում է՝ երազի մեջ եմ երևի։ Էսպես մտածելիս ներս են մտնում երեք ճոխ հագնված ծառաներ, խոնարհ գլուխ են տալի ու հարցնում.

— Ի՞նչ կըհրամայեք, տիրուհի։

— Լա՛վ, լա՛վ, գնացեք,— պատասխանում է քնաթաթախ աղջիկը,— հիմի վեր կըկենամ, ծերունու համար կերակուր կըպատրաստեմ, կովին, հավին ու աքլորին կը հոգամ։

Կարծում է, թե ծերունին էլ արդեն վեր է կացել։ Նայում է նրա անկողնին, տեսնում է՝ ծերունին չկա, տեղը պատկած է մի օտար ջահել ու գեղեցիկ երիտասարդ...

Եվ ահա երիտասարդը աչքերը բաց է անում ու էսպես խոսում գարմացած աղջկա հետ.

— Լսի, սիրուն աղջիկ։ Ես էս երկրի թագավորի որդին եմ։ Չար վհուկը կախարդել էր ինձ ու դատապարտել, որ ես ծերի կերպարանքով ապրեմ անտառում, ոչ ոք էլ չըլիներ ինձ հետ, բացի իմ երեք ծառաները, նրանք էլ կովի, հավի ու աքլորի կերպարանքով։ Եվ էդպես պետք է մնայինք, մինչև հայտնվեր էն բարի աղջիկը, էն քնքուշ սիրտը, որ ոչ միայն մարդիանց, այլև կենդանիներին լիներ սիրող ու կարեկից...

Էն աղջիկը դու եղար։

Քու շնորհիվ էս գիշեր — կես գիշերին, մենք ամենս աղատվեցինք կախարդանքից ու իմ պալատը, որ դարձել էր անտառի մի հին տնակ, նորից դարձավ առաջվան պալատը։

Ու կանչում է թագավորազնը իր ծառաներին, որ գնան աղջկա ծնողներին բերեն հարսանիքին։

— Բայց ո՞րտեղ են իմ քույրերը,— հարցնում է աղջիկը։

— Նրանց ես փակել եմ ներքնահարկում,— պատասխանում է երիտասարդը։— Էգուց կուղարկեմ անտառը, էնտեղ ածխարարի մոտ ծառայեն ու էնքան մնան, մինչև որ դառնան ավելի բարի ու սովորեն մտածել կենդանիների մասին։

---

# 1 9 0 9

## ՈՍԿԻ ՔԱՂԱՔԸ

### 1

Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում տիրելիս է լինում Ուբանա թագավորը։ Օրերից մի օր մեռնում է նրա սիրելի կինը։ Դժբախտ թագավորը չի կարողանում մխիթարվի ոչ մի բանով, իրեն զլսորդություն է տալիս։ Մի անգամ էլ, երբ որսի է գուրս գալի, անտառում մի գեղեցիկ փոքրիկ աղջիկ է գտնում։ Ուրախանում, աշխարհքով մին է լինում, առնում տուն է բերում, որդեգրում, անունը դնում Քանաքարա։

### 2

Մեծանում է Քանաքարան, գառնում է տխուր թագավորի միակ մխիթարանքը։ Երբ հասնում է ամուսնության ժամանակը, թագավորը հրավիրում հավաքում է իր երկրի երիտասարդ արքայազուններին ու իշխանազուններին, որ նրանց միջից ընտրություն անի Քանաքարան։ Բայց աղջիկը գուրս չի գալի իր սենյակից։

— Հայրիկ,— ասում է,— գիշերս մորա հոգին երազ եկավ ինձ։ Ասավ. Քանաքարա, շատ շատերը կըխնդրեն քու ձեռքը, չխարվես ոչ գեղեցկության, ոչ քաջության, ոչ հարստության, որովհետև անբախտ կըլինես, որին էլ ընտրես քեզ ամուսին, ընտրի միայն նրան, ով իր կյանքում գոնե մի անգամ եղած կըլինի Ոսկի քաղաքում։

— Շատ լավ, աղջիկս,— ասում է բարի ծերունին.— իմաստուն են երազները, ու մորդ հոգին քու երջանկության համար է խոսում։ Ես էդպես էլ կըհայտնեմ հավաքված փեսացուներին, ինչպես ազդել է երազը ու ինչպես քու սիրտն է ուզում։ Նրանք աշխարհք տեսած մարդիկ են և անշուշտ նրանց մեջ կըգտնվեն էնպիսները, որ իրենց կյանքում գոնե մի անգամ եղած են Ոսկի քաղաքում։

Էսպես էլ հայտնում է թագավորը հավաքված արքայազուններին ու իշխանազուններին։ Երբ Ոսկի քաղաքի անունը լսում են, ամենքը նայում են իրար երեսի ու զարմանքով վեր են քաշում ուսերը։

— Էդպես քաղաք մենք չենք էլ լսել մեր օրում, ուր թե տեսել...

Նստում են ձիանքը ու իրար ետևից հեռանում, ցրվում իրենց աշխարհքները։

## 3

Բենարեսում մի երիտասարդ է լինում Դիվանա անունով։ Մի շռայլ, զվարճասեր երիտասարդ է լինում Դիվանան։ Իր կարողությունը խնջույքներում ու քեֆերում վատնած, դատարկ, ձանձրացած կյանքից ու աշխարհքից։ Հենց որ թագավորի աղջկա որոշումը լսում է, մտածում է.— Ա՛յ քեզ լավ դեպք՝ աշխարհքում մի քիչ էլ զվարճանալու, միանգամից և կըհարստանաս, և գեղեցիկ կին կունենաս։ Եվ ի՞նչպես ոչ ոքի մտքով չի անցել գնա ասի՝ տեսել է Ոսկի քաղաքը ու ամուսնանա հետը։

Վեր է կենում, շիտակ գնում Ուքանա թագավորի պալատը։

— Հայտնեցեք չքնաղ Քանաքարային, որ ես, երիտասարդ Դիվանաս, եղել եմ Ոսկի քաղաքում։

Ամբողջ պալատը թնդում է ցնծությունից. վերջապես եկավ սպասած հերոսը։

— Ներս համեցեք,— խնդրում են դրանիկները ու ներս են տանում երիտասարդին գեղեցիկ Քանաքարայի մոտ։ Քանաքարան խնդրում է նրան, որ պատմի, թե ինչ բան է Ոսկի քաղաքը։ Ու Դիվանան սկսում է իր սուտ պատմությունը.

— Ոսկի քաղաքը... էլ մի՛ ասի, տիրուհի, թե ինչ զարմանալի բան է էդ Ոսկի քաղաքը, որ ես ընկա մեջը... Առևտրական գործերով անցնում էի աշխարհից աշխարհ, հազար ու մի աշխարհ ընկա, հազար ու մի քաղաք տեսա՝ հազար ու մի հրաշալիքներով լիքը... Մի անգամ էլ, մի աշխարհքում, որի անունը լեզվիս ծերին է և հիմի կասեմ որտեղ որ է, տեսնեմ հեռվում մի ահագին տարածություն վառվում է արևի տակ, ինչպես մի հսկայական հրդեհ։

— Էս ի՞նչ հրաշք է,— հարցնում եմ ընկերներիս։

— Ոսկի քաղաքն է,— ասում են ինձ։

— Ճշմարիտ որ Ոսկի քաղաք... Մոտենում ենք, ի՞նչ տեսնենք՝ տները ոսկի, ծառերը ոսկի, փողոցները ոսկի... Մարդիկ էլ ոչ աշխատում են, ոչ շարժվում են, նստած ուտում-խմում են...

— Դուրս արեք էս անամոթ ստախոսին,— բարկացած կանչում է Քանաքարան։ Վազին տալով դուրս են անում երիտասարդ Դիվանային և պալատը նորից ընկղմվում է տրխրության մեջ...

## 4

Բայց էն օրվանից, ինչ երիտասարդ Դիվանան տեսնում է գեղեցիկ Քանաքարային, սիրահարվում, փոխվում, դառնում է բոլորովին ուրիշ մարդ։ Քունը փախչում է նրա աչքերից, գիշեր-ցերեկ միայն էն է մտածում, որ գնա՞, գնա՞, գնա՞, գտնի Ոսկի քաղաքը, ուր ուզում է լինի, ու գա պատմի Քանաքարային։ Թողնում է տուն ու տեղ, հերն ու մեր, գլուխը փեշն է դնում՝ գնում — ո՞րտեղ ես, Ոսկի քաղաք քեզ եմ գալի։ Գնում է, գնում, ամեն պատահողի հարց ու փորձ է անում, ոչով չի էլ լսել Ոսկի քաղաքի անունը, ուր մնաց թե տեղն ասեր։

Մի օր էլ Դիվանան հոգնած, տխուր անց է կենում մի խոր անտառով։ Տեսնում է մի ծառի վրա նստած մի մեծ արծիվ։ Նետն ու աղեղը պատրաստում է որ զարկի, մին էլ աստծու հրամանով արծիվը լեզու է առնում, ասում.

— Ինչո՞ւ ես ինձ սպանում, ով բարի մարդ. առանց էն էլ վիրավորված եմ ես։ Որսկանի նետը մտել է թևիս տակը, անտանելի ցավ է տալի ու արյունաքամ է անում ինձ։ Եթե գթաս՝ նետը հանես ու առողջացնես ինձ, ես քեզ էն լավությունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել։

Զարմանում է երիտասարդ Դիվանան, թե ինչպես է անլեզու հավքը խոսում մարդկային լեզվով, ապա ուշադրվելով մոտ է գնում, զգույշ ծառիցը վեր է բերում վիրավոր արծվին. նետը հանում է թևի տակից ու տանում անտառում մի խրճիթ, սկսում է բժշկել։

Արծիվը առողջանում է ու դիմում է Դիվանային.

— Ես խոսք տվի, թե քեզ էն լավությունը կանեմ, ին: որ միայն արծիվը կարող է անել։ Խոսք եմ տվել ու խոսքը— խոսք է, պետք է կատարեմ՝ ինչ էլ որ սիրտդ ուզի, լեզուդ ասի։ Ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում։

Ու նստում է երիտասարդը, պատմում արծվին իր պատմությունը, աղաչում՝ որ իրեն տանի Ոսկի քաղաքը։

— Դժար բան ուզեցիր. քայլ արծվի համար չի գժարը։ Դու միայն ամուր կաց իմ մեջքին, գեռ ճրագները չլվառած քեզ վեր կբերեմ Ոսկի քաղաքում,— ասում է արծիվը ու վեր թռցնում երիտասարդին։

Բաց է անում իր հսկայական թևերը, բարձրանում է մինչև ամպերը, պտտում հետո՝ դեպի արևելուս։ Երկյուղից ու ապագությունից գրեթե շնչասպառ է լինում, ուշքից գնում է Դիվանան։ Մին էլ էնտեղ է ուշքի գալի, որ արծիվը ծղրտում է.

— Ահա Ոսկի քաղաքը,— ու իջեցնում է գետին։





Աչքը բաց է անում Դիվանան։ Առջևը, կանաչ այգիների մեջ թաղված, տարածվում է մի քաղաք։ Կապույտ գետը ոլորվելով անցնում է նրա միջից։ Հեռվից շատ ծանոթ քաղաքների նման մի քաղաք և էն էլ փոքրիկ քաղաք։ Առաջ է գնում։ Չորս կողմը բարելից այգիներ, զմրուխտ կանաչ, հազարագույնի ծաղիկներ։ Օդը լիքն է թարմությունով ու բուրմունքով, թռչունների ծլվլոցով ու ջրերի կարկաչով, և նրանց հետ միախառնվելով հնչում են մարդերում ու այգիներում աշխատողների երգերը.

Ա՜խ, ի՞նչ լեն է աշխարքն ազատ
Էս կյանքի համար, ամենքի համար.
Ի՞նչքան լիքն է, ի՞նչքան առատ
Էս կյանքի համար, ամենքի համար։

Ա՜խ, ի՞նչ լավն է աշխատանքը,
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՞նչ անուշ է հոտում կյանքը
Լիքը սիրով, ծաղկով, երգով։

Ընդարձակ մարդիկ, մտածում է Դիվանան ու դիմում է նրանց.

— Ասացեք, աղաչում եմ, ով երջանիկ մարդիկ, ի՞նչ է էս քաղաքի անունը։

— Ոսկի քաղաքն է սա, բարի օտարական։

— Իսկ դուք ծառանեք եք, որ բանում եք ձեր տերերի, այգիներում, թե՞...

— Մենք տեր ու ծառա չգիտենք։

— Իսկ ձեզ ո՞վ է կառավարում։

— Գոհար թագուհին։

— Շատ գորեղ թագուհի է եքեր։

— Այո՛, նա գիտի երջանկացնելու գաղտնիքը։

— Արդյոք կարելի՞ է նրան տեսնել։

— Նրա դուռը բաց է ամենի առջև, իսկ օտարականներին միշտ նրա մոտ են տանում, և քեզ էլ կբերեն անշուշտ։

## 7

Ճշմարիտ որ, ներս է մտնում քաղաքը թե չէ, Դիվանային խնդրում են Գոհար թագուհու ապարանքը։ Ապարանքում երբ կհրակրվում է, կազդուրվում ու հանգստանում, հրավիրում են թագուհու մոտ։ Թագուհին մի շատ բարի ու ազնիվ կին է լինում և էնքան չքնաղ, որ հրեղեն-փարեղեն մի արարած է թվում Դիվանային։ Կախարդ որ կախարդ, հենց մի տեսնելով կախարդում է նրան։

— Ի՞նչն է քեզ բերել մեր աշխարհը, երիտասարդ օտարական,— հարցմունք է անում Դիվանային.—վի՞շտն է քեզ հալածում, թե՞ բախտն է առաջնորդում, և ինչո՞վ կարող ենք օգտակար լինել քեզ։

Թագուհու ազնվությունից ու հարցմունքից ոգևորված, Դիվանան սրատաց պատմում է մի առ մի, թե ով է ինքը, ինչ է եկել իր գլուխը ու ինչպես է հասել Ոսկի քաղաքը։

— Միշտ լավ է,— ասում է թագուհին,— երբ մարդիկ թողնում են իրենց վատ սովորություններն ու կրքերը, լցվում են բարձր կարոտով ու ձգտում են, գնում են հասնելու մի բարձր նպատակի։ Թե կբհասնեն,— լավ, թե չեն հասնի, դարձյալ միշտ լավ է ու լավ, որովհետև կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձգտումն ու ճանապարհ։

— Իսկ երջանկությունը...

— Աշխատել լավ ճանապարհի վրա ու գոհ լինել իր ունեցածով։

— Է՞դ է երջանկությունը։

— Ուրիշ ոչինչ։

— Իսկ ես կարծում էի՝ ձեր քաղաքը լիքն է ոսկով, և նրանից է, որ դոհ ու երջանիկ են ձեր մարդիկը,— հայտարարում է զարմացած Դիվանան։

— Ոսկի՞,— քմծիծաղ է տալիս Գոհար թագուհին.—



Ոսկին մեռաղ է, որ հողից է դուրս գալիս, երջանկությունը զգացմունք է, որ սրտի՛ց է բխում։ Ի՞նչ կապ կա նրանց մեջ։

— Իսկ ես կարծում էի՝ ահռելի բանակ ունեք և զենքի ուժով եք պահպանում ձեր երկրի սքանչելի կարգն և խաղաղությունը,— շարունակում է Դիվանան։

— Օ՛, երբեք։ Ահն ու սպառնալիքը և խաղաղությունը իրար չեն տեսել և միասին չեն ապրում։

— Իսկ ես կարծում էի, թե դուք հազարավոր ոսկեզրմբեթ սահմաններ ունեք, նրանց մեջ անդադար աղոթում են ձեր հոգևոր հայրերը ու աստծու աչքը քաղցր են պահում ձեզ վրա։

— Ոչ, բարեկամ, մենք բնության ընդարձակության մեջ ենք պաշտում նրան և միջնորդներ չենք ճանաչում մեր հոգու ու նրա միջև։

— Սքանչելի երկիր,— բացականչում է Դիվանան. հիշում է իր հայրենի երկիրն ու ընկնում է մտքի տունը։

Ապա թե տանում է կախարդ թագուհին, ման ածում Դիվանային իր ապարանքի սրահները։ Սրահներից մեկում Դիվանան տեսնում է պատից կախած մի աղջկա պատկեր։

— Վա՛հ, ի՞նչքան նման է,— բացականչում է ու մնում է առաջը քարացած։

— Ո՞ւմ նման է։

— Նրա...

— Ո՞վ է նա։

— Քանաքարան... իմ Քանաքարան...

— Բայց ո՞վ է Քանաքարան։

— Քանաքարան, թագուհի, հենց էն աղջիկն է, որի մասին քեզ պատմեցի։ Նրա համար եմ ես հեռացել իմ հայրենի երկրից, ընկել աշխարհից աշխարհ ու արծվի թևով հասել Ոսկի քաղաքը և կրկին պետք է վերադառնամ նրա մոտ։

— Ինչո՞ւ ես վերադառնում, ազնիվ Դիվանա,— խոսում է դեղեցիկ թագուհին— Մի՛ վերադառնա, Դիվանա, մնա մեզ մոտ. ապրի մեզ հետ։ Մի՞թե ավելի փարթամ չէ Ոսկի քաղաքը, մի՞թե հոյակապ չեն էս ապարանքները, մի՞թե հրաշալի չեն էս կախարդական այգիները...

— Ոչ, թագուհի, չեմ կարող։

— Մի՞թե գեղեցիկ չեմ ես...

— Ոչ, չի լինելու որ չի լինելու։

Էն ժամանակ թագուհին պատվիրում է, նավ են պատրաստում ու ճանապարհ է դնում Դիվանային դեպի իր հայրենի երկիրը, դեպի Քանաքարան։

## 8

Ճանապարհին ծովում սաստիկ ալեկոծություն է վեր կենում, նավը դցում է մի կղզի։ Մի կանաչ կղզի՝ լիքն ամեն բարիքով ու ամեն գեղեցկությունով։ Բայց ամենից գեղեցիկը լինում է նրա ջահել տիրուհին, որ Դիվանային առաջարկում է ամուսնանա իր հետ, թագավորի էն աղատ ու առատ աշխարհում։

— Չեմ կարող, նազելի տիրուհի,— հրաժարվում է Դիվանան։— Ես դարձյալ իմ ճանապարհն եմ շարունակելու, ինչ ուզում է լինի — դեպի իմ հայրենի տունը, դեպի իմ Քանաքարան, որ չեմ փոխելու ոչ օրի և ոչ մի թագավորության հետ։

Էս ասելու հետ հենց աչքը ճպում է Դիվանան, մին էլ բաց է անում,— կղզում տիրուհու փոխարեն առաջը կանգնած է Գոհար թագուհին։

— Մի՛ վախենա, Դիվանա, ու մի՛ զարմանա,— անուշ ժպտալով խոսում է նա։— Տեսնո՞ւմ ես, Ոսկի քաղաքի թագուհին եմ ես — կախարդ Գոհարը։ Իմ աղջիկն է Քանաքարան։ Մանուկ հասակում Սև դևը նրան հափշտակեց ու տարավ։ Էն օրվանից ամեն եկվորի ինձ մոտ էի հրավիրում, հարց ու փորձ էի անում, պատկերն էի ցույց տալի, բայց ոչ ոք չէր իմանում, թե ուր է ընկել նա։ Եվ ահա դու երկար նրա սիրով ոգևորված ու վիրադառնում ես կրկին նրա մոտ։ Քո սերը փորձելու համար էր, որ ես քեզ արի էն ամեն առաջարկներն իմ քաղաքում։ Եվ դարձյալ քեզ փորձելու համար էր՝ ես առա ուրիշ կերպարանք, քեզ փորձելու համար ստեղծեցի էս փորձանքն ու էս վայելչությունները, որ լոկ



նրանով են միայն։ Այժմ ես հավատում եմ քեզ, հավատում եմ քո սերին ու քո բարությանը։ Դու, հիրավի, այժմ երջանիկ կանես և իմ Քանաքարային և ամեն մարդու։ Վերջապես այժմ դու գիտես երջանկության գաղտնիքը։

Էս խոսքի հետ մի փետուր է կրակում կախարդ թագուհին և, սև ամպի նման, հակնթավոր թևերը փռած հայտնվում է մի մեծ արծիվ։

— Տա՛ր,— բացականչում է կինը, ու ամեն բան չքանում է Դիվանայի աչքից, այնինչ օդի մեջ հնչում է երգը։

Գոհ աշխարքից, գոհ իր կյանքից,
Սիմուրգ հավքի գմբուխտ թևին,
Երջանկության հայրենիքից
Գնում է նա, գնում կրկին։

Գնում է նա վերածնված
Մաքուր սիրով, բարի սրտով,
Դեպի երկիրն իր նախահարց —
Ցավերի տուն, արցունքի ծով։

Տանում է նա ուժը ոգու,
Անվերջ սերը, անհատ բարին,
Երջանկությունն՝ ամեն մարդու,
Խաղաղություն ողջ աշխարհին։

## 9

Հոդու վրա է լինում Ուքանա թագավորը, որ արծիվը ծղրտում ու վեր է դնում Դիվանային իր հայրենի քաղաքի սահմանում։ Քաղաքն է մտնում Դիվանան ու գնում ուղիղ թագավորի ապարանքը։

— Հայտնեցեք գեղեցիկ Քանաքարային, որ ես, երիտասարդ Դիվանան, գալիս եմ Ոսկի քաղաքից։

Ընդունում են ներս։ Դեմքը տեսնելուն պես Քանաքարան բարկանում է իր ծառաների վրա։

— Մի՞թե չեք ճանաչում սրան, որ ներս եք թողել նորից։ Մի՞թե էն սրիկան չի սա, որ մի անգամ փորձեց ինձ խաբի և ահա նորից հանդգնում է, ուզում է հին խաղը խաղա։ Դուրս արեք իսկույն։

— Սպասի, չքնաղ Քանաքարա,— խնդրում է Դիվանան։— Հիրավի, ես նա էի, բայց էլ նա չեմ։ Ես այժմ Ոսկի քաղաքից եմ գալի, քո կախարդ մոր՝ Գոհար թագուհու, ապարանքիցն եմ վերադառնում, քո մանկության ննջարանումն եմ եղել, ուր դեռ կախ է արած քո սիրուն պատկերը... Ես այժմ գիտեմ՝ ինչ բան է Ոսկի քաղաքը, ինչ է ոսկին և ինչ է երջանկությունը։ Ես այժմ գիտեմ երջանկության գաղտնիքը։— Եվ ամեն բան նստում պատմում է միառմի։

— Այժմ ես քոնն եմ,— բացականչում է Քանաքարան, և աշխարհքով մին է լինում ուրախությունից։ Ուքանա թագավորն էլ շնչի է գալի. օխտն օր, օխտը գիշեր ամբողջ երկիրը կատարում է նրանց հարսանիքը։ Ամենքն ուրախանում են ու լիանում։ Էս ուրախությունը տեսնելուց հետո ծեր թագավորն էլ կյանքն ու արևը բաշխում է ապրողներին ու մեռնում։ Նրա տեղը թագավոր է նստում Դիվանան ու սկսում է իր երկիրը կառավարել էն կարգով, ինչ որ տեսել էր Ոսկի քաղաքում։ Ոսկի չըկար նրա երկրում, բայց մարդիկ ապրում էին արդար աշխատանքով, գոհ ու երջանիկ իրենց ունեցածով։ Եվ էն ժողովուրդը, որ մի ժամանակ տրտնջում էր, թե աշխարհքը նեղ է ու ցավով լիքը, հիմա երգում էր ամեն տեղ.

Ի՞նչքան լեն է աշխարքն ապատ
Էս կյանքի համար, ամենքի համար.
Ի՞նչքան լիքն է, ի՞նչքան առատ
Էս կյանքի համար, ամենքի համար։

Ի՞նչ ազնիվ է աշխատանքը
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՞նչ թեթև է անցնում կյանքը
Լիքը սիրով, ուրախ երգով։



# 1910

## ԼԵՋՈՒՆ ԿՏՐԱԾ ԾԻՏԻԿԸ

Վաղուց պատահած բան է... Ասում են՝ մի չար պառավ ուզում է ճերմակեղենը ծալելի. մի քիչ օսլա է դնում ամանի մեջ։

Հարևանի ձեռնոտավոր ծիտը գնում է օսլան կոցահարում։ Պառավը վրա է հասնում։

— Ա՜յ դու անպիտան արարած...— բարկանում է վրեն ու բռնում է լեզուն կտրում։

Ծիտիկը թռչում է գնում։ Հարևանուհին լսում է, որ իր սիրելի ծիտիկի լեզուն կտրել են։ Սատսիկ վշտանում է. վեր է կենում իր մարդու հետ համփա է բռնում, սար ու ձոր ընկնում, որ իմանա, թե ո՞ր կողմը թռավ իր ծիտիկը։

Մարդ ու կնիկ գնում են ու ձեն տալի.

— Ո՞րտեղ է լեզուն կտրած ծիտիկը։ Լեզուն կտրած ծիտիկը ո՞րտեղ է կենում։

Վերջապես գտնում են ծիտիկի տունը։

Ծիտիկը որ տեսնում է՝ իր հին տերն ու տիրուհին իրեն տես են եկել՝ ուրախանում, աշխարհքով մին է լինում։ Ներս է հրավիրում, շնորհակալություն է անում առաջվան տեսած լավությունների համար ու պատիվ է տալի։ Սեղան է բաց անում. էնքան ձուկն ու գինի է լցնում, որ էլ դատարկ տեղ չի մնում։ Կինը, որդիքն ու թոռներն էլ ոտի վրա՝ ծառայում են։

Վերջը ինքն էլ բաժակը մի կողմն է շպրտում ու վեր կենում ծառավարի պար գալի։ Ու էսպես ուրախ անց են կացնում ամբողջ օրը։ Իրիկունը որ ընկնում է՝ պառավները խոսք են բաց անում, թե իրենց տուն գնալու ժամանակն է։ Էս տեղ ծիտիկը գնում է երկու ուռի զամբյուղ է բերում, ասում է.

— Ա՛յ էս երկու զամբյուղը, մինը թեթև, մյուսը ծանր. որը կուզեք՝ ընտրեցեք՝ ձեզ համար։

Հյուրերը, թե՝

— Մենք պառավ մարդիկ ենք. բեր մեզ թեթևը տուր, ավելի լավ է՝ հեշտ կըտանենք. ծանրն ի՞նչ ենք անում։

Առնում են թեթև զամբյուղն ու վերադառնում տուն։

Տանը ասում են.

— Բեր մի բաց անենք, տեսնենք ի՞նչ կա մեջը։

Բաց են անում— ի՞նչ են տեսնում՝ էլ ոսկի, էլ արծաթ, էլ անդին քար, էլ թոփերով մետաքսեղեն... էն տեսակ մի բան, որ իրենց օրում իսկի մտքներովն էլ չեն անցկացրել։ Քանի հանում են, էնքան ավելի շատ է մնում մեջը։

Անվե՞րջ-անհատնում։

Ու միանգամից հարստանում են։

Էս բանը լսում է ծիտիկի լեզուն կտրող շար պառավը։ Նախանձում է հարևանների բախտին։ Հարց ու փորձ է անում, թե որտեղ է կենում լեզուն կտրած ծիտիկը. տեղն ու ճամփեն սովորում է։

— Ես էլ կերթամ ծիտիկի մոտ,— ասում է ու ճամփա ընկնում։ Գնում է գտնում։ Դարձյալ ծիտիկը երկու զամբյուղ է բերում ու ասում.

— Ահա երկու զամբյուղ, մինը ծանր, մյուսը թեթև. որն ուզում ես, ջոկի քեզ համար։

Պառավը միտք է անում՝ որ միջի դանձն ինչքան շատ լինի, զամբյուղն էլ էնքան ծանր կըլինի. ասում է—բեր ծանր զամբյուղը տուր ինձ։

Շալակում է ծանր զամբյուղն ու ճամփա ընկնում դեպի տուն։



Զամբյուղը քարի պես ծանր է լինում — տանելը դժար։ Տնքալով տանում է։

Ծիտիկները հետից մտիկ են անում ու ծիծաղում։

Տանում է տուն։ Տանում է, ագահ-ագահ բաց է անում։

Բաց է անում թե չէ՝ ալմուկով դուրս են թափում այլանպակ-անհոռոմի շար օգիները — տեղն ու տեղը խեղդում շար պառավին։

---

# 1911

## ՓՈՔՐԻԿ ԶԿՆՈՐՍԸ

Շա՜տ-շատ տարի առաջ Ճապոնական ծովի ափին մի չահել ձկնորս է լինում, անունը Ուրաշիմա։ Մի լավ ու բարի տղա է լինում Ուրաշիման և հմուտ ուսկան ու կարթ գցող։

Մի անգամ գնում է ձուկը բռնելու։ Զկան տեղ չրից հանում է՝ ի՞նչ եք կարծում, ի՞նչ... Մի մեծ, ահագին կրիա։ Բայց էստեղ ձեզ դեռ մի բան պիտի ասեմ, որ գուցե դուք չգիտեք. էդ էն է, որ կրիաները ապրում են մինչև հազար տարի։

Ուրաշիման իրեն-իրեն միտք է անում, թե՝ ավելի լավ էր սրա տեղը մի ձուկը բռնեի, գոնե ճաշին կուտեի։ Իսկ սրան ի՞նչ անեմ. ինչո՞ւ սպանեմ էս խեղճ կենդանուն, ինչո՞ւ արգելեմ դեռ ինը հարյուր իննսունինը տարի էլ ապրելու։ Չէ, էդպես խստասիրտ չեմ լինիլ։ Ես գիտեմ, էդ իմ մորն էլ չի դյուր գալ։

Ու կրիան կրկին գցում է ծովը։

Սրանից հետո Ուրաշիման քնում է իր նավակում։ Օրն էլ ամառվա էն տաք օրերից է լինում, երբ ամեն մարդ ուզում է ճաշից հետո մի քիչ քնի։ Քնած ժամանակ ծովի անդունդից դուրս է գալիս մի սիրուն աղջիկ, մտնում է նավակն ու ասում.

— Լսի՛, Ուրաշիմա. ես ծովի թագավորի աղջիկն եմ, իմ հոր հետ ապրում եմ ծովի հատակին, վիշապների ապարանքում։ Ոչ թե կրիա էր քո բռնածը, այլ ես էի։ Իմ հայրը, ծովի աստվածը, ուղարկել էր ինձ փորձով իմանալու՝ դու



բարի՞ ես թե չէ։ Մենք այժմ գիտենք, որ դու մի լավ ու բարի տղա ես, որ երբեք խստասիրտ չես կարող լինել, և ահա ես եկել եմ քո ետևից։ Եթե կուզես՝ եկ ամուսնացիր ինձ հետ ու հազար տարով բախտավոր ապրենք կապույտ ծովի հատակին, վիշապների ապարանքում։

Էստեղ թիակն առավ Ուրաշիման, մյուս թիակն առավ ծովի թագավորի աղջիկն ու երկար թիավարում էին, մինչև հասան ծովի տակի վիշապների ապարանքը, ուր բնակում էր ծովի աստվածն ու իշխում էր վիշապների, կրիաների ու ձկների վրա։

Ա՜խ, ի՞նչ լավ էր էնտեղ։ Պատերը մարջանից էին, ծառերի տերևները—զրմուխտից, պտուղները—հակինթից, ձկների թեփերը — արծաթից, վիշապների տրտները մաքուր ոսկուց։ Ու էդ ամենը պատկանում էին Ուրաշիմային, որովհետև նա ծովի աստծու փեսան էր, չքնաղ Սեն-Նինների ամուսինն էր։ Ու ապրում էին անհոգ, երջանիկ։ Միայն հայրենի երկրի ու հարազատների կարոտը մտել էր Ուրաշիմայի սիրտը և զորանում էր օրեցօր։

Անցավ երեք տարի։ Մի առավոտ էլ Ուրաշիման ասավ.

— Ես շատ եմ բախտավոր էստեղ, էս հրաշալի դրախտում, քեզ հետ, իմ աննման Սեն-Նինի, բայց սրտով ուզում եմ մեր տունը գնամ, տեսնեմ ոնց են իմ անօգնական, ծերացած հերն ու մերը, իմ քույրերն ու եղբայրները... էլ ետ վերադառնամ քեզ մոտ։

— Ես թեև հակառակ եմ քո ցանկությանը, բայց չեմ կարող ուժով բռնել, երբ ուզում ես հեռանաս,— ասավ Սեն-Նինին։— Գնա՛, բայց հետդ վերցրու էս տուփը և ղգույշ կաց, բաց չանես։ Եթե բաց անես, իմացիր, որ էլ երբե՞ք, երբեք չես կարող վերադառնալ ինձ մոտ։

Ու մի գեղեցիկ տուփ տվեց Ուրաշիմային։

Ուրաշիման խոստացավ բաց չանի, ինչ ուզում է լինի։ Ապա Սեն-Նինին մի քուն բերավ նրա վրա. մին էլ աչքը բաց արավ՝ տեսավ իր հայրենիքի եզերքին։

Բայց ի՞նչ էր պատահել իր բացակայությանը։ Ո՞րտեղ է իր հորական տունը։

Ո՞րտեղ էր իրենց դյուղը։ Ճիշտ է, սարերն իրենց տեղն էին, բայց նրանց անտառները չկային։ Հոսում էր և իրենց տան մոտի վտակը, սակայն էլ առաջվա նման կանայք լվացք չէին անում նրա մեջ։ Զարմանալի էր թվում, թե մի որևէ երեք տարում ինչպես էին էդ ամենը էդքան փոխվել։

Էս մտածմունքի մեջ Ուրաշիման պատահեց մի անցորդ ծերունու։

— Ասա խնդրում եմ, բարի ծերունի, ո՞ւր է փոխադրվել Ուրաշիմայի տունը, որ կանգնած էր էստեղ։

Ծերունին հիշեց ու պատմեց, թե մանուկ ժամանակ լսել է, որ հարյուրավոր տարիներ առաջ մի Ուրաշիմա է եղել, գնացել է ծովը ձուկ որսալու ու էլ ետ չի եկել։ Նրա ծնողները, եղբայրները, նրանց որդիքն ու թոռները վաղո՞ւց վա՞ղուց են մեռել, իսկ տունը ավերվել, անցել է հողի հետ գնացել։

Էստեղ գլխի ընկավ Ուրաշիման, որ ծովի աստծու ապարանքը մարջանի պատերով, հակինթի պատուհաններով ու ոսկեռուտն վիշապներով կախարդական աշխարհն է եղել, որ էնտեղ անցկացրած մի օրը հավասար է եղել երկրի մի տարուն։

Ու հեռացավ իր հայրենիքից, քանի որ մեռել էին իր բոլոր հարազատները և մինչև անդամ իրեն ծանոթ ծառերն էլ չկային։

Աստիկ ցանկացավ վերադառնալ նորից ծովի հատակը, չնաշխարհիկ Սեն-Նինեի մոտ, բայց ի՞նչպես, ի՞նչ ճանապարհով։ Ոչ մի կերպով չկարողացավ դտնի և չկար մեկը, որ առաջնորդեր նրան կրկին էնտեղ—կախարդական աշխարհքը։

Կանգնեց միտք արավ Ուրաշիման։

— Եթե բաց անեմ էս տուփը, որ տվել է Սեն-Նինին, գուցե թե դտնեմ ճանապարհը, որ տանում է նրա մոտ։

Ու բաց արավ տուփը։ Եվ ի՞նչ դուրս եկավ միջից։ Մի կատր թեթև ամպիկ, որ վերացավ, ծուխ դարձավ գնաց դեպի օվկիանոս, կախարդական աշխարհքի կողմը։ Ուրաշիման նոր հիշեց կնոջ խոսքը, որ բաց չըպիտի աներ տուփը, աղերսեց, որ կանգնի, վազեց ետևից, ցավից լաց եղավ. բոլորն իզուր. ամպիկը ցնդեց, ցրվեց, վերացավ, հեռացավ անդարձ, անհետ։

Ու էստեղ էլ տեղնուտեղը հատավ Ուրաշիմայի ուժը, էլ ոչ վազել կարողացավ, ոչ կանչել։ Հանկարծ մազերը ճերմակեցին ձյունի պես, երեսը կնճռոտեց, մեջքը կորացավ զառամ ծերունու մեջքի նման, շունչը կտրեց ու մեռած ընկավ ծովափին։

Խե՜ղճ Ուրաշիմա. չիմացավ, որ ջահելության գաղտնիքն էր ամփոփված կախարդական տուփի մեջ, որ տվել էր իրեն հավերժահարս դեղեցիկ Սեն-Նինին։ Թեթևամիտ անհամբերությունից բաց արավ ու կորցրեց։ Զրկվեց ջահել, երկար կյանքից ու երջանիկ ապրելու վայելքից։ Բայց նա սիրող, ազնիվ սիրտ ուներ և գնաց իր սրտի ետևից։ Էդ է պատճառը, որ մինչև օրս էլ Ճապոնիայում չեն մոռացել Ուրաշիմային ու նրա խորհրդավոր պատմությունը։ Եվ շատ տեղերում պաշտում են նրան նրա համար, որ նույնիսկ ամուսնացածների անհոգ աշխարհքում, Սեն-Նինեի սիրո մեջ էլ չըմոռացավ իր հարազատներին ու իր աղքատ ծննդավայրը։

---

# 1913

## ՄԱՐԴԱԿԵՐԻ ԱՂՋԻԿՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՎԱՐՊԵՏԸ

Լինում է չի լինում, լինում է մի թագավոր. ունենում է երկու որդի, մինը բարի, մյուսը չար։ Բարին լինում է մեծն ու ժառանգը։ Էս բանը դուր չի գալի չար եղբորը, մտածում է՝ մի կերպով ազատվի բարի եղբորից, որ ժամանակին ինքը թագավոր դառնա։ Մի օր ասում է.

— Արի՛ գնանք որսի։

Թե՝ գնանք։

Գնում են։ Մտնում են անտառի խորքը։ Որ մտնում են անտառի խորքը, թիկնապահները ետ են ընկնում ու երկու եղբայր մնում են մենակ։ Որ մնում են մենակ՝ էս չար եղբայրը սուրը հանում է, խրում է բարի եղբոր թիկունքը ու, կարծելով թե արդեն սպանեց, վերադառնում է պալատը, իբրև թե բան չի պատահել։ Հերը հարցնում է.

— Եղբայրդ ի՞նչ եղավ։

— Ա՛խ,— ասում է,— ձերդ մեծություն, էնպես մի դժբախտություն պատահեց, որ... գազանները եղբորս կերան...

Խեղճ հերը աղի արտասուք է թափում, լաց ու սուգ է անում, դարդից հիվանդանում է մեռնում, ու չար որդին տեղը նստում է թագավոր։

Սրանց էստեղ թողնենք, գնանք հիմի տեսնենք՝ ինչ եղավ բարի եղբայրը։



Բարի եղբայրը անտառի խորքում ուշքի է գալի, սկսում թառանչել ու օգնություն կանչել։

— Օգնեցե՛ք, ո՞վ ասված սիրողներ... օգնեցե՛ք...

Ճյուղերը չարդոտելով, խոտերը խշշխշշացնելով, մինը առաջ է գալի, տարածում է երկար ճանկերով մազոտ ձեռքերը, վեր է քաշում թագավորի տղին ու հետը փչփչոտ լեզվով մեջքի արյունը լիզում է, հետը խոզ մռմռում.

— Օ՞ֆ, ի՞նչ համով է... օ՞ֆ, ի՞նչ համով է...

Էս խոպոտ ձենից թագավորի տղի հոգին մարում է։ «Վա՜յ ինձ, ասում է, մարդակերի ճանկն եմ ընկել»։ Դու մի՛ ասիլ, ճշմարիտ որ, ընկած է լինում մարդակերի ճանկը։

Մարդակերը սրան մի բոխչի նման կոնատակն է անում ու ճամփա ընկնում դեպի իր քարանձավը։

Լոք-լոք անելով մի քանի րոպեում հասնում է քարանձավի դուռն ու ծեծում.

— Դուռը բաց արա, աղջիկ ջան, դուռը բաց արա, տես քեզ համար ինչ եմ բերել...

Աղջիկը որ դուռը բաց է անում, որ տեսնում է ուշաթափված ու արյունաթաթախ թագավորի տղին, խղճահարվում է, ասում է.

— Էստեղ ի՞նչ լավ բան կա որ... Չես տեսնո՞ւմ արդեն մեռած է... թող տանեմ դեն գցեմ...

— Ասենք ճշմարիտ ես ասում, արդեն դիակ է... Տար դեն գցիր, իսկ ես էլի կըգնամ որոնելու,— ասում է հրեշ հերն ու ձեռաց անհետանում։

— Ո՜ւ... ո՜ւ...— միայն մռնչյունն է լսվում հեռվից։

Հերը հեռանում է թե չէ՝ աղջիկը վազում է, պահարանից մի գեղ է հանում, բերում է քսում տղի վերքին։

Տղեն աչքը բաց է անում, ասում է.

— Օ՞ֆ, էս ի՞նչ շատ եմ քնել։

Ու տեսնելով կողքին կանգնած աղջիկը՝ հարցնում է.

— Դու ո՞վ ես, սիրուն աղջիկ։

— Ես մարդակերի աղջիկն եմ, բայց ինձանից մի՛ վախենար... իսկ դու ո՞վ ես...

Թագավորի տղեն նոր հիշում է ու գլխի ընկնում, թե

որտեղ է ընկել, հայտնում է, թե ինքն ով է, պատմում է իր գլխին եկածը ու խնդրում է աղջկանը, որ թողնի իրեն՝ գնա իր հոր մոտ։

— Քեզ ու քո հորը սարեր ու ձորեր են բաժանում,— պատասխանում է աղջիկը։— Չես կարող նրան հասնես։ Ճամփին կբռնի իմ հերը, երկու պատառ կանի, կուտի քեզ։ Էստեղից անփորձանք դուրս գալու գնալու համար պետք է ունենալ իմ հոր մատի կախարդական մատանին։ Ես նրա մատից, քնած ժամանակը, կրհանեմ էն կախարդական մատանին, միայն մի պայմանով, որ խոսք տաս միասին փախչենք ու ամուսնանաս ինձ հետ։

Թագավորի տղեն խոսք է տալիս։

Էս ժամանակ լսվում է մարդակերի մռնչյունը,— ո՞ւ... ո՞ւ...

Որսը անհաջող էր անցել, բարկացած վերադառնում էր տուն։

— Շուտ արա, մահ՛ը էս քունը, թաքնվի՛ր, թե չէ որ տեսավ քեզ, կուտի...

Աղջիկը թաքցնում է տղին ու միամիտ նստում։ Հերը ներս է մտնում թե չէ, հոտոտում է ու կանչում.

—Օ՞ֆ, ի՞նչ լավ մարդահոտ է գալիս...

— Էդ քեզ է էդպես թվում,— ասում է աղջիկը։— Մարդն էստեղ ո՞վ է ավել... Հոգնած ես, արի մի լավ հաց կեր ու պառկի քնի։

Մարդակերը մրթմրթալով մի խորոված եզան կիսան է կլանում ու մեկնվում։ Աղջկանն ասում է.

— Արի գլուխս քորի, որ քնեմ։

Աղջիկը մի ձեռքով գլուխը քորում է, մյուսով կամաց աշխատում է մատանիքը մատից հանի։

— Էդ ի՞նչ ես անում, աղջիկ ջան,— կես քուն, կես արթուն մռմռում է մարդակերը։

Աղջիկը վախեցած, ձեռը ետ է քաշում ու էդ օրը էլ չի համարձակվում մատանին հանելու փորձ անել։

Իրիկնապահին մարդակերը նորից որսի է գնում, մնում են աղջիկն ու թագավորի տղեն։



Աղջիկը քունջից դուրս է բերում թագավորի տղին ու նրա խնդրանքով մատն է ածում իրենց սենյակները։

Մի դուռն է բաց անում—տղեն զարմանքից մնում է ապշած։ Մի մեծ դահլիճ է՝ լիքն ու զարդարված ոսկով ու արծաթով, թանկագին քարերով ու մարմարով, բայց հատակին էստեղ-էնտեղ թափված կրծոտած ոսկորներ։

— Էս ի՞նչ ոսկորներ են,— հարցնում է թագավորի տղեն։

— Ոսկորներ են էլի,— պատասխանում է մարդակերի աղջիկն ու մյուս դուռն է բաց անում։ Մտնում են հետևյալ սենյակը։ Առաջինից ավելի փարթամ ու շքեղ։ Պատերը մաքուր արծաթից, ոսկուց ու մարգարտից, հրաշալի կահ-կարասիքով, ոսկենկար-ոսկեփունջ մետաքսի վարագույրներով զարդարած։ Բայց էստեղ էլ թափված են նույն կրծած ոսկորները...

— Էս ի՞նչ ոսկորներ են, —զարմացյալ հարցնում է թագավորի տղեն։

— Դրանց ի՞նչ ես նայում,— կրկին խոսքը կտուրն է գցում մարդակերի աղջիկը,— դու ոսկե պատերին մատիկ տուր, արծաթե ու մարգարտե ձեղունները նայիր...

Ու առաջ է գնում։

Թագավորի տղեն դլխի է ընկնում, որ էդ ոսկորները էն խեղճ մարդկանց ոսկորներն են, որոնց լափել էր մարդակերը։

— Իսկ էս ի՞նչ սենյակ է,— ցույց է տալիս թագավորի տղեն մի դռան վրա, որի երկու կողմը հսկում էին երկու վիշապներ։

— Էս իմ հոր գանձարանն է։ Էս սենյակը չի կարելի մտնել առանց իմ հոր մատի կախարդական մատանիքի, թե չէ՝ իսկույն կըպատառոտեն էս պահապան վիշապները։

— Ո՞ւ... Ո՞ւ...

Լսվում է մարդակերի ահռելի ոռնոցը։

— Շուտ արա, շո՛ւտ, թաքնվի՛ր, ու շունչդ չհանես մինչև էլ մինչև իրիկուն, հերս գալիս է,— ասում է աղջիկն ու կրկին թաքցնում թագավորի տղին։ Իսկ մարդակերն արդեն դուռը ծեծում է։

— Բաց արա դուռը, աղջիկս, բաց արա, քեզ համար տես ի՞նչ եմ բերել։

Ապա թե թագավորի աղեն իր թաքնված տեղից լսում է գոռոցի ու լացի ձեն, հեան էլ բերանի ծլրփաց։

Մարդակերն իր ընթրիքն անում է ու պառկում է քնի, աղջկան պատվիրում է դլուխը քորի։

Աղջիկն էս անգամ կարողանում է հոր մատից հանել կախարդական մատանին, ապա տալի հետ միասին առնում են մարդակերի գանձերն ու փախչում։ Շատ են գնում թե քիչ, շատն ու բիչը ասված գիտի, հասնում են մի աշխարհք, էս աշխարքում թագավորի աղեն իմանում է, որ իր հերը մեռել է, ու նրա տեղը իր ախպերն է նստել թագավոր։ Ինչպես խոսք էր տվել, էնպես էլ ամուսնանում է մարդակերի աղջկա հետ ու մնում է էս աշխարհքում։

Շատ են կենում թե քիչ, մի քանի երեխա են ունենում, շատ սիրով էլ ապրում են իրար հետ, միայն կինը երբեմն դիշերները անհետանում է ու ծերին է վերադառնում շրբ-թոնքները արյունոտ։ Հարցնում է, թե՝

— Էդ ի՞նչ ես կերել։

Թե՝

— Ոչինչ, հավ ու գառն եմ կերել, բերանս էլ դեռ հալա չեմ սրբել...

Մի անգամ էլ էնպես է պատահում, որ էս թագավորի աղեն երեխաների հետ դնում է ուրիշ տեղ, մութն ընկնում է ու մնում են ճանապարհին։ Գիշերվա մի ժամանակը մի գազան գոռոնի մոտենում է ու հարձակվում է քնած երեխաների վրա։ Թագավորի աղեն սուրը հանում է զարկում. գազանը մարդու ձենով ճչում է.

— Վա՜յ, մեռա՜...

Ձենն էլ ծանոթ ձեն։ Մտիկ տա՝ ի՞նչ տեսնի— սրով զարկած, առաջն ընկած իր կինը։ Գիշերով գուրս է եկել որս որոնելու, մթնումը չի նկատել— քիչ է մնացել իր երեխաներին ուտի։

— Ահա թե ինչ կրնշանակի լինել մարդակերի աղջիկ...

Ու մնում է խեղճ մարդը շվարած, հուսահատված կանգ-



նած մեջտեղը։ Մի կողմը ընկած արնաշաղախ կինը, մյուս կողմը՝ ծվատած երեխաները։

Ջրդիտի ինչ անի, ինչ չանի։

Էս դրությյան մեջ հանկարծ լսում է քնքուշ ձեն.

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես լաց լինում, թագավորի որդի։

Գլուխը վեր է քաշում, տեսնում է առաջը կանգնած ճերմակ շորերով մի գեղեցկուհի։

— Ա՜խ,— ասում է,— աննման աղջիկ, օգնիր ինձ, պեսնում ես, կինս, երեխաներս։

— Ես կարող եմ քեզ օգնել միայն մի պայմանով,— խոսում է գեղեցկուհին։

— Ինչ որ ասես՝ հոժար եմ։

— Լա՛վ, դե լսի՛ր։ Ես գիտեմ՝ ինչ է բերել քո գլուխը եղրայրդ, գիտեմ՝ ինչպես ես ընկել մարդակերի ճանկը, ոնց ես նրանից ազատվել ու ամուսնացել նրա աղջկա հետ, մի խոսքով՝ ամենը գիտեմ... Բայց եթե ուզում ես քեզ օգնեմ— պետք է ներես եղբորդ...

— Եղբո՞ր... Օ՜, երբեք։ Էս բոլորի պատճառը նա է... Չեմ կարող, չեմ կարող նրան ներել...

— Չես կարո՞ղ... Դեհ, մնաս բարյավ։

Խոժոռում է գեղեցկուհին ու շուռ է գալի, որ հեռանա։

— Կա՛ց, կանգնի՛ր, կըներեմ,— կանչում է աղեն,— միայն թե՝ օգնիր։

— Դե լսի՛ր,— խոսում է ոգին։— Քո կինը արդեն մեռավ, երեխաներդ էլ ամենքը պիտի մեռնեն, որովհետև մարդու միս են կերել, բացի ամենափոքրը, ծծկերը։

Կախարդական մատանու ուժով ամեն դիշեր քեզ քնեցնում էր քո կինը ու ինքը գնում մարդի որսի, ու որսի մսից ուտեցնում էր և իր երեխաներին, ինչպես գիշակեր թռչունը կամ գազանը իր արած որսից ուտեցնում է իր ձագերին։ Միայն ծծկերն է, որ մարդի միս չի կերել, և միայն նա կապրի ու կրթագավորի ապագայում, եթե միայն դու ներես եղբորդ...

— Ներում եմ,— ասում է թագավորի աղեն։

— Դե հիմի նայիր,— շարունակում է հրաշալի կինը։ Մեկնում է ձեռքի կախարդական գավազանը, իրար հետից թեթև զարկում է երեխաներին, ու իրար հետից երեխաները դառնում են հյուսնի գործիքներ, թափվում են գետնին — թակ, ունելիք, սղոց, դուր, իսկ ամենափոքրը, ծծկերը— շաղափ։

Ահից ու զարմանքից տեղն ու տեղը քար է կտրում խեղճ հերը։

— Մի՛ վախենար ու մի՛ հուսահատվիր,— խոսում է ոգին։— Էս օրվանից դու կլինես վարպետ-հյուսն, իսկ սրանք—քո գործիքները։ Ցերեկը քեզ համար գործիքներ կլինեն, իսկ գիշերը հենց կախարդական մատանիքով զարկես—կդառնան քո երեխաները։

Այժմ հավաքիր էս գործիքները, գնա քո եղբոր քաղաքը, մի համեստ խանութ վարձիր ու մեջն աշխատիր, ինչպես հասարակ աշխատավոր, բանվոր հյուսն։ Նրանից հետո ինչ որ կըպատահի— հետո կըտեսնես։

Ասում է ու չրանում չքնաղ կինը։

Թագավորի տղեն հենց էնտեղ թաղում է իր կնոջը, հետո առնում է թակը, ունելիքը, սղոցը, դուրն ու շաղափը, որ չի իմանում իր զավակներն են թե գործիքները, ու ճանապարհ է ընկնում դեպի շար եղբոր քաղաքը։

Շար եղբոր քաղաքում մի համեստ խանութ է վարձում ու աշխատում։

Շատ քիչ է վաստակում, բայց ապրում է ճոխ ու առատ։ Հարևանները զարմանում են. չեն հասկանում, թե էս որտեղից է սա էսպես հարուստ ապրում։

— Ամոթ չըլինի հարցնելը, վա՛րպետ, էդքան քիչ աշխատելով ի՞նչպես ես կարողանում էսպես լավ ապրել...

Վարպետը պատասխանի փոխարեն բռնոթին է քաշում ու ուսերն է վեր քաշում։

Արի ու սրանից բան հասկացիր։

Մի խոսքով՝ ոչ ոք չի հասկանում սրա գաղտնիքն, ու անունը դնում են «Խորհրդավոր վարպետ»։



Մին էլ տեսար խորհրդավոր վարպետը մոագործի խանութը մտավ։

— Ի՞նչ արժե սուկին։

— Սուկին քեզ համար չի, վարպետ. սուկին թագավորի համար է։

— Ինչո՞ւ. իմ փորն էլ թագավորի փորի նման փոր չի՞, ինչ է...

Մարդիկ ծիծաղում են.

— Կեցցե՛ս, վա՛րպետ, կեցցե՛ս, լավ ասիր։

Գնում է ձկնավաճառի մոտ։

— Խավյարն ի՞նչ արժե։

— Խավյարը քեզ համար չի, վարպետ, խավյարը թագավորի համար ենք պահել։

— Վա՛հ, ինչու. իմ ախորժակն էլ թագավորի ախորժակի պես ախորժակ չի՞, ինչ է...

Զարմացած հարց է տալիս խորհրդավոր վարպետը, ու նորից խալխը ծիծաղում են.

— Կեցցե՛ս, վարպետ, կեցցե՛ս, ճիշտ նկատեցիր։

Ու ինչ էլ որ առնում է՝ մսեղեն, ձկնեղեն, կանաչեղեն, ընդեղեն թե մրգեղեն — առնում է առատ-առատ ու ամենաընտիրը։

Էս ու էն հարցնում են.

— Էդ ո՞վ պետք է ուտի, վա՛րպետ։

— Ես ու իմ երեխեքը։

— Շա՞տ երեխա ունես։

— Ինչպես չէ. Թակը, Սղոցը, Ունելիքը, Շաղափը։

Խալխը ծիծաղում են.

— Անուշ լինի քեզ ու երեխաներիդ, վա՛րպետ։

— Շնորհակալ եմ։

Վերադառնում է խանութ, զամբյուղով ուտելիքը դնում անկյունում ու սկսում բանել մինչև իրիկուն։

— Հապա ճաշդ, ի՞նչպես պետք է լինի, վա՛րպետ։

— Ճաշս էնտեղ խոհանոցում կեփեն։

Կիշերվա կիսին խանութը կողպում է, դուռը ետնափակ է տալիս, ու իսկույն ներսը ափսեների շրրխկշրրխկում են, բա-

ժակները զրնդզրնդում են, դանակ պատառաքաղները շրխկշրխկում, կարծես թե բազմաթիվ ծառաներ խանութում մեծ սեղան են բաց անում։ Ապա թե լսվում է ուրախ ծափ ու ծիծաղը, մեջ ընդ մեջ էլ խորհրդավոր վարպետի սաստող ձենը.

— Սղո՛ց, կարգի՛ն...

— Թա՛կ, զգույշ, շիշը շրխտրես...

— Խելոք կացեք, շարությունմի՛ անեք...

Հարևանները լսում են ու ապշում։ Առավոտը ցամաքած դալիս են։

— Հ՞ը, վարպետ, իրիկունը լա՞վ ընթրեցիք։ Բայց ձեր երեխեքը բավական շարություն են անում...

— Չէ, էնքան էլ շար չեն, տեսեք, ի՞նչ խելոք շարված են։

Պատասխանում է վարպետը ու ցույց է տալիս պատի կողմը, իսկ պաշարեղենի զամբյուղը, ճշմարիտ որ, դատարկ է։

Հարևանները գլուխները տարաբեկնում են, հազար ու մի ենթադրություններ են անում, ոչ մի կերպ չեն կարողանում իմանալ խորհրդավոր վարպետի գաղտնիքը։

Ցերեկով մտիկ են անում—մի խեղճ մարդ է, մի փոքրիկ նեղ խանութում, գլուխը կախ իր բանի վրա։ Ո՞րտեղից է սա էսքան փող աշխատում, էսքան ուտելիք առնում, և ո՞ւր է գնում էս ամենը... ի՞նչ է նշանակում էս աղմուկն ու շրխկոցը, որ լսվում է գիշերները։

Մտածում են՝ գոնը մի ծակ շինեն, որ էնտեղից գուցե մի բան տեսնեն, էն էլ չեն կարողանում։ Դուռը, որ թվում էր թե փտած տախտակից է—ոչ մի բուրզու չի մոտ թողնում։

Զարմացած հարցնում են.

— Վարպետ, քո դուռն ի՞նչից է շինված։

— Պանրից։

— Հապա ինչո՞ւ չես ուտում։

— Ես պանիր չեմ սիրում

— Է՛ վարպետ, ինչո՞ւ ես մեզ խաբում։

Իսկ վարպետը իր բռնոթին է քաշում ու խնդում։



Վերջապես խաբարը գնում է հասնում իրեն—Թագավորին։

Թագավորը բարկանում է։

— Հա՞, ո՞նց թե իմ փորն էլ թագավորի փորի նման փոր է...

Հրամայում է, որ մթերավաճառները ամենավաղ մթերքները տան հանդուգն վարպետին։ Ու թագավորի հրամանը դուրս եկած օրից վարպետը պետք է էն տեսակ միս ուտեր, որ շունն էլ չէր ուտիլ. հոտած ձուկը, որդնած պանիր ու փտած պտուղներ։

— Հ՞ը, գոհ ե՞ս թե չէ, վարպետ,— ծաղրելով հարցնում են վաճառողները։

— Ես գոհ եմ, բայց էնպես նները կան, որ իսկի չեն կարող գոհ լինել...

— Ինչո՞ւ։

— Էնդուր։

Ասում է, բռնոթին քաշում ու գնում իր խանութը։

Դու մի՛ ասիլ՝ հենց էդ օրն էլ թագավորը իր մեծամեծներին հրավիրած է լինում հանդիսավոր ճաշկերույթի։

Սեղանին միս են բերում—լեշի հոտ է գալի, պանիր են գնում—էնքան որդնած, որ իրեն-իրեն սեղանի վրա մաս է գալի, պտուղները հիճվոտ, թթու, կանաչեղեն փտած...

— Էս ի՞նչ բան է,— գոռում է թագավորը.— էսքեղ կանչեցեք էդ լիրբ խոհարարին։

Խեղճ խոհարարը նրգում-կրակն է ընկնում, թե ամենաընտիր մթերքն է առել, որան-նրան վկա է բերում, թե բոլոր ուտելիքները հրաշալի բարում էին խոհանոցում...

Ինչ պետք է անեն։ Թագավորն էլ, իր մեծամեծներն էլ շոր հացը ջրումը թրջում են ուտում, որ սովամահ չլինեն։

— Կա թե չկա էս խորհրդավոր վարպետի սարքած խաղն է, որ խաղում է մեր գլխին,— կարծիք է հայտնում թագավորի խորհրդականներից մինը։— Կացեք, ես մի գնամ դրա մոտ։

Շորերը փոխում է, հին, մաշված շորեր է հագնում ու գնում։

— Բարի ալողում, վարպետ։

— Աստծու բարին քեզ։

— Վարպետ, մի նեղություն քաշի՝ էս սենդուկը նորոգի։

— Շատ լավ։ Էստեղ դիր։

— Քեզ մոտ էս ի՞նչ լավ կերակուրի հոտ է գալի, վարպետ։

— Հա՛, երևի էն անկյունի ճաշի կրճանքի հոտն է...

Խորհրդականը էն կողմն է նայում, տեսնում է հիանալի ձուկն ու խորովածն—բերնի ջուրը վազում է։

— Էս հիանալի ուտելիքները ո՞րտեղ եք առել, վարպետ։

— Էնտեղ, որտեղ ծախում են—շուկայում։

— Բայց, ինչքան ինձ հայտնի է, Թագավորը հրամայել է, որ քեզ վրա լավ ուտելիք չծախեն, էս ի՞նչպես է, որ...

Վարպետը պատասխանի փոխարեն բռնոթի է քաշում, ուսերը վեր քաշում ու քթի տակին ծիծաղում։

Էստեղից խորհրդականը վազում է Թագավորի մոտ։ Թագավորի մոտ մեծամեծները խորհրդի են հավաքվում, խորհուրդ են անում ու վճռում են, որ խորհրդավոր վարպետը անպատճառ մի կախարդ է որ կա, ու նրանից պետք է խլել իր գործիքները— թակը, սղոցը, ունելիքը, դուրն ու շաղափը, մի խոսքով՝ ամենը, ինչ որ ունի։

Ինչպես որ վճռում են, էնպես էլ անում են։

Խորհրդավոր վարպետի գործիքները բերում են Թագավորի ննջարանին կից սենյակում փակում։ Փակում են, բանալին տալիս Թագավորին։ Թագավորն էլ, ապահովության համար, բանալին կախում է իր գոտուց։

Մին էլ կես-գիշերին էս փակած սենյակում մի աղմուկ. թակը թակում է՝ թրխկ հա թրխկ, ունելիքը քաշում է՝ չրխկ հա չրխկ, սղոցը սղոցում է՝ խրռ հա խրռ, շաղափը ծակում է՝ վրռ հա վրռ, ապա թե միասին ճչում են.— Հաց ենք ուզում, հաց ենք ուզում...

Թագավորը վազում է, դուռը բաց է անում, տեսնում է բոլոր գործիքները հանգիստ իրենց տեղերն ընկած են։ Բայց դուռը փակում է թե չէ—նորից սկսվում է լացն ու ճիչը.

— Հաց ենք ուզում. հաց ենք ուզում...



Էս թագավորն ամբողջ գիշերը չի կարում աչքը կպցնի։ Երկրորդ գիշերը—ավելի թունդ։

Խորհրդականներն ասում են.— Թագավորն ապրած կենա, բեր ուտելիքներ գնենք էդ սենյակում, տեսնենք ինչ դուրս կբերա։— Բերում են ուտելիքներ են գնում էդ սենյակում ու էլ եդ փակում։

Ականջ են դնում։

Ափսեները շրխկշրխկում են, դանակներն ու պատառաքաղները չրխկչրխկում, բաժակները դրընգում։ Ծափ, ծիծաղ, ճիչ, աղմուկ։ Հետն էլ մինը, թե՝— Սղո՛ց, դու ինձ լոթում ես։

Մյուսը, թե՝

— Շա՛ղափ, մազերս մի՛ քաշի։

Երրորդը, թե՝

— Դո՛ւր, էս ի՞նչ արիր, շորերիս վրա Բուփեցիր...

Էս թագավորն ու իր խորհրդականները զարմանքից մընում են քարացած։

Հրաշք, որ հրաշք։ Էլ ի՞նչ խոսք, որ խորհրդավոր վարպետը կախարդ է։

Թագավորը հրամայում է, որ վարպետին իր մոտը բերեն։ Բերում են։ Ասում է.

— Վա՛րպետ, էս ի՞նչ բան է, որ քո գործիքներն ուտում են ու խոսում են։ Էս ի՞նչ կընչտանակի...

Վարպետը պատասխանի փոխարեն բռնոթի է քաշում ու ուսերը վեր քաշում։ Եվ ոչ մի խոսք։

Թագավորը կատաղում է։ Ասում է.

— Եթե իսկույն էս գաղտնիքը իմ առջև բաց չես անիլ—պուխդ կբթռչի։

— Ի՞նչ գաղտնիք, ձերդ մեծություն. իմ երեխաներն են, ահա բոլոր գաղտնիքը։

— Հապա ինչո՞ւ քո երեխաներն էս տեսակ տարօրինակ կերպարանք են առել, որ իսկի նման չի մեր կերպարանքին։

— Նրա համար, որ ինձ օգնեն, հաց աշխատենք, ապրուստ անենք։

Թագավորը հավատում է վարպետի խոսքին ու հրամա-

յում է, որ վերադարձնեն գործիքները։ Միայն թե հետն էլ պատվիրում է.

— Բայց զգույշ կաց, վարպետ մյուս անգամ էլ չասես՝ իմ փորն էլ էնպես փոր է, ինչպես թագավորի փորը և կամ թե՝ իմ ախորժակն էլ էնպես ախորժակ է, ինչպես թագավորինը։ Թե չէ հետո շատ կըզղջաս։

Վարպետը դնում է, նորից սկսում է իր գործը։ Բայց հետզհետե հաճախորդները պակասում են։ Մարդիկ վախենում են նրա հետ գործ ունենալուց։ Իզուր է նա փողոցները թափառում ու ամեն մի հինգ քայլի վրա կանչում.— Ահա վարպետը... վարպետը եկավ, ո՞ւմ է շինելու բան հարկավոր... ահա վարպե՞տը...

Էլ ոչ ոք գործ չի տալիս։

Էս ու էն հարցնում են.

— Վա՛րպետ, հիմի ո՞նց ես ապրելու։

Վարպետը պատասխանի փոխարեն ուսերը թոթվում է ու բոնոթի է քաշում։

Էս թագավորն ունենում է վեց երեխա. երեք աղջիկ, երեք տղա, մինը մյուսից առողջ ու սիրուն։ Էս երեխեքն իրար ետևից հիվանդանում են ու մեռնում։

Բժիշկ, հեքիմ, գեղ, ճար—ոչ մի բան չի օգնում։ Իրար ետևից մեռնում են։

Մեծ աղջիկը մեռնում է։ Տանում են թաղելու։ Մին էլ տեսնում են՝ խորհրդավոր վարպետն էլ էն կողմից է գալի՝ ուսին մի դագաղ։

— Էդ ո՞վ է մեռել ձեր տանը, վարպետ։

— Իմ Թակն է մեռել, իմ Թակը... տանում եմ թաղեմ։

Մյուս անգամ թագավորի տղին են տանում թաղելու, դարձյալ, հանդիպում է վարպետը՝ ուսին մի ուրիշ դագաղ։

— Էդ ո՞վ է մեռել, վարպետ։

— Իմ Դուրն է մեռել, տանում եմ թաղեմ։

Էսպես կարգով, քանի թագավորի երեխաներից մեկին տանում են թաղելու, վարպետն էլ թաղում է իր գործիքներից մեկն ու մեկը։



Թագավորի խորհրդականը շատ խորամանկ մարդ է լինում։ Թագավորին ասում է.

— Ձերդ մեծություն, տեսնում եք, որ ամեն անգամ ձեր երեխաները թաղելիս վարպետն էլ իր գործիքներից մեկը կամ մյուսն է թաղում։ Սրա մեջ մի խորհուրդ կա։ Եվ եթե չեք ուզում, որ ձեր բոլոր երեխաները մեռնեն — կանչեք խորհրդավոր վարպետին ու մի ձեով նրա սիրտն առեք։

Թագավորին էլ մենակ մի աղջիկ է լինում մնացած, ամենափոքրը, էն էլ վերջին շնչումն է լինում։

Ճարահատված կանչում է վարպետին, աղաչանք, պաղատանք է անում.

— Վարպետ, ասածու սիրուն, երկնքի սիրուն, քո երեխանց գերեզմանի սիրուն, խնդրում եմ, ապատիր աղջկանս։

Վարպետն էլ թե.

— Ձերդ մեծություն, խնդրում եմ ազատեցեք իմ Շաղափին։

Թագավորը թե.

— Ի՞նչպես ազատեմ։

Վարպետը թե.

— Դրա համար միայն մի ճար ու ճանապարհ կա. ամուսնացնել էս երկուսին իրար հետ։

Թագավորն աղջկա սիրուց հոժարում է, բայց մտքումն ասում է՝ թող մի էս փոքանքն անց կենա, ես հետո սրան ցույց կըտամ։

Սրա վրա թագավորի աղջիկը լավանում է։

Թագավորը վարպետին ասում է.

— Ո՞ւր է քո Շաղափը, դե բեր պսակենք իմ աղջկա հետ։

Վարպետն ասում է.

— Թագավորն ապրած կենա. իմ Շաղափը առայժմ ցերեկով մնալու է իսկական շաղափ և միայն գիշերներն է տղա դառնալու. ինչպես որ նախասահմանված է նրա համար։

— Էդ առայժմ, իսկ հետո՞։

— Հետոն էլ հետո կըտեսնենք, ինչ որ աստված կըկամենա։

— Ուրեմն, առայժմ ամուսնության մասին չի կարող խոսք լինել։

— Ձերդ մեծությունը ինչպես որ կըկամենա։

Էսպես մի քանի տարի անց է կենում։ Թագավորը շատ է ուրախանում, որ իր աղջկա ու Շաղափի ամուսնությունը միշտ հետաձգվում է։ Եվ սիրում է վարպետին ձեռք առնել։

— Հ՞ը, ո՞նց ես, խնամի վարպետ. ախար բացի շաղափից էլ քեզ գործիք չի մնացել. ո՞նց ես աշխատում, ո՞նց ես ապրում։ Ինքդ լավ ապրուստի սովոր, մանավանդ փորդ էլ նույն փորն է, ինչ որ...

— Ի՞նչ ապրուստ, ի՞նչ աշխատանք, ձերդ մեծություն. ամբողջ օրը նստած ոգիս հեքիաթ եմ պատմում։ Հիմի էս եմ շինել իմ բան ու գործը։ Երեկ էլ մի շատ լավը պատմեցի։ Արդյոք ձերդ մեծությունը հեքիաթ չի՞ սիրում, չէ՞ր կամենա մի լավը պատմեմ՝ լսեր։

— Ինչու չէ. համեցեք, պատմիր, կըլսեմ։

— Ձերդ մեծություն, ժուկով-ժամանակով եղել է չի եղել, եղել է ձեզ նման մի թագավոր, ունեցել է երկու որդի, մինը բարի, մյուսը չար։ Բարին եղել է մեծը ու գահի ժառանգը և հոր մահից հետո նա պիտի նստեր թագավոր։ Էս բանը դյուր չի գալի չար եղբորը...

Թագավորն էստեղ մոայլում է ու վարպետի խոսքը կտրում է.

— Վարպետ, քո հեքիաթը ինձ դյուր չի գալի։

— Դե լսեցեք, ձերդ մեծություն. ամենահետաքրքրական մասը հիմի կըսկսվի։ Հա՛, էն էի ասում. չար եղբորը դյուր չի գալի, որ հոր մահից հետո բարին պիտի թագավորի. իր մեջը վճռում է գործը շուռ տա էնպես, ինչպես ինքն է ուզում։ Ու մի օր եղբորն ասում է.— Արի գնանք որսի։ Գնում են։ Անտառի խորքում թիկնապահները նա են մնում։ Որ թիկնապահները նա են մնում՝ սա սուրը հանում է, խրում բարի եղբոր թիկունքը...

Թագավորն էստեղ ավելի տակն ու վրա է լինում ու վարպետի վրա գոռում է.



— Ես ասի, որ քո հեքիաթը ինձ դյուր չի գալի, վարպե՞տ...

— Մի քիչ էլ լսեցեք, հիմի ամենահետաքրքրական տեղը կըգա, ձերդ մեծություն, մի քիչ էլ լսեցեք։ Չար եղբայրը որ զարկում է, կարծում է, թե բարի եղբորն սպանեց, խոտովխաշամով ծածկում է ու գնում։ Գնում է տանը հորն ասում, թե եղբորս անտառում գազանները կերան...

Էստեղ թագավորը տեղիցը վեր է թռչում, աղաղակում.

— Ուրեմն դու իմ եղբա՞յրն ես... ների՛ր, ների՛ր ինձ, եղբայրս...

Աղաղակում է ու դողդոջալով ընկնում խորհրդավոր վարպետի ոտները։ Ասում է.

— Ինձ մի՛ պատժի, եղբայրս, ինձ մի՛ պատժի... Ահա քո թագը, ա՛ռ, նստիր մեր հոր գահին ու թագավորիր։

— Ոչ ես պետք է թագավորեմ, ոչ դու,— պատասխանում է խորհրդավոր վարպետը.— իմ Շաղափը կըլինի թագավոր, քո աղջիկը թագուհի։ Մեր ժամանակն անց է կացել. այժմ նրանցն է ժամանակը, որ նրանք պիտի թագավորեն։

Բերում են վարպետին հագցնում են իր առաջվան իշխանական զգեստները ու գնում են Շաղափի ետևից։ Բայց Շաղափն էլ, շաղափ չէր արդեն. կերպարանափոխվել, դարձել էր մի սիրուն պատանի։

Էստեղ երկու եղբայր գրկում են իրար, իրար ներում ու սիրում, իսկ Շաղափն ու թագավորի գեղեցկուհի աղջիկը ամուսնանում են ու թագավորում ուրախ ու բախտավոր։

---

# ՈՐՈՏ ԹԱԳԱՎՈՐԸ

Ժամանակով մի թագավոր է լինում, էնքան ուժեղ, էնքան բարձր ձեն է ունենում, որ հազար վերստի վրա լսվում է։ Մեկի հետ, հենց էնպես, զրույց անելիս՝ հեռվից կարծում են, թե որոտն է թնդում։ Դրա համար էլ անունը դնում են Որոտ Թագավոր։

Պալատականներն ու նախարարները, որոնք ամեն որ խոսելիս են լինում թագավորի հետ, կարճ ժամանակում ամենքն էլ խլանում են։ Եվ կատարյալ պատիժ ու պատուհաս է դառնում երկրի համար։ Ժողովուրդը ամեն կողմից գալիս է արդարադատություն գտնելու, գալիս են խեղճերը էնքան կանչում, էնքան գոռում, որ ուժից ընկնում են, բայց խուլ պալատականներն ու նախարարները չեն լսում։ Տերության մեջ գործերն առաջ չեն գնում։ Մարդիկ տրտնջում են, և ոչ ոք չի համարձակվում թագավորին ասի.

— Ձերդ մեծություն, դուք խլացրել եք բոլոր նախարարներին։

Թագավորին թվում էր, թե ինքն էլ էնպես է խոսում, ինչպես մյուսները։ Եվ երբ խլացած նախարարները մինչև անգամ իրեն ձեն էլ չեն լսում, բարկանում է, քացով ու բռունցքով էնպես է դուրս քշում պալատից, որ գլուխկոնծի տալով՝ սանդուխքներից գլորվում են։

Նախարարները քանի որ նոր են լինում, առաջին օրերը



գործերը լավ են գնում։ Միայն թագավորը նկատում է, որ իր խոսելու ժամանակ նրանք ձեռքերով իրենց ականջները փակում են։

— Ի՞նչ եք անում,— հարցնում է նեղացած.— ես գլխի պես հո չի՞մ դոսում։

— Օ՜, ո՛չ, ձերդ մեծություն,— պատասխանում են վախեցած նախարարները։— Ականջներիս... նեղն ու

սելիս քո ձեռիցը մարդիկ խլանում են։ Ամպի նման որոտում ես, նրա համար էլ անունդ դրել են Որոտ Թագավոր։

Թագավորն ակզբում սաստիկ վրդովվում է։ Հավատալը չի գալիս, թե ինքը կարող էր էդ տեսակ զարհուրելի ձեռ ունենալ։ Բայց երբ ամեն բան պարզվում է իր համար ու համոզվում է, բարկանում է իր նախարարների վրա, հրամայում է նրանց ամենքի ձեռն ու ոտն էլ կապտակել ու բանտարկել, իսկ գյուղացուն շինում է իր գլխավոր ու միակ խորհրդատուն։ Միայն իրավունք է տալիս, որ ակամնջները խցանով փակի։

Դու մի՛ ասիլ՝ թագավորը վաղուց ցանկություն է ունեցել ամուսնանա ու շատ էլ խնամախոսներ է ղրկել էս ու էն թագավորի աղջկանն ուղելու, բայց ամենքն էլ մերժել են։ Հիմի նոր է գլխի ընկնում, թե ի՞նչու են մերժել իրեն.— վախեցել են, թե խլանան։

Վճռում է հայտարարել իր տերության մեջ, թե ո՞վ է կարող իրեն բժշկի, և տեղն ու տեղը ինչքան ձեռնումը ձեն կա, գոռում է.

— Հե՞յ, ո՞վ է կարող ինձ բժշկի. ով բժշկի՝ իր քաշովը մին ոսկի կըտամ։

Ձենը որոտալով ու դղրդղրդալով գնում է հասնում ամեն կողմի վրա հալաբ վերան։ Էս դղրդոցից ամպերը ժամ են գալի, տակն ու վրա են լինում, և երկու շաբաթ շարունակ ամբողջ տերության վրա անձրև է գալի։ Ամենահեռավոր անկյուններում էլ իմանում են թագավորի հայտարարությունը, բայց ամիսներ են անց կենում, ու ոչ մի բժիշկ, ոչ մի հեքիմ չի երևում։

Խեղճ թագավորն ակսում է հուսահատվել. հենց էդ միջոցին հեռու աշխարհքից հայտնվում է մի կախարդ, ներկայանում է թագավորին, ասում է.

— Թագավոր ապրած կենա, մի կոխարդական մաղ ունես գլխիդ, էն կոխարդական մաղն է քո հիվանդության պատճառը։

Թագավորն ուրախանում, աշխարհքովը մին է լինում։ «Ի՞նչ մեծ բան է, ասում է իր մտքումը, գլուխս վեր կանեմ—պրծանք գնաց։ Էս լավ էր, էս հեքիմին էլ մի բան կըտամ կըգնա. էլ ինչո՞ւ եմ իրեն քաշովը մին ոսկի տալի. մի բան որ առաջուց ցավիս գաղտնիքը հայտնեց»։

Հենց էստեղ հեքիմն ավելացնում է.

— Միայն մի պայման կա, որ պետք է իմանաս, թագավոր։ Պետք է միանգամից գտնել ու պոկել էն կախարդված մաղը։ Եթե մին սխալվեցիր—նրանից ետև էլ ճար ու հնար չի լինի քո ցավին։ Եվ միակ մարդը, որ կարող է էդ անել— Անլեզու աղջիկն է։

— Իսկ նա ո՞րտեղ է,— հարցնում է թագավորը։

— Նա ապրում է Աճուճ Պաճուճների աշխարհքում։ Նրան ասում են Անլեզու, որովհետև ճշմարիտ էլ—լեզու չունի։ Էս օրվան օրից ուղիղ մի տարի, մի ամիս ու մի օր անց՝ դու նրան կըտեսնես էստեղ, եթե քո ասած խոսքը կատարես, իմ քաշովը մին ոսկի տուս ինձ, քո խորհրդականին էլ, իրրև գեսպան, ինձ հետ միասին ուղարկես Անլեզու աղջկա մոտ։

Թագավորը թեև իր մեջը շատ է ցավում, բայց ի՞նչ աներ. ճար չուներ, անծանոթ հեքիմին քաշովը մին ոսկի է տալիս ու իր խորհրդականի հետ միասին ճանապարհ է գնում դեպի Աճուճ Պաճուճների երկիրը — Անլեզու աղջկա մոտ։

Էս դեպքից մի քանի ամիս անց է կենում. թագավորը մին էլ տեսնում է իր խորհրդականը ետ եկավ։— Հապա կախարդ հեքիմն ու Անլեզու աղջիկն ո՞ւր են։— Թե՝ կախարդ հեքիմը ուտով-դրիոով անհետացավ, կորավ, իսկ Անլեզու աղջկանից տեղեկություն չունեմ։ Ասում են՝ գնացել է իրեն համար արհեստական լեզու շինել տա, ո՞ւր, ո՞ւմ մոտ կամ քանի ժամանակով, ոչով չգիտի։ Միայն կախարդը անհետանալիս էսպես կանչեց.

— Որոնեցեք—կըգտնեք։ Սրա մեջն է թագավորի բախտավորությունը։

— Լա՛վ, մենք էլ կորոնենք,— ասում է թագավորը։

Եվ առանց գործը ետ գցելու դուրս է գալիս իր պալատի պատշգամբն ու նորից բարձր գոռում։

— Հե՞յ, ո՞վ կարա գտնի Անլեզու աղջկանը։ Ով գտնի, իր քաշովը մին ոսկի կըտա՞մ։

Կարծես թե ճիշտ որ ամպ է որոտում։ Ձենը մինչև որտեղ հասնում է՝ ամեն տեղ էլ շարաթներով անձրև է գալիս։

Սրանից ետը էլ մի քանի ամիս անց է կենում—դարձյալ Անլեզու աղջկանից ոչ մի լուր։

Թագավորն սկսում է հուսահատվել։ Եվ փոխանակ լուր իրեն համար նստելու, ամբողջ օրը ամպի նման որոտում է ու որոտում։ Հպատակների մի մասի ականջները ծանրանում են, մյուս մասինը բոլորովին խլանում է։ Եվ որովհետև ոմանք վատ են լսում, ոմանք բոլորովին չեն լսում, սրանից հաղար ու մի թյուրիմացություններ են առաջ գալիս, իսկ թյուրիմացություններից զանազան տուրուդմբոցներ են պատահում։ Ոստիկանությունը միանգամայն գլուխը կորցնում է, հա՛յ դես է վազում, հա՛յ դեն է վազում։ Եվ որովհետև, թագավորին մոտ լինելով, տերության մեջ ամենախուլ մարդիկն էլ ոստիկաններն էին, ճշմարտությունը չեն կարողանում լսել, միշտ մեղավորների կողմն են պահում ու արդարներին բռնում, բանտերն են լցնում։

Թագավորը քանի գոռում է՝

— Արդարադատ եղե՞ք, արդարադատ եղե՞ք,— էնքան ավելի ու ավելի են նրանք խլանում ու ավելի մեծ անիրավություններ են անում։

Մի անգամ թագավորի պալատի առջև կանգ է առնում մի ջահել անծանոթ ու գոռում է.

— Ձենի դեղ եմ ծախո՞ւմ, ձենի դեղ եմ ծախո՞ւմ։ Ով ձեն ունի — կըկարի, ով չունի—կըգտնի։ Ա՛յ ձենի դե՞ղ, ա՛յ լավ ձենի դե՞ղ...

Որոտ թագավորը որ լսում է, կարծում է թե իրեն ծաղրում են, հրամայում է բռնեն մոտը բերեն էն լրբին։

Երբ բռնում են, ներս են բերում պալատը՝ բարկացած որոտում է.

— Էդ ի՞նչ էիր գոռում դու իմ պալատի առջև։ Ի՞նչ



ձենի դեղ ես ծախում... Ցո՛ւյց տուր հապա՝ տեսնեմ ո՞րն է քո ձենի դեղը...

— Ահա իմ ձենի դեղը, թագավորն ապրած կենա։ Համեցեք փորձիր, տե՛ս՝ ճշմարիտ եմ ասում թե չէ։

Ասում է անծանոթն ու իր արկղից մի տեսակ մանր հաբեր է հանում, գնում թագավորի սեղանի վրա։

Թագավորը նայում է սրան, ոսից-դրուխ շափում։ Շորերին է նայում—ապա է, բայց դեմքը, շարժումները, ձենն ու քնքշությունը միանգամայն կանացի են։

— Անունդ ի՞նչ է։

— Անունս Անլեզու է։ Իհարկե, տեսնում ես, թագավոր, որ մի քիչ սխալ անուն են տվել ինձ։ Գուցե ավելի պատշաճ էր, որ երկար լեզվանի կոչեին. բայց եղածը եղած է...

Եվ առանց քաշվելու, որ ինքը գանվում է ոչ թե փողոցում, այլ թագավորի պալատում, սկսում է կոկորդովը մին դուռալ.

— Ա՛յ ձենի դե՞ղ, լա՛վ ձենի դե՞ղ. ով ունի — կըկարի, ով չունի—կըգտնի՞...

Թագավորի ծիծաղը պրծնում է։

— Հապա,— ասում է,— էդ քո ձենի դեղը բե՛ր, մի փորձեմ տեսնեմ։

Առնում է մինը կուլ տալի, և ո՞վ գարմանք, ձենի կեսը կորչում է։ Սրանից ետը թե կարող ես, դե բռնի Որոտ Թագավորին։ Ինչ որ սոված հավը կուտին վրա ընկնի, վրա է ընկնում էս հարերին ու կուլ է տալիս իրար ետևից։ Կուլ է տալիս վերջացնում։ Ետ է դառնում որ մի բան ասի,— չորս կողմի կանդնածները ձենը չեն լսում, էնքան կորած է լինում։ Չեն կարողանում լսել, մինչև ականջները բերնին չեն մոտեցնում։

Թագավորը ուրախությունից հրամայում է, որ իր ամբողջ տերության մեջ ասն կատարեն, խաղեր ու հրավառություններ սարքեն, ուտելիքներ ու դինի բաժանեն ժողովրդին։

— Իսկ դու ի՞նչ ես ուզում, հրաշալի անծանոթ,— դիմում է թագավորը իրեն բժշկող երիտասարդին։— Ինչ որ ուզես, պետք է ստանաս, թեկուզ թագավորությանս կեսը։

— Ես էն եմ ուզում, որ քո պալատում մի սենյակ տաս ինձ և հաց ու ջուր, որ ապրեմ, ոչով էլ ինձ մոտ չըմտնի, նույնիսկ դու, թագավոր։ Ահա իմ բոլոր ուզածը։

— Էդքա՞նը,— զարմանում է թագավորը։— Շատ քիչ է։ Բայց թո՛ղ էդպես լինի, ինչպես ուզում ես։

Սրանից հետո էլ թագավորի ձենը էնքան է նվազում, որ պալատականները չեն կարողանում լսել, մանավանդ որ խուլ են լինում։ Հետևհետե նրանց սկանջները էլ բժշկվում են, և ամենքն էլ սկսում են խոսել էնպես, ինչպես թագավորն է խոսում—հազիվ լսելի շշուկով, և կարճ միջոցում էս տերությանմեջ շշուկը դառնում է խոսելու ընդունված ձևը։

Մենակ թագավորի պալատում ապրող անծանոթն էր, որ հեշտ էր լսում թագավորին ու մենակ նա էր, որ չէր շշշնջում, չէր իջեցնում իր հնչուն ձենը խոսելու ժամանակ, ում հետ էլ լիներ։

Ժողովուրդը սկսում է հետաքրքրվել՝ թե արդյոք նրա լեզուն էլ իրենց լեզվի նման լեզու է, թե չէ։ Էս հետաքրքրությունը մեծանում է մանավանդ մի գեպքից հետո, երբ մենք կատակով անծանոթին խնդրում է, թե՝

— Հապա մի քու լեզուն ցո՛ւյց տուր, տեսնենք ընչից է շինած։

Էս ասելն է լինում։ Անծանոթը բարկանում է, լաց է լինում, փախչում է ու մտնում իր սենյակը, փակվում ու հայտնում, թե էլ երբեք դուրս չի գալ, որ մյուս անգամ էլ չասեն, թե՝ լեզուդ ցո՛ւյց տուր։

Էս դեպքի մասին տեղեկացնում են նախարարին։ Նախարարը գնում է անծանոթի մոտ, ասում է.

— Ինչո՞ւ ես բարկանում, ինչո՞ւ ես էդպես անում։ Ուզում են լեզուդ տեսնեն, դու էլ հանի՛ր ցույց տուր, ահա՛ էսպես։

Ու լեզուն հանում է։

Անծանոթը ակամայից կրկնում է նույն բանը. հանկարծ լեզուն բերանից վեր է ընկնում, կտոր-կտոր լինում, ջարդվում, ոնց որ թե կավից լիներ շինած։

Նախարարը զարմանքից մի առժամանակ մնում է տեղը քար կտրած։ Ապա ուշքի գալով ձեռքով զարկում է ճակատին ու գլխապատառ վազում է թագավորի մոտ։

— Թագավորն ապրած կենա, բա չե՞ս ասել, որ Անլեզու աղջիկը հայտնվել է։ Հենց էսօր լրանում է մի տարին, մի ամիսն ու մի օրը, որ գուշակեց կախարդ հերիմը, նա հայտնվել է։

Պալատը տակն ու վրա է լինում։ Մարդիկ խոնվում են Անլեզու աղջկա սենյակի դռան առջև, ուզում են անպատճառ ներս մտնեն ու տեսնեն իրենց աչքով։ Զուր է թագավորը կանչում.

— Չի կարելի մտնել նրա մոտ։ Մինչև անգամ ես էլ չեմ կարող, խոսք եմ տվել...

Բայց հիմի էլ ո՞վ էր կարողանում լսել թագավորի ձենը։ Տեսնում են՝ ոնց է շրթունքները շարժում, ձեռին-տաին անում, իսկ թե ինչ է ասում,— չեն իմանում։

Էստեղ հանկարծ դռները բացվում են, ու ամենքը մնում են հիացած։ Սենյակի մեջտեղը, մարգարտակոր ու գոհարազարդ գգեստով, ճոխ մազերն արձակ, ոսկու գեղի վրա հանգիստ թիկնը տված մի ջահել գեղեցկուհի, հոլհարը ձեռին իրեն հով է անում։

Ոսկու գեղը նույն մեծությամբ, ինչ որ թագավորը ավել էր կախարդ հերիմին։

Թագավորն ընկնում է գեղեցկուհու ոտքերը ու գլուխը խոնարհում ծնկներին։ Գեղեցկուհին թագավորի գլխից հանում է կախարդական մազը, որ հանելուն պես էրվում է մատների մեջ։

— Շնորհակալ եմ, անուշ աղջիկ։ Շնորհակալ եմ, իմ թագուհի,— կանչում է թագավորը մի էն տեսակ դյուրեկան ձենով, որ մինչև էն օրը ոչով չէր լսած կյանքում։

— Ես էլ եմ շնորհակալ, Որոտ թագավոր, իմ ա՛նգին ամուսին,— պատասխանում է աղջիկը։

Եվ հենց որ թագավորը բժշկվում է, նույն բոպեին ընկնում է և էն կախարդանքը, որ գեղեցիկ աղջկանը զրկել էր լեզվից։ Եվ ամեն բան կատարվում է էնպես, ինչպես դու-

շակած է լինում Անլիզու աղջկանը արհեստական լեզու տվող կախարդը։

Էստեղ մեջ է մտնում Թագավորի խորհրդական—երբեմնի գյուղացին։ Ասում է.

— Ահա է՛ս էր ձեր ճակատագիրը։ Դուք պետք է ամուսիններ դառնայիք ու սիրով կապվեիք։ Այժմ ժամանակ է, որ ես հեռանամ...

— Չէ... ինչո՞ւ... ինչո՞ւ...— կանչում է Թագավորը։

Բայց չնայելով Թագավորի կանչելուն, խորհրդականը դառնում է մի պստլիկ կայտառ թռչուկ, թռչում ընկնում է ուկու գեզի մեջն ու անհետանում։

Բանից դուրս է գալիս, որ նա էլ կախարդների օգնականն է եղել։

Ուրախ ու գոհ Որսա Թագավորն ու գեղեցիկ աղջիկը մեծ հարսանիք են սարքում, ամուսնանում են իրար հետ։ Թագավորը ներում է իր նախարարներին ու վերադարձնում է իրենց նախկին պաշտոնները։

Ամենքն էլ ուրախանում են, մանավանդ էլ խլանալու վտանգ չկար։ Թեև մարդիկ շշնջում էին.

— Մի՛ վախենաք, նրանք միշտ էլ խուլ կըմնան։

Կապրենք, կըտեսնենք։

---

# ԳԵՂԵՑԿՈՒՀԻ ՎԱՍԻԼԻՍԱՆ

Լինում է չի լինում մի վաճառական. տասներկու տարվա պսակված է լինում, ունենում է միայն մի աղջիկ, անունը Գեղեցկուհի Վասիլիսա։ Վասիլիսայի ութ տարին լրացած—մերը մեռնում է։ Մեռնելիս աղջկանը կանչում է, ասում է.

— Լսի՛ր, Վասիլի՛սա, միտդ պահիր ու կատարիր իմ վերջին խոսքը։ Ահա ես մեռնում եմ ու իմ մայրական օրհնության հետ էս տիկնիկն եմ թողնում քեզ։ Միշտ մոտդ ու հետդ կըպահես էս տիկնիկը, ոչ ոքի ցույց չես տալ, իսկ մի ցավ կամ վիշտ ունեցած ժամանակդ կերակուր կըտաս իրեն, կըկերակրես ու խորհուրդ կըհարցնես։ Կուտի ու քեզ կասի, թե ինչ ճար ու հնար անես քո ցավին։

Ասում է, աղջկանը համբուրում ու մեռնում։

Կնոջ մահից հետո, ինչպես սովորություն է, վաճառականը սուգ է պահում, հետո սկսում է մտածել, որ նորից ամուսնանա։ Ու ամուսնանում է մի այրի կնոջ հետ։ Էս այրին էլ ինքը հասակն առած կին է լինում, համարյա թե Վասիլիսային հասակակից էլ երկու աղջիկ է ունենում։

Վասիլիսան իրենց տեղի առաջին գեղեցկուհին է լինում։ Խորթ մերն ու իր աղջիկները նախանձում են նրա գեղեցկության վրա ու շատ բանի գնելով չարչարում են, որ աշխատանքից նիհարի, արևից ու քամուց սևանա։ Մի խոսքով՝ օր չեն տալիս։

Վասիլիսան էս ամենը տանում է անտրտունջ ու, ընդհակառակը, օրն օրի վրա լցվում, լավանում է. այնինչ խորթ

մերն ու իր աղջիկները իրենց ներսի շարությունից հալվում են, մաշվում ու նիհարում, թեև ամբողջ օրը ձեռները ծալած, աղջիկ-պարոնների նման տանը նստած են լինում։

Ոչ ոք էլ չի իմանում սրա գաղտնիքը։ Չեն իմանում, թե էս բոլորը Վասիլիսայի մոր թողած տիկնիկն է անում։

Բաժին կըտային, Վասիլիսան ամենալավ պատառը կըպահեր իր տիկնիկի համար։ Իրիկունը, երբ ամենքը կըպառկէին քնելու, նա իր նկուղում կըփակվեր ու տիկնիկի հետ կըխոսեր.

— Տիկնիկ ջան, ա՛ռ, ա՛նուշ արա,
Իմ սև դարդին ա՛կանջ արա։
Հորս օջախումը ապրում եմ ես
Միշտ անխնդում ու լուռ էսպես։
Իմ խորթ մերը խաթուն-խանում—
Ինձ աշխարհքից դուրս է անում։
Ասա՛, հո՛դիս, էս ցավի դեմ
Ես ի՞նչ անեմ, ես ո՞նց անեմ։

Տիկնիկը կուտեր, խորհուրդներ կրտար, կըմխիթարեր, առավոտն էլ նրա բան ու գործն էլ ինքը կաներ։ Վասիլիսան իրեն համար գինջ ու հանգիստ կընտաներ ծառերի շվաքնելում, ծաղիկ կըքաղեր, ու մին էլ էն կըտեսներ, որ իր մարդիրը բաղհանած են, բանջարեղենը ջրած, ջուրը բերած, կրակն արած։

Էսպես մի քանի տարի անց է կենում։ Վասիլիսան մեծանում է, հասնում, դառնում հարսնացու։ Սմեն կողմից փեսացուները խնամախոսներ են ղրկում նրան ուզելու, իսկ խորթ մոր աղջիկներին հարցնող չըկա։ Զար կինը ավելի է կատաղում, ու բոլոր եկողներին մի բերան էն է պատասխանում թե մեծերից առաջ փոքրին չեմ կարող մարդու տալ։ Խնամախոսներին էսպես ճամփու է դնում ու բռնում Վասիլիսային ծեծում, ջարդում, ջիգը նրանից է հանում։

Մի անգամ էլ էս վանհատակը առևտրական գործերով հերիշ աշխարհ է գնում։ Խորթ մերն ուրիշ տուն է փոխվում։



Իսկ էս նոր տան կողքին մի մութն անտառ է լինում, էն անտառում էլ բնակվելիս է լինում մի Կախարդ պառավ, որ ոչ ոքի մուտ չի թողնում, մարդկանց էնպես է ուտում, ինչ որ հավի ճուտեր։ Խորթ մերը ամեն մի դատարկ բանի համար շարունակ անտառն է ղրկում իր աչքի փուշ Վասիլիսային, թե ինչ է՝ Կախարդի ճանկն ընկնի։ Բայց տիկնիկը միշտ Վասիլիսային ճամփա է սովորեցնում, չի թողնում Կախարդի որջին մոտենա, ու ամեն անգամ էլ Վասիլիսան ողջ առողջ վերադառնում է տուն։

Էսպեսով հասնում են աշունքը։ Մի աշունքվա իրիկուն մերը երեք աղջկա ձեռքն էլ դրած է տալի—էն էլ դառ։ Մինը պետք է ժանյակ գործեր, մյուսը դուլպա տներ, Վասիլիսան էլ պետք է մաներ։ Էս կախարդը տան բոլոր ճրագները հանգցնում է, մենակ մի մում է թողնում վառած ու ինքը պառկում է թեր։

Աղջիկները բանում են։ Բանելու ժամանակ որ մումի պատրույգն էրվում է, խորթ մոր աղջիկներից մինը մաղաշն (ոմնելիքը) առնում է՝ իբրև թե մումի քիթը կտրի, ուղղի։ Ուղղելու փոխարեն, իբրև թե հանկարծ, լույսը հանգցնում է։ Դու մի՛ ասիլ՝ մերն է սովորեցրել, որ էդպես անի։

— Հիմի ի՞նչ անենք,— ասում են աղջիկները։— Լույս չըկա, գասներս էլ կիսատ են։

— Ի՞նչ պետք է անենք, պետք է մինս ու մինս գնանք Կախարդ պառավից կրակ բերենք։

— Ինձ իմ ձեռի ասեղներն էլ են լույս տալիս. կրակն ի՞նչ եմ անում. ինչ ուզում է լինի, ես չեմ գնալ,— ասում է ժանյակ գործող աղջիկն ու տեղը պինդ նստում։

— Ես էլ չեմ գնալ,— էն կողմից վրա է բերում մյուս քույրը, որ դուլպա էր գործում,— ինձ իմ միլերի լույսն էլ է բավական։

— Դե՛ վեր կաց դու գնա,— միաձայն կանչում են երկուսն էլ ու գոչս են հրում Վասիլիսային։— Գնա՛ Կախարդ պառավից կրակ առ բեր։

Վասիլիսան վեր է կենում գնում իր նկուղը, պահած ընթրիքը գնում է տիկնիկի առաջն ու ասում.

— Տիկնիկ ջա՛ն, ա՛ռ, ա՛նուշ արա,
Իմ սև գարդին ա՛կանջ արա։
Ինձ ղրկում են կրակ բերեմ շար պառավից,
Շար պառավը կուտի հո ինձ...
Ասա, հո՛գիս, էս ցավի դեմ
Ես ի՞նչ անեմ, ես ո՞նց անեմ։

Տիկնիկը որ ուտում է պրծնում, աչքերը ջուվա մոմի պես վառվում են, ասում է.

— Մի՛ վախենար, Վասիլիսա. ուր որ ղրկում են—գնա՛, միայն թե ինձ հետդ պահիր։ Ես որ հետդ լինեմ, պառավը քեզ բան չի անիլ։

Վասիլիսան վեր է կենում, տիկնիկը գրպանն է դնում ու ճամփա ընկնում դեպի մութն անտառը։ Գնում է, բայց ոչ մեռած է, ոչ կենդանի. հետը գնում է, հետը դողում։ Մի՝ էլ էն է տեսնում՝ մի սիպտակ ձիավոր ցոլաց ու անցավ. ինքը սիպտակ, հագինը սիպտակ, ձիու սարքը սիպտակ, ու սկսեց ծեգել։

Մի քիչ էլ գնում է, տեսնում՝ հիմի էլ մի կարմիր ձիավոր անցավ. ինքը կարմիր, հագինը կարմիր, տակինը կարմիր. էստեղ էլ արևը բացվեց...

Օր ու գիշեր գնում է Վասիլիսան, մին էլ մյուս օրվա իրիկունը դուրս է գալիս էն բացատը, որտեղ կանգնած է լինում Կախարդ պառավի խրճիթը։ Խրճիթի շուրջ կողմի ցանկապատը մարդկային ոսկորներից և էստեղ-էնտեղ վրեն ցից հանած մարդկային գանգեր։ Դարպասի սյուների փոխարեն մարդկային ոտներ,— փակիչի տեղը— ձեռներ, կողպեքի տեղակ — առամները վրեն ծնոտներ։

Սարսափից մարում է Վասիլիսան ու տեղն ու տեղը քարանում մնում։ Եվ ահա դարձյալ մի ձիավոր, ինքը սև, հագինը սև, տակինը սև. քշած գալիս է ու Կախարդի դռանը շքվում, տեղն ու տեղը անհետանում։ Ու վրա է հասնում գիշերը։ Բայց ցանկապատի վրա ցից հանած գանգերի աչքերը լույս են տալի մթնում, ու բացատն էնպես է լուսավորվում, ոնց որ թե ցերեկ լիներ։ Վասիլիսան ահից ու սարսափից



դողում է, բայց չի իմանում որ կողմը փախչի, մնում է մեխված։

Հանկարծ անտառից մի զարհուրելի աղմուկ է տարածվում. ծառերը ճռճռում են, խաշամը խշխշում է. դու մի՛ ասիլ՝ Կախարդ պառավն է, անտառից դուրս է գալիս։

Գալիս է սանդի մեջ մտած, թակով թակելով, ջարդելով ու հալածելով, ավլով հետքը սրբելով։ Գալիս է դռանը կանգնում, շուրջ կողմի վրա հոտոտում ու իրեն-իրեն վրդովում.

— Թո՛ւհ, թո՛ւհ, թո՛ւհ, մարդ—մարդահոտ է գալիս... ո՞վ կա էստեղ...

Վասիլիսան էն կողմից ահ ու դողով մոտենում է, խորը գլուխ է տալիս ու ասում.

— Ես եմ, նա՛նի ջան, իմ խորթ մոր աղջիկներն ինձ ղրկել են քեզ մոտ կրակի։

— Լա՛վ, լա՛վ,— ասում է Կախարդը,— ճանաչում եմ ինչ պառուզներ են։ Դե ինձ մոտ կացի ու աշխատի։ Որ ինձ մոտ կենաս ու աշխատես, կրակ կըտամ տանես նրանց համար, թե չէ— քեզ էլ կուտեմ։

Հետո դառնում է իր դարպասին ու ճչում.

— Հե՛յ բացվեցեք, ամուր փակեր, ետ գնացե՛ք, լեն դարպասնե՛ր...

Դռները իսկույն բացվում են։ Կախարդը սուլելով ներս է մտնում, Վասիլիսան էլ ետևից, ու բոլորը նորից փակվում են։

Ներս են մտնում թե չէ, Կախարդ պառավը իր թախտի վրա ձգվում է ու Վասիլիսային ասում.

— Հապա մի էստեղ բեր կրակի կողքին ինչ որ կա, տված եմ, ուզում եմ հաց ուտեմ։

Վասիլիսան ցանկապատի գանգերից մարիը վառում է ու իրար հետևից բերում ուտելիքները պառավի առաջը շարում։ Ուտելիքն էնքան է լինում, որ տասը հոգի ուտեին — հերիք կաներ։ Ներքնատնից էլ գինի, արաղ է բերում, ու պառավը նստում է ընթրիքի։ Բոլորն ուտում է, խմում, Վասիլիսային թերմացքից մի քիչ բան է թողնում ու վրուշա-

լով պառկում է քնի։ Քնելուց առաջ գլուխը վեր է քաշում, Վասիլիսային ասում.

— Լա՛վ մտիկ արա հա՞, առավոտը որ ես կերթամ— դուռը կըսրբես, խրճիթը կավլես, ճաշը կեփես, լվացքը կանես, հետո կերթաս հորից մի թաղար ցորեն կըհանես, կընտրես, սև տրիճը կըջոկես։ Միայն թե տե՛ս, ամեն բան արած լինի էնպես, ինչպես ասում եմ, թե չէ՝ քեզ կուտեմ։

Պառավիրում է ու քնում։ Վասիլիսան պառավի թերմացքը տանում դնում է իր տիկնիկի առջև, հետո արտասուք է թափում, հետո ասում.

— Կե՛ր, տի՛կնիկ ջան, ա՛նուշ արա,
Իմ սև դարդին ա՛կանջ արա։
Չար պառավը իմ ուժից վեր
Տվել է ինձ ծանրը գործեր.
Անեմ—էնքան ես ուժ չունեմ,
Չանեմ—կուտի, ես ի՞նչ անեմ...

Տիկնիկը պատասխանում է.

— Մի՛ վախենար, սիրուն Վասիլիսա։ Հայց կե՛ր, աղոթի՛ր ու քնիր։ Լուսը կըգա՝ բարին հետը։

Առավոտը ծեղին զարթնում է Վասիլիսան, տեսնում է պառավն արդեն վեր է կացել, լուսամուտից դուրս է նայում, ու գանգերի աչքերը հետզհետե մարում են։ Ահա ցոլաց և սիպտակ ձիավորն ու լուսը բացվեց։ Պառավը դուրս ելավ, սուլեց. հայտնվեցին սանդը, թակն ու ոտնավելը, ցոլաց կարմիր ձիավորը—արևը ծագեց։ Ու պառավը մտավ սանդի մեջ, թռավ գնաց, թակով թակելով, ջարդելով, փշրելով ու քշելով, ոտնավելով հետքը սրբելով ու ավլելով։

Վասիլիսան էլ ետ մնում է մենակ։ Ման է գալիս պառավի տունը, աչք է ածում ամեն անկյուն ու մնում է զարմացած ամեն բանի լիության վրա։ Ապա սկսում է միտք անել, թե ի՞նչպես անի, որ պառավի պատվերը կատարի։ Մին էլ տեսնում է ամեն բան կատարած, պատրաստ, ու տիկնիկը ցորնի միջի վերջին տերեփուկներն է ջոկում։



— Քեզ միայն էն է մնում, որ կերակուրն եփես, Վա՛սիլիսա,— ասում է տիկնիկը ու մտնում գրպանը։

Իրիկնագեմին Վասիլիսան սեղանը բաց է անում ու սպասում է պառավին։ Սկսում է մթնաժոռել։ Դարպասի առջև սկսին է տալիս սև ձիավորն ու ակնակիր մութը կոխում է գետինը։ Միայն գանգերի աչքերն են, որ վառվում են խավարում։

Ապա անտառն սկսում է ճրճռալ ու խաշամը խշխշալ.— պառավը գալիս է։ Վասիլիսան դուրս է գալի դեմը։

— Հը՞, ամեն բան պատրա՞ստ է, թե չէ։

— Պատրաստ է, նա՛նի ջան, արի՛ քո աչքովը տես,— պատասխանում է Վասիլիսան։

Պառավը ներս է մտնում տեսնում ամեն բան պատրաստ ու կատաղում է, որ բարկանալու բան չըկա։ Ասում է.

— Դե՞ լա՛վ,— ու ճչում է.— իմ ընկերնե՛ր, իմ աջ ձեռնե՛ր, եկեք, տարեք իմ ագռնն աղացեք։

Էս ձենի վրա երեք ջուխտ ձեռքեր են հայտնվում, ցորենն առնում տանում։

Պառավն ուտում է կշտանում, սկսում է պառկել ու Վասիլիսային նոր հրամաններ է տալիս. ասում է.

— Էգուց էլ էն կանես, ինչ որ էսօր արել էիր, ու բացի դրանից՝ հորիցը մի թաղար խաշխաշի սերմը կըհանես ու հողը կըջոկես հատիկ-հատիկ։ Չեմ իմանում, թե ո՛վ է հողն ու խաշխաշն իրար խառնել։

Ասում է, երեսը պատին անում ու խորմփացնում։

Վասիլիսան դնում է դարձյալ տիկնիկին ուտեցնում ու հարցնում.

— Աղոթի՛ր ու քնիր, Վա՛սիլիսա,— պատասխանում է տիկնիկը.— լուսը կըգա՝ բարին հետը։ Ամեն բան պատրաստ կըլինի վաղը։

Առավոտն էլ ետ իր սանդն է մտնում պառավն ու գնում, իսկ Վասիլիսան իր տիկնիկի հետ ամեն բան անում են վերջացնում։ Պառավն իրիկունը վերադառնում է, մտիկ է տալիս ու կանչում.

— Իմ ա՛ջ ձեռներ, իմ ընկերնե՛ր, եկեք, տարեք, խաշ-խաշից յուղ հանեցեք ինձ համար։

Իսկույն հայտնվում են երեք ջուխտ ձեռներ, խաշխաշն առնում են տանում։

Ապա պառավը ընթրիքի է նստում, իսկ Վասիլիսան լուռ կանգնած է առաջին։

— Ինչո՞ւ չես խոսում,— հարցնում է Կախարդը,— էնպես լուռ ու մունջ կանգնել ես, կարծես թե բերանումդ լեզու չկա։

— Չեմ համարձակվում խոսեմ, նա՛նի ջան,— պատասխանում է Վասիլիսան.— իսկ եթե դու հրաման ես տալի խոսելու, մի բան կըհարցնեմ։

— Հարցրո՛ւ, միայն թե իմացած եղիր — լավ չի, որ ամեն բան իմանաս. շատ իմանաս — շուտ կըպառավես։

— Ես էն էի ուզում քեզ հարցնեմ, նա՛նի ջան, ինչ որ աչքով տեսել եմ։ Էստեղ դալիս ճամփին մի ձիավոր ընկավ աչքովս—ինքը սիպտակ, հագինը սիպտակ, տակինը սիպտակ. էն ո՞վ է էն ձիավորը, նա՛նի ջան։

— Էն իմ պայծառ օրն է,— պատասխանում է Կախարդը։

— Հետո տեսա մի ուրիշ ձիավոր—ինքը կարմիր, հագինը կարմիր, տակինը կարմիր. էն ո՞վ է։

— Էն էլ իմ կարմիր արևն է։

— Իսկ էն սև ձիավորն ո՞վ է, որ քո դարպասի դռանը վրա հասավ. ինքը սև, հագինը սև, տակինը սև։

— Էն էլ իմ մութը գիշերն է։ Երեքն էլ իմ հավատարիմ ծառաներն են։

Վասիլիսան էստեղ հիշում է երեք ջուխտ ձեռներն ու լռում։

— Էլ ինչո՞ւ չես բան հարցնում։

— Էս էլ հերիք էր, նա՛նի ջան։ Չէ՞ դու ինքդ ասիր՝ թե որ շատ իմանամ, շուտ կըպառավեմ։

— Լավ ես անում, որ էն ես հարցնում՝ ինչ որ դուրն ես տեսել, էն չես հարցնում, ինչ որ ներսն ես տեսել։ Ես չեմ սիրում, որ իմ տան աղբն ու կեղտը դուրս են հանում,



ու շատ հետաքրքիրներին ուտում եմ։ Դե կա՛ց, հիմի էլ ես քեզ հարցմունք անեմ։ Դու էդ ի՞նչպես ես կարողանում անել ու հասցնել էսքան գործը, որ ես քեզ հանձնարարում եմ։

— Իմ մոր օրհնանքն ինձ օգնում է, նա՛նի ջան,— պատասխանում է Վասիլիսան։

— Ո՞նց թե... դու օրհնած ես, հա՞... Դե էստեղից դո՛ւրս գնա կորի դու, օրհնված աղջիկ։ Օրհնվածներն ինձ պետք չեն էստեղ։

Ասում է ու խրճիթից դուրս քաշում, դարպասից դուրս հրում, ցանկապատի վրա վառվող աչքերով գանգերից մինն էլ մի ձողի ծեր է անց կացնում ձեռը տալի, թե՝

— Էս էլ քեզ կրակ՝ քու խորթ մոր ու իր աղջիկների համար։ Չէ՞ որ նրանք քեզ կրակի են ղրկել ինձ մոտ, որ իրենց համար կրակ տանես։

Ու վազում է Վասիլիսան, վազում է գեպի տուն։ Ձեռքի գանգը ճամփին լուս է տալի մինչև ծեգը ու ծեգին հանդչում։ Մյուս օրն փրիկոնը վերջապես տուն է հասնում։ Որ հասնում է, ուզում է ձեռքի գանգը դեն գցի, մաքումն ասում է՝ մինչև հիմի երևի արդեն կրակ կըլինեն տրած։ Էս մտքի մեջ՝ մին էլ հանկարծ գանգից մի խուլ ձեն է գալի. «ինձ դեն մի՛ գցիլ, տար քո խորթ մոր մոտ»...

Տանն էլ մտիկ է տալիս, տեսնում է մութը, կրակ չի երևում, գանգը հետը ներս է տանում։

Խորթ մերն ու իր աղջիկները Վասիլիսային որ տեսնում են՝ սկզբում ուրախ հանդիպում են, պատմում են, թե էն օրվանից, ինչ դու գնացել ես՝ մեր տանը դեռ կրակ չի վառվել։ Մենք չենք կարողացել կրակ անենք, հարևաններից էլ ինչքան բերել ենք, տուն ենք հասցրել թե չէ՝ հանգել է։

— Հիմի քո կրակը վառ կըմնա,— ասում է խորթ մերը։

Գանգը ներս են տանում թե չէ՝ աչքերն էնպես են նայում խորթ մորն ու իր աղջիկներին, որ էրում են, կրակում։ Ուզում են թաքչեն, բայց ուր որ թաքչում են, աչքերը ամեն տեղ հետևում ու նայում են նրանց, էրում, կրակում են նրանց։

Ու լուսադեմին խորթ մերն ու իր աղջիկներն արդեն

էրվել, ածուխ էին կարել. միայն Վասիլիսային էր, որ ոչինչ չէր եղել։

Առավոտը Վասիլիսան դանդը հողումը թաղում է, տան դուռն ամուր կողպում, ինքը գնում է քաղաք, մի անորսի պառավի խնդրում է, որ մոտը կենա, մինչև իրեն հերը օտարությունից դա։ Պառավը սիրով ընդունում է իր աղջկա նման, Վասիլիսան էլ նրան սիրում, պատվում է իր մոր պես, մոտը ապրում է ու սպասում։ Պարապությունից որ հոգնում է, մի օր էլ պառավին ասում է.

— Էսպես պարապ-սարապ նստելուց հոգնում եմ, նա՛նի ջան, ի՛նչ կլինի գնաս վուշ առնես բերես, մանած անեմ։ Պառավը գնում է, վուշ է առնում բերում։ Վասիլիսան նստում է մանած անում, էնքան բարակ ու նուրբ, ոնց որ մազ։ Մանածն անում է պրծնում, հիմի պետք է գործի։ Բայց էն տեսակ տորք չի գտնվում, որ էն մանածին դա, ոչով էլ չի կարողանում շինի։ Վասիլիսան էլ ետ իր տիկնիկին է խնդրում։

Տիկնիկն ասում է.

— Գնա՛ ինձ համար մի հին տորք բեր ու մի մարուք, մին էլ մի քիչ ձիու ճար, ես քեզ համար ամեն բան շինեմ։

Վասիլիսան գնում է գտնում ինչ որ հարկավոր է, տալիս է տիկնիկին, ինքը քնում։ Առավոտը վեր է կենում, տեսնում տիկնիկը մի հիանալի տորք է շինել։

Վասիլիսան կտավը հինում է, նստում գործում ու ձմեռվա վերջը արդեն պատրաստ է լինում մի կտավ, որ ասեղի ծակովն անց կրկենար։ Գարունքը կտավը ճերմակացնում են, ու Վասիլիսան պառավին ասում է.

— Նանի ջան, տար էս կտավը ծախի, փողը բեր—քեզ լինի։

Պառավը կտավին մոտիկ է անում՝ մնում է բերանը բաց։ Ասում է.

— Աղջիկ ջան, էս կտավը թագավորին վայել կտավ է։ Արի տանեմ պալատը՝ տեսնեմ։

Էս կտավն առնում է պառավը, գնում թագավորի պա-



լատի մոտերքը պտտվում։ Թագավորը նկատում է, որ մի պառավ իր պալատի մոտերքը պտտվում է, ասում է.

— Ի՞նչ ես ուզում, ա՛յ նանի։

Պառավը թե՝—թագավորն ապրած կենա, ես քեզ վայել մի էն տեսակ ապրանք եմ բերել, որ ուզում եմ դու տեսնես։

Թագավորը հրամայում է պառավին ներս բերեն։ Պառավին որ ներս են բերում, թագավորը կտավը տեսնում է՝ էստեղ էլ սրա բերանն է մնում բաց։ Ասում է.

— Ի՞նչ է սրա գինը, ա՛յ նանի։

Թե.— Սրան գին չունի, թագավորն ապրած կենա, քեզ նվեր եմ բերել։

Թագավորը շնորհակալություն է անում, ինքն էլ իր կողմից պառավին է նվերներ տալիս ու արձակում։

Ուզում են էս կտավիցը թագավորի համար շապիկ կարեն. բերում են ձևում, բայց էնպես կարող չեն դանում, որ կարի։ Մեն են գալիս մեն, վերջը թագավորն էլ ետ էն պառավին է կանչում, թե՝

— Ա՛յ նանի, ոնց որ էս կտավը գործել ես, էնպես էլ պետք է կարես, թե չէ ուրիշ կարող չկա։

Պառավն ասում է.

— Թագավորն ապրած կենա, ոչ ես եմ մանել ու գործել էս կտավը, ոչ էլ ես կարող եմ կարել։ Մի որդեգրուհի ունեմ տանը, էս նրա ձեռի գործն է։

— Լավ, որդեգրուհիդ լինի։ Տար տուր նրան, թո՛ղ նա կարի։

Պառավը վերադառնում է տուն, Վասիլիսային պատմում ինչ որ պատահել էր։

— Ես էլ գիտեի, որ էս գործը վերջը ինձ էր հասնելու,— ասում է Վասիլիսան։ Փակվում է իր սենյակում ու սկսում է կարել։ Գիշեր-ցերեկ է անում, կարում, պատրաստում, տալիս է պառավին, թե՝ դե տար տուր թագավորին։

Պառավը շապիկն առնում է տանում պալատը, տալիս թագավորին, իսկ Վասիլիսան երեսը լվանում է, գլուխը սան-

բում, հաղնվում, զուգվում, նստում լուսամուտի առաջն ու սպասում։ Սպասում է թե տեսնի ի՞նչ պետք է լինի։

Մին էլ էն է տեսնում, որ թագավորի մարդիկը գալիս են դեպի պառավի տունը։ Գալիս են, ներս են մտնում ու հայտնում, թե ո՞վ է կարել թագավորի շապիկը, թագավորն ուզում է նրան տեսնի ու ինքը իր ձեռքով վարձատրի։

Վասիլիսան վեր է կենում, գնում թագավորի առաջին կանգնում։ Թագավորի տեսնելն ու սիրահարվելը մին է լինում։

— Էլ ես քեզանից ձեռը քաշողը չեմ, սիրուն Վասիլիսա,— ասում է թագավորը։— Էսօրվանից դու իմն ես, ես էլ քոնը, Էսօրվանից իմ կյանքի ընկերն ու իմ աշխարհքի թագուհին ես դու...

Ասում է, ձեռքից բռնում, բարձրացնում, նստեցնում իր կողքին ու սկսվում է հարսանիքը։ Վասիլիսայի հերն էլ վրա է հասնում, աղջկա բախտավորությունը որ տեսնում է՝ ուրախանում, աշխարհքովը մին է լինում, ու էն մնալն է, որ մնում է աղջկա մոտ։ Իր մերացու պառավին էլ չի մոռանում Վասիլիսան. բերում է պալատ, պահում է իրեն մոտ, իսկ սիկնիկից չի բաժանվում մինչև մահը տ միշտ, ամեն տեղ պահում է իր գրպանում։

---

# ԱՍՏՂԵՐԻՑ ԻՋԱԾ ԿԻՆԸ

Հին ժամանակները, երբ դեռ Հնդկաստանում չէին երևվացել սիպտակ մարդիկ իրենց հրացաններով, երբ դեռ նրա ճոխ ու ընդարձակ հովիտներում խաղաղ արածում էին դոմեշների երամակները, երբ դեռ աստղերն էլ մոտ էին երկրին ու չքնաղ, կենդանի արարածներ էին, և հաճախ իջնում էին մարդկանց մոտ, ահա էն ժամանակներից եմ պատմում։

Էն ժամանակները Կովի գետի ափին ապրում էր մի ջահել որսկան։ Նա սիրում էր կարմիր ծաղիկներն ու կապույտ երկինքը։ Եվ մինչդեռ ուրիշները կաշվե բաճկոններով էին որսի գնում, նա կարմիր հուլունքներով զարդարած կոշիկներ էր հագնում, երեսը նախշում էր կարմիր շիրաներով ու շրջանակներով, ինքն էլ էնպես վառ ու նախշուն զուգվում-զարդարվում, ինչպես վառ ու նախշուն զուգված են երկինքն ու երկիրը։ Մազերի մեջ էլ միշտ կրում էր կարմիր կարապի փետուր, դրա համար էլ նրան կանչում էին Բարձր փետրավոր։

Մի անգամ իր նետ ու աղեղով զինված Բարձր փետրավորը գնում էր անտառով։ Մի կանաչ բացատում նկատեց մի հեռք—մանր ոտնատեղեր, որ երբեք չէր տեսել իր կյանքում։— Ի՞նչ արարած է սա արդյոք, ո՞րտեղից է եկել և ո՞ւր է գնացել,— զարմացած հարց տվեց իրեն ջահել որսկանը։ Էն հեռքը բռնեց ու գնաց։ Ավելի զարմանքը մեծացավ, երբ տեսավ հեռքը շրջան անելով եկավ էլի էնտեղ, որտեղից սկսել էր ու գնացել։

— Ինչ ուզում է լինի, պետք է իմանամ ինչ արարած է սա,— վճռեց ու պառկեց էն շրջանի մեջ բարձր խոտերում ու ծաղիկներում և մտածում էր անհայտ արարածի ու նրա ասնատեղերի վրա՝ հայացքով խորասուզված կապույտ երկնքի մեջ։

Մին էլ նկատեց հենց իր վերևում, երկնքի խորքում, մի փոքրիկ կետ։ Սկզբում արծվի տեղ ընդունեց, բայց հետզհետե իջնելով մեծացավ, մեծացավ կետը, ու մին էլ տեսավ՝ մի զամբյուղ իջավ երկնքից։ Թփերի ետևից նայեց. զամբյուղից դուրս եկան տասներկու հրեղեն-փարեղեն աղջիկներ՝ հագած երկնակապույտ ծիծփուն թափանցիկ հագուստներ։ Զամբյուղից դուրս եկան մինը մյուսի ետևից և դալարի ու ծաղիկների մեջ սկսեցին պարել ու երգել, երգել էն տեսակ հրաշալի երգեր, որ Բարձր փետրավորը իր օրում երբեք չէր լսել։

Էստեղ Բարձր փետրավորը էլ չդիմացավ համբերի, իր թաքստից դուրս թռավ, ընկավ նրանց շրջանը ու բացականչեց.

— Թողե՛ք, թողե՛ք, ես էլ երգեմ ու պարեմ ձեզ հետ...

Աղջիկները վախից ճչացին, վազեցին դեպի իրենց զամբյուղը, իրար ետևից թռան զամբյուղի մեջ, ու զամբյուղը արագությամբ վերացավ դեպի երկնքի խորքը, ու հետզհետե փոքրանալով, անհետացավ, կորավ երիտասարդ որսկանի աչքից։

Երիտասարդը վերադարձավ իրենց խրճիթը։ Մերը նրա համար գոմշի միս էր խորովել, բայց շրկարաց ուտի. ուշք ու միտքը էն տասներկու աղջիկների հետ գնացել էր դեպի երկինք։

Շատ խնդրեց մերը, որ պատմե, թե ինչ է պատահել։ Սկզբում չէր ուզում, բայց վերջը պատմեց ամեն բան ու հայտնեց, որ չի հանգստանալ, մինչև էն աղջիկներից մինը կին չբերի իրեն։

— Դրանք անպատճառ աստղաբնակներից են,— ասավ որսկանի մերը, որ նշանավոր կախարդ էր։— Դու ավելի լավ կանես մեզանից մի հնդիկ աղջիկ ուզես քեզ համար կին։



Էլ մի՛ մտածիր աստղաբնակ աղջիկների վրա, թե չէ գլխիդ մի փորձանք կբերես։

— Ոչ մի դժբախտություն ու ոչ մի դժվարություն ինձ չեն վախեցնում, միայն թե կարենամ Աստղաբնակ աղջիկանը ինձ կին առնեմ,— պատասխանեց որդին։— Եվ ես պետք է հասնեմ նրան, թեկուզ էդ քաշի մինչև աշխարհքի վերջը։

— Եթե հաստատ էդպես ես վճռել, թո՛ղ քո ասածը լինի,— ասավ մերը ու մյուս առավոտը մի կտոր արջամկան մորթի կարեց տղի գլխի փետուրին, խրատ տվեց ու էնպես ճանապարհ դրեց դեպի կախարդական շրջանը։

Շրջանը մտնելուն պես երիտասարդը դարձավ արջամուկն ու խոտերի մեջ տապ արավ, սպասեց։

Մի ժամանակ դարձյալ նկատեց նույն կետը երկնքի խորքում։ Հետզհետե մեծացավ կետը, իջավ, իջավ ու վերջապես իջավ գետնին, էլի նույն տեղը։

Աղջիկներից մեծը ուշադրությամբ դիտեց չորս կողմը— արևելք, արևմուտք, հյուսիս ու հարավ։

— Կարծես էսօր էստեղ մարդ չկա,— ասավ նա ու բոլորը զամբյուղից դուրս թռան։ Հենց ուզում էին սկսեն իրենց պարը, որ փոքր աղջիկը արջամկանը նկատեց ու ցույց տվեց մեծին։

— Շո՛ւտ, շո՛ւտ, փախե՛ք էստեղից,— ճչաց մեծը.— Հասարակ արջամուկը երբեք չէր համարձակվի մտնել մեր նվիրական շրջանը։ Արջամկան կերպարանքի տակ անշուշտ մի կախարդ է թաքնված։

Բարձր փետրավորը վրա չհասցրեց գոնե մի խոսք ասի կամ իրենից ձգի արջամկան մորթին, որ զամբյուղն արդեն թռչում էր երկնքում։

Երիտասարդը տուն վերադարձավ սաստիկ տխուր ու կոտրված։

— Մի՛ հուսահատվիր, տ՛ղիս,— ասավ մերը։— Մսեղեն մի՛ ուտիլ, էդ շատ է վնասում մեզ ու փչացնում է մեր հմայքները։ Գնա՛, եթե սով զդաս՝ մորի կեր միայն։

Ապա թե մի մկան բեղի ծեր կարեց որդու գլխի կարմիր փետուրին ու ճանապարհ դրեց։

Սոված, ճանապարհին մորի ուտելով հասավ ու կախարդական շրջանը մտավ երիտասարդը։ Մտավ թե չէ—մոտ դարձավ, բարեկամացավ մի մկան ընտանիքի հետ ու իջավ նրանց բունը։ Մկների մերը խոստացավ ամեն բանում օգնել նրան։

Ահա նորից երկնքից իջավ խորհրդավոր զամբյուղը։ Մեծ քույրը դարձյալ դուրս մեկնվեց զամբյուղից ու սկսեց դիտել շորս կողմը. հարավ նայեց, հյուսիս նայեց, արևելք նայեց, արևմուտք նայեց, ներքև—գետնին նայեց։

— Էստեղ մարդ չկա,— ասավ.— արջամուկն էլ չեմ տեսնում, բայց դարձյալ պիտի զգույշ լինենք։

Եվ ահա դուրս եկան նրանք ամենքը, պար բռնեցին ու սկսեցին երգել ու զարկել փոքրիկ թմբուկները, որ օձի կաշվից էին շինած։ Էսպես հասան հենց մկան բնին. մեծ քույրը ձեռքը վեր բարձրացրեց, բոլորը միասին կանգ առան ու շունչները պահեցին։ Ապա թե ոտով գետնին զարկեց, ականջ դրեց ու ասավ.

— Էստեղ առաջվա նման խուլ չի հնչում։ Երևի էսօր օտար հյուր կա մկների մոտ։— Նորից գետինը զարկեց ու կանչեց.

— Դո՛ւրս եկեք, երևացեք դո՛ւք, փոքրիկ դավաճաննե՛ր, թե չէ ձեր բունը կրքանդենք։

Բայց մեր մուկը արդեն անցք էր փորել, որ դուրս էր գալիս ուղիղ հենց շրջանագծի մյուս կողմը։ Եվ մինչդեռ աղջիկները նրան շրջանի ներսն էին որոնում, նա իր ճուտերով արդեն փախչում էր շրջանից դուրս մարգերում։

Աղջիկները վազեցին ետևներից, որ սպանեն մկներին. ամենքը վազեցին, բացի փոքրը, որ չէր կարող սպանել՝ թեև ուզում էր լիներ։ Էս ժամանակ Բարձր փետրավորը դուրս եկավ մկան բնից, առավ իր մարդկային կերպարանքը, մոտեցավ աղջկանը, բռնեց նրա երկու ձեռքից ու ասավ.

— Արի գնանք մեր տունը, սիրուն աղջիկ, ու եղիր իմ կինը։ Էնտեղ պար կբռնես հնգիկ աղջիկների հետ, ես որս կանեմ, կբերեմ քեզ համար, մերս կեփի ու տունը կրկառավարի,



և դու մեզ մոտ ավելի երջանիկ կլինես, քան էնտեղ—երկրնքում։

Աղջիկը կամավորվում էր։

Երկնային աղջիկները եկան հավաքվեցին, շրջապատեցին իրենց քրոջը, սկսեցին աղաչել, որ էնպես բան չանի, նորից իրենց հետ գնա վերև երկինք—իրենց տունը. բայց նա նայեց, նայեց երիտասարդին ու ասավ.

— Կրգամ քեզ հետ, գնանք, ուր որ ուզում ես։

Մնացած քույրերը ցավալի լացով ու սուգով բարձրացան դեպի երկինք, անհետացան կապուտակ երկնքում, իսկ Բարձր փետրավորը իր Աստղ-կնոջը բերեց իրենց վրանը Կովի գետի ափերին։ Իր երկնային հարսին տեսնելով, շատ ուրախացավ երիտասարդ որսկանի մերը, բայց որդու ականջին շշնջաց.

— Որքեք չընեռանաս քո կնոջից, եթե ուզում ես դրան պահես, ուր որ գնաս, հետդ տար անրաժան։

Էնպես էր արավ երիտասարդ որսկանը։ Իր կնոջ համար էլ նետ ու աղեղ շինեց ու միշտ հետը որսի էր տանում. բայց կինը երբեք չէր հոժարում նետ արձակելու, երբեք չէր ուզում սպանի, ինչ շունչ կենդանի ուզում էր լիներ, և երբեք որսի միս չէր ուտում, եթե սպանում էին ուրիշները։ Նա անտառներում ու մարգագետիններում միայն մոտ, մորի, հաղարջ և ուրիշ պտուղներ էր քաղում ուտում, մին էլ բրինձ։ Էսպես էր ապրում։

Մի անգամ էլ, երբ ջահել կինը զբաղված էր իր ձեռագործով և փետուրներից աղաղարուր աստղեր էր շինում իր տոնական զգեստի վրա, իսկ որսկանի մերը դյուղի մյուս ծերին զրույց էր անում իր ծանոթների վրանում, որտեղից որ էր ներս թռավ մի փոքրիկ գեղին թռչնակ, վեր եկավ Բարձր փետրավորի ուսին ու ականջին ծլվլաց.

— Ձեր մոտիկ լճի վրա վեր է եկել վայրի կարապների երամը։ Եթե չուշանաս, շուտ հասնես և զգույշ մոտենաս, կարող ես նրանցից բռնել, թե չէ՝ ուր որ է կթռչեն։ Միայն կնոջդ չիմացնես։ Կարմիր կարապները կանանց տանել չեն

կարող։ Ձեռաց հոտը կառնեն, թեկուզ մի մղոնի վրա, ու կըթռչեն։

Բարձր փետրավորը ոչ թե կարմիր կարապ չէր տեսել իր օրում, այլ չէր էլ լսել, թե կարմիր կարապ կըլինի։ Իր գլխի կարապի կարմիր փետուրն էլ ինքն է ներկել։ Մտիկ արավ, տեսավ կինը զբաղված է իր ձեռագործով ու գլուխը քաշ արած ասուղեր է ասեղնագործում, կամաց դուրս սահեց, մտածելով թե էնպես շուտ կըվերադառնա, որ նա իսկի չի իմանալ՝ թե երբ գնաց, երբ եկավ։ Բայց դուրս գնաց թե չէ, վրանը ներս թռավ էն դեղին թռչնակը, թառ եղավ կնոջ ուսին ու ականջի տակին սկսեց երգել մի հրաշալի երգ, թե ինչպես են ապրում նրա քույրերն էնտեղ երկնքում։ Ու չքնաղ կինը, որ մի ժամանակ ասուղերի վրա էր ապրել, հիշեց երկնային կյանքն ու իր անցած երջանկությունները, մոռացավ երկրային ամեն բան, վեր կացավ, քամու նման թռավ դեպի նվիրական շրջանը, հենց էնտեղ հասավ. որ քույրերը իջնում էին երկիրը։ Տեսնելով իրենց քրոջը՝ շրջապատեցին ու սկսեցին ողջույն, որ իրենց հետ վերադառնա երկինք—տուն։

— Բայց Բարձր փետրավորը լավ մարդ է ու ինձ շատ է սիրում, ի՞նչպես թողնեմ նրան,— ասավ աղջիկը։

Մեծ քույրը տեսնելով, որ փոքրը դժվարանում է թողնել ամուսնուն, ասավ.

— Դե մնա՛, եթե չես կարող բաժանվել նրանից. բայց խնդրում եմ, գոնե մի ժամով մեզ հետ երկինք բարձրացիր մեր հորը տեսության։ Էն օրվանից ինչ դու հեռացել իջել ես երկիր, նա շարունակ դարդ է անում։

Չէր կամենում գնալ փոքր քույրը, բայց էնքան էր հորը կարոտել, որ անունը լսելուն պես մոռավ խորհրդավոր զամբյուղը՝ մի անգամ էլ նրան տեսնելու համար։ Հեր ու աղջիկ որ իրար տեսան, երկուսն էլ շատ ուրախացան, ու խոսեցին, խոսեցին, էնքան խոսեցին, որ կապուտակ երկինքը մթնաժոռեց, ու աղջիկը հիշեց, որ ուշացել էր, պետք է նորից իջներ երկիր, իր ամուսնու մոտ։

— Էդ երբեք չի լինի,— ասավ հերն աղջկանը. փակեց նրան մի մեծ ոսկուտակ ամպի մեջ, ու հայտնեց, թե դուրս



չի թողնելու էն ամպից, մինչև չի խոստանա, որ էլ չի վերադառնալ երկիր։ Աղաչեց, պաղատեց աղջիկը, բայց իզուր։ Ապա թե լաց եղավ, ու սկսեց արտասվել, արտասուք թափել էնքան առատ, որ սպիտակ ամպն էլ մթնեց ու սկսեց արտասուք թափել նրա հետ։ Հերը տեսավ, որ եթե շարունակի փակած պահել—աղջիկն արտասուքով կողողի երկիրը, բայց թողեց։

— Ի՞նչ անեմ,— ասավ,— որ մնաս մեզ մոտ ու երջանիկ ապրես։

— Իմ ամուսնուն էլ բեր երկինք,— պատասխանեց աղջիկը։

Ու երկիր իջեցրեց նվիրական զամբյուղը երկնային ծերունին։

Բայց ի՞նչ եղավ Բարձր փետրավորը։

Լճի ափը գնաց Բարձր փետրավորը, տեսավ կարմիր կարմիր կարապների մի գեղեցիկ բազմություն։ Երկուսին սպանեց, մնացածը փախան։ Սպանած կարապներն առավ, շտապեց վրանը։ Եկավ տեսավ ձեռագործը կիսատ ընկած ու կինը չկա։ Սկսեց կանչել, պատասխան չկա։ Սպանած կարմիր կարապներն ուսով գցած վրանից դուրս վազեց դեպի խորհրդավոր շրջանը—էնտեղ էլ չկար։

Վճռեց հենց էնտեղ էլ մնալ ու սպասել նրա վերադարձին, թեկուզ մինչև աշխարհքի վերջը։ Ընկավ գետին, խոտերի մեջ պառկեց ու հայացքը ասուղերին սևեռած նայեց, նայեց մինչև հոգնեց, քունը տարավ։

Առավոտը վաղ աչքը բաց արավ, խոտերի մեջ լսեց մի շրշյուն. մտիկ տվեց—կողքին ծանոթ զամբյուղը։ Վեր թռավ ու խենթի նման, սպանած կարապներն էլ ուսին, ընկավ զամբյուղը։ Տեսավ զամբյուղը դատարկ, մեջը ոչ ոք չկա, ու մինչև ուղեց դուրս գա, արդեն անցել հասել էր երկնքի ու երկրի մեջտեղը ու արագ սլանում էր դեպի վեր։ Սլացավ, սլացավ, վերջապես հասավ Ասուղերի աշխարհքը, որտեղ սպասում էր իրեն սիրելի կինը։ Կնոջ հերը նրանց մի սքանչելի կապույտ վրան նվիրեց։ Էն կապույտ վրանում նրանք ապրում էին երջանիկ։ Բարձր փետրավորը մի առժամանակ հոգնած

երկնային վայելքներով ու հրեղեն կնոջ սիրով՝ կատարելապես երջանիկ էր, բայց կամաց-կամաց սկսեց ձանձրանալ ամպեղեն պտուղներից, որոնցով սնվում էին Աստղերի աշխարհքում՝ նրանց բնակիչները, սկսեց կարոտել հաստատուն կանաչ դաշտերին, որսերին, ու թախանձեց կնոջ հոգը, որ բաց թողնի իրեն իր կնոջ հետ միասին նորից դեպի երկիր։

— Ոչ, անկարելի է,— պատասխանեց կնոջ հոգը,— թե թողնեմ, էլ երբեք չեմ տեսնիլ նրան։ Դու էլ մնա՛ մեզ մոտ ու շուտով կըմոռանաս ձեր տխուր երկիրը։

Երիտասարդ որսկանը պատասխանի փոխարեն հագավ իր սպանած կարմիր կարապներից մի զույգի թևերը, մյուս զույգի թևերն էլ կնոջը տվեց ու վար ճախրեցին Աստղերի աշխարհքից դեպի ցած, նորից իջան երկիր, իրենց դաշտերը, իրենց վրանը, ուր Բարձր փետրավորի պառավ մերը ողբում էր իրենց կորուստը։

Երբ տեսավ վերադարձան, անսահման ուրախացավ պառավ մերը, ուրախացան ամենքը գյուղում, մեծ խնջույք սարքեցին, ուրախություն արին ու երկար, երկար երգեցին ու պարեցին։

Որսկանի Աստղ կինն էլ վերջացրեց իր պատրաստած աստեղազարդ տոնական զգեստը, հագավ, մտավ հնդիկների շարքը և պարում, երգում էր նրանց հետ։ Էլ երբեք չըվերադարձավ էն շրջանը, ուր իջնում էին իր հրեղեն քույրերը։ Ապրում էր պտուղներով ու հացահատիկներով, որովհետև չէր սիրում սպանել, բացի մեկից, էն փոքրիկ դեղին թռչնակից։

Մի անգամ էլ, երբ ուրիշ կողմ էր Բարձր փետրավորի ուշքը, նորից ներս թռավ էն փոքրիկ դեղին թռչնակը, թառեց կնոջ ուսերին ու սկսեց շշնջալ, բայց կինը բռնեց, նրա վիզը ոլորեց։ Էն էր ու էն, էն օրվանից էլ չեկավ, չերևաց թևավոր փոքրիկը։ Եվ էն ճոխ հովտում, Կովի գետի ափին իրենց խաղաղ վրանում, անբաժան ու երջանիկ իրար հետ ապրում էին շահել որսկանն ու աստղերից իջած կինը։

---

# 1914

## ԿԱԼԽԱՐԴԻ ՔՍԱԿԸ

Լինում են, չեն լինում, լինում են մի պառավ մարդ ու կնիկ, ունենում են երեք աղջիկ։ Օրերից մի օր մարդը մեռնում է, արևը ձեզ է բաշխում, մնում է կնիկը։ Էս կնիկը գիտենում է, որ իր մարդը ոսկով ու արծաթով լիքը մի մեծ քսակ է թողել, ու մտքումը մխիթարվում է, ասում է. «Հերները մեռավ, գոնե աղջիկներս քաղցած չեն մնալ»։ Բայց ինչպես կարգն ու օրենքն է՝ մեռելը դեռ հողավորած, թաղած չեն լինում, որ աղքատի կերպ մտած մի կախարդ գալիս է, իրրև թե ողորմություն է խնդրում, աջողեցնում է՝ քսակը ձեռք է գցում ու ծլկում, էնպես, որ չեն էլ կարողանում իմանան, թե որ կողմից եկավ ու որ կողմը չքացավ։

Էսպես խեղճ կնիկը երեք որը աղջկանով աղքատանում է ու, ճարը կտրած, օր ու գիշեր է անում, աշխատում, որ կարողանա իր երեխանցը պահի, մեծացնի։

Ժամանակ է անցնում, էս աղջիկները մեծանում են, ու մի օր էլ մեծ աղջիկն ասում է.

— Ա՛յ մեր, ես էս է մեծացել, մեծ աղջիկ եմ դարձել, ամոթ է ինձ համար էսպես անբան ու անգործ տանը նստեմ։ Մի բաղաճ թխիր, տուր ինձ, գնամ աշխարքն աշխարհք ման գամ, իմ բախտը գտնեմ։

Մերը բերում է մի բաղաճ է թխում ու աղջկանը հարցնում, թե ի՞նչպես է ուզում. կես բաղա՞ճն է ուզում մոր օրհնանքը հետը, թե՞ ամբողջն է ուզում՝ առանց մոր օրհնանքի։ Աղջիկը ամբողջն է ուզում՝ առանց մոր օրհնանքի։

Բաղաքն առնում է ճամփա ընկնում։ Ասում է. «Մի տարուց ու մի օրից հետո թե եկա—եկա, թե հո չեկա, իմացեք, որ ողջ ու առողջ եմ ու իմ բախտը գտել եմ»։

Գնում է, գնում է, դուրս է գալիս մի անծանոթ երկիր։ Մի ճամփի վրա մի անակ է լինում։

Էս տնակին մոտենում է, տեսնում է շեմքումը նստած մի պառավ-պառում կախարդ կնիկ։ Էս կախարդը հարցնում է, թե՝ ո՞ւր ես գնում։— Թե՝ գնում եմ բախտս գտնելու։

— Ինձ էլ հենց էգպես մի ծառայող է հարկավոր, արի ինձ մոտ մնա,— առաջարկում է կախարդը։

— Որ քեզ մոտ մնամ՝ ի՞նչ պետք է անեմ։

— Պետք է ձեռիս ջուր ածես, շորերս հագցնես, ավլես, սրբես, վառարանը վառես, բայց վայն եկել է քեզ տարել։ Եթե ծխնելույզի մեջը նայիլ ես։

Աղջիկն ասում է՝ Համաձայն եմ։

Առավոտը կախարդը որ վեր է կենում, էս աղջիկը ձեռին ջուր է ածում, շորերը հագցնում, կախարդի դուրս գնալուց հետո էլ վառարանը սրբում է, բայց սրբելիս մտքովն անց է կենում, թե՝ ինչ պետք է լինի, մի մեծ բան հո չի լինելու, եթե մի աչքի պոչով ծխնելույզի մեջը նայեմ։ Նայում է, ի՞նչ է տեսնում. տեսնում է իր մորից գողացած ոսկով ու արծաթով լիքը քսակը հրես ծխնելույզի մեջը կախ արած։ Իսկույն հանում է, ուզը գցում ու թռչում դեպի տուն։

Ճամփին մի ձի է պատահում, առաջը կտրում է ու խնդրում, ասում է.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կըլինի ինձ քորես. էս օխտը տարի է՝ ոչով ինձ քորել չի։

Աղջիկը ձեռի փետովը ձիուն տալիս է, ճամփիցը դեռն է անում ու անց կենում, գնում։

Առաջն է գալիս մի ոշխար։ Ասում է.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կլինի ինձ խուզես. էս օխտը տարի է՝ ոչով ինձ խուզել չի։

Աղջիկը սրան էլ է զարկում, ճամփիցը դեռն անում ու անց կենում։



Մի քիչ էլ գնում է, տեսնում է մի օրիդած էծ։ Էս օրիդած էծն աղաչում է, ասում է.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կըլինի ինձ տեղփոխ անես։ Էս օխտը տարի է՝ ինձ տեղփոխ չեն արել։

Աղջիկն իծի վրա քար է շպրտում ու իր ճամփեն շարունակում։

Գնում է պատահում մի խափան ջաղացի։ Էս խափան ջաղացը խնդրում է, ասում է.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կըլինի բան գցես ինձ. էս օխտը տարի է խափան եմ, ոչով ինձ բան չի գցում։

Աղջիկը սրան էլ չի լսում, ներս է մտնում, դռան ետևը ձգվում, քնում։

Կախարդը վերադառնում է տուն,— տեսնում է՝ աղջիկը փախել է։ Ակն է տալի ծխնելույզին, տեսնում է էնտեղ էլ քսակը չկա։ Կատաղում է, ընկնում է աղջկա ետևից։

Ճամփին պատահում է ձիուն։

— Ա՛յ ձի,— ասում է,— ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդյոք չե՞ս տեսել։

— Հենց նոր էստեղից փախած անց կացավ,— պատասխանում է ձին։

Կախարդը վազում է։ Պատահում է ոշխարը։

— Ա՛յ ոշխար,— ասում է,— ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդյոք չե՞ս տեսել։

— Տեսել եմ,— պատասխանում է ոշխարը։— Մի քիչ առաջ դեսը վազելով անց կացավ։

Գնում և պատահում է իծին։

— Ա՛յ էծ,— ասում է,— ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդյոք չե՞ս տեսել։

— Ի՞նչպես չէ. տեսել եմ,— պատասխանում է էծը.— Հենց նոր դեսը անցկացավ, դեպի էն խափան ջաղացը։

Գնում է խափան ջաղացի մոտ։

— Ա՛յ խափան ջաղաց, ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին արդյոք չե՞ս տեսել։

— Ի՞նչպես չեմ տեսել. ներս արի, հրես իմ դռան ետևը քնած է,— պատասխանում է խափան ջաղացը։

Կախարդը ներս է մտնում, տեսնում է՝ աղջիկը հրես՝ քսակը գլխի տակին՝ դռան ետևը քնած։ Ձեռքի կախարդական գավազանով պարկում է քնած աղջկանը, դարձնում է քար, իր ոսկով ու արծաթով լիքը քսակն առնում, ետ դնում իր տունը։

Սրա վրա մի տարին ու մի օրն անց է կենում. միշտնակ աղջիկը տեսնում է, որ քույրը ետ չեկավ, մորն ասում է.

— Ինչպես երևում է, քույրս բախտավորվել է ու լավ է ապրում. ամոթ չի՞, որ հենց ես տանը նստեմ պարապ-սարապ։ Մի բաղաձ թխի՛ր տուր ինձ, գնամ աշխարհն աշխարհ մտնեմ գամ, իմ բախտը գտնեմ։

Մերը հարցնում է, թե՝ ո՞րն ես ուզում, բաղաձի կեսն ես ուզում իմ օրհնանքի հե՞տ, թե՞ ամբողջ բաղաձն ես ուզում առանց իմ օրհնանքի։

— Ամբողջ բաղաձն եմ ուզում՝ առանց քո օրհնանքի,— պատասխանում է աղջիկը, ամբողջ բաղաձն առնում է ու ճամփա ընկնում. ասում է.

— Մի տարուց ու մի օրից ետը թե եկա—եկա, թե հո չեկա. իմացեք, որ ողջ ու առողջ եմ ու իմ բախտը գտել եմ։

Գնում է։ Սա էլ մեծ քրոջ նման է վարվում ու նրա բախտին է արժանանում։

Մի տարին ու մի օրն անց են կենում—ետ չի գալիս։ Փոքր աղջիկն ասում է.

— Իմ քույրերն արդեն հասան իրենց մուրազին. մի՞թե հենց ես պետք է մնամ էսպես անբան ու անգործ նստած, անպետք ինձ համար էլ, ուրիշների համար էլ։ Մի բաղաձ թխիր, մա՛յրիկ, ես էլ գնամ իմ բախտի ետևից մտնեմ գամ։

Մերը հարցնում է, թե՝ ո՞րն ես ուզում. կես բաղաձն ես ուզում իմ օրհնանքի հե՞տ, թե՞ ամբողջ բաղաձն՝ առանց իմ օրհնանքի։

Փոքր աղջիկը, թե՝ կես բաղաձն եմ ուզում, քո օրհնանքը հետը։

Մերը կես բաղաձը տալիս է իրեն, օրհնում ու ճանապարհ դնում։

Իր քույրերի նման սա էլ երկար դես ու դեն թափառելուց հետո գալիս է հասնում կախարդի կացարանին ու աղաչում է մտնում նրա մոտ։ Ու հենց նրանց պես սա էլ մի օր ծխնելույզի մեջ նկատում է ոսկով ու արծաթով լիքը քսակը, առնում է ու դուրս պրծնում դեպի իրենց տունը։

Ճամփին պատահում է ձիուն։ Ձին աղաչում է.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կըլինի ինձ քորես, օխտը տարի է՝ ինձ քորել չեն։

— Վա՞յ, խեղճ ձի,— ասում է աղջիկը, քսակը մի կողմն է դնում ու քորիչով քորում է ձիուն։

Մի քիչ անց է կենում, ոչխարն է խնդրում.

— Ա՛ղջի ջան, աղջի, ի՞նչ կըլինի ինձ խուզես. էս օխտը տարի է՝ ինձ խուզել չեն։

— Վա՞յ, խեղճ ոչխար,— ասում է աղջիկը, հանում է մկրատն ու խուզում է ոչխարին։

Մի քիչ էլ գնում է, օրիդած էծն է կանչում.

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կըլինի տեղփոխ անես ինձ։ էս օխտը տարի է մի տեղ օրիդած եմ, ոչով ինձ տեղփոխ չի անում։

— Վա՞յ, խեղճ էծ,— ասում է աղջիկը ու տեղփոխ է անում սոված իծին։

Վերջը հասնում է խոփան ջաղացին։

— Ա՛ղջի ջան, ա՛ղջի, ի՞նչ կըլինի բան դդես ինձ,— խնդրում է խոփան ջաղացը.— էս օխտը տարի է էսպես կանգնած եմ, ոչով բան չի դցում ինձ։

— Վա՞յ, խեղճ ջաղաց,— կանչում է աղջիկը, ջուրը բաց է թողնում, ու ջաղացը գրոռում է։

Եվ որովհետև օրը հասել էր, մութն ընկնում էր, մտնում է ջաղացն ու դռան ետևը պատկում քնում։

Կախարդը վերադառնում է տուն, տեսնում է՝ աղջիկը չըկա։ Ծխնելույզին ակն է տալիս, տեսնում է քսակն էլ չըկա։ Կատաղում, փրփրում է, ընկնում է աղջկա ետևից։

Հասնում է ձիուն, ձիուն հարցնում է.

— Ա՛յ ձի,— ասում է,— ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ աղախնին չե՞ս տեսել։

— Դուն էլ հենց իմանում ես՝ ես էլ բան ու գործ չու-

նեմ— բան ու գործս էն է, որ քո աղախիններին հսկեմ,— պատասխանում է ձին։— Ես ի՞նչ գիտեմ՝ ո՞րտեղ է քո աղախինը. գնա, մա՛ն արի, գոիր։

Գնում է հերթով հասնում է ոչխարին, իծին, նրանք էլ նույն պատասխանն են տալիս։ Վերջը հասնում է ջաղացին։

— Ա՛յ ջաղաց,— ասում է,— ոսկով ու արծաթով լիքը քսակը ձեռին իմ ագախնին չե՞ս տեսել։

— Ի՞նչ ես ասում, էս գոռոցի մեջ լավ չեմ լսում,— պատասխանում է ջաղացը.— մոտիկ արի, ականջումս ասա։

Կախարդը մոտենում է ջաղացին, որ ջաղացի ականջումն ասի. ջաղացը սրան բռնում է, պտըտում, կոլորում, տակովն անում, չիռում ալուր-ազցան ու շպրտում, ցրում դես ու դեն։

Կախարդը վեր ընկնելիս ձեռքի դավազանը վեր գցած է լինում։ Ջուլացն աղջկանն ասում է. «Էդ գավազանը վերցրո՛ւ, դրանով զարկի՛ր դռան տակի երկու քարին»։ Աղջիկը կախարդական գավազանով զարկում է դռան տակի երկու քարին, մին էլ տեսնում է՝ առաջը կանգնեցին իր երկու կորած բալրերը։ Փաթաթվում են իրար, համբուրվում, ու ոսկով, արծաթով լիքը քսակն առնում, ճամփա ընկնում դեպի տուն, իրենց պառավ մոր մոտ։

Տանը պառավ մերը իր աղջիկներին կորած էր համարում ու նստած սուգ անելիս է լինում, որ հանկարծ ներս են մտնում երեքն էլ, ողջ ու առողջ, հետներն էլ ոսկով ու արծաթով լիքը քսակը — ուրախանում, աշխարհքով մին են լինում, ու էն օրվանից ապրում են ուրախ ու ապահով։

---

# ԱՆԳԻՆ ՔԱՐԸ

Մի ամառվա շոգ օր էր. բայց չնայած անտանելի շոգին ու թեժ արևին, Բաղդասի փողոցները լիքն էին ժողովրդով։ Հարուն Ալ Ռաշիդ թագավորը մի փառավոր հարսանիքից հետո պետք է վերադառնար իր մայրաքաղաքը։ Ամբոխ ժողովուրդը հավաքվել էր թագաչա անելու։ Մարդիկ անհամբեր սպասում ու գովում էին թագավորին. փառաբանում էին նրա քաջությունը, խելքը, մեծահոգությունը, իմաստությունը, արդարադատությունը և շատ ուրիշ բարձր առաքինություններ։

Էս ժամանակ բազմության միջից դուրս եկավ Սայիդ անունով մի ազատ ու սկսեց ամենախիստ խոսքերով հայհոյել թագավորին։

Ամբոխը սաստիկ վրդովվեց. շորս կողմից վրա դառան, որ ոտնատակ տան Սայիդին, երբ մեջ մտավ մի անծանոթ։

— Կանգնեցե՛ք,— ասավ,— ո՛վ ազնիվ մարդիկ, ու ձեր ուշադրության ականջները մի առժամանակ կախ արեք իմ մաքի ճյուղերին։

Ամբոխը կանգ առավ։

— Ի՞նչ լավ է խոսում, է՛,— ձեն տվեց մինը.— խոսի՛ր, խոսի՛ր, լսում ենք։

— Դուք ուզում եք սրան ծեծե՞ք,— հարցրեց անծանոթը։

— Հա՛, անպատճառ պետք է ծեծենք։

— Բայց պետք է խելոք ծեծեք։

— Ի՞նչպես թե խելոք ծեծեք... էլ խելոք ծեծելը ո՞րն է... կողքերը կրփշրենք— պրծավ գնաց։

— Չէ՛, էդպես չի. սպասեցեք ու ինձ ականջ արեք։ Դուք ուզում եք սրա կողքերը փշրեք։ Շատ լավ։ Ասենք թե տեղն է ու արդարացի։ Բայց կարող է պատահել, որ հարկավոր է սրա երկու կողքը փշրել, իսկ դուք միայն մի կողքը կրփշրեք։ Էդպեսով էլ կրվարվեք և անարդար, և անխելք։

— Լավ ես ասում, ես իմ աստվածը,— ձեն տվին ամեն կողմից։— Հապա ի՞նչ անենք. ներե՞նք էն վիրավորանքը, որ սա հասցրել է մեր ամենամիասուն, ամենագեղեցիկ, ամենահեռատես, ամենասրատես թագավորին, աշխարհքի կենտրոնին, աստծու սովերին, աստղերի աստղին, արեգակների արեգակին...

— Չէ, ես հո չեմ ասում՝ ներենք, ես ասում եմ՝ մի հարցնենք ու լսենք, թե ի՛նչ է ասում էս մարդը, ի՛նչպես է արդարանում։

— Ես արդարանալու բան չունեմ,— խոսեց Սայիդը։— Մեղավորներն են արդարանում. իսկ ես ոչ մի մեղք չեմ արել։ Ես միայն էն պետք է ասեմ, ինչ որ ինձ են արել։ Եվ ասեմ թե չէ, դուք ձեռքերով կրծածիկեք ձեր երեսները, բայց էդ էլ չէք կարող անել, որովհետև ձեր երեսների ամոթից ու բարկության տաքությունից ձեր ձեռքերը կերվեն։

— Վա՜հ, էս ի՞նչ է պատահել։ Ինչպես երևում է, շատ հետաքրքրական բան պետք է լինի։ Պատմի՛ր, պատմի՛ր,— գոռացին ամեն կողմից։

— Ոչ թե հետաքրքրական, այլ մի ցավալի ու անիրավ գործ,— պատասխանեց Սայիդը։— Ականջ արեք, պատմեմ տեսնեք։

«Ես մի գեղեցիկ, խելոք ու աշխատասեր կին ունեի ու երկու կարմրաթշիկ, առողջ, աշխույժ երեխա։ Ինձ համար երջանիկ ապրում էի, ու իսկի մարդարեի խստացած դրախտը էլ չէր պետքս...»

— Տեսե՛ք, տեսե՛ք՝ ինչեր է հաշում։ Ա՛յ լիրբ հայ հոյիշ... Հենց դրա համար էլ էդ բախտին ես արժանացել...— ընդհատեց մեկը։



— Բախտը որ կա՝ ծնվելիս է գրվում մարդու հակատին. նրանից պրծնում չկա,— մեջ մտավ մի ուրիշը։

— Դե լավ, խելքներիդ զոռ մի՛ տաք, թո՛ղ արեք պատմի։

Ու Սայիդը շարունակեց

«Քանի տարի էսպես ապրեցինք, ամեն մի տարին, ամեն մի ամիսը, շաբաթը, օրը, ժամն ու վայրկյանը անցան լիքը երջանկություններով։ Բայց շար նախանձը, որ աշխարհքում կործանում է ամեն բան — վերջը իմ երջանկությունն էլ կործանեց։ Իմ կողքին ապրում էր մեր քաղաքի դատավոր Իբրահիմը։ Նախանձեց իմ բախտին, կնոջս ու էրեխաներիս խլեց ինձանից։ Կնոջս իրեն հարճ առավ, երեխաներիս ստրուկ տվեց ուրիշներին։ Ու էսպես նրանք ընկան կրկնակի գերության մեջ։ Գերի մոր սիրտը իր երեխաների մոտ էր ու նրանց հետ էլ կրկնակի գերի. երեխաների ուշքն ու միտքն էլ իրենց մոր մոտ էր ու նրա հետ կրկնակի գերի...»

— Ա՛յ էդ լավն էր։ Ի՞նչ սիրուն ասիր—կրկնակի գերի...

«Էսպես մնացի մենակ, ու կյանքը մահից էլ ավելի անտանելի դարձավ ինձ համար։

Եվ ահա տեսնում եք, անտուն, անտեր թափառում եմ, ու չեմ իմանում՝ աշխարհքում էլ ի՞նչ է մնում ինձ համար»։

Ամենքի սիրտը շարժվեց։

— Էլ երկար ու բարակ մտածելու ի՞նչ կա էստեղ. հրես թագավորը դալիս է, գնա գանգատ արա, էլի՞,— խորհուրդ տվեց աղքատներից մինը։

— Գա՞նգատ արա... լավ ես ասում. բայց թագավորը շրջապատված կլինի իրեն մոտիկների ու մեծամեծների էն տեսակ բազմությունով, որ արի ու մոտեցիր։ Հա կըմոտենան հարուստները, բայց ես ի՞նչպես մոտենամ։ Դուք ասում եք՝ նա մեզ համար արեգակ է, բայց արեգակի նման էլ հեռու է մեզանից։

— Վախիլ մի՛,— սիրտ տվին մյուս աղքատները.— մենք կըմոտենանք։ Ինքն էլ էնպես բնավորություն չունի,

ամենքին մոտ է թողնում։ Ոչ մի աղքատ դեռ նրա շեմքից ետ չի գառել առանց բարեբարվելու։

Էս խոսքումն էին, որ ամբոխը տակնուվրա եղավ, ալեկոծվեց, ամեն մարդ տեղ բռնեց, ու ամենքի աչքերը դարձան դեպի քաղաքի դարպասները տանող գլխավոր փողոցը։ Վերջապես երևաց արքայական թափորը։ Ահա և Հարուն Ալ Ռաշիդն ինքը ճոխ ու փայլուն շքախմբով։ Թափորը կանգ առավ գլխավոր հրապարակում, պալատի առջև։ Թագավորը ձիուց իջավ, բազմեց մեծամեծներով շրջապատված ամպհովանու տակ դրած գահին ու իրավունք տվեց, որ ցանկացողները ներկայանան իրեն։ Առաջ եկան նշանավոր հարուստները — թանկագին նվերներ տվին։ Առաջ եկան վաճառականները — ծանրագնի շալեր, մետաքսի ու կերպասի կտորներ տվին։ Առաջ եկան արհեստավորները — սքանչելի նուրբ բանվածքներ ու ձեռագործներ տվին։ Թագավորն ուրախ ու գոհ ընդունեց ամենքին ու ամեն մեկին մի օրևէ բաղդը խոսք տվավ։ Մին էլ հանկարծ ամբոխի միջից մի պատառոտված, հյուծված ապրած դարս եկավ, գլխին մի ահագին բար, ու մոտեցավ թագավորին։

— Թագավորն ապրած կենա, ահա էս էլ իմ նվերը։

Թագավորը զարմացավ, մթնեց ու խստությամբ հարցրեց.

— Էս ի՞նչ կընշանակի... էս ի՞նչ ես տալիս գու ինձ...

— Թագավորն ապրած կենա,— պատասխանեց աղքատը,— թագավորին նվեր ավողը պետք է իր սրտիցը տա... իմ սրտումն էլ էս քարն է ծանրացած, ես էլ էս եմ քեզ նվիրում։

Թագավորը ժպտաց, ապա թև մտքի տունն ընկավ։

— Ինչպես ի՞նչ է։

— Երբ դեռ երեխա էի՝ հերս ու մերս ինձ ասում էին Ջան Սայիդ։ Երբ հասակ առա, հարևաններս ասում էին Աշխատասեր Սայիդ։ Երբ ամուսնացա, կինս ասում էր Լավ Սայիդ. ծանոթներս ու բարեկամներս ասում էին Աղնիվ Սայիդ. իսկ այժմ ասում են — խեղճ, անբախտ, Աղքատ Սայիդ։

— Ո՞րտեղ ես ապրում։



— Էնտեղ, որտեղ թռչունները են թռչում, որտեղ քամին է սուրում։

— Դե, լա՛վ,— խոսեց Հարուն Ալ Ռաշիդ թագավորը.— իմ տերությունն մեջ ոչ մի շար գործ չի խուսափիլ իմ հայացքից՝ որ անպիդում կտրվի թաքնվի։ Գնա՛ աղքիր ասործուն. ո՞վ գիտի, գուցե մի օր էլ գա, որ քեզ ասեն Բախտավոր Սայիդ։

Սայիդը գնաց։

Էս դեպքի վրա մի քանի օր անց կացավ։ Հարուն Ալ Ռաշիդը մտերմանան իմացավ Սայիդի պատմությունը, համոզվեց ճշմարտությունը ու կամեցավ դատել արդարն ու մեղավորը։

Մի օր էլ խնջույքի հրավիրեց, հավաքեց իր բոլոր մեծամեծներին։ Մեծամեծներն եկան հավաքվեցին մարմար ավազանների ու շատրվաններով լիքն այգիները, ծաղիկների մեջ, ծառերի տակին խորիշանների վրա բազմեցին, սկսեցին գալիան քաշել, ուտել, խմել, քեֆ ու զրույց անել։

Քեֆի թոնդ ժամանակը թագավորը հրամայեց հրավիրեն իր հեքիաթախոսին, որ հայտնի էր իր շիտակ ու անկեղծ բնավորությամբ։ Հեքիաթախոսն եկավ, բարև տվեց, բարև առավ, նստեց, սկսեց գալիան ծխել ու պատմությանն անել։

— «Աշխարհքում շատ գանձեր կան,— ասավ նա,— բայց ամենամանկ գանձը լավ անունն է։ Լավ անունով մարդը միամամանակ ապրում է հաղար ու մի տեղ, հաղար ու մի մարդու սրտում։ Լավ անունով մարդը էնպես տեղեր է հասնում, որ չի կարող հասնել ոչ ձիով, ոչ ոտքով և ոչ ուրիշ միջոցով։ Լավ անունով մարդը չի մեռնում։ Նա մահից հետո էլ անտեսանելի ապրում է մեր միջում, ինչպես ոգի։ Միշտ մեր միտն է գալիս, մեր սիրտն է հոսում իր գիղեցիկ հատկությունները։ Լավ բան է լավ անունը։

«Մի գանձ էլ կա—հարստությունն է։

«Հարստությունով մարդ հաղար ձեռն է ունենում, հաղար ոտք, հաղար լեզու և հաղար ձեռով կարող է հազար լավ գործ կատարել։ Լավ բան է հարստությունը։

«Մի գանձ էլ կա—էգ էլ խելքն է։

«Սելլոք մարդը գիրմարգ է դառնում։ Խելքով՝ ակոսն ուժեղ է, աղքատը—հարուստ, վախկոտը—անահ։ Նրանից է, որ անլսելի շշնջյունով ասած խոսքը որոտում է ու անցնում աշխարհի մի ծերից մյուս ծերը։ Լավ բան է խելքը։

«Բայց մի գանձ էլ կա, որ լավ անունից էլ, հարստությունից էլ, խելքից էլ վեր է։ Առանց նրան էս բոլորը համարյա թե սարսափելի ու կործանարար կըլինեին մարդու համար։ Առանց նրան աշխարհքը կըթառամեր ու կամայանար։ Էս գանձը— խղճմտանքն է։

«Էս գանձը արդեն մեծ մարդիկն են ունենում, և սրա համար էլ նրանք, թող էլ որ ունենան, երջանիկ չեն լինում։ Ինչքան հարստություն մարդը կանցնի, սուր նրանց, որ նրանք բաժանեն մարդկանց ու բարերարեն, դարձյալ քիչ է նրանց համար։ Իսկ ես ճանաչում էի մի աղքատի, որ երեք գանձ ուներ և իրեն համարում էր երջանիկ ու շարունակ փառաբանում էր աստծուն։ Եվ հպարտությունը մտավ նրա սիրտը, թե ինքն էր ձեռք բերել էն երջանկությունը ու ոչ ոք էլ չէր կարող խլել իր ձեռքից։ Էս բանն իմացավ շար ոգին ու հասցրեց ասածին։ Առավոտ տիպնց շար ոգուն ու իրենից եռ մղեց, գրկեց էկ երջանիկ մարդու ապրած բազարի դատավորի սիրտը։ Դատավորը հանկարծ զգաց, որ իր ներսը մի նոր, անծանոթ ու թունավոր բան է շարժվում։ Սրտի մեջ սկսեց եռալ մի չարություն, ու միտքը մթնեց խավար մշուշից։ Ինքն էլ լավ չիմացավ, թե ինչ էր պատահել իրեն. վեր կացավ դուրս եկավ որ հովին տա իրեն, ու երջանիկ աղքատի տան մոտից անցնելիս՝ սկսեց նրան նախանձել։ Բայց ի՞նչ էր աղքատի ունեցած-չունեցած գանձն ու երջանկությունը։ Մի ջրհոր, երկու արմավենի ծառ։ Ջրհորից սառը ջուր էր խմում, իսկ երկու արմավենին ամբողջ տարին նրան քաղցր պտուղ էին տալիս ու հով տավեր։ Սառը ջուրը խմում էր, քաղցր պտուղն ուտում ու շվարում նստում, փառաբանում աստծուն։ Դատավորին շատ թվացին էս գանձերը աղքատի համար, վճռեց նրանից խլի, ու խլեց։ Էն օրվանից աղքատը թափառում է դռնից դուռը. նրա հառաչանքից խա-



վարում են աստղերը, նրա թափած արտասուքներից կարիճներ են ծնվում ու աշխարհքը լցվում։

Ամենքի սիրտն էլ խորը շարժվեց էս պատմությունից, ամենքն էլ զայրացան անիրավ դատավորի վրա, ամենքն էլ դատան, որ նա արժանի է իրեն պատժի։

— Իսկ դո՞ւ ինչ ես ասում, Իբրահիմ,— հարցրեց Հարուն Ալ Ռաշիդ թագավորը իր մեծամեծներից մեկին, Բաղդադի դատավորին։— Ի՞նչ պետք է անել հափշտակող դատավորին։

— Թագավորն ապրած կենա,— պատասխանեց Իբրահիմը,— էդ մի էն տեսակ ոճիր է, որին արժանի պատիժ ես գտնել չեմ կարողանում։

— Իբրահի՛մ,— գոչեց թագավորը,— էդ ոճրագործը դու ես։ Դու ես աղքատ Սայիդից խլել նրա կինը, էդ երջանկությունն ապրյուրը մեր կյանքում։ Դու ես խլել նրա զավակները, որ մարդկանց կյանքի քաղցր պտուղներն են ու իրենց ծնողներին շվաք են անում ծերության օրերում։

Իբրահիմը խարտակվեց, գետին ընկավ ու խնդրեց, որ իրեն ների թագավորը։

— Ես չեմ քո դատավորը,— խոսեց Հարուն Ալ Ռաշիդը.— քո դատավորն այժմ նա է, ում որ թշվառացրել ես դու։

Ու հրամայեց ներս կանչեն Սայիդին։

— Սայի՛դ,— ասավ,— ահա քո ձեռքն եմ տալիս քո թշնամուն։

— Թագավորն ապրած կենա, իմ ձեռքն ես տալիս, ես ի՞նչ անեմ,— պատասխանեց Սայիդը։

— Հապա ի՞նչ ես ուզում։

— Ես դրանից բան չեմ ուզում։ Թո՛ղ իմ կնոջն ու երեխաներին վերադարձնի, ես առաջվա նման երջանիկ կըլինեմ։

Էս մեծահոգությունը շարժեց թագավորին, նրա աչքերը լցվեցին արտասուքով։ Բոլոր մեծամեծներն էլ սկսեցին արտասվել։

— Լավ, էդ քո դատաստանը,— դարձավ թագավորը Սայիդին.— այժմ իմ դատաստանը լսիր։ Դո՛ւ, Իբրահի՛մ, քո կալվածքների չորս բաժնից երեք բաժինը կրտաս Սայիդին,

դրա հետ էլ էն քարը, որ Սայիդն ինձ պարգև բերեց, էն քարի քաշովը մին ոսկի։

Թագավորի վճիռը վճիռ էր։ Ինչ որ վճռեց՝ Իբրահիմը տվեց Սայիդին։ Ու Սայիդը իր կնոջ ու երեխաների հետ միասին սատացավ ահագին հարստություն։ Բայց հարստությունից չզգոհացավ Սայիդը։ Դարձյալ առաջվա նման համեստ կյանք էր վարում ու աշխատում էր առավոտից մինչև իրիկուն։ Երբ ընկերները հարցնում էին, թե՝ ինչո՞ւ չես օգտվում քո հարստությունից ու փարթամ ապրում, ասում էր՝ հարստությունը փչացնում է մարդու սիրտը, խնջույքներն ու ճոխ հաշերը հոգնեցնում, մաշում են մարդու զգացմունքները, իսկ ես ուզում եմ մնամ միշտ թարմ ու բարի։

Ու իր ամբողջ կարողությունը Սայիդը սպառեց, պրեց բարի գործերի վրա։ Ուսումնարաններ բաց արավ, հիվանդանոցներ շինեց, ջրհորներ փորել տվեց անջուր անապատներում ու ամեն մի ջրհորի քարի վրա արձանագրել տվեց. «Ո՛վ մարդ, խմի՛ր ու Հիշիր նրանց, որոնք ծարավից տանջվում են աշխարհում»։

Հարուն Ալ Ռաշիդ թագավորը Սայիդի նվիրած բարը Անգին քար անվանեց ու ամեն անգամ, գոհաբանան աչքերով, գնում էր սեղանին, իր առջևը, էնպես էր գոհաբանան աչքերում։ Ավանդությունն ասում է, թե նրա նման էին վարվում նրա հաջորդները՝ արաբական մյուս թագավորները։

---

# ԼՈՒՍԵՐԵՍԸ ՈՒ ՎԱՐԴԵՐԵՍԸ

Լինում է չի լինում մի ապրած որբևայրի կին։ Ապրելիս է լինում մի փոքրիկ անտիրամ։ Տնակի առջև մի պարտեզ է ունենում, պարտեզի մեջ երկու վարդի թուփ, մինը սիրուտիկ վարդի, մյուսը կարմիր։ Էն վարդի թփերի նման էլ երկու փոքրիկ ազջիկ է ունենում. մեկի անունը Լուսերեսն, մյուսինը՝ Վարդերեսն։ Երկուսն էլ էնքան լավն ու բարի, էնքան սրտով մաքուր ու աշխատասեր, որ կարծես թե հենց էն երկուսն էին էնպես, որ կային բովանդակ աշխարհքում։ Միայն թե Լուսերեսն ավելի հանգիստ էր ու ինքուշ, իսկ Վարդերեսն ավելի կայտառ ու աշխույժ։

Վարդերեսը շատ էր սիրում հանգերում ու մարդերում թռչկոտել, ծաղիկ քաղել ու թռչուն բռնել, իսկ Լուսերեսը նստում էր տանը, տնտեսության մեջ օգնում էր մորը, կամ թե չէ, եթե գործ չկար, նրա համար գիրք էր կարդում։ Երկու քույրն էլ էնքան էին իրար սիրում, որ հենց թե թեթ ասված էին ման դալի, ու երբ Լուսերեսն ասում էր.

— Մենք երբեք չըպետք է բաժանվենք իրարից,— Վարդերեսը պատասխանում էր.

— Երբեք, քանի կենդանի ենք։— Իսկ մերն ավելացնում էր.

— Մեկդ ինչ որ կուզենաք՝ պետք է կիսեք մյուսիդ հետ։

Երկուսով հաճախ գնում վազվզում էին անտառներում ու պտույտ էին քաղում, ու ոչ մի կենդանի վնաս չէր տալիս,

ամենքը վստահ դալիս մոտենում էին նրանց։ Նապաստակը հենց նրանց ձեռքից առնում որոճում էր կազամբի թերթիկները, եղնիկն արածում էր նրանց կողքին, եղջերուն անհոգ ու զվարթ անցնում էր նրանց մոտից, իսկ թռչունները հանդիստ ուսներին թառած երգում էին, ինչպես կարող էին երգել և ինչ-որ դիտեին։ Եթե բան է, ուշանում էին անտառում ու գիշերը վրա էր հասնում, միասին պառկում էին մամուռի վրա ու քնում մինչև լուսաբաց։ Իրենց մերն էլ դիտեր ու անհանդիստ չէր լինում։

Մի անգամ էլ, երբ անտառում գիշերում են ու լուսաբացին զարթնում են, տեսնում են կողքներին կանգնած ճերմակ ու փայլուն շարերով մի սիրուն երեխա։ Էս երեխան վեր է կենում, ժպտալով նրանց նայում ու, առանց մի խոսք ասելու, հեռանում, մտնում անտառի խորքն, անհետանում։ Էստեղ երեխեքը մտիկ են տալիս շորս կողմերը, տեսնում են, որ իրիկունը մթնով եկել են քնել մի անդունդի եղերքին ու եթե մթնումը մի երկու քայլ էլ արած լինեին, պետք է անդունդը լինեին գլորված։ Գալիս են իրենց մորը պատմում։ Մերն ասում է.

— Էս անպատճառ պահապան հրեշտակն ինքն է եղել, որ միշտ պահպանում է բարի երեխանց։

Լուսերեսն ու Վարդերեսն իրենց մոր տնակն էնպես իստակ ու մաքուր էին պահում, որ մտիկ անելիս մարդու դյուր էր դալիս։

Ամառը դլխավորապես Վարդերեսն էր տան բանը շինում ու ամեն առավոտ, մոր գարթնելուց առաջ անկողնի կողքին մի փունջ ծաղիկ էր դնում, փնջի մեջ էլ երկու վարդ՝ մինը սիպտակ, մյուսը կարմիր։ Ջմեռը Լուսերեսն էր կրակ անում ու պղինձը դնում կրակին։ Պղինձն էլ էնպես մարտը սրբած էր լինում, որ ոսկու նման պսպղում էր։ Իրիկուններն էլ, երբ դուրսը ձյունը փաթիլ-փաթիլ բրդում էր, մերն ասում էր.— Լուսիկ ջան, դնա դռան փակը գցիր։— Հետո նստում էին բուխարու առջև։ Մերը դիրք էր կարդում աղջիկների համար, իսկ աղջիկները լսում էին ու մտնում։ Պողքներին պառկած էր լինում իրենց գառը, եռևները թա-



ռի վրա քնած սիպտակ աղավնին, գլուխը կոխած թևի տակը։

Մի իրիկուն էլ, երբ Լուսեն նստած են լինում, մինը դուռը ծեծում է։ Մերն ասում է.

— Վարդուշ ջան, շուտ վեր կաց դուռը բաց արա, անօթևան ճամփորդ կըլինի—դուռը ծեծում է։

Վարդերեսը գնում է դռան փակը ետ գցում, համոզված, որ դուռը ծեծողը մի խեղճ մարդ պետք է լինի։ Մին էլ ի՞նչ տեսնի—դռան ետևը կանգնած է մի ահագին արջ, որ դուռը բացվելուն պես ներս է կոխում իր հաստ գլուխը։ Վարդերեսը վախից ճչում է ու ետ թռչում, գառն սկսում է մայել, աղավնին թևերն է թափահարում, իսկ Լուսերեսը մտնում է մոր մահճակալի ետևը։ Այնինչ արջը լեղու է լինում ու խոսում։ Ասում է.— Ինչո՞ւ եք վախում. ինձանից մի՛ վախենաք, ես ձեզ վնաս չեմ տալ։ Քիչ էր մնում ցրտից սառչի, եկա մի քիչ տաքանամ։

— Վա՛յ, խեղճ իմ արջ ախպեր,— բացականչում է մայրը։— Դե արի, արի կրակից մոտիկ պառկիր, միայն թե զգույշ կաց, բուրդդ չըմրկի... Աղջկե՛րք, Վարդուշ ջան, Լուսիկ ջան, դուրս եկեք, եկեք էստեղ, արջ ախպերը ձեզ ձեռք չի տալ, արջ ախպերը բարի է։

Աղջիկները դուրս են դալիս, կամաց-կամաց մոտենում են արջին, գառն էլ, աղավնին էլ, ու շուտով ամեն ահ ու երկյուղ վերանում է մեջտեղից։ Արջն էլ ասում է.

— Երեխեք ջան, թե կարաք՝ էս իմ բրդի ձյունը մի թափ տվեք։

Աղջիկները վազում են ավելը բերում՝ արջի բուրդը մաքուր սրբում են, ու արջը բավականությունից մոնչալով մեկնվում է կրակի առջև։ Աղջիկերքը ձեռաց ընտելանում են իրենց անճոռնի հյուրին ու սկսում են հետը հանաքներ անել։ Բրդի հետ են խաղում, ականջներից են քաշում, մեջքին են կանգնում, հատակին դես ու դեն են գլորում, ճիպոտով խփում են, իսկ եթե սկսում է վրդնչալ՝ ծիծաղից թուլանում են։ Արջի իրեն բեղն էլ է դալիս։ Բայց երբ շատ են նեղացնում՝ վրդնչում է.

— Մի՛ տանջեք ինձ, մի՛ սպանեք, այ աղջկերք,

Ա՛յ Լուսերես, ա՛յ Վարդերես,
Ձեր սիրելի փեսան եմ ես։

Քնկու ժամանակը որ գալիս է ու աղջիկները գնում են քնեն, մերն արջին ասում է.

— Դե դու էլ օջախի առաջը պառկիր, արջ ախպեր, համ ուաք կըլինի տեղդ, համ բամուց պատապար։

Օրը բացվում է թե չէ, արջը էլ ետ ձնի մեջ քարշ գալով գնում է գեղի անտառի խորքը։ Էն օրվանից էս արջը սովորությունն է շինում, ամեն իրիկուն միևնույն ժամին գալիս է սրանց մոտ։ Պառկում է օջախի առջևն ու թողնում է հնոը խաղան. ինչքան կուզեն։ Սրանք էլ Լեպես են սովորում, որ իրիկունները, մինչև արջը տուն չի գալիս, դուռը փակում չենք։

Ձմեռն անց է կենում. գարունքն ընկնում է, երկիրը գալարում, ու մի օր էլ արջը Լուսերեսին ասում է.

— Դե հիմի արդեն ժամանակն է, որ ձեզանից հեռանամ. ամբողջ ամառը էլ ինձ չեք տեսնիլ։

— Ո՞ւր ես գնում, արջ ախպեր,— հարցնում է Լուսերեսը։

— Գնաք է անտառը գնում, իմ գործերն ու հաշտություններն շատ թղուկներից պաշտպանեմ։ Ձմեռը գետնի տառած ժամանակը նրանք անհետանում են իրենց մթին այրերում, բայց արևը երկիրը տաքացնում է թե չէ՝ էդ գող անպիտաններն ըլա աշխարհը են գուրս գալիս ու՝ ինչ որ աշքները տեսնում է՝ էլ սիրուշն օգուտ չի անում, գողանում են տանում։

Արջից բաժանվելու համար շատ է տխրում Լուսերեսիկը, իսկ երբ գուռն առաջին բաց է անում որ գնա՝ հանկարծ արջն ընկնում է դռան փակին, բրդիցը մի փունջ մնում է փակի վրեն ու բրդի տակիցը ոսկու պես մի բան է պսպղում։ Երևի աշքիս թվաց,— մտածում է աղջիկն ու մատիցը հանում է էս բանը։ Արջն էլ շտապում է գեղի անտառն ու անհետանում է ծառերի ետեը։

Մի օր էլ մերն աղջիկներին անտառն է ղրկում, որ գնան ցախ ու մոխ հավաքեն բերեն։ Գնում են աղջիկները, մանեն գալիս մանն, մին էլ տեսնում են անտառում ընկած մի ծառ, ու էս ծառի վրա, խոտերի միջին մի բան էս կողմն է թռչում, էն կողմն է թռչում. բայց ինչ բան է—գլխի չեն ընկնում։ Մոտենում են, տեսնում են մի թղուկ, գեմքը պատավկոտած, միրուքն էլ սպիտակ ու երկա՞ր, երկար։ Էն, որ ասում են՝ ինքը թիզ ու կես, միրուքը գազ ու կես, հենց էն ինքն է, որ կա։ Միրքի ծերը մնացել է ծառի ճեղքում, գես ու դեն է ընկնում, ու չի իմանում, թե ոնց հանի։ Աղջկերանցը որ տեսնում է՝ արնոտ աշքերը վրանները շռում է ու գոռում.

— Ի՞նչ եք տնկվել էդտեղ։ Չե՞ք կարող մոտ գալ ու օգնել։

— Էդ ի՞նչ է պատահել, գառնաք քեռի,— հարցնում է Վարդերեսը։

— Ախո՛ւշ, անտառ՛ն, հարցնում է՝ ի՞նչ է պատահել... Ի՞նչ պետք է պատահեր. ուզում էի ծառը ճեմ, մանը տաշեղները անեմ մեր խահանոցի համար, թե չէ մեծ փեսերից էրվում են մեր կերակուրները. մենք հո էնքան շատ չենք ուտում, ինչքան գուք, էդ կոպիտ ու անկշտում խալխը.— սեպը գարկեցի, հանկարծ գուրս թռավ, ծառի ճեղքն էլ էնպես արագ փակվեց, որ վրա չհասցրի միրքիս ծերը միջից հանեմ։ Միրքիս ծերը մնաց ծառի ճեղքի մեջն, ու ահա էսպես շտրտարվում եմ, չեմ կարում հանեմ, իսկ դուք կանգնել եք, բերաններդ բաց եք արել ու հռհռում եք, ազատեցնե՛ք, ազատեցնե՛ք... թո՛ւ, զահլես ինչպես է գնում...

Աղջիկները վրա են գալի, ուժ են անում, քաշում են, քաշում են, չեն կարողանում թղուկի միրուքը ծառի ճեղքիցը հանեն։

— Կացե՛ք, ես գնամ մարդիկ կանչեմ,— ասում է Վարդերեսը։

— Հիմարի գլուխ,— վրա է պրծնում թղուկը.— ի՞նչ եմ անում մարդիկը։ Դուք հերիք չե՞ք, որ զահլես գնա, դեռ ուրիշներին էլ կանչեցեք։ Կարող ե՞ք—մի ուրիշ բան էլ հնարեցեք...

Լուսերեսն ասում է.

— Մի քիչ համբերիր, ես ճարը գտա։— Ասում է, գրպանից մկրատը հանում ու թզուկի միրքի ծերից կտրում։ Թզուկն ազատվում է թե չէ, իսկույն շալակն է գցում իր ոսկով լիքը տոպրակը, որ ծառի փչակումը պահել էր, ու դնում է քթի տակին փնթփնթալով.

— Ա՛յ քեզ անտաշ խալխ... նկան էս փառավոր միրքիս ծերը կտրեցին թողին։ Գետինը մտնեք դու, գետինը...

Էսպես մրթմրթալով տոպրակը շալակում է, առանց ետ մտիկ տալու գնում։

Էս դեպքի վրա մի քանի ժամանակ անց է կենում, մի օր էլ աղջիկները գնում են ձուկը բռնելու։ Գետափին մոտենում են, տեսնում են ծղրիդի նման մի բան էստեղ ետ ու առաջ է թռչկոտում, ու քիչ է մնում ջուրն ընկնի։ Մոտ են վազում, տեսնում են իրենց ծանոթ թզուկը։

— Էդ ի՞նչ ես անում էդտեղ, դաճաճ քեռի,— հարցնում է Վարդերեսը։

— Ապուշնե՛ր, չե՞ք տեսնում ինչ եմ անում... Չե՞ք տեսնում անիծած ձուկն ինձ ուզում է ջուրը քաշի...

Դու մի ասի՝ թզուկը գետափին նստած՝ կարթով ձուկը բռնելիս է լինում, հանկարծ քամին փչում է ու միրուքը փաթաթում կարթի թելին։ Հենց էդ խառնված ժամանակը մի մեծ ձուկն է ընկնում կարթի մեջն ու թզուկին զոռ է անում, քաշում է դեպի ներս։ Սա գետափի թփերից ու խոտերից է կպչում, բայց բան չի դառնում, ձուկը տանում է։ Աղջիկները ժամանակին վրա են հասնում, իրեն պինդ բռնում են ու աշխատում են միրուքը թելից բաժանեն, չեն կարողանում, էնպես խճճված է լինում իրար։ Էլ ուրիշ ճար չի մնում, մկրատը հանում են դարձյալ միրքիցը կտրում, իրեն ազատում։ Ազատվում է, տեսնում է միրքիցը էլի կտրել են՝ սկսում է վրանները ճղճղալ.

— Ա՛յ դուք անասուններ, էս մի՞թե կարդ է, հը՞։ Դուք համարձակվեք իմ երեսն էսպես ալլանգակե՞լ... Հերիք չէր էն օրը միրքիս ծերը կտրեցիք, հիմի էլ ամենալավ մասը տարաք, հը՞... Ես հիմի ի՞նչպես մերոնց երևամ... Ա՛յ գետինը մտնեք դուք, գետինը...



Վերցնում է իր մարգարտով լիքը տոպրակը, որ թաքցրել էր եղեգնուտում, ուտվա է ձգում ու անհայտանում մոտիկ քարի ետևը։

Սրանից մի քանի օր ետը մերն իր աղջիկներին մոտս կա քաղաքն է ուղարկում՝ թել, ասեղ, մատնոց և ուրիշ էս տեսակ մանրուք առնելու։ Մի քարքարոտ դաշտով անց կենալիս էս աղջիկները նկատում են, որ մի մեծ թռչուն օդում պտուտ եկավ, պտուտ եկավ ու նետի նման ներքև սլացավ, գարկեց մի քարի տակի։ Թռչունի գարկելուն պես մի սրտաճմլիկ աղաղակ է բարձրանում, ու էս ձենի վրա աղջիկները վազում են, տեսնում են իրենց հին ծանոթ թզուկը. արծիվը ճանկել է, ուզում է տանի։ Բարեսիրտ աղջիկները իսկույն բռնում են թզուկից ու կախ ընկնում, ու էնքան են արծվի հետ էս կողմն, էն կողմն ընկնում, էնքան են կռիվ տալիս, մինչև որ արծիվը որսը թողնում է՝ թռչում գնում։ Առաջին սարսափն անց է կենում թե չէ՝ էս թզուկը նորից իր ճղճղան ձենով աղջիկներին վրա է պրծնում.

— Էս ի՞նչ արիք. չէիք կարող ավելի քնքուշ ժաժ գալ, հը՞.... բարակ շորերս պատառոտեցիք թողիք... անճոռնի անպիտաններ՝ը...

Ճղճղում է, անգին քարերով լիքը տոպրակը ուսը գցում ու անցնում քարերի ետևը, կորչում գնում իր քարանձավը։ Աղջիկներն արդեն սովոր են լինում նրա ապերախտությանը, շարունակում են իրենց ճամփեն, քաղաքում իրենց առուտուրն անում են ու ետ վերադառնում։ Վերադարձին գալիս են դարձյալ պատահում հանդում մի տեղ նստած թզուկին։ Տեսնում են մի իստակ տեղ իր տոպրակը շուռ է տվել, թափել, կիտել անգին քարերը, մտածելով, թե էնպես ուշ էլ անց կենող ու տեսնող չի լինի։ Վերջալույսի շողքերն ընկել են փայլուն քարերի վրա, ու գույնզգույն քարերն էնպես են վառվում, շորշորում, հուրհուրատին տալիս, որ աղջիկները տեղները մարում են, մնում հայիլ-մայիլ կտրած՝ մտիկ անելիս։

— Ի՞նչ ենք բերանները բաց արել կանգնել,— գոռում է թզուկը, ու նրա գորշ դեմքը փոխվում է ծիրանի գույնի։ Ուզում է, ինչքան որ կարող էր, մի հայհոյի, մին էլ հան-

կարծ մի մանչոց է լսվում, ու անտառից մի արջ է դուրս վազում, հարձակվում վրեն։ Ամրասփահար թզուկը տեսլիցը վեր է ցատկում, բայց մինչև վրա կըհասցներ մտնի իր խորշը՝ արջը բռնում է։ Զարհուրած սկսում է աղաչել.

— Իմ սիրելի, իմ տեր արջուկ, առ, ահա քեզ լինեն իմ բոլոր գանձերը, միայն թե խնայիր ինձ։ Մտիկ տուր, մի տես, թե ինչ շքեղ անգին քարեր են էստեղ թափված։ Ինձ բաշխիր իմ կյանքը։ Ի՞նչ օգուտ ես տանելու, եթե սպանես ինձ, էսպես մի փոքրիկ, վտիտ արարածի։ Ատամիդ տակին իսկի չեմ էլ երևալ։ Ա՛յ թե ուզում ես ուտես՝ էս անօրեն աղջիկներին կեր, հատկանում եմ. լորի պես գեր ու թխլիկ—անուշ պատառ են... սրանց կեր, քեզ անուշ լինի...

Արջը ականջ էլ չի դնում, թե ինչ է ասում թզուկը. ծանր թաթը ետ է տանում ու որ մի դարկ է հասցնում՝ թզուկս տեղն ու տեղը հանդչում է։ Աղջիկները լեղապատառ սկսում են փախչել։ Արջը ետևներից կանչում է.

— Լուսի՛կ, Վարդո՛ւշ, մի՛ վախենաք, սպասեցի՛ք, ես էլ եմ ձեզ հետ գալիս։

Աղջիկները ճանաչում են, որ էս իրենց սիրելի արջի ձենն է. կանգնում են։ Արջը մոտենում է նրանց, ու հանկարծ մորթին վրիցը ընկնում է, տակիցը դուրս է գալիս մի գեղեցիկ պատանի՝ ոտիցը գլուխ ոսկու մեջ կորած։

— Ես թագավորի տղա եմ,— ասում է նա։— Էս անսիրտ թզուկը ինձ կախարդել, գաղան էր շինել ու հափշտակել իմ բոլոր գանձերը։ Եվ ես դատապարտված էի անտառներում թափառելու մինչև սրա մահը։ Ահա վերջապես սա առավ իրեն արժանի պատիժը, իսկ ես՝ իմ առաջվան պատկերը։

Էստեղից գնում՝ առնում են անհուն գանձերը, որ դիրել էր թզուկը իր մթին քարանձավում։ Ապա թե թագավորի տղեն ամուսնանում է Լուսերեսի հետ, իսկ եղբայրը՝ Վարդերեսի։ Հետներն առնում են և աղջիկների պատառ մորը, գնում ետ իրենց աշխարհը, ապրում են ուրախ ու երջանիկ։ Ու սրանցից մեկի լուսամուտի տակ սիպտակ վարդի թուփն է ծաղկում, մյուսի լուսամուտի տակ՝ կարմիր վարդի թուփը։



# ՍԱԳԱՐԱԾ ԱՂՋԻԿԸ

Լինում է չի լինում մի պառավ, շատ պառավ կին։ Էս պառավն իր սագերի հետ ապրելիս է լինում անմարդաբնակ լեռների մեջ՝ մի փոքրիկ տնակում։ Բնակատեղն էլ շրջապատված է լինում անտառով, ու պառավն ամեն օր իր ձեռնափեռը վերցնում է, ձեռնափեռին հենված ամբոմբալով գնում անտառը։ Գնում է սագերի համար խոտ է անում, պտուղ է քաղում, հավաքում է՝ ինչի որ ձեռքը հասնում է ու շալակում է բերում տուն։ Տեսնողն ասում է՝ հիմի որտեղ որ է, խեղճ պառավն իր բեռան տակին կրձկոր, բայց միշտ էլ հաջողակ տուն է հասցնում։ Ճամփին էլ, բան է, եթե մարդ է պատահում, ուրախ-ուրախ բարևում է.

— Բարի օր, ախպեր ջան։ Տեսնո՞ւմ ես էսօր եղանակն ինչ լավ է։ Հը՞, չլինի՞ թե զարմանում ես, որ պառավ տեղովս էսքան շալակը տանում եմ։ Ի՞նչ անենք. ամեն մարդ պետք է իրեն բեռը կրի։

Սակայն մարդիկ չէին ուզում նրան պատահեն։ Պատահելիս էլ ճամփանները ծռում էին, հեռվից անց կենում։ Իսկ եթե հեր ու որդի միասին կողքովն անց կենալիս էին լինում՝ հերը որդուն կամաց զգուշացնում էր. «Տեսնո՞ւմ ես սրան. սրանից հեռու կաց հա՞. սա կախարդ է...»

Մի առավոտ էլ էս անտառով մի գեղեցիկ երիտասարդ է լինում անց կենալիս։ Արևը վառ ու պայծառ լուսավորում է, թռչունները ծլվլում, երգում են, զով հովը զըլզըլում է, սլսլում է տերևներում։ Ու անցնում է երիտասարդն ուրախ,

զվարթ։ Ճամփին ինչ-ինչս, մարդ չի պատահում։ Մին էլ տեսնում է մի պառավ, ծառերի տակին չոքած, մանգաղով խոտ է անում։ Գոգնոցը լիքը խոտն ու երկու զամբյուղն էլ կողքին դրած։

— Էդ ո՞նց ես էդքանը տանելու, նա՛նի,— հարցնում է երիտասարդը։

— Ուզեմ-չուզեմ՝ պետք է տանեմ, որդի ջան, ի՞նչ անեմ, հարուստներն, իմարկե, կարող են էսպես բան չանեն, բայց գյուղացու համար ասված է.

«Ես մի՝ նայիլ նոր,
Մե՞ջդ վազ լկոր...»

Ու, երբ տեսնում է երիտասարդը մնաց կողքին կանգնած, ասում է.

— Հը՝, դուցե կըկամենաս ինձ օգնել։ Մեջդ դեռ ուղիղ է, ծնկներդ առողջ, քեզ համար մի մեծ բան չի սա։ Իմ տնակն էլ էստեղից էնքան հեռու չի. ա՛յ, էս սարի ետևի հովտումն է։ Ձեռաց կըհանենք։

Երիտասարդը մեկդանում է պառավին։

— Թեև,— ասում է,— իմ հերը գյուղացի չի, հարուստ իշխանի որդի եմ, բայց քո շալակը կըվերցնեմ, որ ցույց տամ՝ թե մենակ գյուղացին չի ընդունակ ծանր բեռը կրելու։

— Դե արի վեր կալ, հենց ապրես։ Եղած-չեղածը մի ժամվա ճանապարհ է, քեզ համար դատարկ բան է։ Հա՝, շըմոռանաս, էս խնձորն ու տանձն էլ հետը։

Երիտասարդ իշխանը «մի ժամվա ճանապարհի» անունը որ լսում է, սկսում է տատանվել, բայց պառավն օձիքը բաց չի թողնում։ Խոտի կապոցը շալակն է տալի, տանձ ու խնձորի զամբյուղներն էլ ձեռը։

— Տեսնում ե՞ս՝ ինչ թեթև է։

— Ո՞րտեղից է թեթև,— տենքում է երիտասարդը՝— Կապոցդ էնքան ծանր է. որ կարծես թե քար լինի մեջը լցրած, իսկ տանձ ու խնձորի զամբյուղները արճճի նման կռներս պրկում են... Շունչս կտրում է...



Ուզում է վեր գցի՝ պառավը չի թողնում. հեգնում է, ասում է.

— Տեսե՛ք, տեսե՛ք, ես իմ պառավ տեղովը միշտ մենակ տանում եմ, սա ջահել մարդ է՝ չի կարողանում... էդպես է. բանը որ լեզվի գա — կտրիճ եք, իսկ գործի գալիս—ետ-ետ՝ գնում։ Էլ ի՞նչ ես կանգնել։ Ոտներդ ժաժ տուր՝ գնանք։ Միևնույն է, էդ բեռն էլ ոչով քո ձեռից առնելու չի։

Քանի դեռ հարթ ճամփով են գնում, էլի ոչինչ. բայց որ դեմ են ընկնում սարերին, քարերն էլ ոտի տակիցը գուրս են պրծնում՝ իրար ետևից ներքև թռչում, տեսնում է որ էս արդեն ուժիցը վեր է։ Քրտինքը ճակատը կոխում է, ու, մին սառը, մին տաք՝ մեջքից հոսում։

Աղաչում է, ասում է.

— Նա՛նի, էլ չեմ կարողանում գնամ, պետք է մի քիչ շունչ առնեմ։

— Ոչինչ,— պատասխանում է պառավը,— երբ որ տեղ կըհասնես — կըհանգստանաս։ Ով գիտի, կարելի է մի օր սրանից քեզ համար մի լավ բան է դուրս գալի... Գնա...

— Դու իսկի խղճմտանք չես ունենալ, ա՛յ պառավ,— բարկանում է երիտասարդը և ուզում է շալակը մեջքից գցի, բայց ո՞րտեղից. կապոցն էնպես է մեջքին կպել, ոնց որ թե հետը ծնված լինի։ Դես է շուռ գալիս, դեն է պտրտվում, իրեն թափահարում, չի լինում, չի ազատվում։ Իսկ պառավը վրեն ծիծաղում է ու, իր կեռ ձեռնափայտը ձեռին, էս կողմն, էն կողմն է թռչկոտում։

— Ինչո՞ւ ես էդպես բարկանում, ապա ջան. հենց կարմրել ես՝ կասես հնդուհավ լինես։ Հանգիստ բեռդ տար, մի տուն հասնենք, ես գիտեմ՝ քեզ ինչպես կըվարձատրեմ։

Ինչ պետք է աներ խեղճ երիտասարդը։ Ուզեր-չուզեր պետք է հնազանդվեր իր ճակատագրին ու քարշ գար պառավի ետևից։

Պառավն էլ՝ քանի գնում են՝ էնքան ժրանում է ու արագանում, իսկ իր բեռն ավելի ու ավելի ծանրանում։ Վերջը մի տեղ էլ հանկարծ էս պառավը թռչում է կապոցի վրա ու

պիտի նստում երիտասարդի շալակին։ Ինքն էլ թեև շոր չոփի նման, բայց մի հաստ ու կոպիտ գյուղացի կոկորից ավելի ծանր է լինում։ Երիտասարդի ծնկները դողդողում են, բայց հենց կանգնում է թե չէ՝ պառավը ճիպոտով կամ եղինջով սկսում է ոտներին զարկել ու զարկել։ Ախ ու օխով, թառանչ քաշելով մինչև սարն է բարձրանում, էնտեղից էլ հանում պառավի տունը, քիչ է մնում տեղն ու տեղն ընկնի, հոգին տա։

Սարերը որ պառավին տեսնում են, թևերը թափահարելով, շլինքները երկարաձգած, ոստոր-ուրախ ազմկելով վազում են դեմը, իսկ սարերի ետևից ճիպոտը ձեռին մի պառավ կին է գալիս, ինքը պնդակազմ ու բարձրահասակ, բայց սառուցեալ այլանդակ ու անճոռնի։

Գալիս է ու — մայրիկ,— ասում է,— ի՞նչ պատահեց քեզ, որ էսքան ուշացար։

— Ոչինչ, աղջիկս,— պատասխանում է պառավը,— ինձ ոչ մի վատ բան չի պատահել։ Ընդհակառակը, անտառում պատահեցի էս երիտասարդ պարոնին, որ իմ տեղակ իմ բեռը շալակեց բերեց։ Եղ հերիք չէր, երբ որ ես հոգնեցի, ինձ էլ գոռով շալակն առավ։ Համփեն էլ էնքան կարճ թվաց, որ չհիմացանք ինչպես եկանք։ Շարունակ ծիծաղում էինք ու իրար հետ հանաքներ էինք անում։

Վերջապես պառավն էս ասի շալակից իջնում է, մեջքից կապոցն առնում, ձեռքերից զամբյուղները ու փաղաքուշ վրեն նայելով ասում.

— Դե հիմի նստիր էստեղ շնչում, հանգստացիր։ Դու քո աշխատանքով պարզևի արժանացար ու էդ պարգևը ես քեզ կրտամ։

Հետո դառնում է սագարած աղջկանը,

— Դու գնա տուն, աղջիկս, ջահել ոգի մոա կանգնել ես, լավ չի։ Կրակի վրա յուղ չեն ածիլ։ Պարոնը հանկարծ վրեդ կլսիրահարվի։

Պարոնը էս որ լսում է՝ չի իմանում ինչ անի, լաց լինի թե ծիծաղի։ Մաքսումն ասում է.

— Ա՛յ քեզ գեղեցկուհի. սա թեկուզ երեսուն տարով



էլ չահելանա, դարձյալ չի կարող իմ սիրտը շարժել, ուր մնաց հիմի։

Այնինչ պառավը փայում, փայփայում էր իր սագերին, ոնց որ թե իր երեխեքը լինեին, ու հետո աղջկա հետ մբռնում են տնակը։

Հոգնած երիտասարդը ձգվում է վայրի խնձորենու տակի նստարանի վրա։ Օդը չերմ ու բուրավետ։ Չորս կողմը տարածվում է բնդարձակ դալար մարգագետինը՝ լիքը կապուտ ու դեղին ծաղիկներով։ Մարգագետնի միջով, որևէ տակ արծաթի պես պսպղալով, վազում է վճիտ առվակը, մեջը գնում են դալիս հերմակ սագերը ու ճղղփում, լողանում։

— Ի՞նչ լավ տեղ է,— բացականչում է երիտասարդը։— Բայց էնքան հոգնել եմ, որ աչքիս կուլ են գնում։ Պառկեմ աչքս մի քիչ կպչեմ. էն էլ չըլնի թե լնած տեղս քաշեն տանեն. էնպես ուժից ընկել եմ, կարծես բամբակից լինեմ։

Մի քիչ լնում է, պառավը գալիս է, հրում զարթեցնում։ Ասում է.

— Վեր կաց, չի կարելի, որ դու էստեղ մնաս։ Ճշմարիտ է, ես քեզ բավական շարչարեցի, բայց հա էլի կաս ու կենդանի եսս։ Հիմի քեզ կրվարձատրեմ։ Եթե փող տամ քեզ կամ մի ուրիշ դանձ, ոչ փողի կարիք ունես, ոչ ուրիշ գանձի, դրա համար էլ քեզ մի բան կրտամ, որ փողից էլ է թանկ, գանձից էլ։

Ասում է ու ձեռը տալիս մի փոքրիկ արկղ՝ ամրողջը զմրուխտից։

— Ա՜ռ, պահիր քո աչքի լուսի պես, և սա քեզ երջանկություն կբերի։

Երիտասարդ խշխանը հանկարծ իրեն ուժեղ ու կայտառ է զգում. տեղից վեր է կենում, նվերն առնում, շնորհակալություն է անում պառավին ու ճանապարհ է ընկնում առանց մտիկ տալու պառավի աղջկա վրա։ Ճանապարհից բավական կարել էր. գնա ետեղից լսվում էր սագերի ուրախ ճղճղոցը։

Երեք օր ամայությունի մեջ մոլորված թափառելուց հետո երիտասարդը գտնում է գալիս մի մեծ քաղաք։ Ինքը քաղաքին

անծանոթ, քաղաքն իրեն։ Անծանոթ նորեկին առնում են տանում էդ քաղաքի թագավորը պալատը։ Պալատում երիտասարդը ծնկի է գալիս, երկրպագություն է անում թագավորին, ապա թե գրպանից հանում է պառավի տված ղըմբուխայա արկղիկն ու գնում է թագուհու տների առաջ։ Թագուհին հրամայում է վեր կենա՝ իր ձեռքովը տա թանկագին նվերը։ Թագուհին բաց է անում արկղիկը, մեջը նայում, նայելն ու ուշաթափ գետնովը դիպչելը մին է լինում։ Պալատականներն իսկույն վրա են թափում երիտասարդին բռնում են, որ բանտը տանեն, թագուհին աչքը բաց է անում, ուշքի է գալիս, հրամայում է ազատ թողնեն ու իրենք բոլորը դուրս գնան, որ ինքը ուզում է նրա հետ մենակ խոսի։

Մենակ են մնում թե չէ, թագուհին սկսում է լաց լինել ու լաց լինելով էսպես է խոսում երիտասարդի հետ.

— Ինչի՞ս համար են էս փառքն ու փայլը, երբ ամեն առավոտ վեր եմ կենում արտասուքով ու ամեն իրիկուն պառկում եմ արտասուքով։ Ես երեք աղջիկ տնեի։ Փոքր աղջիկս էնքան էր սիրուն, որ տեսնողն ասում էր՝ աղջիկ չի սա—հրաշք է։ Զյունի ճերմակն ու խնձորի ծաղկի կարմիրն իրար էին խառնված նրա այտերին, իսկ մազերը փայլում էին արևի ճառագայթների նման։ Արտասվելիս աչքերից արտասուքի տեղակ ակն ու մարգարիտ էր թափում։ Տասնուհինգ տարին որ լրացավ՝ հերը երեք աղջկանն էլ կանչեց իրեն մոտ։ Տեսնելու բան էր, թե ինչպես ամենքն էլ հիացմունքից աչքները չռեցին, երբ նրա մտավ փոքր աղջիկս։ Հենց իմանաս երկնքից արև դուրս եկավ։

— Զավակներս, —ասավ թագավորը,— չեմ իմանում, թե երբ կամ ինչ ժամանակ կըհասնի իմ վերջին օրը, դրա համար էլ ուզում եմ հենց էսօրվանից որոշել, թե ինչ բաժին եք ստանալու ամեն մեկդ իմ մահից հետո։ Գիտեմ, որ ամենքդ էլ սիրում եք ինձ, բայց ձեզանից որն ավելի շատ է սիրում, նա էլ ամենից մեծ բաժինը կըստանա։ Ասացեք տեսնեմ, ամեն մեկդ ինչքան եք սիրում ինձ, որ ձեր խոսքերով կարողանամ ձեր սերը չափել։

Մեծն ասավ.



— Ես քեզ սիրում եմ ամենաքաղցր շաքարի չափ։

Միջնեկս ասավ.

— Ես քեզ սիրում եմ իմ ամենալավ ղզելստի չափ։

Փոքրը լուռ էր։

Թագավորը հարցրեց.

— Իսկ դու, իմ ամենասիրելի աղջիկս, դո՞ւ ինչքան ես սիրում ինձ։

— Չըգիտեմ, հայրիկ,— պատասխանեց աղջիկը,— ոչ մի բանի հետ չեմ կարողանում համեմատել իմ սերը։

Բայց հերն ստիպեց, որ նա մի բան ասի. էն ժամանակ աղջիկն ասավ.

— Ամենալավ կերակուրն էլ ինձ համար համ չունի առանց աղի. ես քեզ սիրում եմ աղի չափ։

Թագավորն էս որ լսեց՝ կատաղությունը բռնեց ու գոռաց.

— Էդպե՞ս... եթե դու ինձ աղի չափ ես սիրում՝ քո սիրո վարձատրությունն էլ կըլինի — աղ։

Իր թագավորությունը բաժանեց երկու մեծ աղջիկների մեջ, իսկ հրամայեց փոքրի մեջքին մի տոպրակ աղ կապեն ու տվեց երկու ծառայի, որ տանեն բաց թողնեն մի վայրենի խոր անտառում։ Ամենքս նրա համար խնդրեցինք, աղաչեցինք, պաղատեցինք, բայց չեկավ, չըկարողացանք մեղմել թագավորի ցասումը։

Ա՜խ, եթե տեսնեիք, թե ինչպես էր լաց լինում մեղանից բաժանվելիս։ Ամբողջ ճանապարհը շաղ էր անցած էն մարգարիտներով, որ արցունքի տեղակ թափվում էին նրա աչքերից։ Որանից հետո շտապով թագավորը գոչեց իր խստասրտության վրա, բարկությունը անցավ, փոխվեց գութի ու խղճահարության. հրամայեց ամեն տեղ որոնեն, գտնեն մեր դժբախտ երեխային, բայց ոչով չըկարողացավ գտնի։ Ամեն անգամ երբ մտքովս անց է կենում, թե նրան կերած կըլինեն վայրենի գազանները, ցավից ու վշտից տեղս կորցնում եմ, չեմ իմանում, թե որտեղ եմ։ Շատ անգամ էլ ինձ մխիթարում եմ էն հուսով, թե նա կենդանի է դեռ և թաքնվել է մի որևէ քարանձավում կամ ապաստան է գտել գիտասիրտ մարդ-

կանց մոտ։ Հիմի բաց եմ անում ձեր տված զմբուխտյա արկղիկն ու հանկարծ տեսնում եմ մեջը էն մարգարիտներից, որ արցունքի տեղակ թափվում էին իմ աղջկա աչքերից...

Դուք պետք է ինձ պատմեք—էս մարգարիտը որտեղից է ընկել ձեր ձեռքը։

Եբիտասարդը պատմում է, թե՝ էս մարգարիտն ստացել եմ մի էս տեսակ պառավից, որ անշուշտ կախարդ պիտի լիներ, ու ինձ էլ շատ շարշարեց, բայց էդպես մի աղջիկ ոչ տեսել եմ, ոչ էլ դրա մասին մի որևէ բան եմ լսած։

Էստեղ թագավորն ու թագուհին վճռում են՝ ինչ ուզում է լինի՝ գտնեն պառավին։ Ասում է՝ որտեղ էս մարգարիտը գտնվել է, էնտեղ էլ կարելի է մի տեղեկություն իմանալ իրենց աղջկանից։

Սրանց թողնենք իրենց ճամփեն գնան, մենք դառնանք պառավին ու իր աղջկանը։

Պառավն իր տնակի լուսության մեջ նստած իլիկ էր մանում։ Մութն ընկել էր, օջախի կողքին էրվող մարխը մարելու վրա էր։ Հանկարծ դուրսը աղմուկ բարձրացավ. սագերը հանդից տուն էին վերադառնում, ու հեռվից լսվում էր նրանց խուլ ճղճղոցը։ Մի քիչ անց՝ ներս մտավ պառավի աղջիկը։ Մերը մի թեթև գլխով ասավ։ Աղջիկը մոր կողքին նստեց, իլիկն առավ ու սկսեց թել մանել, էնպես աշխույժ, ինչպես մի ջահել աղջիկ։ Էսպես լուռ մի երկու ժամ նստեցին՝ մի ջահել աղջիկ։ Էսպես լուռ մի երկու ժամ նստեցին՝ մինը կամ մյուսը լեզուն պռունգովը տալու։ Վերջապես լուսամուտից մի շրշյուն լսվեց ու մթնից ներս նայեցին մի զույգ կրակոտ աչքեր։ Մի պառավ բու էր, որ երեք անգամ կանչեց բո՛ւ-բո՛ւ, բո՛ւ-բո՛ւ, բո՛ւ-բո՛ւ ու կորավ։

Պառավը գլուխը մի փոքր բարձրացրեց ու ասավ. «ժամն եկավ, աղջիկս, գնա արա, ինչ որ անելու ես»։

Աղջիկը լուռ վեր կացավ դուրս գնաց։ Գնաց, գնաց, դուրս եկավ մի հովիտ ու հասավ մի ջրհորի, որի կողքին երեք կաղնի ծառ էին կանգնած։

Լրացած ահագին լուսինն էլ դուրս եկավ սարերի գլխին ու էնպես լուս արավ, որ ասես լիներ կորած, մարդ կընկատեր։ Լուսնի լուսի տակ աղջիկը հանեց իր հագի խորքը,



ջրհորի վրա կոացավ ու սկսեց լվացվել։ Հետո խորքը շորը քաշեց ու փռեց որ սիպտակի լուսի տակ։ Եվ միանգամից էլ նշպես փոխվեց էն ալլանգակ աղջիկը։ Դուրս եկավ կանգնեց մի անտես-անմատ գեղեցկուհի, որ ոչ ուտես, ոչ խմես, կանգնես ու թամաշա անես։ Ճերմակ մազերը գլխից ընկան թե չէ՝ նրանց տակից ճոխ տսկե մազերը էնպես վերևից ներքև թափվեցին, ոնց որ խրձնով արևի շողքերը թափվեն, ու մարմինը պատեցին։ Մազերի տակից աչքերը փայլում էին շուխտ աստղի նման ու այտերը վառվում էին կարմիր խնձորի ծաղկի պես։

Բայց փնքը տխո՞ւր-տխուր։ Գիտին ընկավ ու սկսեց աղի-աղի լաց լինել։ Աչքերից արտասուքներն իրար հետևից թափվում էին գետին։ Էսպես նստած լաց էր լինում, ու երկար կըմնար էս դրության մեջ, եթե հանկարծ մոտակա ծառերից մի խշխշոց չլսվեր ու հետո էլ մի շրտկոց։ Հրացանի ձեն լսած հընդիկի նման տեղիցը ծլնդ եղավ. իսկույն մտավ իր հին խորքի մեջ ու մի ակնթարթում չքացավ, տեղն ու տեղը հանգավ, ոնց որ ճրագին փչես՝ հանգչի։ Տերևի նման դողալով հասավ իրենց տնակը։ Տեսավ մերը շեմքում կանգնած՝ սպասում է։ Ոչինչ պատմի, պառավը մեղմորեն ասավ.

— Լավ, լավ աղջիկս, ես ամեն բան դիտեմ։— Ասավ, ներս տարավ, մարխը վառեց ու մանածը թողած՝ ավելն առավ, սկսեց տնակն ավլել։

— Ամեն բան խատակ ու մաքուր պետք է լինի։

— Նանի, էս գիշերվա կիսին ինչո՞ւ ես տունը վեր քաշում։ Մա՞րդ պետք է գա, ի՞նչ է։

— Գիտե՞ս որ ժամն է, աղջիկս,— հարցրեց պառավը։

— Դեռ գիշերվա կեսը չըկա, բայց մոտիկ է։

— Իսկ մտքովդ չանցա՞վ, որ սրանից երեք տարի առաջ մին էլ էսօր ես եկել դու ինձ մոտ։ Հիմի էս գիշեր ժամանակը լրացավ, ու մենք էլ միասին ապրել չենք կարող։

Աղջիկը գոնատված հարցրեց.

— Նանի ջան, մի՞թե ուզում ես ինձ դուրս անես քո տանից։ Ո՞ւր գնամ ես։ Ոչ բարեկամ ունեմ, ոչ տեղ, ո՞ւմ

մոտ դնամ։ Ինչ ասում ես՝ անում եմ, դու էլ գոհ ես ինձանից, էլ ինչո՞ւ ես գուրս անում...

Պառավը չէր ուզում ամեն բան պարզի, թե ինչ է պատահել աղջկա հետ, ու խոսքը փոխեց։

— Էլ էս խրճիթում չեմ ապրելու, ուզում եմ հեռանամ ու հեռանալիս մաքուր թողնեմ. թող սրբեմ։ Քեզ համար էլ դարդ մի՛ անի, էլ ես կըգտնես քո հորական օջախը, ու գոհ կըլինես էն վարձով, որ ես կըտամ։

— Բայց, նա՛նի, ի՞նչ է պատահելու ինձ հետ,—կրկին հարցրեց աղջիկը։

— Մին էլ եմ ասում. ինձ մի՛ խանգարի, թող սրբեմ։ Անխոս գնա քո սենյակը, խորխդ հանիր ու հագիր քո էն մեռաքսե զգեստը, որ հագիդ էր, երբ առաջին անգամ եկար ինձ մոտ։ Հագիր ու սպասիր քո սենյակում, մինչև կկանչեմ։

Հիմի թագավորից ու թագուհուց տանք տեղեկությունը։

Թագավորն ու թագուհին երիտասարդ իշխանին հեռանելը առնում են ու ճանապարհ են ընկնում, գնում են պառավին գտնեն։

Երիտասարդը մի անտառում նրանցից ետ է մնում ու պետք է ճանապարհը մենակ շարունակեր։ Մյուս օրը նրան թվում է, թե ուղիղ ճանապարհն է գուրս եկել։ Գնում է, գնում է, մի տեղ մութը վրա է հասնում, բարձրանում է մի ծառի, ուզում է ծառի վրա գիշերի, առավոտը վեր կենա էլ ետ իր ճամփեն շարունակի։ Գիշերվա մի ժամին լրացած լուսնյակը որ գուրս է գալի, նկատում է, որ մի պառավ լեռներից իջնում է ցած։ Նկատում է, որ ճիպոտը ձեռին չի, բայց էս էն սագարած աղջիկն է, որ տեսել էր պառավի տնակում։

— Օհո,— բացականչում է ինքն իրեն.— տհա մինը եկավ։ Էս մինը որ ձեռս ընկավ, էն մյուսն էլ չի պրծնիլ ինձանից։

Բայց ի՞նչքան է դարմանում, երբ այլանդակ կինը մոտենում է ջրհորին, խորխը հանում է, լվացվում, ոսկե մազերը թափվում են ուսերին, ու առչեր կանգնում է մի գեղեցկուհի, որ իր օրումը ոչ տեսել էր, ոչ լսել։ Շունչն իրեն



լպահած, գլուխը ճյուղերի արանքից հանում է ու աչքերը հառած նայում է աղջկանը։ Շատ է լինում դնպի առաջ հակված թե ինչ, ծառի մի ճյուղը կոտրում է, որ կոտրում է՝ աղջիկն իսկույն էլ ետ մտնում է իր խորխը ու եղնիկի նման թռչում, կորչում։

Աղջիկը հեռանում է թե չէ, երիտասարդն էլ ծառից իջնում է, ընկնում ետևից։ Շատ է գնում թե քչ, մին էլ տեսնում է՝ մի տեղ առաջին երկու սավեր են թափառում։ Դու մի՛ ասի՝ թագավորն ու թագուհին են։ Հեռվից պառավի մարմի լույսը նշմարել են, էն լուսի վրա գնում են։ Երիտասարդը պատմում է նրան ջրհորի մոտ աչքով տեսած հրաշքը, ու էլ ոչ մի կասկած չի մնում, որ էն աղջիկը փրկնց որոնած աղջիկը պիտի լինի։ Երկուսը դառնում են երեք ու գնում։ Գնում են, գնում, հասնում են պառավի տնակին։ Տեսնում են սագերը պառավի տնակի շորս կողմը բռնած, պուլպուլները թևերի տակը կոխած թնած են։ Ոչ մինը ոչ շարժվում է, ոչ ձեն է հանում։ Լուսամուտիցը ներս են նայում. տեսնում են՝ ներսը պառավը նստած իրեն համար իլիկ է մանում։ Տունն էլ էնքան մաքուր սրբած, վեր քաղած, հենց իմանաս մեջը հուրի-փերիներ էին ապրում, որ շըգիտեն աղբն ու փոշին ինչ բան է։ Էս ամենը տեսնում են, բայց իրենց աղջկանը չեն տեսնում։ Զրկա։ Մի առժամանակ էսպես մտիկ են անում, վերջը սրտերը պնդացնում են, լուսամուտը կամաց ծեծում են։ Պառավը կարծես թե հենց սրանց սպասելիս լիներ. տեղիցը վեր է կենում ու քաղցր ձեն տալի.

— Եկեք, ներս եկեք, ես ձեզ ճանաչում եմ։

Ներս են մտնում թե չէ՝ ասում է.

— Թագավորն ապրած կենա, դուք հո էսօր ստիպված չէիք լինիլ էսքան երկար ճանապարհ կտրելու, եթե երեք տարի առաջ ձեր սիրուն ու բարի աղջկանը, չըգիտեմ ինչի համար, էնքան անիրավ կերպով դուրս չանեիք ձեր տանից։ Էն էլ էն աղջկանը, որ էնքան սիրում էր ձեզ։ Ասենք դրանից նրան ոչ մի վնաս չհասավ։ Էս երեք տարին, ճշմարիտ է, նա սաղ էր արածացնում, բայց ոչ մի վատ բան չի ստ-

վորել ու իր մաքուր սիրտը պահել է անարատ։ Բայց դուք ձեր արժանի պատիժն ստաք հենց էն ահ ու դողով, որով ապրում էիք էս երեք տարին։

Ապա մոտենում է կողքի դռանն ու կանչում.

— Դուրս արի, աղջիկ ջան։

Դուռը ետ է բացվում, մեստաքսե վզեստը հագին հայտնվում է թագավորի աղջիկը, ոսկի մազերը արձակ թափված ուսերին ու թիկունքին, աչքերը ցոլուն աստղեր ու ինքը ամբողջ կարծես թե հրեշտակ էր, որ երկիր իջավ։

Դուրս է գալիս, վազում է ընկնում հորն ու մոր վզովը ու սկսում է համբուրել։ Հերն ու մերը ուրախությունից լաց են լինում, իսկ երիտասարդ իշխանը մնում է ապշած կանգնած նրանց կողքին։ Աղջիկը նրան նկատում է թե չէ, ինքն էլ չի փմանում ինչու, կարմրում է, կարմիր վարդ է կտրում։ Թագավորն ասում է.

— Աղջիկ ջան, իմ թագավորությունը արդեն բաժանել եմ, հիմի ի՞նչ տամ քեզ։

— Սրան ոչ մի բան չի հարկավոր,— ապշած տեղակ պատասխանում է պառավը։— Ես ձեզ եմ նվիրում սրա էն արտասուքները, որ թափել է ձեզ համար. սրանք մաքուր մարգարիտներ են, ավելի մաքուր ու թանկ, քան էն մարգարիտները, որ հանում են ծովերից, և ավելի արժեն, քան ձեր ամբողջ թագավորությունը։ Իսկ իրեն, ինձ արած ծառայության համար, նվիրում եմ իմ տնակը։

Պառավի էս ասելն ու անհետանալը մին է լինում։ Մին էլ էն են տեսնում՝ տնակի պատերը ճրճռացին. նայում են՝ տնակը դարձել է մի շքեղ պալատ, թագավորավայել սեղանները բաց արած, բազմաթիվ ծառաները վազում են դես ու դեն, ու ճերմակազգեստ չահել աղջիկները շրջապատել են իրենց։

Դուրս է գալիս, որ պառավը ոչ թե մի չար կախարդ է եղել, այլ բարի ոգի։ Նա է ավել թագավորի աղջկանն էն շնորհքը, որ արտասուքները մարգարիտ դառնան, ու նա է նրան պահել դժբախտության օրերում։ Նա է պահել և էն



բոլոր կախարդված ու դժբախտացած աղջիկներին, որ դարձել էին սագեր, այժմ նորից առան իրենց մարդկային կերպարանքը։ Վերջապես նա է առաջնորդել բարի երիտասարդ իշխանին դեպի թագավորի անմեղ հալածված աղջիկը։

Էս բոլորից հետո ամուսնանում են նրանք, մոռանում են իրենց անցկացրած ծանր օրերը, և ապրում են ուրախ ու երջանիկ, բարի ոգու պարգևած էն գեղեցիկ պալատում, որ առաջ մի աղքատիկ տնակ էր։

---

# ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՇՈՒՂԸ

Մի աշուղ է լինում։ Օրերից մի օր էս աշուղը մենակ վեր է կենում գնում անտառը։ Անտառում դես է մտածում, դեն է մտածում, մինչև որ մտածելու բանը հատնում է։ Որ մտածելու բանը հատնում է՝ «Օ՜ֆ, ասում է, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակը էստեղ։ Պետք է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...»

Ասում է, ջուրթակն ուսից վեր է բերում ու նվագում։ Ջուրթակի ձենը հնչում է անտառում։ Էս ձենի վրա անտառի խորքից վազեվազ դուրս է գալիս մի գել։

— Ա՜խ, գելը...— հառաչում է աշուղը։— Բայց ես սրան չէի ուզում... Ես գելի հետ ի՞նչ անեմ...

Իսկ գելը մոտ է գալիս ու սկսում է խոսել։

— Էդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ։ Ի՞նչ կըլինի ինձ էլ սովորեցնես։

— Սրա սովորեցնելն ինչ բան է որ,— պատասխանում է աշուղը։— Կըսովորեցնեմ, միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես։

— Աչքիս վրա,— խոսք է տալիս գելը։— Էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կըլսի։

— Դե որ էդպես է՝ եռևիցս արի։

Գնում են։ Գնում են, գնում, տեսնում են ճանապարհին մի պառավ կաղնի, մեջը փուչ, ինքը ճղված։

— Դե հիմի լսի՛ր, տես ինչ եմ ասում,— դառնում է աշուղը գելին։— Եթե ճշմարիտ սրտով ուզում ես նվագել սովորես, ամենից առաջ պետք առնի թաթերդ էս ծառի ճեղքումը դնես։

Գելը լսում է վարպետին, առնի թաթերը դնում է ծառի ճեղքում։ Վարպետը ձեռաց կողքի մեծ քարը վերցնում է էնպես ուժով դարկում աշկերտի ջուխտ թաթերին ու էնպես խորը մխում ծառի ճեղքի մեջ, որ խեղճը տեղն ու տեղը նըստում է ու մնում է գերի էն ծառին։

— Էստեղ կաց, մինչև մին էլ ետ կըգամ,— ասում է վարպետն ու գնում։ Մի քիչ որ գնում է, դարձյալ սկսում է ինքն իրեն հետ խոսել.

— Օ՜ֆ, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ... Պետք է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...

Ասում է, ջուրթակն ուսից վեր է բերում ու նվագում։ Մին էլ տեսնում է ծառերի արանքից դուրս եկավ աղվեսը։

— Հիմի էլ աղվեսը... բայց ես սրան էլ չեմ ուզում... Աղվեսի հետ ի՞նչ անեմ,— հառաչում է աշուղը։ Իսկ աղվեսը գալիս է առաջը կտրում։

— Էդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ։ Ի՞նչ կըլինի ինձ էլ սովորեցնես։

— Իսկու չէ, կըսովորեցնեմ,— պատասխանում է աշուղը։— Միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես։

— Աչքիս վրա,— խոսք է տալիս աղվեսը։— Էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կըլսի։

— Դե որ էդպես է՝ եռևիցս արի։

Աղվեսն ուրախ-ուրախ ընկնում է վարպետի հետևից ու գնում են։ Գնում են, գնում, մտնում են մի նեղ կածան, երկու կողմից բարձր թփեր։ Վարպետն էստեղ կանգ է առնում, ճամփի մի կողմից մի փոքրիկ ընկույզի ծառի ծեր է կտացնում դեպի գետին ու ոտը դնում վրեն, մյուս կողմից էլ մի ուրիշ ծառ ու կանչում է աղվեսին։

— Հապա դե ե՛կ, սիրելիս. եթե ուզում ես բան սովորես՝ դեսը բեր առջևի ձախ թաթդ։

Աղվեսը լսում է, թաթը մեկնում է։ Վարպետը բռնում է կապում ձախ ծառի կատարին։

— Դե հիմի էլ աչը բեր։

Աչն էլ կապում է աչ կողմի ծառի կատարին։ Հետո մտիկ է անում՝ ամուր են կապված թե չէ, ու բաց է թողնում ծառերի կատարները։ Ծառերը ետ են գնում, վերև են թռցնում աղվեսին ու սկսում են ճոճել օդի մեջ։

— Էստեղ կաց, մինչև մին էլ ետ կդգամ,— ասում է վարպետն ու շարունակում իր ճամփեն։

Մի քիչ որ անց է կենում, նորից սկսում է փնքն իրեն խոսել.— Օ՞ֆ, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ... Գնամ է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար....— Ասում է, ջութակն ուսից վեր է բերում ու նվագում։ Ոստոստալով առաջն է ելնում մի նապաստակ։

— Համեցեք. հիմի էլ նապաստակը... բայց ես սրան էլ չեմ ուզում... ես նապաստակի հետ ի՞նչ անեմ,— հառաչում է աշուղը, իսկ նապաստակը մոտ է գալիս։

— Էդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ։ Ի՞նչ կըլինի ինձ էլ սովորեցնես։

— Ինչու չէ, կարելի է, և հիշա էլ կըսովորես։ Միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես։

— Աչքիս վրա,— խոսք է տալիս նապաստակը։— Էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կըլսի։

— Դե որ էդպես է՝ եռեփցս արի։

Գնում են։ Գնում են, գնում, դուրս են գալիս անտառի մեջ մի բացատ։ Բացատի մեջտեղը կանգնած է լինում մի բարդի։ Վարպետը մի թոկ է հանում, թոկի մի ծերը ծառից է կապում, մյուս ծերը նապաստակի վզից ու կանչում է.

— Հապա, իմ խրուշիկ, դե մի քանի անգամ էս ծառի բոլորքով պտուտ արի, տեսնեմ քո ճարպիկությունը։

Նապաստակը լսում է. քանի անգամ պտուտ է գալի ծառի բոլորքով։ Թոկը փաթաթվում է ծառին, խեղդը մնում է ծառին կպած ու քանի ձիգ է տալիս, քաշում, բաշքշում, էնքան թոկը վիզը կտրում է։

— Էստեղ կաց, մինչև մին էլ ետ կդգամ,— ասում է վարպետն ու իր ճամփեն շարունակում։

Վարպետի գնալուց ետը դես է ձիգ տալի, դեն է ձիգ



տալի գելը, քարն է կրծում, ծառն է կրծում, էնքան անում է, մինչև թաթերը հանում է կաղնու ճեղքից։ Հանում է ու, թե շորս ոտն ուներ՝ շորսն էլ փոխ է առնում, կատաղած, գազազած ընկնում է վարպետի ետևից, որ հասնի պատառ-պատառ անի։ Օդում ճոճվող աղվեսը հեռվից ազատ դիլին ուտնում է թե չէ՝ սկսում է լաց լինել ու աղաչել.

— Գել ախպե՞ր, գել ախպե՞ր, հասի՞ր օգնիր ինձ, էն վարպետը ինձ խաբեց։

Գելը հասնում է. ծառերը կռացնում, թոկերը կրծոտում, կտրատում, աղվեսին ազատում, ու երկուսով միասին ընկնում են վարպետի ետևից, որ իրենց վրեժը հանեն։

Գնում են, գնում, ճամփին պատահում են ծառին փաթաթված նապաստակին։ Սրան էլ էստեղ են ազատում ու երեքով միասին լարվում են ընդհանուր թշնամու—վարպետի ետևից։

Վարպետը շարունակում է իր ճանապարհն անտառում։ Մի անգամ էլ նվագում է, ու էս անգամ բախտը բանում է։ Ջութակի ձենը լսում է մի աղքատ փայտահատ, գործը թողնում է, կացինը դնում է կոնատակին՝ գալիս է կանգնում երգը լսելու։

— Վերջապես եկավ իմ ընկերը,— բացականչում է վարպետը։— Ես մարդ էի որոնում, ոչ թե վայրենի գազանները։— Ու սկսում է նվագել էնքան արտառուչ, էնքան հրաշալի, որ փայտահատը զմայլում է, սիրտը կրծում ուրախությունից խաղս է լինում։ Հենց էս ժամանակ վրա են հասնում գելը, աղվեսն ու նապաստակը։ Փայտահատը նկատում է, որ նրանց մտքում շար բան կա վարպետի դեմ, խելոյն առաջ է անցնում, բարձրացնում իր տուր կացինն ու ասում.— Ով սրա վրա գա, փմացած կենա, որ ինձ հետ է գործ ունենալու։

Գազանները էս որ տեսնում են՝ սարսափում են ու, պա՛տկ, ետ են փախչում դեպի անտառի խորքերը։ Վարպետը փայտահատին շնորհակալություն անելու համար մի երգ էլ նվագում է ու գնում։ Գնում է հասնում է իր տունը, ջութակը պատին կախում ու պառկում։ Գիշերը գալիս է. ուզում է քնի,

քունը չի տանում։ Շարունակ գալը, աղվեսն ու նապաստակն են մտքի միջին։ Մին էլ հանկարծ գիշերվա մի ժամանակը հենց լուսամուտի տակին գալն ու աղվեսը սկսում են ձեն ձենի տալ ու տնալ, իսկ նապաստակը նրանց ետևից ծըվծըվում է.

— Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,
Էն ի՞նչ արիր դու մեզ հետ.
Մեզ տանջել էիր ուզում դոն,
Տանջվիր հիմի դև զարթուն.
Մինչև լուսը մենք էսպես
Հանգիստ քուն չենք տալու քեզ...
Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,
Էն ի՞նչ արիր դու մեզ հետ...

Երգում են, երգում են անասունները։ Ջուլթակն էլ պատի վրեցն է սկսում իրեն-իրեն նվագել նրանց հետ, ու էնպես ազնկաուր, էնպես ոդրալի, որ խեղճ վարպետը չի իմանում ուր կորչի էն կրգի ու երաժշտության ձենից։ Ամբողջ գիշերը չի կարողանում աչքը կպցնի, տանջվում է ու տանջվում։

Ծերերն ասում են, իբրև թե վարպետը էն օրվանից հետը ինչքան ապրեց աշխարհքում՝ ամեն գիշեր նրա լուսամուտի տակ հնչում էր էս տխուր, սրտաճմլիկ երգը.

«Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,
Էն ի՞նչ արիր դու մեզ հետ...»

Ու ջութակը ոդրում էր հետը։ Ամեն գիշեր, ամեն գիշեր մինչև լուսը, մինչև իր մահը։

---

# ԳՈՐՏԸ

Ժամանակով մի թագավոր է լինում։ Էս թագավորը մի քանի աղջիկ է ունենում՝ մինը մյուսից գեղեցիկ. բայց ամենից գեղեցիկը լինում է փոքրը. էնքան սիրուն, էնքան շարմագ, որ էլ չուտես, չխմես, կուշտես ու մոռի անես։

Թագավորի պալատի կողքին մի անտառ է լինում. անտառում, մի հին լոքենու տակ մի ջրհոր։ Էս սիրուն աղջիկը սովորություն է ունենում՝ ամեն օր գնում է էն հով տեղը, ջրհորի մոտ խաղ է անում, իր ոսկի գնդակը վերև գցում ու բռնում։ Մի օր էլ խաղալիս շատ բարձր է գցում. չի կարողանում բռնի, ու գնդակն ընկնում է ջրհորը։ Վերևից մոռի է անում—ջրհորը աչքին թվում է անտակ։ Սկսում է ապիազի լաց լինել։ Էս լացի ժամանակ հանկարծ մինը ձեն է տալիս.

— Ի՞նչ է պատահել, թագավորի աղջիկ. ինչի՞ համար ես էդպես ապի-ապի լաց լինում։

Մտիկ տա աղջիկն ի՞նչ տեսնի. մի ահագին գորտ ջրհորի պռունգին նստած՝ մարդու նման խոսում է։ Զարմանում է։ Ասում է.

— Խաղալիս գնդակս ջրհորը գցեցի. գորտ ախպեր, նրա համար եմ լաց լինում։

— Հ՛հ,— խնդում է գորտը,— էդ ի՞նչ բան է, որ դրա համար լաց ես լինում։ Ի՞նչ կըտաս, որ գնդակը հանեմ։

— Ամեն, ամեն բան կըտամ,— սկսում է աղաչել աղ-

ջիկը.—Իմ բոլոր զարդերը կըտամ, իմ անգին քարերը կը-տամ, իմ ոսկե թագը կըտամ, միայն թե իմ սիրուն գնդակը հանես։

Գորտը թե.— Ինչի՞ս են պետք քո զարդերը, քո անգին քարերը, մարգարիտներն ու ոսկե թագը։ Չեմ ուզում։ Ա՛յ ուրիշ բան է՝ եթե ինձ սիրեիր, ու էնպես սիրեիր, որ ամեն բանում քո անբաժան ընկերը լինեի, քեզ հետ միասին սեղան նստեինք, մի ամանով ուտեինք, մի բաժակով խմեինք ու մի անկողնում քնեինք։ Ա՛յ, եթե խոստանայիր՝ էն ժամանակ կըցատկեի ջրհորն ու հատակիցը կըհանեի քո ոսկե գնդակը։

— Լա՛վ, լա՛վ, ինչ որ ուզում ես էդ ամենը խոստանում եմ, միայն թե իմ գնդակը բերես,— խոսք է տալիս թագավորի աղջիկն ու հետն էլ մտքումն ասում է.— սրան մտիկ տուր է, տխմար կոկոան, մի տես թե ինչե՞ր է ուզում։ Գնա ջրհորում ճպեխվի ու կրկռացրու, քո ի՞նչ բանն է մարդուն ընկեր դառնաս։

Գորտը հենց որ էս խոսքերը լսում է՝ սուզվում է ջրի տակը, գնդակը գցում է կանաչ խոտի մեջ։ Աղջիկը վրա է թռչում գնդակը հափշտակում, ուրախ-ուրախ, թռչկոտալով վազում դեպի տուն։ Գորտը կանչում է.

— Կա՛ց, կա՛ց, ինձ էլ տար հետդ... ախար ես քեզ պես վազել չեմ կարող...

Աղջիկը ետ էլ չի նայում. վազում է ընկնում հոր պալատն ու գորտը մտիցը հանում։ Գորտը ետևից նայում է նայում ու էլ ետ մտնում է ջրհորը։

Մյուս օրը հենց որ թագավորի աղջիկն իր հոր ու պալատականների հետ միասին սեղան է բազմում ու սկսում է ուտել իր ոսկի ամանով, լըլըփ, լըլըփ, մինը մարմար սանդուխքներով բարձրանում է, դուռը ճանկռտում ու կանչում.

— Թագավորի փոքրիկ աղջիկ, բաց արա...

Թագավորի աղջիկը վազեվազ գնում է տեսնի՝ ով է կանչում իրեն։ Դուռը բաց է անում, տեսնում՝ առաջին կանգնած գորտը։ Իսկույն դուռը ետ է զարկում ու վախեցած գալիս է իր տեղը նստում։



— Էդ ի՞նչ էր, աղջիկս, ինչի՞ց էդպես վախեցիր։ Գըլինի՞ թե դև կա կանգնած դռան ետևը՝ ուզում է քեզ փախցընի,— հարցնում է թագավորը։

— Ո՛չ, հայրի՛կ, դև չի, մի անճոռնի գորտ է։

— Գորտն ի՞նչ է ուզում քեզնից։

— Գիտես, հայրիկ... Երեկ անտառում ջրհորի մոտ խաղ էի անում, հանկարծ իմ ոսկե գնդակն ընկավ ջրհորը... Ես լաց էի լինում... Գորտը հանեց ինձ տվեց իմ ոսկե գնդակը... Եվ որովհետև նա դրա փոխարեն ուզում էր, որ ես անպատճառ իր խաղընկերը դառնայի, ես էլ խոստացա... Բայց իսկի մտքովս չէր անցնում, թե՝ ճիշտ որ, նա կըկարենար իր ջրհորը թողնել... Ահա հիմի եկել է, կանգնած էնտեղ դռան ետևը, ուզում է դա ինձ մոտ։

Ախինչ գորտը ճանկռտում է դուռն ու կանչում

— Թագավորի փոքրը աղջիկ,
Ե՛կ դուռը բաց դու կարգին,
Սի՛տդ է երեկ ինչ խոսք տըվիր
Պաղ ջրհորի եզերքին...
Թագավորի փոքր աղջիկ,
Եկ դուռը բաց դու կարգին։

Թագավորն աղջկանն ասում է.

— Խոսք ես տվել — պետք է կատարես։ Գնա դուռը բաց արա։

Աղջիկը գնում է դուռը բաց է անում։ Գորտը ետևից ներս է ցատկում, հո՛պ, հո՛պ, ցատկելով հասնում է աթոռին ու կանչում է.

— Դե ինձ բարձրացրու դիր քեզ մոտ։

Աղջիկը իր մեջը շատ է նեղանում, տատամսում է, բայց թագավորը պատվիրում է, որ գորտն ինչ որ ասում է՝ լըսի։ Աղջիկը գորտին բարձրացնում է դնում իր աթոռին։ Աթոռին գնում է թե չէ՝ հիմի էլ ուզում է սեղանը բարձրանա։ Դնում է սեղանին։ Հիմի էլ ասում է՝ մոտ քաշիր քո ոսկե ամանը, որ միասին ուտենք. ի՞նչ սներ խեղճ աղջիկը։ Էս մի

կամքն էլ է կատարում։ Ուստում է պրծնում, հիմի էլ թե՝ կըշտացա, քունս տանում է, ինձ տար քո սենյակը, մեստաքսե անկողինդ շինի, որ քեզ հետ միասին քնենք։ Էստեղ արդեն աղջիկն սկսում է լաց լինել։ Սառն ու լպրծուն գորտին դիպչելուց էլ զզվում էր ու զարդանդում, հիմի պետք է տաներ իր գեղեցիկ ու մաքուր անկողնում իր հետ քնեցներ։ Չի ուզում, բայց հերը առաջվանից ավելի է զայրանում։ Ասում է՝ այժմ չէպետք է արհամարհես նրան, ով որ փորձանքի ժամանակ թանկ էր քեզ համար։ Ինչ որ խոստացել ես—պետք է կատարես։

Ճարահատված աղջիկը երկու մատով գորտի մեջքից բռնում է, տանում իր ննջարանն ու դնում անկյունում։ Բայց արի տես, որ փորը սրանից էլի չի խրատվում։ Աղջիկը հենց անկողին է մտնում թե չէ՝ ցատկելով մոտենում է, հատակին կանգնում ու ճըղտալով խոսում.— Հը՞, էդ ի՞նչ է... ես էլ եմ հոգնած ես էլ եմ ուզում քնե՞մ... ինձ էլ պառկեցրու քեզ հե՞տ...

Էնպես է ասում, որ էս աղջիկս սիրտը շարժվում է, ժրպտալով վերցնում է գնում իր անկողնի վրա։ Դնում է իր անկողնի վրա թե չէ մին էլ էն է տեսնում՝ էս գորտի կոշին արաքեց, ու միջիցը դուրս եկավ մի գեղեցիկ երիտասարդ, կողքին նստեց։ Կողքին նստում է ու պատմում զարմացած աղջկանը, թե ինքը մի թագավորի տղա է եղել, չար կախարդը գարձրել է գորտ, այժմ աղջիկը իրեն հանեց ջրհորից ու վերադարձրեց իր մարդկային կերպարանքը։

Էստեղից ուրախ-ուրախ վեր են կենում գնում թագավորի մոտ, պատմում են ամեն բան։ Էնպես էլ դուք ուրախանաք, ինչպես որ թագավորն ուրախանում է. մեծ հարսանիք է սարքում ու նրանց պսակում իրար հետ։

Հարսանիքից հետո նորապսակները պիտի գնային թագավորի տղի հայրենիքը։ Առավոտը վաղ դալիս է դուռը կանգնում ութ ձիանի կառքը, ձիանքը սպիտակ ջայլամի սպիտակ, բարձր փետուրները գլխներին, ոսկե սարքերը ոսկեղեն, իսկ կառքի ետեւ կանգնած թագավորի տղի հին ծառան—Հավատարիմ Օհանը։ Ու էսպես իր Հավատարիմ Օհանը Թիկունքից, ջահել կինը կողքին, թագավորի տղեն սլանում է դեպի հայրենիք։

Շատ է գնում թե քիչ, մին էլ հանկարծ ճանապարհին ականջովը մի ձեն է ընկնում. թվում է, թե կառքի ետեւը մի բան կոտրեց։ Ետ է դառնում կանչում.

— Ի՞նչ էր, Օհա՛ն, կա՞ռքը կոտրեց։

— Ո՛չ, ո՛չ, իմ տեր, կառքը չէր էս.
Էս իմ սրտի կապն էր երկաթ,
Որ տանջում էր ինձ անընդհատ
Էն օրվանից, ինչ գու հորում
Ապրում էիր գորտի օրում։

Գնում են։ Ճանապարհին մի երկու անգամ էլ էդ սեսակ ձայներ են ընկնում թագավորի տղի ականջովը ու ամեն անգամ էլ Էնպես է թվում, թե կառքը կոտրեց, բայց իսկապես Օհանի սրտի ծանր երկաթի կապանքներն էին խորտակվում ու ընկնում։ Էն օրվանից, ինչ որ իր տերը գորտ էր դարձել՝ Հավատարիմ Օհանը սաստիկ տխրել էր ու երեք պատ երկաթի կապով կապել էր իր սիրտը, որ տխրությունից չպատռեր։ Այժմ էդ կառքը եկել էր, որ իր երիտասարդ տիրոջը հայրենիք տանի։ Հավատարիմ Օհանը երկուսին էլ նստեցրել էր կառքի մեջը՝ ինքը կանգնել նրանց թիկունքին, և, տեսնելով իր երիտասարդ տիրոջը կախարդանքից ազատված ու բախտավոր, ուրախությունից սիրտը օխտը դազ բաց էր եղել, ու իրար ետեւից խորտակվում ընկնում էին սրտի ծանր կապանքները։

---

# ՀԵՆՉԵԼՆ ՈՒ ԳՐԵՏԵԼԸ

Մի մեծ անտառի բերանում ապրում էին մի աղքատ փայտահատ ու իր կինը։ Երկու երեխա ունեին, տղի անունը Հենչել էր, աղջկանը՝ Գրետել։

Առանց էն էլ պակասության մեջ են լինում, թանգությունն էլ, որ ընկնում է էն կողմերում, իրենց օրվա հացն էլ չեն կարողանում ճարեն։ Մի օր էլ, տեղումը պատկած, փայտահատը դես է մտածում, դեն է մտածում, դարդից մի կողքից մյուս կողքի վրա է շուռումուռ գալիս, վերջը կնոջն ասում է.

— Էս ի՞նչպես պետք է անենք, ա՛յ կնիկ, իսկի բան չունենք, ինչո՞վ պիտի պահենք էս երեխաներին։

— Գիտես, ա՛յ մարդ,— պատասխանում է կինը,— արի առավոտը ծեգին երեխաներին տանենք անտառի խորքը, կրակ անենք, մի-մի կտոր հաց տանք ձեռներն ու էնտեղ թողնենք, մենք ետ գանք մեր գործին։ Ճամփեն չեն դտնիլ, որ ետ գան տուն, ու մենք էլ կազատվենք։

— Չէ, ա՛յ կնիկ,— պատասխանում է փայտահատը,— ես էդպես բան չեմ անիլ, իմ սիրտը չի տանիլ, որ ես իմ ձեռքով իմ երեխաներին տանեմ մենակ թողնեմ անտառում, վերջապես գազանները կըհարձակվեն ու կըպատառոտեն նրանց։

— Ը՛հ, հիմար,— ասում է կինը,— էսպես թե էնպես չորս էլ սովամահ կորչելու ենք, էն ժամանակ դնա ու դագաղների համար տախտակ տաշի...— Ու հանգիստ չի տալի մարդուն, մինչև որ չի համաձայնվում իրեն հետ։

— Բայց էլի մեղքս գալիս է խեղճ երեխաների վրա,— ասում է փայտահատը, կնոջ հետ համաձայնվելուց հետո։ Իսկ երեխաների քունը սովից չի տանում, լսում են ամեն բան, ինչ որ խորթ մերը ասում է իրենց հորը։

Աղի-աղի լաց է լինում Գրետելը ու դառնում Հենչելին.

— Մենք կորանք, Հե՛նչել։

— Սո՛ւս կաց, Գրետել ջան,— ասում է Հենչելը,— դարդ մի՛ անիլ, ես սրա ճարը գիտեմ։

Եվ ահա մեծերը քնում են թե չէ, Հենչելը վեր է կենում, իր շորերը հագնում, դուռը բաց է անում ու ծկում փողոց։ Լուսինը պայծառ լուսավորում էր ու իրենց տան առջևը ցըրված սիպտակ լափուկները արծաթի փողի նման շողշողում էին։ Հենչելը կռանում է, ու գրպանն ինչքան տանում է, էդ քարերով լցնում է։ Հետո վերադառնում է տուն։ Գրետելին ասում է.

— Հանգիստ կաց, քույրիկ ջան։ Քնի՛ր, աստված մեզ չի կորցնիլ։— Ու նորից պառկում է իր անկողնում։

Առավոտը ծեգում է թե չէ, արևածագից առաջ, խորթ մերը գալիս է երեխաներին զարթեցնում։

— Դե, շուտ արեք, վեր կացեք, ծուլի՛ր, պատրաստվեցեք գնանք անտառը փետ բերելու— Հետո ամեն մեկին մի-մի կտոր հաց է տալիս ու պատվիրում.

— Ահա էս ձեզ տալիս եմ ճաշի համար. տեսեք, մինչև ճաշը չուտեք, թե չէ, միևնույն է, հետո էլ ոչինչ չիք ստանալու։

Գրետելը հացը դնում է գրպանը, որովհետև Հենչելի գրպանները լիքն էին քարերով։ Հետո վեր են կենում ու ճանապարհ են ընկնում դեպի անտառը։

Մի քիչ որ անց է կենում, Հենչելը կանգ է առնում ու նայում է ետ՝ դեպի իրենց խրճիթը, ու շարունակ էդպես ետ է մնում։ Հերն ասում է.

— Հենչել, ի՞նչ ես գու շարունակ ետ մտիկ տալիս ու ետ մնում, հորանջելու ժամանակ չի, տանիրդ ժաժ տուր։

— Հայրի՛կ, ես մեր սիպտակ կատվին եմ մտիկ տալի, ա՜յ, էնտեղ կտերը նստել է, կարծես թե մեզ վերջին ճանապարհն է ասում։— Խորթ մերը էստեղ խոսքը կտրում է.

— Ապուշ, իսկի էլ էն մեր կատուն չի, էն կտուրի վրի սիպտակ ծիծեղույզն է, որ փայլում է արևի տակ։— Իսկ Հենզելը կտուրի վրա նայելու մասին իսկի չէր էլ մտածում, նա ետ ընկնելով իր գրպանի սիպտակ քարերն էր ցանում ճամփին։

Հենց որ հասնում են անտառի խորքը՝ հերն ասում է.

— Դե՛, երեխե՛ք, փետ հավաքեցեք, ձեզ համար կրակ անեմ, որ չըմրսեք։— Ջեռաց Հենզելն ու Գրետելը չախ են հավաքում, բերում կիտում։ Ջախը վառում են, բոցը վեր է բարձրանում։ Խորթ մերը ասում է.

— Դե երեխեք, դուք կրակի կողքին պառկեցեք ու հանգըստացեք, իսկ մենք գնանք մի քիչ հեռու փետ անենք. պրծնենք թե չէ, կըգանք ձեզ էլ կըվերցնենք, միասին կըգնանք տուն։

Հենզելն ու Գրետելը կրակի կողքին նստում են, ճաշելու ժամանակն էլ որ գալիս է, ամենքն իրենց հացի կտորն ուտում են։ Եվ որովհետև կացնի ձեն էին լսում, հավատացած էին, որ իրենց հերը մոտիկ մի որևիցե տեղ է։ Բայց որ թրխկացնում էր, էն կացինը չէր, մի կոճղ էր, որ փայտահատը կապել էր մի չոր ծառի. քամուց պտում էր գալիս, զարկում ծառի բնին ու թրխկացնում։ Ու էսպես, երեխեքը երկար-երկար նստում են, աչքները հոգնածությունից փակվում են իրանց փրանց, ու խորը քնում են։

Մին էլ վեր են կենում, տեսնում են՝ արդեն մութ դիշեր է։

— Ո՞նց պետք է էս անտառից դուրս գանք, Հե՛նզել։

Հենզելը սիրտ է տալիս.

— Մի քիչ կաց, հրես լուսնյակը դուրս կըգա՝ ճանապարհը կըգտնենք։

Հենց որ լուսինը դուրս է գալիս, Հենզելը քրոջ ձեռքը բռնում է ու պտում իր ցանած քարերով, որոնք արծաթի փողերի նման պսպղում էին ու ցույց տալիս ճանապարհը։

Ամբողջ գիշերը էսպես մինչև լույս գնում են ու լուսաբացին հասնում են իրենց տունը։ Դուռը ծեծում են. խորթ մերը բաց է անում, ու թեև շատ է զարմանում, որ տեսնում է Հենզելն ու Գրետելն են, բայց ասում է.

— Ա՛յ դուք շար երեխեք, էսքան ժամանակ ի՞նչ եք անտառում քնել ու մնացել, մենք էլ կարծում էինք՝ էլ չենք ուզում մեզ մոտ վերադառնաք։

Իսկ հերն ուրախանում է, որովհետև նրա սիրտը ցավում էր, որ իր երեխաներին մենակ անտառում էր թողել։

Մի քիչ ժամանակ անց կենալուց ետը, նորից սով է ընկնում ամեն տեղ, ու նորից երեխաները լսում են, թե ինչպես իրենց խորթ մերը գիշերը հորն ասում է.

— Էլ ետ ինչ ունեինք-չունեինք կերանք։ Մենակ մի կես հաց է մնացել, էն էլ որ կերանք՝ մեր բանը պրծած է։ Պետք է էս երեխանցը հեռացնենք։ Տանենք անտառն, էս անդամ ավելի խորը, որ էլ չըկարողանան ճամփա գտնեն ու ետ գան, թե չէ էլ մեզ փրկություն չըկա։

Էս բանը քարի նման ճնշում է հոր սիրտը, ու միտք է անում.

— Ավելի լավ է էն մնացած վերջին պատառն էլ բաժանի իր երեխաների հետ։

Բայց ինչ որ ասում է, կինը ոչ մի բան չի ուզում լսի. հենց մի գլուխ հայհոյում է ու նախատում։ Դե ով որ այրն ասել է, բենն էլ պետք է ասի։ Փայտահատն էլ, որ մի անգամ արդեն կնոջ հետ համաձայնել էր, երկրորդ անգամ էլ պետք է համաձայներ։

Իսկ երեխաները դու մի ասել քնած չեն, ու էս բոլորը լսում են։ Մեծերը քնում են թե չէ, Հենզելը տեղից վեր է կենում, ուզում է առաջվա նման էլի դուրս գնա պաշարի համար գրպանը լափուկներով լցնի, խորթ մերը դուռը փակած է լինում, չի կարողանում դուրս գնա, բայց էլի քրոջն ամեն կերպ սիրտ է տալիս.

— Լաց մի լինիր, Գրետել ջան, դու հանգիստ քնիր քեզ համար։ Աստված ողորմած է, մեզ չի կորցնիլ։

Առավոտը ծեղին խորթ մերը գալիս է տեղներիցը վեր կացնում։ Ամեն մեկին մի կտոր հաց է տալիս, հացի կտորն

Էլ առաջվա տվածից ավելի փոքր։ Եվ ահա անտառը պնակիս ճամփին Հենզելը գրպանում շարունակ մանրում է իր հացի կտորը, շուտ-շուտ ետ մնում ու ցանում ետևներից։ Հերն ասում է.

— Հենզել, դու քա՞նի կանգնես ու շորս կողմի վրա հորանջես. ճամփեդ դնա էլի՞։

— Հայրի՛կ, ես մեր սիպտակ աղավնուն եմ մտիկ տալիս, որ հրեն հա՞ մեր տանիքին նստած՝ կարծես թե ինձ բարև է ղրկում։

— Հիմա՛ր,— կանչում է մերը,— էն իսկի էլ քո աղավնին չի, էն սիպտակ ծխնելույզն է արևի տակ սիպտակին տալիս։

Իսկ Հենզելն էգ ժամանակ հացի փշրանքները հենց ղցում է ու ղցում իրենց ճամփին։

Երեխաներին տանում են անտառը, էնպես մի խորը տեղ, որ իրենց օրում չէին եղած. էնտեղ էլ կրակ են անում, ու խորի մեջն ասում է.

— Երեխե՛ր, դուք էստեղ նստեցեք, ու, թե քունեիդ կըտանի, քնեցեք. իսկ մենք մի քիչ ավելի խորը գնանք, փետ հավաքենք, հետո իրիկունը, երբ որ գործնենս կըվերջացնենք, կըգանք ձեզ էլ կառնենք ու կերթանք տուն։

Ճաշի ժամանակը որ հասնում է, Գրետելը իր հացի կտորը բաժանում է Հենզելի հետ, որովհետև Հենզելն իր հացը ճանապարհին փշրել էր։ Հետո նստում են. իրիկունն էլ վրա է հասնում, բայց ոչ ոք չի գալիս խեղճ երեխաների ետևից։ Զարթնում են կես-գիշերին։ Հենզելը սկսում է սիրտ տալ իր քրոջը.

— Գրետել ջան, սպասիր մինչև լուսինը դուրս գա, էն ժամանակ կերևան հացի փշրանքները, որ ես ճամփին շաղ եմ տվել. նրանցով կըգանենք մեր ճամփեն ու կըգնանք տուն։

Լուսինը դուրս է գալիս թե չէ, երեխեքը ճամփա են ընկնում ետ դեպի տուն, բայց ոչ մի փշրանք չեն գտնում, որովհետև դաշտերի ու անտառների հաղարավոր թռչունները վեր էին քաղել։ Իսկ Հենզելը շարունակ Գրետելին ասում է.



— Ինչպես որ լինի, մենք կըգտնենք ճանապարհը...

Բայց ճանապարհ գտնել չեն կարողանում։ Թափառում են գիշերը մինչև լուս, հետո ամբողջ օրը առավոտից մինչև իրիկուն, ոչ մի կերպ չեն կարողանում անտառից դուրս գան. հետն էլ սովում են, որովհետև ուտելու ոչ մի բան չեն ունենում, բացի մի քանի մորին, որ էստեղ-էնտեղ կարմրին էին տալիս խոտերում։ Վերջապես, երբ որ էնքան հոգնում են, որ երկուսի ոտներն էլ թմրում են, մի ծառի տակի պառկում են, քնում։ Բացվում է երրորդ օրվա առավոտը, ինչ որ երեխեքը թողել էին իրենց հորական տունը։ Նորից ճանապարհ են ընկնում դեպի տուն, բայց ամեն մի քայլափոխով միայն անտառի խորքն են մտնում ավելի ու ավելի խորը, և եթե շուտով օգնություն չհասներ, անպատճառ պետք է կորչեին։

Կեսօրին տեսնում են մի ծառի ճյուղին մի սիպտակ սիրուն թռչուն։ Էս սիպտակ սիրուն թռչունը էնպես լավ է երգում, որ երեխեքն ակամայից մարում են տեղներն ու ականջ են դնում նրան։ Երգում է թե չէ, թևին է անում, երեխանց կողքից թռչում նստում մյուս ծառին, երեխաներն էլ նրա ետևից էսպես գնում են, գնում, մինչև որ հասնում են մի տնակի։ Էս տնակի տանիքին թռչունը իջնում է։ Երեխեքը տնակին մոտենում են, տեսնում են, ինքը տունը ամբողջովին հացից է շինած, կտուրը գաթից, իսկ լուսամուտները թափանցիկ շաքարից։

— Ահա՛, հենց սրանից էլ կսկսենք,— ասում է Հենզելը.— մի լավ բեֆ տնենք։ Սա տանիքից մի կտոր կոտրեմ, դու ես լուսամուտից կեր, Գրետել. ով գիտի ի՞նչ անուշ է, չէ՞։

Ու Հենզելը ձգվում է դեպի վերև, տանիքից մի փոքրիկ կտոր է կտրում, Գրետելն էլ կռանում է, սկսում է լուսամուտի ապակին ուտել։ Հենց էս ժամանակ, ներսից մի քաղցր ձեն է գալիս.

— Կը՛րծ, կը՛րծ, կը՛րծ, խը՛զ, խը՛զ, խը՛զ,
Էս ո՞վ է կրծում տունս։

Երեխեքը պատասխանում են՝

Էս քամին է անում խիստ,
Զարհուրելի անհանգիստ։

Ու առանց սրանից շփոթվելու շարունակում են ուտել։ Հենզելին տանիքն էնքան դուր էր եկել, որ մեծ կտոր կտրեց, իսկ Գրետելը լուսամուտից հանեց մի ամբողջ ապակի, տեղն ու տեղը նստեց ու անուշ-անուշ ուտում էր։

Մին էլ հանկարծ դռները ետ են բացվում, ու իր գավազանին հենված դուրս է գալիս մի պառա՜վ-պառավ կին։ Հենզելն ու Գրետելը էնքա՜ն են վախենում, էնքա՜ն են վախենում, որ պառառները ձեռներիցը վեր են գցում։ Իսկ պառավը գլուխը շարժելով առաջ է գալիս.

— Վո՜ւյ, երեխեք ջան, էդ ո՞վ բերեց ձեզ էստեղ։ Ներս եկե՛ք, եկե՛ք ինձ մոտ կացեք, մի՛ վախենաք, ոչ մեկիդ վնաս չեմ տալ։

Ասում է, թաթերիցը բռնում ու ներս տանում։ Տանում է լավ նախաճաշ է տալիս. էլ կաթ, շաքարահաց, էլ խնձոր, էլ ընկույզ։ Հետո երկու տեղ է գցում մաքուր, ճերմակ։ Հենզելն ու Գրետելը որ պառկում են՝ էնպես է թվում, թե դրախտն ընկան։

Դու մի՛ ասիլ՝ պառավն էսպես բարի, փաղաքուշ է ձևանում, բայց իսկապես մի չար կախարդ է եղել, ամեն կերպ հետևում է երեխաներին և գիտմամբ էլ տունը հացից է շինել, որ նրանց հեշտ գրավի դեպի իրեն։ Ով ճանկն է ընկնում, սպանում է, եփում, լափում, էդ նրա համար մի ուրախություն է։

Կախարդների աչքերը սովորաբար կարմիր են լինում ու հեռու չեն տեսնում, բայց զարմանալի սուր հոտառություն են ունենում, ճիշտ գիշատիչ գազանների պես։ Անց կենող մարդու հոտը հեռվից են իմանում։ Երբ որ Հենզելն ու Գրետելը նրա տնակի մոտերքը թափառելիս են լինում, նա հեռվից արդեն նրանց հոտն առնում է, շարախնդաց ծիծաղում ու վրոնչում.



— Է՜, սրանք արդեն ճանկումս են... սրանք էլ ինձանից չեն պրծնի...

Առավոտը ծեգին, երեխաներից առաջ, չար կախարդը մի շուտով տեղիցը վեր է թռչում ու երբ տեսնում է նրանց էնպես խաղաղ քնած, լիքը, վարդագույն թշերով, իրեն-իրեն մմռոում է.

— Ուխա՜յ, ինչ անուշ պատառներ են...

Հենզելին բռնում է իր ոսկրոտ ձեռներով, քարշ է տալիս, տանում հավանոցը գցում, վանդակավոր դուռը փակում ու թողնում էնտեղ գոռա, ինչքան սիրտը կուզի։ Ինչքան էլ գոռա՝ էլ ի՞նչ պետք է անի։ Հետո գնում է Գրետելի ետևից, հրում է ու ճրզճրզում.

— Դե՛, շո՛ւտ, վե՛ր կաց, ծո՛ւլ աղջիկ։ Գնա ջուր բեր, եղբորդ համար մի որևէ համով բան եփիր։ Հրեն հավանոցում փակել եմ, պետք է նրան կերակրել, որ մի լավ շաղանա ինձ համար... Պետք է շաղանա, որ ուտեմ...

Գրետելն ուզում է լաց լինի, բայց էդ բոլորը զուր էին. մնում է սուտ ու փուտ պառավի հրամանները կատարել։ Ու սկսում է Հենզելի համար համով կերակուրներ եփել, իսկ իրեն, Գրետելին բացի չոր ոսկորներից բան չէր տալիս։

Ամեն առավոտ պառավը գնում է հավանոցի դուռը կտրում ու կանչում.

— Հե՛նզել, մատդ դեսը մեկնիր, տեսնեմ չաղացե՞լ ե թե չէ։

Հենզելը մատի տեղակ միշտ մի ոսկոր է դուրս մեկնում, պառավն էլ որ լավ չի տեսնում, չի կարողանում ջոկի, մտածում է, որ էս Հենզելի մատն է, ու զարմանում է, թե ինչպես է, որ Հենզելն իսկի չի չաղանում։

Էսպես շորս շաբաթը անց է կենում, Հենզելը էրի մնում է նիհար. պառավի համբերությունը հատնում է ու էլ չի ուզում սպասի։

— Դե՛, հա՛յդե, Գրետե՛լ, գնա ջուր բեր. չաղ լինի թե նիհար, միևնույն է, էգուց Հենզելին մորթելու եմ, եփեմ ուտեմ։

Ինչքա՜ն է դարդ անում խեղճ Գրետելը, ինչքա՜ն է

դարդ անում ջուր բերելիս, արտասուքը էն ջրի նման աչքիցը թափվում է։

— Ողորմած աստվա՛ծ, դու մեզ օգնություն հասնես,— կանչում է նա։— Երանի թե անտառումը մեզ գազանները պատառոտեին, գոնե ես ու Հենգելը միասին կըլինեինք։

— Ջուր սիրտդ մի՛ մաշիր,— ասում է պառավը,— միևնույն է, էլ ոչ մի բան չի օգնի։

Առավոտը վաղ Գրետելը պետք է վեր կենար, պղինձը կրակին դներ, ջրով լցներ ու տակին կրակ աներ։

— Ամենից առաջ դեռ մի թխվածք անենք. ես արդեն փուռը վառել եմ ու խմորը հունցել։

Ասում է պառավն ու տանում է խեղճ Գրետելին փռան առաջը կանգնեցնում, հրում է դեպի բոցավառ փռան բերանը։

— Մտի՛ր,— ասում է,— գնա տես, փետերը լա՞վ են դարսած, լա՞վ են էրվում, խմորը գնդելու ժամանա՞կն է՝ թե չէ։

Ուզում է Գրետելը կռանա թե չէ, բոթի, դցի փուռը, ծածկոցը դնի, որ Գրետելը փռումը խորովվի, հետո հանի ուտի։ Բայց Գրետելը ղլխի է ընկնում, թե պառավի մտքումը ինչ կա, ասում է.

— Ես չեմ իմանում ինչպես անեմ, որ մտնեմ մեջը...

— Հիմար անասուն,— բարկանում է պառավը,— չե՞ս տեսնում ահագին փռան բերանը. ը՛հը՛, մտիկ արա, քիչ է մնում ես էլ մտնեմ մեջը...

Ու հիշտ օր, տմբտմբալով մոտենում է փռանը, մինչև անգամ գլուխն էլ փռան բերնից ներս է կոխում։ Էստեղ Գրետելը հանկարծ ետևից էնպես է ներս բոթում պառավին, որ ընկնում է փռան մեջը, իսկույն ետևիցը ծածկոցը ամուր դնում է ու փակիչը ետևից դցում։

Պառավը ոռնում է, ո՞նց է ոռնում... Բայց Գրետելը նա է վազում, ու անխիղճ վիճակն էլ էնպես էրվում է պրծնում։

Գրետելը իսկույն վազում է Հենգելի մոտ, հավանոցի դուռը բաց է անում ու աղաղակում.

— Հենգե՛լ, Հենգե՛լ, մենք ազատվեցինք, չար պառավը կործանվեց...



Դուռը բացվում է թե չէ, թռչունի նման, որ վանդակում փակված կըլինի ու դուռը բաց կանեն, Հենգելը դուրս է թռչում։ Ո՞նց են ուրախանում երկուսով, ո՞նց են ուրախանում... իրար ճառով են ընկնում, թռչկոտում են, համբուրվում են, և որովհետև ոչ ոքից վախ չունեին, գնում են մտնում պառավի տնակը, իսկ պառավի տնակի բոլոր անկյուններում դարսված են լինում մարգարտով ու անգին քարով լիքը սնդուկները։

— Էս մեր դռան լափուկներից հո ավելի լավն են,— ասում է Հենգելն ու գրպանները ինչքան որ կատանեին՝ լցնում է, իսկ Գրետելն ասում է.

— Ես էլ եմ ուզում մի բան տանեմ տուն,— ու նա էլ գոգնոցն է լցնում պոնգի պռունգ։

— Դե հիմի գնանք հեռանանք էստեղից,— ասում է Հենգելը։— Քանի լուս է՝ պետք է դուրս դանք էս կախարդված անտառից...

Մի քիչ որ ճանապարհ են կտրում—հասնում են մի գետակի։

— Մենք ի՞նչպես անցնենք էս գետն,— ասում է Հենգելը։— Ոչ անց ունի, ոչ կամուրջ։

— Գոնե մի նավակ էլ չկա,— վրա է բերում Գրետելը։— Ահա մի սիպտակ բադիկ է լողում. արի խնդրեմ, գուցե մեզ օգնի անց կացնի... — ու կանչում է.

Բադիկ, բադի՛կ, սիրուն բադիկ,
Լող տուր դեպ մեզ, արի մոտիկ.
Շվարել ենք Հենգելն ու ես,
Առ քո մեջքին, անց կացրու մեզ։

Բադիկը մոտենում է ափին, Հենգելը նստում է բադիկի մեջքին ու քրոջը կանչում է, որ նա էլ գա դավակին նստի։

— Չէ,— պատասխանում է Գրետելը,— բադիկը չի կարող երկուսիս էլ միասին տանի, ծանր կըլինի։ Ջոկ-ջոկ կըտանի։

Էդպես էլ անում է բարի թռչունը։

Ջուրը որ անց են կենում, ու մի քիչ ճանապարհ են գնում, անտառը հեռվեռեռ ծանոթ է թվում, ու, վերջապես, նկատում են իրենց հորական տունը։ Էստեղ սկսում են վազել ինչքան ոտներումը ուժ ունեին, ներս են թափվում ու ընկնում են իրենց հոր վզովը։

Հերն էլ մի հանգիստ ծամ չէր ունեցել էն օրվանից, ինչ երեխանցը թողել էր անտառում, իսկ խորթ մերը արդեն մեռել էր։

Գրետելը իր գոգնոցը բաց է թողնում ու միջի եղածը հոր առաջին շուռ տալիս, էնպես որ մարգարիտները ու անգին քարերը շաղ են անցնում տանովը մին, իսկ մյուս կողմից էլ Հենդելն է բուռնե բուռը հանում ու թափում իր գրպանից։

Էստեղ էլ ամեն ցավ ու հոգս վերջանում են, ու ապրում են միասին ուրա՜խ ու անհոգ...

---

# 1915

## ԿԱՐՄՐԻԿԸ

Լինում է չի լինում՝ մի փոքրիկ սիրուն աղջիկ է լինում։ Ով մի անգամ տեսնում է՝ սիրում է էս աղջկանը, բայց ամենից շատ իր տատն է սիրում. էլ չի իմանում ինչ անի, որ թոռան սիրտը շահած պահի։

Մի անգամ էլ մի կարմիր գլխարկ է նվիրում, էս կարմիր գլխարկն էնքան է սազ գալիս էս աղջկանը, որ էլ չի ուզում գլխին ուրիշ գլխարկ դնի բացի կարմրից։ Կարմիր շորեր էլ հագցնում են, ոտից մինչև գլուխ կարմրում է, դրա համար էլ անունը դնում են Կարմրիկ։

Մի անգամ էլ մերը Կարմրիկին ասում է.

— Ա՛ռ ես գաթեն ու էս գինին տար տուր տատին. հիվանդացել է, թուլացել է, թող ուտի, խմի, մի քիչ ուժի գա։ Դե՛, քանի օրը շոգ չի, գնա՛, միայն կարգին, կամաց գնա, ճամփից էլ չըծռվես, թե չէ վեր կընկնես շիշը կըշարդես, էլ տատի համար բան չի մնալ։ Տատի մոտ էլ որ մտնես, չըմոռանաս՝ տատին բարևես։ Էնտեղ էլ հանգիստ կաց, դես ու դեն չըվազվզես։

— Հա՛, մայրի՛կ, ինչպես ասում ես՝ էնպես կանեմ,— խոսք է տալիս Կարմրիկն ու գնում։

Տատն ապրելիս է լինում դյուղից մի կես ժամ հեռու, անտառի մեջ։ Կարմրիկը հենց անտառն է մտնում թե չէ, գեմը դուրս է գալիս մի գել։ Բայց Կարմրիկը չի իմա-

նում, թե գելն ինչ սարսափելի գազան է, ու իսկի չի էլ վախենում։

— Բարո՛վ, Կարմրի՛կ,— ասում է գելը։

— Բարով, Գել-ախպեր։

— Էսպես վաղ-վաղ ո՞ւր ես գնում, Կարմրի՛կ։

— Գնում եմ տատիս մոտ։

— Էգ ի՞նչ ես տանում գոգնոցումդ։

— Գաթա ու գինի եմ տանում։ Մենք երեկ գաթա թխեցինք՝ տատիկս հիվանդացել է, թուլացել է, տանում եմ, որ գաթին ուտի, գինին էլ խմի՝ ուժի գա։

— Քու տատը ո՞րտեղ է ապրում։

— Անտառում, մի քառորդ ժամի ճամփա էլ կա մինչև էնտեղ։ Էնտեղ երեք կաղնի ծառ կա, էն ծառերի տակին է նրա տունը, ա՛յ էն, որ չորս կողմն էլ տեղնի ցանկապատ ունի. հիմի կարելի է հիշես։

Կարմրիկն էսպես խոսում է, իսկ գելն իրան-իրան միտք է անում.

— Էս փոքրիկ, քնքուշ աղջիկը ի՞նչ անուշ պատառ է... սա ավելի համով կըլինի, քան թե պառավը։ Ապա, քեզ տեսնեմ, մեր տղա, բանն էնպես խելքով բռնի, որ ջուխտն էլ ճանկդ գցես։

Մի քիչ Կարմրիկի հետ գնում է ու ասում.

— Մի դեսը մտիկ արա է՞, Կարմրի՛կ, տե՞ս ի՞նչ հիանալի ծաղիկներ են փռված մեր չորս կողմը։ Մի չես կանգնում ու չես հիանում սրանցով։ Մի լսի՛ր, տես թռչուններն ի՞նչ ուրախ երգում են։ Հենց ուղիղ քշած, սուս ու փուս գնում ես, կարծես թե ուսումնարան ես գնում։ Մի տես, ի՞նչ ուրախություն է անտառում...

Էստեղ գլուխը վեր է քաշում Կարմրիկը, չորս կողմն աչք ածում, տեսնում է ծառերի տերևների արանքից էստեղ-էնտեղ ներս են թափանցում ու խաղում են արևի շողքերը, իսկ կանաչ խոտի մեջ ցրիվ բարձրանում են գույնզգույն անհամար ծաղիկներ։ Մտքումն ասում է՝

— Տատի համար որ մի փունջ ծաղիկ էլ տանեմ, հո շատ դուրախանա։ Դեռ ժամանակ էլ կա, կըհասնեմ...



Ասում է, ճամփից դուրս է գալիս անտառն ընկնում ու սկսում ծաղիկ քաղել։ Մինը պոկում է, տեսնում է նրա կողքին ավելի գեղեցիկն է ծաղկում, հիմի էլ էն կողմն է վազում. էսպիսով էլ ավելի ու ավելի հեռու, անտառի խորքն է մտնում։

Իսկ էս ժամանակ գելը կարճ ճամփով տատի տունն է հասնում ու դուռը ծեծում։

— Էդ ո՞վ է։

— Կարմրիկն եմ, քեզ համար գինի ու գաթա եմ բերել, դուռը բաց արա։

— Դռան փակիչին հուպ տուր, կըբացվի,— ներսից ձեն է տալիս տատը։— Ես թույլ եմ, չեմ կարող վեր կենալ։

Գելը դռան փակին հուպ է տալիս, դուռը ետ է բացվում։ Ներս հարձակվում է անկողնի վրա ու պառավին ողջողջ կուլ տալիս։ Հետո նրա շորերը հագնում է, նրա գլխակապիչը կապում, անկողնում պառկում ու վերմակը քաշում վրան։

Իսկ Կարմրիկն էնտեղ մի ծաղկից մյուս ծաղիկն է վազում, ու երբ որ էնքան շա՜տ-շա՜տ ծաղիկ է քաղում, որ տեսնում է էլ չի կարող տանի, նոր տատը միտն է ընկնում. դարձյալ ընկնում է ճամփեն, վազում դեպի տատի տունը։

Որ հասնում է տատի տունը՝ զարմանում է, թե դուռն ինչու է կրընկի վրա բաց։

Ներս է մտնում, սիրտը մի վախ է ընկնում։ Ասում է՝ «Տեր աստված, միշտ իմ տատի մոտ էնպես լավ էր, էսօր ինչո՞ւ եմ էսպես վախենում...»։ Մտքումն էսպես է ասում ու ձեն է տալիս.

— Բարի լո՛ւս, տա՛տի ջան։

Պատասխան չկա։ Մոտենում է տատի անկողնին, վերմակը ետ է քաշում։ Տեսնում է տատը պառկած է, բայց չի իմանում ինչու—գլխակապիչը ներքև է քաշել ու էնպես տաբօրինակ է նայում, որ...

— Վա՜յ,— ասում է,— տա՛տի, էդ ի՞նչ ահագին ականջներ ունես...

— Էս նրա համար է, որ քեզ լավ լսեմ, բա՛լիկս...

— Վա՜յ, տա՛տի, էդ ի՞նչ ահագին աչքեր ունես...

— Էս նրա համար է, որ քեզ լավ տեսնեմ, բա՛լիկս...

— Վա՜յ, տատի, էդ ի՞նչ ահագին ձեռներ ունես...

— Էս նրա համար է, որ քեզ ավելի լավ գրկեմ, բա՛լիկս...

— Բայց, տա՛տի, էդ ի՞նչ սարսափելի մեծ բերան ունես...

— Իսկ էս նրա համար է, որ քեզ շուտով ուտեմ...

Ասում է գելն ու տեղից ներքև թռչում, ձեռաց կուզ է տալիս խեղճ Կարմրիկին։

Սրան էլ կուզ է տալիս, կշտանում է ու նորից անկողնում պառկում, խռմփացնելով քնում։ Հենց էս ժամանակ, դու մի ասիլ, մի որսկան էդ պառավի տան մոտից անց է կենում։ Ասում է.

— Էս պառավն ինչո՞ւ է էսպես խռմփացնում, մի տեսնեմ, չլինի թե հետը բան է պատահել...

Ներս է մտնում, մահճակալին մոտենում, տեսնում է պառավի տեղը պառկած գելը։

— Հ՜ը, վերջապես ճանկս ընկար, անիծվա՛ծ, վաղուց էի քեզ մահ գալիս։

Ասում է որսկանն ու մին ուզում է հրացանով զարկի, մին էլ մտածում է, թե կարելի է պառավին կուզ է տվել ու կարելի է դեռ նրան փրկել։ Էլ հրացանով չի զարկում, դանակը առնում է ու սկսում է փորը ճղել։ Մի քիչ ճղում է թե չէ՝ մի կարմիր գլխարկ է երևում, մի քիչ էլ ճղում է— Կարմրիկը կենդանի-կենդանի դուրս է թռչում ու կանչում.

— Վա՜յ, ի՞նչքան վախեցա... ի՞նչ մութ էր գելի փորումը...

Նրա ետևից էլ տատն է դուրս գալիս, նա էլ էր դեռ կենդանի, բայց դժվար էր շոնչ քաշում։

Էստեղ Կարմրիկը շտապով մեծ-մեծ քարեր է հավաքում, էն քարերով բերում են գելի փորը լցնում։ Գելը զարթնում է, ուզում է տեղիցը թռչի, դուրս փախչի, բայց քարերից այնքան ծանրացել էր, որ տեղն ու տեղը վեր է ընկնում, գետնովը դիպչում, սատկում։



Ամենքն էլ էնպես ուրախանում են, էնպես ուրախանում են, որ էլ լեզվով ասել չի լինի։ Որսկանը գելի մորթին պոկում է, վեր կալնում գնում; պառավը նստում է, սկսում է Կարմրիկի բերած գաթեն ուտել, գինին խմել ու քիչ-քիչ ուժի գալ, իսկ Կարմրիկը մտածում է.

— Չէ, էս մինը բավական էր, էլ երբեք ճամփից դուրս չեմ գալ ու մենակ անտառն ընկնիլ, երբ որ մայրիկը չի թողնում։

---

Ասում են սրանից հետո՝ մի անգամ էլ Կարմրիկը երբ որ իր տատի համար թխվածք է եղել տանելիս, մի ուրիշ գել է ուզեցել նրան համոզի, որ ճամփիցը դուրս գա։ Բայց Կարմրիկն զգուշացել է ու իր ճամփեն է գնացել։ Երբ որ տատի մոտ է հասել՝ պատմել է, թե հապա՝ էսպես մի գել պատահեց ինձ ճամփին, բարևեց, բայց էնպես լար աչքով էր նայում, որ թե ճամփի մեջ չըլինեինք, հավատա, թե ինձ ուտեր... Տատն ասել է.

— Վա՜յ, Կարմրիկ ջան, կաց դուռը փակենք, որ չըլինի թե էդ գելը գա հանկարծ։

Մի քիչ կենում են, տեսնում են գելը դուռը ծեծում է ու ձեն է տալիս.

— Տա՛տի, դուռը բաց արա, ես Կարմրիկն եմ, քեզ համար դաթա եմ բերել...

Տատն ու Կարմրիկը ոչ պատասխան են տալիս, ոչ դուռը բաց են անում։ Սրանից հետո գելը մի քանի անգամ էլ տան շորս կողմովը պտույտ է գալիս ու բարձրանում կտուրը։ Էնտեղ սպասում է, թե երբ պետք է իրիկունը Կարմրիկը դուրս գա իրենց տունը գնալու, որ բռնի ուտի։ Տատը գլխի է ընկնում նրա մտքինը։

Դռանը, հենց տան պատի տակին մի մեծ կոթ է լինում ջրով. Կարմրիկին ասում է.

— Կարմրի՛կ ջան, էստեղ մսի խաշու կա, վեր կալ էս խաշուն, տար ածա կոթի մեջը։

Կարմրիկը մսի խաշուն տանում է ածում դրան մեծ կոթի մեջը, էնքան, որ կոթը պռնգե-պռունգ լցվում է։

Էս խաշվի հոտը վեր է բարձրանում ընկնում գիլի քիթը։ Գելը փնչացնում է, վերևից սկսում է ծիկրակել, թաքուն նայել դեպի ներքև, վիզը ձգո՞ւմ է, ձգո՞ւմ է, էնքան ձգում է, որ էլ չի կարողանում փրան պահի, թըր՛մփ, ընկնում է ուղիղ կոթի մեջը՝ խեղդվում։ Կարմրիկն էլ ուրախ-ուրախ վեր է կենում գնում իրենց տունը. էն է լինում էն, էլ ճամփին ոչ ոք ձեռք չի տալիս նրան։

---

# ՄՈԽՐՈՏԸ

Մի հարուստ մարդու կին հիվանդանում է։ Տեսնում է մահը մոտենում է՝ կանչում է իր մինուճար աղջկանը, ասում է.

— Զավա՛կս, եղի՛ր լավն ու բարի, էն ժամանակ աստված միշտ քեզ կըլսի, ես էլ երկնքից մարիկ կանեմ քեզ ու անբաժան քեզ հետ կըլինեմ։

Ասում է ու արևը ապրողներին բաշխում, մեռնում։ Աղջիկն ամեն օր գնում է մոր գերեզմանի վրա լաց լինում և մնում է միշտ լավն ու բարի։

Ձմեռը գալիս է. ձյունը սիպտակ սավանով ծածկում է մոր գերեզմանը, իսկ գարնան արևը շողալուն պես հերը նոնակին է ուզում, աղջկա համար խորթ մեր է բերում։ Խորթ մերն հետը երկու աղջիկ է բերում, դրսից սիրուն ու սիպտակ, ներսից շատ սևահոգի։ Ու խորթ աղջկա համար սկսվում են սև օրերը։

— Մի՛թե էս կուսկուսն էլ մեզ հետ միասին պետք է տանը պարապ-սարապ նստի։ Ով ուզում է հաց ուտի— պետք է աշխատի։— Ասում են խորթ քույրերն ու տանիքը դուրս են անում, քշում խոհանոցը։ Լավ շորերն ու կոշիկները հագիցը հանում են, հին գուրշեր ու փետե ոտնամաններ են հագցնում. ծափ են տալիս՝ վրեն ծիծաղում.— «Մի էս իշխանուհուս մարիկ արեք է՞, տեսեք՝ ոնց է զուգվել, դարդարվել...»

Խեղճ աղջիկն առավոտից մինչև իրիկուն պետք է խոհանոցում շարչարվեր։ Առավոտը ծեգին պետք է վեր կենար ջուր կրեր, կրակ աներ, կարեր, կարկատեր, եփեր, թափեր։ Խորթ քույրերն էլ շարունակ նրան վշտացնում էին ու վիրավորում, ծաղրում էին, ընտրած ոսպն ու սիսեռը շաղ էին տալիս, մոխիրն էին ածում, ու նա նորից պետք է նրստեր հատիկ-հատիկ հավաքեր։

Իրիկուններն էլ, երբ որ բանը վերջացնում էր, անկողին չուներ, կրակի առաջին՝ մոխրի վրա էր պառկում։ Դրանից էլ միշտ մոխրոտ էր լինում ու դրա համար էլ քույրերը ավելի անունը դրին Մոխրոտ։

Մի անգամ էս Մոխրոտի հերը, ուրիշ տեղ գնալիս, խորթ աղջիկներին հարցնում է, թե՝ ի՞նչ եք ուզում, որ ձեզ համար բերեմ։ Մինն ասում է — «Ինձ համար սիրուն շորեր բեր»։ Մյուսն էլ, թե — «Ինձ համար մարգարտե մանյակ բեր»։

— Իսկ դու, մոխրոտ ջան, դո՞ւ ինչ կուզես, որ քեզ համար բերեմ։

Մոխրոտն էլ ասում է.— Հա՛յրիկ, էն ծառի ճյուղը, որ վերադարձիդ կըդիպչի քո գլխարկին, էն ճյուղը կտրի ու բեր ինձ համար։

Հերը գնում է խորթ աղջիկների համար լավ շորեր է առնում, մարգարտե մանյակ ու թանկագին քարեր է առնում ու ճամփա ընկնում դեպի տուն։ Վերադարձին մի ծմակով անց կենալիս մի ընկուզենու ճյուղ դիպչում է գլխարկին, գլխարկը վեր գցում։ Էն ճյուղն էլ կտրում է հետը վերցնում, որ Մոխրոտին տա։ Տուն է հասնում, խորթ աղջիկների ուզածն իրենց է տալիս, ընկուզենու ճյուղն էլ տալիս է Մոխրոտին։ Մոխրոտը շնորհակալ է լինում հորից, տանում է էն ընկուզենու ճյուղը մոր գերեզմանի վրա տնկում ու լաց է լինում։ Էնքան լաց է լինում, էնքան լաց է լինում, որ արտասուքով էն տնկած ընկուզենու ճյուղը ջրում է։ Ու ընկուզենու ճյուղը դուրս է գալիս, մեծանում, մեծ ծառ է դառնում։

Մոխրոտը օրը երեք անգամ գնում է էն ծառի տակ լաց է լինում ու աղոթք անում։ Ամեն անգամ էլ մի ճերմակ թռչուն



գալիս է էն ծառին վեր գալիս ու, Մոխրոտն ինչ որ սրտով ուզում է, էն սրտով ուզածը վերևից գցում է ներքև։

Մի անգամ էլ թագավորը մի հանդես է սարքում, որ երեք օր երեք գիշեր պետք է քաշեր։ Իր տերությանն բոլոր գեղեցիկ աղջիկներին հրավիրում, հավաքում է էն հանդեսին, որ իր տղեն նրանց միջից իրեն համար հարսնացու ընտրի։ Խորթ քույրերը որ իմանում են իրենք էլ են հրավիրված, ուրախանում, աշխարհքով մին են լինում, Մոխրոտին ձեն են տալիս.— «Արի՛, Մոխրո՛տ, արի՛, մեր մազերը սանրի, մեր կոշիկները սրբի, մեր կոճակները մեր դցի, գնում ենք թագավորի պալատը խնջույքի»։

Ինչ որ ասում են, ամեն բան Մոխրոտը կատարում է, բայց սիրտն ուզում է, որ ինքն էլ պար գա, ինքն էլ ուրախանա. խորթ մորը խնդրում է, որ իրեն էլ հետները տանեն պալատը։

— Ը՛հ, հողեմ գլուխդ,— ճչում է խորթ մորը,— ակասմակաս՝ էդ մոխրոտ տեղովդ հենց դու էիր պակաս թագավորի պալատում։ Ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման, դու էլ ես ուզում պալատումը պար գա՞ս, տո Մոխրոտ։

Դեռ էդպես խնդիրքը մերժում է, վերջն ասում է.

— Դե լավ. մի ամսա ոսպ եմ ածել մոխիրը, երկու ժամումը թե կըջոկես՝ հետներս քեզ էլ կըտանենք, թե չէ հո՝ չենք տանիլ։

Մոխրոտն էս լսում է թե չէ, եռևի դռնիցը դուրս է թռչում պարտեզը ու կանչում.

«Իմ ընկերնե՛ր, աղունակնե՛ր,
Երկընքի տակ թռչող հավքեր,
Թրռե՛ք, եկե՛ք ամեն կողմից,
Վեր քաղեցեք ոսպը մոխրից.
Լավն՝ ամանը, վատը՝ ձեզ կեր,
Իմ ընկերնե՛ր, թռչուն հավքե՛ր»։

Էս ասելն է լինում։ Մին էլ էն է տեսնում խոհանոցի լուսամուտից երկու ճերմակ աղավնի ներս ընկան, նրանց

*ետևից տատրակները, տատրակների ետևից էլ մնացած թռչունները։ Սրվրվալով իջնում են ուղիղ մոխրի վրա ու, կը՛տ-կը՛տ, կտուցներով սկսում են ոսպը մոխրից վեր քաղել, վատերն ուտել, լավերն ածել ամանի մեջ։ Մի ժամ էլ չի քաշում՝ բոլոր ոսպը ջոկում, հավաքում են, ետ թռչում գնում։ Մոխրոտը ամանն առնում է, ուրախ-ուրախ տանում տալիս խորթ մորը, ասում է՝ հիմի ինձ էլ կըտանի հետը։ Խորթ մերն ասում է.— «Չէ՛, չեմ տանիլ, ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման. ի՞նչպես պետք է պալատումը պար գաս։ Դու խաղք ու խայտառակ կըլինես, մենք էլ քեզ հետ»։*

*Մոխրոտը լաց է լինում։ Էն ժամանակ խորթ մերն ասում է.*

*— Դե լավ՝ երկու աման ոսպը մի ժամում թե մոխրիցը ջոկեցիր, հետներս կըտանենք, թե չէ՝ հո չէ։— Մտքումն էլ ասում է՝ «էս հո իսկի չի կարող անի»։*

*Երկու աման ոսպն ածում է մոխիրը, իսկ Մոխրոտը ետևի դռնից պարտեզն է վազում.*

*«Իմ ընկերնե՛ր, աղունակնե՛ր,*
*Երկընքի տակ թռչող հավքեր,*
*Թրուռ՛ք, եկե՛ք ամեն կողմից,*
*Վեր քաղեցեք ոսպը մոխրից,*
*Լավն՝ ամանը, վատը՝ ձեզ կեր,*
*Իմ ընկերնե՛ր, թռչուն հավքեր»։*

*Կանչում է թե չէ՝ խոհանոցի լուսամուտից թրոթրալով երկու ճերմակ աղավնի են ներս ընկնում, նրանց ետևից տատրակները, տատրակների ետևից էլ մնացած թռչունները։ Սրվրվալով իջնում են մոխրի վրա ու, կը՛տ-կը՛տ, կտուցներով սկսում են ոսպը մոխրից վեր քաղել, վատերն ուտել, լավերն ածել ամանի մեջ։ Մի ժամ էլ չի՛ քաշում, բոլոր ոսպը ջոկում, հավաքում են, ետ թռչում գնում։ Մոխրոտը ամանն առնում է, ուրախ-ուրախ տանում է տալիս խորթ մորը, ասում է հիմի անպատճառ ինձ էլ կըտանի հետը։ Խորթ*



*մերն ասում է.— «Ինչ ուզում ես արա, մին է, քեզ հետներս չենք տանելու. ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման, ի՞նչպես պետք է պալատում պար գաս։ Դու խաղք ու խայտառակ կըլնես, մենք էլ քեզ հետ»։ Ասում է, երեսը շուռ տալիս, իր երկու գոռոզ աղջիկներին առնում գնում։*

*Մոխրոտը տանը մնում է մեն-մենակ։ Վեր է կենում դնում մոր գերեզմանի վրա, ընկուզենու տակին կանգնում ու կանչում.*

*«Ժամ ե՛կ, իմ ծա՛ռ, ձրգիր գառ-վառ*
*Ոսկի-արծաթ շոր ինձ համար»։*

*Կանչում է թե չէ՝ ճերմակ թռչնակը ծառի վրիցը ոսկեկար ու արծաթակար մի ձևոք շոր ու ոտնամաններ է ցցում ներքև։ Մոխրոտն իսկույն հագնում է ու շտապում պալատը։ Արծաթակար ու ոսկեկար ղդեսաը հագին՝ էնքան գեղեցիկ է լինում, որ խորթ մերն ու քույրերը չեն ճանաչում։ Ասում են՝ ով գիտի ինչ թագավորի աղջիկ է։ Մոխրոտն իսկի մտքներովն անց էլ չի կենում. ասում են՝ հիմի նա, տանը նստած, կեղտոտ-կեղտոտ՝ մոխրիցը ոսպն է ջոկում։*

*Թագավորի տղեն որ տեսնում է, իսկույն դեմն է գալիս, ձևոիցը բռնում է, հետը պար է դալիս, ու էլ ձեռը ձեռիցը բաց չի թողնում։*

*Էսպես մինչև իրիկուն պար է գալիս, իրիկունն էլ, որ ուզում է տուն դնա, թագավորի տղեն ասում է.*

*— Ես քեզ ճանապարհ կըդնեմ։*

*Շատ է ուզում իմանա, թե ո՞վ է էն գեղեցկուհին, ի՞նչ տանից է, ո՞ւմ աղջիկն է։ Բայց ճամփին Մոխրոտը հանկարծ թռչում է, մտնում իր հոր աղավնոցը, կորչում։ Թագավորի տղեն սպասում է, մինչև որ Մոխրոտի հերը գալիս է։ Ասում է՝ էն անծանոթ գեղեցկուհին քո աղավնոցը մտավ։*

*Մերոնին միտք է անում.— Չըլինի՞ թե մեր Մոխրոտն է էս գեղեցկուհին...*

*Աղավնոցը քանդում են, տակնուվրա են անում, ոչ Մոխրոտ կա, ոչ ուրիշ օրմին։*

Դու մի՛ ասիլ՝ Մոխրոտը մի կողմից ալավնոցի գլուխն է բարձրացել, մյուս կողմից ներքև թռել ու մի ակնթարթում ընկուզենու տակ կանգնել։ Լնտեղ իր ճոխ զգեստները հանել է գրել մոր գերեզմանի վրա ու թռչնակը ետ է տարել, իսկ ինքը վազել է խոհանոց՝ նորից մոխրի վրա պառկել։ Խորթ մերն ու աղջիկներն էլ գալիս են տեսնում՝ ինչպես որ թողել են, էնպես էլ՝ Մոխրոտը՝ գուրչերը հագին՝ մոխրի վրա պառկած, կողքին էլ ձիթի ճրագը մխում է։

Մյուս օրը հանդեսն էլ ետ նորոգվում է։ Հերը, խորթ մերն ու քույրերը զարձյալ նոր շորեր են հագնում ու գնում, իսկ Մոխրոտը շտապում է իր ընկուզենու տակն ու կանչում։

«Ժած ե՛կ, իմ ծա՛ռ, ձրգիր զառ-վառ
Ոսկի-արծաթ շոր ինձ համար»։

Ճերմակ թռչնակը առաջվանից ավելի գեղեցիկ մի ձեռք շոր է գցում ներքև։ Էս շորերը հագին Մոխրոտը որ չի հայտնվում ինչքո՞ւմ՝ շատաղը պալատի պատերովն է ասալիս, հանդիսականները մնում են բերանները բաց։ Դու մի՛ ասիլ՝ թագավորի տղի աչքն էլ հենց ճամփին է լինում։ Տեսնում է թե չէ՝ դեմն է վազում, ձեռքը բռնում է տանում ու միմիայն նրա հետ է պարում շարունակ։ Ուրիշ պարեկներ էլ որ մոտենում են, ասում է՝ չէ, իմ պարընկերը սա է, միայն սրա հետ պետք է ես պար գամ։

Էլ ետ մութը որ ընկնում է՝ աղջիկն ուզում է գնա իրենց տունը։ Թագավորի տղեն ետևիցը գնում է, որ աչքով պահի, տեսնի թե տա՞ տունն է մտնում։ Մոխրոտը վազում է ընկնում իրենց տան ետևի պարտեզը։ Պարտեզում մի տանձենի է լինում, լիքը հասած, հրաշալի տանձերով։ Սկյուռի նման ճարպիկ էն ծառն է բարձրանում ու ճյուղերի արանքում էնպես է կորչում, որ թագավորի տղեն չի էլ կարողանում նկատի, թե որտեղ թաքնվեց։ Սպասում է, մինչև Մոխրոտի հերը գալիս է։ Ասում է.

— Էն անծանոթ աղջիկը էլ ետ աչքիցս թռավ ու, կարծես թե՝ էս ձեր տանձենուն բարձրացավ...



Հերը միտք է անում.— «Ջրլիեի՞ թե էս մեր Մոխրոտն է...»

Հրամայում է, դացիները բերում են, տանձենին կտրում էն՝ վրեն ոչ ոք չկա։ Մտնում են խոհանոցը. տեսնում են, ինչպես միշտ, դարձյալ մոխրի վրա պառկած է։ Դու մի ասիլ՝ ծառի մի կողմից բարձրացել է, մյուս կողմից իջել, լավ շորերը տարել է տվել թռչնակին, հին գորչը հագել ու էտ ետ եկել մոխրի վրա պառկել։

Երրորդ անգամն են տանջցիք գնում ինչույլ։ Մոխրոտն էլ երրորդ անգամ վազում է մոր գերեզմանի վրա, իր ընկուզենու տակ կանգնում ու կանչում.

«Ժած ե՛կ, իմ ծա՛ռ, ձրգիր զառ-վառ
Ոսկի-արծաթ շոր ինձ համար»։

Էս անգամ ճերմակ թռչնակը մի էն տեսակ ճոխ ու շքեղ զգեստ է գցում ներքև, որ աշխարհքում հողեղեն մարդը ոչ ունեցել է, ոչ կունենա. իսկ ոտնամանները՝ զուտ ոսկուց։

Էս զգեստը հագին, զուգված-զարդարված որ հանդեսի մեջ դուրս է գալիս՝ ամենքն էլ արմանքից ու զարմանքից քչվում, վերանում են։ Իսկ թագավորի տղեն սկսում է հետը պարել, շարունակ պարել, ով որ էլ մոտենում է, ասում է.

— Չէ՛, մենակ ես պետք է պարեմ սրա հետ...

Էլ ետ որ մութն ընկնում է, Մոխրոտն ուզում է գնա, թագավորի տղեն էլ ուզում է ուղեկցի. բայց էնպես ձեռաց ոտնում է ու չբռնում, որ տղեն չի էլ կարողանում ետևիցը հասնի։ Միայն թե թագավորի տղեն էս անգամ խորամանկություն էր բանեցրել։ Հրամայել էր, որ պալատի սանդուղքները ձյութեն։ Սանդուխքները ձյութած են լինում ու, շտապ իջնելու ժամանակ, աղջկա ձախ ոտնամանը կպչում է սանդուխքին, մնում։

Թագավորի տղեն ոտնամանը վերցնում է ու վրեն զարմանում, թե ինչքան է փոքրիկ ու ինչքան է սիրուն, էն էլ պուտ մարուր ոսկուց։

Մյուս օրը վեր է կենում. ոտնամանն առնում, գնում

Մոխրոտի հոր մոտ։ Ասում է՝ կա թե չկա, նա պետք է լինի իմ կինը, ում ոտին էս ոտնամանը կըգա։

Խորթ քույրերը ուրախանում են։ Իրենք էլ փոքրիկ, սիրուն ոտներ են ունենում։ Մեծ քույրն իսկույն խընդմընգալով իր սենյակն է վազում. մերը կողքին կանգնում է, ինքը ոտնամանը ոտի վրա փորձում է։ Փորձում է, բայց փոքր է գալիս, ինչ անում է, չի անում, մեծ մատը ոչ մի կերպ ներս չի գնում։ Մերը դանակը հանում է իրեն է տալիս, ասում է.

— Ա՛ռ, մեծ պճեղդ կտրի. վախիլ մի՛, որ թագուհի դառնաս՝ ոտով հո չե՞ս ման գալու։— Աղջիկը դանակն առնում է, մեծ պճեղը կտրում, ոտը կոխում է ոտնամանի մեջ ու, մի կերպ ցավին հաղթելով, դուրս է գալիս թագավորի տղի մոտ։

Թագավորի տղեն ասում է՝ իմ հարսնացուն սա է, որ կա։ Էս աղջկանը գավակն է առնում, ձին քշում։ Բայց ճամփին էն գերեզմանի մոտից անց կենալիս՝ ընկուզենու վրից երկու ճերմակ աղավնի կանչում են.

Ղո՛ւ, ղո՛ւ, տղա՛, չե՞ս նըկատում,
Ոնց է ոտից արյուն կաթում.
Փոքր է ոտին ոտնամանը,
Քու հարսնացուն մընաց տանը։

Էստեղ թագավորի տղեն մտիկ է անում, տեսնում է՝ աղջկա ոտնամանից արյունը ծորելով գնում է։ Ձիու գլուխը ետ է շուռ տալիս, էս աղջկանը ետ տանում, ասում է՝ սա իմ հարսնացուն չի, թող մյուս քույրը փորձի՝ տեսնենք։

Երկրորդ քույրն է վազում իր սենյակը, որ ոտնամանը ոտին փորձի։ Պճեղները լավ են գնում, բայց սրա էլ կրունկն է մեծ դուրս գալիս։ Մերը դանակը հանում է իրեն տալիս, ասում է.

— Ա՛ռ, կրնկիցդ մի քիչ կտրի, վախիլ մի՛, որ թագուհի դառնաս՝ ոտով հո չե՞ս ման գալու։

Աղջիկը կրնկից մի քիչ կտրում է, ոտը մի կերպ ոտնամանի մեջ է կոխում ու, ցավին զոռելով, դուրս է գալիս թագավորի տղի մոտ։



Թագավորի տղեն ասում է՝ հիմի արդեն գտա, սա է իմ հարսնացուն, որ կա։ Ձին նստում է, աղջկանը գավակն է առնում ու քշում։

Գերեզմանի կողքից անց կենալիս՝ ընկուզենու վրից էն երկու աղավնակներն էլ ետ կանչում են.

— Ղո՛ւ, ղո՛ւ, տղա՛, չե՞ս նըկատում,
Ոնց է ոտից արյուն կաթում.
Փոքր է ոտին ոտնամանը,
Քու հարսնացուն մընաց տանը։

Թագավորի տղեն մտիկ է անում, տեսնում՝ արյունը դուրս է ծորում աղջկա սպիտակ գուլպաների տակից ու ոտնամանից կաթկթում։ Ձիու գլուխը ետ է շուռ տալիս, կեղծ հարսնացուին էլ ետ բերում իրենց տունը։ Ասում է.

— Սա էլ չի իմ իսկական հարսնացուն։ Դուք էլ ուրիշ աղջիկ չունե՞ք...

Հերն ասում է.— «Չէ՛, էլ ուրիշ աղջիկ չունենք։ Ճըշմարիտ է, իմ առաջվա կնկա մահից հետո մի փոքրիկ աղջիկ մնաց, որ մենք Մոխրոտ ենք ասում, բայց դե նա ձեզ վայել հարսնացու չի. որտեղից որտե՞ղ...»

Թագավորի տղեն ուզում է անպատճառ Մոխրոտին տեսնի.

— Չէ՛, ամա՜ն,— ասում է խորթ մերը.— նա էնպես կեղտոտ է, որ վրեն մտիկ անել չի լինիլ։

Բայց թագավորի տղեն կանգնում է, թե՝ ինչ ուզում է լինի, պետք է տեսնեմ,— ու ձեն է տալիս, Մոխրոտին կանչում։

Մոխրոտը, երեսն ու ձեռները շարմաղ լվացած, դուրս է գալիս, գլուխ տալիս թագավորի տղին։ Սա էլ ոսկի ոտնամանը նրան է տալիս, որ ոտին չափի։

Տեղն ու տեղը նստարանի վրա նստում է, փետե կոպիտ ոտնամանները հանում, ոսկի ոտնամանը հագնում։ Էնպես է ոտին գալիս, ոնց որ հալած-թափած։ Որ ոտի է կանգնում ու ժպտալով թագավորի տղի աչքերի մեջը նա-

լում, թագավորի տղեն հանկարծ ճանաչում է, տեսնում է՝ սա հենց էն գեղեցկուհին է, որի հետ ինքը պարում էր ու որին ման է գալիս։

— Ահա,— ասում է,— վերջապես գտա իմ իսկական հարսնացուն։

Խորթ մերն ու իր աղջիկները վախից վեր են թռչում, նախանձից ու ցավից քաթանի պես գունատվում։ Թագավորի տղեն իր ձին հեծնում է, Մոխրոտին գավակն առնում ու թռչում դեպի իր պալատը։ Մոխրոտի մոր գերեզմանի մոտից անցնելիս՝ ընկուզենու վրից էն երկու ճերմակ աղավնակները մնչում են.

— Ղո՜ւ, ղո՜ւ, տղա՛, չե՞ս նրկատում,
Էլ արյուն չի ոտից կաթում.
Ոտնամանը ոտինն է բուն,
Բարով տանես քու հարսնացուն։

Էսպես մնչում են, հետո ցած են թռչում, մինը Մոխրոտի աջ ուսին է բազմում, մյուսը՝ ձախ ուսին։ Ու էդպես էլ մնում են։

Հարսանիքի ժամանակ Մոխրոտի խորթ քույրերն էլ են գալիս, որ իրենց վրա էլ կաթի նրա բախտիցը, ու իբրև թե ուրախանում են։ Պսակ պնալիս մեծը Մոխրոտի աջ կողմն է կանգնում, փոքրը ձախ կողմը, ու աղավնակները մեծի աջ աչքն են հանում, փոքրի ձախ աչքը։ Պսակից ետ գալիս մեծը ձախ կողմն է անցնում, փոքրը աջ կողմը։ Էս անգամ էլ աղավնակները մեծի ձախ աչքն են հանում, փոքրի աջ աչքը, ու թողնում։ Ու էսպես, երկուսն էլ իրենց չարությունից կուրանում են, ու ամբողջ իրենց կյանքում էլ մնում են կույր։

---

# ՃԵՐՄԱԿ ՕՁԸ

Մեզանից շատ առաջ մի իմաստուն թագավոր է լինում։ Ոչ մի բան չի մնում նրանից ծածուկ. ամենագաղտնի բաների մասին էլ կարծես թե քամին նրան տեղեկություն էր տալիս։ Էս թագավորը մի տարօրինակ սովորություն է ունենում. ամեն ճաշի, երբ սեղանը վեր են քաշում, ծառան մի ծածկած աման է ներս բերում, ու թագավորը ամանը բաց չի անում, մինչև որ ծառան էլ չի գնում ու ինքը չի մնում մենամենակ։

Էսպես քաշում է բավական ժամանակ։ Մի անգամ էլ էս տանող ծառային էնպես մի հետաքրքրություն է տիրում, որ էլ չի կարողանում ինքն իրեն դիմադրի, ամանը առնում է տանում իրեն սենյակը։ Սենյակի դուռն զգույշ դնում է ամանի խուփը ետ քաշում։ Տեսնում է միջին մի եփած ճերմակ օձ։ Էլ չի կարենում իրեն պահի, մի կտոր կտրում է դնում բերանը։ Լեզվին է տալիս թե չէ—հանկարծ պատուհանի տակիցը մի զվարթ զրժվրժոց է լսվում։ Ականջ է դնում, տեսնում է ճնճղուկներն են, զրույց են անում, զանազան պատմություններ են պատմում անտառներից ու դաշտերից։

Դու մի՛ ասիլ՝ էս մեր ծառան օձի միսն ուտելուն պես կենդանիների լեզուն հասկանալու շնորհք է ստացել։

Էնպես է պատահում, որ հենց էդ ժամանակ թագուհու հրաշալի մատանին կորչում է, ու կասկածն ընկնում է էս

նույն հավատարիմ ծառայի վրա, որ ամեն տեղ ազատ ել ու մուտք ուներ։ Ասում են՝ կա չրկա, սա է ուղացել մատանին։

Թագավորը ծառային կանչում է իր մոտ, սպառնում, որ եթե մինչև մյուս օրը գողի անունը չը տա՝ գլուխը կըթռչի։ Էս ծառան ինչքան երդում-կրակն է ընկնում, թե ինքն անմեղ է՝ բան չի դառնում։ Էսպես սպառնալիքով էլ բաց է թողնում ու մինչև մյուս օրը ժամանակ է տալիս։

Ահ ու դողով խեղճը բակն է իջնում, միտք է անում, թե ինչ անի, որ պրծնի էս փորձանքից։

Գնում է տեսնում բաղերը բակում ջրափին հավաքված իրար կողք կորած հանգստանում են։ Տափակ կտուցներով մաքրում են փետուրներն ու մի հետաքրքրական զրույց են անում։ Պատմում են, թե էսօր որը որտեղ է որոնել առավոտը ու ինչ համով կեր է գտել իր համար։ Մինը վեր է կալնում, թե.

— Իսկ ես ագահի նման կուլ տվի թագուհու մատանին, որ պատուհանի տակ ընկած էր, դրանից ստամոքսս մի տեսակ ծանր է, ճնշում է...

Ծառան տեղն ու տեղը վրա է թռչում էս ասող բադի վզիցը բռնում, վազում խոհանոց։ Խոհարարին ասում է.

— Հապա մի էս բադը մորթի... բավական գերացել է...

— Հա՛, ճիշտ ես ասում,— պատասխանում է խոհարարը, ձեռքին ծանր ու թեթև անելով,— ուտելու համար բավական նեղություն է տվել իրեն։ Խորոված անելու ժամանակն է։

Ասում է ու վիզը թոցնում։ Փորն խստակելիս— ըհը՝, դուրս է գալիս թագուհու կորած մատանին։

Իհարկե սրանով էլ պարզվում է հավատարիմ ծառայի անմեղությունը։ Բայց որովհետև թագավորն էլ ուզում էր իր մեղքը մի տեսակ քավի, առաջարկում է նրան մի բան խնդրի, ինչ որ սիրտը կուզի։ Խոստանում է՝ պալատական ինչ պաշտոն էլ ուզի՝ տա։

Ծառան հրաժարվում է ամեն պատվից ու պաշտոնից, միայն խնդրում է, որ իրեն մի ձի տա, մի քիչ ծախսի փող, և աղատություն, որ գնա ճանապարհորդի, աշխարհք տեսնի։

Թագավորը համաձայնվում է, ձի էլ է տալիս, ճամփու ծախս էլ. ու մեր ծառան ճանապարհ է ընկնում գնում։

Գնում է, գնում, շատ է գնում թե քիչ, էդ էլ ասված գիտի. մի ջրի ափից անց կենալիս տեսնում է՝ երեք ձուկը, անց է եղել, ընկել են ափի ծանծաղուտը, եղեգնուտի մեջ թրրալըրտում են ու անջուր տանջվում։ Թեկուզ և ասած է «անխոս ձուկը», սակայն մեր հերոսը պարզ լսում է, թե իրեն տեսնելուն պես ինչպես են խոսում էն ձկներն ու զանգատնվում իրենց դառը վախճանի վրա։

Էս որ լսում է, մեղքը գալիս է։ Ձիուց իջնում է, սրանց վեր առնում ետ ածում ջուրը։ Խեղճ կենդանիները ուրախուրախ սուզվում են ջրի տակը, ապա գլխիկները դուրս են հանում ու կանչում. «Մենք քու արած լավությունը չենք մոռանալ, ազնիվ տղա. երբևիցի մի օր էլ մենք քեզ պետք կըդանք»։

Երիտասարդը էստեղից վեր է կենում գնում։ Մի քիչ գնում է, մին էլ թվում է, թե հենց իրեն ոտների տակից մի բարակ, նվազ ձեն է գալիս։ Ներքև է նայում, տեսնում է մրջյունների մի բազմություն է ղրժվրժում գետնի վրա, ականջ է դնում, որ խեղճերը սարսափած լաց են լինում ու էսպես խոսում.

— Ա՜խ, ինչ կըլիներ, որ էս մարդիկ ու կոպիտ կենդանիները մեզնից հեռու ման գային։ Հիմի էս հիմար ձին, առանց ափսոսալու, իր ծանր սմբակներով կըկոխկըրտի իմ մարդկանց ու մեր բնակարանները։

Երիտասարդի մեղքն եկավ։ Ձիու գլուխը ծռեց դեպի կողքի շավիղը, իսկ մրջյունների թագավորը ետևից կանչեց. «Շնորհակալ եմ, բարի հոգի։ Թե ասված կըտա, քո պարտքի տակ չենք մնալ մենք»։

Էն գեղ շավիղն էլ, որ բռնում է տղեն, դեպի անտառն էր տանում։ Անտառն է մտնում, տեսնում է՝ երկու պառավ ագռավ իրենց ճուտերին բներից ներքև են թափում ու կուտվում են.

— Հենց միշտ հո մենք չենք ձեզ կերակրելու։ Գնացեք ձեզ համար կեր ճարեցեք, ապրեցեք։

Թշվառ ճուտերը խոտերի մեջ թափված, թևերին են անում ու խղճալի ճվճվում.

— Մենք խեղճ ճուտեր, փոքրիկ ձագեր,
Ո՞ւրտից գտնենք մեզ տեղ ու կեր,
Ոչ թե ունենք, ոչ բուն ունենք,
Մենք ո՞ւր գնանք, մենք ի՞նչ անենք...

Երիտասարդի մեղքը գալիս է. առանց երկար ու բարակ մտածելու ունեցած-չունեցածը հացը հանում է, տալիս ագռավի ճուտերին, որ ուտեն։ «Շնորհակալ ենք,— կանչում են ագռավի ճուտերը։— Քո արած լավությունը մի օր ետ կըվճարենք»։

Ու վեր է կենում երիտասարդը էստեղից ճամփա է ընկնում, գնում։ Գնում է, գնում, հասնում է մի մեծ քաղաք։ Տեսնում է՝ էս քաղաքում ժողովուրդն իրարով է անցել, լցվել փողոցները. մի անասելի-անպատմելի աղմուկ-աղաղակ, հարա-հրոց։ Մինն էլ ձին նստած՝ փողոցն փողոց անց է կենում ու կանչում.

— Թագավորի աղջիկը իրեն համար փեսացու է ընտրում։ Ով ուզում է նրա փեսան դառնա — մի դժար գործ պետք է կատարի, թե կատարեց — լավ, թե չէ հո՝ գլուխը կըթռչի։

Շատերն էին փորձել թագավորի աղջկա առաջարկը կատարելու, միայն իրենց կյանքն էին զուր խորտակել։ Բայց մեր երիտասարդը հենց թագավորի աղջկանը տեսնում է թե չէ՝ էնպես է խելքը կորցնում նրա գեղեցկությունից, որ ամեն փորձանք ու ամեն վտանգ մտքիցը հանում է, գլխիցը ձեռք է քաշում, ներկայանում թագավորին, թե՝ քո աղջիկը ուզում եմ։

Էստեղից թագավորի հրամանով տղին տանում են ծովի ափը ու մի ոսկի մատանի գցում ծովի մեջ։ Թագավորն ասում է.



— Էս մատանին պետք է ծովի անդունդից հանես։ Թե հանեցիր, հո իմ աղջիկը քոնն է, թե չէ առանց մատանի լուս աշխարհք դուրս եկար, նորից կըգցեն ծովը, մինչև որ կամ հանես կամ խեղդվես։

Ամենքը ափսոսում են դեղեցիկ երիտասարդին, որ մենակ կանգնած էր ծովի ափին։ Ու ծովափին կանգնած՝ նա միտք է անում, թե՝ ինչ անեմ, տեր աստված։ Հենց էս ժամանակ տեսնում է ալիքների մեջ երեք ձուկը լողում են դեպ իրեն. էն երեք ձուկը, որոնց կյանքը ինքը փրկել էր մի ժամանակ։ Մեջտեղի ձուկը բերանում բռնած մի խեցի է բերում. բերում է, բերում, դնում երիտասարդի առաջին։ Երիտասարդը վերցնում է, տեսնում է՝ ոսկի մատանին մեջը։ Ուրախ-ուրախ մատանին առնում է, տանում տալիս թագավորին, էն հուսով, թե խոստացած պարգևը պիտի ստանա։ Բայց գոռող թագավորի աղջիկը հենց որ իմանում է թե երիտասարդը ծագումով իրեն հավասարը չի՝ երեսը շուռ է տալիս ու մի նոր խնդիր առաջարկում։ Իշնում է այգին ու ինքն իր ձեռքով տասը տոպրակ կորեկ շաղ տալիս, ասում է.

— Մինչև էգուց առավոտ՝ արևի ծագումը՝ պետք է էս կորեկը հավաքես, էնպես, որ ոչ մինը չըկորչի։ Թե հավաքեցիր, հո լավ, թե չէ՝ գլուխդ կըթռչի։

Այդում նստում է ու միտք է անում երիտասարդը, թե ինչ հնար գործ դնի, որ կարողանա էս մի առաջարկն էլ գլուխ բերի։ Ոչ մի ճար ու հնար չի գտնում, ու տխուր-տրրտում նստած սպասում է, թե հրես առավոտը լուսին կըգան կըտանեն գլուխը կտրել տալու։

Միտք է անում միտք, մինչև թմրում է, քունը հաղթում է ու էս մտքի մեջ էլ քնում է։ Առավոտը աչքը բաց է անում՝ որ տասը տոպրակ կորեկ կողք կողքի դիմհար տված առաջին շարած են, գետնին էլ մի հատ կորեկ չի մնացել։ Դու մի՛ ասիլ՝ էդ գիշեր մրջյունների թագավորն իր անթիվ ու անհամար մրջյուններով եկել է, ու երախտագետ մրջյունները շաղ տված կորեկը հավաքել են, լցրել տոպրակները՝ իրար կողքի շարել։

Թագավորի աղջիկն ինքն իր ոտով գալիս է այգին, իր

աչքովը տեսնում է, որ երիտասարդը իր էս առաջարկն էլ է կատարել, զարմանում է, բայց իր զարմանքից չի կոտրվում, ասում է.

— Թեև երկու առաջարկս էլ կատարեցիր, բայց դու չես կարող դառնալ իմ ամուսինը, մինչև ինձ համար չբերես կյանքի ծառի խնձորը։

Երիտասարդը իր օրումը լսած էլ չի լինում, թե ինչ բան է կյանքի ծառը կամ որտեղ է բուսնում։ Վեր է կենում, մի ճամփա ընկնում, գնում, թե որտեղ դուրս կըգամ՝ դուրս։

Գնում է աշխարհքն աշխարհք անց է կենում, մի իրիկուն էլ մտնում է մի անտառ, հոգնած մի ծառի տակ նստում է ու ննջում։ Հանկարծ լսում է, որ գլխի վերևը ծառի տերևները խշխշում են։ Էս խշխշոցն ու վերևից մի ոսկի խնձորի իր բուռն ընկնելը մին է լինում։ Սրա հետ միաժամանակ երեք ագռավ ծառի ծերից թռչում իջնում են ծնկներին ու ասում.

— Մենք էն երեք ագռավների ձագերն ենք, որ դու մի ժամանակ սովամահից ազատեցիր։ Երբ մեծացանք ու իմացանք, որ դու կյանքի ծառի խնձորին ես մտա գալիս, թռանք ծովերն անցկացանք, սարերն անցկացանք, հասանք աշխարհքի ծերը, ուր բուսնում է կյանքի ծառը, ու էս խնձորը բերինք քեզ համար։

Երիտասարդը ուրախանում, աշխարհքով մին է լինում, խնձորն առնում է ու բերում տալիս թագավորի աղջկանը։ Թագավորի աղջիկը խնձորն էլ որ տեսնում է, ասում է.

— Էլ խոսք չունեմ։

Խնձորը կես են անում, միասին ուտում ու էստեղ աղջկա սիրտը լցվում է սիրով դեպի երիտասարդը։ Ամուսնանում են ու երջանիկ, բախտով-թախտով միասին ապրում մինչև իրենց խորին ծերությունը։

---

# 1916

## ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿԸ

Լինում է չի լինում, մի հարուստ վաճառական։ Ունենում է երեք աղջիկ, մինը մյուսից գեղեցիկ, բայց ամենից գեղեցիկը լինում է փոքրը։ Ինքն էլ ոչ կնիկ է ունենում, ոչ որիշ մոտիկ մարդ. ոչ կյանքն ու կայանքը, ոչ արծաթն ու ոսկին աչքին չեն գալիս, իր ամբողջ սերը տալիս է աղջիկներին։ Երեքին էլ սիրում է, բայց ամենից շատ սիրում է փոքրին։ Մի անգամ էս վաճառականը վեր է կենում թե գնա հեռու աշխարհքներ առուտուրի։ Երեք աղջկանն էլ կանչում է, ասում է. «Ի՞նչ եք ուզում, որ ձեզ համար բերեմ»։ Մեծ աղջիկն ասում է. «Ես մի անգին քարերով զարդարած ոսկե ապարոշ եմ ուզում»։ Միջնեկն ասում է. «Ինձ համար մի մաքուր ու անբիծ բյուրեղից շինած հայելի բեր»։ Փոքրն էլ, թե՝ «Ինձ համար էն Կարմիր ծաղիկը, բեր, որից գեղեցիկը էլ աշխարհքումը ո՛չ կա, ո՛չ կըճարվի»։ Փոքր աղջկա խոսքի վրա վաճառականը մտքի տունն է ընկնում, ասում է. «Դու քույրերիցդ ավելի դժար բան ուզեցիր, ա՛ղջիկ ջան։ Քո ուզած Կարմիր ծաղիկը գտնելը հեշտ բան չի, և ես ի՞նչ իմանամ՝ նրանից գեղեցիկը աշխարհքումը էլ կա թե չկա»։

Վեր է կենում գնում աշխարհքից աշխարհք, երկրից երկիր անց է կենում, առուտուր է անում, շատ գանձ ու հարստություն է վաստակում, բեռներ կապում, ճամփու դնում դեպի տուն։ Մեծ աղջկա ուզած անգին քարերով զարդարած ապարոշն էլ է գտնում, որ գիշերը ցերեկի նման լուս էր

տալիս. միջնեկ աղջկա ուղած բյուրեղյա հայելին էլ է դրա-նում, որի մեջ երևում էին աշխարհքի բոլոր գեղեցկություն-ները, մեջը նայողի գեղեցկությունը երբեք չէր թառամում ու ելեցօր ավելանում էր։

Բայց փոքր աղջկա ուղած Կարմիր ծաղիկը, որից գե-ղեցիկն աշխարհքումը չլիներ՝ ոչ մի տեղ չի գտնում։ Գե-ղեցիկ ծաղիկներ պատահում էին, բայց ո՞վ կարող էր ասել, թե նրանցից գեղեցիկները էլ չկային աշխարհքում։

Վերադարձին, մի խոր անտառով անց կենալու ժամա-նակ, ավազակները հարձակվում են էս վաճառականի վրա, ունեցած-չունեցած գանձն ու հարստությունը կողոպտում են, ինքը փախչում է, ընկնում անտառի խորքերն, ազատվում։ Գնում է, գնում, ոչ ձեն, ոչ ծպտուն. շունչ կենդանի չկա։ Գիշերը վրա է հասնում էնքան մութը գիշեր, որ մատդ մարդի աչքը կոխեիր՝ չէր տեսնել, բայց մեր վաճառականի ուտի տակը էնպես լուս է լինում, տնց որ օրը ցերեկով։ Քանի գնում է, էնքան լուսանում է, քանի գնում է, էնքան լուսա-նում է, վերջը դուրս է գալիս մի բացատ, բացատում տես-նում է արծաթից, ոսկուց ու անգին քարերից շինած մի պա-լատ, որ կրակի նման էրվում է, արևի նման լուս տալիս, իսկ ներսից լսվում են երաժշտության ներդաշնակ դրախտա-կան ձայներ։

Բակն է մտնում, բակից անցնում է մտնում պալատ։ Տեսնում է արծաթով, ոսկով, անգին քարերով լիքը. սրբած, վեր քաղած, ամեն բան սարքին կարգին, բայց մեջը մարդ չկա։ Մի սենյակ է մտնում՝ մարդ չկա, մյուսն է մտնում՝ մարդ չկա, երրորդն է մտնում՝ մարդ չկա։ Ոչ տեր կա մեջը, ոչ տիրական, ոչ ծառա կա, ոչ ծառայող, միայն երա-ժշտությունն է, որ իրեն-իրեն հնչում է ու հնչում։— Լավ տեղ է. բայց ավելի լավ կըլիներ, եթե մի ուտելու բան էլ լիներ,— անց է կենում վաճառականի մտքով։ Մտքովն անց կենալն է լինում. մին էլ էն է տեսնում՝ առաջը մի սեղան բացվեց, մի սեղա՞ն, որ աստծու ամեն բարին մեջը լիքն է։ Նստում է, ուտում, խմում, կշտանում, տեղիցը վեր կենում։ Վեր է կենում՝ թե չէ, սեղանն էլ ետ նորից անհետանում է։



Վաճառականը զարմանում է։ Մի սենյակից մյուսն է անց կենում, նայում ու հիանում։ Երբ որ բոլոր սենյակները ման է գալիս, հոգնում է, քունը տանում է, ուզում է քնի, առաջը մի էնտեսակ սիպտակ, մաքուր, փափուկ անկողին է փռվում, որ մեջը մտնելն ու աչքը կպցնելը մեկ է լինում։

Առավոտն աչքը բաց է անում, տեսնում է՝ շորերը դարսած, պատրաստված, բյուրեղյա ամաններով վճիտ ջրերը երեսը լվանալու համար առաջը դրած։ Երեսը լվանում է, լուսամուտից ներքև նայում՝ պալատի շորս կողմը հրաշալի այգիներ, այգիների մեջ ոսկեգույն պտուղներ են հասնում, չըտեսնված գեղեցիկ ծաղիկներ են ծաղկում, ու սիրտն ու-զում է զբոսնի էն այգիներում։ Մարմարե ու զմրուխտե սանդուխքներից ներքև է իջնում, մտնում է կանաչ այգինե-ը։ Ճեմում է, ու հիանում։ Հասուն պտուղները կախկխվել են ծառերից, երփներանգ ծաղիկները փարթամ ծաղկում ու ան-մահական հոտ են բուրում, դարմանահրաշ հավքերը շորս կողմը թրթռում ու դրախտական երգեր են երգում, շատրվան-ները զվարթ կարկաչելով վերև են ցայտում իրենց վճիտ ջրերը, ու խոխոջում են բյուրեղանման աղբյուրները։ Ման է գալիս մեր վաճառականը, զմայլում։ Մին էլ հանկարծ տես-նում է՝ մի թմրի վրա մի Կարմիր ծաղիկ է ծաղկում, մի ծաղիկ, որ մարդ իր օրումը ոչ տեսել է, ոչ լսել։ Մոտենում է. ձեռն ու ոտը դող են ընկնում, ասում է. «Ահա հենց էս է լինելու էն Կարմիր ծաղիկը, որից գեղեցիկը էլ աշխարհ-քումը ոչ կա, ոչ կրճարվի։ Հենց էս ծաղիկն է լինելու, որ ուզում էր իմ փոքր աղջիկը»։

Մոտենում է, ծաղիկը պոկում։ Պոկում է թե չէ, փայլակը փայլատակում է, կայծակը սրոտում է, երկիրը դողում է, ու, ոնց որ թե գետնի տակիցը դուրս գա, մինը դուրս է գա-լիս վաճառականի առաջին կանգնում.— գազան ասես՝ գա-զան չի, մարդ ասես՝ մարդ չի. մի ղրբրդոտ, զարհուրելի հրեշ, ու մռնչում է կատաղի։

— Էս ի՞նչ արիր դու։ Ի՞նչպես համարձակվեցիր պոկե-ցիր իմ այդուց իմ սիրած, իմ նվիրական ծաղիկը։ Ես քեզ հրավիրած թանգ հյուրի նման իմ պալատն ընդունեցի, ուտեց

րի, խմեցրի, քնեցրի, իսկ դու իմ լավության փոխարենը էդպե՞ս ես ետ վճարում։ Դե հիմի իմացած եղիր, որ վերջդ հասել է։ Քո մահը ցույց պետք է տամ քեզ, որ քո աչքով տեսնես։

Վաճառականը վախից ատամ-ատամ դողում է։ Մտիկ է անում, որ շորս կողմից, ամեն մի ծառ ու թփի արանքից, ջրի միջից, գետնի տակից՝ դուրս են եկել ու սողում են դեպի իրեն անթիվ ու անհամար այլանդակ ու գարշելի արարածներ։ Երեսի վրա ընկնում է բրդբրդոտ հրեշի առջև՝ խղճալի աղաղակում.

— Ո՛վ անտառի տեր, ո՛վ անհայտ հզոր, ինձ մի՛ սպանիր իմ անգիտուն մեղքի համար. ողորմությո՛ւն արա, հրամա՛ն տուր խոսք ասեմ։— Ու պատմում է իր աղջիկների ու իր խոստումի մասին։ Ապա սկսում է աղերսել, որ հրեշն իրեն շնորհի Կարմիր ծաղիկը իր փոքրիկ աղջկանը տանելու համար։ Փոխարենը խոստանում է ոսկի տա՝ որքան կուզի։ Քահ-քահ խնդում է զարհուրելի հրեշը, անտառի տերը։ Ասում է.

— Ի՞նչ եմ անում քո գանձն ու ոսկին, իմ ունեցածն էլ չըգիտեմ որտեղ պահեմ։ Քեզ անվնաս կըթողնեմ, որ քո տունը գնաս, անհաշիվ էլ գանձ կըտամ, Կարմիր ծաղիկն էլ կըտամ, միայն թե խոսք տաս, որ քո աղջիկներից մեկն ու մեկին ինձ մոտ ուղարկես։ Ոչ մի վատ բան չեմ անիլ նրան, չեմ վշտացնիլ, չեմ վիրավորիլ. իմ պալատում կապրի էնպես, ինչպես դու ապրեցիր։ Ձանձրացել եմ մենակությունից, ուզում եմ մի ընկեր ունենամ։

Վաճառականը էս որ լսում է, շատ է տխրում. նայում է անտառի հրեշի վրա, հիշում է իր աղջիկներին ու լաց է լինում։ Ասում է.

— Ես ո՞նց անեմ, եթե իմ աղջիկները չուզենան քեզ մոտ գան։ Հո չեմ կարող ես նրանց ձեռն ու ոտը կապեմ ու զոռով ղրկեմ։ Եվ վերջապես, ի՞նչ իմանան, ի՞նչ ճամփով կարող են հասնել քեզ մոտ։ Ես երկու տարումը հազիվ եմ կարողացել էստեղ հասնեմ. էն էլ ի՞նչ տեղերով, ի՞նչ ճամփեքով— ես էլ չեմ իմանում...



— Ես ստրուկ չեմ ուզում,— պատասխանում է անտառի հրեշը։— Քո աղջիկները համով-կամով թե կըգան, թո՛ղ գան թե չեն գալ, էն ժամանակ դու պիտի ետ դաս, որ քեզ պատժեմ չարաչար մահով։ Իսկ թե ինչպես պետք է գալ ինձ մոտ, դրա համար դու հոգս մի՛ անիլ. ահա իմ մատի մատանին. ա՛ռ. ով էս մատանին դնի իր աջ ճկույթը, հենց նույն վայրկյանին գուրս կգա էնտեղ, որտեղ ուզենա։ Դե գնա. քեզ երեք օր, երեք գիշեր ժամանակ...

Ի՞նչ պետք է աներ խեղճ վաճառականը։ Մտածում է, մտածում, խոսք է տալիս ու մատանին առնում։ Մատանին աջ ճկույթն է դնում թե չէ՝ դուրս է գալիս իրեն տան առաջը։ Տեսնում է իր գանձերով ու թանկագին ապրանքներով բեռնած քարվանները էլ դարպասից ներս են ներս մտնում, ու մընին երեք՝ առաջվանից ավելի են բերում։

Աղջիկները դեմն են գալիս, վզովն են ընկնում, համբուրում են, գրկում, գուրգուրում են, բայց տեսնում են, որ իրենց հերը շատ է տխուր. սիրտը չի բացվում, ունքամեջը ետ չի գնում։ Սկսում են ամենքը մի կողմից հարցնել, թե ինչո՞ւ է տխուր, կարողությո՞ւնն է կորցրել, թե՞ առողջությունը. ի՞նչ է պատահել։

— Առողջություն չեմ կորցրել,— պատասխանում է վաճառականը,— ոչ էլ կարողություն, դեռ մեկին երեք-չորս էլ աշխատել եմ։ Իմ դավը ուրիշ ցավ է, էսօր համբերեցեք, էգուց կըպատմեմ՝ կիմանաք։— Պատվիրում է, սնդուկները ներս են բերում, հանում է մեծ աղջկա ուզած անգին քարերով շինած ոսկի ապարոշը իրեն է տալիս։ Միջնեկ աղջկա ուզած հայելին էլ իրեն է տալիս։ Փոքր աղջկա Կարմիր ծաղիկն էլ ոսկի ծաղկամանով՝ իրեն է տալիս։

Առավոտը որ լուսանում է, մեծ աղջկանը կանչում է, ինչ որ իրեն հետ պատահել էր, պատմում է ու հարցնում՝ թե կըհոժարի՞ գնա ապրի անտառի տիրոջ՝ անճոռնի հրեշի մոտ ու իրեն ազատի չարաչար մահից։ Մեծ աղջիկը հրաժարվում է. ասում է. «Ես ինչո՞ւ եմ գնում, ում համար Կարմիր ծաղիկը բերել ես, թո՛ղ նա գնա»։ Միջնեկ աղջկանն է կանչում, նա էլ է հրաժարվում։ Փոքր աղջկանն է կանչում,

ամեն բան պատմում։ Փոքր աղջիկը հոր առաջը ծունկի է գալիս, ասում է. «Ես կըգնամ, հա՛յրիկ, օրհնի՛ր ու ճանապարհ դիր ինձ. ես կըգնամ կապրեմ անտառի տիրոջ՝ անճոռնի հրեշի հետ։ Ինչ որ դու ինձ համար Կարմիր ծաղիկը բերել ես ու ընկել փորձանքի մեջ, էնպես էլ ես պետք է աղատեմ քեզ էդ փորձանքից»։

Էն օրն էլ է անց կենում, մյուս օրն էլ, վրա երեք գիշերը վաճառականը պետք է բաժանվեր իր աղջկանից։ Հրեշի մատանին հանում է, բերում աղջկա ճկույթը դնում թե չէ, աղջիկն իսկույն իր ունեցած-չունեցածն էլ հեռը՝ անհետանում է։

Անհետանում է, մին էլ աչքը անտառի հրեշի շրեղ ապարանքում է բաց անում, մի ոսկի մահճակալի վրա, փափուկ մետաքսե անկողնում։ Գլուխը վեր է քաշում, տեսնում է Կարմիր ծաղիկն էլ ոսկե ծաղկամանի մեջ՝ դրած կողքին։ Սիրտն ուզում է պայծառ ման դա, վեր է կենում գնում բոլոր սենյակները ման գալիս, բոլոր հրաշալիքները տեսնում, հիանում։ Հետո իր սիրած Կարմիր ծաղիկն առնում է՝ իջնում այգին։ Այդին է մտնում թե չէ, թռչունները երգում են իրենց եղեմական երգերը, ծառերը, ծաղիկներն ու թփերը բնքշորեն ճոճելով իրենց գլուխները խոնարհում են առաջին։ Ու գնում է աղջիկը, զբոսնելիս գտնում է հենց էն թումբը, որի վրից իր հերը Կարմիր ծաղիկը պոկել էր։ Ուզում է նորից տնկի իր տեղը, բայց ինքը ծաղիկը ձեռքիցը թռչում է, կպչում իր ընկերն ու բացվում առաջվանից ավելի գեղեցիկ։ Էս հրաշքի վրա աղջիկը շատ է զարմանում, շատ է ուրախանում ու նստ է գալիս պալատը։

Գնում է, պալատի սենյակներում ման է գալիս, տեսնում է՝ մեկում էլ մի սեղան է բաց արած, տասածու ամեն բարին վրին։ Մտքումն ասում է. «Անտառի հրեշը երևի ինձ վրա շարացած չի, բարի աչքով մարդի կանի, տեր ու տիրական կըլինի»։ Էս մտածելու ժամանակ մին էլ էն է տեսնում՝ մարմարե ճերմակ պատի վրա հրեղեն տառերով երևացին էս խոսքերը. «Ես տեր չեմ քեզ համար, ես քո հնազանդ ծառան եմ։ Դու իմ տիրուհին ես, ինչ որ քո սիրտն ուզի, կրկատարեմ ամենայն սիրով»։ Էս խոսքերը կարդում է թե չէ՝ սեղանը լցվում է ամեն տեսակի քաղցրավենիքներով, շաքարեղեններով ու անուշ խմիչքներով, ու բոլորը մաքուր ոսկեղեն ամանների մեջ։ Ուրախ-ուրախ նստում է՝ ուտում, խմում զովանում, երաժշտությունով զվարճանում, ճաշելուց հետո էլ նստ դնում կանաչ այգիներում ճեմելու, հաղար ու մի հրաշալիքների վրա զմայլելու։

Էսպես ապրում է աղջիկն անտառի տիրոջ պալատում։ Ամեն օր կարած-պատրաստած նորանոր էն տեսակ ճոխ զարդարուն զգեստներ է ստանում, որ ոչ լեզվով պատմել կըլինի, ոչ գրչով նկարագրել։ Կամաց-կամաց սկսում է ձեռագործով պարապել, ոսկով, արծաթով ու մարգարտով ասեղնագործել։ Իր ձեռագործներից գրկում է հորը նվեր, իսկ ամենալավը պատրաստում է անտառի տիրոջ համար, բայց չի իմանում ինչպես նվիրի։

Էսպես բավակա՝ ժամանակ անց է կենում, Ջահել աղջիկը ընտելանում է իր կյանքին, ոչ մի բանի վրա զարմանում է, ոչ էլ մի բանից վախենում։ Ծառայում են անտեսանելի ծառաներ, տալիս են, առնում են, իր բոլոր հրամանները կատարում են։ Ու աղջիկը սկսում է օրեցօր ավելի ու ավելի սիրել իր տիրոջը։ Իմանում է, որ նա էլ իրեն է սիրում և նա ավելի է սիրում իրեն, քան թե ինքը նրան, ու շատ է ուզում մի անգամ ձենը լսի, հետը զրույց տնի։ Հետզհետե սկսում է խնդրել, աղաչել, բայց անտառի տերը չի անում, վախենում է իր ձենովը նրան վախեցնի։

Մի անգամ էլ աղջիկը այդպես է իջնում, գնում իր սիրած տեղը նստում՝ շրջապատված հոյակերտ տերևներով ու ծաղիկներով շրջապատված։ Նստում է ու դիմում անհերևույթ անտառի տիրոջը.

— Իմ անուշ, իմ բարի տեր,— ասում է,— մի՛ վախենար, թե ինձ քո ձենով կըվախեցնեու։ Էսքան բարությունից հետո ես զազանի մանչյունից էլ չեմ վախենալ. մի՛ վախենար, խոսի՛ր ինձ հետ...— Մին էլ հանկարծ լսում է, որ մինը ասես թե հասալեց թփերի ետևից, ապա թե լսում է սարսափելի, վայրենի, խուլ ու խռպոտ ձինը, և էն իրան թե

շշնջում է։ Աղջիկը մին ցնցվում է, մին էլ իրեն տիրում է, ցույց չի տալիս թե վախեց, ու կամաց-կամաց հաճույքով լսում է նրա անուշ, փաղաքուշ խոսքերը, խոր ու խելացի մտքերը, ու սիրտը բացվում է, լցվում է անհուն ուրախությունով։

Էն օրվանից կանաչ այգում լինեին, մութն անտառում թե պալատում, ամեն օր զրույց էին անում իրար հետ։ Աղջիկը հենց հարցնում է.

— Էստե՞ղ ես արդյոք, իմ սիրելի տեր։

— Էստեղ եմ, իմ աննման տիրուհի, ես, քո հլու ծառան, քո հավատարիմ ընկերը,— պատասխանում է անտառի տերը, անճոռնի հրեշը։

Ու աղջիկը էլ չի վախենում նրա վայրենի, սարսափելի ձևից, ու զրույց են անում անվե՞րջ, անվե՞րջ...

Շատ ժամանակ է անց կենում էսպես թե քիչ՝ աղջիկը սրտով ցանկանում է մի անգամ էլ իր աչքով տեսնի անտառի տիրոջը, անճոռնի հրեշին, ու սկսում է խնդրել, աղաչել, որ իրեն երևա։

— Չէ՛, իմ աննման գեղեցկուհի, էդ մի՛ խնդրիր ինձանից, որ ես քեզ երևամ ու իմ ղղվելի դեմքը, իմ այլանդակ մարմինը քեզ ցույց տամ։ Ինձ աչքով տեսնես թե չէ՝ կատես, աչքից կրգցես, քեզանից հեռու կըքշես, իսկ ես, որ քեզանից հեռանամ, կարոտից կըմեռնեմ։

Էսպես է պատասխանում անտառի տերը, անճոռնի հրեշը, ու չի կամենում երևա։ Բայց աղջիկը համառում է իր ասածի վրա, երդվում է, թե աշխարհքում ոչ մի հրեշից իսկի էլ չի վախենում, և որ նրան, իր բարի տիրոջը, չի ատիլ երբեք։

— Դե լավ,— ասում է հրեշը,— որ էդպես է, կըկատարեմ քո ցանկությունը, թեև հաստատ գիտեմ, որ դրանով պետք է իմ երջանկությունը խորտակեմ ու անմուրազ մեռնեմ։ Իրիկվա աղջամուղջին, երբ արևը կըմտնի անտառի եռևը, արի այգին ու ինձ կանչիր, ասա՝.— Հայտնվի՛ր ինձ, իմ հավատարի՛մ ընկեր։ Եվ եթե կըտեսնես, որ էլ չես կարող ինձ մոտ մնալ, ես էլ չեմ ուզիլ քեզ դերության մեջ պահեմ,



քո նազարանում բարձիդ տակին է իմ ոսկի մատանին. դիր աջ ճկույթդ, իսկույն դուրս կըգաս քո հոր տանը, ու երբեք էլ ոչ մի բան չես լսիլ ինձանից։

Իրիկունը աղջամուղջին, արևը անտառի եռևը ծածկվում է թե չէ, աղջիկը կանչում է. «Հայտնվի՛ր ինձ, իմ հավատարիմ ընկեր»։ Ու հեռվում երևում է անտառի տերը, անճոռնի հրեշը։ Ճամփի կիտով անց է կենում ու կորչում է խիտ թփուտի մեջ։ Աղջիկը տեսնում է թե չէ, ահից ճչում է ու ճամփի մեջտեղը ուշաթափ վեր ընկնում։ Սոսկալի տեսք ուներ անտառի անճոռնին. ձեռները ծուռ-ծուռ, մատները ճանկերով, ոտները ձիու սմբակներ, առջևի ու ետևի կողմից ուղտի սապատներ, ուտից գլուխ բրդոտ, բերանի երկու կողմից դուրս տնկված երկու վարազի ժանիք, քիթը կեռ ուրուրի կտուցի նման, իսկ աչքերը սնց որ բուի աչքեր...

Աղջիկը մին էլ ինտեղ է ուշքի գալիս, որ մինը կողքին լաց է լինում ու մղկտում։— Ինձ սպանեցիր, իմ աննման տիրուհի, էլ քո սիրուն երեսը ես չեմ տեսնելու... Դու էլ չես լսում ինձ... Ավելի լավ է հենց էսպես անմուրազ մեռնեմ ու պրծնեմ։— Աղջիկը որ լսում է, խղճահարվում է, ամաչում է, որ իր բարի, իր սիրելի ընկերից էնքան վախեցավ։ Ասում է. «Մի՛ վախենար, իմ բարի, իմ անուշ տեր, էլ քեզանից ես չեմ վախենալ, էլ քեզանից ես չեմ հեռանալ, էլ քո լավությունը ես չեմ մոռանալ, այժմ նորից երևա...»

Նորից է երևում անտառի տերը, անճոռնի հրեշը, միայն թե՝ ի՛նչքան աղջիկը կանչում է, չի համարձակվում մոտենում։ Ու զբոսնում են մինչև կես-գիշեր, առաջվա նման անուշ, իմաստալի զրույցներ են անում ու աղջիկն արդեն ոչ մի ահ ու երկյուղ չի զգում։

Մյուս օրը նորից է տեսնում, բայց էս անգամ արևի լուսով,— ու թեև մի քիչ վախենում է, բայց ցույց չի տալիս, մի քանի օրից հետո էդ վախն էլ է անցնում բոլորովին։

Ու սկսում են առաջվանից ավելի քաղցր զրույցներ, ավելի են մոտենում իրար, սկսում են միասին նստել սեղանի, միասին զբոսնել այգիներում ու թափառել մթին անտառներում։

Էսպես էլ բավական ժամանակ է անց կենում։ Մի անգամ էլ աղջիկը երազում տեսնում է, որ իր հերը հիվանդ պառկած է, լաց է լինում, դարդ անում։ Անտառի տերը, անճոռնի հրեշը աղջկա արտասուքը որ տեսնում է՝ հարցնում է, թե ինչո՞ւ համար է արտասուք թափում ու դարդ անում։ Աղջիկը իր երազը պատմում է ու խնդրում, որ իրավունք տա՝ գնա իր հորն ու իր քույրերին տեսնի։

— Էլ իրավունք տալը ո՞րն է,— ասում է հրեշը,— իմ ոսկի մատանին քեզ մոտ է. դիր աջ ճկույթդ ու նույն վայրկյանին դուրս կըգաս քո հորանց տանը։ Բայց իմացած եղիր, եթե երեք օրեն վրա ետ չեկար՝ էլ ինձ չես տեսնիլ։ Կըմեռնեմ, որովհետև քեզ ինձանից ավելի եմ սիրում, ու առանց քեզ ապրել չեմ կարող։

Աղջիկը խոսք է տալիս, որ երեք օրից մի ժամ էլ առաջ կըվերադառնա, հրաժեշտ է տալիս, մատանին աջ ճկույթը դնում ու մին էլ աչքը հորանց տանն է բաց անում։ Հորանց տանը պատմում է, թե ի՛նչ կյանք ու տպրուստ ունի անտառի տիրոջ, անճոռնի հրեշի թագավորության մեջ։ Քույրերը որ իմանում են, թե իրենց փոքր քույրը ի՛նչ անհուն գանձ ու կարողություն ունի, և ի՛նչ թագուհու իրավունք է բանեցնում իր տիրոջ վրա՝ նախանձում են։ Առաջին օրն էնպես է անց կենում, ոնց որ մի ժամ, երկրորդ օրը՝ ոնց որ մի վայրկյան, երրորդ օրն էլ մոտենում է իր վերջին։

Էս քույրերը մի շար բան են մտածում։ Մտածում են՝ էնպես անեն, որ իրենց փոքր քույրը խոստացած ժամից ուշանա, անտառի տերը բարկանա վրեն։ Բերում են քնի դեղ են տալիս. սրա վրա ծանր մրափ է գալիս ու մնում է քնած։ Նշանակված ժամը որ զարկում է, սիրտը ճմլում է, մի կերպ աչքը բաց է անում, տեսնում է խոստացած ժամից մի վայրկյան անց է կացել։ Ոսկի մատանին ճկույթն է դնում ու իսկույն դուրս է գալիս անտառի տիրոջ ապարանքում։

Ոչ ոք չի գալիս դեմը, ոչ ոքի չի հանդիպում։

Լռություն ու մեռելություն։ Ո՛չ այդիներում թռչուններն են երգում իրենց դրախտական երգերը, ո՛չ շատրվաններն են զվարթ վեր ցայտում իրենց ջրերը, ո՛չ աղբյուրներն են



խոխոջում, ոչ էլ երաժշտությունն է հնչում մարմար պալատներում։ Սիրտը մի վատ բան է գուշակում։ Վազվզալ պտըտում է ամբողջ պալատն ու այգին, կանչում է իր սիրելի ընկերին, ոչ մի կողմից ոչ ձեն է գալիս, ոչ պատասխան։ Վազում է դեպի էն թումբը, ուր բուսել ու ծաղկում էր իր Կարմիր ծաղիկը։ Ի՞նչ է տեսնում։ Անտառի տերը, անճոռնի հրեշը երկու թաթերով Կարմիր ծաղիկը պինդ դրկած ու ընկած թմբի վրա։

Ասում է՝ երեք ինձ սպասել է, սպասել ու քունը տարել, խորը քնել։ Սկսում է զգույշ զարթնցնել, տեսնում է՝ չի լսում, ժամ չի գալիս։ Վերցնում է բրդոտ թաթը, տեսնում է՝ անշունչ, մեռած ընկած է... Աչքերը մթնում են, ծնկները տակին ծալվում են, տեղն ու տեղը չոքում է, երկու ձեռքով անճոռնի հրեշի այլանդակ գլուխը դրկում ու բարձր ձենով լաց լինում, ճչում.

— Վեր կա՛ց, զարթնի՛ր, իմ սրտակից ընկեր, ես սիրում եմ քեզ, իմ սրտով սիրածն ես դու...

Էս խոսքերն ասում է թե չէ, հանկարծ կայծակը ճայթում է, երկիրը շարժվում է հիմքից, հրեղեն լախտը գարկում է թմբին, ու աղջիկը ուշաթափ ընկնում է, մնում տեղն ու տեղը ընկած։

Շատ է մնում թե քիչ, էդ էլ չի իմանում, միայն որ աչքը բաց է անում, տեսնում է՝ ինքը մի պալատում, անգին քարերով զարդարած ոսկի դահի վրա նստած է մի ջահել, գեղեցիկ երիտասարդ էլ ձեռը բռնած կողքին կանգնած։ Երիտասարդի գլխին թագավորական թագ, հագին ոսկեհուռ զգեստ։ Առաջին կանգնած են հերն ու քույրերը, իսկ չորս կողմը ծունկի եկած պալատական թիկնապահները, բոլորը հագած ու զուգված ոսկեզօծ և արծաթազօծ կերպաս զգեստներով։

Ու երիտասարդը դառնում է դեպի իրեն.

— Իմ աննման տիրուհի, ոնց՝ որ իմ բարության համար դու սիրեցիր ինձ հրեշի անճոռնի կերպարանքում, այժմ էլ սիրիր մարդկային կերպարանքում, եղի՛ր իմ սրտով սիրած հարսնացուն։ Զար կախարդը իմ հանգուցյալ թագավոր հոր

վրա բարկացած, ինձ զոդացել էր մանուկ ժամանակից, դարձրել էր անճոռնի հրեշ ու կապանք էր դրել վրես, որ էն սոսկալի ու այլանդակ կերպարանքով, ամենքին ու ամեն արարածի ատելի մնամ, մինչև որ մի գեղեցիկ աղջիկ գտնվի, որ ինձ սիրի ու ցանկանա իմ կինը լինել։ Էն ժամանակ պետք է քանդվեր կախարդական կապանքը։ Երեսուն տարի ես մնացի էսպես կախարդված, երեսուն տարվան մեջ տասնումեկ աղջիկ բերի իմ ամրոցը, իսկ դու եղար տասներկուերորդը։ Նրանցից ոչ մինը ինձ չսիրեց, ոչ իմ փաղաքշանքների, ոչ իմ սիրո, ոչ էլ բարությյան համար։ Միայն դու եղար, որ իմ սիրո դեմ սեր ցույց տվիր ինձ, դրա համար էլ դու պետք է լինես իմ պաշտելի թագուհին։

Էստեղ էլ աղջիկ հերն ու նախանձոտ քույրերը, պալատականները, ծառաները, ամենքը, ամենքը ամեն կողմից առաջ են գալիս, շնորհավորում են նորահարսի ու նորափեսի բախտավորությունն, ու սկսում է ուրախ հարսանիքի հանդեսը։

---

## ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղից մի քիչ ծուռը, սարալանջին մի փոքրիկ տնակում իր ծեր հոր հետ ապրում էր չահել Իերգը։ Ունեցած հողերն ուղիղ էնքան էր, ինչքան որ հարկավոր էր անկարոտ ապրելու համար։ Հենց տան կողքից սկսվում էր կաղնի ու հաճարի ծառերի թավ ու պառավ անտառը, իսկ տան առաջին ընկած էր մի հին, կոտրած ջաղացաքար։ Էն հին կոտրած ջաղացաքարին նստողի աչքին սքանչելի տեսարան էր բացվում դեպի հովիտը, դեպի հովիտով վազող գետը ու դեպի սարերը, որ բարձրանում էին գետի մյուս կողմը։ Իերգը, իր գործը դաշտում վերջացնելուց հետո, իրիկվանները սիրում էր նստել էս քարի վրա. արմունկները ծնկներին տրված ու գլուխը հենած ձեռներին՝ նա ժամերով նստում էր ու անձնատուր էր լինում իր ցնորքներին։

Եվ որովհետև գյուղի գործերով էլ շատ չէր հետաքրքրվում ու գրեթե միշտ մնում էր խաղաղ, մենակ իր մտքերի մեջ խորասուզված, գյուղացիք էլ, հեգնելով, անունը դրել էին Երազող Իերգ։ Նա էլ իսկի չէր նեղանում սրանից։

Քանի մեծանում էր՝ էնքան առանձնանում էր ու դառնում լռակյաց, իսկ երբ հերն էլ մեռավ ու հին կաղնենու տակ թաղեց, նրանից հետո հո էլ ձեն չէր հանում։ Այժմ առաջվանից ավելի հաճախ էր նստում հին կոտրած ջաղացաքարին ու նայում էր ներքև, հովիտին, որտեղից իրիկվան մշուշը բարձրանում ու մեղմիկ սողում էր սարն ի վեր. հե-

տեսում էր հետզհետե ցած իջնող մութին, ծագող լուսնին ու իրար ետեւից ցոլացող աստղերին։ Նրան էնպես էր թվում, թե գետի ալիքները երգում էին, սկզբում մեղմ ու կամացուկ, ապա թե պարզ ու լսելի։ Երգում էին էն սարերից, որտեղից սկիզբ էին առնում, երգում էին էն ծովերից, որոնց ծոցն էին հոսում, ու իրենց ջրերում ապրող հավերժահարսներից։ Սրանից հետո անտառն էր սկսում աղմկել, միայն թե ուրիշ տեսակ, քան թե սովորաբար աղմկում են անտառները, ու շատ զարմանալի պատմություններ էր անում։

Մյուսներից շատ պատմություն գիտեր մանավանդ ծառերից մինը, էն պառավ կաղնին, որի տակ թաղված էր իր հերը։ Աստղերն էլ հո, որ ցոլցլում էին երկնքում, ասես թե լցվում էին ներքև թափվելու սաստիկ տենչով, ուզում էին թափվեն ցած էն կանաչ անտառն ու էն կապուտակ գետը, ու էնպես էին վառվռում ու թովում, կարծես թե էլ չէին կարողանում դիմանան ներքևի հրապուրանքներին։ Բայց հրեշտակները, որոնցից ամեն մինը կանգնած էր իր աստղի կողքին, շարունակ զսպում էր նրանց ու ասում. «Այ աստղիկնե՛ր, ա՛յ աստղիկներ, էդպես խենթություն մի՛ անեք, ա՛յ աստղիկներ։ Դուք երեխա հո չե՞ք, որ էդպես գժություններ եք անում. քանի՞-քանի հազար տարի է ապրում եք տիեզերքում։ Ավելի լավ է խաղաղ ու հանգիստ ձեր տեղը մնաք...»

Այո՛, հրաշալի էր էն հովիտը։ Միայն թե էս ամենը տեսնում ու լսում էր մենակ երազող Իերգը։ Իսկ գյուղում ապրող մնացած մարդիկ սովորական մարդիկ էին, մտքներովը էս տեսակ բաներ իսկի էլ անց չէին կացնում։ Ժամանակ առ ժամանակ նրանք կտրում էին անտառի հսկա ծառերից մեկն ու մեկը, սղոցում, շարդում, ծղան անում ու կրակին վրա տալով ասում. «Դե՛, ա՛յ հիմի նորից կարող ենք սուրճ եփել խմել»։ Գետի մեջ իրանց լվացքն էին անում, որ շատ մեծ հարմարություն էր նրանց համար։ Աստղերին նայելիս էլ, երբ որ տեսնում էին շատ են պայծառ ցոլում, ասում էին. «Էս գիշեր թունդ ցուրտ է լինելու, մեր կարտոֆիլը ցրտատար չլինի՞»։ Իերգն էլ եթե ճգնում էր նրանց բացատրի, թե բանն ընչումն է,— ծիծաղում էին վրեն։



Մի անգամ էլ, երբ Իերգը իր սովորությամբ հին ջաղացքարի վրա նստած միտք էր անում, թե ինքը ինչքան է մենակ բովանդակ աշխարհքում, քունը տարավ ու աննկատելի քնեց։ Երազում տեսավ, իբրև թե երկու արծաթ շղթաներով երկնքից մի ոսկի ճոճ էր փչում ներքև։ Ամեն մի շղթայի ծերը ամրացրած էր մի աստղից, իսկ ճոճում նստած էր մի գեղեցիկ աղջիկ ու էնպես բարձր էր ճոճում, որ մին երկնքից գետին էր հասնում, մի էլ գետնից երկինք էր թռչում։ Ամեն անգամ, հենց որ ճոճը երկնքից երկրին էր մոտենում, աղջիկը ուրախությունից ծափ էր տալիս ու մի վարդ էր ձգում Իերգին։ Բայց հանկարծ արծաթի շղթաները կտրեցին, ու ճոճը աղջկա հետ երկուսն էլ երկինք թռան, գնացին վե՞ր, վե՞ր, մինչև որ աչքից բոլորովին չքացան։

Իերգը քնից վեր թռավ, շորս կողմը նայեց, տեսավ քարի վրա, կողքին մի վարդի փունջ։

Մյուս օրը նորից քնեց էնտեղ, նորից նույն երազը տեսավ, ու երբ որ զարթնեց, դարձյալ կողքին վարդեր էին թափած։

Էսպես շարունակ մի ամբողջ շաբաթ։ Իերգը վճռեց, որ էս երազը եթե էսպես նույնությամբ կրկնվում է, կընշանակի սրա մեջ մի ճշմարիտ բան կա։ Վճռեց, տան դուռը փակեց, բանալին գրպանը դրեց ու գնաց էն աղջկանը որոնելու։

Գնա՞ց, գնա՞ց, երկար թափառեց, շատ ման եկավ, վերջապես մի երկիր տեսավ, հեռու, ուր ամպերը հասնում էին մինչև գետին։ Աշխույժ, ուրախ առաջ գնաց ու մի քիչ ժամանակ հետո ընկավ մի մեծ անտառ։ Հանկարծ էստեղ մի հառաչանքի ձեն ընկավ ականջովը։ Վազեց էն կողմը, որտեղից լսվում էր ձեները. տեսավ ալեխառն մորուքով մի պատկառելի ծերունի՝ գետին ընկած. երկու մերկանդամ այլանդակ մարդ էլ վրեն չոքած՝ ուզում են խեղդեն։ Իերգը շորս կողմը նայեց, տեսնի ինչով կարող է օգնության հասնի. մի մեծ կոճղ պոկեց, որ պոկելուն պես դարձավ ծանր տապար։ Էս տապարով էնպես ուժգին հարձակվեց չարագործների վրա, որ նրանք օգնություն կանչելով ծերունուն թողին ու փախան։ Իերգը վեր քաշեց ծերունուն, օգնեց, որ կարգի գա,

ու հարցրեց, թե ինչո՞ւ էին տկլոր ավազակները խեղդում փրեն, ի՞նչ էին ուզում։

Եվ ծերունին պատմեց, թե՝ ես Երազների աշխարհի թագավորն եմ, սխալմունքով մի քիչ հեռացել էի իմ տերության սահմաններից, ընկել էի իմ ամենաոխերիմ թշնամու— Իրականության թագավորի տերությունը։ Էս բանը նկատել էր Իրականության թագավորը, իր ծառաներից երկուսին ղրկել էր իմ դեմ, նրանք էլ դարան մտնելով բռնել էին ինձ՝ ուզում էին խեղդեն...

— Դու իրականության թագավորին ի՞նչ վատություն ես արել որ...— հարցրեց Իերգը։

— Ոչ մի վատություն,— պատասխանեց ծերունին,— բայց առհասարակ նա շատ անբարիշտ բնություն ունի. իսկ ինձ ատելով ատում է։

— Բայց էն մարդիկը, որոնց նա ղրկել էր քո դեմ, տկլո՞ր էին։

— Հա՛,— պատասխանեց Երազների թագավորը,— նրանք մորուց տկլոր են։ Էդպես է Իրականության աշխարհի մոդան։ Էնտեղ ամենքը, նույնիսկ իրենց թագավորը տկլոր են ման դալիս ու իսկի էլ չեն ամաչում դրանից։ Զարմանալի խալխ են։ Բայց դու որ իմ կյանքը փրկեցիր, ուզում եմ երախտահատույց լինեմ քեզ ու ցույց տամ իմ աշխարհքը։ Երազների աշխարհքը ամենասքանչելի աշխարհքն է, իսկ երազները — իմ հպատակներն են։

Ասավ Երազների թագավորն ու առաջ գնաց. Իերգը հետևեց նրան։

Երբ հասան էնտեղ, որտեղ ամպերը գետնին են առնում, թագավորը մի թփուտում ծածկած դուռը ցույց տվեց, որ՝ ով որ չիմանար, անկարելի բան էր, որ դռներ ու բաց աներ։

Թագավորը դուռը բաց արավ, իր ուղեկցին տարավ հինգհարյուր աստիճան ներքև, մի պայծառ, լուսավորված քարանձավ, որ ձգվում էր երկար, շատ ու շատ մղոններ։ Զարմանալի գեղեցիկ էր էն քարանձավը։ Էլ ինչ ասես որ չըկար էնտեղ։ Մեծ լճերի մեջ, կղզիների վրա, կանգնած պալատներ կային, ու կղզիները հանգիստ լողում էին վճիտ



ջրերում։ Ով ուզեր էն պալատներից մեկն ու մեկի մեջ մտնի՝ պետք է ափին կանգներ ու կանչեր.

«Պալա՛տ, պալա՛տ, լողա՛ դեպ ինձ,
Որ հեշտ մտնեմ ես քո դռնից»։

Ու պալատն իրան-իրան կըլողար դեպի ափերը։ Կային և ուրիշ դղյակներ, որ հանդարտ օրորվում էին ամպերի վրա։ Պետք էր միայն ասել.

«Դղյա՛կ, դղյա՛կ, իջի՛ր դեպ ինձ,
Որ հիանամ ես քո տեսքից»։

Ու դղյակը հանդարտիկ գետին կիջներ։ Պարտեզներ էլ կային, որոնք ծաղիկներ ունեին, որ ցերեկները բուրում էին անուշահոտ, իսկ գիշերները լույս էին տալիս։ Ամենաերփ-ներանգ գույներով վառվող հավքեր կային, որ հեքիաթներ էին պատմում, և ուրիշ շատ ու շատ զարմանահրաշ բաներ։ Երազող Իերգը զարմանքից ու խնդությունից չէր իմանում ո՛րին նայի, ո՛րը թողնի։

— Արի՛ հիմի քեզ իմ հպատակները—երազները ցույց տամ,— ասավ թագավորը։— Երեք տեսակ երազներ ունեմ. լավ երազներ — բարի մարդկանց համար, վատ երազներ— չարերի համար, և, սրանցից բացի, ունեմ նաև խեղճիկ երազներ։ Սրանցով էլ զանազան խաղեր եմ հորինում։ Ջի՞ որ երբեմն-երբեմն թագավորներն էլ են ուզում զվարճանան։

Էստեղից թագավորը Իերգին տարավ մի այգի, ուր ծառուղիները արծաթից էին, ածուները ոսկուց, իսկ ծաղիկները անգին քարերից։ Էստեղ զբոսնում էին լավ երազները։

Առաջինը Իերգի աչքին ընկավ մի գալկադեմ նորատի ջահել կին, ձեռքին խաղալիքներով լիքը մի արկղիկ։

— Սա ո՞վ է։

— Էդ կինը ամեն իրիկուն գնում է մի հիվանդ երեխի մոտ, որի մերը նորերս է մեռել,— ասավ Երազների թագավորը։— Ցերեկը որբ երեխան միշտ մնում է մենակ, իսկ գիշ-

չերները սա դնում է հետը խաղում ու մոտը մնում մինչև լույս։ Սակայն, ե՛կ, մի քիչ էլ դ-անք դեսը։

Գնացին։ Մտան մի ուրիշ այգի՝ լիքը բարի երազներով։ Բարի երազները տղամարդկանց ու կանանց, ծերերի ու երեխաների կերպարանքներով, բոլորն էլ բարի, ժպտուն դեմքերով, ամենագեղեցիկ զգեստներով։ Շատերը ձեռներին առած ունեին ամեն տեսակ լավ բաներ, ինչ որ միայն կարող է ուզել մարդու սիրտը։ Բայց Իերոդը հանկարծ կանգ առավ ու էնպես բարձր ճչաց, որ բոլոր երազները նա դառան դեպի նա։

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց թագավորը։

— Ահա էստեղ է իմ ծանոթ աղջիկը, որ ինձ երևում էր էնքան հաճախակի ու վարդեր էր բերում ինձ համար։

— Իհարկե, իհարկե էստեղ է,— պատասխանեց թագավորը։— Հենց նա ինքն է, որ կա։ Ճշմարիտ է, չէ՞ որ քեզ լավ երազ էի զրկում։ Գրեթե ամենալավ երազը...

Ու Իերոդը վազեց դեպի իր ծանոթ աղջիկը, որ ինչպես միշտ, իր ոսկե ճոճում նստած ճոճում էր։ Նա էլ, հենց սրան տեսավ թե չէ, ներքև թռավ ու վազեց գիրկն ընկավ։ Իրար ձեռից բռնած նստեցին մոտակա ոսկի աթոռին ու հրճվանքով անվերջ կրկնում էին, թե ի՞նչ լավ եղավ, որ նորից իրար պատահեցին։ Կրկնում էին ու կրկնում, և կարծես միշտ նոր էին ասում։

— Դե՛, երեխե՛ք, հերիք է։ Քո տունը հեռու է, Իե՛րոդ, ե՞րբ պետք է հասնես։ Էստեղ քեզ չեմ կարող թողնել, մենք քեզ համար տեղաշոր չունենք։ Դու գիտես, որ երազները չեն քնում, այլ գիշերները գնում են վերև—մարդկանց մոտ։ Դու էլ, աղջի՛կս, պատրաստվի՛ր, ժամանակն է, որ ճանապարհ ընկնես։ Ոտից գլուխ հագիր քո վարդագույն զգեստներդ ու ե՛կ, ես քեզ կասեմ, թե ո՛ւմ ես երևալու էս գիշեր ու ի՛նչ ես անելու։

Երազող Իերոդը էս որ լսեց, էնպես մի տղամարդություն եկավ վրեն, որ բնավ չէր ունեցած։ Վեր կացավ ու հաստատուն ձենով էսպես կանչեց.

— Հա՛յր արքա,— ասավ,— ես էլ չեմ բաժանվելու իմ



երազից — իմ թագուհուց։ Կամ ինձ պետք է թողնեք, որ մնամ էստեղ, կամ նրան պետք է թողնեք, որ մեր աշխարհը գա ինձ հետ։ Առանց սրան էլ չեմ կարող ապրել, էնքա՞ն եմ տիրում...

Ու աչքերը լցվեցին խոշոր արցունքներով։

— Բայց, Իե՛րոդ,— խոսեց երազների թագավորը,— պետք է իմանաս, որ սա իմ ամենալավ երազն է։ Սակայն դու իմ կյանքը փրկել ես, Իե՛րոդ, թո՛ղ էնպես լինի, ինչպես դու ես կամենում։ Ա՛ռ քո երազը ու գնա ձեր աշխարհը։ Բայց վերև գնաք թե չէ՝ սրա գլխի արծաթե քողը պետք է վերցնես ու դոնից գցես ներքև—դեպի ինձ։ Էն ժամանակ քո երազը—քո թագուհին էլ մին ու արյուն կառնի... կդառնա իսկական կին, թե չէ այժմ նա անմարմին երազ է միայն...

Իերոդը թագավորին սրտանց շնորհակալություն արավ ու ասավ.

— Սիրելի թագավոր, քանի որ դու էդքան բարի ես, համաձակվում եմ մի խնդիրքով էլ անհանգստացնել քեզ։ Տեսնում ես արդեն թագուհի ունեմ, բայց թագավորություն չունեմ։ Ի՞նչպես կըլինի՝ թագուհին առանց թագավորության։ Չե՞ս կարող արդյոք մի թագավորություն էլ տալ։ Ի՞նչքան ուզում է փոքրիկ լինի, միայն թե թագավորություն լինի։

— Գիտե՞ս ինչ կա, Իերոդ,— պատասխանեց երազների թագավորը.— թե տեսանելի թագավորություններ ես ուզում, ես չունեմ, բայց անտեսանելի թագավորություններ—ունեմ, և նրանցից մինը քեզ եմ նվիրում, էն էլ ամենամեծերից ու ամենահոյակապներից մինը։

Իերոդը հետաքրքրվեց իմանա, թե ինչ տեսակ բաներ են էդ անտեսանելի ասված թագավորությունները, բայց թագավորը նրան պարզեց, թե ամեն բան ինքը ժամանակին կիմանա և շատ կզարմանա, երբ կըտեսնի, թե ի՞նչ լավ է ու ի՞նչքան հարմար էդ տեսակ անտեսանելի թագավորություն ունենալը։

— Սովորական, տեսանելի թագավորությունները շատ անգամ շատ հոգսեր ու անախորժություններ են ունենում,— բացատրեց թագավորը։— Օրինակի համար. ասենք թե դու

թագավոր ես, դեռ անկողնումն ես. մին էլ տեսաք՝ առավոտը վաղ նախարարը մոտեցավ անկողնիդ ու ասում է.

«Ձերդ մեծություն, տերության կարիքների համար ինձ մի հազար ռուբլի է պետք։ Գանձարանը բաց են անում, տեսնում ես՝ մեջը կոպեկ չկա։ Ի՞նչ անես։ Դեռ այն էլ կարող է պատահել, որ քեզ պատերազմ հայտնեն, հաղթեն, ու էն թագավորը, որ քեզ հաղթել է, պսակվի հենց քո թագուհու հետ, իսկ քեզ մի աշտարակում փակի։ Իսկ անբևեռությի թագավորության մեջ անկարելի է, որ էդ տեսակ բաներ պատահեն։

— Բայց եթե էդ թագավորությունը անբևեռությի է ու մենք չենք տեսնելու, դրանից ի՞նչ դուրս կբերա,— հարցրեց Իերդը։

— Այ անխելք մարդ,— բացականչեց թագավորը,— մթոր չէ՞ որ ձեզ համար անբևեռությի չի լինել, դու ու քո թագուհին կտեսնեք։ Դուք պարզ կլուսնեք ձեր թագավորությունը և պալատները իրենց պարտեզներով, և՛ մարգագետինները, և՛ անտառները։ Նրանց մեջը կապրեք, կզբոսնեք, կանեք, ինչ որ քեֆերդ կըտա։ Միայն ուրիշների համար կըլինի անբևեռությի, ուրիշները չեն տեսնել ձեր թագավորությունը։

Իերդը սրա վրա շատ ուրախացավ, որ իրենց գյուղացիք ոչ կըտեսնեն, որ ինքը թագուհի ու թագավորություն ունի, ոչ էլ նախանձից խեթ կընայեն։ Շնորհակալություններով հրաժեշտ տվեց նրանց թագավորին, իր թագուհու հետ հինգ հարյուր աստիճան վերև բարձրացավ, նրա գլխից վեր առավ արծաթի քողը ու ձգեց ներքև։ Հետո ուղեց ատորերկրյա մուրքի դուռը ետ դնի, բայց էնքան ծանր էր, որ չըկարողացավ պահի, ձեռքը դուրս պրծավ ու մի էն տեսակ սհագին թրնդյուն հանեց, կարծես միանգամից բազմաթիվ թնդանոթներ որոտացին, ու Իերդը հանկարծ ուշաթափ եղավ։ Մին էլ ուշքի եկավ, տեսավ ինքը իրենց դռան հին չաղացաքարի վրա նստած, կողքին կանգնած իր թագուհին, միայն ոչ թե երազ, այլ մարմին առած, սովորական կին։

Իր ձեռքը բռնած նա փաղաքշում էր իրեն ու խոսում. «Ա՛յ դու իմ աշնիվ... իմ բարի, իմ հիմար Ի՛երդ, ուրեմն էս-



ան՝ համանակ սիրում էիր ինձ ու սի՞րտ չէիր անում ասե՞ս... վախենում էիր ինձանի՞ց...»։

Լուսինը ելավ ու լուսափայլեց գետը, ալիքները հնչյուն ծփալով զարկում էին ափերին, անտառը խուլ աղմկում էր, նրանք դեռ նստած խոսում էին ու խոսում։ Հանկարծ լուսնի վրա մի սև ամպի պատառ եկավ, էս միջոցին նրանց ոտների տակ մեծ թաշկինակի պես մի բան ընկավ, ու նորից լուսինն սկսեց փայլել առաջվա պես պայծառ։ Նրանք թաշկինակը վերցրին, ուզեցին բաց անեն, բայց տեսան, որ շատ է բարակ ու անթիվ անգամ ծալած, էնպես որ երկար տևեց, մինչև բոլոր ծալքերը բաց արին։

Նա բաց արին՝ ի՞նչ տեսնեն. աշխարհագրական քարտեզի նման մի բան։ Մեջտեղից մի գետ է հոսում, գետի երկու կողմը՝ քաղաքներ, անտառներ ու լճեր։ Իսկույն գլխի ընկան, որ էս էն թագավորությունն է, որ բարի երազների թագավորն իրենց համար ցած է գցում երկնքից։ Եվ երբ նստեցին իրենց փոքրիկ տնակին, տեսան դարձել է հոյակապ պալատ, բյուրեղյա աստիճաններով, մարմարե թավշածածկ պատերով ու բարձր աշտարակներով, փիրուզե տանիքներով։ Ձեռ-ձեռի տված ներս մտան ու կորան ծաղիկների մեջ, անուշահոտ բուրմունքների, երաժշտության, ուրախության ու ամեն բանի լիության մեջ։

Մյուս օրը ամբողջ գյուղը զբոսնում էր, թե նրանց Իերդը վերադարձել է ու կին է բերել իրեն համար։

— Իրեն նման մի բան կըլինի, էլի՞,— ասում էին շորս կողմից։

— Էսօր առավոտ անտառ էի գնում, տեսա շեմքումը կանգնած էր,— մեջ մտավ մի գյուղացի։— Բանի նման չի, կա էլի՞. մի լղար, պուճուր աղջիկ ա։ Հաղթեն ու վերցրեն էլ չը գնալիս...

— Բա ի՞նչ էր լինելու։ Սա բան չունի, նա էլ սրա նման,— նկատեց մի ուրիշը։

Էսպես էին խոսում էն տխմար մարդիկ, ու չէին տեսնում, որ առաջները կանգնածը թագուհի էր։ Ոչ էլ էն էին նկատում, որ նրանց տնակը չքող պալատ է դարձել։ Եվ ի՞նչ-

պես պետք է տեսնեին։ Իերդի համար ամպերից ընկած թագավորությունը անբերության թագավորություն էր։ Ինքը՝ Իերդն էլ շատ չէր հոգում, թե ինչ են մտածում իր մասին կարճամիտ ու տխմար մարդիկ, ու իրեն համար ապրում էր իր թագավորության մեջ իր թագուհու հետ ուրախ ու բախտավոր։

---

# 1920

## ԵՐԵՔ ԱՐՋԻ ՀԵՔԻԱԹԸ

### ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ

I

Մի աղջիկ է լինում. էս աղջիկը մի անգամ գուրս է գալիս իրենց տնից ու գնում ընկնում անտառը։ Անտառում մոլորվում է, ճամփի է մտնում գալիս՝ ճամփա չի գտնում, ու գալիս է դեմ առնում մի տնակի։

Դուռը բաց է լինում։ Նայում է, տեսնում է տանը ոչ ոք չկա։

Ներս է մտնում։ Դու մի՛ ասիլ՝ էս տնակում երեք արջ են ապրում — հերը, մերը և իրանց քոթոթը։ Էդ ժամանակ դնացած են լինում անտառը մտն գալու։ Տնակը ունենում է երկու սենյակ՝ մինը սեղանատուն, մյուսը ննջարան։

Էս աղջիկը սեղանատունն է մտնում, տեսնում է սեղանի վրա դրած երեք աման ապուր։ Առաջինը՝ հոր ամանը, մեծ է լինում. երկրորդը՝ մոր ամանը, միջակ, երրորդը՝ քոթոթի ամանը, փոքրիկ։ Ամեն մի ամանի մոտ էլ մի-մի գդալ է լինում դրած՝ մեծ, միջակ ու փոքր։

Աղջիկը առնում է մեծ գդալը, ուտում է մեծ ամանից, անհամ է լինում։

Հետո վերցնում է միջակ գդալը, ուտում է միջակ ամանից, դուր չի գալիս։

Հետո վերցնում է փոքր գդալը, ուտում է փոքր ամանից։ Տեսնում է փոքր ամանի ապուրը համով է։

Ուզում է նստի՝ տեսնում է երեք աթոռ՝ մինը մեծ, մյու-

սը միջակ, երրորդը փոքր։ Բարձրանում է մեծ աթոռին՝ վեր է ընկնում։ Նստում է միջակ աթոռին՝ տեսնում է անհարմար է։ Նստում է փոքր աթոռին, քեֆը գալիս է, էնքան լավն է լինում։ Վերցնում է փորր ամանը, դնում է ծնկներին ու սկսում է փոքր գդալով ուտել։

Ուտում է կշտանում ու սկսում է օրորվել աթոռի վրա։ Աթոռը կոտրվում է, աղջիկը վեր է ընկնում։

Վեր է կենում, աթոռը նա բարձրացնում ու մտնում մյուս սենյակը։

Մյուս սենյակում երեք մահճակալ է լինում—մինը մեծ, մյուսը միջակ, երրորդը փոքր։

Պառկում է մեծ մահճակալի վրա՝ տեսնում է շատ է լեն։ Միջակի վրա է պառկում՝ տեսնում է շատ է բարձր։ Փոքրի վրա պառկում, տեսնում է հենց իրենն է որ կա, ու լնում է։

Արջերը քաղցած գալիս են, որ ճաշեն։ Հերը մոտենում է իր ամանին, մտիկ անում ու զարհուրելի գոռում.

— Էս ո՞վ է կերել իմ ամանից։

Մերը մտիկ է անում իր ամանին ու փնթփնթում.

— Էս ո՞վ է կերել իմ ամանից։

Քոթոթն էլ, որ տեսնում է իր դատարկ ամանը, ծըմբրում է.

— Էս ո՞վ է կերել իմ ապուրը։

Հերը նայում է իր աթոռին ու գոռում.

— Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից ժաժ տվել։

Մերն է նայում իր աթոռին ու փնթփնթում.

— Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից ժաժ տվել։

Քոթոթն է նայում իր կոտրած աթոռին ու ծըմբրում է.

— Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու կոտրել։

Մտնում են մյուս սենյակը։

Հերը նայում է իր մահճակալին ու զարհուրելի գոռում.

— Էս ո՞վ է պառկել իմ անկողնին ու տրորել։

Մերը նայում է իր մահճակալին ու փնթփնթում.



— Էս ո՞վ է պառկել իմ անկողնին ու տրորել։

Քոթոթն է նայում իր անկողնին ու ծըմբրում.

— Էս ո՞վ է պառկել իմ անկողնում։

Հանկարծ աղջիկանը նկատում է ու էնպես ճղղում, կարծես թե մորթում էին իրեն։

— Էս ո՞վ է... գտել եմ... հրես բռնեցե՞ք... վայ... վայ... բռնեցե՞ք։

Եվ ուզում է աղջիկանը կծի։ Աղջիկը վախից վեր է թռչում, աչքերը բաց անում, տեսնում է՝ պառկած է իրենց տանը, իր ննջարանում։ Ու էս բոլորը երազ է եղել։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊՈԵՄՆԵՐ


Մաքոն . . . . . 7
Լուսնցի Սաքոն . . . . . 13
Մերժված օրենք . . . . . 20
Հառաչանք . . . . . 31
Անուշ . . . . . 43
Դեպի անհունը . . . . . 72
Պոնան ու Մուսան . . . . . 85
Սասունցի Դավիթը . . . . . 97
Սասունցի Դավիթը, Բ. մասը . . . . . 131
Թմկաբերդի առումը . . . . . 134
Հաղաբան բլբուլ . . . . . 146


## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Իգձ . . . . . 169
Էմին իրալ է որ, գիշերները . . . . . 170
Դեցիմ Լաբերիոս . . . . . 171
Նս չեմ ուզում մարդ իմանա . . . . . 173
Ռոմանս . . . . . 173
Մայրը . . . . . 176
Մեռավ իմ մուսան . . . . . 176
Թափառիր . . . . . 177
Հրեշտակ . . . . . 178
Օլեգի երգը . . . . . 179
Ջրահեղձ . . . . . 182
Գեղջուկի մտածմունքը . . . . . 185
Ֆրանսիայի գաղտում . . . . . 186





Հիմանդ եմ, մայրիկ
Անձուկ . . . . . 187
Մանուկներին . . . . . 188
Կուզեի հալվել, ձուլվել իմ երգին . . . . . 189
Վարպետական լեգենդ . . . . . 190
Էլեգիա . . . . . 191
Գարուն . . . . . 192
Զմեռվա իրիկունը . . . . . 193
Մի երգ կա մանկուց . . . . . 194
Վարդը . . . . . 195
Լերանց շարքերը . . . . . 196
Վիլսոնի «Ժանտախտ բազարը» ողբերգությունից . . . . . 197
Հեռու, հեռու կըթռցնեմ . . . . . 198
Լուսին . . . . . 199
Ամառվա գիշերով . . . . . 200
Գարիայի երգը . . . . . 202
Փոթորիկ . . . . . 202
Ծովի երգը . . . . . 205


### ՄԱՆԿԱԿԱՆ


Իրիկուն . . . . . 207
Ես էն տունն է . . . . . 209
Շունը . . . . . 210
Գրիչ . . . . . 213
Առաջին ձյունը . . . . . 214
Միսիկի օրորքը . . . . . 214
Հովվի հրաժեշտը . . . . . 215
Ամենից լավ տունը . . . . . 216
Թռչունի մտածմունքը . . . . . 216
Մի բաց նամակ ամենքին . . . . . 218
Փիսիկի գանգատը . . . . . 218
Մազիկները . . . . . 219
Աշուն . . . . . 220
Մաքա . . . . . 221
Կույրերի կարծիքը . . . . . 222
Թզկի դպրոցը . . . . . 223


### ՊՈԵՄՆԵՐ


Ակիլլես . . . . . 224
Մեթիրի . . . . . 234

257
Ջալլզ Հարոլդի երգը . . . . . 261
Ինեսին . . . . . 263
Շիլլոնի կալանավորը . . . . . 274
Հայավաթի երգը . . . . . .

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԻԼԻՆԱՆԵՐԻՑ

Մուռոմցի Իլիան կռվում է Վլադիմիր իշխանի հետ . . . . . 284
Սվյատոգորը . . . . . 295

ՍԵՐԲԱԿԱՆ ՎԻՊԵՐԳ

Թե ինչ ուղարկեց Թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն . . . . . 298
Մարկոն Դամազանին գինի է խմում . . . . . 303
Մարկոն վերացնում է պսակի հարկը . . . . . 307
Մարկոն վար է անում . . . . . 314

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Մժղուկը . . . . . 316
Թարոն Մյունխհաուզենի զարմանալի արկածները . . . . . 319
Պառավ ձին . . . . . 324
Ինչ լավն էին, ինչ թարմ էին վարդերը . . . . . 326
Արծիվը . . . . . 328

ՀԵՔԻԱԹՆԵՐ

Անատոլի անակը . . . . . 333
Ոսկի քաղաքը . . . . . 339
Լեզուն կտրած ծիտիկը . . . . . 349
Փոքրիկ ձկնորսը . . . . . 352
Մարդակերի աղջիկն ու խորհրդավոր վարպետը . . . . . 356
Որսա թագավորը . . . . . 372
Դեղեցկուհի Վասիլիսան . . . . . 381
Աստղերից իջած կինը . . . . . 393
Կախարդի քսակը . . . . . 491
Անդին քարը . . . . . 407
Լուսնթեսն ու Վարդերեսը . . . . . 415
Սագարած աղջիկը . . . . . 423
Զարմանալի աշուղը . . . . . 436
Գորտը . . . . . 441



Ինդեն ու Գրետելը . . . . . 446
Դարմրիկը . . . . . 457
Մոխրոտը . . . . . 463
Ճերմակ օձը . . . . . 473
Կուրմիր ծաղիկը . . . . . 479
Անսերնոյթ թագավորությունը . . . . . 491
Նյութ արքի հեքիաթը . . . . . 501

Խմբագիր՝ Վ. Դանիելյան
Նկարիչ՝ Գ. Ղեխան
Գեղ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Է. Հանանապանյան
Վերստուգող սրբագրիչներ՝
Լ. Գշխոյան,
Գր. Գրիգորյան

Պատվեր 57։ Տիրաժ 50.000։

Հանձնված է արտադրության 13/XI 1957 թ.։
Ստորագրված է տպագրության 13/V 1958 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32. տպագր 31.75 մամ.=26.3 պայմ. մամ.,
հրատ. 23.6 մամ.+2 ներդիր։
Գինը 8 ռ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան,
Ալավերդյան փող. № 65։